ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
[illegible]
[illegible]
ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

102

М А Т Е Н А Д А Р А Н
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О ЗАКАВКАЗСКИХ ПОХОДАХ АГА МУХАММАД ХАНА

(1795—1797 гг.)

Текст, введение и примечания

Р. Т. ТИТАНЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1795—1797 թթ.)

1099

Աշխատասիրությամբ

Ռ. Տ. ՏԻՏԱՆՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

ԳՄԴ 63. 3 (0)5
Հ 253

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
թեկնածու Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆԸ և բանասիրական գիտությունների թեկնածու Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆԸ:

Ժողովածուի մեջ ընդգրկված են ցարդ չհրապարակված և մասամբ էլ հրապարակված նյութեր, որոնք լուսաբանում են XVIII դ. 90-ական թվականներին Արևելյան Անդրկովկասում տիրող քաղաքական իրավիճակը և ճշմարտացի պատմում Աղա Մուհամմադ խանի 1795—1797 թթ. ավերիչ արշավանքների ու դրանց հետևանքով Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում ստեղծված ծանր կացության մասին։ Ներկայացվող վավերագրերը միաժամանակ հայ և վրաց ժողովուրդների անխախտ եղբայրության և նրանց ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշման պերճախոս վկայությունն են։

Ժողովածուն հասցեագրվում է պատմաբաններին, բանասերներին և Անդրկովկասի ժողովուրդների պատմությամբ հետաքրքրվողներին։

0504030000
Հ ——————— 104—79
703 (02)—81

ԳՄԴ 63. 3(0)5
9 (*М*) 3

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981,
ներածության և ծանոթագրությունների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVIII դարի 90-ական թվականներին խոշոր իրադարձություններ տեղի ունեցան Իրանի ներքին կյանքում։ Քարիմ խան Զանդի մահից հետո (1779 թ.) գահակալական երկարատև կռիվներում հաղթող հանդիսացավ ղաջար ցեղի ներկայացուցիչ Աղա Մուհամմադ խանը, որը կարճ ժամանակում տիրելով գրեթե ողջ Իրանին, իր առաջ խնդիր դրեց վերականգնել պարսկական երբեմնի գերիշխանությունը Անդրկովկասում։

Շուտով նա պահանջ ներկայացրեց Վրաց Հերակլ II արքային՝ խզել իր կապերը Ռուսաստանի հետ և անվերապահորեն ենթարկվել Իրանին։ Նա հպատակություն էր պահանջում նաև Անդրկովկասի տարածքում եղած խանություններից։ Սակայն Հերակլ II արքան, որն ապավինել էր Ռուսաստանի հովանավորությանը, ամենայն վճռականությամբ մերժեց սպառնալիքներով ուղեկցվող այդ պահանջը։ Աղա Մուհամմադ խանը մերժում ստացավ նաև Արցախի (Ղարաբաղի) Իբրահիմ խանից։

Հարկ է նշել, որ Աղա Մուհամմադ խանի թիկունքում կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան, ինչպես նաև Թուրքիան, որոնք խիստ անհանդուրժելի էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողություններից։ Այդ պետությունները որոշակի հետաքրքրություններ ու շահեր ունեին Առաջավոր ու Մերձավոր արևելքի երկրներում, ուստի և ամեն կերպ հրահրում ու աջակցում էին Թուրքիային և Իրանին, որպեսզի նրանք իրենց ազդեցության ոլորտի մեջ պահեն անդրկովկասյան երկրներն ու խանգարեն ռուսների մուտքը Անդրկովկաս։

1793 թ. մայիսի 30-ին Ռուսական կայսրության պետական խորհուրդը քննարկում է Քարթլ-Կախեթի թագավորությանը և Անդրկովկասի խանություններին սպառնացող վտանգի հարցը և գտնում, որ Ռուսաստանը չի կարող անտարբեր նայել անդրկովկասյան երկրների նկատմամբ պարսից շահի հավակնություններին։ Պետական խորհուրդը կարգադրում է գեներալ Գուդովիչին՝ զորական օգնություն ցույց տալ Հերակլ II արքային։ Սակայն, չնայած այս որոշմանը, Հերակլ II-ի և այլ իշխանների շուտափույթ օգնություն ստանալու միտումով վաղօրոք արված դիմումներին և առաջարկներին, ռուսական զորական ուժերի ժամանումն Անդրկովկաս տեղի չունեցավ։

Եվ ահա, 1795 թ. պարսկական 80.000-անոց խառնիճաղանջ բանակը, Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ, անցնում է Արաքս գետը, մտնում Արցախ և պաշարում Շուշի ամրոցը, իսկ եղբայրը՝ Ալի Ղուլի խանը, Երևանի բերդը պաշարելու հանձնարարություն է ստանում։

Չկարողանալով գրավել Շուշին, պարսից հրոսակախմբերն արշավում են դեպի Թիֆլիս։ Սակավաքանակ վրաց և թվով գերակշիռ պարսից զորական ուժերի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում 1795 թ. սեպտեմբերի 12-ին՝ Կրծանիս կոչվող վայրում։ Չնայած վրացական զորքերի քաջարի դիմադրությանը, թշնամուն հաջողվում է ներխուժել Թիֆլիս ու այրել այն։ Տեղի է ունենում մեծ կոտորած, գերության են քշվում բազմահազար հայեր, վրացիներ և ադրբեջանցիներ։

Աղա Մուհամմադ խանի՝ դաժան ու բիրտ, ողջ մարդկության նկատմամբ չարությամբ լցված այս իշխողի, սահմռկեցուցիչ արհավիրքներով ուղեկցվող 1795 և 1797 թվականների արշավանքներին են վերաբերում ընթերցողի ուշադրությանը ներկայացվող հայկական աղբյուրները։ Դրա հետ մեկտեղ սույն աղբյուրները միաբերան վկայում են սուլթանական Թուրքիայի և արևմտաեվրոպական երկրների քաղաքական, ռազմական այն աջակցության մասին, որը ստացել է Աղա Մուհամմադ խանը հիշյալ երկրներից իր արշավանքները ձեռնարկելու նպատակով։

Քարթլ-Կախեթի թագավորությանը, ըստ 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրի, ռազմական օգնություն ցույց տալու խնդրում դրսևորած հապաղումը խիստ գցեց ռուսական վարկը Անդրկովկասում։

Ռուսական ղեկավար շրջանները շուտով զգացին թույլ տված սխալը։ Խախտելով 1783 թ. դաշնագրի համաձայն Քարթլ-Կախեթի թագավորության նկատմամբ իրենց ստանձնած պարտավորությունները, դրանով իսկ նրանք վտանգի տակ դրեցին Ռուսաստանի համար կարևոր ստրատեգիական հենարան հանդիսացող Անդրկովկասը։ Ուստի ռուսական արքունիքը հարկ համարեց անդրադառնալ Պետրոս I-ի նախագծին, որը նախատեսում էր Անդրկովկասում հայ-վրացական միասնական պետության ստեղծում՝ Ռուսաստանի հովանու ներքո, ինչպես և Մերձկասպյան մետաքսաշատ շրջանների գրավում և առևտրական հարաբերությունների հաստատում Հնդկաստանի հետ։

1796 թ. գարնանը Վրաստանը պաշտպանելու, սեփական քաղաքական վարկը բարձրացնելու և Աղա Մուհամմադ խանին սաստելու միտումով դեպի հարավ՝ Անդրկովկաս է շարժվում 30.000-անոց ռուսական մի բանակ՝ Վալերիան Զուբովի հրամանատարությամբ։ Այդ արշավանքի ժամանակ անդրկովկասյան ժողովուրդները ոչինչ չեն խնայում օգնելու ռուսական զենքի հաջողությանը։ Այդ արշավանքի հաջողություն-

ները հիմք են տալիս ռուսական կառավարությանը, ձեռնամուխ լինելու Պետրոս I-ի ծրագրի մյուս մասի՝ Անդրկովկասում հայ-վրացական կամ առանձին հայկական պետություն՝ վրացականի առկայությամբ ստեղծելուն, որոնք պիտի ծառայեին իբրև հենարան իր հետագա նպատակները կենսագործելու համար։ Սակայն արշավանքը չավարտված՝ 1796 թ. նոյեմբերի 6-ին Եկատերինա II կայսրուհին մահանում է։ Նրան հաջորդած Պավել I կայսրը դադարեցնում է արշավանքը և ռուսական զորամասերը ետ կանչում Անդրկովկասից։

Օգտվելով ստեղծված իրավիճակից, Աղա Մուհամմադ խանը 1797 թ. գարնանը կրկին արշավում է Անդրկովկաս, միտելով վերջնականապես նվաճել այն։ Այս անգամ արդեն գրավելով Շուշին, նա դաժան հաշվեհարդար է տեսնում քաղաքի խաղաղ բնակչության հետ և նպատակադրվում վերստին շարժվել դեպի Թիֆլիս, սակայն շուտով սրախողխող է արվում իր իսկ սպասավորների ձեռքով։

Վերը նշված իրադարձությունների հետևանքով անդրկովկասյան ժողովուրդները տնտեսական ու քաղաքական ծանր կացության մեջ են ընկնում։ Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու միակ ելքն այդ ժողովուրդների համար ռուսական հովանու տակ մտնելն էր։ 1801 թ. տեղի ունեցավ Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին, դրանով սկիզբ դրվեց Արևելյան Հայաստանի և ողջ Անդրկովկասի Ռուսաստանի տիրապետության ներքո անցնելուն, մի իրադարձություն, որի առաջադիմական նշանակությունը դժվար է գերագնահատել։

* * *

1795—1797 թթ. Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ պարսկական զորքի Անդրկովկաս կատարած արշավանքները, դրանց ուղեկցող ավերածություններն ու գերեվարությունները, կոտորածներն ու ավարառությունները, ծանր ու խոր հետքեր են թողել ժամանակակիցների հիշողություններում։ Այդ ահավոր իրողությանն անդրադարձել են հայ, վրացի և ադրբեջանցի հեղինակները։ Թիֆլիսին հասած աղետը շատ ծանր են վերապրել տեղի հայերը, որոնք կազմում էին Վրաստանի մայրաքաղաքի հիմնական բնակչությունը։ Այդ մասին են խոսում այն բազմաթիվ վկայությունները, որոնց հեղինակները ժամանակակից են տեղի ունեցած անցքերին կամ ապրելով վերոհիշյալ իրադարձություններին հաջորդած ժամանակներում, ականջալուր են եղել այդ արհավիրքի ականատեսներին։

Ներկայացվող ժողովածուն կազմողը նպատակ է ունեցել ի մի հավաքել նշված արշավանքների մասին եղած հայկական այն բոլոր

սկզբնաղբյուրները, որոնք գլխավորապես պահպանվել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, նրա արխիվային բաժնի տարբեր ֆոնդերում և նախասովետական հայ պարբերական մամուլի էջերում։ Ընթերցողին ներկայացվող աղբյուրները հավաստում ու նոր մանրամասներով լրացնում են XVIII դարի 90-ական թվականների մեր ժողովուրդների պատմության մասին եղած գրականությունը, ուր արտացոլված է անդրկովկասյան ժողովուրդների իրավաքաղաքական ծանր կացությունը, որ ապրել են նրանք 1795—1797 թթ. արշավանքների նախօրյակին ու արշավանքների տարիներին՝ պարսկա-թուրքական լծի ներքո։ Ներկայացվող վավերագրերը հավաստում են ընդհանուր թշնամու դեմ եղբայրական ժողովուրդների մղած միասնական պայքարը, նրանց ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը և Ռուսաստանից ակնկալվող ռազմաքաղաքական աջակցության և հովանավորության իրողությունը։

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ սույն ժողովածուի մեջ ընդգրկված նյութերով չեն սպառվում հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի արշավանքները և 90-ական թվականների իրադարձությունները պատկերող վավերագրերը։ Հավանաբար հետագա հետազոտությունները ի հայտ կբերեն նոր վավերագրեր, որոնք չեն նշվել ձեռագրաց ցուցակներում կամ այլուր։

1877 թ. «Արարատ» ամսագրում Գալուստ Շերմազանյանը հրապարակել է Աղա Մուհամմադ խանի երբեմնի զորավար, հետագայում ճրգնավոր Յաղուբ խանի հուշերը, որոնք մեծապես աղերսվում են մեզ հետաքրքրող խնդրի հետ, սակայն մենք նյութի մատուցման այդ եղանակը հակված ենք համարել գրական հնարամտություն, որ կիրառել է Գ. Շերմազանյանը, հետևաբար այդ հուշերը չեն կարող դիտվել որպես սկզբնաղբյուր։ Այդ պատճառով էլ Յաղուբ զորավարի հուշերը չենք ընդգրկել ժողովածուի մեջ։

Ժողովածուի մեջ զետեղել ենք նաև կաթողիկոս Ղուկաս Կարնեցու որոշ գրագրությունները ռուսական ղեկավար շրջանների ներկայացուցիչների, վրաց թագավորների, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի, Հնդկաստանի հայ գաղթավայրերի ականավոր դեմքերի ու այլոց հետ, վավերագրեր, որոնցում խոսվում է Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ պարսից արշավանքների հետևանքով հայ և վրացի ժողովուրդների համար ստեղծված ծանր կացության մասին և այդ կացությունից դուրս գալու ելքը համարվում է ռուսական հովանավորություն հայցելը։

Նշենք նաև, որ նյութերը ժողովածուի մեջ զետեղված են ժամանակագրական հաջորդականությամբ։

Այժմ քննարկենք ժողովածուի մի քանի հիմնական աղբյուրներ, որոնք մինչ այժմ հայտնի էին գիտությանը, ինչպես նաև այն նյութերը, որոնք նոր են մտցվում գիտական շրջանառության մեջ։

ԹԻՖԼԻՍԱԲՆԱԿ ԹԱԳՈՒՀԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԿՈՒՅՍԵՐԻ 1795 Թ. ՆԱՄԱԿԸ

1795 թ. Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքի, մասնավորապես, նրա հրոսակախմբերի կողմից Թիֆլիսն ավերելու, հրի մատնելու, բնակչությանը կողոպտելու, կոտորելու, գերեվարելու և այլազան բռնություններ գործադրելու մասին հայ հեղինակների նկարագրությունների մեջ առանձին ուշադրության է արժանի դեպքերին ականատես թիֆլիսաբնակ կույսեր Թագուհի Միրիմանյանի և Գայանե Խոջա-Բեհբուդյանի նամակը, որը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 8216 ձեռագրում։

Թագուհի Միրիմանյանը[1] 1795 թ. աղետի ժամանակ եղել է Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանոցի մայրապետը, իսկ Գայանե Խոջա-Բեհբուդյանը՝ սարկավագուհին։ Առաջինն իրեն կոչում է «հանգուցեալ Յովսեփի դուստր», իսկ երկրորդը՝ «Տփղիսու հանգուցեալ իշխան մելիք Աղայի դուստր» Խոջա-Բեհբուդյան։ Այսպիսով ակնհայտ է դառնում, որ նրանք սերում էին թիֆլիսաբնակ երկու այնպիսի գերդաստաններից, որոնք ճանաչում և լուրջ համարում ունեին ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Քարթլ-Կախեթիի թագավորության արքունիքում։

1795 թ. Աղա Մուհամմադ խանի արշավանքի ժամանակ Գայանե Խոջա-Բեհբուդյանն ու Թագուհի Միրիմանյանը, մյուս կույսերի հետ, փախչում են Թիֆլիսից և հետիոտն, մեծ զրկանքներ կրելով, հասնում Մոզդոկ, ապա անցնում Աստրախան, որից հետո՝ Ղզլար։ Այստեղ երկուսն էլ մահանում են. Գայանեն՝ 1796 թ. օգոստոսին, իսկ Թագուհին՝ 1799 թ.[2]։

Այս նամակը Թիֆլիսի 1795 թ. գրավման և ավերման մասին մեզ հայտնի հայ աղբյուրներից ամենահնագույնն է։ Այն կրում է 1795 թ. սեպտեմբերի 16-ի թվականը, սակայն կարծում ենք, որ պետք է լինի հոկտեմբերի 16-ը, որովհետև Թիֆլիսն ավերելու օրերին էին նրանք հեռացել քաղաքից, հետևաբար, այդքան կարճ ժամանակում չէին կարող Մոզդոկ հասնել ու անմիջապես շարադրել իրենց նամակը, որը հասցեագրված է Հովհաննես Լազարյանին և նրա տիկնոջը՝ Կատերինային։

---

1 Խ. Խուցյան, Թիֆլիսի սուրբ Ստեփանոս կուսանաց անապատի պատմությունը, Թիֆլիս, 1914, էջ 23—24։

2 «Մատենադարան»—Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 2951, երես 203։

Այս ուշագրավ փաստաթղթի հեղինակները համեստորեն նշում են իրենց անփորձությունը գրական ասպարեզում, սակայն ակնբախ է, որ նրանք շարադրելու ձիրք ունեն։ Նամակը վկայում է նաև, որ հեղինակները ծանոթ են հայ պատմագրության հուշարձաններին, մանավանդ լավ գիտեն հին կտակարանը։

Նրանց հաջողվել է ժամանակագրական հաջորդականությամբ և ամենայն մանրամասնությամբ պատմել Թիֆլիսին և նրա բնակիչներին հասած աղետների մասին։

Նամակի հեղինակները նախ խոսում են պարսից շահի խարդախ և ուխտադրուժ վարվելակերպի մասին, ապա սրտի ցավով նշում այն իրողությունը, որ Քարթլ-Կախեթի թագավորության զինված ուժերը պատշաճ պատրաստությամբ և միասնությամբ հանդես չեկան թշնամու հրոսակներից Թիֆլիսը պաշտպանելու։

Այնուհետև նրանք նկարագրում են այն սահմռկեցուցիչ տեսարանը, որ ստեղծվել էր Թիֆլիսում աղետի օրերին և այն զարհուրելի կտտանքները, որոնց ենթարկվել են Թիֆլիսի բնակիչները։ Այստեղ նրանց շարադրանքը գեղարվեստական գունավորում է ստանում։

Պարսից հրոսակների վայրագությունների նկարագրությունից հետո, նրանք անդրադառնում են ավարառության ու գերեվարության, ինչպես նաև քաղաքի հրդեհման տեսարանների սրտաճմլիկ պատկերմանը։

Թագուհի և Գայանե կույսերը չեն մոռանում նկարագրել նաև քաղաքից փախածների ծանր վիճակը, որոնց թիվը, ըստ նրանց, կազմել է 3000 ընտանիք։ Եթե ընդունենք, որ այդ ժամանակներում ընտանիքը միջին հաշվով կարող էր բաղկացած լինել 5 անձից, ապա փախստականների թիվը եղել է 15.000, որ միանգամայն հավանական թիվ է։

Նամակի հեղինակները պատկերավոր, բայց և ճշմարտացի ձևով ներկայացրել են այդ ահեղ օրերին Թիֆլիսից, թշնամու կողմից կրկնակի հետապնդվող, գաղթածների կրած դառնաղետ տանջանքները։

Խոսելով Թիֆլիսից գերվածների մասին, Թագուհին և Գայանեն նշում են նրանց թիվը՝ 105 հազար։ Թեև այդ ոչ միայն Թիֆլիսի, այլև շրջակա գյուղերից ու այլ վայրերից Թիֆլիսում ապաստանած ժողովուրդն էր, որոնցից շատերը գերի էին տարվել տեղի բնակիչների հետ միասին, այդուհանդերձ, հարկ է նշել, որ այդ թիվն ակնհայտորեն չափազանցված է։ Հայտնի է, որ Թիֆլիսից գերվածների թիվը հասել է 15 հազարի։ Նամակի հեղինակները Թիֆլիսի գրավման ժամանակ արդեն հեռացել էին քաղաքից և գերվածների թվի մասին ճշգրիտ պատկերացում չէին կարող ունենալ։

1795 թ. Աղա Մուհամմադ խանի կողմից Թիֆլիսի գրավմանն ու ավերմանը նվիրված Թագուհի Միրիմանյանի և Գայանե Խոջա-Բեհբուդ-

յանի սույն նամակը շարադրված է դեպքերի անմիջական տպավորության ներքո, անաչառ ականատեսների կողմից, հետևաբար այն արժանահավատ ու կարևոր սկզբնաղբյուր է։ Այն կարող է նպաստել 1795 թ. Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ պարսկական զորքի Անդրկովկաս արշավելու և Թիֆլիսը գրավելու հետ առնչվող մի շարք հարցերի պարզաբանմանը և ճշգրտմանը։

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԻՉ

1941 թ. պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը հրատարակելով Աղա Մուհամմադ խանի՝ 1795 թ. արշավանքի մասին իր հայտնաբերած մի սկզբնաղբյուր, որի խորագիրն է «Համառօտ պատմութիւն անհնարին կոտորածովք աւերման Տփղիս քաղաքի, զոր արար յեղուզակօրէն պատերազմաւ աղա Մէհէմմետ խանն, փախուցեալ զծերունի արքայն Վրաց զՀերակլ Երկրորդ, յամի 1795», անդրադարձել է նրա հայտնաբերման պատմությանը[3]։

Ինչպես իրավամբ նկատել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, Անանուն պատմիչի այս գործը շատ ընդհանրություններ ունի Սերովբե գրչի (Սերովբե Պատկանյան) 1795 թ. Թիֆլիսի ավերման նկարագրության հետ, թե՛ արծարծված խնդիրների և թե՛ հարցադրումների եղանակի ու եզրահանգումների առումով[4]։ Այսպես, օրինակ, Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին հայկական ոչ մի սկզբնաղբյուր, բացի Սերովբե Պատկանյանի վկայությունից չի հիշատակում այն, որ Աղա Մուհամմադ խանը, մինչև Անդրկովկաս արշավելը, հրավիրում է պարսից ավագանու խորհրդակցություն՝ ճշտելու իր փոխհարաբերությունները Թուրքիայի և արևմտաեվրոպական որոշ պետությունների հետ։ Այս կապակցությամբ Անանուն պատմիչի մոտ կարդում ենք. «...Որոշեցաւ ի ժողովի անդ առաքել զդեսպանս առ թագաւորն Կոստանդնուպոլսոյ և առ կայսրն գերմանացւոց առնուլ ի նոցուն զհաճութիւն»։ Նա գրում է նաև այն մասին, թե ինչպես հիշյալ պետություններից իր հարցմանը խրախուսող պատասխան ստանալուց հետո, նա ձեռնամուխ է լինում Անդրկովկասի նկատմամբ իր ունեցած ծրագրերի իրականացմանը։

Անանուն պատմիչի վկայություններից, այնուհետև, տեղեկանում ենք Արցախի հայ ազգաբնակչության հերոսական դիմադրության և Շու-

---

[3] Արմֆանի «Տեղեկագիր», Երևան, 1941, № 3—4, էջ 50։ Մեր պրպտումների ընթացքում պարզվեց, որ անվանի բանասերի ուշադրությունից վրիպել է 1883 թ. «Բազմավէպ» հանդեսի Բ պրակը, ուր տպագրված է նույն Անանուն պատմիչի Թիֆլիսի ավերման համառոտ նկարագրությունը։

[4] Արմֆանի «Տեղեկագիր», Երևան, 1941, № 3—4, էջ 49։

չի բերդի պաշտպանության խրողությանը։ Պարսից հրոսակախմբերը չկարողանալով գրավել Շուշին, հարկադրված թողնում են Արցախը և արշավում դեպի Վրաց երկիրը։

Ուշագրավ են Անանուն պատմիչի այն տեղեկությունները, թե Հերակլ II ինչպիսի կտրականությամբ է մերժում Աղա Մուհամմադ խանի՝ իրեն ենթարկվելու պահանջը և ստեղծված իրավիճակը ներկայացնելով Հյուսիսային Կովկասում գտնվող ռուսական զորքերի հրամանատար Իվան Գուդովիչին՝ նրանից հայցելով շտապափույթ օգնություն։ Սակայն ռուսական հրամանատարությունը վստահեցնում է Հերակլ II-ին, թե Աղա Մուհամմադ խանը չի համարձակվի ներխուժել Վրաստան, հայտնելով նաև, որ իրենք սպասում են արքունիքի հրամանին՝ դեպի Վրաստան շարժվելու համար։

Այնուհետև Անանուն պատմիչը նշում է, որ ֆելդմարշալ Ի. Գուդովիչի բարեհոգի հորդորները և ավելորդ լավատեսությունը, որ գալիս էին խարդախ ներքինու՝ Աղա Մուհամմադի, ստահոդ հավաստիացումներից, ճակատագրական եղան Թիֆլիսի և ողջ Անդրկովկասի համար։

Սույն Անանուն հեղինակը նույնպես կշտամբում է վրաց արքային, որը հույսը դնելով հյուսիսից ակնկալվող օգնությանը, թերացել էր երկրի ռազմական ուժերը կազմակերպելու, անհրաժեշտ պատրաստությամբ թշնամուն դիմագրավելու խնդրում։ Նկատենք սակայն, Անանուն պատմիչի և հայ այլ հեղինակների՝ Հերակլ II-ին ներկայացվող սույն մեղադրանքը անհիմն է և չի հավաստվում խնդրին առնչվող այլ վավերագրերով։ Հարցն այն է, որ ֆեոդալական մասնատվածության պայմաններում, ներքին տարաձայնություններից ու իրարամերժ նկրտումներից ցնցվող Քարթլ-Կախեթի գահը հուսալի հենարան չէր Հերակլ II-ի համար և նա ի վիճակի չէր ավելին անելու, ուստի և հույսը պիտի դներ բազմիցս խոստացված ռուսական զորական օգնության վրա։

Անանուն պատմիչը վկայում է, որ այդ օրհասական օրերին Հերակլ II-ին օգնության էր եկել Իմերեթի Սոլոմոն թագավորը 12-հազարանոց մի զորամասով։ Անանուն պատմիչի սույն վկայությունը՝ Արևմտյան Վրաստանից օգնության եկած զորքի թվի մասին, ակնհայտորեն ուռճացված է և չի հաստատվում այլ աղբյուրներով։

Անանուն պատմիչի գործը պարունակում է թշնամուն դիմագրավելու խնդրում ծերունազարդ Հերակլ II-ի ձեռնարկած զորական միջոցները հավաստող մանրամասնություններ, որոնք գալիս են լրացնելու Անդրկովկասի, մասնավորապես Թիֆլիսի պաշտպանության, հայ և վրաց ժողովուրդների զավակների համատեղ պայքարի պատմությունը։

Արժեքավոր են Անանուն պատմիչի վկայությունները պարսից բանակի 4 հազարանոց ընտրյալ զորամասի ու Հերակլ արքայի սակավա-

թիվ, բայց քաջարի զորքի միջև տեղի ունեցած չորս ժամ տևող առաջին ճակատամարտի և դրանում վրաց զորքի հաղթանակի մասին, ինչպես և Կրծանիսի ճակատամարտի նկարագրությունը, որտեղ Վրաց զորքը Հերակլ արքայի գլխավորությամբ, քաջաբար մարտնչել է անարգ թշնամու դեմ և միայն հարկադրված, տեղի տալով հակառակորդի թվական խիստ մեծ գերակշռությանը, նահանջել է և քաղաքը թողել թշնամուն։ Հակիրճ, բայց և պատկերավոր է Անանուն պատմիչի խոսքը Թիֆլիսի և նրա բնակիչներին հասած աղետը նկարագրելիս։

Անանուն պատմիչի տեղեկությունն այն մասին, որ իբր պարսիկները Թիֆլիսն ավերել են քսան օր ու այնտեղ մնացել երեք ամիս և միայն լսելով ռուսների դեպի հարավ շարժվելու լուրը, թողել, հեռացել են Պարսկաստան, չի հավաստվում պատմական իրողությամբ։ Ի տարբերություն ներկայացվող սկզբնաղբյուրի, հայկական բոլոր այլ աղբյուրներում պարսիկների կողմից Թիֆլիսը շտապ թողնելը պատճառաբանվում է երկու կարևոր հանգամանքով, նախ՝ ռուսական զորքի դեպի հարավ շարժվելու, ապա Աղա Մուհամմադ խանի դեմ ծագած ապստամբությամբ։

Սույն նկարագրության մեջ նշվում է, որ Թիֆլիսում զոհվածների թիվը կազմել է 50.000 մարդ, իսկ գերվածների մասին գործածված է «բազում» բառը, մինչդեռ Սերովբե գրիչը գերվածների թիվն համարում է 50.000 մարդ։ Այս հանգամանքը տեղի է տալիս խորհելու, որ Սերովբե գրիչը ծանոթ է եղել այս սկզբնաղբյուրին և շփոթն էլ գուցե այստեղից է սկիզբ առել։

Ուշագրավ է հեղինակի վկայությունը այն մասին, թե որպիսի արիությամբ են մարտնչել վրացական բանակի հրետանավորներ հայազգի Գաբրիելը և վրացի Գիորգին և հերոսի մահով ընկել։

Անանունն իր «Համառօտ պատմութիւնն» ավարտում է քառատող մի ողբով.

Ոմն եհար զաւար, ոմն եղև թշվառ
և այլ որք օտար՝ էառ զայն գաւառ։
Միայն մնաց վայ մեռելոց
և գերելոց տառապելոց։

«Համառօտ պատմութիւնը» եզրափակվում է ուշագրավ հիշատակարանով, որից տեղեկանում ենք, որ 1796 թ. հունվարին այն գրել է դեպքերին ականատես մի հեղինակ Թիֆլիսում, ապա այն համառոտել են նույն թվականի հունիսին՝ Կոստանդնուպոլսում։

Այսպիսով, Անանուն պատմիչը լինելով ականատես 1795 թ. Թիֆլիսի ավերմանը, սերունդներին է թողել այդ աղետն արտացոլող «Հա-

մառօտ պատմութիւն» խորագիրը կրող աշխատություն, որը մեզ հայտնի հայերեն գրված ամենավաղ գործերից է։

Նա առաջին հայ հեղինակն է, որ անդրադարձել է Աղա Մուհամմադ խանի արշավանքը խրախուսելու խնդրում Թուրքիայի և արևմտաեվրոպական որոշ տերությունների դերին, նա է, որ առաջին անգամ տեղեկացնում է Թիֆլիսի արվարձաններում թշնամու դեմ մղած առաջին ճակատամարտում վրաց զորքի շահած հաղթանակի մասին։ Անանուն պատմիչն է, որ վկայում է ընդհանուր թշնամու դեմ կողք-կողքի մարտնչող ու հերոսի մահով ընկած հայ և վրաց ժողովուրդների զավակների՝ Գաբրիելի և Գիորգիի մասին։

Ի դեմս Անանուն պատմիչի, տեսնում ենք մի հեղինակի, որը շեշտված ռուսական կողմնորոշում ունի և ռուսական փրկարար ուժի նկատմամբ լի է հավատով։

Ներկայացվող գործը աչքի է ընկնում իրադարձությունների նկատմամբ հեղինակի աշխույժ վերաբերմունքով և ընդհանուր առմամբ ճիշտ գնահատմամբ։

ՎԱՐԴԱՆ ՕԶՆԵՑԻ

Վարդան Օձնեցու «Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու» խորագիրը կրող ձեռագիր աշխատությունը արժեքավոր փաստեր է պարունակում XVIII դարի և XIX դարի առաջին կեսի ընթացքում Հայաստանի և դրացի երկրների սոցիալ-տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների մասին։ Աշխատության շարադրմանը հեղինակը ձեռնամուխ է եղել 1847 թ., իրազեկ անձանցից ու ականատեսներից հավաքել բազմաթիվ նյութեր, օգտագործել հիշատակարաններ, տարեգրություններ, զանազան անձանց նամակներ, կաթողիկոսների ու պատրիարքների կոնդակներ և այլն։

Այսպիսով, օգտագործելով իրեն հայտնի բոլոր սկզբնաղբյուրները, Օձնեցին ստեղծել է ուշագրավ մի աշխատություն, որտեղ արծարծված հարցերը կամ նորություն են, կամ հավաստում և լրացնում են պատմական այս կամ այն իրողության մասին մեր ունեցած տեղեկությունները։

Նշենք, որ Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքին Օձնեցին նվիրել է իր «Պատմութեան» երկու գլուխները («Յաղագս մտանելոյ ի Հայաստան ներքինի Մահմատ խանի, աւերութեան և գերութեան Թիֆլիս քաղաքի» և «Վասն գնալոյ Աղա-Մահմատ խանի ի Պարսկաստան և դառնալոյ ի Շուշի և սպանման նորա անդ»)։

Վարդան Օձնեցու «Պատմութեան» և Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-Նամէ» աշխատության այն գլուխների համեմատությունը, որոնք նվիրված են Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքին, ցույց է տալիս, որ Վ. Օձնեցին օգտվել է նշված գործից կամ սույնի հայերեն թարգմանությունից, որը ամենայն հավանականությամբ կատարել է ինքը՝ Վ. Օձնեցին, երբ Շուշի և Գանձակ քաղաքներում վարել է հոգևոր տեսչի պաշտոն։

Թեև Օձնեցին հիշյալ գլուխներում նկարագրած իրադարձություններին ականատես չէ և դրանցից հեռու է մի քանի տասնամյակով, սակայն նրա հաղորդումներն ունեն սկզբնաղբյուրի անվերապահ արժեք, քանզի նա խնամքով շարադրել է իր «Պատմութիւնը»՝ ականատես մարդկանց պատմածների և ուրիշ այլ բնույթի նյութերի հիման վրա։

Հատկապես մեծ արժեք են ներկայացնում Վարդան Օձնեցու տեղեկությունները պարսիկների՝ 1795 թ. դեպի Երևան կատարած արշավանքի մասին, որի վերաբերյալ վկայությունների չենք հանդիպում մեզ հայտնի և ոչ մի այլ սկզբնաղբյուրում։ Հեղինակը պատմում է, թե ինչպես Արարատյան երկիրը մտած Ալի Ղուլի խանը Երևանի խանից՝ մանկահասակ Մուհամմադից հնազանդություն է պահանջում, սակայն երևանցիները որոշում են դիմադրել թշնամուն՝ մեծ հույսեր կապելով Վրաց Հերակլ II արքայի օգնության հետ։ Ժողովուրդը պատրաստվում է պաշտպանական մարտերի. նրա մի մասը հավաքվում է Երևանի բերդում, թվով. 7.000 մարդ, մնացած մասը ամրանում է անմատչելի վայրերում՝ լեռներում ու քարանձավներում։ Այնուհետև հեղինակն այս ամենին ավելացնում է, որ պարսկական զորքը մտնելով Արարատյան դաշտ, կերակրվում էր էջմիածնից և նրա շրջակա գյուղերից բռնությամբ հավաքած պարենամթերքներով։

Ուշագրավ է նաև Օձնեցու այն տեղեկությունը, որ Աղա Մուհամմադ խանի զորքի Արարատյան երկիրը մտնելու պատմությունը Ղուկաս Կարնեցին գրի է առել և ուղարկել Կոստանդնուպոլիս՝ պատրիարք Զաքարիային, հրապարակելու համար։ Սակայն վերջինս պատասխանում է Ղուկաս կաթողիկոսին, թե քաղաքական մթնոլորտը նպաստավոր չէ այդ փաստերը հրապարակելու համար և որ այդ պարագան վնասաբեր կարող է լինել հայերին։ Զաքարիա պատրիարքի սույն պատասխանը լրացուցիչ լույս է սփռում սուլթանական Թուրքիայի՝ Աղա Մուհամմադ խանի արշավանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա։

Չկարողանալով գրավել Երևանի բերդը, Ալի Ղուլի խանն իր զայրույթը թափում է Արարատյան նահանգի գյուղերի ու ավանների խաղաղ բնակչության վրա, նշում է պատմիչը։

Կարևոր մանրամասնություններ է հաղորդում Վարդան Օձնեցին

Շուշի ամրոցի 1795 թ. պաշտպանության, անմատչելի ծերպերում և կիրճերում ապաստանած Արցախի բնակչության անվեհեր պայքարի մասին։

Ինչպես Արարատյան երկրում, այնպես էլ Արցախում, Շուշի ամրոցի պարիսպների տակ կրած պարտության համար, Աղա Մուհամմադ խանի հրոսակները վրեժխնդիր են լինում անզեն ժողովրդից։ Արցախեցի մի ծերունու պատմածի հիման վրա Վարդան Օձնեցին նկարագրում է, թե ինչպիսի խիզախություն են դրսևորել Շուշի ամրոցը պաշտպանելիս 60 հայ քաջորդիներ, որոնք ծածուկ դուրս գալով ամրոցից՝ հանկարծակի հարձակում են գործել թշնամու վրա, խուճապի մատնել և մեծ կորուստներ պատճառել նրան։

Վարդան Օձնեցու «Պատմութեան» մեջ բազմաթիվ արժեքավոր վկայություններ կան հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների գավակների օտարերկրյա զավթիչների դեմ մղած հերոսական պայքարի մասին։

Այս առումով ուշագրավ է նաև վրաց բանակի ազգային կազմը՝ ըստ Վ. Օձնեցու տեղեկության. «Քանզի արքան Հերակլ,— գրում է պատմիչը,— որ ժողովեալ էր զհնգետասան հազար վրացի, հայ և տաճիկ զորս բանակ եդեալ նստեր ի վերայ Ինջայ գետոյ, չունէր վասն նոցա բաւական պատրաստութիւն պաշարաց, վասն այն հրաման ետ հայոց և տաճկաց եւ և ոմանց վրացւոց երթալ ժողովել յամուր տեղիս զինչս և զգերդաստանս իւրեանց, պահելով առ ինքն միայն զվեց հազար զօրս ի վրացւոց»[5]։

Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրյակին Վրաստանն ապրում էր տնտեսական ու քաղաքական ճգնաժամ, որը արդյունք էր իր դարն ապրած ֆեոդալական արտադրահարաբերությունների գոյատևման։ Այդ ճգնաժամն առավել սուր բնույթ էր ստանում պարբերաբար կրկնվող օտարերկրյա ասպատակությունների և խոշոր ու մանր ավատատերերի փոխադարձ երկպառակությունների, արքայազների միջև ծայր առած հակամարտությունների հետևանքով։ Ինչպես արդեն վերը նշվեց, պարզ է, որ այս պայմաններում Հերակլ արքան հնարավորություն չուներ ըստ արժանվույն կազմակերպել երկրի ռազմական ուժերը՝ թշնամուն հակահարված տալու համար։

Ուշադրության է արժանի Օձնեցու նաև այն կշտամբանքը, որ նա նետում է Թիֆլիսի բնակչության հասցեին՝ թշնամուն արհամարհելու և

5 Մատենադարան, ձեռ. 4331, երես 85։

անհրաժեշտ լրջությամբ քաղաքի պաշտպանությունը չնախապատրաստելու կապակցությամբ։

Մինչ ներքինի շահի գլխավորությամբ պարսկական բանակը Թիֆլիսին կմոտենար, քաղաքի բնակչությունը, ըստ Վ. Օձնեցու, արդեն խուճապի էր մատնվել։ Նրանցից շատերը փախուստի ուղին էին բռնել, հարազատ քաղաքը թողնելով բախտի քմահաճույքին։ Խուճապին նպաստել է և այն, նկատում է պատմիչը, որ թագուհի Դարեջանը շտապել է օր առաջ թողնել քաղաքը և պատսպարվել առավել ապահով այլ վայրում։ Հարկ է սակայն նշել, որ Վ. Օձնեցու սույն մեղադրանքը վերաբերում է առավելապես արքունիքի և քաղաքի վերնախավի ներկայացուցիչներին, իսկ ինչ վերաբերում է աշխատավոր խավերին, ապա տարբեր աղբյուրների վկայությամբ, անհերքելիորեն հավաստվում է, որ նրանք համառ պայքար են մղել քաղաքի յուրաքանչյուր տան, յուրաքանչյուր փողոցի համար և թշնամուն մեծ զոհեր պատճառել։

Հետաքրքրական են Վ. Օձնեցու տեղեկությունները վրաց և պարսից անհավասար ուժերի միջև ծավալված ճակատամարտի մասին։ Ընթերցողը ակամայից համակվում է այն սրտառուչ համակրանքով, որով պատմիչը նկարագրում է վրաց սակավաթիվ զորքի անվեհեր խիզախությունը։ Այդ ճակատամարտում վրաց բանակը, որի շարքերում քիչ չէին նաև հայերը, չորս անգամ ետ է մղում թշնամու գրոհները, իսկ երբ արքայազն Վախտանգի հրամանատարությամբ մարտի մեջ են մտնում Արագվայի ափերից օգնության եկած մարտիկները, վրացիներին հաջողվում է նույնիսկ մխրճվել թշնամու շարքերը, հասնել մինչև դրոշակակիրները և շահի աչքի առաջ խլել դրոշակներից մի քանիսը։ Սակայն թշնամու թվական գերակշռությունը, նշում է պատմիչը, վճռական եղավ Կրծանիսի ճակատամարտը տանուլ տալու խնդրում։

Վ. Օձնեցին հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում Թիֆլիսից գերված ժողովրդի ճակատագրի մասին։ Աղա Մուհամմադ խանը գերիներին բաժանում է իր զինվորներին, իսկ որոշ մասին իր հետ տանում Իրան։ Գերիների մի մասը վաճառվում է Երևանում, Կարինում, Ախալցխայում և այլուր։ Պատմիչը նշում է նաև Թիֆլիսի բնակչության զոհվածների և գերվածների թիվը. «Եղև թիւ կոտորածի բնակչաց Տփխիս քաղաքի ի հայոց և վրաց ութ հազար անձանց և գերելոցն տասն և վեց հազար...»[6]։

Թիֆլիսն ավերելուց և կողոպտելուց հետո, Աղա Մուհամմադ խանը թողնում է այն և իր զորքով շարժվում դեպի Մուղանի դաշտը՝ ձմեռելու։ Վ. Օձնեցին ճշմարտացի փաստեր է բերում շահի անօրինակ դաժանու-

6 Նույն տեղում, երես 89։

1099
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

թյունների մասին, դաժանություններ, որոնց ենթարկվում էին ոչ միայն ներքինի շահի դյուզն-ինչ կասկածն հարուցած առանձին անձինք, այլև տասնյակ ու հարյուրավոր անմեղ գերվածներ։

Թիֆլիսին հասած աղետից հետո ևս, Հերակլ արքան վերստին հայցում է ռուսական կայսրության զորական օգնությունը, սակայն, ինչպես գրում է Վ. Օձնեցին, ռուսական սահմանապահ իշխանությունները հապաղում էին կատարել Հերակլ արքայի խնդրանքը։ Արդի պատմագրությունը այս հապաղումը բացատրում է այն պարագայով, որ ինքնակալական Ռուսաստանը հարկադրված էր հաշվի առնել Թուրքիայի դիրքորոշումը, որը թշնամաբար էր ընկալում ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Այսրկովկաս։ Մյուս կողմից՝ միջազգային հարաբերությունների խճճվածությունը՝ կապված Լեհաստանի բաժանման հետ, դրդում էին Ռուսաստանի կառավարող շրջաններին՝ ավելի շրջահայաց ու զգուշավոր քաղաքականություն վարել։ Այս ամենը դուրս են մնացել Վ. Օձնեցու տեսադաշտից, ուստի և Վ. Օձնեցին չի կարողանում համոզիչ պատասխան տալ ռուսական օգնության ուշացման խնդրին։

Վ. Օձնեցին անսահման գոհունակությամբ է նշում Վ. Զուբովի հրամանատարությամբ ռուսական զորքի մուտքը Անդրկովկաս և ափսոսանք հայտնում, որ այդ զորքն անակնկալ կերպով տունդարձի ճանապարհն է բռնում, ի դերև հանելով հայ և վրացի ժողովուրդների ազատագրական ակնկալությունները։ Ռուսական զորքերի հեռանալուց հետո Աղա Մուհամմադ խանը ծրագրում է կրկին արշավել դեպի Անդրկովկաս։ 1797 թ. մայիսի վերջերին, հաղորդում է պատմիչը, ներքինի թագակիրը, զորքերի մեծ բազմությամբ, նորից ներխուժում է Անդրկովկաս։ Տեղական որոշ խաների հնազանդեցնելուց հետո, նա շտապում է դարձյալ արշավել Վրաստան՝ այդ երկիրը վերջնականապես նվաճելու նպատակով։ Այս անգամ նրան հաջողվում է գրավել Շուշին։ Շուշիի մորթապաշտ Իբրահիմ խանն իր մերձավորներով լքել էր ամրոցը և ապաստանել Դաղստանի Ումմա խանի մոտ։ Եվ ահա այստեղ՝ Շուշիում, անակնկալ սպանվում է Աղա Մուհամմադ խանն իր իսկ սպասավորների ձեռքով։ Վարդան Օձնեցու «Պատմութեան» մեջ ուշագրավ տեղեկություններ կան այդ հետաքրքրական իրողության մասին։ Պատմիչը նկարագրում է նաև պարսից զորքի այն խուճապը և հապշտապ փախուստը, որ առաջացրեց շահի սպանության լուրը։ Արժեքավոր են Վ. Օձնեցու տեղեկությունները Արցախի և, մասնավորապես, Շուշիի հայ բնակչության՝ պարսիկ նվաճողներին դիմակայելու և իր երկրից վտարելու վերաբերյալ։

Վ. Օձնեցու «Պատմութիւնը», որ խարսխված է ականատեսների պատմածների ու, գուցե և մեզ չհասած, այլ վավերագրերի վրա, կարևոր

սկզբնաղբյուր է Արևելյան Հայաստանի, նաև ողջ Անդրկովկասի XVIII դարի վերջին տասնամյակների պատմության ուսումնասիրության համար։

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՇՈՒՇԵՑԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում 2734 թվահամարի տակ պահվում է «Պատմութիւն գաւառին Արցախու» խորագիրը կրող ձեռագիր աշխատությունը, որը գրված է 1853 թ. Երուսաղեմում. հեղինակն է Հակոբ Զաքարյան Շուշեցին։

Հեղինակը հայտնում է, որ «Պատմութեան» մեջ նկարագրված իրադարձությունների մասին ինքը լսել է իր նախնիներից։ Ի դեպ, նա գրում է, որ իր լսած բազմաթիվ անցքերից շարադրում է միայն այն, ինչ հիշում է, ինչպես և ներողություն է խնդրում անունների հնարավոր անճշտությունների համար։ Հեղինակը միաժամանակ նշում է, որ ինքն ինչ-որ չափով ականատես է եղել իր նկարագրած քաղաքական անցքերին. «...Սոյն գունակ և իմ ի հնախօս հարց և ծերունեաց լուեալ՝ և յոյժ սակաւագունացն ի յետին ժամանակի ականատես լեալ, յանդգնեցայ ի գլուխ պատմութեանս և կալեալ սկսեալ ի շինութենէ անտի բերդաքաղաքին Շուշոյ, որ ինչ անցք անցին ընդ ազգն մեր ի գաւառին Ղարաբաղու՝ որ և Արցախու յաղետալեացն և ի բարեաց անյապաղարար վիպել ձեռն արկի ըստ իմում նուազ ունակութեանս և տկարագոյն մտացս»[7]։

Հակոբ Շուշեցին իր «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատության մեջ նկարագրում է XVIII դարի կեսերից մինչև XIX դարի սկզբները Արցախում տեղի ունեցած քաղաքական կարևոր իրադարձությունները։ Նա գրում է Մուհամմադ Հասան խանի (Ղաջար), Ուրմիայի Ֆաթհ-Ալի խանի, Քարիմ խան Զանդի՝ Արցախ կատարած արշավանքների մասին, հատուկ ուշադրության արժանացնում Աղա Մուհամմադ խանի 1795—1797 թթ. արշավանքների և դրանց նախորդող 1793—1794 թթ. Ատրպատականի Սուլեյման սարդարի 6.000 հեծելազորով Արցախ արշավելու և տեղի ազգաբնակչությունից պարտություն կրելու իրողությունների նկարագրությունը։

Ականատեսի լավատեղյակությամբ նա պատկերում է Արցախի բնակչության մղած պայքարը պարսիկ նվաճողների դեմ։ Պատկերավոր է Շուշիում պաշարված հայ կանանց սխրագործությունների նկարագրությունը։ Նա առավել տպավորիչ ու վիպական շնչով է ներկայացնում 1796 թ. ռուսական բանակի՝ դեպի Անդրկովկաս շարժվելը։ Գանձակի

7 Մատենադարան, ձեռ. 2734, երես 23։

գավառ մտնելը, այդ արշավանքին մասնակից հայազգի բարձրաստիճան զինվորական Հովհաննես Մազաթովի գործունեությունը։

Հեղինակը առանձնակի համակրանքով ընդգծում է տեղի բնակչության՝ ռուսների նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքը։

Հակոբ Շուշեցին իր «Պատմությունը» սկսում է Արևելյան Հայաստանի Արցախ երկրամասում օտար ցեղերի ներթափանցման և հաստատման, Շուշի բերդ-ամրոցի վերաշինման ժամանակներից, այնուհետև շարադրում է Ղարաբաղի խանության կրկին պարսից գերիշխանության ենթարկելու Աղա Մուհամմադ խանի ձեռնարկած միջոցների պատմությունը։

Համաձայն Շուշեցու տեղեկությունների, շահի Սուլեյման սարդարը սկզբում ջանում է խաղաղ բանակցությունների միջոցով հասնել Արցախը իրանական տիրապետությանը ենթարկելուն, բայց երբ դա չի հաջողվում, ապա Աղա Մուհամմադի հրամանով պարսկական զորքը ներխուժում է Արցախ։

Ուշագրավ և արժեքավոր են Հակոբ Շուշեցու տեղեկությունները օտար նվաճողների դեմ Արցախի հիմնական ազգաբնակչության անձնուրաց պայքարի մասին։ Հեղինակը բերում է Շուշի բերդաքաղաքի պաշտպանության այնպիսի հետաքրքրական մանրամասնություններ, որոնք բացակայում են հայկական մյուս աղբյուրներում, մի հանգամանք, որ առավել գնահատելի է դարձնում Հ. Շուշեցու «Պատմությունը»։ Հեղինակն հրճվանքով է նկարագրում Սուլեյման շահզադեի գլխավորությամբ 1793 և 1794 թթ. Արցախի սահմանները ներխուժած պարսկական զորքերի պարտությունը, ընդգծում երկրի բնակչության անվեհերությունը և քաջագործությունները։

Հակոբ Շուշեցին գրում է, որ 1794 թ. ամռանը Սուլեյման շահզադեի զորքերի՝ Արցախում վերստին կրած պարտությունը կատաղեցնում է Աղա Մուհամմադ խանին և նա քստմնելի դաժանությամբ պատժում է Արցախից ողջ վերադարձած զորապետներին։

Սկսվում է մի նոր զորաժողով. ամբարտավան ներքինին իր պալատականներին հայտարարում է. «Կենդանի է անձն իմ, ես ինքնին երթայց և մի մնացէ ի գաւառին շունչ կենդանի կամ ծառ պտղաբեր»[8]։

1795 թ. օգոստոսին սկզբներին Աղա Մուհամմադ խանը, 80 հազարանոց բանակով, շարժվում է դեպի հյուսիս, մտնում Արցախ, պաշարում Շուշին, միտելով պաշարյալներին սովի մատնել և հարկադրել անձնատուր լինելու։

Պատմագիրը նշում է, որ Աղա Մուհամմադ խանի այս շարանենգ

8 Մատենադարան, ձեռ. 2734, երես 9ա։

մտադրությունը անհիմն չէր, քանի որ մինչ այդ արդեն, նախորդ երկու տարիներին, պարսկական զորքերը անընդմեջ հարձակվում էին Արցախի վրա՝ բերքահավաքի ժամանակ «և ոչ տային թոյլ ժողովել զվաստակս իւրեանց»[9]։

Սակայն Շուշեցին ոչինչ չի ասում պատմական այն իրողության մասին, որ 1795 թ. ամռան վերջին, երբ Աղա Մուհամմադ խանին չի հաջողվում գրավել Շուշին, նա Արցախում թողնում է փոքր զորախումբ՝ պաշարումը շարունակելու նպատակով և ինքը հիմնական զորքով անցնում Վրաստան, գրավում և ավերում նրա մայրաքաղաքը։ Չի ասվա) նաև այն մասին, որ Աղա Մուհամմադ խանի հրոսակները Թիֆլիսն ավերելուց հետո որոշում են ձմեռել Մուղանի դաշտում՝ գարնանը պատերազմական գործողությունները վերսկսելու մտումով և թե ինչպես ռուսական զորքերի՝ դեպի Անդրկովկաս շարժվելու լուրը հարկադրում է Աղա Մուհամմադ խանին թողնել Մուղանը և վերադառնալ Պարսկաստան։

Նշված քաղաքական կարևոր անցքերը, դժվար է ասել գիտակցաբար թե անգիտակցաբար շրջանցելով, Հակոբ Շուշեցին անդրադառնում է պարսիկների 1797 թ. Արցախ կատարած արշավանքին։ Շուշեցին սրտի ցավով նկարագրում է, թե որպիսի տանջանքների է ենթարկում Արցախի բնակչությանը Աղա Մուհամմադ խանը՝ իր երկրորդ արշավանքի օրերին, հատկապես Շուշի ամրոցի բնակիչներին, որոնց լքել էր նորելուկ կնամարդի Իբրահիմ խանը և յուրայիններով ապաստանել Դաղըստանի լեռնականների մոտ։

Այնուհետև Հակոբ Շուշեցին նշում է, որ շահի դաժանություններից զերծ չէին մնում նաև իր իսկ անմիջական սպասավորները։ Եվ նրանցից մեկը՝ Սաֆար Ալին, գիշերով մտնում է շահի ննջարանը և դաշույնի հարվածներով վերջ դնում բռնակալի ոճրաշատ կյանքին։ Հեղինակը հավատարիմ է մնում պատմական իրականությանը, երբ նկարագրում է պարսիկ նվաճողների խուճապահար նահանջը Արցախից։

Հակոբ Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» ձեռագիր աշխատության մեջ արժեքավոր տեղեկություններ կան Արցախի XVIII դարի երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության վերաբերյալ։ Այն առատ նյութ է պարունակում նաև Աղա Մուհամմադ խանի՝ 1795—1797 թթ. Արցախ կատարած արշավանքների և սրանց նախորդած անցքերի, հատկապես Սուլեյման շահզադեի գլխավորությամբ 1793—1794 թթ. պարսկական զորքերի ասպատակությունների

9 Նույն տեղում, երես 17։

մասին, անցքեր, որոնց վերաբերյալ ժամանակակից հեղինակների գործերում գրեթե ոչինչ չի պահպանվել։

ՍԵՐՈՎԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Աղա Մուհամմադ խանի՝ դեպի Անդրկովկաս կատարած արշավանքների մասին ուշագրավ տեղեկություններ ենք գտնում նաև Սերովբե Պատկանյանի արձակ և չափածո ստեղծագործություններում[10]։

Սերովբե Պատկանյանը, որը հայտնի է նաև Սերովբե գրիչ անունով, եղել է մեզ հետաքրքրող դեպքերի ականատես և թողել է «Պատմութիւն աւերման Տփխիս քաղաքի» վերտառությամբ արձակ մի ստեղծագործություն։ Նրա գրչին են պատկանում նաև Թիֆլիսի ավերման ու բնակչության գերեվարության մասին չափածո մի քանի նկարագրություններ։

Սերովբե Պատկանյանը ծնվել է 1770 թ., Կ. Պոլսում։ Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում, ապա մեկնել է Տրիեստ և սովորել Հարություն Բասենցյանի մոտ։ Կ. Պոլիս վերադառնալուց հետո, Սերովբեն զբաղվում է ուսուցչությամբ։ Շատ չանցած, ամբաստանվելով, բանտարկվում է, բայց կարողանում է փախչել բանտից և ապաստանել Թիֆլիսում։ Այստեղ նրան հյուրընկալում է վրաց բանակում հրետանապետի պաշտոն վարող մայոր Գաբրիելը։ Թիֆլիսում նա դպրոց է բացում, որտեղ սովորում էին ոչ միայն Թիֆլիսի հայ մեծամեծերի երեխաները, այլև Հերակլ արքայի որդիներն ու թոռները։ Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի ժամանակ նա եղել է քաղաքում, ապա ապաստանել մի քարանձավում։ Պարսիկների հեռանալուց հետո, Հերակլ II-ի հրամանով առաջին հերթին վերականգնվում է Սերովբեի դպրոցը։ 1805 թ. Սերովբեն ուսուցչություն է անում սկզբում Աստրախանում, ապա Նոր Նախիջևանում։

Ս. Պատկանյանը մահացել է 1836 թ.։

Այժմ փորձենք անդրադառնալ Սերովբե գրչի՝ 1795 թ. Աղա Մուհամմադ խանի կողմից Թիֆլիսի ավերման նկարագրության մեջ արծարծված այն խնդիրներին, որոնք, մեր կարծիքով, արժեքավոր են ո՛չ միայն իբրև ականատես հեղինակի վկայություններ, այլև իր իսկ հեղինակի անձի առումով։ Լինելով իր ժամանակի կրթված անձանցից մեկը, Սերովբե գրիչը կարողացել է ճիշտ ընկալել դեպքերը և եղելությունները գնահատել պատշաճ ձևով։ Նրա նկարագրություններն աչքի են զարնում անմիջականությամբ և զգացմունքայնությամբ։ Հուզաթաթավ

[10] *«Պատմութիւն աւերման Տփխիս քաղաքի, Սերոբէ Գրչի» (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912 էջ 376)։*

է հեղինակի յուրաքանչյուր խոսքը։ Անհուն կսկիծով է նա գրում իր սիրելի քաղաքի ավերման ու կործանման, նրա բնակչության հասած արհավիրքների, այն անլուր դաժանությունների մասին, որ ցուցաբերում էին պարսից հրոսակներն այդ օրերին։ Արդեն նշել ենք, որ 1795 թ. Անդրկովկաս կատարած արշավանքի նախօրյակին Աղա Մուհամմադ խանը բանակցություններ է վարել մի քանի պետությունների հետ, նպատակ ունենալով ճշտելու նրանց վերաբերմունքը դեպի ձեռնարկվելիք արշավանքը, շահելու նրանց բարյացակամությունը՝ իր հետագա գործողությունների համար։ Ասենք նաև, որ այս մասին մեզ հասած հայկական սկզբնաղբյուրներում գրեթե ոչ մի տեղեկություն չենք հանդիպում, բացի Սերովբե գրչից և Անանուն պատմիչի մասնակի ակնարկից։

Արշավանքն սկսելուց առաջ Աղա Մուհամմադ խանը հարկ է համարում հատուկ խորհրդակցություն գումարել ու քննության դնել մասնավորապես պարսկա-թուրքական և պարսկա-ավստրիական հարաբերությունների հարցը և լսել իր ավագանու կարծիքն այդ մասին։ Սերովբե Պատկանյանը գրում է, որ այդ խորհրդակցությունը հավանություն է տվել Աղա Մուհամմադ խանի գործելակերպին և որ հայտնվել է այն կարծիքը, որ թեև Թուրքիան նրա հետագա անելիքների իրագործմանը անշուշտ հավանություն կտա, սակայն առավել ապահով լինելու համար, լավ կլինի, եթե այդ ծրագրերն արժանանան նաև ավստրիական կայսեր հավանությանը։ Սերովբե գրիչը տեղեկացնում է, որ նշված խորհրդակցությանն անմիջապես հաջորդում է հրովարտակների ու դեսպանների առաքումը հիշյալ երկրներ՝ մեծագին նվերներով հանդերձ։

Ուշագրավ է Աղա Մուհամմադ խանին՝ հիշյալ երկրների արքունիքների տված պատասխանի Սերովբե գրչի բացատրությունը, որոնք նկատի առնելով Ռուսաստանի հովանավորությունը, մատնանշել են Վրաստանը ընկճելու անկարելիությունը։ Պատմիչն այնուհետև գրում է, որ Աղա Մուհամմադ խանը ստանալով նշված երկրների տիրակալների պատասխանները, Անդրկովկաս արշավելու տենդագին պատրաստություններ է տեսնում։ Սերովբեի վկայության համաձայն, որը և համապատասխանում է պատմական իրականությանը, Աղա Մուհամմադ խանը չկարողանալով կոտրել Շուշի բերդի պաշտպանների կամքը, որոշում է հիմնական ուժերով շարժվել դեպի Թիֆլիս, համոզված լինելով, որ Թիֆլիսը գրավելուց հետո ավելի դյուրին կլինի Շուշին իրեն ենթարկել։

Սերովբե Պատկանյանը ամենայն ճշտությամբ շարադրում է, պարսկական զորքերը Արցախ ներխուժելուց հետո, Աղա Մուհամմադ խանի գործելակերպը։ Թե ինչպես է Աղա Մուհամմադ խանը գալիս Գանձակ,

վերակազմում իր զորական ուժերը, իր զորքին միացնում նաև Ջավադ խանի մարդկանց, ապա մի վերջնագիր ուղարկում Հերակլ II-ին ու պահանջում նրանից, իբրև հնազանդության նշան, իր որդիներից կամ թոռներից մեկին իրեն պատանդ ուղարկել։

Հերակլը մերժում է Աղա Մուհամմադ խանի պահանջը։ Իսկ թե ինչ հույսեր ու հիմքեր ուներ Հերակլը՝ մերժելու Աղա Մուհամմադ խանի պահանջները, այդ առթիվ Սերովբեն գրում է հետևյալը. «Ուստի եւ զբացասութեան պատասխանիս՝ ապաւինելով նախ՝ յԱստուծոյ, և ապա՝ յօգնութիւն ռուսաց։ Քանզի՝ Եկատերինէ կայսրուհին շնորհեալ էր Հերակլայ Արքային զ 25000 զինուորս կապեալս զինուք, որք յաւետ կային ի Մօզդօքի, մեծաւ պատրաստութեամբ, և ակնունէին զալստեանն համբաւոյ կողման, որք իբրև զբաղէ և զցին ժամանեսցեն յանձկութիւնս նեղութեանց Քրիստոնէից»[11]։ Ի դեպ, հայկական աղբյուրներից միայն Սերովբե գրչի նկարագրության մեջ ենք հանդիպում պատմական այն իրողությանը, ըստ որի Աղա Մուհամմադ խանը նախքան Վրաստանի իր հարձակվելը, իրեն հատուկ երկդիմությամբ շտապում է հավատացնել Հյուսիսային Կովկասում (Մոզդոկում) գտնվող ռուսական զորամասերի հրամանատարությանը, թե ինքը չի պատրաստվում արշավելու Անդրկովկաս. «Ուստի՝ եթէ Վալին Վրաստանեայց յանդգնես գոլով՝ ի նպաստ կոչեսցէ զձեզ՝ մի ինչ աշխատ առնէք զանձինս ձեր, քանզի՝ չեն իմ կամք բնաւ մտանելոյ ի քաղաքն նորին, և ոչ իսկ աւերել. նաև ոչ զմասն ինչ ի սահմանաց նորին, վասն որոյ՝ միամիտ և անհոգ լերուք առ այս»[12]։

Սերովբե Պատկանյանը գրում է, որ Հերակլ II օգնություն հայցելու նպատակով մի քանի անգամ դիմել է Հյուսիսային Կովկասում գտնվող ռուսական զորքերի հրամանատարին, սակայն ամեն անգամ հանգստացուցիչ պատասխան է ստացել, թե պարսիկները չեն համարձակվի մտնել Վրաստան և որ Մոզդոկում գտնվող ռուսական զորամասերը սպասում են կայսրուհու հրամանին՝ Անդրկովկաս մուտք գործելու համար։

Սերովբեն մեղադրում է Հերակլ արքային, որ իր ամբողջ հույսը դրել էր հյուսիսից ակնկալվող օգնության վրա։

Հարկ է նկատել, որ Իմերեթից եկած օգնական զորքի թիվը Սերովբե գրիչը ուռճացրել է. այն չի հավաստվում այլ աղբյուրների տվյալներով։

Արժեքավոր են հեղինակի տեղեկությունները վրաց և պարսից զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտերի մասին։ Սերովբեի հավաստմամբ սեպտեմբերի 10-ին տեղի է ունենում առաջին ճակատամարտը պարսիկների և վրացական զորքերի միջև։ Զորս ժամ տևող այս արյունահեղ ճակատամարտը ավարտվում է վրացիների հաղթանակով։ Հաջորդ օրը Աղա Մուհամմադ խանին խոստումներով և հորդորներով հաջողվում է խրախուսել իր զորքին, որը հրապուրվելով սպասվելիք ավարով, պատրաստվում է նոր ճակատամարտի՝ դիրքավորվելով վրացական հրետանուց մի նետաձիգ հեռավորության վրա։ Սերովբեն նույնպես նշում է, որ մարտը տեղի է ունենում անհավասար ուժերի պայմաններում. թշնամու համար պարզվում է վրացական բանակի սակավաքանակ լինելը և այդ պարագան փաստորեն վճռում է ճակատամարտի բախտը։

Ուշագրավ է Սերովբե Պատկանյանի վկայությունն այն մասին, որ վրացական բանակի կազմում եղել են նաև Թիֆլիսի քաղաքացիները և այնտեղ ապաստան գտած պանդուխտները։ Կռվող կողմերի ուժերի հարաբերակցության մասին Սերովբեն գրում է, որ պարսից բանակը եղել է 30.000ից ավելի, իսկ վրաց բանակը կազմված է եղել ընդամենը 3.000 հեծյալներից։ Այստեղից կարելի է հետևեցնել, թե ինչպիսի արիությամբ են մարտնչել վրացի և հայ քաջամարտիկները, որ կարողացել են առաջին ճակատամարտում փաստորեն պարտության մատնել Աղա Մուհամմադ խանի առաջապահ զորամասերին։ Այնուամենայնիվ վճռական ճակատամարտում պարսից զորքերին հաջողվում է կոտրել վրաց սակավաքանակ բանակի դիմադրությունը և ներխուժել քաղաք։

Անհավասար ուժերի այդ գոտեմարտում է, որ հերոսի մահով զոհվում են Հերակլի հրետանու բարձրաստիճան հրամանատարներ վրացի Դիորգին և հայ Գաբրիելը։

Այնուհետև Սերովբե գրիչը նկարագրում է Թիֆլիսի ավարառությունը թշնամու կողմից։ Նա հանգամանալից տեղեկություններ է հաղորդում թշնամու հրոսակների այն սահմռկեցուցիչ դաժանությունների մասին, որոնց ենթարկվում է քաղաքի խաղաղ բնակչությունը։

Բազմաթիվ հայկական սկզբնաղբյուրների վկայությամբ, Աղա Մուհամմադ խանի հրոսակները Թիֆլիսում մնացել են յոթ օր, սակայն ըստ Սերովբեի՝ երեք օր։ Վրաստանի մայրաքաղաքից թշնամու այդչափ շտապ հեռանալու պատճառը՝ ըստ Սերովբեի, այն երկյուղն էր, որ նա ուներ ռուսական պետությունից։

Թիֆլիսի ավերման լուրը Մոզդոկում գտնվող ռուսական զորքերին հասնելուն պես, վերջիններս շտապում են օգնության։ Սակայն ռազմավիրական ճանապարհի անբարեկարգ լինելու պատճառով ռուսական զորքերը չեն կարողանում արագ առաջ շարժվել։ Նրանց գալուստը մեծ ուրախություն է պատճառում Դուշեթիում գտնվող փախստականներին։

11 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 357։

12 Նույն տեղում։

Թե ինչ վերաբերմունք ունի Սերովբե գրիչը ռուսների փրկարար ուժի նկատմամբ, երևում է նրա «Պատմութեան» էջերից։

Ռուսաստանի ազատարար դերի փառաբանումով են ներշնչված պատմիչի բոլոր այն գործերը, որոնք վերաբերում են 1795 թ. պարսիկների կողմից Թիֆլիսն ավերելուն։ Հեղինակն իր «Պատմութիւնն» ավարտում է չափածո ողբով և սորբ բերվող տողերը նվիրում ռուսական զորքի գալուստին՝

«Ռուսաց տէրն արթնացաւ,
և վեհափառն մեծացաւ,
թագուհին մեզ ողորմեցաւ,
տրտմեալ սիրտ մեր ուրախացաւ։
Մէր կայսրուհւոյն բազմացաւ,
զգթութիւնն առատացաւ,
որում տացէ տէր զկեանս,
զի գլուխք մեր կացցեն անցաւ։
Վիշապին սիրտ յոյժ ճմլեցաւ,
յահէ նորան յետս դարձաւ
յանօղն ի կորուստ բոլորիցս
ի փրկութիւն իւր փութացաւ»։

Սերովբե գրիչը՝ նույն ինքը Սերովբե Պատկանյանը, 1795 թ. Թիֆլիսը պարսիկների կողմից ավերելու պատմությանն է նվիրել նաև մի քանի չափածո գրվածքներ՝ «Ի հնգակի հարուածս Տփխիսայ», «Ի մահ Ջավաթ խանի» և «Ի յաղթանակ Ցիցիանովի», ուր նկարագրում է ժողովրդին հասած ահավոր աղետի՝ քաղաքը հրդեհելու, ժողովրդին կոտորելու և գերեվարելու տեսարանները, ինչպես և դրանց հաջորդած սովն ու մահտարաժամը։

Սերովբե Պատկանյանի «Պատմութիւնը» արժեքավոր սկզբնաղբյուր է Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ պարսկական զորքի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների մասին։

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՐՉՅԱՆ

Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների վերաբերյալ հետաքրքրական հիշատակարան է թողել հայ բազմավաստակ ուսուցիչ Հովհան Ոսկերչյանը, որը նույնպես անցքերի ժամանակակից և ականատես հեղինակ է, ուստի և նրա հիշատակարանը արժանահավատ մի սկզբնաղբյուր է[13]։

Հովհան Ոսկերչյանի կենսագիր Առաքել Արարատյանի «Համառօտ

[13] «Կռունկ Հայոց աշխարհի», Գ տարի, Թիվ Դ, ապրիլ, Տփխիս, 1862. «Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար»։

վարք և գրաւոր գործք տեառն Յովհաննու աւագ քահ. Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ» խորագիրը կրող գրքույկից[14] տեղեկանում ենք, որ նրա հայրը Աստապատից տեղափոխվել և հաստատվել է Էջմիածնում, որտեղ և 1761 թ. ծնվել է Հ. Ոսկերչյանը։ Նա կրթություն է ստացել Էջմիածնի վանքում, որտեղ նա քանդակագործություն և նկարչություն է սովորել քանդակագործ Հարությունից և նկարիչ Հովնաթանից, դառնալով ձեռագրերի հմուտ արտագրող ու ծաղկող։

Հ. Ոսկերչյանի հիշյալ «Յիշատակարանը» բովանդակում է 1751—1804 թթ. Արարատյան երկրում տեղի ունեցած քաղաքական անցքերի պատմությունը։ Ոսկերչյանը, նույնպես, իր նկարագրությունը սկսում է Նադիր շահից հետո Պարսկաստանում ստեղծված անիշխանությունից և միջֆեոդալական կռիվներից։ Նա գրում է, որ Քերիմ խանից հետո «...զօրանայ ի Թէհրան Աղա Մահմադ խան նե(ր)քինացեալն ի Նադիր շահէ, և զրաամբ ածեալ զկողմունս Պարսից խորհի գալ և յԱտրպատական յաշխարհ և նուաճեալ զԹավրիզ, զխոյ և զՆախիջևան»։ Նշված խանությունները նվաճելուց հետո, սկսվում է նրա արշավանքն Անդրկովկաս։ Ոսկերչյանը նշում է, որ 1794 թ. հուլիսին Աղա Մուհամմադ խանը իր եղբորը՝ Ալի Ղուլի խանին, ուղարկում է Երևանի վրա, իսկ ինքը Խուդափերին կոչվող կամուրջով անցնում է Արաքսը, մտնում Արցախ ու պաշարում Շուշի ամրոցը։ Բազմաթիվ աղբյուրներից հայտնի է, որ այդ իրողությունը տեղի է ունեցել ոչ թե 1794 թ., ինչպես գրում է Հ. Ոսկերչյանը, այլ 1795 թ. օգոստոսին։ Ալի Ղուլի խանի մուտքը Երևանի խանություն տեղի է ունեցել այն օրերին, երբ Աղա Մուհամմադ խանը մտնում է Արցախ. 1795 թ. օգոստոսին է, որ Աղա Մուհամմադ խանը զորքը բաժանում է երեք մասի, որոնցից մեկն իր եղբոր առաջնորդությամբ ուղարկում է Երևանի խանության վրա։ Հետևաբար, Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս արշավելու տարեթվի մասին Ոսկերչյանի մոտ շփոթ գոյություն ունի։ Ալի Ղուլի խանն իր զորքերով մտնում է Երևանի խանություն և կանգ առնում Երևանից ոչ հեռու գտնվող Զարբախ կոչվող վայրում։ Երեք օր անց, մեծամեծ նվերներով նրան այցելության է գալիս Ղուկաս կաթողիկոսը՝ պարսիկների ասպատակությունից Էջմիածնի վանքը և շրջակա գյուղերը զերծ պահելու խնդրանքով։ Ալի Ղուլի խանը նրան հարգալից է ընդունում, սակայն, «առ երես ըստ խորամանկութեան պարսից»։

Հ. Ոսկերչյանը շատ համառոտակի տեղեկացնում է նաև, որ Աղա Մուհամմադ խանի զորամասերը պաշարելով Շուշի ամրոցը, «հարկանէր

[14] Առաքել Արարատեան, Համառօտ վարք և գրաւոր գործք տեառն Յովհաննու աւագ քահ. Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատցւոյ, Տփխիս, 1859։

ռմբակոծեօք, և սփռեալ զզօրս իւր աւերէր զբարելի աշխարհն Արցախու»։ Սակայն, երբ տեսնում է, որ ոչինչ չի ստացվում, գրում է Հ. Ոսկերչյանը, որոշում է հարձակվել վրաց երկրի վրա, ենթադրելով, որ Ղարաբաղի խանի ու Երևանի խանի՝ իրեն չհանձնվելու պատճառը վրաց Հերակլ արքան է, ուստի նախ պետք է նրան հպատակեցնել։ Աղա Մուհամմադ խանը թողնում է Շուշի ամրոցի պաշարումը և Գանձակի վրայով շարժվում դեպի Թիֆլիս։ Իսկ Հերակլ II տեղեկանալով պարսիկների՝ իր երկրի վրա արշավելու մասին, շտապում է զորաժողով անել։ Ըստ Հ. Ոսկերչյանի, նրան հաջողվում է 15 հազարանոց մի բանակ ժողովել և Շամշադինում հաստատվել՝ թշնամուն դիմագրավելու մտումով։ Սակայն 16 օր այնտեղ մնալուց հետո, նա աստիճանաբար նահանջում է դեպի Թիֆլիս, քանի որ օրեցօր բանակի պարենամթերքը պակասում է։ Թշնամին կրնկակոխ հետապնդում է նրան և հասնում Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Կումիս և Սողանլուղ վայրերը։ Հ. Ոսկերչյանը նույնպես հավաստում է, որ Հերակլն անելանելի վիճակում էր գտնվում իր որդիների անմիաբանության, ինչպես և պատշաճ քանակով զորք չունենալու պատճառով։ Այնուամենայնիվ, Հերակլը թշնամու ուժերի այդչափ գերակշիռ պայմաններում, որոշում է ճակատամարտ տալ։ Հ. Ոսկերչյանն այդ մասին գրում է. «...անճարացեալ ելանէ (Հերակլ արքան,—Ռ. Տ.) նօքօք ի պատերազմ ի Սողանլուղ որ է մերձ քաղաքին և առաջին աւուրն փոքր ինչ յաղթութիւն գտեալ՝ դառնայ ի քաղաքն»[15]։ Այնուհետև նա պատմում է, թե ինչպես վրաց զորքերը սեպտեմբերի 14-ին և 15-ին վերջին կռիվներն են մղում Թիֆլիսի մատույցներում, ապա քաղաքը ընկնում է և ութ օր շարունակ ենթարկվում կողոպուտի ու ավերումների։ Հեռանալիս թշնամին իր հետ տանում է հազարավոր գերիներ՝ ստրկավաճառության։

Մեզ հայտնի գրեթե բոլոր աղբյուրների վկայություններից Հ. Ոսկերչյանի՝ Թիֆլիսից Աղա Մուհամմադ խանի շտապ հեռանալու պատճառի բացատրությունը տարբերվում է։ Նա գրում է, որ Թիֆլիսը հիմնահատակ ավերելուց հետո «իբրև ետես թէ ի գլուխ ել խորհուրդն զոր խորհեցաւ վասն Տփխիզայ քաղաքին և ամենայն յոյս իշխողացն Արցախու և Երևանու հատաւ, դարձաւ ի Թիֆլիզու ի Գանձակ»[16]։ Ըստ Հ. Ոսկերչյանի, Աղա Մուհամմադ խանը նորից է պաշարում Շուշին, իսկ եղբորը՝ Ալի Ղուլի խանին, ուղարկում է Երևանի խանության։ Սակայն չկարողանալով Շուշին գրավել, նա որոշում է Արցախի բնակչությանը սովի մատնելու միջոցով ծնկի բերել։ Պարսիկ հրոսակները Ար-

15 «Կռունկ Հայոց աշխարհին», Տփխիս, 1862, էջ 285։

16 Նույն տեղում, էջ 287։

ցախի բնակչությանը ոչ միայն թույլ չեն տալիս բերքը հավաքել, այլև աշնանացան կատարել։

Հ. Ոսկերչյանի մոտ շփոթ գոյություն ունի նաև Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած երկրորդ արշավանքի տարեթվի հարցում։ Ըստ Հ. Ոսկերչյանի, այն տեղի է ունեցել 1796 թ., մինչդեռ հայտնի է, որ Աղա Մուհամմադ խանի երկրորդ արշավանքը դեպի Անդրկովկաս տեղի է ունեցել 1797 թ. մայիսի երկրորդ կեսին։

Ըստ Հ. Ոսկերչյանի, Աղա Մուհամմադ խանն անարգել մտնում է Շուշի բերդը, որը և համապատասխանում է պատմական իրականությանը, քանի որ նորելուկ Իբրահիմ խանը մերձավորներով հանդերձ, ինչպես արդեն նշեցինք վերը, ապաստանել էր Դաղստանի լեռնականների մոտ. «և արկեալ զձեռն առ յոմանս իշխանս առնէր զնոսա գոյաթափս ընդ որս և զՄէլիք Ջիմշիտ զորդին Մէլիք Շահնազարին»[17]։ Պատմիչը միաժամանակ նշում է, որ Աղա Մուհամմադ խանը 25 օր մնալով Շուշիում, մտածում էր կրկին արշավել Թիֆլիսի վրա, սակայն մինչ նա կիրականացներ իր այդ հրեշավոր խորհուրդը, «...յարեան ի վերայ երեք սենեկապան ծառայք նորա և չարամահ սատակեցին զնա յամրոցն Շուշւոյ»[18]։

Այնուհետև Հ. Ոսկերչյանը նկարագրում է պարսից զորքի խուճապահար փախուստը, հայտնում իր գոհունակությունը Աղա Մուհամմադ խանի սպանության առթիվ։ Իր հիշատակարանի երկրորդ բաժնի վերջում Հ. Ոսկերչյանը նշում է, որ Աղա Մուհամմադ խանի արշավանքները խիստ բացասական ազդեցություն ունեցան աշխարհով մեկ ցրված հայության վրա, որոնք Անդրկովկասը (Վրաստանը և Արցախի հայ մելիքությունները) համարում էին հուսալի մի պատվար իրենց ազատագրական ծրագրերում։

Հ. Ոսկերչյանը Աղա Մուհամմադ խանի Անդրկովկաս կատարած արշավանքների (1795—1797 թթ.) պատմությունը շարադրում է խիստ համառոտակի, սակայն իբրև ականատես հեղինակ հավաստում է բոլոր այն տեղեկությունները, որոնք գոյություն ունեն այլ սկզբնաղբյուրներում։ Նա ավելի հանգամանորեն է անդրադառնում այդ արշավանքների հետևանքով առաջացած սովին ու համաճարակներին, գերեվարությանն ու գերիների վաճառքին։

Թեև Հ. Ոսկերչյանի «Յիշատակարանը» զերծ չէ մասնակի սխալներից, որոնք մասնավորապես վերաբերում են տեղի ունեցած անցքերի

17 Նույն տեղում, էջ 288։

18 Նույն տեղում, էջ։

թվագրությանը, այդուհանդերձ, այն Անդրկովկասի XVIII դարի երկրորդ կեսի պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է։

ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑ

1969 թ. Մաշտոցի անվան Մատենադարանը Թուբինգենից (ԳՖՀ) ստացել է այնտեղ պահվող հայերեն ձեռագրերից մեկի միկրոժապավենը, որը պարունակում է Արցախի 1721—1822 թթ. քաղաքական անցքերի նկարագրությանը նվիրված Սարգիս Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն աշխարհին Աղուանից» աշխատությունը[19]։ Ս. Հասան-Ջալալյանցի այս գործի մեջ մեզ հետաքրքրողը, տվյալ դեպքում, 1795—1797 թթ. Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ պարսկական զորաբանակի Անդրկովկաս կատարած արշավանքի պատմությունն է, նրա յուրովի ընկալումներն ու ուրույն բացատրությունները։

Ինչպես բոլոր հայ հեղինակները, նույնպես և Ս. Հասան-Ջալալյանցը տեղեկությունները Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքի մասին սկսում է XVIII դարի վերջին քառորդում Պարսկաստանում տեղի ունեցած գահակալական կռիվների պատմությունից, այդ պայքարում ղաջար ցեղի ներկայացուցիչ Աղա Մուհամմադ խանի՝ հաղթող դուրս գալու և նրա հետագա նվաճողական միտումների պատմությունից։ Հեղինակը նշում է, որ պարսից գահին տիրելուց հետո Աղա Մուհամմադ խանը շտապում է պարսկական գերիշխանությունը վերահաստատել Անդրկովկասում։ Նա հսկայական զորք է կուտակում Պարսկաստանի հյուսիսային սահմաններում, մասնավորապես Ատրպատականում, Սուլեյման սարդարի հրամանատարությամբ հետախուզական ջոկատներ է ուղարկում Արցախ և Արարատյան երկիրը։

Ս. Հասան-Ջալալյանցն անդրադառնալով պարսից հրոսակախմբերի ներխուժմանը Վրաստան, նշում է, որ վրաց ավագանու, թագաժառանգների ու թագավորի միջև գոյություն ունեցող հակասությունները, նրանց անմիաբանությունը թուլացրին երկրի պաշտպանունակությունը։ Նա նշում է, որ պարսիկների դեմ մղած առաջին ճակատամարտում վրացական զորքը արիաբար մարտնչեց թշնամու դեմ և նույնիսկ հաղթեց։ Վրացական սակավաքանակ զորքի առաջին ճակատամարտում հաղթող հանդիսանալու իրողությունը Ս. Հասան-Ջալալյանցն ավելի է շեշտում, քան մեզ հայտնի հայկական որևէ այլ սկզբնաղբյուր։ «Հերակլ առեալ զհանդերձանս պատերազմին և շանթառատ թնդանօթս ելանէ ընդ առաջ և ի նմին տեղւոջ պատահի պատերազմ յերկուց կողմանց անհնարին

19 «Պատմութիւն աշխարհին Աղուանից. Ա. Աւան Ուզբաշի այր մեծահռչակ ծաղիկ, ի թուին Հայոց ՌՃԿԱ-ին Աշխարհին Աղուանից շինէ զանառիկ յանմատչելի զօրս...», էջ 110։

քաջութեամբ բախեն զմիմեանս և երկուց կողմանց անկանեն վիրաւորք բազումք։ Հերակլ ցուցանէ ի նմին պատերազմի զմեծամեծ քաջութիւնս և ունէր ի մօտոյ խորտակել զանհամար բազմութիւնս Աղա-Մահմատայ եթէ ոչ Աստուած լինէր ձեռնտու Շահին Մահմատայ»[20]։

Ս. Հասան-Ջալալյանցը ևս ներկայացնում է այն ահավոր վիճակը, որ ստեղծվել էր Վրաստանում և մասնավորապես Թիֆլիսում, պարսից հրոսակների այնտեղ ներխուժելու հետևանքով. քաղաքը հրի էր մատնըվել, բնակչությունը կամ սրի էր քաշվել, կամ էլ գերի տարվել։

Հեղինակը պատմում է, թե ինչպես 1795 թ. Աղա Մուհամմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից և Պարսկաստան վերադառնալուց հետո, Հերակլ II շտապում է այդ արհավիրքների մասին տեղյակ պահել Եկատերինա II կայսրուհուն և հայցել նրա օգնությունը։ Այնուհետև Ս. Հասան-Ջալալյանցը խոսում է ռուսական զորքերի՝ դեպի Անդրկովկաս շարժվելու, գեներալ Վ. Զուբովի՝ Գանձակ մտնելու, հայերի ռուսական կողմնորոշման, Եկատերինա II-ի մահվան և նրա որդու՝ Պավելի, հրամանով Անդրկովկասից ռուսական զորքերը հետ քաշելու մասին։

Հարկ է նշել, որ Ս. Հասան-Ջալալյանցի «Պատմութիւնը» զերծ չէ փաստական որոշ սխալներից։ Այսպես, օրինակ, հեղինակի կարծիքով Աղա Մուհամմադ խանը Շիրազում ծագած ապստամբությունը ճնշել է 1793 թ.։ Մինչդեռ այս մասին մեր բոլոր աղբյուրներում ասված է, որ երբ 1795 թ. ներքինի շահի հրոսակները Թիֆլիսը ավերում էին, նա լուր է ստանում Շիրազում իր դեմ ծագած ապստամբության մասին և Թիֆլիսից հեռանում ու շարժվում է դեպի Պարսկաստան։ Մեր աղբյուրները վկայում են, որ Աղա Մուհամմադ խանը այլ ծրագիր ուներ։ Նա մտադիր է եղել Թիֆլիսը հիմնահատակ ավերելուց հետո, ձմեռել Մուղանի դաշտում, իսկ գարնանամուտին վերսկսել իր հարձակումները Շուշի բերդի վրա և նվաճել այն։ Ինչպես արդեն վերը նշվեց, շահը հրաժարվել է իր նախնական մտադրությունից ոչ միայն այն պատճառով, որ շտապել է ճնշել Շիրազում ծագած ապստամբությունը, այլև՝ որ նրան էր հասել ռուսական զորքերի կողմից «Պարսկական արշավանք» ձեռնարկելու լուրը։ Ահա պատմական այս իրողության տարեթիվն է, որ շփոթված է Ս. Հասան-Ջալալյանցի սույն աշխատության մեջ։

Հեղինակը կանգ առնելով Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած երկրորդ արշավանքի (1797 թ.) վրա, գրում է, որ Արցախի խանը չկարողացավ դիմադրել և «ելեալ ի գիշերի ախին հանդերձ փաղչի ի Կաւկաս, առ անէր իւր առ խանն Օմար և բերդն թողու ի դատարկ»[21]։

20 Նույն տեղում, էջ 21։

21 Նույն տեղում, էջ 25։

Այնուհետև Աղա Մուհամմադ խանը գրավում է անպաշտպան թողնված Շուշի բերդը, իսկ թե ինչպիսի ավերման է ենթարկում նա Արցախը և հատկապես Շուշի բերդաքաղաքը, այդ մասին պատմիչը գրում է. «Հուսկ յետոյ ի մտեալ յետ կողոպտելոյ զբոլոր քաղաքն զհիմն ի վեր աննել բոլոր շինուածոց և զամենայն բնակիչս նորին վարեալ ի Պարսկաստան»[22]։

Աղա Մուհամմադ խանի արշավանքների պատմությունը Ս. Հասան-Ջալալյանցն ավարտում է նրա սպանությամբ, որը տեղի է ունեցել Շուշիում։ Այստեղ նա սոսկ վերապատմում է հանրահայտ փաստերը, ուստի և մենք հարկ չենք համարում անդրադառնալ դրանց։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ

1795 թ. պարսիկների՝ Անդրկովկաս կատարած արշավանքին ականատես հեղինակ է նաև Հ. Արարատյանը, որը լինելով իր ժամանակի քաղաքական կյանքով ապրող, կրթված և իր էությամբ գործունյա մի անձնավորություն, գրել է իր ապրած տարիներին Անդրկովկասում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների պատմությունը, դրանք կապակցելով իր կյանքի այս կամ այն դրվագի հետ։ «Արարատյանը մեկն է այն մեմուարիստներից, որի համար գերադասելի էր լինել տարեգիր պատմիչ, քան հուշագրող մեմուարիստ,— գրում է Կ. Դանիելյանը,— այդ պատճառով նա ամենուրեք աշխատել է իր անձնական կյանքի դրվագները զուգակցել պատմականին կամ դարձնել նրա մի մասը»[23]։

Ելնելով այս իրողությունից, պարսիկների 1795 թ. Անդրկովկաս կատարած արշավանքների մասին Արարատյանի հաղորդած տեղեկությունները համարում ենք ճշմարտապատում, հետևաբար, լավագույն սկզբնաղբյուրներից՝ մեզ հետաքրքրող հարցի ուսումնասիրության համար։

Թիֆլիսի աղետը նկարագրող հայկական գրեթե բոլոր սկզբնաղբյուրները դատապարտում են Իմերեթից օգնության եկած զորամասերի վարքագիծը, որոնք թեթևամտորեն գերագնահատում էին սեփական ուժերը և ընդհակառակը՝ թերագնահատում թշնամուն։ Այս առումով բացառություն չի կազմում Հ. Արարատյանը, որը գրում է. «շատերը ուրախ-ուրախ ձայն էին տալիս, հապա հիմի թող Աղա-Մահմատ խանը գլուխը երևացնի, տեսնենք կարող է մեր դիմացը կանգնել»[24]։

22 Նույն տեղում։

23 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 186։

24 «Վաղարշապատցի Հարութիւն Արարատեանի կեանքը», ռուսերենից թարգմանեց Գ. Գ., Թիֆլիս, 1892, էջ 193։

Հ. Արարատյանը, նույնպես, աղետի պատճառներից է համարում թագաժառանգների միջև գոյություն ունեցող հակամարտությունը, կենտրոնախույս ուժերի առկայությունը, որի հետևանքով Հերակլ II անկարող եղավ զորական պատշաճ պատրաստությամբ դիմագրավել թշնամուն։ Թիֆլիսում ծայր առած խուճապի համար նա մեղքը բարդում է Դարեջան թագուհու վրա, որը պարսիկների՝ Թիֆլիս ներխուժելու նախօրեին մեծ շքախմբով թողնում հեռանում է քաղաքից, մինչդեռ Հերակլ արքան իր քաջարի զորքի հետ Կրծանիսում մարտնչում էր թշնամու դեմ, իսկ քաղաքի բնակչությունն ամեն տեսակի միջոցներ էր ձեռնարկել քաղաքի պաշտպանության համար։ Հարկ է նշել, որ Հ. Արարատյանի սույն մեղադրանքը զուրկ չէ իրական հիմքից, թեև, իբրև հուշագիր Արարատյանն իր ասելիքը գրավիչ դարձնելու միտումով այն կարող էր գունավորել, դիմել գեղարվեստական որոշ հորինումների, սակայն Թիֆլիսի ավերման, փախստականների և գերվածների թշվառ վիճակի, պարսիկ զինվորների վայրագությունների մասին նրա հաղորդած տեղեկությունները ճշմարտացի են և հավաստվում են այլ աղբյուրներով։

Հ. Արարատյանը որոշակիորեն ռուսական կողմնորոշում ունեցող հեղինակ է։ Նա ճիշտ էր ընկալում իր ժամանակի քաղաքական իրադրությունը և իրավացիորեն ռուսական ռազմաքաղաքական հովանավորության մեջ է տեսնում բախտակից հայ և վրացի ժողովուրդների փրկությունը թուրք-պարսկական զավթիչներից։

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆԱՄԱԿԸ

1795 թ. Աղա Մուհամմադ խանի հրոսակների կողմից Թիֆլիսի ավերման, բնակչության գերեվարության և ավարառության մասին ուշագրավ մի սկզբնաղբյուր է Խ. Աբովյանի արխիվից հայտնաբերված նամակը[25]։

Վավերագիրն ուղղված է ոմն Գալուստ արքեպիսկոպոսի, որի խնդրանքով Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու ավագ քահանա, դեպքերին ականատես տեր Հակոբի հաղորդած տեղեկությունները գրի է առնում անհայտ մի անձնավորություն և հղում Կ. Պոլիս՝ վերը հիշված Գալուստ արքեպիսկոպոսին։

Ուշագրավ է նամակի այն տեղեկությունը, ըստ որի քաղաքի բնակչության աշխատավոր տարրը համառ դիմադրություն է ցույց տվել թշնամուն, հարկադրելով նրան կռվել և զոհեր տալ քաղաքի յուրա-

25 Գ. Հակոբյան, Անծանոթ նամակ Թիֆլիսի 1795 թ. ավերման մասին և Խ. Աբովյանի «Ձայն աղաղակի...» բանաստեղծությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 7։

քանչյուր տան համար։ Նամակի սույն տեղեկության արժեքը բարձրանում է նաև նրանով, որ հայկական մյուս աղբյուրներում այդ մասին գրեթե ոչինչ չի ասվում։

Այս աղբյուրը ևս, հավաստում է այն տխուր իրողությունը, որ մինչև պարսիկների Թիֆլիս մտնելը Դարեջան թագուհին շտապում է հեռանալ քաղաքից։ Նրան հետևում են պալատականներից շատերն իրենց ընտանիքներով և ունեցվածքով, նույնն են անում նաև արքայազները, թողնելով Հերակլին իր Դավիթ թոռան հետ միասին։ Նամակում ասված է, որ այդ հայաշատ քաղաքից «...սակաւք են առ սոսա գտանեցեալք ի Հայոց, որոց թիւն ոչ կարէ ելանել ընդ Ճ (100)»[26]։ Պալատականների և ունևոր վերնախավի ներկայացուցիչների քաղաքից վաղօրոք հեռանալու հետևանքով ստեղծված խուճապը կանխելու նպատակով Հերակլ II հրաման է արձակում, որով արգելում է քաղաքը լքելը. «...քաջալերեցուք ամենեքեան անձն մի եղեալ եմ ընդ անձինս ձեր»[27],— վկայում է վավերագրի հեղինակը։

Պարսկական առաջապահ զորքերի դեմ 1795 թ. սեպտեմբերի 10-ի ճակատամարտում վրացական զորքի հաղթանակի մասին է վկայում նաև սույն աղբյուրը, ուր ասված է. «... և մնացեալ է արքայն միայն իւրովք վրացի զօրօքն, որովք ի դիմի հարեալ քաջութեամբ թշնամեացն, սաստիկ հարուածովք և բազում կոտորածովք արարեալ և զյաղթութիւն մեծ յառաջնում աւուր մարտին Ժ (10) սեպտեմբերի»[28]։

Հետագա արհավիրքների մասին նամակում կարդում ենք. «Եւ նոյն ժամայն զօրքն Պարսից տիրեն քաղաքին, և մտեալ առնուն զնա յաւար և ի կողոպուտ։ Տես դու աստանօր զանտանելի տագնապն և զաղետն ողորմելի բնակչաց քաղաքին՝ զաղաղակ գուժի և ողբոց, զձայն սգոյ և լալեաց, զարտասուս ծնողաց ի վերայ զաւակաց, զաղէխորով և զդառնակսկիծ հառաչումն առ հասարակ բազմաց, զհեղումն զաշխարհելի տեսութիւն տղայոց և մանկանց, և զանըմբերելի վիշտս և զնեղութիւնս կալելոց առաջի գերչաց, և զանհամեմատ տառապանս ազատաց և ռամկաց»[29]։

Պատկերավոր են նկարագրված Թիֆլիսի բնակիչների անձնուրաց պաշտպանական կռիվները թշնամու հրոսակների դեմ. «զի ամենեքեան որք քաջացեալք, և կանայք արիացեալ, միախորհուրդ և միակամ լեալք, իւրաքանչիւր դատ դատ ի տունս իւրեանց ամրացեալք, ի վերայ անձանց և որդւոց արեամբ չափ պատերազմեալ՝ ի պատուհանից և ի

26 Նույն տեղում, էջ 76։

27 Նույն տեղում, էջ 77։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

դրանց մարտ եղեալ, զբազումս ի նոցանէ սատկեալ են հրացանիւ։ Եւ այնքան յաճախ կոտորեալ են զնոսա, մինչ լցեալ են դիակամբք նոցա զամենայն անցս պողոտայից, և գրեթէ զամենայն զտուն, այսպէս պատերազմեցաւ և արեամբ են առեալ»[30]։ Թիֆլիսի բնակչության նման համառ պայքարի նկարագրության հանդիպում ենք միայն այս վավերագրում։

Արժեքավոր է նաև քաղաքը պաշտպանողների ազգային կազմի մասին՝ փաստաթղթի վկայությունը. «...մնացեալ են ամենայն ժողովուրդք Հայոց ի տունս և ի բնակութիւն իւրեանց, այլ և յոյժ բազումք յազգէն վրաց՝ որք միանգամայն պատերազմողք լցեն՝ հեծելազօրք և հետևակք»[31]։

Վերը նշվածից արդեն կարելի է եզրակացնել, որ բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանի հայտնաբերած և հրապարակած «Անծանոթ նամակը» Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի մասին կարևոր սկզբնաղբյուր է, որը և պատշաճ տեղ է գտել սույն ժողովածուի մեջ։

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1795—1797 թթ. Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների մասին կան որոշ ականատես հեղինակների արժեքավոր վկայություններ ևս, որոնց շրջանցելը, կարծում ենք, նվազ շահեկան կդարձնի մեր այս ժողովածուն։ Նկատի ունենք մասնավորապես կաթողիկոս Ղուկաս Կարնեցու այդ տարիների գրագրություններն ու նամակները՝ հասցեագրված ռուսական կայսրերին՝ Եկատերինա II-ին և Պավել I-ին, ռուսական բարձրաստիճան զորականներին ու պատրիարքին, վրաց արքաներ Հերկլ II-ին և Գեորգի XII-ին, Լազարյաններին և Հովսեփ Արղությանին, հնդկահայ գաղութի նշանավոր ներկայացուցիչ Շահամիր Շահամիրյանին, Պոլսի պատրիարքին և այլոց, ուր ականատեսի և քաղաքական իրադարձություններին մասնակցի լավատեղյակությամբ հեղինակը շարադրում է Արարատյան երկրում և Անդրկովկասում տեղի ունեցած անցքերը։

Փորձենք անդրադառնալ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատանն ու արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում պահվող նրա թողած տասնյակների հասնող վավերագրերից մի քանիսին, որոնք սերտ աղերս ունեն խնդրո առարկա նյութի հետ։

Դեռ 1793 թ. նոյեմբերին Ղուկաս Կարնեցին գրում է Շ. Շահամիր-

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում։

յանին Արարատյան երկրում տիրող քաղաքական իրադրության մասին, նշելով, որ իրենք ապրում են «ի մէջ օձից և կարճաց»։ Այնուհետև կաթողիկոսը նույն նամակով հայտնում է, որ Աղա Մուհամմադ խանը յուրայիններից մեկին սարդարի պաշտոնով ու մեծաքանակ զորքով ուղարկել է Ատրպատական և որ այդ սարդարը պահանջել է անվերապահ հպատակություն Անդրկովկասի խաներից և Հերակլ II-ից, բայց վերջինս և Շուշիի Իբրահիմ խանը համաձայնության են եկել ընդհանուր թշնամու դեմ միասնաբար պայքարելու և «ընդդիմանալու շահ անուանեալոյն և սարդարին»։

Ուշագրավ է նաև Ղուկաս կաթողիկոսի 1797 թ. հունիսի 13 թվակիր նամակը՝ ուղղված Շ. Շահամիրյանին, որտեղ նամակագիրը նշում է Արարատյան երկրում տիրող քաղաքական կացության ծանրությունը և ավելացնում, որ աչք չեն կարողացել բացել «ի մրրկեալ ալեաց թշնամեաց մերոց հեթանոսաց»։

Նույն նամակում, անդրադառնալով 1796 թ. ռուսական զորքերի՝ դեպի հարավ շարժվելուն և Վալերիան Զուբովի հրամանատարությամբ ու Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի ուղեկցությամբ ռուսական զորամասերի՝ Գանձակի գավառը մտնելու խնդրին, նա գրում է. «ուստի և յոյս եղև մեր, թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ»։ Սակայն ռուսական զորքերի վերադարձը վհատեցնում է նաև Ղ. Կարնեցուն, որը այնուհետև շարունակում է. «որով և խափանեցաւ գործն օգտակարութեան աշխարհի» և որ իրենց թողել են «հնուց տիրողացն աւերչաց» բռնատիրության ներքո։

Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է, թե ինչպես ռուսական բանակի՝ Անդրկովկասից ետ քաշվելուց հետո, Աղա Մուհամմադ խանը պատրաստվում է կրկին արշավել Անդրկովկաս։

Հիշատակության արժանի է Ղուկաս Կարնեցու տեղեկությունը Աղա Մուհամմադ խանի եղբոր՝ Ալի Ղուլի խանի, երկրորդ անգամ սարդարի իրավունքներով Երևանի խանություն մուտք գործելու և խանության բնակչությանը կրկնակի հարկադրումների և տուգանքների ձևով բռնագանձումների ենթարկելու մասին։

Այնուհետև հեղինակը տեղեկացնում է Աղա Մուհամմադ խանի մեծաքանակ զորքերի Արդաբիլում գտնվելու և վերստին Արցախ արշավելու մասին։ Մտնելով Արցախ հայաշխարհը, նա լուր է ստանում, որ Իբրահիմ խանը լքել է Շուշի ամրոցը և ապաստանել Դաղստանում իր ազգականների մոտ։ Թևավորված այս իրողությունից՝ բռնակալը վերցնում է ընդամենը հազար հոգուց բաղկացած մի հեծելազոր և շտապում մտնել Շուշիի բերդը։

Արժեքավոր են Ղ. Կարնեցու տեղեկությունները Արցախի բնակչության նկատմամբ Աղա Մուհամմադ խանի գործադրած բռնությունների, ինչպես նաև նրա սպանության մասին։ Կարնեցու սույն նամակից տեղեկանում ենք, որ երբ Աղա Մուհամմադ խանի սպանության լուրը հասնում է Երևան, ապա նրա եղբայր Ալի Ղուլի խանը, որ մինչ այդ «...զեղջուրս աճէր յայս կոյս և յայն կոյս նկուն եղեալ եմուտ ի բերդն և ետ ուուրց ընդ բերդապահացն կորեան»։ Ալի Ղուլի խանը շտապում էր Թեհրան՝ ժառանգելու թափուր մնացած գահը, սակայն անմիջապես կուրացվում է թագաժառանգի՝ իր եղբոր որդու, Բաբա խանի հրամանով։

1797 թ. հունիսի 13-ի գրությամբ Ղուկաս Կարնեցին Հնդկաստանի Կալկաթա քաղաքի բնակիչ հայազգի աղա Մովսես Խաչիկյանին հայտնում է այն բոլոր դառնությունների մասին, որ պատճառել են պարսիկ զավթիչները Երևանի խանության բնակչությանը 1795 թ. արշավանքի ժամանակ։

Ընդգծելով Ալի Ղուլի խանի դաժանությունները, կաթողիկոսը գրում է. «...և զորպիսի աղետալի անցս անցուցին ընդ բազում գաւառս, զաւերութիւն, զսրածութիւն և զգերութիւն և զկողոպտումն ընչից, յորոց և որքան վնասք հանդիպեցան սրբոյ աթոռոյս, և որչափ նեղութիւնք ժամանեցին մեզ», որոնք անհնարին է համարում հանձնել թղթին։

Ուշագրավ է նաև Ղուկաս Կարնեցու 1798 թ. կոնդակը, որով նա դիմում է Ռուսաստանում բնակվող հայերին և նկարագրում 1795 և 1797 թթ. պարսկական զորքերի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների հետևանքով Արարատյան երկրի բնակչության կրած տառապանքներն ու վնասները և նրանցից խնդրում նյութական օգնություն, այդ վնասներից զերծ չմնացած էջմիածնի վանքի համար։ Պարսիկ զավթիչների անհագ ընչաքաղցության և բռնագանձումների ահռելի չափերի մասին պատկերացում տալու նպատակով Ղ. Կարնեցին գրում է. «թէ զհանդերձս մեր եւս վաճառեալք ոչ լինուր վճարել»։

Ղուկաս կաթողիկոսը Ռուսաստանում բնակվող հայերին հարկ է համարում տեղյակ պահել, որ ինքը գրել է միայն Արարատյան երկրում տեղի ունեցած նշանավոր դեպքերի մասին, իսկ ողջ պատմությունը գրի առնելը համարում է անհնարին և առաջարկում ավելի մանրամասն տեղեկանալ Հովսեփ Արղությանից, որը 1796 թ. գալով Թիֆլիս, ականջալուր և ականատես է եղել պարսից բռնատիրության ներքո բնակչության կրած տառապանքներին։

Արժեքավոր սկզբնաղբյուր են նաև Լազարյաններին, Պլատոն արքեպիսկոպոսին և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքին նույն թվականներին Ղ. Կարնեցու գրած նամակները, որոնք իրենց բովանդակու-

թյամբ գրեթե կրկնում են վերը հիշատակված նամակները, ուստի և հարկ չենք համարում անդրադառնալ դրանց։

Ժողովածուում զետեղված են նաև առանձին անձանց նամակներ, դիմումներ, չափածո գործեր, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են և իրենց մեջ պարունակող հետաքրքրական փաստերով ու մանրամասնություններով գալիս են լրացնելու ինչպես Կարնեցու, այնպես էլ ժողովածուի այլ նյութերի տեղեկությունները։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուն, որ կրում է «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795—1797 թթ.)» խորագիրը, ոչ միայն պատմաբաններին, այլև ընթերցող լայն հասարակայնությանը հնարավորություն կընձեռի ավելի հանգամանորեն ուսումնասիրել XVIII դարի 90-ական թվականներին Անդրկովկասում տեղի ունեցած քաղաքական անցուդարձը, երկրամասի բնակչության տնտեսական և քաղաքական կացությունը, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու պատմական խոշոր իրադարձության բախտորոշ նշանակությունը եղբայրական ժողովուրդների ճակատագրի համար, որոնք, առհավետ իրենց բախտը կապելով հզոր Ռուսաստանի հետ, ընդմիշտ ձերբազատվեցին Թուրք-պարսկական հարստահարություններից, ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից և ստացան գոյատևելու և զարգանալու անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ։

Ռ. Տ. ՏԻՏԱՆՅԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՋՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՆՎԻՐԱԿ ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Դեկտեմբեր 1791 թ.

Թուղթ առ Զմիւռնոյ նորոգ նուիրակ և առաջնորդ Իսահակ վարդապետն, իբր պատասխանի ԺԱ թղթոց նորա յէջիցն ի սրբոյ Աթոռոյս ի Բայազետայ մինչև ի միւսին ժամանելն և ի սկսանիլն նուիրակութեանն գրելոց։

«...Զի ամսանն Աղա Մահմատ խանն[1] ներքինի զԱրաղստան հնազանդեցուցեալ յառաջ խաղաց իբր ԽԾ զօրօք դէպ ի Թարուիզ, և փախուցեալ անտի զՍատեղ խան բանակալն ի Շուշի, ինքն բանակեցաւ ի Մուշկեամբար կոչեցեալ վայրին և զՕրմու խանն տարագրեալ զեղբայրն նորին կացոյց ի տեղի նորա։ Եւ առ իշխօղսն կողմանցս զհրաւիրակս յղեաց։ Մարաղու, Ղարապաղու, Խօյոյ և Նախչուանու խաներն գնացին առ նա, բայց մեր խանն ոչ վստահեցաւ գնալ, այլ զեղբայրն և զախունտն յղեաց հանդերձ ընծայիւք. սմին նման՝ Գեանջայու և Նուխու խաներն ևս ընծայս յղեցին, կամեցանք և մեք յղել, բայցի մերոցն արգելաք, և բարուոք եղև։ Եւ սա յետ յղելոյն զախունտն և զեղբայրն տակաւին կասկածելով, պատրաստութիւն տեսանէր բերդին ամրանալոյ։ Իսկ նա դարձոյց զեղբայրն սորա և զախունտն, յղելով վասն սորա և զխիլայս և զպարգևս սաղամս պատուականս ի ձեռն երկուց իշխանաց իւրոց, զորս և մեք տեսաք և շահեցաք ի գնալն մեր յՕրևան ի շնորհաւորումն խիլայից խանին։ Մնաց Իբրահիմ խանն[2], որ ոչ խոնարհեցաւ առ նա, մեծարանս ինչ ետ, վասն որոյ և նա զդուստրն նորա զոր Խօյու Հիւսէին խանն ածեալ էր ինքեանն, խնդրեաց ի նմանէ ի պատանդ և ի յամեցուցանել նորա զհրամանն, եդ զնա ի կոճեղս, մինչև կատարեաց զհրամանն։ Ապա և զնա ևս խիլայեաց և առեալ զգանձ ինչ, ետ նմա զիշխանութիւն Թարուիզու, որ թեպետ ինքն դարձաւ ի Խօյ, բայց զեղբայրն Ջաֆարղուլի յղեաց ի Թարուիզ վարել զիշխանութիւն տեղւոյն։ Առաքեաց

Աղայ-Մահմատ-խանն և առ պետն վրաց զմարդ և զգիր և նա ևս ընդ մարդոյս նորա զվրացի ոք եղեալ, պատասխանի արար, օգնականութիւն ցուցանելով Իբրահիմ խանին։ Եւ նա մինչ ձմեռն վերաժամանէր, պատանդս առեալ յիւրաքանչիւր իշխողացն, արձակեաց զնոսա և ինքն դարձ արար ի Թէհրան, ժամադիր լինելով, թէ ի գարնանն վերստին գալոց է։ Յետոյ օրաւուր յաճախեցան ձայնն յառաջ շարժելոյ Ումամ խանին, զոր թուի թէ Իբրահիմ խանն էր խնդրեալ յօգնութիւն ինքեան և այն խորհըրդակցութեամբ պետին վրաց։ Իսկ իբրև եկն նա ի Բեյլաքան, պետն վրաց պատրաստութեամբ զօրաց գնաց յեզր Ղընըղ գետոյն, արգելուր զանցս նորա և ի հասանիլ նորա անդ յետ քանիցս մարդկանց և թղթոց երթևեկութեան, պետն վրաց զպատանդս և զդաշինս էառ ի նմանէ, որ Գեանջայու և Երևանու մի ինչ վնաս հասուցանէ և ապա թոյլատրեաց գնալ ի Շուշի և ի գնալ նորա անդ էառ, կամ այլ աւելի և պակաս զօրօք Իբրահիմ խանն ընկալեալ և միաբանեցուցեալ ընդ զօրաց իւրոց, եկեալ են ի Նախչուան և պաշարեալ զբերդն, յորում է Քեալբալի խանն՝ փեսայացու իշխողին մերոյ, և նա ըստ կարեացն մարտնչի, որ և ի խանէն մերմէ խնդրեալ էր յօգնութիւն ժամանել իւրն, և սա ամենայն զօրօք իւրովք գնաց ի Շարուր, լսեմք թէ խօյու և այլ երկրաց իշխօղքն ևս միաբանին ընդ սմա ի միասին դիմել ի վերա նոցա, ըստորում երկնչին յԱղայ Մահմատ խանէն, բայց դեռ բան ինչ ոչ է վճարեցեալ. և նոցա գալն ի Նախչուան և պաշարելն զբերդն ահա ԺԶ օր է։ Արդ սոքա միաբանեալ վանիցին զնոսա, բարի է և թէ այլ իմն կերպ լինիցի, այսմ երկրի ևս վնասուց կասկածանք գոյ, որոյ վասն զոչ սակաւ տարակուսանս կրեմք...

Գրեցաւ ի ՌՄԽ թուոջս և ի դեկ[տեմբեր]ի սուրբ աթոռս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, էջ 368բ—369, 1971:

2

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Հ. ԲԵԴՂԵՀԵՄՅԱՆԻՆ

Դեկտեմբեր 1791 թ.

Թուղթ ի Բասրայ առ Բեդղեհէմեան պարոն Յովհաննէսն, ի պատասխանի սոյն 1791 թուոյս յունիսի 12, գրեցելոյ և հանդերձ այլ թղթովք յղեցելոյ։

«...Իսկ զորպիսութեանց կողմանցս և մեր՝ թէ կամեսցիս գիտել, յամառանս Աղայ Մահմատ խանն որ եկն մինչ ի Թարուիզ, և կերպիւ մի հնազանդեցոյց զբազումս յիշխողացն կողմանցս և յաշնանն վերադարձաւ, զայն ի հարկէ լուեալ եք։ Յետ այնորիկ Արցախու իշխողն զբազում լազկիս բերեալ ի Կովկասու և հանդերձ նոքօք աւելի քան զքսան հազար զօրօք եկին ի վերայ Նախիջևանու, յորոց և մեզ ոչ սակաւ կասկած վնասուց գոյր։ Այլ սոյն երկրիս և խօյայ իշխօղքն միաբանեալ գնացին ի վերայ նոցա, և մինչ մերձ էին նոքա առնուլ զբերդն, պատերազմ ետուն սոքա ընդ նոցա և յաղթեալ վանեցին անտի՝ Աստծոյ յաջողութեամբն։ Այժմ կերպիւ ինչ յապահովի եմք, յապագայն ևս ի Տէր եմք ապաստան։ Եւ դու հարազատ սիրելիդ մեր՝ զորպէս ծանոյց գիրդ անպակաս առնելով՝ ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Փրկչին 1791 և ի թուականիս մերում ՌՄԽ, ի դեկտեմբերի ելն ի սուրբ Աթոռս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թղթ. 370:

3

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ

16 օգոստոսի 1792 թ.

Թուղթ ի Մադրաս առ Շահամիրն[3] աղայն ի պատասխանի թղթոյն նորա գրեցելոյ ի թուոց փրկչին 1789 ի նոյեմբերի 1 և շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն։

«...Նախապէս գրեալ էիր թէ՝ Կոստանդնուպօլիս կամ մտանեցեալ իցէ կայսերացն կամ թէ խաղաղութիւն եղեալ ընդ մէջ նոցա և սուլտանին։ Յիրաւի ընդ Ալամանսն վաղագոյն հաշտութիւն եղև, և ընդ ռուսն նոր խաղաղութեան ձայն հնչէ և դաշնադրութիւն են սկսեալ առնել, կատարումն տակաւին ոչ է յայտնի։ Իսկ վարկանելով սիրելւոյդ՝ թէ ամենայն իրքն ընդ քոյդ հաւատալոյ իցեն գլխաւորեալ, առ այն գրեալ էիր արկանել զհիմն արժանաւոր շինութեանց առ բազում օգտաւէտութիւնս, որպէս ի կայսրուհւոյն Ռուսաց, նոյնպէս և ի կայսերէն Ալամանաց ստանալ զնոմոս՝ ընդ հրամանաւ ունելոյ զկառավարութիւն կարգաւորաց ազգի մերոյ և այլն։ Եւ զՅովսեփ[4] արքեպիսկոպոսէն զանգատանաց ոչ ախորժել լսել ումեք և թողուլ յառաջնորդութեան Նոր Նախիջևանու և առ ամենեսեան մերայինսն գթած և ներօղ լինել։ Առ որս ծանիր, զի յառաջագոյն մինչ Ալամանք նոր առին զՍիչով՝ ուր են ի մերայնոց ժողովուրդք, և ոչ թողուին ի կարգաւորեաց մերոց մտանել անդ, թուղթ գրեցաք առ կայսրն Յովսէփ[5] և առ դեսպանն նորին որ ի Պետրպօլք և յղեցաք առ Յով-*

* Վավերագրից օգտվել ենք քաղվածաբար — Ռ. Տ.:

սէփ արքեպիսկոպոսն և առ ազնիւ աղայ Յովհաննէսն[6] հասուցանել ի ձեռն դեսպանին զԹուղթ կայսերն առ նա, յորում էր խնդիր մեր շնորհել զհրովարտակ համաժիտ Ռուսաց կայսրուհւոյ շնորհեցելոյն, որոյ աղագաւ դեսպանն և Յովսէփ վարդապետն գրեցին մեզ, թէ հասուցեալ իցեն առ կայսրն և նա խոստացեալ է կատարել զխնդիր մեր զկնի թեթևանալոյ ի խուժանաց պատերազմին, բայց վախճանեցաւ և բանն մնաց անկատար։ Այլ մեք իսպառ ոչ եմք վերջացեալ յայնմանէ փութոյ զնոյն հայցուած յիշեցուցանել եղբօր նորայ նորոգ թագաւորելոյն Լեօպոլայ[7]. տեսցուք թէ զիարդ յաջողեսցի։ Եւ առ հօգևոր որդին մեր Յովսէփ Աստուածիմաստ վարդապետն զսեր զխնամարկութիւն ունելով վասն բարեջանութեան չունիմք յօժարիլ ունկնդրելոյ բողոքման զնմանէ թէ լինիցի, այլ օժանդակիմք նմա ըստ պատշաճութեան և երթ և եկն թղթոց անպակաս լինի ի մէնջ առ այս մի ինչ հոգ լիցի սիրելւոյդ...»։

«...Պատմեմ ապա զանցից և զորպիսութեանց երկրիս կողմանցս։ Յանցելում ամին ներքինի աղայ Մահմատ խանն տիրեալ բոլոր Արարատեանս և բազմամբոխ զօրօք եկեալ ի Դաւրէժ հնազանդեցոյց զամենայն իշխօղսն երկրացս, բաց ի յԱրցախու Իբրահիմէն։ Եւ մինչ դարձ արար նա ի Դաւրիժու, Իբրահիմն համարձակեալ զԿովկասային վիրագ... Ուման խանն[8] ինքն և ամենայն զօրօք իւրեանց աւելի քան զԻ հազարաւ յեղակարծ յարձակեցան ի վերա Նախիջևանու, զքաղաքն աւերեցին և զբերդն պաշարեցին և մինչ նեղ էին արկեալ առնուլ, Երևանայ և Խօյայ իշխօղքն միաբան ամենայն զօրօքն իւրեանց գնացեալ պատերազմեցան՝ հարին զբազումս ի զօրաց թշնամացն և զայլսն վանեցին անտի, որք փախստեամբ դարձան ի Շուշի, Իբրահիմն պլազկիւն պահեաց առ իւր ի ձմռանն, զի կարիցէ զչարիս ինչ հասուցանել կողմանցս, այլ խափանեցաւ խորհուրդ նոցա։ Եւ վիրագն ամենայն մնացորդքն դարձաւ ի Կովկաս և ապահովութիւն եղև կողմանցս և սուրբ Աթոռոյս։ Այժմ զյիշեալ աղա Մահմատ խանէն համբաւէն թէ և զՇիրազ առեալ է և կրկին գալոց է յայս կողմս, և ի յԱրատափլ զսուր կապեալ թագաւորելոց է։ Աստուած խաղաղութիւն շնորհեսցէ և բազմավշտակիր ազգ մեր ազատեսցէ ի վտանգից։

Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի փրկչին 1792, յօգոստոսի ժԶ, ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թ. 381ա—381բ:

4

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ

Նոյեմբեր 1793 թ.

Թուղթ ի Մադրաս առ Շահամիր աղայն ի պատասխան թղթոյն նորա յամի Տեառն 1791 յապրիլի 15 գրելոյ։

Եւ դարձեալ գոհութիւն բարերարութեան նորա, որոյ շնորհիւն յայսպիսում ժամանակի կերպիւ մի կենցաղավարելով ի մէջ օձից և կարճեաց՝ զսուրբ Աթոռս Մայրս Հայաստանեաց ի ծառայութեան և ի բարեկարգութեան պահեմք ի պարծանս օրհնեցելոցդ։ Իսկ զոր ի վերոյ խոստացաք՝ զնոր եղելութեանց նշանակել, ահա այս է՝ զի ներքինի աղայ Մահմատ խանն՝ զորմէ յառաջ գրեալ եմք, թէ եկն ի Թարուէզ և դարձաւ և այլն. նա գնացեալ ի վերա Շիրազու, էառ զայն և զիշխօղն վանեաց անտի և զբերդն աւերեալ հարթեաց և զբազումս ի բնակչացն վարեաց ի կողմն Աստապատու և ինքն դարձ արարեալ ի Թէհրան և անդ դետեղեալ շահ անվամբ տիրելով ամենայն կողմանցն, ի յիւրայնոց զամն Սուլեյման խան սարդար կարգեալ յղեաց ի Թավրէզ, հրամանատար կողմանցս իշխողացն, որոյ ի գալն անդ բազում իշխողացն, գնացին առ նա ընծայիւք և ոմանք եւս զընծայս յղեցին. այլ Արցախու բռնավորին[9] զընծայ յղելն և չյղելն ոչ ստուգեցաք։ Եւ Արքայն վրաց[10] եւս մարդ և թուղթ յղեաց, բայց ոչ զընծայս, և համբաւեցաւ եւս թէ ընդ Արցախու իշխողին միաբանին, առ ի ընդդիմանալ շահ անուանելոյն և սարդարին և այլն։ Այլ այնմ լուաք թե սարդարն այն ի Թավրիզու չուեալ է առ շահն, իբր այսու պատճառաւ թե՝ շահի եղբայրն ի կողմն Գիլանու ապստամբեալ է, կամին յառնել ի վերայ նորա առ ի հնազանդեցուցանել։ Կատարած իրացն, թե զիարդ լինիցի, Աստուծոյ է գիտելի։ Զայսքան ինչ իմացել քո այժմ, ողջ լեր տերամբ մնալով անպակաս ի գիրդ և ի բարեկամութիւնդ։

Գրեցաւ յամի կենարարին 1793, նոյեմբերի եւն ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թ. 404ա:

5

ԹԱԳՈՒՀԻ ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԲԵՀԲՈՒԴՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1795 Թ. ՏՓՂԻՍԻ ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

16 սեպտեմբերի 1795 թ.

Գերյարգոյ և շնորհաւոր Յօհաննէս Աղայիդ[11]։

Ի դժնդակ դարուս ի վերին նախախնամութենէ ընտրեալ վասն ամե-

նայն Հայկազնեայ սեռիս՝ կարի ընտիր և անզոյգ իշխանի, և միանգամայն ի մեծագութ և ի բարեպաշտ ինքնակալ թագուհւոյ բախտաւորեալ՝ արժանավայել աստիճանաւ եւ սոյնասարաս ճահողութեան արժանի վերոյ յիշեալ վսեմազարդ սեպուհոյ զուգակցի՝ իշխանազին աւագուհւոյ և միանգամայն մեծի ինքնակալ թագուհւոյ անուամբ անուանեցելոյ, մեծարգի և՝ կարի ողորմագութ տիկնաց տիկին Կատարինէիդ, հանդիտապատիւ զողջոյն առաքելաւանդ վերաառաքեմք առ յարգութիւն ձեր (թէպէտ մերս ոչ ըստ նոցա աստիճանի, այլ ոք ի սրբազան գնդից ընկալեալ զաստիճան աւագ սարկաւագութեան, ըստ սրբոյն Ստեփանոսի նախակվային, նոյն որ ի մեզ գոյ, նոյն շնորհիւն վստահօրէն պատշաճ համարի ի մէնջ)։ Ողջոյն և սէր հոգևորական ընծայեսցի իշխանաց իշխանիդ և աւագուհեաց աւագուհւոյդ իբր յամանցեալ Տփխիսու մենարանէ, ի կուսանաց միաբանէ և ի տառապեալ սարկաւագուհեաց օրհնութիւնք, խաղաղութիւն և առողջութիւն ընդ ձեզ եղիցի բազմաւ բարութեամբ և յոգն օրհնութեամբ։

Արդ, թէպէտ պարտ էր մեզ ըստ կարեաց մերոց վիպասանօրէն և ճահողապէս յարմարեալ գովս զարժանավայելս յարգութեանց ձերոց, սակայն ոչ կարողացաւ միտք մեր զօրել ըստ կանոնի արժանաւոյն գրել, այլ եթող զնա և սկսաւ առ ի առման Տփխիս քաղաքի և բնակչացն այնօրիկ։

Իսկ արդ զի՞նչ գրեսցուք յանարդիւն նամակիս յայսմիկ կամ որպէ՞ս վստահ լիցուք պատմաբանօրէն պարագայիւք գրել զԹիֆլիզ քաղաքէ մերմէ և զբնակչացն մերոց և կամ թէ զո՞րպիսի խորամանկութենէ հնարիւք գայն ներքինւոյ արքային Պարսից ի վերայ Թիֆլիզ քաղաքին մերոյ (որ ի բնէ ունին պարսիկք զայսպիսի խորամանկութեան հնարս) և կամ թէ զո՞րպիսի խաբէութենէ թիւնաւորելոյն ի սատանայէ արեանարբու աղա Մահմատ շահին հեծելազօրօք բազմօք մտան ի քաղաքն Տփխիս։ Զի խաբէութեամբ մտանելն այն էր խորամանկին մինչ ինքն ի Գանջայ էր բանակաւն իւրով, զհաշտութեան թուղթ իմն յղեաց ի ձեռն սուրհանդակի միոյ՝ առ արքայ Հերակլ վրաց, թէ յորդոց քոց զմին որդին առաքեա առ իս պատանդ, որով հաշտութիւն մեր երևեսցի (իբր թէ միամիտ լինելոյ աղագաւ յղեաց զհնարական թուղթն առ արքայն), իսկ զկնի թղթաբերին եկն ինքն խրոխտ և ահարկու հեծելազօրօք բազմօք մերձ ի քաղաքն, իբրև երկոտասան մղոնաւ հեռի և անդ ի բանակատեղ տեղի՝ բանակեցաւ բանակաւն իւրով։ (Բայց արքայն Հերակլ և բազմութիւնքն վրաց և հայոց և զօրքն ամենեքեան միահամուռ անհոգ կային, զի այն ոչ վասն յուսոյն, որ՝ առ աստուած, այլ ի միմեանս հայելով և ի միմեանց ուսանելով զչարն ի փոքուէ մինչև զմեծամեծն խատապարանօք գոլով, յամառեալք էին կամակոր մտօք ի կամս և ի չար գործս իւրեանց, որ իբր չար սովորութեանց տոռամբք կապեալ կային ամենեքեան, որոյ վասն ոչ երկնչէին մի բազմագումար թշնամեաց և ոչ զգուշանային յապագայ եկելոց, թէ-

պէտ և տեղեկացեալ գիտէին գալն նորա ի վերա իւրեանց)։ Որ և շահն ի տեղի անդ կազմեաց զգունդս այրուձիոյ, զգունդս հետևակաց, զգունդս վահանաւորաց, զգունդս նիզակակրաց, զգունդս ամենայն սպառազինաց, զգունդս մրճաւորաց և զգունդս շանթահարողաց, որք ի մուտ քաղաքին մեծաւ ռազմօք և սպասիւք ճակատիլ և քաջակորով ջանիւ մարտամուխ լինիլ և ոչ դառնալ ընդ կրունկն։ Իբրև լուեալ վրաց, թէ յայն ինչ նիշ տեղի եկեալ են, ելին ի ճակատ առ ի ընդդէմ կալ նոցա, բայց սակաւ զօրօք (մանաւանդ թէ յանմիաբանութենէ վրաց և հայոց) ոչ կարողացաւ արքայն պայքարել ընդ զօրաց պարսից, յորոց զանգիտացեալ մի զուցէ ձերբակալ լինի և ի ձեռս նոցա, ապա ի յետս կոյս դարձաւ, զորմէ գրեթէ մաղապուրծ ելեալ, փախեաւ և գնաց ի նեղուց և ի կիրճս լերանց՝ առ զուգակիցն իւր, իսկ ըստ այսմ և զօրքն վրաց փախեան և գնացին յայլ և յայլ ամրոց տեղիս, ապա զկնի նոցա եկին զօրքն պարսից յամենուստ, իբրև ջոլերս երամոց՝ ըստ հրամանի շահին՝ գրոհ տուեալ մտին ի քաղաքն մեր Տփխիս՝ ի 1795 թուոյն, ի սեպտեմբերի 10-ին, յորում կուռն ջանիւ բազմատարազ հարուածս արարին և բազումս սրոյ ճարակ ետուն, զոմանս յեկեղեցւոջ, զոմանս ի պալատս, զոմանս ի տունս, զոմանս ի պանդոկս, զոմանս ի վաճառանոցս, զոմանս ի փողոցս, զոմանս առաջի կրպակաց, զբազումս կոտորեցին և զբազումս սրախողխող արարին։ Զեպիսկոպոսս և զվարդապետս ասեմք, թէ զքահանայս և զսարկաւագունս և զդպիրս ասեմք, զիշխանս և զտիկնայս ասեմք, թէ զարս և կանայս ասեմք, թող զմանկտիս զկաթնարբոյծ երեխայս, զորս ոմանց տալով անխնայ և զորս յօդս ի վեր՝ դէմ առնելով զսուրն երեխայից միջակտուր առնէին։ Անդ էր տեսանել զմեծագոյն ողբումն և զտողորումն սրտից ամենեցուն, անդ էր տեսանել զարտասուահեղ լալումն զուշաթափիլն ծնողաց և ընտանեաց, անդ էր տեսանել զաղէկէզութիւն և զգալարումն ծնողաց սրտից ի կսկծոյ և ի գթոյ զաւակաց և ամենայն ընտանեաց, և անդ էր տեսանել զճչումն և զկականումն զաւակաց և ընտանեաց՝ յաղագս բաժանելոյ ի միմեանց։

Արդ ո՞ կարէ պատմել լեզուաւ և կամ ո՞ կարող է արձանացուցանել ի գիրս զհարուածոց և զնեղութենէ տփխիսեցւոց, յորոց գրէթէ զարեան վտակս ռոոգեցուցանէին ի տեղիս տեղիս՝ մինչ ցասմնամարտութիւնն առ շահն և առ զօր իւր կայր։ Այլ երբ հագեցաւ վիշապն պարսկային և թիւնալից ի զայրանալոյ և ի սրտմտութենէ, ապա ետ հրաման մունետիկաւ զօրաց իւրոց՝ յեկեղեցեաց, ի պալատից, ի տանց և ի կրպակաց և ուր ուրեք գտցեն զանօթս և զամենայն հարկաւոր պիտոյիս և զինչս ամենեցուն՝ առնուլ վասն իւր իւրաքանչիւր այր, բաց ի պալատէն արքայի, յորմէ հանեալ զթագն, զաթոռն և զայլս, որք յինքնակալ թագուհւոյն յղեալ պարգևս[12], և արքայի զբազում գանձս զարծաթեղէն, և

զոսկեղէն կահս և զկարասիս և զամենայն զարդս և զանօթս վասն իւր յատկացոյց, իսկ յետ բազմատանջ հարուածոց և կոտորածից և զինչս ժողովելոց, զինչս և զգերիս ի քաղաքէն ի դուրս գերեվարեաց, ապա զկնի ի դուրս վարելոյ զամենայնս, հրաման տուեալ զօրաց իւրոց՝ զեկեղեցիս, զպալատս, զտունս, զպանդոկս, զկրպակս և զողջոյն քաղաքն հրդեհեալ, որ և իսկ ըստ հրամանի շահին: Իսկ յետ շուեյլոյն նորայ ի Տփխիսու ի Գանջայ՝ գերիօք և ամենայն ընչիւք, ոմանք ի գերեաց անտի փախեալ էին և ոմանք, ի վաղուց հետէ ի քաղաքէ ելեալքն, գնային ի քաղաքն Տփխիս, առ ի տեսանել զորպիսի եղեալն, Բայց ի հոտոյ այրեցելոց և ի հոտոյ մեռելոց ի բազում աւուրս ոչ ոք կարօղանայր մնալ ի քաղաքն, զի գրէթէ մինչ 20 մղոնաւ հեռի ի քաղաքէն սփռեալ կայր հոտն շուրջ զքաղաքաւն, վասնորոյ աւուրբք բազմօք անթաղ կային մեռեալքն և ընտանի գազանքն կատաղեալ շրջէին ի քաղաքին: Իսկ յետ աւուրց բազմաց, մտեալ ոմանք ի քաղաքն, ոմանք զտունս և զկրպակս և փողոցս իւրեանց ոչ ճանաչէին՝ առ ի խանգարեալ և ի քայքայեալ եղելոց ի հրոյ, զի ի նեխեալ գարշահոտոց ոչ կարողանային ժուժել, որոյ վասն զձեռս իւրեանց ի վերայ ընչոց իւրեանց դնելով, այնպէս մերձենային ի դիակունս՝ առ ի տեսանել թէ որո՞ց իցեն մեռեալքն: Իսկ թէպէտ մեռելոց համարքն ոչ եմք տեղեկացեալ, սակայն ոմանք փախուցեալք համբաւեն ի լրոյ, թէ զհարիւր և հինգ հազար գերիս և քանի հարիւր աւելի ինչ թուեալ են ի Գանջայ, զորոց գրէթէ քան զայն աւելին հաւատալի է, զի մերձակայ գիւղօրէից ժողովուրդքն ի քաղաքն եկեալ էին առ ի ապաստան լինելոյ, իսկ զէշօփալն[13], այսինքն զուգակիցն արքային, հանդերձ ընտանեօք գերդաստանեօք իւրովք երկոտասան այլովք տամբք 2 աւուր յառաջ ելեալ ի քաղաքէն, գնացեալ էր ի ներքուստ լերանց: Իսկ ելեալքն ի քաղաքէն հազիւ թէ 300 տուն լինի զերծեալ, որք և բազումքն ի նոցանէ զընտանիս և զինչս իւրեանց թողլով, անձնապուր փախուստ ելեալ են յահէն և ի տագնապէն, յորոց ոմանք կանայք միայն տանելով զաւակունս իւրեանց ի գիրկս առեալ, հետիոտն փախչելով, թերևս զերծուցեն զինքեանս և զզաւակունս, բայց տեսեալ նոցա, թէ զօրքն պարսից հասանեն, զզաւակունս յինքեանց ընկենոյն ի ճանապարհի, և ի ձորձս ուրուք և ինքեանք սրտաբէկ լեալ ողհապա փախչէին ի խոտոր, ուր առ քարիւք և թփովք և առ մացառօք պահպանէին զինքեանս, մինչ ի դառնալ զօրացն: Իսկ յետ 2 կամ 3 օր [illegible]իջոց անցանելոյ դային ի տեսանել զաւակունս իւրեանց, ուր ձգեալ էին, բայց տեսեալ մարգն զաւակունս ոմն մեռեալ, ոմն անդամահատ լեալ ի գազանաց և ոմն այլ տեսակ եղեալ, յորոց վրայ գալարեալ աղիք և [illegible]իրաք, աղէխարշիլով դառնային մրմնջական ողբով ի փապարս վիմաց և ի կողմն լերանց՝ առ ի պահպանել ի թշնամեաց, որպէս և մեք առ ապաւինեալ Թիֆլի-

սու կուսանքս, ի մէջ գիշերի հապճեպ փախեաք: Զմասն ի կենաց խաչափայտից և զայլ սրբոց մասունս և զտեսակ-տեսակ զանօթս եկեղեցւոյ մերոյ ի պալատ իշխանաց իշխանի քաղաքի մելիքի[14] մերոյ Խոջայ Բէհբուդեան յորջորջեալ, հանգուցեալ մելիք Աշխարհբէգի և մինիշկար[15] Աղայի[16] ի պահեստի ուրուք պահպանեցաք արկեղբք, ոչ գիտեմք, որոնեալ, զտեալ են անհաւատքն, թէ նոյնպէս կայ ի պահեստի անդ, իսկ ընդ մեզ առաք զայլ մասն խաչափայտից՝ առանց պահարանի, որ մականուամբ Հռոմու խաչափայտի մասն կոչի և քանի մի զայլ սրբոց մասունս առաք ընդ մեզ, բայց որ ըստ հասարակութեան հարկաւորն է, այսինքն զզենլի հանդերձս մեր՝ ըստ օրինի կուսանաց՝ զփիլոնս և զվերարկուս մեր թողաք և փախեաք ի մէջ գիշերի, որպէս ասացաք ի վեր անդր, որ յիրաւի առանց հողաթափ և մուճակի, ելեալ եմք բոկ ոտիւք ի մենաստանէ և ի քաղաքէ մերմէ և եկեալ հետիոտս ի լերնակողմն, ի կիրճս լերանց և անդ աւուրբք բազմօք: Ի բացօթեայ տեղի, ի ներքոյ անձրևի կայաք, թող թէ զհասարակաց կերլիս որ է հացն ոչ գտանէաք, զի ոչ թէ մի էր և մի է վիշտն և կսկիծն ամենեցունց, որք մաղապուրծ եղեալ ելեալ եմք իբր թէ՝ իբր միայն ի հայրենական բնակութենէ հեռացեալ և օտարացեալ եմք, այլ բազմատեսակ վէրք եղեն ամենեցունց: Բայց ո՞վ ողբակից լինի մեզ, ո՞ւր են վարդապետքն և քահանայքն մեր, որք ի տեղի Երեմիայ մարգարէի ողբասցեն ընդ մեզ վասն բազմատարափ հարուածոց և անթիւ գերելոց մերոց, իսկ որո՞վ լինի մեզ օգնութիւն, զի ոչ գոյ բժշկութիւն վիրաց մերոց՝ յերեսաց բարկութեան տեառն ըստ մարգարէին, զի այս յիրաւի զօրբատաշ քարիւք բարձրակառոյց և զմրեթաղարդ կաթողիկէիւք շինեալ, լի մասամբք սրբոց և պատկերօք զեկեղեցիս մեր լացցուք և ողբասցուք (որք այրեալ ի հուր խանգարեալ են), թէ ի մէջն զբազմաչարչար նահատակաց սրբոց մասունս (որք ի ձեռս անհաւատից լու համարեցին զինքեանս ոտնահարեալ և անարգեալ, քան ի ձեռս մեր յեկեղեցւոջ կեալն, այս թէ վասն է՞ր, եթէ ոչ՝ պահելոյ զպատուիրանս տեառն, որպէս ասացաք ի վեր): Իսկ որ առաւել գերադոյնն է (որում ի սկզբանական մեղաց աղատեցաք) զմասունս խաչափայտից լացցուք և ողբասցուք, թէ զարծաթեղէն և զոսկեղէն խաչս և սկիհս և արծաթով և ոսկով պատեալ զպատկերս սրբոց լացցուք և ողբասցուք, թէ տեսակ-տեսակ գոյնզգոյն զոսկեկուռ շուրջառս, և նափորտս, թող թէ զոսկէհուռ դիպակս և զգեստս եկեղեցեաց և զեկեղեցականաց, քանզի անբուժելի է վէրք դորս յարհեստաւոր բժշկաց և ի նիւթական իրաց ոչ է հնար բուժելոյ, իսկ որ զընածին և զբնական զթոցն պատմին (որոց լսողքն աղէխարշք լինին անպատճառ) զընտանիս և զազգակից՞ս մեր լացցուք, թէ՞ զսիրելի բարեկամս մեր, համացեղ զիշխանս մեր լացցու՞ք, թէ զմշտաանս գրացիս մեր, թող թէ զողջոյն քա-

զաքակիցս մեր լացցուք հանապազ։ Ոհ, աղետալի կսկիծ մեր և անշիջանելի աննիւթ հուր։ Բաց յաստծոյ մերմէ ո՞վ արդեօք կարող է շիջուցանել զբոց սրտից մերոց, իսկ եթէ մերս անբուժելի և անշիջանելի է վասն անթիւ գերելոց մերոց, ապայ որքան տոչորական կսկիծ գոյ ի սիրտս նոցա, որք ի ձեռս անհաւատ պարսկաց գերեցեալ կան ընտանիք, ազգականաք և դրացիք. արդեօ՞ք թէ որպիսի ողբումն և աղիողորմ լալիք գոն ի նոսա, զի արք յամուսնոց իւրեանց բաժանելով, կանայք՝ յարանց իւրեանց, ծնօղք յուստերաց և ի դստերաց իւրեանց, ուստերք և դստերք ի ծնողաց իւրեանց բաժանելով խնդրեն զմահ և ոչ գտանեն, արդարև լան տառապեալքն անմխիթար և ոչ գոն առընթեր ազգականք, որով մխիթարեսցին։ Զի՞նչ ասասցուք սակաւ գերծեալքս, որք ի վտարանդի կամք տառապեալ և թշուառացեալ կամ որո՞վ օգնեսցուք նոցա տարագրեալքս ի միմեանց, քանզի ահա անհերքելի միջարկութիւն իմն գոյացաւ ի նոսա և ի մեզ, իբր ընդարբոյս ընդ մեզ, որ ոչ ունի զի բանական հոգւոյ մերմէ մասն ինչ ժամանակ առ ժամանակ, ի յետս կելոյ ըստ հասարակաց սահմանի, այլ իբր մշտայել որպէս ի հնոց հրոյ, ծուխ ելանէ ի սրտէ մերմէ մինչ ի կէտ մահու մերոյ. զի կսկծեցուցիչ միջարկօթիւնս այս, որ ի մեզ հիւծելոյ հաստատեցաւ, գրէթէ այսուհետև սա առաւել ներգործէ ի նոսա և ի մեզ, քան զբանական հոգիս մեր, վասն որոյ կրկին անգամ ոհ ողորմելեացս, ո՞ւր գոն ընտանիք և սիրելի բարեկամք նոցա, որք ողորմեսցին նոցա, ըստ նորայ՝ լամք տառապեալքս վասն նոցա և ոչ կարեմք ինչ օգնել, իսկ Հռաքէլն մի էր ի հնումն և ի նորոյս Իսրայէլի բազում Հռաքէլ։ Մարք և ընտանիք գոն, լան և ոչ կարեն օգնել որդւոց և ընտանեաց իւրեանց և ոչ տառապեալ անձանց իւրեանց։

Արդ թէպէտ ոչ էր պարտ մեզ զայսքանս երկարել, սակայն աղետք սրտից մերոց ոչ ետուն թոյլ՝ համառօտել զբանս, որոյ վասն զերկարութեան պարագայիս և զպարբերութիւնս էառ բանն այն, զի իբր արտասուախառն մելանաւ գրեցաւ, բայց գրեթէ բազում այսպիսի թղթոց գրիւր բանն, եթէ մի ըստ միոջէ մանրամասնաբար գրէաք. այլ առ ի չձանձրանալոյ քան զայս, ոչ երկարացուցաք զբանս (իբր պատմաբանօրէն համարի), ուստի այսքանս բաւականացեալ համառօտ համերեսցի յարգութեանց ձերոց, որ և ողջ և առողջ լերուք ի տէր ի պարծանս ամենայն Հայկազեանս սեռիս։

Գրեցաւ ի Մօզդօզ ի 1795 թուոյն և ի սեպտեմբեր 16։

Ի քաղաքէ Տփխիսու և ի կուսանաց մենաստանէ հանգուցեալ Յովսէփի դուստր, սարկաւագուհի, կուսանաց (վարդապետ) մայրապետուհի և մայր վանաց՝ անուամբ Թագուհի և մակաբերեալ ազգաւ Միրիմանեանս և Տփխիսու հանգուցեալ իշխան մելիք Աղայի դուստր սարկաւագուհի Գայիանէ յորջորջեալ խօջայ Բէհբուդեանս միաբան սարկաւագուհեօք և կուսանօք հանդերձ։

Մատենադարան, ձեռ. 8216, թ. 154բ—160։

6

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

1 նոյեմբերի 1795 թ.

Ի նորաշէն քաղաքիս Գրիգորիուպօլ

Արդ՝ այժմ առաւել հարկաւորի մեզ սրտի մտօք դիմել և աղաչել զերեսս նորա յատուկ տէր ողորմիայիւ, զի լուսակերտ սուրբ աթոռն մեր էջմիածին սրբազան կաթողիկոսիւն համայն միաբանիւքն և ազգաւն կայ ի յետին անակնունելի նեղութեամբ ի ձեռս անօրէն պարսից աղա Մահամետ խանին։ Սուրբ Աթոռն ամայացեալ և յափշտակեալ, սրբազան կաթողիկոսն վշտակիր, որպէս թէ ի կալանս այսինքն ի գեօղ տուասաղս վասն մեծամեծ հարկապահանջմանց։ Միաբանքն ցրուեալք և երկիրն Արարատայ քանդեալ և կործանեալ և մերկացեալ ի բնակչաց։ Իսկ ամենայն վանօրայք և եկեղեցիք խանգարեալք և դադարեալք։ Ով իցէ մայրասէր որդի և հայրենասէր, որ զայս ազգ աղէտ լսելով, ոչ հոգոց հանիցէ և լացցէ, զի պարծանքն ազգի մերոյ և մխիթարութիւն բնաւիցս որ է սուրբ աթոռն ընդ քահանայքն իւրոյ և հօր մերոյ սրբոյ, կայ ահա ի յետին դառնութեան, յափշտակութեանս և ի չքաւորութեանս, ուրեմն արտասուօք առ տէր դիմեսցուք և յատուկ տէր ողորմեա ի յեկեղեցիսն ասասցուք և ծնրադրական երկրպագութեամբ զերեսս նորա պաղատեալ աղաչեսցուք, թէ ասաուած զօրութեանց դարձ յերկնից ի սրբութենէ քումմէ հայեսցի տառապանս մեր, յիշեա զմեզ ընդ յաճոյս ժողովրդեանն քում և այց արա սրբոյ աթոռոյն և տառապեալ ազգին մերոյ՝ վասն անուան քում սրբոյ, թէպէտ մեք մեղաւորք եմք, այլ զսոսկալի չարչարանս հաւատարիմ ծառային քոյ սրբոյն Գրիգորի առ քեզ միջնորդ արկանիմք մի մեղմի մեզ այլ տուր փառս անուան քում. ողորմեայ քոյակերտ սուրբ աթոռոյն և մայրն մերոյ քաղցր անուն սուրբ էջմիածնի և փրկեայ յանօրինաց բռնութենէ զգինս պատուական սուրբ արեան քոյ զհաւատացեալսն ի քեզ զազգն մեր և զերկիրս վրաց և թագաւորութիւն նորա, զօրացո զբազուկ բարեպաշտ արքային Հերակլայ որպէս զԵսուայն առ ի խորտակել զանօրէն ամաղեկացի բռնաւորն և տուր զօրաց նորա զյաղթութիւն փառաւոր, զի ծանիցեն հեթանոսքն թէ

գոյ աստուած քրիստոնէից յոգողն և պաշտպան, զի ամաչեսցեն նոքա ի խորհուրդս իւրեանց և զմեզ ուրախացու փրկութեամբ նոցա, զի սոյն իսկ ուսուցանեն մեզ գիրք աստուածային և եկեղեցին սուրբ, որ ի վերայ միմեանց յաղօթս արասցուք։

Ամենաբարեպաշտ կայսրուհին ահա բաղում զօրութեան կառկառեաց առ թագաւորն վրաց և հրամայաց արձակել առ նոսա զզօրս[17]*։ Դու տէր զօրացո և բարձրացո զնոսա և զեղջիւր քրիստոնէութեան մերոյ, զի երկիրն այն և թագաւոր մեր կայ ընդ պաշտպանութեան սուրբ աստուածածնայ. ուրեմն այն կալցուք բարեխօս որպէս մինչև ցայժմ, յայսմհետէ ևս անարատ մայր մեր նորո եղիցի բարեխօս խոստովանողացն սրբոցն իւրոյ միածնի և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փրկչի և աստուծոյ։*

Ես յուսամ, որ եթէ դուք՝ վիճակեալքդ իմ, քահանայք և ժողովուրդք, արք և կանայք, այսպիսի յուսով դիմիցեք առ տէր լալով և կծով յայնժամ դառնայ աստուած ի բարկութենէ իւրմէ և զցասումն պատուհասին ածցէ ի վերայ թշնամեացն հաւատոյ մերոյ և կենաց, ուստի գրեցի ես հրաման առ տպարանն մեր զայս թուղթ օրհնութեան մերոյ տպել և ի յամայն քաղաքս վիճակի իմոյ տարածանել, զի ամենեքեան միասիրտ լեալ, ի միասին ի դէմն սուրբ անմահ պատարագին ասացեն տէր ողորմեայ, թերևս ողորմեա մեզ աստուած զսուգ մեր և զտրտմութիւն ի յուրախութիւն և ի մխիթարութիւն փոխանակեսցէ և փրկութեամբ նոցին զվշտացնեալ սիրտ մեր սփոփեալ տացէ ցնծութեամբ օրհնել զահաւոր անուն իւր սուրբ։

Ընդ ձեզ միաւորիմ և զիմս ի սրտէ յաղիողորմ արտասուս ի հովուական, ոչ բերկրի վշտացեալ սիրտ իմ, ոչ խնդան երեսք իմ. մինչ ոչ լուիցեմ, թէ բացան դրունք Սիօնի, այսինքն սուրբ էջմիածնի, փրկեցաւ վշտացնեալ հայրապետն սուրբ և բոլոր միաբանք նորա, փրկեցան ճառքաղ լեալ մնացեալ որդիքն լուսաւորչի, որք ի Հայաստան և ի Վրաստան, յաղթեաց ափուծն որ ի տանէն՝ Յուդայ (լոյս է արքայն Հերակլեայ) բռնաւոր թշնամոյն իւրոյ։ Ամենահռչակեալ անուն մեծին Եկատերինայի, փախոյց զյարուցեալսն ի վերայ եկեղեցւոյն աստուծոյ, յայնժամ հանէ զիս աստուած ի դրոյ տառապանաց, կարդալ զանուն նորա և փառաւորել զնա, որ զուարթանեալ ընդ հօր և հոգւոյն սրբոյ, Ամէն։

Մատենադարան, ձեռ. 2951, թ. 80—81ա։

7

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԵՐԱԿԼ II-ԻՆ

27 նոյեմբերի 1795 թ.

Ամենաբարեպաշտ Արքայ, վշտակիր Թագաւոր

Զաղէտալի անցս թագաւորութեան ձերոյ, զաւերումն, կործանումն և զգերութիւն իմոյ հայրենեացն լուեալ, ոչ կամ եթէ ոչ իբրև զմեռեալ, և նստեալ ըստ Երեմիայի՝ հող ի գլուխս և արտասուս ի յաչս, լամ զբեկումն հայրենեաց իմոց, և զիմս արտասուս և կսկիծ միաւորիմ ընդ աղիողորմ արտասուս գերելոցն և սպանելոցն, տանջելոցն և հարուածելոցն։

Ահա զարթիցեն մերն նախնիք և այժմ զմորմոքալի ողբս յօրինեսցեն առ անկումն թագաւորութեանն Բագրատունեաց, որոց սանդանց ակն ունէին արձակել մեծամեծ ոստս և շառաւիղս, զի վերջինս չար եղև քան զյառաջինն, զի յոյս Հայաստանեաց աշխարհի թագաւորութիւն ձեր էր, ողբասցեն ընդ ձեզ ամենայն ազգ և ազինք Հայոց՝ որք սփռեալք են ի ծագս աշխարհի։

Այլ ես ընդ նոսա լամ, բայց ի հասարակաց աղետիցն, և զիմս յատուկ աղէտ ընտանեաց և արիւնակցաց, զորոց ոչինչ գիտեմ մինչև ցարդ, ընդ տեառնդ իւրեանց եղե՞ն փրկեալք թէ՞ ի սուր և կամ ի գերութիւն վարեալք։ Ո՜հ ցաւոյս և աւաղ տարակուսանացս և յաղագս սուրբ աթոռոյն էջմիածնի, զի եղև և կամ որպէս ոչ գիտեմ ինչ։ Բայց ոչ յուսահատիմ ես իբրև թէ կորեաւ խալաս պաշտպանութիւն սուրբ աստուածածնէն ի քաղաքէն և ի թագաւորութենէն քումմէ, զի սովոր է աստուած երբեմն խրատել իբրև զորդիս, այլ ոչ յաւիտեան մերժել։ Զի հաւատամ, որ շարժէ ի գթութիւն զամենազօրմած սիրտ ամենաբարեպաշտ ինքնակալուհոյն և կայսերուհոյն մերոյ առ քեզ և առ թագաւորութիւն քոյ և առ տարաբախտ քրիստոնեայսն և տացէ ձեզ վերստին տեսանել զլոյս և զնորոգութիւնն աշխարհի և զթագաւորութեան ծերում և զպայծառութիւն և եկեղեցեացն աստուծոյ և քրիստոնէական սուրբ հաւատոյն, ուրեմն պնդեա զզօրութիւն քոյ՝ ընդդէմ յուժգին փորձութեանցդ, զի որ եհարն, կարող և բժշկել։ Յառաջ քան զգալ փորձանացն, բազմոց գրեցի և ասացի, այլ ոչ հաւատային հաւատարմութեան տանն վրաց։ Այժմ աշխարհ ամենայն գիտաց զբոյդ քրիստոնէական ճշմարտութեան երդումն, որ մինչև ցկորուստ Ձերոյ թագաւորութեանն պինդ կացիք ի նմա։ Ուրեմն աստուած և օծեալ նորա ոչ ընդ վայր թողուն զանպատ միամտութիւն քոյ։

Զամենայն հարկաւորսն գրեցի ես պայծառափայլ գրաֆ Պլատոն Ալէքսանդրովիչ Զուպովին, նոյնպէս և բազմաց։ Եւ ինձ հարկ էր այժմ ի սոյն հարկաւոր միջոցի լինիլ ընդ տեառն իմոյ և արքայի, այլ այժմ կամ ես որպէս մեռեալ անշունչ խափանեալ յամենայն կենդանական զօրութեանց, վասն այն փութացայ՝ նախ, առաքել առ արքայական բարձրութիւն Ձեր զեղբօր որդին իմ և զծառայն ձեր՝ պրօտմեստր՝ քնեազ Բարսեղն Երկայնաբազկեան, լինէլ ի սպաս Ձեր, թերևս պիտոյասցի Ձեզ յայգր և կամ ի դուռն կայսերական մեծութեան առաքելոյ՝ զկնի որոց փոքր ինչ շունչ առնելոյս թողից աստ զամենայն հարկաւորութիւնս իմ և ես եկից առ Ձեզ արժանաւորել տեսութեան արքայական բարձրութեան Ձերում, ըստ իմս զի, որ ի յաջողութեան Ձերում ոչ եղև ինձ բախտ անբախտութեան ի ձախորդութեան ժամու տեսից զՁեզ և զտրտմեալ և մաշեալ երեսն Ձեր։

Այլն ամենայն կարէք գիտել ի քնեազ Բարսղէն։ Իսկ ես մնամ աղիողորմ արտասուօք և մորմոքալի սրտիւ աղօթող յաղագս Ձերոյ արքայական բարձրութեան, ողորմած տեառն և թագաւորի, ամենախոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս տրտմասիրտ։

1795, նոյեմբերի 27, ի Գրիգորիուպոլ։

Մատենադարան, ձեռ. 2951, թ. 82բ—83ա:

8

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

27 նոյեմբերի 1795 թ.

Առ Կարապետ վարդապետն գրեցաք ի Նախիջևան

Զաղետալի գիր քոյ և այլոցն, որք վասն սարսափելի անցիցն սրբոյ Աթոռոյն և առման Վրաց երկրին, ընկալաք յամսոյս 20 և եղաք որպէս մեռեալ, և ոչինչ գիտացուք անտի հաւաստին և վասն խղճալի ընտանեացն նոքա ելեալք են ընդ այլոցն, եթէ մնացեալ սպանեալք և կամ գերեալք։

Զո՞րն լացից, զպաշարելն սրբոյ Աթոռոյն, զառումն Թիֆլիզու, զկորուստ քրիստոնէութեան, զաւերումն եկեղեցեաց, զյափշտակութիւն տանց թէ զգերութիւն այնքան անմեղ մարդկանց, ո՜հ անհաս գիտութեանն Աստծոյ, թէ վասն էր ի կորուստ մատնեաց զմեզ։

Եւ զժամանակս մեր՝ հաւասարեաց յառաջին հարուածոցն Հայաստանեաց։ Զունիմ ինչ ասել և կամ գրել, այլ թէ իբրև զդի անկենդան անկեալ կամ, մինչև յուշս ի գլուխ գալն, աճապարեցի զմեր քնեազ Բարսեղն՝ գնալ ի յՕճագօրցկի, ուր արքայն է, և ես ըստ զթութեանդ քանի մի աւուրց ելեալ եկից յայգր գնալ և մօթիլ նոցա, թերևս կերպիւ իմիք օգնել կարացից։ Այլն ի քնեազ Բարսեղէն իմա։ Սոքա թեպէտ լան և աղաչեն մնալ և հաւատի է վնասաւորելն սոցա, ապա ինչ օգուտ, չէ կարելի մնալս, սոքա կան ի յապահովութիւն, իսկ նոքա՝ ի վիշտս գերութեան։ Ընդ նորընծային գրեալ եմ առ քեզ և առ հասարակութեանն, զորպիսութիւն մեր և զօրհնութիւն, և առաքեալ երկու թուփ մահուտ՝ այլ հաւատի է, որ նոքա յամրեն գալոց։ Լալով իմա զայս գիր՝ քան մտով։ Վշտակիր և տրտմասիրտ ՅԱԵ (Յովսէփ Արղութեան Երկայնաբազուկ)։

1795 նոյեմբեր 27 ի Գրիգորիուպօլ։

Մատենադարան, ձեռ. 2951, թ. 83բ.

9

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱՄԱԿԸ 1795 Թ. ՏՓՂԻՍԻ ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Նոյեմբեր 1795 թ.*

Անարատ վարուք սրբութեամբ և պայծառ առաքինութեամբ զարդարեալ, լուսաւոր և անաղօտ գիտութեամբ՝ և զամբարափայլ իմաստութեամբ ջահաւորեալ յեկեղեցի Աստուծոյ, քարոզ բանին ճշմարտութեան, և հզօր ախոյեան անբիծ և անարատ ուղղափառ սուրբ հաւատոյ, գերագով և յարգոյապատիւ մեծահռչակ հօր մերում սրբոյ, տեառն Գալուստ ընտական և բանիբուն վարդապետիդ՝ և առաքելաշնորհ արհի եպիսկոպոսիդ՝ առընծայելով զքրիստոսականն ողջոյն՝ մատուցանեմք համբոյր աստուածաբարձ սրբոյ Աջոյդ, յոյժ կարօտիւ առաւելագոյն սիրով և հոգևոր տարփանօք։

Արդ՝ տակաւին մեծութեան քո խնդիր է հասու լինիլ ճշմարտութեան՝ և իմանալ զգործ պատերազմին Պարսից ընդ Վրաց՝ և զմնդակութեան նոցա պատմի յումեքէ, և ոչ ուրեք երևի պարզութիւն բանին, այլ յամենայն ընդ ամենայն կողմն Արևելից։ Բայց՝ ոչ երբէք ստույգ ու անսխալ զրոյցս խառն ընդ ստութեան զոյ հաւաստութիւն, զի ցո ոք և հարցանեմք ուստի և զգամք բանիւ թղթոյ ինչ, հետևաբար յետ աւուրց զհակառակն լսեմք այն ամենայն խօսից։ Դու ևս բարւոք գիտես օրինակաւ, որ գոլով մեր ի սուրբ Աթոռոջ, անցք և եղելութիւնք Երևանայ՝ և կամ մասնաւոր վրդովութիւն և խռովութիւն, ինչ եղեալ անդանօր, այն-

* Թեև նամակը անթվակիր է, սակայն Պիոն Հակոբյանը գտնում է, որ այն պիտի գրված լինի 1795 թ. նոյեմբեր ամսվա վերջերին։ Հիմք ընդունելով Պիոն Հակոբյանի կարծիքը, սույն նամակը թվագրում ենք 1795 թ. նոյեմբեր ամսով։

քան մերձ և առ դուրս մեր կատարեալ, ազդեցութիւն իրացն՝ բիւրակերպ գայ ի լսելիս մեր, և այն ամենայն ընդդէմ միմեանց։ Իսկ այժմ ո՞րչափ հեռի եմք անտի, այնքան բազմապատկութիւն ունին ասութիւնքն՝ եթէ բանի, եթէ գրոյ։ Նմանապէս առ ձեզ՝ և առ այլ հեռաւոր գաւառս։ Ոչ եթէ աւելորդով պատմեն, այլ մասամբ իւիք ունելով տեղեկութիւն զայն և եթ համբաւեն. զի են՝ որք զլուր բանին անխտիր և թարց ընտրութեան հոչակ հարկանեն, են՝ որք արդարև հետևին և յուղին զճշմարիտն, բայց ոչ որոշեն զանձինս պատմչաց։ Եւ են՝ որք աչօք իւրեանց իսկ ականատեսք են իրագործութեանց ամենայնից, որպէս փախստեայքն նոքին անտի ի Թիֆլիզու, բայց զտագնապ և զարհաւիրս ներկայական տառապանացն միայն տեսեալ, զայն և եթ խօսին, և աւելի քան զայն՝ ոչ գիտեն պատմել և ճառել։ Թէպէտ՝ յաւելուն ի խօսս բազում ինչ, բայց՝ ի լրոյ ունելով զգիտութիւն՝ և ոչ ի տեսութենէ, չքեն այն ամենայն բանք՝ այլոց ումեմն պատմութեամբք։ Եւ մինչև ցարդ տակաւին ի սոյն ոճ ընթանայ պատմութիւն իրացս այսոցիկ։ Վասն որոյ ոչ ունիմ երբէք սիրտ՝ խօսելոյ և գրելոյ զայսոսիկ, և ոչ համարձակիմ զեկուցանել քումդ մեծութեանդ։ Բայց ըստ որում այժմ խնդրեալ էիր հարկիւ՝ գրել զոր ինչ ստեն բանք են և զրոյցք՝ զճշմարիտն, նորապէս խնդիր արարաք աստանօր՝ և գտաք զոմն ի գերելոց անտի, որ էր Նորաշէն եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Յակոբն (զոր իցէ թէ ճանաչիցես) որ բոլոր տամբ իւրով և ամենայն ընտանեօք՝ ժէ հոգւով գերի է անկեալ՝ որոց վասն փրկութեան եկեալ աստ՝ լալով և մորմոքելով զողորմութիւն հայցէր։ Զնա բերեալ առ մեզ, հարցմամբ տեղեկացաք ի նմանէ զամենայն անցս պատերազմին ստուգապէս։ Արդ՝ չև ես եկեալ օր պատերազմին՝ ամսօրեայ ժամանակաւ յառաջ՝ ամենեքեան որդիք արքային մեկնեալ են ի նմանէ, առ ի պահել իւրաքանչիւր այր՝ զվիճակ իւր և զժառանգութիւն։ Եւ միմիայն մնացեալ է ընդ նմա Դաւիթ միրզայն՝ որդին Գէօրգին միրզային։ Եւ դէտովփային զորմէ ստարանէին, եթէ՝ գնացեալ է առ Թագուհին, ամենայն մարդկամբ իւրով, և բոլոր աղխիւք և ընչիւք գնացեալ է ի Կախէթ։ Զհետ նորա ելեալ են թաւատք և ամենայն մեծամեծք Վրաց՝ առեալ ընդ ինքեանս զկանայս և զմանկտիս, և զամենայն զկահս և զկարասիս։ Եւ յոյժ սակաւք են առ սոսա գտանիցեալք ի Հայոց, որոց թիւն ոչ կարէ ելանել ընդ Ճ. զի յետ ելանելոյ նոցա՝ հրամայեալ է արքայն մունետիկ կարդալ ի քաղաքին, եթէ՝ մի ոք ևս ելանիցէ աստի ի քաղաքէս։ Քաջալերեցարուք ամենեքեան՝ անձն իմ եղեալ եմ ընդ անձինս ձեր։

Լոկ* մնացեալ են ամենայն ժողովուրդք Հայոց ի տունս և ի բնակութիւն իւրեանց, այլ և յոյժ բազումք յազգէն Վրաց՝ որք միանգամայն պատերազմօղք իցեն՝ հեծելազօրք և հետևակք։ Եւ այսպէս յանհոգս եղեալ՝ ոմանք ի բնակութիւնս իւրեանց, և ոմանք արտաքոյ քան զքաղաքն ընդ արքայի վառեալ պատրաստեալ գոլով, յանկարծակի դիմեալ են ի վերայ նոցա զօրքն Պարսից ի Ժ սեպտեմբերի, յաւուր Բ շաբթի [երկուշաբթի] պահոց Սրբոյ Խաչին։ Եւ ի խմբել պատերազմին՝ նախ՝ ի սկզբան ապստամբեալ է ի նմանէ Իմէրելն, և արձակեալ ի վերայ քաղաքին՝ աւար հարեալ է զնա անիրաւաբար և խստութեամբ առաւել քան զԹշնամիս։ Եւ զայն տեսել այլազգի զօրացն՝ թօթափեալ են ամենեքեան ի նմանէ՝ և փախուստ առեալ, և մնացեալ է արքայն միայն իւրովք Վրացի զօրօքն, որովք ի դիմի հարեալ քաջութեամբ թշնամեացն, սաստիկ հարուածովք և բազում կոտորածովք արարեալ է զյաղթութիւն մեծ՝ յառաջնում աւուր մարտին ի Ժ սեպտեմբերի։ Իսկ յերկրորդում աւուր ի վաղին ի Գ շաբթի [երեքշաբթի] ի ԺԱ սեպտեմբերի յառաջ խաղացեալ շահն ինքնին՝ հրամայեալ է կրկնել պատերազմն։ Յայնմ վայրի զհոգին Վասակայ զգեցեալ՝ և նորին չարութեանն հաղորդեալ մէլիք Մէժլումն[18] և Գանձու Ջաւաթ-խանն՝ յառաջադէմ եղեալ զօրացն Պարսից՝ առեալ են զամուր ամուր տեղիսն ապաստանի և պատեալ զքաղաքաւն նախ քան զտալ պատերազմին՝ երկաքանչիւրոց կողմանց առ միմեանս։ Եւ զայն տեսեալ Վրաց՝ լքեալ և վհատեալ են իսպառ, և բնաւին միջակտուր եղեալ և աճապէկ յամենայնի պաշարել է զնոսա տարակոյսն։ Եւ յայնմ աւուր ևս թէպէտ պատերազմեալ են ընդ նոսա, բայց ոչ յուսով յաղթութեան, այլ դիտելով ընդ ճանապարհս փախստեան։ Ուստի ի սաստկանալ պատերազմին՝ պարտեալ են զօրքն Վրաց առաջի զօրացն Պարսից, և փախուստ առեալ մինչև ի դուռն քաղաքին, որ հանէ ընդ հրապարակն՝ Տափիթաղ[19] կոչեցեալ։ Եւ անտի արքայն արգել տալ զօրացն ի պատերազմելոյ, և ձեռամբ նշանացի զպահապանս դրացն և պարսպացն ի բաց մերժէ, և հրաման տայ բանալ ամենայն դրացն։ Եւ ինքն մտեալ ընդ այն, և անցեալ ընդ քաղաքամէջն՝ հանդերձ Դաւթիւն՝ և ամենայն մարտիկ զինուորական դասուքն, ելանէ ընդ դուռն Հալուապարու, և անկանի ճեպով ի Կախէթ։ Եւ նոյն ժամայն զօրքն Պարսից տիրեն քաղաքին, և մտեալ առնուն զնա յաւար և ի կողոպուտ։ Տես դու աստանօր զանտանելի տագնապ և զաղէտ ողորմելի բնակչաց քաղաքին՝ զաղաղակ գուժի և ողբոց, զձայն սգոյ և լալեաց, զարտասուս ծնողաց ի վերայ զաւակաց, զաղէխորով և զդառնակսկիծ հառաչումն առ հասարակ բազմաց, զհեղումն անպարտ արեան երիտասարդաց, զկոծումն և զճիչ կուսից և կանանց, զաշխարհելի տեսութիւն տղայոց և մանկանց, և զանըմբերելի վիշտս և զնեղութիւնս կապելոց առաջի գերչաց, և զանհամեմատ տառապանս աղատաց և ռամկաց։ Մատ

* Այս բառը բնագրում դժվարընթեռնելի է. վերականգնված է ենթադրաբար։

Քաղդէացւոց յԵրուսաղէմ առ Սեդեկեաւ արքայիւ՝ սիրով և քաղցրութեամբ էր յոյժ՝ քան բարբարոսացս յայսր արշաւելոց։ Զի յայնժամ աղքատք ժողովրդեան, որոց ոչինչ գոյր, շնորհս գտին առաջի բռնաւորին, և բնակեցոյց զնոսա անդէն յերկրին, տալով նոցա այգիս և ջրարբիս։ Իսկ այս այր ոչ ի նոյնօրինակ ի կիր էարկ զգութ իւր՝ տալ ումեք զաղքատութիւն, այլ իսպառ աւելեաց զերկիրն, և զամենեսեան զբնակիչսն խաղացոյց յօտարութիւն և ի նժդեհութիւն։

Եւ արդ՝ ի մտանել զօրացն Պարսից ի քաղաքն, և յածիլ աստ և անդ՝ յայնժամ արժանի գովութեան գործ գործեալ իցէ քաղաքացւոյն։ Զի ամենեքեան արք քաջացեալք, և կանայք արիացեալք, միախորհուրդ և միակամ լեալք, իւրաքանչիւրք զատ զատ ի տունս իւրեանց ամրացեալք, ի վերայ անձանց և որդւոց արեամբ չափ պատերազմեալ՝ ի պատուհանից և ի դրանց մարտ եդեալ, զբազումս ի նոցանէ սատակեալ են հրացանիւ, Եւ այնքան յաճախ կոտորեալ են զնոսա, մինչ լցեալ են դիակամբք նոցա զամենայն անցս պողոտայից. և գրեթէ՝ զամենայն զտուն այսպէս պատերազմաւ և արեամբ են առեալ։ Բայց՝ զի՞նչ օգուտ ատի, որ ի վախճանի մատնեալ են ամենեքեան ի գերութիւն։ Առ այս ամենայն յաւելուն ոմանք թէպէտ ասել, եթէ՝ սուր տուեալ են յամենեսուն, որպէս և մեք գրեցաք յառաջ քան զայս՝ այնպէս իմանալով, բայց՝ ստուգիւ տեղեկացաք, որ չէ եղեալ։ Սակայն ի թօթափիլ զօրացն ի քաղաքն, և յառնուլ զնա ի յաւար և ի յափշտակութիւն, սակաւ ոմանք պատերազմելով ընդ աւարառուսն՝ մեռեալ են անդանօր, որպէս և ինքեանք սպանեալ են ի նոցանէ զբազումս։ Դիպելով սպանումն և քանեաց ոմանց քահանայից, անուն ել, եթէ զամենեսուն զնոսա կոտորեալ են իսպառ։ Յախպատու առաջնորդ Դաւիթ վարդապետն գերեցեալ է, և է այժմ ի Գեանջայ։ Սպանեալ են ի միաբանից նորա զերիս վարդապետս, որոց և մին է այն՝ որ եկն ի սուրբ Աթոռն ընդ նմա, և մանկացաւ։ Խոբանաշատու առաջնորդ Վանական վարդապետն փախուցեալ ի Վրաստան փրկեալ է զանձն։ Առաջնորդ հանգուցեալ Մարտիրոս վարդապետն (զորմէ յառաջագոյն գրեցի) ի զգալ զաղաղակ քաղաքին և ի խռովիլ ժողովրդեանն, յաղագս եկեալ հասեալ տագնապին, անփոյթ արարեալ զանձնէ և զկայից իւրոց, և միանգամայն մոռացեալ զինքն, հասեալ է փութով ի տուն մէլիք Մնացականին՝ որդւոյ մէլիք Աւետիքին՝ աղաչել զնա յաղագս եկեղեցական զարդուց և սպասուց սրբոյ Աթոռոյն՝ առ տեղեաւ միով թագուցանել, և կամ փախուցանել ի Կախէթ։ Զայս խնդիր ոչ միայն ի նմին ժամում արարեալ է ի նմանէ, այլ բազում անգամ յառաջագոյն՝ հանապազորդ աղերսելով սկսեալ յօրէ յայնմանէ, յորմէ հետէ առաքեալ են առ նա ի սրբոյ Աթոռոյն զայն ամենայն յաւանդ և ի պահեստ։ Եւ նորա մինչև ցայս վայր այս է եղեալ պատասխանի առ

Մարտիրոս վարդապետն, եթէ՝ Սրբազանն ինձ է առաքեալ, և ոչ քեզ։ Եթէ՝ դու հոգացող ոք էիր, քեզ առաքէր՝ և ոչ ինձ։ Ապա՝ զի՞ կայ քո և այսոցիկ հոգալ և կամ խօսել ինչ։ Արդ՝ այսպէս խօսելով ապիրատն այն՝ անփոյթ արարեալ է զնոքօք ամենևին՝ հոգալով միայն վասն տան իւրոյ և ապարանաց, և օր ըստ օրէ զամենայն կայս և զգոյս իւր, և զբոլոր ծանրութիւն տանն առաքեալ է ի Կախէթ, և մնացեալ ինքն միայն՝ թեթև արամբք, որովք կարիցէ հասանել նեղութեան և հալածանաց՝ ի սուղ ժամանակի անկանիլ անդ։ Եւ յայսմ վայրի մինչ երթայ առ նա Մարտիրոս վարդապետն, տեսանէ զիրսն տակաւին անհոգս և անփոյթ եղեալ, անկեալ զնին ընդ յարկաւ նորա ի բացեայ։ Եւ մինչ սկսանի դարձեալ խօսիլ վասն նոցին, և աղաչել զայրն, կալեալ զձեռանէ նորին՝ հեռին ի բարեպաշտութենէ՝ կացուցանէ ի վերայ իրացն, ասելով՝ Ահաւասիկ դու, և ինչք քոյին Աթոռոյ, դու գիտես զինչ առնելդ զդոսա։ Չկայ ինձ այսուհետև մասն յիրիդ այդմիկ։ Ես ի մէջ անհուն ցաւոց, և բիւրաւոր հոգոց կամ, և վարանեալ եմ յամենայնի։ Եւ արդ՝ ի լսել Մարտիրոս վարդապետին զայս պատասխանի և վախճանի, և ի տեսանել զքաղաքն ամենայն ի վրդովման և ի խռովութեան, և իբրև զծով սաստիկ ալեկոծութեան, և ամենեցուն յերկիւղ վտանգի և նաւաբեկութեան ժամանեալ, որոց տեսիլ աչացն շրտուցեալ՝ ո՛չ զօրեն ճանաչել զընտանիս և զօտարականս, զեկն և զբնակ, զտէր և զծառայ։ Ո՛չ ընկեր ընկերի իւրում օգնել ջանայ, և ոչ փութայ ոք ի շինութիւն հասարակաց։ Ո՛չ գոյ ի հրապարակս ողջունել, և ոչ երբեք հարցումն առնել։ Այլ յահէ սատակման սասանեալ առ հասարակ՝ ամենեքեան խռնեալ դմիմեամբք զանլուծանելի կնճիռ իմն գործեն ի տնօրէնութեան կարգս՝ աներկիւղ և անձնապաստան նախնի կացութեան։ Ղօղեալ ի ծերպս և ի քարանձաւս՝ լռեն զձայնս երգոց ցնծութեան։ Եւ կամ իբրև յօձէ հարեալ յեղջերուս՝ արշաւելով ի ջուր հանգստեան՝ բուժել զախտս երաղէն։ Եւ կամ ի ճշմարիտ օրինակեալ՝ իբրև զհօտ՝ որոց ոչ իցէ հովիւ՝ ի դժնդակ գայլոց ցրուեալ՝ ի փախուստ դիմեն՝ այր իւրաքանչիւր՝ զանձն իւր ապրեցուցանել կամեցեալ։ Յամենայնի շիւարեալ՝ և ի տարակուսութենէ հոգս մտեալ, մնացեալ է աննպաստ և անճարակ յուստեքէ։ Բայց՝ այսու ոչ է դանդաղեալ՝ առնել զգործ բարեյօժար մտացն յորդորանաց։ Քանզի՝ նոյն կիտացն թռուցեալ արտաքս ի դուրս, և խուզեալ աստ և անդ, գտեալ է զայլս բարձեալս անարգ աղխիւք՝ և ոչինչ պէտս հարկաւորեալ իրօք ի գնալն զճանապարհ փախստէից, և հասեալ յայնս, եթէ սիրով՝ և եթէ բռնութեամբ՝ զկրկին փոխարէն խոստանալով, և բազում պարգևօք հաճեցուցեալ զկամս տեառն, թօթափեալ է զբեռինսն ի նոցանէ, և ի վարձու կալեալ զայլսն, և բերեալ բարձեալ ի նոսին՝ զիրսն զայնոսիկ,

ուղևորեալ է դէպ ի Կախէթ։ Եւ դէպ ի այս յայն կէտ, յոր ապստամբեալ Իմէրելն՝ ասար առնու զքաղաքն։ Եւ յայսմ վայրի մինչ ճէպով վարեն զսայլսն՝ անկանիլ ընդ ճանապարհ, չէ ևս հեռացել՝ հուպ ընդ դուռն քաղաքին՝ յարձակին ի վերայ կատաղիքն այնք Թշնամիք, և անխնաբար Թրածեծ արարեալ կոտորեն ընդ լծով մտեալ զեզինս սայլիցն, և անկանեն զձեռս ի սայլսն առնուլ զնոսա ի յափշտակութիւն։ Բայց կալով Մարտիրոս վարդապետին ի վերայ՝ արեամբ չափ ճգնեալ, և յանպատմելի քրտունս աշխատահոծ չարչարանացն լուացեալ, ընդդիմանայ նոցին յոյժ, և առ ինքն եղեալ արամբքն պատերազմեալ՝ ի բաց վարէ զնոսա յամենեսեան, և ոչ տայ բնաւ զսայլսն ի յափշտակութիւն։ Յետ այսր ամենայնի պահանջէ ի հարկէ մինչև ցաստէն արարեալ զաշխատանսն կրկնել միւսանգամ ևս Ուստի տապի և նեղի յոյժ, և բազում տառապանօք և ջանիւ կալով ի դեգերանս գիտէ եղանց՝ մինչ յածի այսր և անդր, վաղվաղակի հասանին անդ առ նոսա ասպատակաւորք Պարսից, և զ՞հետ նոցա մտանեն ամենայն զօրքն ի քաղաքն։ Եւ յայնժամ ի ձեռս նոցա յափշտակութիւն անկանին սայլքն խսպառ, և ի բըթթելական ի հազարաւոր ձեռս անցանին և անյայտ լինին։ Անդանօր գերի անկանի Մարտիրոս վարդապետն, և կապեալ ընդ այլ բազում գերիս, յառաջ ածեն, և տարեալ կացուցանեն զնա առաջի սարտարին։ Որում առնթեր կալով Երևանայ խանի նազիր Ջաֆար-պէկն՝ ճանաչէ զնա։ Եւ մատուցեալ առաջի իշխանին աղաչէ զնա վասն նորա, և ազատեալ արձակէ զնա ի բաց. և ուղևորէ յԵրևան։ Որոյ ընդ ճանապարհ անկեալ միայնակ և հետիոտս՝ ցուպ ի ձեռին, ունելով զպատառատուն փափախ ի գլուխն, և զարեխ ի յոտսն։ Եւ հասեալ ի սուրբ Հռիփսիմէի վանսն, անտէն ընկալեալ զվախճան կենաց՝ երջանիկ մահուամբ փոխեալ է առ Աստուած։ Զոր և տարեալ անտի ի սուրբ Աթոռն, պաշտամամբ և պատարագաւ արժանաւոր յուղարկութիւն և թաղումն արարեալ, եդեալ են ի դիրս միաբանից։ Որում հանգիստ և արքայութիւն տացէ Տէր, և հասուսցէ նմա վարձս ըստ վաստակոց իւրոց՝ յաւուր գալստեան իւրում, և յարքայութեան ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր. Ամէն։

Պ. Հ. Հակոբյան, Անծանոթ նամակ Տփղիսի 1795 թ. ավերման մասին և Խ. Աբովյանի «Ձայն աղաղակի» բանաստեղծությունը (Հայկական ՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 7)։

10

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

15 դեկտեմբերի 1795 թ.

Առ գերազնիւ պարոն Ստեփանն գրեցաք

Ի նոյեմբերի 20 ի յՕղեսու և ի դեկտեմբերի 1, ի Գրիգորիուպօլու զամենայն որպիսին գրեալ եմ քեզ և ի նոյեմբերի 15-էն, կսկծալի գիրդ ընկալեալ, ո՞հ լուր դառն և աղետ անբերելի և օր տխրութեան, որ գեր է քան տխրութիւն յառաջնոցն։ Մեղաւոր Կուտովիչն[20] է, ողորմելի անբախտ արքայէն ի մարտի առաքեալ էր առ նա և գրել՝ օգնել կամ հրաժարիլ։ Թէպէտ ես շատ խօսեցայ ընդ նմա վասն այսմ, որ երկիրն առանց ձեր օգնութեան փչանալոց է, այլ հաստ գլուխ նորա ոչ ընկալաւ։ Այժմ թէպէտ կամին այց առնել նոցա, բայց ահա գրեմ քեզ և գրելոց եմ գրաֆին[21], եթէ միայն ի վերա Թիֆլիզու գնան, ոչ ինչ օգնեն, այլ աւերակացն դիւրութեամբ տիրեն, զի Թշնամին կործանեաց վասն դոցա, իսկ եթէ ի վերա Դերբենդու և Գանջայու գնան ի վերա Բաքուայ՝ նախ զՇաքի, Շրուան ի ձեռն առնուն դիւրեաւ և ապա զԳեանջայ առնուն, անտի կարեն օգնել հայոց Երևանա և այլոց ևս գերելոցն, որք ի Պարսս են։ Եւ եթէ Շուշու խանն տակաւին ի յամրոցին իցէ, միաւորի ընդ մերսն և վերջացուցանեն զկատածն։ Վասն այսմ որքան բանք գոն առ մեզ, թէպէտ անցեալ ամին Պօպովի ձեռամբն մատուցի գրաֆին յատուկ գրով և դատողութեամբ իմով, վասն Վրացն և մեր աշխարհին, սակայն գուցէ կորուսեալ իցէ։ Ահա նորապէս առաքեցի, որ բաց յայդմ պլան է, աւելի ինչ ոչ կարեն առնել լի է ամենայն ցուցակօք։ Այլ եթէ գրաֆ Սուվօրովն[22] առաքեսցեն, միանգամայն բանն՝ ի լաւ կողմն իսկոյն վերջանայ, և ի սկզբանն 1780 թուին և ի յունվարի մեկն՝ նա էր կարգեալ ի վերա այսմ գործոց՝ նա եկն առ իս և գրեաց զամենայն ինչ ի տան Թուրչէնովին, բայց յետոյ յայլ փոխեցաւ և ինքն յառաջ ունէր կամք լինիլ ի յայն կողմունս, յինէն ողջունեալ օրհնութեամբ սաս. Ո՞վ սուրբ Գէորգ արագահաս օգնական նեղելոց և փրկիչ գերելոց, հա՛ս յօգնութիւն տարաբախտ թագաւորութեան Վրաց և հայրենեաց մերոց, զորս դու սիրէիր։ Գրեցից և ևս, այլ խելք ոչ գոյ յիս։

Հայտա[ր] խանի սպանելն ես՝ յանցեալ ամին խնդրեալ էր յինէն գրաֆն Ղալմուխովին գրեալ ետու և առաքեցի Պօպովի ձեռամբն, նաև Մուրտուզ-Ղուլի[23] խանի ամենայն անցքն և զանազան գրերն առ մեզ, որ ռուսերէն են, զորս մատուցեալ է լուսահոգի քնեազէն, ծանուցես գրաֆին, որ ամենայն բանքն շուտով առաքելոց եմ։ Մուրթուզ-Ղուլի

խանին ասա, ես վասն քոյ՝ որքան կարելի էր աշխատեցայ և զքեզ հաւատացի քոյ փափականացն, որ էր տեսութիւն Թագուհւոյ, այժմ քոյ զէ-րաթն ինչ առնէր, զի մեր հայրենիքն, վասն քոյ աւերեցան, գրեցայ և ես։ Եթէ զգա գնեն ընդ Սուվուրովին, խսկոյն կոտածի[24] եղբայրն և ամենայն զօրքն՝ յետ դառնալոց են և վերջացուցանելոց։ Եթէ ի գարնան յանկարծ տասն հազար զօրք առաքեն ի յԱստարապատ աւերել, այն լինի հատուցումն անիծելոյն...

1795 դեկտեմբերի 15, ի Գրիգորուպօլ։

Մատենադարան, ձեռ. 2951, թղթ. 86բ—87ա, տե՛ս նաև Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Վավերագրեր հայ-ռուսական հարաբերությունններից, «Բանբեր Երևանի համալսարանի» № 2, 1978, էջ 65—66:

11

ՇԱՄՉԻ ՄԵԼՔՈՅԻ ՈՂԲԸ ՏՓՂԻՍԻ ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1795 թ.

Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի գալստեամբ Աղա-Մուհամեդ խանի

Պարսից մէ անիծեալ զարմը լուան ննգաւ դուշման քաղաքիս,
Հարիւր հազար մարդով էկաւ ներս Գուրջստան քաղաքիս,
Ասում էինք Աղա-Մահմադ խանը, կըգայ կուտայ մէ նիզամ քաղաքիս,
Եսիր անող, կրակ տըւող կէր մի Ջավադ խան քաղաքիս,
Էհա ու հարգիս չը գա էս Թաւուր զաման քաղաքիս։

Ախտա խանի գալն իմացանք, մենք ասում ինք թէ շահն էկաւ,
Թէ չէ քաղաքն քանդելու տաս հազար թի ու բահն էկաւ,
Բիրդըցիքն ասում էին մեզ ամա ըըլագեահ էկաւ,
Նրա ոտն Շխամիան էր, ջեր սովը, իժում մահն եկաւ,
Մնացածն էլ զաթլ ամ արաւ ննգաւ բարի բան քաղաքիս։

Քաղաքը որ ներս էկաւ հարիւր հազար ղզլբաշը
Մեկ մեկումէն ջոգեցին ողջ մեռի զօհում զարդաշը,
Քահաննէրուն շունն էր ուտում, ոչ մինը չմտաւ նաշը,
Գիտի պէս արիւն էր գնում, բօստան էր աթմորթու լէշը,
Որդին մօրիցն էին խլում, էր զուգ ու շիվան քաղաքիս։

Մելիք Մէջլումն շուն դառնա, Ջաւաթ խանը պստի գուշի,
Քաղաքը վերանայ արին, տեղ շինեցին բայիղուշի,
Մելիք Մէջլումի ազգէմէն մեկ շուն էլ չը հաշի Շուշի,
Թաք զօշուն էինք մօղ արի՝ խեսուր, փշաւ, չերքեզ թուշի,
Աջայիբ չալիշ գուքէին, կօնէին մի բան քաղաքիս։

Քիչ իքմնով չէր տէհնըվի, ով ուզում էր նրանց տիսը,
Իրանց գլուխ դասել էին Թիֆլիզու քուլլու վարիսը,
Մատղըշներուն էլ գըրտում էր Մօրիգէ Մամասախլիսը,
Առաջ Քօչօրօն վիր նընգնի, իժում իր լաշքար էրիսը,
Գա զալամը ձեռին բռնէ, հիմի տեսնէ սան քաղաքիս։

Հազար երկու հարիւր քառասուն ու չորս թըւին նընգան գերի,
Վարդապետներ կոտորեցին, լէշիր էր ածած տէրտէրի,
Ապրանք, դովլաթ, մալն տարան, էրնէկ տներն չէին էրի
Քաղքի ավիրվելու օրն տասն ու մէկն էր սէպտէմբերի,
Քրոնիկոնումը նստած էր ուն ու պարն ու գան քաղաքիս։

Քաղքեմէն տարած եսիրը որն Արաբստան է հասի,
Որն Բաղդադ, որն Բասրա, որն Իսպահան է հասի,
Որն Քաշան, որն Թէհրան, որն Խորասան է հասի,
Որն Շաքի, որն Շիրվան, որն Դաղստան է հասի,
Նրանց անճար հէրն ու մէրն որ մէկին վայ տան քաղաքիս։

Ով քաղքեմէն եսիր տարաւ, դիփ մէ մէկ մաթահը ջոգեց,
Ով որ փախած տեղէն էկաւ, էն էլ մէ մէկ մահը ջոգեց։
Ոնց մի ջահել տղայ չը պրծաւ, ոնց մէ նովջվան քաղաքիս։

Ուր ին քաղաքի ջոգած տղերքն, որ դաստերով ման գուքէին,
Մէկ մէկու աղպէր ասելով, տէս ինչ սէրով ման գուքէին,
Քեթխուդա աղայ մարդիքը շախշուրներով ման գուքէին,
Ով որ կարողութիւն ունէր նօքարներով ման գուքային,
Նրանցմէն մեկն էլ չեմ տեսնում հիմի մի նշան քաղաքիս։

Ես մէ տանը զայիմացայ, հէնց գիդեցայ հօրըս տարան,
Հօրըս թրով սպանեցին, եսիր արին մերըս տարան,
Մէրս ձեռնեմէս խլեցին, ջուխտ քուրս ու ախպերս տարան,
Շամչի Մելքօն շատ լաց էլաւ ասաւ սրտիս ծէրն տարան,
Վեց ղզլբաշ սպանեցի, մին էլ մէ մեծ խան քաղաքիս։

Շամչի Մելքօ

Հ. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ, Հայ աշուղներ, 17—18-րդ դդ., Երևան, 1961, էջ 296—300:

12

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ XVIII ԴԱՐԻ 90–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԱԶԴԱՐԱՐԻ» ԷՋԵՐՈՒՄ

1795 թ.

Լուրք Վրաց և Պարսից հանեալ ի գրոյ միոյ գրեալ ի Պասրայու ի թուին 1795 թիրայ 5-ին

Աղա Մահմադխան Ղաջար Վրկանացին, յետ առնելոյ Քրման քաղաքի և բռնելոյ գլուսարանս Լեթֆալի խանի[25] որդւոյ Ջաֆարխանի և առաքելոյ նորին ի Թէրհան քաղաք, դարձեալ ի հրամանէ որոյ բարձին զկեանս նորայ սպանանելով ի մէջ Սպահանու և Քաշանայ ճանապարհի, նոյնպէս և սուսերահար արարեալ, եբարձ զամենայն զազգատոհմ նորին յերկրէմէն, միայն կենդանի մնացեալ Մահմադ խանի որդւոյ Ջէքիխանի ի տոհմէ Քէրիմխանի, որոյ փախստական լինելով զերծանայ ի ծարաւի սրոյ նորին, որ ահա այժմ է ի Պասրայ։ Եւ յետ ամենայնի ինքն Մահմադ խան ել զօրու ծանու ի վերայ վրաց և ի վերայ Թիֆլիզ քաղաքի որպէս ընթեռնումք ի գրեանց ոմանց, գրեցելոց ի Բաքիլանէ։ Յառաջնումն յղէ նայ զզօրագլուխ ումն յազգէ իւրմէ (Մահմատխան Սլէյիմանեան), Տէվէլու կոչեցեալ այրն խորամանկ և լի ամբարտաւանութեամբ հանդերձ վեց տասան հազար զօրօք ի վերայ Երևան քաղաքի, Մեծին Հայոց յԱրարատեան աշխարհի, որոց գնացեալ թարց մարտնչելոյ ընդ քաղաքացիսն անձնատուրք լինին նմայ և տիրէ զնոսին առնելով ի նոցանէ պարգևս ըստ հաճոյից իւրոց և զպատանդս ի պարտաւորաց նոցին և դառնայ ի յետս ի Թէրհան քաղաք առ տէր իւր Մահմադ խան։ Դարձեալ երկրորդ անգամ գնալոյ նորին ի վերայ Երևանայ տեսանեն քաղաքացիքն, եթէ ոչ դադարի անագորոյնն այն արշաւմանէ և յաւերմանէ այնու քաղաքի, վասն որոյ միահամուռ բողոքս առաքեն ի Վիրս առ Հերակլ արքայն նոցին, ասելով ահա քանի ամ եղև, զի ծառայեմք քեզ, եթէ օգնութիւն ինչ է քէն հասանելոց է մեզ ահա ժամանակ և օր նեղութեան մերոյ, արայ վաղվաղակի, զի մերձ է կործանումն մեր յերեսաց ապստամբողաց, եթէ ոչ, թող մեզ, զի և մեք յեմ սրտէ հնազանդեմք մերոց թշնամեաց, զոնեայ թէ զանձինս մեր ազրեցուացուք ի սրոյ նոցին։ Յայնժամ արձակէ Հերակլ արքայն վրաց Բագրատունեաց զփեսայ և զթոռն իւր ընդ վեց հազար զօրօք յԵրևան քաղաք[26], յորում աւուր հասանեն սոքա յԵրևան յետ միոյ աւուր, հասանի անդ և նոյն զօրագլուխն Մահմատ խանի ունելով ընդ իւր զնոյն զօրս վեց տասան հազարս առեալ ընդ իւրեանց զօրագլուխքն վրաց զփոքրիկ գունդն զօրաց իւրեանց յորդորելոյ զնոսին ելանեն մարտ ընդդեմ զօրաց Ղաջարաց յետ մտանելոյ յերկուց կողմանց զօրաց ի հանդէս մրցականութեան յայնժամ շտապեն արքն վրաց մարտն մտնչեալ իբրև զարիւծ ալացեալ, իբրև զառծուի ահեղագոչ խնդմամբ արձակելով ի վերայ զօրաց թշնամեաց սուսերահար արարեալ անխնայաբար կոտորեն ի նոցանէ իբրև երկոտասան հազար զօրս նոցին և զմնացեալսն ցիրեցան արարեալ ցրուին զամենայն երեսս դաշտին, իսկ ինքն զօրագլուխ զօրաց իբր եւթանասուն արամբք հազիւ մազապուրծ լեալ փախստեայ անկանի ի Թէրհան քաղաք առ Մահմադ խան տէր իւր։ Յորժամ հասանէ զայս համբաւ յականջ Մահմադ խան վրկանացւոյ, բարկանայ յոյժ, և կատաղի իբրև զշուն թիւնաւորեալ, վաղվաղակի առեալ ընդ իւր իբրև հարիւր եօթանասուն հազար զօրս ընտիրս, արշաւանս առնելով ուղղէ զընթացս իւր թողու զԵրևան քաղաք և գնայ ի վերայ Վրաց և ի Թիֆլիզ քաղաքի, բայց յառաջ քան զհասանիլն որոյ ի Թիֆլիզ, նախ երթայ ի վերայ Շիշու անուանեալ բերդի, շուրջ զնովաւ պատէ զօրօք իւրովք, զկայ առեալ դադարի անդ և մարտնչէ ընդ քաղաքացիսն և ընդ Իբրաջիմ խան տէր բերդին, եւ անտի առաքէ զոմն ի զօրագլխաց իւրոց երկոտասան հազար զօրօք ի վերայ Սղնաղ[27] քաղաքի և ի սահմանաց նորին հասեալ նոցա ի վերայ միոյ գեղջ, յորում մնացելոց հայոց եղելոց, անդ զամենեսին ի սուր անցուցանեն, զկանայս և զորդիս նոցին գերի տանելով, վաճառելով զնոսա ի տէրութեան պարսից։ Բայց մի ոմն ի մէլիքաց անդ ի եղելոց իբր երկերիւր ձիաւոր արձագի ի մէջ գիշերի ի վերայ նոյն բանակի երկոտասան հազար զօրացն վրկանացւոց սուր առեալ համանգամայն կոտորեն ի նոցանէ իբրև տասն հազար անձինս ցրուելով զամենայն զխակունս նոցա ընդ երեսս երկրին և զմնացեալսն ցիր և ցան արարեալ ափոյն դաշտոն ամենայն, և ի նոցանէ իբրև զճ[100] արք կենդանի մնացեալք փախստեայ անկանին առ Մամադ խան։ Իսկ Հերակլ արքայն Վրաց պատրաստի ելանել ընդ դէմ Մահմադ խանի վրկանացւոց զի եթէ յանէ նայ ի վերա Թիֆլիզաց, ինքն ևս ընդդէմ լինիլ նմայ ամենայն զօրօք իւրովք։ Ընթեռնումք թէև ի զօրացն ռուսաց հասին ի Թիֆլիզ ի թիկունս նոյնոյ արքայի։ Այսքան ինչ մինչև զաստ զոր ինչ լուաք և ընթերցաք ի գրեանց գրեցելոյ ի Պաղտատայ զայն ամենայն ծանուցաք պանծալոյդ, յետ այսու զոր ինչ լուր ևս ընկալնումք, զայն ամենայն ևս գրելոց եմք առ ձեզ, բայց նոր ևս զոր լուաք ի Պաղտատայ, գրեն թէ աղայ Մամադ խանն, որ կայր ի վերայ բերդին Շիշու, զորայ ոչ կարացեալ ստանանալոյ զնոսին և ոչ իսկ զգործ ինչ արիութեան ցուցեալ նմայ այն բերդի, որոյ վասն թողեալ զայն ի բաց և առեալ ամենայն զօրաց իւրոց դառնայ ընդ կրունկս, գնալով ի Թերհան քաղաք իւր, ուստի ելն, բայց զայս համբաւ ոչ հաստատի այնքան ստուգութեամբ։ Սպասիմք, զի վերստին ևս ընկալնուլ զլուր ինչ

զայսմանէ, յայնժամ լիովին ծանուցանելոց եմ յայլում ժամանակի այսքան առ այս բաւականասցի։

«Ազդարար», 1795 թ., էջ 604—606։

Լուրք Պարսից յանեալ ի գրոց գրեալ ի Պասրայու, ովգան 14 1795 թուէն։

Ես մնացեալ եմ աստ շուարած, մեր կողմ աշխարհն շատ խռոված է, ճանապարքն արգելեալ է, ի Խոյ քաղաքէն մինչև Երևան, խանն Խոյու ընդ խանին Երևանու մարտնչէն ընդ միմեանց, Խոյու խանն 20000 թուման է խոստացեալ վրացն, զի օգնեսցեն իւրն, տեսանել պարտէ վերջն զինչ է լինելոց։

Աղա Մահմատ խանն Քրման տիրեալ է, Լօթվալի խանն փախեաւ առ կողմն Թապասու։ Այժմ Աղա Մահմատ խանն եկեալ է ի Շիրազ նըստեալ կայ։ Ասեն, թէ նօվրուզ կատարելէն յետ ելանելոց է առ Վրաստան. ներկայ Բուշերայ շեխին և Դաշտստանու խանէրն խնդրէ, գնալ առ նա, բայց նոքա խնայեցին գնալն։ Բուշերայ շեխն իւր ունեցեալքն յաւելեալ է ի Խարք կղզին, ինքն պատրաստի կայ, ամենայն նաւսն իւր հրամայեալ է չելանել առ որոք տեղ խարսխեալ պատրաստի են, որ եթէ զօրքն Մահմատ խանին դիմեցեան առ Բուշեր, ելանի իսկոյն առ Խարք։ Շեխն Բուշերայ ընծայ է յուղարկեալ առ Աղայ Մահմատ խանն, բայց չէ ընդունեալ, ասելով, զի շեխն ելանի առ նա անձնաւոր, հանդերձ խաննէրքն։

Առ Շիրազ գնալոյ ճանապարհն բաց է և գնացող և գալացող անպակաս, Ջուղայ այժմս աւել հանգստութեանն են։

«Ազդարար», 1795 թ., էջ 259։

Յատոր գրոյ միոյ գրեալ ի Պասրայու, ի թուին 1795, Նադար 15-ին։

Սրտամաշութեամբ ծանուցանեմ Հայաստաննեաց և ի կողմանց մերոց լուրն ըստ խնդրանաց այս, որ ներքենի պետն Պարսից այս 5—6 ամիս եղև, որ մին կէս լաք[28] զօրօք և բազում սպառնալեօք խաղացեալ է ի Հատրբեջան հասեալ ի Դարվէժ և զօրքն խաղացուցեալ է ի վերայ Շուշայու ամրոցին և մասն մի ի Երևան և անտի կամս է արարեալ գնալ ի վերայ Տփխիսայ և Վրաց և լսեմք ես, թէ Վրաց արքային թոռն Դաւութ Սարգարն 25 հազար զօրօք ի Երևանայ բերդն է ամրացեալ և անդ ընդ Պարսից պատերազմ եղեալ փախուստ են դարձուցեալ և 8 հազար պարսիկք ի սուր սուսերի են մաշել։ Եւ պարոնն... գրեաց մեզ, թէ Հիւսիսանոց օգնութիւն չի եկեալ, և Պարսից զօրքն կոտրվելուն կրկին ներքենին արիական զօրութիւն զգեցեալ յոյժ մոմռալով հառաջացեալ է ի վերայ

Շուշայու բերդին, զի անդ յախթեալ գնացէ ի Վիրս, բայց այս լուրք ի Բաղդադայ ունիմ գրով ծանուցեալ և ոչ ի մերս կողմանէ գրով, և ի Շօշու մերմէ ես գրով լուաք, որ Հայաստանայ 5—6 հարիւր տուն քօչեալ տարեալ է, որ յղէ Սպահանն մեր, բայց այս ես ի կողմանց և Բաբելոնէ լուր ոչ եմ առեալ, թէ հաւաստի է թէ ոչ, բայց յոյժ տխուր եմ և ուաղեմ կեանն մեր, զի երկրորդ Շահբազի պատահեցաք վատթար[29], քան զայն։ Աղաչեմք զաստուած, զի այց արասցէ և սուտ լիցի, բայց խելքի փոքր մօտ երևի ներկայ 4—5 աւուր գրով Բաբելոնի ուրախարար լուր և գիր գդայ, որ գրեն թէ թագուհին Ռուսաց շնորհ է արարեալ 32 հազար ասկար հղեալ է ի Թիփլիս՝ օգնութիւն և նոյն չափ ես գրեն, թէ գալոց է։ Եւ զօրք Վրաց արքային գրեն, թէ հաղթելոց է Ներքենուն և զօրացն, յուսամ հաստատ լիցի և ցանկութիւն քոյ և իմ կատարելոց է, թէ Աստծով հաստատ լինի։

Մինչ այժմ Նվիրակն ես չերևաց և Սրբազանապետէն ես գիր չեմ գդած, յուսամ մօտոյ գտանել և այնու յետ ինչ լուր լիցի ծանուցանելոց եմ քեզ Աստուծով աւետեօք։

«Ազդարար», 1795 թ., էջ 550։

Լուրք ընկալեալ ի համապատասխանէ Պասրայու։

Գոմ Հայաստանաց Վրաց և մեր Պարսից լուրն սակաւ ինչ ծանուցանել։ Ներքինապետն Պարսից մեծ զօրօք, գրեթէ մն կէս լաք ասկարով, խաղացեալ է ի վերայ Ադրբէջանայ ամրոցաց՝ այսինքն Շուշայու զալին, յԵրէվանու և Վրաց պետի վերէն շատ խառնակութիւն կայ, բայց յուսամ՝ Վիրք յաղթեն սորայ, զրայ էսօր Բաղդատայ գիր գտայ, որ 32 հազար զօր Մօսկովու թագուհին օգնութիւն այ արարել, եկած այ և 30 հազար էլ գոլէցայ գրում ան, յուսամ, հաստատ լինի, աստուծով կու յաղթին և Հայաստան կտիրեն, յուսամ մեր ազգին ազատութիւն ես լինի և այլ լուր հաստատ չունի, որ գրէի։

Պասրայ Նադար 15, 1795։
Բունբայու վերնովն

Աղայ Մահմադ Խանն լսեմք և Բաղդատայ գրեն մեզ, թէ իբր կոտրվէլ այ, յետ այ դառցել, բայց հաւաստին անհաստատ, յուսամք, եթէ սուտ այ հաղորդ լինի, զրայ մեծ գազան այ, աստուած կործանէ յինքն, մեր մեղքն ներելով։

Պասրայ Թիրայ 5, 1795։

«Ազդարար», 1795 թ., էջ 559։

13

ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ՄԱՍԻՆ

12 հունվարի 1796 թ.

Յիշատակութիւն վասն սրբոյ Աւետարանիս երրորդ ստացողին եւ վասն իրաց ինչ եղելոց առ նովին ժամանակաւ, գրեալ յԱստապատցի յԱբրահամ վարդապետէ ի թուին ՌՄԽԵ։

Տէրն մեր Քրիստոս ասէ մեղրածորան բերանովն ի փրկագործ Աւետարանին. «Ծառ բարի պտուղ բարի առնէ»։ Որպիսի է օրհնեալն յԱստուծոյ Ագուլեցի Տուտենց Յարութիւնին որդի, մեծահաւատ Մարտիրոս վաճառականն։ Որ գոլով ծառ բարի, անկեալ ի դրախտի եկեղեցւոյ, ի գնացս հոգւոյն վտակաց՝ ծաղկեալ հաւատով և լցեալ առաքինութեան եւ բարեգործութեան պտղով, տայ ի ժամու պտուղ բարի եւ ուրախ առնէ զԱստուած, զհրեշտակ եւ զմարդիկ։ Որպէս եւ մեզն եւս ընծայեաց առ այժմ զհամեղաճաշակ պտուղ սբ. Աւետարանիս եւ քաղցրացոյց զմեզ։

Քանզի առ մերովս ժամանակաւ որդին Մահմադ-Հասանայ՝ մեծազօր բռնաւորին՝ Աղայ Մահմադ-խանն՝ ըստ յաջողելոյ բաղդին զօրացեալ յոյժ՝ յինքն գրաւեաց զբովանդակ աշխարհն Պարսից, եւ տիրեաց մասնաւորապէս նաեւ այլոց աշխարհաց եւ թագաւորական շքով եւ անուամբ նստէր ի քաղաքն Թէհրան։ Սա ի թուականիս մերում ՌՄԽ եկն անթիւ բազմութեամբ զօրաց ի Դաւրէժ քաղաք և ի Մարանդ գաւառ. եւ անտի հրաւիրակս առաքեալ՝ զԱտրպատական երկրի յինքն կոչեաց զամենայն նախարարս, այսինքն՝ զխանս Հատրպէճանու սկսեալ ի յՈրմոյ մինչեւ յԱրտաւիլ, ընդ որս եւ զքաջ իշխողն Նախջուանու՝ զՔեալպալի խանն՝ զորդին Հասան խանին, որք հնազանդութեամբ գնացին առ նա եւ եղեն նմա հարկատուք։ Եւ նորա մեծապէս պատուեալ զսոսա զամենեսին, դարձոյց յիւրաքանչիւր տեղիս-առնելով պատանդս, այսինքն՝ զաւակս ի նոցանէ, զոմանց կանայս եւ զոմանց որդիս եւ զեղբարս։ Բայց Հերակլ բարեպաշտ արքայն վրաց եւ նախարարքն Շուշի բերդին եւ Երեւանայ՝ ոչ կամեցան մտանել ընդ լծով հնազանդութեան նորա։ Եւ նա ի նմին ամի դարձ արարեալ՝ գնաց ի քաղաքն իւր ի Թէհրան։ Եւ զկնի երկուց ամաց առաքեաց զՄիւլէյման խանն, որոյ եկեալ՝ նստաւ ի Դաւրէժ քաղաքի եւ կոչեաց առ ինքն զՔեալպալի խանն Նախջուանայ, կասկածեալ ի նմանէ վասն քաջութեան նորին զի մի ապստամբեսցի։ Զոր առեալ ընդ իւր տարաւ ի Թէհրան առ Աղայ-Մահմադ խանն։ Որ եւ մնաց անդէն առ նմին ամս երկու և ի բազում տեղիս՝ բազում քաջագործութիւնս եւ յաղթութիւնս արարեալ՝ պատուեցաւ եւ

փառաւորեցաւ յոյժ ի նմանէ, եւ ստացաւ անուն քաջութեան, վասն զի նա ինքն Քեալպալա խանն էր իրաւասէր եւ արդարադատ, խնամող հայկազեան ազգի, սիրող եկեղեցեաց եւ վանօրէից, միանգամայն եւ քաջահմուտ եւ յաջողակ ի զինուորական իրողութիւնս, եւ առիւծանման հզօր ի պատերազմի, որ անձամբ անձին՝ մղեալ է զբազում պատերազմունս՝ յաղթական գտեալ յամենայնի օգնականութեամբ վերին զօրութեան։

Քանզի ի թուականութեանս մերում ՌՄԼԸ նախարարն Աճարայ, այն է Ղարադաղի Մուստաֆայ խանն եկն բազում զօրօք ի վերայ Գողթան գաւառիս. եւ կողոպտեալ՝ յաւարի էառ զամենայն ինչս մեծի առաքելական Աթոռոյս զեկեղեցականս եւ զարտաքսականս. եւ եկեալ Քեալպալի խանին՝ խորտակեաց զզօրութիւն նորա՝ մեծաւ քաջութեամբ եւ փախոյց զնա ամօթով յետս։

Եւ զկնի երկուց ամաց՝ Իպրահիմ խանն Շուշի բերդին՝ ժողովեալ զլեռնականս, որք լէկզի կոչին, եկն ի վերայ սորա ծանր զօրօք, եւ սա ամրացաւ ի բերդն իւր ի Նախջուան։ Եւ յետ քանի մի աւուրց՝ օգնութիւն գտեալ ի յԵրեւանայ եւ ի Խոյոյ, եւ ի յամրոցէն եւ եհար չարաչար զզօրս նորա եւ ցանեցիր կացուցեալ՝ փախստական արար։ Եւ այլ բազում մասնաւոր քաջութիւնս գործեաց, զորոց չէ տեղւոյս գրել մի ըստ միոջէ։ Զոր եւ ի թուականութեանս մերում ՌՄԽԳ, առեալ ընդ իւր Աղայ Մահմատ խանին՝ գնաց ի վերայ Նիւթալի խանին[30] որ նստէր ի Քիրման քաղաքի։ Զոր յետ պաշարելոյն ամիսս ութ, էառ մեծաւ պատերազմաւ. զբազումս ի բնակչացն սրոյ ճարակ ետ եւ զնոյն ինքն՝ զՆիւթալի խանն՝ ձերբակալ արարեալ՝ կուրացոյց զաչս նորա, որ զկնի սակաւուց իւրովի դեղակուր եղեալ՝ վճարեցաւ ի կենաց։ Յետ որոյ առաւել եւս զօրացեալ Աղա Մահմատ խանին, հաստատեցաւ յիշխանութեան իւրում։ Եւ ի թուականիս մեր ՌՄԽԴ եկն միւս անգամ անթիւ բազմութեամբ զօրաց պարսից ի Ատրպատական երկիր, ածելով ընդ իւր եւ զՔեալպալա խանն։ Եւ անցեալ ընդ Երասխ գետ, դիմեաց ի յԱրցախ աշխարհն, որ է Ղարաբաղն, եւ պատեաց զանառիկ եւ զընդարձակ բերդն Շուշի։ Եւ անտի ասպատակ սփռեալ՝ յաւարի էառ զգաւառսն Արանդայ՝ զՁաւանդուր եւ զԳինէխուղ եւ գերեաց զբազումս։ Եւ զեղբայրըն իւր զԱլի ղուլի խանն առաքեաց երկոտասն հազարօք առ Նախիջուանաւ ի վերայ Երեւանայ, որոյ եկեալ բանակեցաւ հանդէպ բերդին, ուր եկն ընդ առաջ նորա աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց տէր Ղուկաս[31] երջանիկ կաթողիկոսն սուրբ Աթոռոյն էջմիածնի, իբրև քաջ հովիւ եւ փեսայ՝ դնելով զանձն իւր ի վերայ հօտին եւ հարսին հոգեւորի։ Եւ մատոյց նմա բազում ընծայս՝ ըստ արժանւոյն՝ ջանահնար լինելով յամենայնի, զերծ պահել սուրբ Աթոռն ի գլխաւոր վնասուց. եւ առ այս՝ ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց դրամս,

ոմանց բազում եւ ոմանց սակաւ տալով։ Եւ ինքն սրբազան Հայրապետն՝ մեծապէս պատուեալ՝ փառաւորեցաւ եւ խիլայեցաւ ի նմանէ։

Իսկ յետ աւուրց ինչ զօրաւարն Պարսից մեկնեցաւ անտի, առեալ պատանդս ի Մահմատ խանէն Երեւանայ՝ զկին եւ զեղբայր նորին, եւ գնաց դէպ ի Վրաստան։

Քանզի Աղայ Մահմատ խանն (որ նստէր ի վերայ Շուշի բերդէն) իբրեւ ետես՝ եթէ պաշարումն քաղաքին երկարի յոյժ եւ դժուարին է առնուլն, եթող զայն եւ խաղաց ամենայն հեծանոսական բազմութեամբն յաշխարհն Վրաց. եւ փախուցեալ զարքայն եւ նոցա զբարեպաշտ Հերակլ, էառ զմայրաքաղաքն Տփխիս՝ որ է Թիֆլիզ, քանդեալ աւերեաց զշինուածս քաղաքին, կոտորեաց զբազումս ի բերան սրոյ. եւ զանհամար քրիստոնեայս՝ մանաւանդ զհայս ի գերութիւն վարեաց՝ ընդ ծովացեալ մեղաց մերոց. եւ յաւարի էառ զամենայն ինչս եւ ստացուածս նոցա եւ զանօթս եկեղեցացն։ Մանաւանդ զմայր Աթոռոյն մերոյ՝ սրբոյն Էջմիածնի՝ մեծագին զգեստ եւ զմարգարտաշար եւ զականակուռ թագս եւ սաղաւարտս, եւ զոսկեղէն եւ զարծաթեղէն ծանրագին անօթս, որք անդէն ի նմին քաղաքի ի պահեստի էին, ընդ նոսին եւ բազում պատուական գրեանս։

Եւ յետ աւուրց. ընդ կրունկն դարձաւ անտի Աղայ Մահմատ խանն եւ եկն ի սահմանս Գանձակայ, որ է Գանջայ։ Եւ զի Քեալպալի խանն Նախջուանու՝ փեսայ էր Մահմադ խանին Երեւանայ, զսա առաքեաց անտի առ Մահմատ խանն հաւանեցուցանել զնա և ածել առ ինքն։ Որոյ եկեալ յԵրեւան, միամտեցոյց զանձն իւր, երաշխաւոր դնելով զինքն վասն նորա առաջի Աղայ Մուհամմատ խանին, եւ առեալ ընդ իւր՝ տարաւ առ նա։ Զոր բազում սիրով ընկալեալ Աղայ Մուհամատ խանին, մեծապէս պատուեաց, իբրեւ զազգականն իւր, քանզի եւ իշխողն Երեւանայ բուն ազգաւ պարսիկ էր, որոյ ցեղն իբր յատուկ անուամբ Ղաճեար կոչի։ Եւ յետ սակաւուց՝ չուեաց անտի Աղայ Մահմատ խանն եւ եկն ի յարգաւանդահող եւ ի յընդարձակ դաշտն Մուղան, եւ բանակ հարեալ՝ նստաւ անդ։

Եւ ի նմին տեղւոջ խիլայեաց զՄահմատ խանն Երեւանայ. եւ մեծապէս փառաւորեաց, կացուցեալ զնա մարզպան, այսինքն է՝ Պէկլարբակի. եւ դարձոյց ի տեղ իւր։

Եւ քանզի անդր քան զԿուր գետն՝ եղեալ նախարարք, այսինքն՝ Դարբանդայ եւ Բաքուայ եւ Նուխւոյ եւ այլոց տեղեաց եւս խանքն՝ հնազանդեալ էին Աղա Մահմատ խանին եւ թօշակ տային զօրաց նորա, եւ միայն Շամախի էր ի մէջի անդ ապստամբ։ Վասնորոյ առաքեաց Աղայ Մահմատ խանն զքաջ զօրավարն իւր զՔեալպալի խանն բազում զօրօք ի վերայ Շամախւոյ։ Որոյ գնացեալ անդր, յապականութիւն դարձոյց

զերկիրն եւ պատեալ պաշարեաց զամրոցն՝ ուր էին արգելեալ՝ ինքն նախարարն Շամախւոյ։ Բայց զկնի սակաւուց՝ ի տեղի Քեալպալի խանին՝ առաքեաց աղայ Մահմատ խանն՝ զայլ ոմն զօրավար եւ զնա եբեր առ ինքն. եւ մեծապէս պատուեալ՝ փառաւորեաց, եւ դարձոյց խիլայիւ ի քաղաքն իւր ի Նախջուան։

Եւ ինքն Աղայ Մահմատ խանն՝ բանակեալ է առ այժմ ի Մուղան դաշտին, ունի ձմերել անդէն. եւ յաւուրս գարնան գնալ վերստին ի վերայ Շուշի բերդին. եւ առ նոյն ժամանակաւ՝ թէ զինչ իրագործութիւնք հանդերձեալ են լինել, Աստուծոյ է գիտել՝ որ տէրն է ժամանակաց։

Արդ այս չափ ինչ պատշաճ համարեալ՝ գրեցի համառօտիւ ի յիշատակարանի աստ՝ զԱղայ Մահմատ խանէն՝ ժամանակակից գոլով նորին՝ ես Աստապատեցի Աբրահամ նուաստ վարդապետս ի մուտս նահանջ նորոգ թուականիս մերում, որ է քսան եւ չորք յոբելեան, ըստ թուոյ ժամուց տունջեան եւ գիշերի, եւ չորիցս, տասն, ըստ Աւետարանչացն խորհրդոյ եւ ըստ տարեացս հաշուի՝ ընդ նոսին եւ հինգ ամ, ըստ թուոյ զգայարանաց բանականի։ Առ ի ծանօթութիւն ապա եկելոցդ՝ ըստ իմաստնոյն խրատու, թէ՝ մի անցցէ զքեւ պատմութիւն հնագունից, զի եւ ինքեանք ուսան ի հարց իւրեանց, քանզի ի նոցանէ ուսցիս զիմացուածս, եւ ի ժամանակի հարկաւորութեան մարթասցիս, տալ պատասխանի։

Եւ զսոյն զայս արարի հրամանաւ գերապատիւ հօր մերոյ եւ առաքելաշաւիղ առաջնորդին Գողթան գաւառիս տեառն Թոմայի խոհեմազարդ վարդապետին Դաստակեցւոյ։ Որ է վեցերորդ եպիսկոպոս ի շինութենէն այս առաքելական Աթոռոյս, այր խորհրդական եւ հանճարեղ, խոհամիտ եւ հեզահամբոյր, քաղցրաբարոյ եւ բազմապարգեւ, զարդարեալ ձրիւք հոգւոյ եւ մարմնոյ եւ փառաւորեալ յամենեցունց։ Որ կայ եւ կառավարէ զսոյն սուրբ Աթոռս՝ խոհական խորհրդով, թէպէտ եւ կրէ պէս պէս վիշտս եւ նեղութիւնս ի դառնութենէ եւ յաղքատութենէ ժամանակիս, որում տէր կեանս երկարս եւ խաղաղականս պարգեւեսցէ, ամէն։

Արդ՝ առաջնորդութեանս մերում նպատակ է՝ սոյն այս, զի աստուածախօս գեղեցկագիր սուրբ Աւետարանս՝ մի է ի գերելոց անտի պատուական գրեացն Թիֆլիզու։ Զոր գնեաց ի գերողացն՝ նախագրեալ Յարութիւնին որդի քաղցրապտուղ ծառն՝ շառաւիղեալն ի բարի արմատոյ՝ բարեպաշտօն վաճառականն Մարտիրոս՝ իբրեւ զգեղեցիկ եւ զմեծագին մարգարիտ։ Եւ ընծայեաց մեծաւ սիրով ի ձեռս վերոգրեալ երջանիկ Առաջնորդին՝ առ ի լինել հոգեւոր յիշատակս իւրն եւ իւրայնոցն ամենեցուն ի սուրբ Աթոռս Թոմայի սրբազան առաքելոյն։ Կամեցաւ սովաւ ժառանգել զերանին Եսայեայ կայծակնամաքուր մարգարէին, որ ասէ. «Երանի, որ ունիցի յիշատակ ի Սիոն եկեղեցի»։

Ապա խնդրի ի միաբանիցդ մեծի Աթոռոյս՝ որք ընթեռնուքն զայս սուրբ Աւետարանս յիշել ի բարին՝ զԱգուլեցի Տուտենց Յարութիւնեան Մարտիրոս վաճառականն եւ զծնողսն, եւ զորդիսն եւ զհամօրէն ազգայինս նորա զկենդանիս եւ զննջեցեալս։ Զորս զամենեսեան օրհնեսցէ Քրիստոս հատուցանելով բազմապատիկ վարձս՝ հոգեւորապէս եւ մարմնաւորապէս եւ յիշեսցէ որպէս զաւակն, յորժամ գայ արքայութեամբ իւրով, ամէն։

Գրեցաւ յիշատակս բանս, ի թուականիս մերում ՌՄԽԵ, յամսեանն յունուարի ԺԲ, ի յառաքելական հրաշազարդ սուրբ Աթոռս Թովմայի՝ որ ի գիւղաքաղաքս Ագուլիս։

Արտագրեց Յարութիւն Թումանեանց

Ագուլիս։

«Բանասէր» ամսաթերթ գրական և գիտական, հատոր Ե, յունուար, թիւ 1, Պարիս 1903, էջ 209—213։

14

ՏՓՂԻՍԻ ՄՈՂՆՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ

22 մարտի 1796 թ.

Ըստ ընթացից հոլովման շրջանին ժամանակաց պատահեալ մեր ի կողմն ձախողակի և ի յարդար իրաւանցն աստուծոյ դատեալ խրատապատժեցաք ըստ յանցանաց մերոց, որ ի ՌՄԽԴ թուոջս և սեպտեմբեր ամսոյ ԺԳ-ին, պարսից իշխող չէզոք Աղա Մահմադ խանն եկն և տիրեաց զվայելուչ քաղաքս մեր Թիֆլիզ, որում և հասոյց զմեծ վնաս և զաղէտ տագնապի, անխնայաբար կոտորելով զբնակիչս, զորս և զբազումս գերի առնելով, հանդերձ այրեցմամբ շինուածոց և յափշտակմամբ յոլով գանձուց և փարթամութեանց, մինչ զի հասաք մեք ի յետին չքաւորութիւն, և առ հասարակ փարթամք և անինչք ի կողմն մեծագոյն թշուառութեան և աղքատութեան միտեցաք, ամին սարսափ և եկեղեցիք մեր, զրկեալ ի կահուց և ի կարասեաց անկան ի պայծառազարդութենէ և աղաւաղեալք անշքացան, որ ի վայելչականէն զրկեալք գէթ հարկաւորին անգամ ոչ ձեռնահաս լինէին, սակս որոյ համակամ հաւանութեամբ քաղաքիս մերոյ իշխանաց, եկեղեցականաց և աշխարհականաց, և յատկապէս Մօղնու եկեղեցւոյս քահանայականաց դասուց՝ և ժողովրդոց, ի շինութիւն և ի պայծառազարդութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ, այսպէս ըմբռն և պատշաճ վարկեալ, զի որովհետև չունիմք մեք զառաջինն մեր կարողութիւն որպէս երէկն և եռանդն, հոգատարութեամբ լնուլ զհարկաւոր պիտոյսն սրբոյ եկեղեցւոյս, վասնորոյ կարգեցաք սրբոյ եկեղեցւոյս զմասն բաժնի, յամենայնէ ելիցն և մտիցն իբրև զմի ընիկ քահանայ, հանելով բաժին ի ժամէ, եթէ ի տէրունական աւուրց և եթէ ի հասարակաց, զի զոր ինչ եկեղեցւոյն բաժին անկցի, զայնս համայն քահանայք եկեղեցւոյս պարտին կարգաւ առնել զժամն, ի հասարակէ յերից մասանց զմի մասն առնլով ինքեանց վարձ. ըստ ընիկ սովորութեան եկեղեցւոյս, և ի տէրունականէ ի հինգերորդ մասնէ զմի մասն, և զմնացեալն տալով եկեղեցւոյն, որոյ հոգաբարձու և կառավար և երիցփոխան կարգեցաք զպարոն Եսային Ֆիթօյեան, որ զամենայն հասոյն սրբոյ եկեղեցւոյս թէ ժամուցս այս, թէ գանձանակ, թէ պսակի և կնքոյ լուսաղրամ, թէ ձիթաղրամ և մոմաղրամ, որ հաւաքի ի զատկի և ի յրօրհնեայս, և թէ այլ ամենայն ինչ, թէ խանութի քիրայք և թէ գերեզմանահախք, և որ ինչ յանուն եկեղեցւոյ արդիւնք զամենայն համայնգամայն պարտին յանձնել ի վերյիշեալ պարոն Եսայուն առանց ումեք ներհակելոյ և ձեռնամուխ լինելոյ, որ և նոյն պարոն Եսային զայնս ամենայն ինքեան յանձնեցեալ զարդիւնսն, պարտի հաւատարիմ պահպանութեամբ պահել, և ի հարկաւոր պակասութիւնս եկեղեցւոյ ծախել կարգաւորը հաշուագրութեամբ ելիցն և մտիցն, այսպէս և այսու օրինիւ և կանոնաւորութեամբ պարտի մնալ եկեղեցիս այս զժամանակ ինչ, մինչև այց առնել տէրն մերոյ և համայնից նախախնամողին, որ ի կարողանալ ժողովրդոց, և ի լնուլ հարկաւոր պակասութեանցն սրբոյ եկեղեցւոյ, յայնժամ ըստ վայելման ժամանակին լինելոց է կարգ և սահման։

Արդ՝ և ոչ արժան իսկ էր զանց առնել զայսու, որ ի գալ և ի տիրել նոյն անիծեալ Աղա Մահմադ խանին զքաղաքս զայս, թէ զիա՞րդ և որքա՞ն անտանելի տանջանս կրեաց տէր Շմաւոնեան Տէր Գրիգոր մաքրասուն և մեծաշխատ աւագ քահանայն սրբոյ եկեղեցւոյս, արբմամբ սաստիկ գանից և խարմամբ բոլոր անդամոց, յաղագս անօթից եկեղեցւոյն, բայց նա զօրացեալ ի շնորհացն աստուծոյ, ամենևին ոչ զանգիտեցեալ ի յայնքան դառն տանջանաց, այլ ի սպառ տոկալով ի նեղութեանն այնմիկ, որ գրի թէ հասեալ մինչև ի դուռն մահու, բայց ոչ ցուցեալ ի պահեստ եղեալն զանօթ, զի թէ և ոմանք գիտելով զմասն ինչ ի պահեստի եղելոցն՝ անհամբեր եղեալ ցուցեալ էին անօրինացն, և բոլորովին տարեալ նոցա, բայց զայնս զոր ումեք ոչ գիտացեալ բաց յինքենէ, զայն մասն ամբողջ զերծուցեալ, զորս ամենայն ի հաշուագրի նշանաւորեալ յականէ և յանուանէ, և ի ստորև ձեռագրեալ և կնքեալ զհաշուագիրն ընդ թղթոյս յանձնեցաք պարոն երիցփոխ Եսայուն, և զանօթսն անդրէն ի Տէր Գրիգոր աւագ քահանայն յաւանդեցաք ըստ

պատշաճի եկեղեցւոյն, ի գործ ածցէ և ըստ իւրում ժամանակի վայելեսցեն ի պաշտօնս և ի հանդէսս եկեղեցւոյն։

Գրեցաւ և եդաւ այս թուղթ ի ՌՄԽԵ թուոջս, ի մարտի ամսոյս ԻԲ։

ქ. ამისი მოწამე მდივან სოლომონ.

ქ. ამ კეთილის გარიგების თანახმა და მოწამე ვარ მელიქის შვილი დარჩა.

ქ. ამ კეთილის თანახმა ვარ და მოწამე თაყოაშვილი ისაია.

ქ. ამ კეთილის გარიგების თანახმა და მოწამე ვარ მდივან ავეტიქ.

ქ. ამ კეთილ განწესების თანახმა ვარ მე ყოვლიდ ულირსი მონა ტერ გრიქურ, ბეჭედი არა მქონდა, ეს ჩემი ხელია.

Սոյն կանոնիս համաձայն և համակամ գոլով կնքեմ սրբոյ էջմիածնի գործակալ և վանքի եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Ղազար։

Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ կաթողիկէ եկեղեցւոյ սպասաւոր տէր Առաքել։

Ընդ սոյն կանօնիս համակամ գոլով կնքեմ Նորաշէնու սուրբ եկեղեցւոյ անարժան սպասաւոր տէր Յակոբ։

Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ Բեթլեհէմու սուրբ եկեղեցւոյ սպասաւոր տէր Ստեփան։

Ստեփան Տէր Շմաւոնեան։

ქ. ამისი მოწამე ვარ მე ბასტამანთ მილდისას შვილი სტეფან.

ქ. ამისი მოწამე ვარ ფითოანთ ისაიას შვილი ალა.

«Կարգադրութիւնս այս հաճոյ է ինձ, վասնորոյ և իմով ձեռամբ հաստատեմ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի հայոց և այցելու աշխարհիս Վրաց»։

«Հախպատայ սրբոյ վանից առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոս, վերահասու գոլով, վասնորոյ կնքեցաք.

Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 6, վավ. 69։

15

ՍԵՐՈՎԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ 1795 Թ. ՏՓՂԻՍԻ ԱՎԵՐՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

26 մարտի 1796 թ.

Պատմութիւն աւերման Տփխիս քաղաքի Սերոբէ գրչի (Համառօտ պատմութիւն աւիրեցման Փայտակարան մայրաքաղաքիս ի խանէն աղայ Մահմադի ի 1795 և ի 11 սեպտեմբերի)։

Առ փառահեղ կայսերութեամբն հիւսիսայնոց Եկատարինէ երջանիկ թագուհւոյն և ի տիրապետութեանն Վրաստանեայց Քրիստոսազօր թագաւորին Հերակլեայ երկրորդի. նաև ի կայսրութեանն հագարացւոց սուլթան Սէլիմ խօնթքեարին յարուցեալ բաստաւոր խանի ուրումն ի խորին պարսիկս յանուն Աղա Մահմատ ներքինի նշանաւորութեամբն մականուանեալ՝ սկսաւ ժողովել յայլ ազգութեանցն խանից զարս բազումս՝ բաց յայնց՝ զորս ինքն ունէր անպակաս։ Եւ յետ բազմանալոյ զօրացն՝ խորհեցաւ յասպիճան յեւ բարձրագոյն վերամբառնիլ՝ փոխելով զանուանակոչութիւն իւր ի խանութենէն ի շահ. նմին իրի՝ իւրովի ընական ճարտասանութեամբն, և կեղծուպատիր սիարնիչ նոմոսիւքն, զայլ խանս ևս ի սահմանակից քաղաքաց յինքն մերձեցուցանէր, որոց յետ ցուցանելոյ զրաւական սէրս, բանայր զներքին տրամադրութիւն սրտին՝ զառաջինն իբրև զյատուկ բարեկամ նոցին և զորովագութ առ ժողովուրդսն նաև խորհմաց իմաստասէր, և նախանձայոյզ յօրէնսն մահմէտականի զանձնէն իւրմէ իւրմէ պանծալով, և վերջապէս՝ յամենայնի զինքն պատրաստ՝ և արթուն արեամբ չափ ի մահ զհաւատոյ․ երևեցէր, և ապա՝ աղէխորով կաթողնութեամբ, և ալէլկական դիմանըշմարութեամբ ափսոսայր և աւաղէր զբոլոր սահմանէն Ասիոյ՝ որպէս՝ թէ՝ անտէր և անպէտ իցէ մնացեալ յօրէն Նատրի[32] մինչև ցայսօր. և այսպիսի եղանակաւ և թորելով զլորձուն նոցա իսկ հարցանէր թէ՝ արդարև այնպէ՞ս իցէ։

Նոքին իսկ շարժեալ ի նախանձ օրինաց իւրեանց ասէին՝ իրաւի արդար է ասութիւն բանի մեծութեանց ձերոց, և ահաւասիկ յարմարագոյն ամանակ հաստատելոյ զդոյն բարեհաճութիւն, որ չէ ինչ դժուար ամենևին՝ եթէ ևս եղիցին կամք ազրութեանց ձերոց, որում համակամ և միախորհ եմք ըստ ամենայնի. միայն թէ՝ զկերպս հնարեսցուք զհագարացւոց կայսրն ևս հաճեցուցանել ընդ այս՝ առ մակադրութիւն հրովարտակի բարձրութեան իւրում՝ և անստերիւր կնիք ի նոյն։

Յայս ինչ՝ մատեաւ յառաջ միոն ի նոցունց անտի թէ՝ թէպէտև շատ է հաճութիւն նորուն, բայց՝ ևս քան զևս հաստեսցի՝ եթէ գերմանացւոց կայսրն[33] ևս կնքեսցէ։ Որք առ ժամայն փութացուցին զծայրս գրչաց ի կաղամարս սևորակ մելանի թանալ, և ի սպիտակ քարտէնս շարահիւսել, հուսկ յետոյ՝ ընդ այլ յոլով պարգևս յանձն առնուլ ընտիր ընտիր արանց և առաքել անուամբ դեսպանութեան առ երկաքանչիւր կայսերսն. այսինքն առ Բիւզանդիոյն[34], և առ Վեննայինն։ Եւ ի դառնալն նոցին յետս՝ ընկալան զպատասխանի ի Կոստանդնուպօլեայն թէ՝ եղիցի՝ եթէ զՎիրսն կարողասցի ընդ հրամանաւ իւրով ընկճել։

Նոյնպէս եկն և ի կայսերէն Գերմանիոյ բան՝ թէ բարի է՝ բայց պարտ է զՎրաստան և զԲաքիլոն իւրացուցանել՝ որով իշխեսցէ անուա-

նիլ շահ։ Սակայն՝ երկուցունց աստի և ոչ միոյն էր կամ խորհրդոյս
այսմիկ կցորդիլ, նորին սակս հիւսեցին յանդիման զորմունս դայսո-
սիկ, նախագիտելով զանհնարութիւն իրակութեանցս։
Տեսեալ սոցուն զպատասխանիս զայսոսիկ՝ զփոյթ յանձինս կա-
լեալ՝ յարեան զօրութեամբ կարեացն, զորս ունէին ներկայապէս, և
յառաջ խաղացեալ եկին, ուղղելով զդէմս իւրեանց յարևելս կոյս. և ի
քաղաքացն այնց սահմանաց՝ զոմանս բռնակալեալ՝ կացուցանէին ընդ
ձեռամբ նոյն գիւղլկին. և ի քաղաքապետացն անտի՝ ոմանք փոքր
ինչ ընդդէմ կացեալ՝ յաղթահար լինէին. և ոմանք առ երկիւղի յարու-
ցեալ ընդ առաջ ելանէին կապեալ թաշինակաւ՝ կամ թրով զպարանո-
ցաւ՝ ի նշան հնազանդութեան. նաև ոմանք զկանայս կամ զորդիս իւ-
ցաւ՝ ի նշան հնազանդութեան. նաև ոմանք զկանայս կամ զորդիս իւ-
րեանց մատուցանէին ի պատանդ. բայց՝ խանն Իբրահիմ իշխանն Շօ-
շայ ապաւինելով նախ յամրակառոյց և ի վիմամբարտակ ամրոցն քա-
ղաքին իւրում. նաև ի լիութիւն ըշտեմարանաց ալեր ցորենոյ և գարւոյ,
և ապա՝ ի նպաստաւորութիւնն Հերակլեայ արքային, ընդդէմ եկաց ան-
զօր կարողութեամբ իւրով, և ընդ յոգն ժամանակս բազմավրդով մենա-
մարտութեամբ պատերազմեալ՝ վատակեցոյց զնոսա. որոց ոչ ևս կա-
րացեալ կալ ընդդէմ գնդակաց նոցին. ասացին՝ զի՞ է՝ զի պարապիմք
յայս գործ ի նանիր. այլ՝ տրնեսցուք զանձինս մեր ի յառումն տանն
Վրաց, զկնի որոյ՝ Շօշն մերն է՝ և մեր։ Յայս բան՝ թողեալ զայն անդ՝
ձգեցին զձեռս իւրեանց ի Վիրս, առ որոյ թագաւորն Հերակլ յուղի ար-
կեալ զդեսպանս՝ պահանջէին զմին ի յորդւոց կամ ի թոռանց՝ ի կալ առ
ինքեամբ ի պատանդս, որով հրատարակեսցի յոլորտս տիեզերաց համ-
բաւս այս մեծ, թէ և Վիրք հնազանդեցան ընկճեցմամբ իւրեանց ի
նմանէ, որք և եղեն հարկատուք նմին։ Քանզի՝ զօրութիւն բանին հրո-
վարտակի ևս էր այս, որպէս թէ՝ (ոչ զի դու եղիցիս ինձ հպատակ, այլ
զի՝ ունիցիմ զտեղի կոչիլոյ շահ)։
Բայց բարեբարոյ Հերակլ արքայն խորախոհ լինէր խելամտու-
թեամբն իւրով և ողորմեցեալ գթայր ի տառապելի ազգս քրիստոնէից և
ոչ կամէր զկորուստ այնքան հաւատացեալ հոգւոց. (այն զի՝ յատուկ
է շահեցելոյն՝ ունիլ ամ ըստ ամէ զ30 կամ զ40 զամուրի և զչափահասակ
ուստերս և զդստերս ի Տփխիսէն՝ զորս յեղաշրջեալ յաղանդ իւր պիղծ՝
զարուսն ներքնապահս և զէգսն հարճս արասցէ)։
Ուստի եւ զբացասութեան պատասխանիս՝ ապաւինելով նախ՝
յաստուած և ապա՝ յօգնութիւնն ռուսաց։ Քանզի Եկատարինէ կայսերու-
հին շնորհեալ էր Հերակլեայ արքային զ2500 զինւորս կապեալս զի-
նուք, որք յաւետ կային ի Մօզդօքի մեծաւ պատրաստութեամբ, և ակն
ունէին զալստեան համբաւոյ կողման, որք իբրև զբաղէ և զցին ժամա-
նեսցեն յանձկութիւնս նեղութեանց քրիստոնէիցս։ Բայց՝ վաղագիտե-

լով ժահրաթոյն չարին այնմիկ զայն, հնարս խորհեցաւ ըստ աղուխա-
բարոյութեան[35] իւրում այսպէս. զի՝ ցուցանելով զսէր ինչ եանարալին
Մօզդօքու առաքեաց զպարգևս ինչ դեսպանաւ, ընդ որում և զտոմս բա-
րեկամական, յորում գրեալ թէ՝ որովհետև իմ է Ասիայն ի բնուստ ան-
տի՝ պարտաւոր եմ պահանջել զհամարս ի բոլոր տիրապետողացն սահ-
մանաց։ Ուստի՝ եթէ վալին Վրաստանեայց[36] յանգէտս գոլով՝ ի նպաստ
կոչեսցէ զձեզ՝ մի ինչ աշխատ առնէք զանձինս ձեր. քանզի չեն իմ
կամք բնաւ մտանելոյ ի քաղաքն նորին, և ոչ իսկ աւերել նաև ոչ զմասն
ինչ ի սահմանաց նորին. վասնորոյ՝ միամիտ և անհոգ լերուք առ այս։
Յայսմիկ պատրողութեան բանի հաւատացոյց զնա. առ որ ո՞րքա-
նիցս և թուցանէր զհրեշտակս արքայն Վրաց թէ՝ հուպ ընդ հուպ փու-
թացարուք յօգնութիւն մեզ. զի ահա անյոյս կործնիմք ի նեղչէն մերմէ ի
յօրինացս թշնամւոյն. ցոր տայր պատասխանի թէ՝ մի երկնչիր՝ զի ոչ
կարասցէ իշխել մտանելոյ ի քաղաքդ. այլև հասից ահաւասիկ ընդ բազ-
մախումբ զօրսն իմ տերամբ. բայց՝ մնամ կրկնական հրամանի թա-
գուհւոյն մեր[37]։ Յուսացեալ արքային Հերակլեայ ի բանս յայս՝ զանց
արար զհաւաքմամբ զօրացն իւրոց ի յոգնազնդից. (որոյ ի կամիլն՝ հնար
էր ժողովիլ այրուձի արանց իբրև 50000)։ Այլ՝ շատ վարկանեալ զզին-
ւորսն ռուսաց կոչեաց միայն զարքայն բացազլխից[38]. որպէս պատի-
համարելով նմա զալուստ իւր ի յօգուտ նեղութեան քրիստոնէիցս, որ և
եկն մեծաւ ամբոխիւ, այսինքն իբրև 12000 զինավառ զօրօք, որոյ ընդ
առաջ եկեալ արքայն Հերակլ՝ հանդերձ ամենայն դատաստանապետօքն,
քաղաքապետօքն և գաւառապետօքն և այլ ամենայն մեծամեծօքն՝ մե-
ծաւ հանդիսութեամբ և հրաձգութեամբ, և այլ բազում ցնծութեամբ
եբեր ի քաղաքն։ Իսկ սոյն քաջապանծք երկու բարերարութեամբքս այ-
սոքիւք, հատուցին փոխարէնսն յարգոյապերճ փառաւորութեանցս այ-
սոցիկ՝ մի զի՝ օր ըստ օրէ փաղչելով՝ հազիվ ուրեմն մնացին 1000քն[39]
և միւս ընթերցցի առ յապայն ի զարմացումն ընթերցողաց։ Արդ դրդե-
ցեալ արքայն Հերակլ ի կուսակալացն՝ (ըստ լսելոյ լրոցն բերելոց ի
լրտեսից և ի պօղատայապահից) եւ ի քաղքէն արտաքս ի 1795 և ի
իններորդում ամսեանն օգոստոսի նոյն մնացեալ 1000օքն և 2000 հա-
ւատարիմ արամբք՝ հեծելովքն իւրովք և 11 երոպէակոստղ թնդանօզօք,
հանդերձ 300 վարչօքն և 12 կառավարչօքն. նաև 2 գլխապետօքն նոցին,
որոց միոյն՝ անունն Գաբրիէլ (ըստ որում հայկազուն) մայիօր փրիմէր[40]
և միւսն Գէորգի (ըստ որում վրացի) մայիօր սէքօնդ, չոքաւ՝ բացեալ
դրօշակօք. քրիստոսեան նշանօք, ցոր մեծաւ՝ յուսովք իբրև զերից
աւուրց զճանապարհս. և ի յելս շաւղաց թշնամւոյն իւրոյ բանակեալ՝
մնայր զալստեան նպաստին իւրոյ մուշտակին։ Եւ ի բանակետեղս
յայսմիկ օր աւուր յաճախէին լրաբերքն ի նորոգել զձայնս իւրեանց

զհպեցմանէ նեռին յանմիկ։ Իսկ՝ յետ աւուրց իբրև վեշտասանից նոր տարակոյս դէպ լինի սկսանէր անօգնական արքային մերում. և թշնամի չարին այնմիկ, յայնժամ հաշտեալ զօգնական զօրս մատուցանէր նմա։ Եւ մինչ կայր արքայն մեր յայսմիկ վարանման՝ ահա կոկորդիլոսն այն եկեալ՝ էհաս ի Գանջայ, ընդ որոյ խանին կապեալ զդաշինս՝ կնքէր և ձեռնադրել նմա հրամայէր, զի աւերեսցեն զսահմանս բոլոր տանն Վրաց, և բարձցեն ամենևիմբ զթագաւորութիւն նորին. իսկ խանն այն՝ Ջաւաթ կնքեալ՝ յայտնէր նաև զհամախոհութիւն մէլիք Մէճնունի ընդ պայմանադրութիւն խորհրդեանս այսմիկ. զոր կոչեալ յայն ատեան՝ հրամայէին կնքել, որ և կնքեաց յօժար կամաւ և հաստատեաց։ Քանզի ընդ աւուրսն ընդ այնոսիկ երկոքեանն եւ անհաշտ թշնամիք էին Հերակլ արքային։ Սոքին այսուհաստատութեամբ բանի դաշնադրութեանս զօրաժողով եղեն անտանելի զօրութեամբ իւրեանց՝ և հրամայէին սպարապետացն և զօրապետացն իւրեանց գունդ կազմել, և գլխաւորապէս կարգել, և յայնց՝ զոմանս յայսկոյս և զոմանս յայնկոյս առաքել յօգնակի զօրօք, և ի ժամադիր պահուն՝ համայնք ի մի վայր ժողովիլ ի գտանիլ ամենայն պատրաստութեամբ յայնմ տեղ՝ ուր մեծն իցէ բանակեալ զայսոսիկ այսմ տարազու դասակարգելով ծալել զխորանս, բառնալ զբեռինս և յուղի անկանիլ հրամայէին։ Ընդ չուելն սոցուն ինքն եւ յառնել կամեցեալ՝ բառնիլ մեծի բանակին հրամայէր, որք ի քթթելական բարձեալ՝ ելին ի չուիղ՝ հնչմամբ փողոց և ձայնիւ տաւիղի և գային յայսկոյս։

Արդ՝ մինչ հասանէր համբաւ գալստեանս այսմիկ յունկն Հերակլեայ անպաշտպանին՝ և մերձենալն առ կոպար իւր՝ չու առեալ յետս դառնալ սկսանէր բանակաւ իւրով, և գալով գայր մինչև ցեզերս այգեաց քաղաքին իւրոյ, յորում բանակիւր անսփոփ տարակուսիւ (և հետավորութիւն բանակատեղս ի քաղաքէն հազիւ հազ լինի կիսոյ փարսախի, յորմէ առ որ դիմօղք ընդ 12 բոպէս հասանին), իսկ՝ տեսանելով զօրացն զդէմս արքային վշտալիս և հետաքրքրելով ի յուղէկալաց և ի գիշերապահիցն զիսկութիւն բազմութեան զօրաց թշնամւոյն և զյոյժ մերձաւորութիւն նոցին. (զի եկեալ և բանակեալ էր ի դաշտին Սօղանլուխ անուանեալ գեղջն, նաև՝ իբրև ստուգեցին ի նոյնոց զիրաւի ապահնարութիւն յաղթելոյ իւրեանց բարբարոս դիմամարտիցն՝ իսպառ ցրուեցան և անհետ եղեն)։ Յայնմիկ վայրի էր արդարև ողբալի՝ ծերունազարդ քաջ Հերակլ արքայն մեր. զի գտաւ ի յոյժ տագնապի. (ըստ որում ունէր առաջի աչաց իւրոց զյայտնի կորուստ թագաւորութեան իւրում և զամօթս նախատանաց զանյաղթ անուանէն ընդ այլ թագաւորութիւնս նաև զգերութիւնս անհամար քրիստոնէից)։ Ապաքէն ամբարհաւաճ չէզոքն այն հանէր զցասմնական հրամանս յ9-ն երրորդում ամսեանն սեպտեմբերի

ամենայն ենթարկեալ խանիցն, որք էին ի բանակի իւրում՝ ընդ առաւօտն յառաջ խաղաղացուցանէր զմին ընտրեալ սպարապետացն 4000 հեծելազօրք և կարճել զօրութիւնս մարտադրից աշխատակրութեամբ պատերազմին. որպէս զի յառաջակայն դիւրաւ յաղթեսցեն մեզ։ Զայս լուեալ բազմաժողով քաղաքաբնակացն զձայն բարձին հառաչանաց, յողբս ի սուգս շարժեալ աւաղէին զկորուստ անձանց իւրեանց, ի բաց լքեալ զինչ և զապարանս, զորս ունէին. բազմացն նաև յուսահատեալ սայլիւք կամ ձիովք արտաքս եղեալ ի քաղաքէն ընդ կրնկակողմն դուռն ի հիւսիսն կոյս բացելոյն, փախչէին ի լեռնակողմն Կովկասու։ Եւ չունողքն կարեաց. սայլի կամ ձիոյ՝ հետիոտս գնային, իսկ՝ որ ոչն ունէր զկար ընթանալոյ և ոչ գտանէր զգրաստս, կամ որ ունէր կար՝ և խորհէր զդաժանութիւն ճանապարհին, կամ զսովուն և կամ զաւազակացն, կայր անյոյս և թափառ մնալով լինելիութեան իւրեանց՝ սրոյ ճարակ։ Եւ իբրև լուսանալն օրն 10-երորդ նոյն ամսոյն գայր գունդն հեծելոց. և հասանէր յետին ծայրն եզերացն այգեաց, և աներկիւղ համարձակութեամբ տայր պատերազմ ընդ թնդանօթիցն մերոց զժամս իբրև չորիս. և ի յաղթահարիլն իւրեանց ոչ կարելով զդէմ ունիլ ցնցղացիր գնդակացն՝ ցօղելոցն ի յանգլխավարժ թնդանօթիցն մերոյ. ընկրկեալ ի թիկունս կոյս՝ յուսահատ ի փախուստ դառնային, որոց հասեալ ի բանակն Լևիթանի՝ զարտունջ մեծ սերմանէին քսու ի լսելիս հզօրացն, որք զահի հարեալ՝ խորհուրդս չար խորհէին զչեզօք եղեռնայնոյն իւրեանց դարանի դաւաճանութեան որպէս թէ՝ միւս եւ ի ճակատամարտի ընդ սայթագիլն իւրեանց առ յաղթիլ՝ շեշտիւ վաղագարձութեան ընդ կրունկն կոյս, ի նախանձ վրէժխնդրութեան արթնացեալ զփոխարէնն հատուցանել արեանց մարտակցացն արագ արագ յոչ գոյութիւն փոխարկելով զբէհէզպէբուղն զայն։ Մինչ այս, մինչ այն լայնածաւալն բանակ յերկճիղս անջրպետիւր յայլախոհ և ի տարաբան խորհրդոցս ատի, որով և հետևիւր նոյն հետայն սիմփաթեայն և անթիփաթեայն երկաքանչիւր կողմանս զրուցատրողաց։ Եւ յայն ինչ հասանէր գուժս բօթալուր յանդգնական և դիմահար բանից յականջս Բելիարայ, որում ելով ի սկզբան անդ լափիընթռսամիտ և խորագէտ՝ մտանէր առ ժամայն ի խուզս տարտարոսախոր խորհրդոց և խռկայր մեծաւ խելամտութեամբ զելս հնարից գտանել. և թելադրութեամբ եղբօր իւրում բելիարայ չար թուէր ինքեան լռելն, քան բարբանջել. վասնորոյ զարթուցեալ որպէս և քնոյ, և սթափեալ որպէս յարբշռութենէ՝ ելեալ արտաքս ի խորանէն, իբրև ի մէջ գիշերի ի 5-երորդ ժամու ձայնէր ծառայիցն՝ կոչել զմեծամեծսն իւր փութանակի, որոց պշուցեալ հապճէպ իմն ընթացիւք վաղաներկայ լինէին ձեռնամած հանդիպմամբ և սրտասարսուռ երկիւղածութեամբ։ Որում ոչ շատացեալ այնոքիմբք՝ հրամայէր ահարկու մեծութեամբ իւրով ըն-

կենուլ զՀրացանն ի նշան զարթչելոյ Համայն զօրապետաց և Համօրէն
զօրաց և կալ առաջի աՀեղագոյն ատենին իւրոյ, և աՀա մինչև անցեալ
քառորդի միոյ միաՀամուռ գտան արթունս. և պատրաստս յանդիման
ներկայութեան վրանին մեծի։ Մինչ տեսանէր զարշ լեգէօնն այն զդէգս
գունդագունդ զօրաց իւրոց՝ բանայր զսէրաստէսեան և զթինալի բերանն
և շաղփաղփէր շաղակրատական և ամբոխական բանիւք՝ զառաջինն
գովաբանելով և պարծանք մեծ Հաշուելով ինքեանց զքաջամարտիկ
և զերագաշարժ մենամարտութիւնս նոցին և ապա փոխեալ զսկիզբն
պարբերութեան գովասանին՝ ի վերայ վայելչութեան յոգնազանձ քա-
ղաքիս բանաստեղծական ատենաբանութեամբ բրբռէր և ի սքանչե-
լիս վերամբառնայր զընչաւէտութիւնս և զգեղեցկադիմութիւնս կանանց,
նաև բազմաժողովութիւնս քաղաքին և զանգին ականս պատուականս և
զմարգարիտս, այլ և զոսկիս և զարծաթս զանձուցն արքայիս մեր և եւ
շողոքորթէր և քաջալերէր զառՀասարակ զօրսն, յորդորելով աներկիւղ
դիմել ի մարտ պատերազմին թշնամւոյ, և շնորՀէր մեծաւ փառօք զա-
մենայն աւարն քաղաքին ինքեանց, նոյնգունակ և զգերեալսն ամենայն
ըստ կամս առնել խոստանայր, եւ և օրինաց իւրեանց նախանձայոյզ լի-
նելոյ պարտաւորս առնէր զիւրաքանչիւր անձինս, յորոց զմաՀացօղսն
յայսմիկ Հանդիսի ընդ մարտիրոսսն վերադասէր, և յաղթողսն արժա-
նիս յաղթանակի և բրաբիոնի Համարէր, զոր և յօժարակամ սրտիւ խոս-
տանայր յամենայն զօրութենէ և երդնոյր ի նոյն, և այլ սոյնաՀանգէտ
յուսադրութեամբ զամենայն զզօրսն ի մարտ պատերազմի խրախուսէր։
Եւ մինչդեռ ունէր ցաւարտ յանգել զբանն՝ անցեալ բազում ժամուց խա-
ւար գիշերոյն զմթութիւն իւր յինքն ամփոփէր և յարևելեան կիսագնդէ
Հորիզոնին ճաճանց լուսոյ նշմարիլ սկսանէր, յորում առաւօտանայր 11
սեպտեմբերի, մինչ ետես նոյնն զղամբարաղօտ նշոյլ ծագման առաւօ-
տու եղերաց զբանն՝ թէ՝ ա՞ղէ տեսից զօրութիւն ձեր վա՜շ վա՜շ փութա-
ցարուք և մի երկնչիք։ Զայս ամենայն լուեալ Համասփիւռ գնդիցն՝ այն-
պիսի զուարճ դիմօք դարձան միաՀաղոյն Համաբնութեամբ զորս տե-
սողացն միտք մակաբերէին դիմել, ոչ ի մարտ՝ այլ ի Հարսանիս, որոց
երթեալ ի տեղիս՝ ոմանք զմուճակսն աղխէին, ոմանք զզանկապանսն
կապէին, ոմանք զզրաՀսն զգենուին, ոմանք զբազպանսն ագուցէին,
ոմանք զբազուկսն վաՀանաւորէին, ոմանք զատրճանակսն վառօդալիս
առնէին, ոմանք զարտախուրակսն ի գլուխս զգենուին, և այլք զնիզակսն
ի թաղիս փորձէին, ոմանք զՀրացանսն լնուին, և այլք զաշտէսն կապէին,
ոմանք զգեղարդս ի ձեռս առնուին, ոմանք զերկսայրիսն եսանէին, և
այլ զսլաքսն փշածայրս սրէին, ոմանք զթուրսն, ի պատեանս պատ-
րաստաշարժս առնէին, ոմանք զաղեղունսն լարէին, և այլք զնետս ի
կապարճս պատրաստէին. ոմանք զՀրաղէնսն վառէին և այլք զերիվարսն

պալարակապս առնէին, ոմանք զմաշկս ձիոց պնտէին, և ամենեքեանքն
առՀասարակ ամենեիմբ պատրաստ լինէին. անուաշրջան և ճախրա-
պտոյտ վառիլ և փայփայիլ՝ Համգոյն կայծակնացայտ փայլատականց
երևիլ աչաց ողբալի քրիստոնէիցս, որք ոչ եւ կարացեալ ի զսպումն
ժուժել՝ խաղային, չունէին, յառաջ գային զիրեարս քաջալերելով, փրե-
բաց յոյս տալով, զերիվարս յարշաւս սրընթացութեան արկանելով, և
այրուձի արանց զգանդաւանդս սնապարծ ձիոց իւրեանց բարեգոյն իմն
սանձելով, և վառելոց զգայլախազս Հրազինուց Հանդերձ պողպատիքն
ի վերանմէտ Հրակիտին ուղղելով, և պատրկակայծ ատրաճանաւորաց
զծայրսն այնց լուցանելով, և ոմանք զայրեցելագործ զտիզաց զծայրսն
եսանելով, մինչև եկեալ Հասին ի մեկուսութիւն թնդանօթարանին մե-
րում իբրև նետաձգի միոյ։ Իսկ՝ քարբն այն չարաժաՀր եկեալ ելանէր
ի գագաթ բարձրամբերձ լերին իմիք և Հրամայէր կառուցանել զվրանն,
յորում բազմիւր ի նկատել զվախճանն Հանդիսիս։ Յայսմ միջոցի՝ պա-
տեալ գոլով օդոյն ամպրոպիւք և մշշիւք՝ ի մրթնաշրթի աղօտս էին
երկաքանչիւր կողմունք մենամարտից, վասն որոյ՝ յանդէտս ընկենուին,
այլև երկուցունց կողմանցն եւ զօրք ի Հակադարձ կարծիս էին. զի նո-
քին զմերոյսն կարծէին բազմամբոխ. և մեք զնոցայն սակաւազօր։ Եւ
ի միջաւուր եղանակին Հրնչումն սիգաճեմ Հողմոյն բորէասի աքսորէր
զմառախուղ ամպոյն, և ցուցանէր արևն զպայծառութիւն ճառագայթի
իւրոյ։ Յայնժամ յայտ յանդիման տեսանիւր անսպառ բազմութիւն գըն-
դից նոցին, որոց խառնիճաղանճութիւնն զլերինս և զդաշտավայրս Հան-
գոյն անտառախիտ ցուցանէին. և զօրքն մեր առ դուզնաքէութեան սակի
տային զօրաց թշնամւոյն զգզուութիւն զարմացական ծիծաղի, քանզի
յոյժ խուռն և գրեթէ բոլորք քաղաքացի երկչոտ և մասն ինչ եւ պան-
դուխտք էին։ Յայնժամ նախաշարն այն դիտէր Հեռացոյց դիտակաւ
զդաշտն Վերայի, որ իբրև ձիւն երևիւր ի բազմութենէ սպիտակ սաւա-
նաւոր կանանց փախուցելոց, զորոց լուր աւետեաց մատուցանէր Հա-
մայն զօրաց իւրոց, թէ՝ ո՞վ անմիտ որսորդք զմէ՞ լքանէք անՀետիլ
որսոց ձերոց եղանց։ Զայս լուեալ զօրապետաց և գլխապետաց գուն-
գործեալ և քարոզ կարդացեալ իբրև զմունետիկ, և զամենայն զօրսն
կատաղեցուցեալ դժնէացուցանէին, որք զձգութիւնս նետիցն և գնդա-
կաց յաճախէին, Հեծելոց զնիզակս և ոմանց զսլաքս ի ձեռս առեալ Հան-
դէպ զանմարմին զաշտէսն փայլս փայլփայլս ցուցանէին և Հուպ ընդ
Հուպ յառաջ խաղացեալ ոմանց ընդ զօրս մեր խառնակէին։

Յայնժամ էր տեսանել աչաց՝ և լսել ականջաց. զի շառաչիւնք թրոց և
վաՀանաց ընդ իրերարս բաղխեցելոց զլերինս և զբլուրս Հնչեցուցանէին.
և ձայթմունք սուսերաց միմեանց ընդ Հարելոց զամենեսին զարՀուրեցու-
ցանէին. թնդիւնք թնդանօթից անընդմէջ շարունակաձգութեանց, յորոց և

ծօխքն վառօդից զօդս և զփօշիս իրերօք շփոթախառնեալ պաչս անտես գործէին, և բոմբիւք լարեալ աղեղանց յորոց և նետաթռութեանցն սրաձայն սուլմունք զլսելիս խլացուցանէին. այլ և խխնջմունք երիվարաց, որոտք ձայնից ամենայն սպառազինաց, նաև շշնչմունք անտխակիրթ տիգախաղութեանց ևս և այլ մահառիթ և ահարեկիչ ձայնք համահամուռ խմբից զվերջն աստեացս մերձեցեալ երևոցէին: Զայս տեսեալ յետակայ սպարապետացն, զմնացեալ համօրէն զօրսն ևս ի նպաստ մարտակցացն վաղվաղակի հասուցանէին, որոց համայնքն լինէին առաւել քան զ80000ս:

Մինչ ետես անօգնական արքայն մեր դարձոյց զսանձն ձիոյ ի Թիկունս կոյս և փախչիլ սկսաւ՝ հատեալ յուսով, ընդ որում և ամենայն զօրքն իւրչև ևս ժամանեալ ի դրունս բաղանեաց՝ պնտէին զկնի նորին զարաթռիչ ձիսն իւրեանց Թշնամեացն գունդք յըմբռնել զնա կենդանւոյն, զոր տեսեալ ուրումըն ամրոցապահի յատուկ հաւատարմի արքային[41] յոյժ երագապէս ընկէց ի համբարտակէ անտի զերկուս կամ զերիս Թնդանօթս ի վերայ պնտողացն, որք յետս յետս ընկրկեալ առ երկիւղի զկայ առին սակաւիկ ինչ, յորոց փրկեցաւ խղճալի ծեր Թագաւորն մեր, իսկ՝ որք ընդ Թնդանօթիցն մարտնչէին ճակատ առ ճակատ անհնութեամբ զօրաց. նախ յոյժ տագպէին ի ռմփոց, և ապա սրտմտմեալ և զայրացեալ գազանաբար և վայրենաբար վաղս առեալ կական բարձեալ մեծաւ աղաղակաւ գոռալով, խրոխտալով, Թնդալով, որոտալով, հնչելով, մռնչելով, փշալով, դղրդալով հանդէտ առիւծոց առ որսորդս կորեանց իւրեանց արագելով, ալ՜լահ ալ՜լահ գոչելով արշաւէին ի վերայ Թնդանօթարանին մեր, յորոց Թէպէտև անձրևաստրաս տեղային գնդակքն յընդ անգլէակիրթ ձգողացն, սակայն տարապարհակ կրէին զաշխատանս, զի մատն աստուծոյ էր մխեալ ի յայս հանդէս տրտմալի:

Եւ եղև զի տեսին զպատուհասս զայս, այսինքն զանհուն բազմութիւն խժդժագոյն և վայրենի մահացուցչաց, փարիչքն Թնդանօթից մերոց ևս խոյս տային, ուր մնայր միայն հայկազուն փրիմէր մայիօր Գաբրիելն միով վարչաւ, որ ցանէր զհուրն անխոնջ աշխատանօք ի վերայ Թշնամեացն խաչին Քրիստոսի ի փառս նորուն և ի սէր արքային իւրոյ. նոյնն անդրէն նահատակեալ՝ գնայր զանանց կենացն զշաւիղ ընկալնուլ զերկրպային բրաբիոն: Սմին նման մարտիրոսանայր և վրացի սէքօնդ մայիօրն ժամու միով յառաջ, քան զսա: Եւ մինչև զլինէր այս անարգել վստահութեամբ դիմէին ի քաղաքն առ հասարակ, յոր մտեալ անտանելաբար և տխեռանման փչէին զԹունաւոր շունչս իւրեանց ի վերայ խաչապաշտիցս, զի սկսան յաւար հարկանել զքաղաքն բարեկի և լնուլ զունայն անձինս իւրեանց ակամբք պատուականօք և մարգարտօք, ոսկեղինօք և արծաթեղինօք, զանազան բեհեզիւք և կերպասեալ լիպասիւք՝ և մետաքսեալ հանդերձիւք: Եւ ի կուսակրօն վարդապետացն զոմանս սրախողխող առնէին, զոմանս իբրև զգառն զենուին և զոմանս գերեալ վաճառէին: Նոյնպէս և ի քահանայից զո-

մանս օծմամբ նաւԹի ի հուր կիզէին, զոմանս սպանանէին, զոմանս հարկանէին, ի ցուցանել զանօԹս եկեղեցեաց և զոմանս վարէին ի գերութիւն: Այլև՝ յաշխարհականաց զոմանս գլխատեալ տանէին զնոյն գլուխսն առ շարաճճիկն և ընկալնուին զերիս Թումանս իւրաքանչիւր գլխոյ գին, որովք կառուցանէր ամենաչարն այն զմզկիԹս, զորս տեսանելով հրճուէր Թէ՝ առի զվրէժ Թշնամւոյն իմ, զոմանս խարէին պէս պէս չարչարանօք և շանԹացեալ երկաԹիւք և այլ տանջանարանօք և զոմանս տանէին ի գերութիւն:

Նման սոցին առնէին և զծերուհի կանայսն: Իսկ՝ զպատանի և զերիտասարդ տղայս և զաղջկունս անվնաս տանէին ի պիղծ տափանս իւրեանց և ի Թանկագին վաճառս: Այլ և զազանդակիցսն իւրեանց զբերդաբնակ մահմադականսն առաւել, քան զխաչապաշտս չարչարէին. և ապա՝ գերէին. զորոց աղօԹարանն այրեալ տապալէին: Զարքունական պալատ, նախ՝ ունայնս ի գանձուց առնէին և ապա հրով այրէին: Որոց ոչ բաւականացեալ այսոքիւ՝ սկսան ձեռնամուխ լինիլ սուրբ վանորէից և հոյակապ գմբեԹակառոյց և սագաշէն եկեղեցեացն, զորս զառաջինն ըստ ամենայնի մերկացուցեալ յեպիսկոպոսական ոսկեհուռն և ականակապ Թագից, եմիփոռնից և ի քահանայական ոսկիաձոյլ և ասղանի սաղաւարտաց, շուրջառաց և զգեստուց, և ամենայն ոսկեզօծ խաչից և աւետարանաց. և յարծաԹեայ բուրվառից, և ի քշոցից և յամենայն անօԹից, և ապա՝ բորբոքմամբ հրոյ այրէին, զորոց մասունս այրէին. զտէրունական և զտիրամօր պատկերսն նախ մեծաւ՝ անարգանօք ոտնակոխս առնէին և ապա այրէին. զսուրբ խորհուրդն ցրուէին: Ահա՝ բարբարոսքն զայս ամենայն անզգամական յանդգնութիւնս արարին՝ բայց ամենազօր և երկայնամիտն աստուած երբեք ոչ եցոյց զսքանչելի զօրութիւն իւր, և ոչ ի վերայ միոյն ի հեԹանոսացն ի պատիժ մեղանաց մերոց. այլ՝ Թոյլ տայր առնել ըստ կամս, որպէս զի գուցէ Թէ ի դարձի եկեալ ապաշխարեսցուք, սակայն՝ ի նոյնութենէ մերմէ ոչ մի երբեք յետս կասեցաք:

Ի հաշիւս Թուագրութեան մուծեալ զամենայն գերեալսն զանուանէ իւրաքանչիւր անձին գտնի քան 50000ս:

Ապաքէն՝ ողորմելի փախստականքն ի կողմն Կովկաս լերին զինչ ոչ կրէին զչարչարանս, քանզի՝ որք մինչդեռ ի շաւիղ էին, հասին խուժադուժքն բացագլխից, որք նորոգ խոյս տուեալ էին առ զճակատիլ և փոխանակ օգնական լինելոյն իւրեանց տրտմազդեաց և արտասուահեղ աչօք փախուցելոցն, յափշտակեցին զամենայն ինչս նոցին, զոմանս ևս մերկացուցեալ՝ գնացին զընդարձակ ճանապարհն իւրեանց. զոր երԹիցեն և մի դարձցին: Ահա այս երկրորդ հատուցումն փոխարինի փառաւորեցմանց իւրեանց յարքայէն մերմէ: Երկրորդ՝ սովն առնէր զնոսա յոյժ տառապեալս: Երրորդ՝ հիւանդութիւնն տայր ամենից զմեծ վիշտս ըստ որում փափկասնունդ ոչ երբէք լուեալ կամ տեսեալ զսոյն նեղութիւն:

Զի՞րդ թուի ընթերցողիդ (ով գորովագութ բարեպաշտ) այս վէպ. ուստի՝ երկիր երկիր յարարչէն երկնի և երկրի, զի նոյնն էր որ արար զայն ստուրան անձկութեան, և նոյնն է, որ առնէ այժմ հանգստեան. և նոյն եղիցի, որ արասցէ, որպէ՞ս և իցէ զմինն յերկոցունց։ Եւ արդ՝ մինչ արարան այս ամենայն անօրէնութիւնք ի չարաբարոյ հեթանոսացն յայնոցիկ, ամենավատթարն այն ոչ կամեցաւ մնալ ի սահմանս յայսոսիկ աւելի, քան զՁ աւուրս թէպէտ, որպէս և գրեցաք, կամք նորին ոչ միայն էր ապականել զքաղաքս կամ այրել, այլ զբոլոր Վրաստունն, զԿախէթն, զԹիալէթն և զամենայն շէնսն լերինն Կովկասու. և ապա՝ տիրել ամենայն սահմանացն ձերբակալ առնելով զբոլոր բնակիչսն։ Սակայն յերկիւղն, զոր ունէր ի սրտի իւրում ի տիեզերակալ և յօգնստափառ Եկատերինէ կայսրուհւոյն, ոչ եթող, զի բարեպէս գիտէր զապաւինիլն քաղաքին մեր ընդ հովանեաւ պաշտպանութեան նորուն ես բարձրագոյն և ահարկու թագաւորութեան. մանաւանդ, որպէս և գրեցաք, զի դաւաճանեալ էր զնորուն փառահեղ ինքնակալութեանն զկողմնակալն, որ ի Մոզդոք[42]. զայսոսիկ խորհելով հրդեհաց զամենայն քաղաքն հանդերձ կամրջովքն և խոյս ետ վաղվաղակի։ Եւ եղև զի իբրև լուաւ նոյն կողմնակալն զփորձութիւնս զայս՝ փութացոյց զզօրսն իւր շեշտակի. և գրեթէ հնար իսկ էր հասանիլ զկնի եղեռնայնոյն այնմիկ՝ եթէ չիցէր հորդելի և անհարթ ճանապարհն Կովկասու, որոց ի գալ ի ժամանելն ի Դուշէթ՝ մնացեալ ողորմելեացս ահարեկ և տրտում սիրտք փոխարկեցան ի ցնծութիւն։ Այլև նախաշարն այն անզր անցեալ զսահմանաւ արքային մեր՝ մնայր ստուգութեան կամ անստուգութեան գալստեանն նոցին, զի եթէ չիցեր հաստատ՝ խոստացեալ էր գալ վերստին յետ հասարակածի գարնանամտին։

Եւ իբրև ստուգեաց զիսկական գալուստն, նաև զյառնելն դարձեալ անհուն զօրաց նոցին. նորուն հանդիսավեհ և փառահեղ արքայուհւոյն սրտմտութեամբն և զհասսն ցեզր սահմանին պարսկացն, այլև զանց նոցա զգրամբն Ալանաց[43]. ես և զբարեյաղթութիւնսն ի պատերազմի առ մուտսն ընդ այն և զանչափ կոտորածսն զօրաց իւրեանց, անյոյս դարձաւ ի փախուստ ամենայն զօրացն իւրովք։ Եւ այսպէս փրկեալ ապրեցաք մնացեալ ողորմելի բնակիչք երկրիս, որք յաւերժական գոհունակութեամբ օրհնեմք միշտ և գովեմք անդադար, նախ զամենաբուն բարին զաստուած, և ապա զի նորուն ամենազօրութենէն զօրացեալ զսկզբնապատրաստ և զնախընտիրն իւր (յօգնականութիւն անտէր և խղճալի և ցրուեալ ազգիս հայոց) զգերերջանիկ և զես բարձրագոյն կայսերուհին բոլոր հիւսիսայնոց զԵկատարինէ Ալէքսիովն, որում շնորհեաց նոյն բարեխնամն Աստուած զհզոր զօրութիւն ընդդէմ համայն

թշնամեաց իւրոց. նաև զերկարագոյն և զմշտայանդորր կեանս հանդերձ ամենայն արքայազուն սերնդօքն իւրովք, ամէն։

Գրեցաք ի վերայ թէ՝ զսրբոց մասունսն այրէին. բայց զգերահռչակ և զամենահրաշ Սանահնու սուրբ Աստուածածնի վանիցն (որ կառուցեալն է ի սեռէն Բագրատունեացն ի տիեզերակալ յողորմած Աշոտ թագաւորէն[44] և Անուշ թագուհւոյն[45]) (և վանիցս սրբոյ տաճարին են սեղանք 40 ըստ խորհրդոյն քառասնիցն. և ես ի հարկաւորիլն զի տէր ննջեալ հոգւոց մատուցանել զպատարագս, ի միում աւուր կատարել զ40-ն ես յիւրաքանչիւր բեմի), (որոյ գոլով վերադիտօղն և խնամատարն, նաև կամեցօղն պայծառափայլութեան և շինութեան առաջնորդն բոլոր հիւսիսաբնակ ազգին հայոց առաքելաշաւիղ և կայսերապսակ սրբազան Յովսեփ Արքեպիսկոպոսն) զսրբոց մասունսն և զի թագաւորէն Աշոտայ և յայլ ամենայն արքայից և հայրապետաց շնորհեալ կոպարսն զերծոյց նորուն բարձր սրբազնութեանն եղբօր որդի իշխանազուն և պայծառ իշխան քնեազ Սօլոմոնն երկայնաբազուկ Արղութեանց։

Եւ նարգենիս առաջնորդն նոյն սրբոյ վանիցն է ի նորուն բարձր սրբազնութենէ կարգեալ՝ որում և յատուկ հաւատարիմ պաշտօնեայ ընիկ սանահնեցի պարկեշտասուն և խոհեմամիտ Առաքել վարդապետն յազգէն Մուրադեան, որ փրկեաց զգերեալ զսքանչելագործ զաջն երիցս երանեալ սրբազանասուրբ հայրապետի Յօհաննու Օձնեցւոյ[46]։

Միանգամայն զերծաւ և Մողնւոյ սուրբ Գէորգեայ հրաշալի մասն, որոյ սակի մահու չափ չարչարեցաւ աւագագոյն քահանայն նոյն եկեղեցւոյ բարձրապատիւ և խոհեմամիտ տեր Գրիգորն՝ Տեր-Շմաւոնեան, որ և գրեթէ կենդանի նահատակ իսկ եղև ի փառս աստուծոյ, և ի պատիւ սրբոյն Գէորգեայ, որ լիցի միջնորդ առ աստուած, զսոյն հաւատարիմ ծառայէն գրել զանունն ի դպրութեան կենաց, ամէն։

Ահ անքննին խորոցն էին և նշանաց դատաստանին,
Զոր ցուցանէ մարդկան ազգին, զի երկուցեալ յինքն դարձցին։
Բիւր աւաղ մարդկան սեռին, որք զայսցանէ միշտ անմտին,
Եւ ի նոյնս յամառելով, տան զանձինս յար գեհեննին։
Գոն բացարձակ տիպքն նորին, որք աչաց մերոց երևին,
Տեսէք զտագնապ Տփխղին, և անձանցն որ բնակին։
Դասքն վեհից՝ որք փայլէին յառաջնորդացն հանդիսին,
Վարդապետաց կուսակրօնից, որք զԱրարիչն փառաւորէին։
Եպիսկոպոսունք մեր ազգին 'ւ աւագերէցքն մաքրածին,
Եւ քահանայքն առ հասարակ, որ յեկեղեցիս ցնծային։
Զի՞րդ ոչ լաս ազգ հայկազին, որ նշմարես այժմ զնոսին,
Որոց ատեանքն ահագին, լուռ և ամայի գտանին։

Է տառապեալ ցեղ մերային, համայն սերունդք Գրիգորին,
Ափսոս ափսոս հազար ափսոս, չարչարանաց Լուսաւորչին։
Ընդ է՞ր լռէք քարոզք բանին, սարկաւագունք մեծ պաշտօնին,
Այլ և դպիրք քաղցրանուագք, որք երգէիք զմեղեդին։
Թէ զկուսանս անապատին, և զկարգ պարկեշտութեանց նոցին,
Ի միտ բերեալ նուրբ քննիցեմք արտասուք մեր ոչ ցամաքին։
Ժամանակ է յօրինելոյ, զերգս ի յերգել ձայնիւ լալոյ,
Եւ ողբս ըստ արժանւոյն առցուք, ևս քան զևս արտասուելոյ։
Ի յարքայից նայիմք քև փրկելոյ, ի սոյն վշտացս ազատիլոյ,
Բայց՝ մինչ դու ևս մեզ բարկացիս, մնամք անյոյս ի բերկրելոյ։
Լոյսն մինչ էր ի ծագելոյ, արեգականդ ըղձալոյ,
Համայք շուրջ պատէին զքև, առ ի բարեպէս ջեռնելոյ։
Խորհրդատուքդ գովելոյ, արժանի իսկ բարձրանալոյ,
Դեմ յանդիման քոյին փառաց, նիշ իբրև ի ջինջ հայելոյ։
Ծարաւի են ի խնդրելոյ, այնքան անմեղ արեանց հեղելոյ,
Զբոլոր ժողովրդոյդ ասեմ, որոց չեք յոյս ծիծաղելոյ։
Կարգեա զորդիդ ճակատելոյ, զԳէորգն[47] առ յաղթելոյ,
Անհուն գերացն կորուսելոց, զվրէժն ընկալնելոյ։
Հեղուն արիւնք անթուելոյ, մեծաց փոքունց ողորմելոյ
Կացո զթոռնդ արթուն Դաւիթ զԳողիադն սատակելոյ
Զաղկեցան ծառայք օծելոյ, Քրիստոսի մարդացելոյ,
Զքահանայից դասուցն ասեմ, որք արժանի են պատուելոյ։
Ղամբարն լուսաւորելոյ, մեր քաղաքիս փափաքելոյ,
Այսօր շիջեալ երևի մեզ, և անկարծ լացանելոյ։

Ճանապարհք քո Տէրամբ բացցին առհաս ոտք քո արագեսցին,
Թշնամեաց քոց հաստ պարանոցք, ընդ սուր սուսերաւ քով անկցին։
Մենամարտիկք քո արթնասցին, զօրութեամբ արարչին լցցին,
Որք մերթ խոյս տալովքն մեղան, այժմ յաղթութեամբ քաւեսցին։
Յարո զորդիդ ամբարձ ի ձին, թռո որպէս վաղահաս ցին,
Կալցէ ձեռամբ զաշխարհ յոլով, ըստ Աղեքսանդր անուանակցին։
Նա զսպարապետդ բարեծին, որոյ յաղթք յաշխարհ տարածին,
ԶԴաւիթ[48] փեսայէն քո ոգեմ, յորմէ նեղիչք մեր սարսիցին։
Շնորհեա որդւոյդ արքայածին, Ալմասին կալ ընդդեմ նոցին,
Հաստ բազկաւ և բացաւ թրով, յորմէ ահաբեկ լինիցին։
Ո՞ւր է Մէլիքդ խորհրդածին, զոր բոլորք այժմ խնդրեցին,
Թէ եթէ նա իցէ կենդան, դժուարինք ի դիւրին փոխեցին։
Զու առ զփոխարէն դարձին, ի հատուցումն նոցա նոցին,
Որք զո՞յր ծնունդլինիլ իւրեանց, ի նոյն բոպէի մոռացին։

Բեկան մերթ անգութ սիրտք նոցին, ի ձայնէն յոյժ հռչակածին,
Որ էր թնդանօթարան քո, զորոյ գլխապետսն բարձին։
Զահիւ որոնեա զնոսին, զի կարևոր են քում անձին,
Ունիմ բանիս մեծ ապացոյց, զի սէր քո ընդ սուր անցին։

Ուռադաց տերն արթնացաւ և վեհափառն մեծացաւ,
Թագուհին մեզ ողորմեցաւ, տրտմեալ սիրտ մեր ուրախացաւ։
Սէր կայսրուհւոյն բազմացաւ, գթութիւնն՝ առատացաւ։
Որում տացէ Տէր զկեանս, զի գլուխք մեր կացցեն անցաւ։
Վիշապին սիրտ յոյժ ճմլեցաւ, յահէ նորուն յետս դարձաւ,
Յառնօղն ի կորուստ բոլորից ի փրկութիւն իւր փութացաւ։
Տէրն թէպէտ մերթ զայրացաւ, որոյ զութն բնաւ բարձաւ,
Այժմ լուեալ հառաչանացս, յողորմութիւն մեծ շարժեցաւ։
Բախալի լուր տարածեցաւ, բան բախճական ասացաւ,
Գալուստ չարաճճկին այնմիկ, այսօր ի փախուստ փոխեցաւ։
Ցնցուղ արփւոյն մեզ ծագեցաւ, տրտմութիւն մեր փարատեցաւ,
Զի աստղ յանուն տուտ վիշապին, ըստ կամաց մեր խաւարեցաւ։
Հիւանդութիւն մեր ողջացաւ, վիրաւոր սիրտ մեր բուժեցաւ,
Զի քաջն Հերակլ բնութեամբն արթուն ևս քան զևս բարձրացաւ։
Փափագողացս իղձ լցաւ, Աստուած մեր փառաւորեցաւ,
Զոր դարձեալ միշտ փառատեսցուք, զի թարշամեալ վարդ
մեր բացաւ։

Քոյով միմիայն զօրացաւ, հզօր զօրութեամբ վառեցաւ,
Տէր Աստուած ծառայ քո արքայ, ի մեծութիւն քո յուսացաւ։
Սեռակնաձև յաղթօղ ստոյգ, դարձ մեր այդ առ քեզ արտասցուք,
Զլոյս մեր ի քեզ ելեալն Յիսուս, յամենայն զօրութենէ տացուք։
Եկայք տեարք իմ ձեռս համբարձցուք, առ նոյն խաչեալն
գոչեսցուք։

Զերանեալ Հայրապետէն, զխաղաղ կեանս հայցեսցուք։
Բամեալքս միշտ աղաչեսցուք, զէն սփոփիչ յուսով կալցուք,
Զսրբազնասուրբ վեհապետն, մխիթարել միշտ խնդրեսցուք։
Օրհնեալ է նա համայն դասուք, բարունիցն մեծօք փոխումբք։
Որք են ցարդ ի մեծ տրտմութեան, դարձցի ի հրճուանս նոցին սուգ։
Բազում պաղատանօք լացցուք, զաղերս մեր այդ փոքարկեսցուք։
Զառաջնորդէն հիսիսայնոց յԱստծոյ կեանս ժտեսցուք։
Է յարքայն բարեխոս մեր յատուկ, սրբազան մեր Յովսէփ
շքեղաշուք։
Կայսերապսակ Երկայնաբազուկ, կեցցէ յերկար, անդորր պահուք։

Մրեցաւ յանպիտան և ի պանդուխտ երիտասարդէ յումեմնէ ի 1796 և 26 մարտի յամայի Փայտակարանի։

Գ. Աղանյան, «Դիւան հայոց պատմութեան», գիrf 3, Թիֆլիս, 1912, էջ 353—376:

Ի Հնգեկի Հարուածն Տփխիսայ

Սարսափելի բարկութիւն Տեառն մինչ մեզ հասանէր.
Նախ՝ չարարմատ չէզոբ* տունկն Պարսկին բուսանէր,
Որոյ աճեալ փշովք զսիրտս մեր խայթահարէր.
Ճմլեալ զաղոխն՝ զդառն մրուր մեզ արբուցանէր,
Այս պատուհաս արժանահաս՝ ո՞հ, առ մեզ եհաս.
Զարթիցէ՝ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիա։

Երկրորդ՝ իբրև յիշեալ չարիք փոքր ինչ հեռացան.
Ըստ նոյն ցասման տարերք երկրի չարախառնեցան,
Վասն որոյ բոյսք արտորէից իսպառ չորացան.
Եկն սովն, չքաւորաց հոգիք քաղեցան
Այս պատուհաս արժանահաս՝ ո՞հ՝ առ մեզ եհաս,
Զարթիցէ՝ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիաս։

Բենասատ այս մեծ պատուհաս յորժամ անցանէր.
Երրորդ՝ սաստիկ մահտարաժամ իսկոյն ժամանէր,
Ոչ խտրելով զմեծն և զփոքրն՝ ի կենաց հանէր.
Զմնացորդսն յերկրէ յերկիր՝ հերքեալ հալածէր,
Այս պատուհաս արժանահաս՝ ո՞հ, առ մեզ եհաս.
Զարթիցէ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիաս։

Օր ըստ օրէ շնչաւորիլ բնակիչք յուսային.
Չորրորդ՝ զանհուն ապրանս յանկարծ՝ հրոյ ճարակ տային,
Այս բացայայտ աղաղակ էր օրինաւորին.
Զի բազումք յայնց զկողմն ունէին չար անօրինին,
Այս պատուհաս՝ արժանահաս՝ ո՞հ՝ առ մեզ եհաս՝
Զարթիցէ՝ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիաս։

Բարեխրատ և արդար Տէր՝ նորոգ զայրացաւ.
Նոյն ժանիախտն՝ յետ սակաւուց՝ կրկին գոյացաւ,
Զգայութեանց՝ որովք մեղաք՝ թիւն լրացաւ.

* զՄահմուտ խանէն ասէ վասն ներքինացեալ գոլոյն նորա։

Ըստ յանցանաց՝ արժանապէս պատիժ հատուցաւ,
Այս պատուհաս արժանահաս՝ ո՞հ առ մեզ եհաս.
Զարթիցէ՝ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիաս։

Էր հազար ութ հարիւր և չորս՝ օրն նոր տարի.
Մինչ ի տղմուտ Մուխրան ի կարճոյ զայս յայտ արարի,
Ըստ եղանակին որպէս իշիպ իշիպըն* ձայնի.
Անհուն խոնարհ յօրինողիս՝ դիտողաց յայտնի,
Այս պատուհաս արժանահաս՝ ո՞հ առ մեզ եհաս.
Զարթիցէ՝ նոր ողբս երգեսցէ՝ հինն Երեմիաս։

Այս երգ առաջին անգամ տպագրեցաւ ի Կովկաս լրագրի (տես Համար 26 Թուական 1847) տպրելոյ ի Տփխիս Հանդերձ գեղեցիկ և ընդարձակ ծանօթութեամբ, զոր ետ Հայր Գաբրիէլ Պատկանեան։ Ուստի ոչ անտեղի վարկանիմ ի լուսաբանութիւն երգոյս յառաջ բերել աստէն բառ առ բառ զնախասաց ծանօթութիւնն. ահա այս բանք են նորա. «Հընգեկի հառուածf Տփխիսայ»: Քաղաք՝ ի շարս մայրաքաղաքացն փոքրիկ, այլ բազմամարդութեամբ ճոխ և մեծ, յիշատակօք դառնակսկիծ Հարուածոց, որովք բազուկ տեառն ծանրացեալ է ի վերայ նորա ի խրատել զնա, Հանդիսանայ երևելի։ Մի դրդուէր զՀազարամեայ Հնութիւնս նորա. չէ պիտոյ յուշ ածել զայն, զոր մթերք պատմութեանց շտեմարանեալ ունին։ Պատմեցին զայն, զոր տակաւին յիշեն ծերք ժամանակիս և ընդ որ տակաւին չեն ցամաքեալ արտասուք յաչաց Հարց մերոց։ Սուր, սով, գերութիւն, մահ և հուր թափառէր աստանդական լերանց ի լերինս, որովք շրջափակ պատի քաղաք մեր։ Ուստի եղերերգումն մնացեալ յանկին ինչ տղմասիգ շինից Մուխրանայ, զտխրական սրինգ իւր հնչեալ, դառն արտասուօք համբարէր ի ծոց յիշատակաց զաղէկէզ իւր քարքարտանս։ Արձագանք նորա լսելի լինէին ի վանդիւն կնթնտոցին և ամայի այրք՝ յորս մազապուրծ զերծանէր, ղօղանջէին ի հնոտին նորա։ Լուր զինչ ասէր ողբերգարկուն. տես զիարդ հաշուէ թուէ զհարուածսն հայրենեաց. հայեաց՝ թէ զիարդ զաղխ հարկանէ սրտառուչ կոծ նորա, զոր յօրինէ ի վերայ աւերակաց հիւրընկալ քաղաքիս։ Սարսափելի բարկութիւն տեառն... և այլն։ Եղերերգուս այս էր պանդուխտ պատանի եկեալ նժդեհութեամբ ի Կոստանդնուպօլսոյ Սերովբէ անուն, որդի Տէր Պետրոս քահանայի, մականուանեալ Պատկանեանց, ով վասն մանկավարժութեան կոչեցաւ վարժապետ և ընդ խնամովք ոմանց ազգասիրաց գտեալ զմարդասիրութիւն, ամուսնացաւ և եղև ականատես ամենայն անցից, զորս յողբերգութեան իւրում համառօտաբանէ։ Քանզի յերկրորդ տար-

* Իշիպ իշիպ է տաղ ի լեզու Տաճկաց՝ յորդոր։

ւոչ զաղթականութեան իւրոյ, այս է՝ ի 1795 ամի, եկն երկերիւր հազարօք Աղայ Մահմուտ խան, (մականուանեալ Ախտայ խան, զի ի մանկութենէ էր ներքինացեալ) և առաջնորդութեամբ Ջաւաթ խանին մտեալ ի Վրաստան, ի սեպ[տեմբեր] «13. էառ զքաղաքն Թիֆլիս, և հրով և սրով և գերութեամբ մաշեաց զբնակիչս նորա, և բազում աւարաւ դարձաւ յԱրցախ՝ ի ձմերոցս։ Արքայն Վրաց Հերակլ և որդիք և դստերք նորա, մեծամեծ իշխանք աշխարհին և տիկնայք նոցա և բազմամբոխ բնակիչք քաղաքին, որք ցիրուցան լեալ էին ի լերինս և ի յայրս և ի փապարս և յանձաւս խոտաբուտ կեանս վարէին. յետ ամսօրեայ ժամանակաց դարձան ի քաղաք, ողբալ զաւերակս նորա և զխանձողս ի հրակէզ ապականութենէ թշնամեաց»։ Այս էր մրուրն դառնութեան, զոր չեզոքն Պարսիկ յաղոխոյ ճմլեալ տայր յարբումն քաղաքին, որ և ասի առաջին հարուած։ Յարշաւանաց սատի Պարսից, որք ոտնակոխ արարին զգիւղս և զանդաստանս, յաղարտ վարեցաւ երկիր. արդեան ձեռք մշակաց, արտորայք մնացին ի բազում տեղիս անգործ. և ուր ուրեք արկաւ սերմն, անդ երկինք զլացան կաթեցուցանել զցօղ անձրևաց. եղև երաշտ, և եբեր զհետ իւր զսով, դառնացան կեանք մարդկան, թողին լքին զհայրենիս իւրեանց, և գնացին տարադէմ յօտարութիւն ի գիւտ չորաբեկ հացի. աղքատք և հարուստք միօրինակ սովատանջ մաշեցան, լռեաց գութ ծնողաց առ որդիս, կարկեալ ըմբերանեցաւ ողորմութիւն զաւակաց առ մարս. բռնութիւն քաղցուն զմարդիկ ստիպեաց անտես առնել զգորովանօք բնութեան։ Այս է, զոր ասէ՝ չքաւորաց ոգիք քաղեցան: Երկրորդ էր այս ի թիւս հարուածոց. այլ ապականութիւն իւր չէր ինչ նուազ քան զառաջնոյն. զի անդ փախուստ ապրեցուցանէր, իսկ աստ ամենայն ուրեք մարդ զսարսափելի սովն առաջի աչաց իւրոց տեսանէր։ Այլ զի՞նչ էր այս, առ համեմատութեամբ երրորդ հարուածոյն, որ գայր զկնի։ Ի դիականց անկելոց ի սրոյ և ի սովէ գոյացաւ ժանտախտ. և դափր հարեալ սկսաւ ծայրէ ի ծայր քաղաքին և Վրաստանեայց արշաւաւոր ընթանալ. տես այժմ զգոհս նորա. խնայէ՞ արդեօք ի տիս ի դեղ ի սեռ, արկ ի թիւ՝ թէ կարես, թէ քանի՞ արտասուաց և աղիողորմ տեսարանաց եղև առիթ։ Ո՞վ աղեկէզ արկածից, որք զընդերս և զերիկամունս գելեալ գալարեն։ Սիրելի դուստր ոգորի ընդ մահու, և մայրն չկարէ ձեռն կարկառել նմա։ Միամօր որդին դիաթաւալ գլորի, և հայրն դարձուցանէ զերեսս։ Մանգաղ մահուն արծնեալ ի չարախառնութեան օդոց, դիտապաստ տախտապարէր զծաղկունս կենաց, և բնութեանն մորմոք և անդոյր պապանձէր։ Բռնակալն Պարսից, որ զազգն Ղաճարաց եդ յաթոռն Կիւրոսի, ոչ յագեալ յաւարաւ և գերութեամբ յառաջնում արշաւանին, դարձոյց յԱրձախոյ զերեսս ի 1796 ամի միւսանգամ զանգել զերկիր արեամբ անմեղաց և համախոհք նորա՝ որք զօղեալ

էին ի քաղաքիս ի սերմանել զխռովութիւն ի թագաւորութեան, զէն ի ձեռս իւրեանց արարին զհուրն, զի այնու թուլացուսցեն զբազուկս հզօրաց և կործանեսցեն զարիւնաշաղախ ձեռս ատելեաց. և ահա յանկարծ բոց երկնահաս ծանոյց քաղաքին զխորհուրդն անզգամութեան. և որ ազատեալ էր ի սրոյ, ի սովէ և ի ժանտախտէ, զայն ամենայն լափեաց հուր, որ երթալով երթայր և զօրանայր և ճարակէր զամենայն։ Վերջին ի հարուածս նորա եղև դարձ մահտարաժամին, որ որպէս վիշապ վիթխարի գայր յանապատէ, հետք նորա տեսանէին յաւերակսն, եկն եմուտ ի թշուառականն Տփխիս, եդ զգլուխն ի Մթածմինդայ, զտուտն ի Մախաթի սարն, տարածեաց զճանկսն ի լերանց Սոլոլակայ մինչև ի բարձունս Հաւլապարայ, թափեաց զթոյն իւր ի Կուր, և բնակեցաւ միայնակ ի քաղաքին։ Իսկ բնակիչք նորա բոկոտն և գլուխն ի բաց անձնապուրծ ճողոպրել հայթայթէին զկեանս, թողին լքին զբնակութիւնս իւրեանց և սփռեալ տարածեցան ի գիւղօրէս և յանքոյթ տեղիս։ Ի սմին ցառնաղէտ վիճակի յուշ ի կուրծս եղեալ ազգասէր ոմանք, յիշեցին զԱստուածային ողորմութիւն եւ զսքանչելիս նորա, զորս բազում անգամ արարեալ էր առ մարդիկ ի ձեռն Աստուածանշան սուրբ Գեղարդեան. դիմեցին առ նա սրտի մտօք, և հրաւիրակս առաքեալ ի Սուրբ Էջմիածին, կոչեցին զնա յօգնութիւն անձանց իւրեանց։ Արիւն Յիսուսի Քրիստոսի, որ շիջուցանէ զանհերևոյթ նետս սկզբնաչարին, մածեալ ի սուրբ Գեղարդեան շիջոյց և զերևելի հարուած մահուն, որով ծարաւին արեան մարդկութեան ապականէր զբնութիւն։ Յորժամ զէնն Աստուածային եմուտ ի քաղաքս, ամենայն զէնք նախաչարին թուլացան. սուսեր նորա ընդ մէջ բեկաւ. լարք աղեղանց նորա խզեցան. սլաքք փքնին ժանկահար կորեան. երախակալք սրոյ՝ որ ի ձեռս հրեշտակաց նորա կապտեցան. նիզակք սրիկայից նորա խորտակեցան և տէգք արբանեկաց նորա փշրեցան, և ինքն զամօթի հարեալ գլխակոր մերժեցաւ յարտաքին խաւարն ի տարտարոս սանդարամետին։ Մինչ այս հրաշք Աստուածապարգև սքանչելեաց ի տիրաշօշափ Գեղարդանէն յերկրի կատարէին, ողբերգարկուն մեկուսացեալ յանշուք կալուածսն արքայորդւոց, զԵրեմիա՝ զեղերգակն Երուսաղէմի կարդայր յասպարէզ, կամելով նմա ապսպարել զկոծ իւր, որ ի վերայ քաղաքին Թիֆլիսու, յորում բնակիչք նորա՝ որք հնգեակ զգայարանօք իւրեանց մեղուցեալ էին յԱստուած, հնգեկի պատժովք պատուհասից զվրէժ արդարութեան լուծեալ, ի ձեռն Քրիստոսական նշանին, որ զկողահոս աղբիւրն մեղ բղխեաց ի փրկութիւն, քաւէին և զփառս ողորմութեան նորա ի դրունս եկեղեցեաց գոհութեամբ քարոզէին։

«Երգք Սեռովբէ վարժապետի Պատկանեան»
1857 թ., Մոսկվա, էջ 32—36:

16

ՏՓՂԻՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Հ. ԱՐՂՈՒԹՅԱՆԻՆ

24 մայիսի 1796 թ.

Գերերջանիկ և պսակազարդեալ սրբազան Հայր Յովսէփ արքեպիսկոպոս, Գթածագունեղ Տէր և բարերար

Ի շնչասպառ և ի վշտակրեալ ժամանակիս այսմիկ աշխարհի զզօրացուցիչ ազգու իմն հոտ բուրեալ ի քիմս մեր, իբր զարթուցիչս և յուշաբերս առօղ զմեզ ի նուազեցմանէ, զկարգեցումն ասեմք գթաշատի Հօրդ մերոյ առ գերազանց գրաֆ Վեյլարիոն Զուպովն, ի խորհրդատուութիւն նորին պայծառափայլութեան, զոր այս անօրէնութիւն ի յերկնուստ և յաստուածայինն մարդասիրութենէ խնամարկութիւն մեզ զգամք, զի մեծ երջանկութիւն է համարելի վասն մեր, և զյոլով բարիս ստանալ յուսամք, ի սրբազնութենէ ձերմէ, ըստ այն զի ըստ բնածին բարեսէր բարուցդ, մըշտապէս, ի յապահով և յանդորր ժամանակի մերում, հետևեալ ես ի բարձրագունեղ զրանն նորին ինքնակալութեան, զվայելչականս յաւելուն վասն մեր և երկրիս մերում, ապա այժմ քանի՞ օն առաւել հետևելոցս ես որ վասն մեղաց մերոց յամենայնէ զրկեալ հարկաւորին անգամ ոչ եմք ձեռնահաս, որ գրեթէ հասեալ եմք յափն յուսահատութեան, չունիմք զերկբայութիւն առ այս, այլ քաջ գիտեմք և յուսամքն Հայրախնամ գթասիրութեամբ հետևելոց ես քան զոր խնդրեմք և իմանամք, սակայն կամիմք ծանուցանել սրբազնութեանդ թէ մի ինչ է որ վերջապէս շինութեան և կազդուրման մերոյ հարկաւոր է, զի ըստ բազում և մեծամեծ ողորմութեանցն, որ եղև մեզ ի մեծէ ինքնակալութենէ նորին եղիցին այս պարգևք ի վերայ մեր, զի շնորհեսցի մեզ ի թագաւորական գանձուց ողորմութիւն իմն, ի շինութիւն քակուածոց և այրեցեալ տանց և խանութաց մերոց, և առ ի կալ մեզ ի վերա գործոց մերոց, որպէս և էաքն յառաջ, առ որս օժանդակութիւն և ձեռնտուութիւն ի սրբազնութենէդ խնդրեմք, տալ մեզ զպատճէնն, և ցուցանել մեզ զմուտն այսր դրան, որ կարիցուք ստանալ զողորմութիւնս զայս, զի թարց այսարակ անկարելի գոլ թուի մեզ ի յանկմանէս յայսանէ կանգնիլ ի յոտին, և ելով մեր միշտ ի սոյն խորհուրդ վաղուրեմն կամէաք ազդել զայս Հօրդ մերում սրբազանի, բայց մինչ եղբօր որդին ձեր և սիրելին մեր կնեազ Վասիլ Բէժանիչն եկն աստ, պատկան համարեալ մեր սովիմք մատուցանել, զոր աՀա մատուցեալ և ակնադէտ եղեալ սպասեմք հրամանի Տեառնդ և Հօրդ մերոյ։

Ի բոլոր սրտէ վասն սրբազնութեանդ, յաստուծոյ միշտ զբարիս հայցօղ ծառայք և որդիք սրբազնութեանդ մնացորդք ժողովրդեանս աւերեալ Թիֆլիզու՝

Քր, ծառայ Դարչի Բէհբուդ
խոնհար ծառայ Ըստեփան տէր Շմաւոնեան
ბატონ გიორგი ძე ნაზარბეგოვ
Նվաստ Յեսայի դի Մկրտում Թաղօեան
ქ. ულირსი მონა ისაი ფითონოვ
ქ. უწმინდესიი... ქონა ფითონოვ
1796-ի մայիսի 24, ի յաւերեալ Թիֆլիզում։

Մատենադարան, կաթողիկոս. դիվան, թղթ. 6, վավ. 88։

17

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԻՉԸ ՏՓՂԻՍԻ 1795 Թ. ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հունիս 1796 թ.

Համառօտ պատմութիւն անհնարին կոտորածովք աւերման Տփղիս քաղաքի զոր արար յելուզակօրէն պատերազմաւ Աղա Մէհէմմէտ խանն, փախուցեալ զծերունի արքայն Վրաց զՀերակլ Բ, յամի Տեառն 1795։

Յաւուրս թագաւորութեան Կոստանդնուպօլսոյ Սուլթան Սէլիմի Գ-ի, և ինքնակալութեան Ռուսաց Նեքտառինեայ կայսրուհւոյն[50]*, ի չորրորդ ամի ազգովին ապստամբութեան Գաղղիացւոց*[51]*, խան ոմն ծեր, որ իշխէր ի խորին Պարսիկս ի նահանգս ինչ, յանուն Աղա Մէհէմմէտ խան Ներքինի, խորագէտ յոյժ, խորհեցաւ ի միտս թագաւորել համօրէն Պարսկաստանի և անուանիլ շահ։ Սկսաւ ժողովել զօրս բազում յոյժ, և կոչեալ զշրջակայ խանս Պարսից՝ ընդհանուր իմն ժողով հաւաքեալ՝ մերկանայր զխորհուրդս սրտին՝ ճոռոմ ճարտարախօսութեամբն ատենաբանեալ, թէ օրինաց կրօնի տարածման և վաղեմի քաջանուն յաղթանակութեանցն Պարսից համբաւոյն, և համօրէն երկրին խաղաղութեան և ազգին փառաւորութեան՝ միապետութեամբն իւրով, նորոգման իսկ է վրէժխնդիր։ Ընդ որ հաճեցեալ ամենեցուն՝ խոստացան նմա զհնազանդութիւն և զգործակցութիւն յամենայնի՝ ի գլուխ տանել զայս խորհուրդ անվրէպ։ Որոշեցաւ ի ժողով անդ՝ առաքել զդեսպանս առ թագաւորն Կոստանդնուպօլսոյ և առ կայսրն Գերմանացւոց*[52]*, առնուլ և ի նոցուց զհաճութիւն. որոց մինն լռիկ ընկալաւ, բայց միայն՝ զի տիրեսցէ բովանդակ Վրաստանի. և միւսն եդ թէութիւն, զի եթէ գրաւեսցէ զԹաքելոն, անուա-*

նեսցի Շահ: Ընկալեալ զպատասխանիս, իսկ և իսկ ձեռն ի գործ էարկ, առաքելով նախ հատուած ինչ զօրաց յարևելս կոյս, և բանակն մեծ զկնի, դէմ եդեալ ի սահմանս Վրաստանի ժամանել, ի հնազանդութիւն ածելով զառ ճանապարհին խանս զիշխանս Պարսից՝ մինչև ի քաղաքն Շօշ. ուր խանն Իպրահիմ, զի բարեկամ էր Հերակլի Վրաց արքային, ի դիմի հարեալ առաջապահ զօրացն՝ վաստակեցոյց զնոսա յոյժ, մինչև թողեալ զնա զօրացն անցին ի Վիրս կոյս, զի նուաճեալ զսա, զիւրաւ ապա տիրել ունին և նմա: Եւ ի ժամանելն զօրացն մերձ ի սահմանս Վրաց, դեսպան առաքեցին առ Հերակլ՝ պահանջելով զհնազանդութիւն նորա և զպատանդ, և զհարկս յամենայնէ, որպէսզի այսպիսի հպատակութիւն սորին հաստատեսցէ զշահութիւն ներքինւոյն: Բացասական պատասխանեաւ յետս դարձոյց զդեսպանն՝ արքայն Հերակլ, և յուր ի Մոզտոգ առ զօրապետն Ռուսաց փութացուցանէր՝ յօգնութիւն իւր ժամանել. զի կայսրուհին կացուցեալ էր անդ զօրս քսան և հինգ հազարաց՝ ի պահպանութիւն Վրաստանի, սպասել ազգարարութեան Վրաց: Որում փոխանակ զօրաց՝ պատասխանի առաքեաց զօրապետն Ռուսաց, թէ մի զանգիտեր ի նմանէ վնաս ինչ կրել, և թէ՝ պատրաստ եմ զօրօքս ժամանել, միայն սպասեմ ահա յարքունուստ անդրէն հրամանագրի (քանզի նախապաշարեալ էր զնա ներքինին՝ պատճառանօք այցելութեան սահմանակից քաղաքացն, որոց նախնիք իւր երբեմն տիրէին. ստացեալ ես էր, ասեն, ընծայիւք զզօրապետին սիրտ կամ խորհրդով իմն գուցէ թոյլ տուեալ սա նմա՝ նուաճել զՀերակլ, և յափշտակել զՎրաստան, զի ապա ինքն եկեալ և հալածեալ զներքինին՝ գրաւեսցէ իրաւամբ զՎրաստանն ողջոյ, որպէս եղև իսկ): Զայս պատասխանի առեալ անօգնական ծերունւոյն Հերակլի, վհատեցաւ, զի անպատրաստ գտաւ զօրաժողովն լինելոյ՝ յուսով պատրաստական զօրացն Ռուսաց. ապա կոչեաց յօգնութիւն զփոքր Վրաց իշխան Զաչխիպաշու զՍաղոմոն[53], որ հազիւ զերկոտասան հազարս արանց առեալ փութացաւ ի Տփղիս, որում ընդառաջ ել Հերակլ մեծաւ հանդիսիւ, ընկալաւ ի քաղաք իւր: Եւ այն ինչ մերձեցաւ յուր թշնամեացն, ահա մետասան հազարքն զօրաց Սողոմոնի ի փախուստ ցրուեցան[54], և մնաց հազար միայն: Իսկ Հերակլեանքն, երկու հազարք, մետասան ևեթ եւրոպացի թնդանօթօք, երեքհարիւր արուեստաւորօք և երկոտասան կառավարչօք, և երկոքումբք վարժ՝ առաջին և երկրորդ սպարապետօք, անուն առաջնոյն Գաբրիէլ մեծաւոր, և երկրորդին Գէորգ մեծաւոր. սօքօք միայն ել Հերակլ և գնաց զճանապարհ աւուրց երից՝ ունել զկիրճ մօտից թշնամեացն, և բանակեցաւ անդ՝ սպասելով Մոզտոգեան զօրացն ժամանելոյ: Եւ մնացեալ զաւուրս վեշտասան, ստուգեաց ի լրտեսաց զմերձենալ թշնամեաց մեծի բանակին, որում հրամայէր ներքինին: Ծանեաւ և զմիաբանելն ընդ սմա՝ երկոցուն խանիցն Այրարատեան

գաւառին, և Կէնճէու: Հաւատայ և մելիք Մէճնունի, ընդ որոց բարեկամ էր, և օգնութեան նոցին յուսայր: Սոքա ընդ ժամանել ներքինւոյն զօրօք ի ԿԷՆՃԷ (կամ առ երկիւղի, և կամ առ հին մախանացն՝ որ առ Հերակլ), ելին ընդ առաջ նորա, դաշինս կռեցին հպատակութեան, և միաբանեցան ընդ նմա՝ բնաջինջ ի Վրաց զՎրաստան կացուցանել: Ապա ժողովեալ և սոցա զբազմութիւն զօրաց՝ առապատակ հանէին, և բանակն մեծ խաղայր ժամանել ի սահմանսն: Զայս ամենայն լուեալ անզօր ծերունւոյն Հերակլի, և զզօրացն թշնամեաց յոգնաթիւ բազմութիւն, տեղի ետ, և խաղացոյց զաղքատին բանակ իւր ընդ կրունկն, և եհաս յեզերս այգեստանեաց իբր կէս փարսախաւ հեռի ի քաղաքէն իւրմէ: Ապա և թշնամեացն անարգել մտեալ ընդ կիրճն յերկիրն, բանակեցան ի դաշտն Սօղանլըխ անուանեալ գեղջ. և կարգեաց ներքինին զզօրս իւր դասս դասս և զառաջեաւ առաքեաց զօրապետ մի քաջ չորս հազար արամբք՝ վաստակեցուցանել զքաջանուն զանպարտելին Հերակլ, որպէս զի դիւրաւ մարթասցի ապա ինքն յաղթել նմա: Լուեալ զայս ամենայն բնակչաց քաղաքին՝ սասանեցան, լքան, լուծան, և կարօղքն՝ էր որ հեծեալ, և էր որ հետի, խոյս ետուն ի լեռնակողմն Կովկասու, զանձինս ապրեցուցանել. (որոց պատահեալ փախստեայ մետասան հազարացն Սողոմոնեան զաղթելոց, կողոպտեցին, մերկացրին զնոսա՝ փոխանակ օգնելոյ և փախեան): Հասեալ թշնամեացն յայնկոյս այգեստանեացն, յարձակեցան ի վերայ սակաւաթիւ՝ բայց հաւատարիմ զօրացն Հերակլեայ, և ժամս չորս պատերազմեալ՝ մեծ մասն զօրաց թշնամեաց դիաթաւալ ի թնդանօթացն հերակլեացն կործանէին. օրինակ իմն իբրև ի հատու մանգաղացն քաջաշարժ հնձողաց, չեղջաշեղջ շրջեալ, դէտապաստ դիզանէին յերեսս երկրի: Զոր տեսեալ մնացորդացն՝ լքան, պատրաստեցան, և փախուցեալ յերեսացն Վրաց, անկան ի բուն բանակն բռնաւորին, այնպիսի իմն խռովայոյզ տրտունջ բարձեալ զնմանէ, մինչև սակաւիկ միւս ևս, և մտանէր երկպառակութիւն ի բանակ անդր: Իսկ բռնաւորին առժամայն հասեալ ի վերայ՝ շիջուցանէր, խաղաղէր, քաջալերէր զնոսա և խրախուսէր զամենեսին ի ստացումն աւարից և գերեաց. և զբուն բանակն ողջոյն յառաջ խաղացուցանէր, և ընդ առաւօտն ժամանեալ յանդիման աղքատին զօրաց և թնդանօթացն Վրաց, սկիզբն առնէր մարտին: Եւ մինչև ցկէս օր հրացանս առ միմեանս՝ կոյր զկուրայն արձակէին, զի մառախլապատ էր երկիր. ապա ի մերժել միգին յարևելեան հողմոյն՝ աչս ամբարձեալ տեսին զսակաւաւոր զօրս Վրաց՝ քաջալերեալ զօրացն, և սոքա ի նոսին հայեցեալ յանթիւ բազմութիւն (որք էին իբր ութսուն հազար արանց) պատրաստեալ լքան: Իսկ բռնաւորն ներքինի, որ ի վերայ լերին կացեալ՝ դիտակն ի ձեռին՝ զօրացն հրամայէր. հայեցեալ և յայնկոյս քաղաքին՝ տեսանէր՝ զմանկունս, կանայս՝ և զաղչկունս բնակչաց, որք իբր ի սառնամանեաց վարեալ փոթորկէ՝ ձիւնաթա-

Թաւ իմն գլխովք զեղեալ ի դաշտին, համակ սպիտակ երևեցուցանէին զայն վայր ընդարձակ: Ապա նորոգ խրախոյս առ իւրսն բառնայր, փութալ գրաւել զքաղաքն, և զօրէն բազէից յայն որս աղաւնեաց խոյանալ: Քաջալերեալ զօրացն՝ և ևս սաստկացուցանէին զպատերազմն յոյժ, մինչև Հերակլ թէպէտ և բազում արութիւնս քաջութեան ցուցեալ էր անդ, հայեցեալ թէ յոյժ սակաւ մնացին իւրքն, խորհեցաւ ապրեցուցանել զանձն և խոյս ետ յայլուր յամուր բերդ իւր անկանել. և մինչչև էր ժամանեալ ի բաղանեաց դուռն, ահա հատուած ինչ թշնամեաց այրուձիոց զհետ պնդէին կենդանւոյն ձերբակալել զնա. զոր տեսեալ ի քաղաքէն, ուղղեցին զթնդանօթս ի հետամուտս, ոչ թողացուցանէին ժամանել առ նա, մինչև զերծուցեալ եհաս՝ ուր դէմ եղեալն էր:

Արդ պատերազմն ընդ թնդանօթից զօրանայր, և արուեստաւորացն զօրութիւն նուազէր, մինչև տիրեալ սոցա երկիւղ տագնապի, ի փախուստ ճեպէին թողեալ զգործիս, և մնացին միայն առաջին և երկրորդ սպարապետք երկոքին, որք և ևս արիաբար վարեալ թնդանօթսն՝ զբազումս թշնամեաց տապաստ արկանէին. բայց սպարապետն ի հրացանիցն թշնամեաց ի մահ վիրաւորեալ, մնաց առաջինն միայն. որ և զվերջին նիգն ի գործ եղեալ արիաբար, բազում կոտորածս արար զնդակօք. ապա ի կողմանց յարձակեալ ի վերայ բազմութիւն թշնամեացն, կենդանւոյն կալան զնա, և չարաչար սպանին զնա: Տեսեալ Սողոմոնի, եթէ մատնեցաւ քաղաքն, փախստական մարտիւ ճողոպրեցաւ յերկիր իւր. ընդ որում մարթացաւ զերծանել նղժեհացեալ անդ՝ ականատես պատմիչս անցիցս, ուր գրեաց:

Ապա տեսեալ թշնամեաց զքաղաքն թափուր ի պաշտպանողաց, գրոհ տուեալ դիմեցին առ հասարակ, և մտեալ հարին կոտորեցին, և ապա յաւար հարկանէին զոր ինչ և գտանէին. տանջէին նաւթեայ հրով զեկեղեցականս և զծերս քաղաքին՝ յայտնել զինչս գաղտեալս:

Գերեցին զմանկամարդս, զկանայս, զդստերս և զմանկունս՝ զոր ի քաղաքին և զորս ի դաշտին ցրուեալս, և զբազումս ի ծերոց սրոյ ճարակ ետուն: Զարքունիս, զեկեղեցիս և զվանորայս դատարկեցին յամենայն զարդուց և սպասուց և ի հուր ծախեցին: Զարչարէին, սպանանէին առաւել ևս զդենակիցս իւրեանց զմահմետական բերդաբնակսն անդ, յաւար և ի գերութիւն մատնեալ: Այս ամենայն գործ կատարեցաւ ի մէջ աւուրց քանից:

Ի վախճանի ի թիւ արկեալ զմեռեալս Վրաց թէ պատերազմի և թէ ի կոտորածի՝ սատ՝ գտին իբր լիսուն հազարաց, և գերեալք բազում: Կացեալ անդ քաղաքաւեր բռնաւորին իբրև ամիսս երիս[55], և լուեալ զխաղալ զօրացն Ռուսաց քան հազարաց ընդ Ալանաց դուռն՝ դէպ առ Պարսկաստան, և երեք հազարաց՝ դէպ առ ինքն, ինքնահալած եղև համայնիւքն,

թողեալ զՏփխիս քաղաք աւերակ, խղճալի մերկ ապրեցելովքն: Ուր դարձ արար ապա Հերակլ արքայ և սուգ մեծ էառ ի վերայ աւերածոց քաղաքին և կոտորելոցն: Վախճան սահմանակցացս խռովութեանցն եղև այս, զի

Ոմն եհար զաւար, ոմն եղև թշուառ,
Եւ այլ ոք օտար՝ էառ զայն զաւառ:
Միայն մնաց վայ մեռելոց,
Եւ գերելոց տառապելոց:

Գրեցաւ ի Տփխիս Փայտակարանի ի մազապուրծ զերծելոյ, յամի Տեառն 1796 յունվարի, ընդարձակութեամբ բառից յաճախութեան:

Յորմէ յապաւելով իմն ի խիտ առ խիտ տերևոց բազմակոյտ բառից՝ զպտուղ պատմութեան ի լոյս արևու հոլանեալ, վերծանողացն մտաց հասու գործել կամեցեալ, համառօտեցաւ ի յԱր ի Կոստանդնուպօլիս, 1796 յունիսի:

Յիշատակագիր ումն:

«Բազմավէպ հանդիսարան», 1883, հատ. ԽԱ., պրակ Բ, ապրիլ, մայիս, հունիս, էջ 204—207:

18

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ

14 հունիսի 1798 թ.

Թուղթ ի Հնդիկս ի քաղաքն Մադրաս առ աղայ Շահամիրն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1796, դեկտեմբերի 1. հանդերձ ծանուցմամբ որպիսութեան կողմանցս և մխիթարութեամբ վասն մահուան մեծ հարսինն իւրոյ Թամարա խաթունին:

Յորմէ ճշմարիտ սիրով և յոգնոր օրհնութեամբ, և խաղաղական ողջունիւ և սրբոյ իջմանտեղւոյս Քրիստոսի առատածաւալ շնորհիւն ծանուցումն լիցի ազնուամեծար սիրելւոյդ մերոյ հարազատ որդւոյ և քաջընտիր բարեկամի սրբոյ աթոռոյս աստուածասէր և բարեպաշտ, վսեմախոհ և ճոխապատիւ աղայ Շահամիրդ Սուլթանումեան:

Քանզի թուղթն ազնոււոյդ գրեցեալն յամի Տեառն 1796 և ի դեկտեմբերի 1, առ մեզ ժամանեաց յայսմ ամի, որ է ըստ թուաբերութեան փրկչին 1798 և ի փետրվարի 15 ի վերայ Կոստանդնուպօլսոյ: Որով նախ ծանուցեալ զքաջառողջ գոլոյն անձինդ պատուականի դիւր սրտի գտեալ՝ փառ

մատուցաք աստծոյ: Եւ ապա զամենայն օգտաւոր առաջադրութիւնսդ, թէ ի թուղթն յայն և թէ ի նախագուշակն տետեր տպագրեցելում մի ըստ միոջէ ընթերցեալ՝ հաւանեցաք բարիոք դիտաւորութեանցդ առ ստացումն արևելաբնակ ազինս մերոյ զշահաւէտութիւն բարօրութեան: Բայց ի նոյն յիշեալ թուոջն և օգոստոսի 12 գրեալ թուղթն քո մինչև ցայսօր ևս ոչ ժամանեաց մեզ, թուի թէ ի խուռն վրդովմանց նախանցեալ ամացն ուրեք ուրեք արգելեցան կամ թէ վատնեցան: Այլ առ մեզ ժամանեալ թղթովդ իմացեալ մեր զհասանելն առ քեզ թղթոյն մերոյ յամի տեառն 1796 և ի մայիսի ելն գրեցելոյ ստացաք զմիամտութիւն: Յայնմհետէ և այսր ոչ ևս յաջողեցաւ մեզ գրել ինձ առ քոյդ ազնուութիւն, զի ոչ երբէք բացաք զաչս ի մրրկեալ ալեաց թշնամեաց մերոց հեթանոսաց: Վասն զի թէպէտ ընդարձակ բացաւ դուռն այցելութեան ի Հիւսիսոյ. բարեյօժար կամեցողութեամբ երջանիկ և մեծանուն կայսերուհւոյն, և քաջազէն զումարտակ զօրաց նորա նուաճեալ ընդ ձեռամբ զդուռն Երկաթի[56] և անցեալ մինչև ցդարան դաշտ բանակեցան, յորոց և մասն մի եկեալ մտին ի Գանձակ Աղուանից, յամի տեառն 1796, յամսեանն դեկտեմբերի, ընդ որս էր և արիաջան Յովսէփ արքեպիսկոպոսն, ուստի և յոյս եղև մեզ, թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ, սակայն առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհւոյն խափանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի: Ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն[57] դարձ առնել ետ զօրացն, զամենայն ընդ ձեռամբ արկեալսն ևս թողելով հնոց տիրողացն աւերչաց: Յայսմանէ աստի կրկին զօրացեալ դառնաշունչ վիշապին ներքինւոյ առաւել ևս կատաղեցաւ, որ և Նախիջևանու իշխօղն[58] տարեալ առ ինքն կուրացոյց և ինքն ել յայս կոյս. և ժանտաբարոյ եղբայրն իւր յղեաց յԵրևան իշխօղ և սպարապետ կողմանցս, որոյ չև ևս եկեալ աստ, Երևանու խանն դիմեաց առ հզօր բռնաւորն, զոր ի տեսանել նորա, յղեաց ի Թէհրան. արկեալ ի վերա զծանրագոյն տուգանս և կողոպտել ետ զամենայն ինչսն: Իսկ մեք՝ զի յառաջագոյն դեռ հիւսիսայնոցն ի Գանձակ գոլով, ընծայ էաք յղեալ առ ինքն. բռնաւորն ոչինչ ոխս ունէր առ մեզ, այլ մանաւանդ ֆերմանս էր տուեալ և խիլայիւք դարձուցեալ զընծայատարսն յետ այսոցիկ յամսեանն մայիսի 1797 թուոյն, ժանտ եղբայրն՝ սարտար կոչեցեալ, էհաս յերկիրն մեր, որոյ ընդառաջ ելեալ բերաք յԵրևան և ինքն պատուով ընկալաւ զմեզ: Բայց ի կամիլն մեր զընծայ մատուցանել, դարձեալ զառաջին ագահութիւն ի գործ էարկ, որ թէպէտ յահէ եղբօրն չկարէր ինչ առնել, սակայն և յագահութենէն ոչ զիջանէր, վասնորոյ աւելի քան զամիս մի կացաք վարանեալ յԵրևան, վերջապէս կիսով չափ ետուք և դարձաք ի սուրբ աթոռս: Յայնմ միջոցի շահ ասացեալն մերձ յԱրտաւիլ բանակեալ գոլով, ի լսելն զփախստենէ Արցախու տիրողին ի դղեկէն իւրմէ առ կովկասայինսն, ինքն

զբանակն թողեալ քանի հազար զօրօք հապճեպ հասեալ և մտեալ էր ի դղեակն:

Մելիք Ջումշուտն և այլք ելեալ էին ընդառաջ, և մելիք Աբովն ևս ընդ Գեանջայու խանին գնացեալ էր առ նա: Այլ մինչ նոր էր սկսեալ թափել զթոյնս իւր ի բնակիչսն, յետ 6 կամ 7 աւուրց մտանելոյն, ակնարկութեամբ աստծոյ արդարութեան խողխողեցեալ էր ի սպասաւորաց իւրոց և բարձեալ չարն ի միջոյ, որոյ լուրն ի մերձ յիշեալ թուոյ յունիսի բանիւն էհաս յԵրևան, և դժնեայ սարտարն, որ զնզջիւրս ածեր յայս կոյս և յայն կոյս, նկուն եղեալ, եմուտ ի բերդն, և յետ աւուրց ընդ բերդապահացն կորեան: Մնացորդ բնակիչքն Տփխիսու, որք լուեալ զգալուստ ներքինւոյն ի Շուշի, զարհուրեալք կամէին ցրուիլ, և յորդորմամբ Յովսէփ արքեպիսկոպոսին փոքր մի դադարեցան, նոքա ևս զերծան ի կատաղութենէ անօրինին ի բառնիլ կենաց նորա: Եւ չքանալի սարտարն, որ գնաց ի Թէհրան առ ի թագաւորել, զրկեցաւ յաչացն, զի Բաբախանն[60] յաջորդեալ զտեղի հօրեղբօրն, կուրացուցեալ է զնա: Փառք աստծոյ, որ գիտէ զչարսն չարեաւ կորուսանել: Եւ թէ այլևս ի՞նչ անցք անցին յերկիրս և ի կողմանս, աւելորդ է գրելն, զի ըստ գազանացն ամենեաց՝ և վարք իւրեանց:

Այլ յետ ներքինւոյ կործանմանն մելիք Ջումշուտն կասկածեալ յԻբրահիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփխիս և ընդ Յովսէփ արքեպիսկոպոսին գնացին ի դուռն նորոյ կայսեր, և մելիք Աբովն ևս քանի հարիւր տուն ժողովրդովք իւրովք չու արար ի տունն վրաց և կայ այժմ ի Պօլնիսու ձոր կոչեցեալ գաւառին: Եւ Դարբանդու հայքն ևս, տունքն ԵԾ ի դարձի զօրացն կամաւ իւրեանց չուեցին ընդ նոսա յերկիրն Ռուսաց, որոց զորպիսութիւնն ի Յովսեփ արքեպիսկոպոսէն ունիս իմանալ:

Եւ մեք գրեցաք զթուղթ շնորհակալութեան առ նորապերճ կայսրն և առ վաշիրն և առ ոմանս եպիսկոպոսունս, ծանուցանելով զոր ինչ հարկն էր, աղերս արկանելով վասն մերազնեաց: Լսեմք, թէ սիրով ընկալեալ է և սպասիմք պատասխանեացն մերոց: Այլ զկնի անցիցն յիշեցելոց, Երևանու նախկին իշխօղն, որ կալանաւորեցեալ կայր ի ներքինւոյն, ի յաջորդ շահէն արձակեցեալ ֆերմանօք եկն նստիլ յԵրևան արտաքոյ բերդին, յառաջ քան զսա ևս պահակք եկեալ մտին ի բերդն դժնդակագոյնք. քան զառաջինն: Եւ մեք առ հարկին պահանջելոյ, յամսեանն փետրվարի ի սմին ամի ընծայ յղեցաք առ նոր շահն վարդապետաւ միով, ընդորում և զեպիսկոպոս մի եղեալ առաքեցաք ի նուիրակութիւն Ջուղայու, որ ի շահէն նոմոս առեալ. այնպէս երթիցէ, համարձակ շրջագայել և զամենայն հոգևոր պէտս եկեղեցեացն լնուլ, որք հասեալ են առ շահն և նա հաճութեամբ ընկալեալ է և ֆերմանօք և խիլայիւք արձակեալ: Բայց ի

վերա ամենայնի տխրութիւն եղև մեզ տանն վրաց տակաւին չգտանելն զանդորրութիւն։ Զի Հերակլէս քաջընտիր արքայն Վրաց թէպէտ և ետես զկորուստ թշնամոյն իւրոյ, և զուրախակցութեան թուղթս գրեցաք առ իրեարս, սակայն ի Թելաւ բնիկ տեղին իւր հիւանդացեալ և անդէն կայ առեալ վասն զառամութեան. ի սմին տարւոյ փետրվարին առ տէր փոխեցաւ, որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ և սիրելւոյդ զերկար կեանս շնորհեսցէ։

Իսկ ի կենդանութեան կտակաւ աւանդեալ էր իւրոցն և ամենայն իշխանացն՝ զաւագ որդին իւր զԳիօրկի խանն իմանալ իւրեանց արքայ։ Եւ զկնի վախճանմանն նա եղև յաջորդ, որում և մեք շնորհաւորութեան թուղթ և ընծայս առաքեցաք։

Եւ Երևանու խանն մտեալ ի մէջ զթուղթ հպատակութեան գրեցոյց նմա առ նոր շահն։ Այլ քաղաքացիքն յանցեալ տարւոյ նոյեմբերին թէ յերկիւղէ յարուցմանն լեզկեաց, և թէ մանաւանդ ի ժանտախտէն ցրուեալք կան ի լեռնակողմն տեղիս և դեռ չկարեն դառնալ ի քաղաքն նորոգութեան։ Եւ նորոգ արքայն ևս ի Կախեթ կայ։ Աստուած այցելութիւն արասցէ խղճալի քաղաքին նորոգութեան։ Արդ խոհական սիրելիս իմ ահա անցք կողմանցս և երկրիս այսպէս և կացութիւն մերայնոցն ևս յայսցանէ վըշտաւոր և լի ամենայն արհաւիրօք։

Իսկ եղանակքն զգուշութեան և խոհեմաբար վարեցմանց, որ գրեալ էիր, յայնժամ յաջողէին ի կիր առնուլ, յորժամ վերոյիշեալ դուռն այցելութեան[61] ի բաց մնայցէր, այլ եթէ փութանակի դարձեալ փակեցաւ, անօգնականքն ի՞ւ զօրասցին առնել զիմն։ Ապաքէն վերստին մնամք ողորմութեանն աստոյ, որ զիարդ և կամիցի այնպէս տնօրինեսցէ վասն ազգին մերոյ։ Գոհանամք զտեառնէ ամենակարողէ, որ այսքան բազմապատիկ ալէկոծութիւնս պահպանեաց զչարկս փառաց սրբութեան իւրոյ անզրդուելի յարբանեկացն Բելիարայ, հանդերձ պաշտօնէիւք և բարեզարդութեամբք իւրովք։ Թէև վնասքն անցեալ ըստ չափ։ Յաղագս նուիրակին մերոյ Յակոբ եպիսկոպոսին, զոր գրեալ էին ժամանեալ գոլ ի Բումբայի, յիրաւի և ինքն զերկուս թուղթս էր գրեալ մեզ անտի, ուր խաղաղութեամբ հասեալ էր, բայց զի թուղթն մեր առ ազնուութիւն Ձեր, որ շուտով չէր յուղարկեալ, ոչ հաւանեցաք ընդ այն, այլ աստծով մինչև ցհասանիլ այսմ գրոյ՝ ինքն ևս եկեալ լինի յաստուածապահ քաղաքդ և զամենայն ինչ խօսեցեալ ընդ սիրելիսդ։ Իսկ ընդ զանազան ծանուցմանց, նաև մեծաւ տխրութեամբ ծանուցեալ էր զվախճանմանէ զգաստամիտ և համեստ դստերն քոյ ազնուուհի Թամար խաթունին։ Ընդ որ և մեք տրտմեցաք, գիտելով թէ և սիրելւոյդ ոչ սակաւ կսկիծ իցէ եղեալ։ Բայց զի աստծոյ արարչին է վճիռ վերա հողեղինացս ամենեցուն, զինչ ունիմք առնել, եթէ

ոչ՝ զփառս վերառաքել բարերար կամացն նորին, որ տէր է կենդանեաց և մեռելոց։

Արդ՝ կամք նորա եղիցի օրհնեալ, և որ փոխեցան զնա յանցաւոր կենցաղոյս արժանացուսցէ մտից երկնային առագաստին ընդ երջանիկ սուրբ կանանցն իւղաբերից, որոց և բարեպաշտական գործովքն հաղորդ էր, որպէս գիտեմք ի պատմութենէ նուիրակաց մերոց։ Եւ զքեզ յարգի սիրելիդ հանդերձ ամենայն քոյայնովքդ մխիթարեսցէ և ողջ պահեսցէ պարագայց ամօք, փոխանակ տրտմական կրիցն զյօգնապատիկ ուրախութիւնս շնորհելով ձեզ ամենեցուն։

Իմացաք զլուրն ամենավնաս արարողութեանցն ֆրանսզաց և ծովային ուղեգնացութեանցն վտանգս և զպակասութիւնն վաճառաց և վնասակարութիւնն բազմաց, որոց ստուգութեան՝ թուղթք նուիրակին և այլոց ևս վկայեն. տարակուսանք մեծ ընծայեցաւ մեզ սակս ձախորդութեանց խղճալի մերայնոց։

Խնդրեմք յաստծոյ՝ իւր անհուն ողորմութեամբն խաղաղութիւն շնորհել ամենայն աշխարհի և սրբոյ եկեղեցւոյ, ի բաց բառնալով զհանրածուփ ալեկոծութիւնսն՝ տարածեալ ընդ տիեզերս։

Զփակէթն թղթոց, զոր եդեալ էիր ընդ թղթոց մերում, հասուցանել ի Տփխիս, հաւատարիմ մարդկան ձեռօք ուղևորեալ եմք ի ձեռս պարոն Մանուչար Գուրջասպին[62] ի մարտի 17։ Եւ յորոց անձանց և թուղթք գայցեն ի ձեռս մեր յանուն քո ամբողջապէս առաքելոց եմք առ պատուականութիւն ձեր։

Զոր ինչ ի վերոյ ծանուցաք, անցեալ եղելութիւնք էին, ի ներկայումս կացութիւն պարսից խառնակ լսի և տեսանի, և կատարած իրաց ինչ ոչ նկատի ի տեսանելն մեր զարժանիս իմանալոյ, գրելոց եմք սիրելւոյդ։ Ողջ լեր ի Տէր, ի հրճուանս մեր։

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի յունիսի 13, ի սուրբ էջմիածին։

Աստուածապարգև մխիթարութեամբ հանդերձ ողջոյն և օրհնութիւն առաքեմք ազնուածին որդւոյն քո և թոռինդ՝ Քրիստոսի զօրացելոց և շքեղազարդից՝ աղայ Յովհաննէսին և աղայ Նազարին, և հարազատ զաւակաց և ընտանեաց նոցին, նաև մտերիմ փեսային ձերոյ՝ խոհեմառատ պարոն աղայ Յարութիւնին Թաղեանց, և բարեշառաւիղ որդւոյ նորին՝ և գործակալին մերում պարոն աղայ Յակոբին և ամենեցուն, իսկ ձերայնոց և նոցայնոց, որք եղիցին մխիթարեալք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս նորին հանապազ, ամէն։

Երկու համօրինակ գրեցաւ թուղթս, որոց առաջինն է այս, որ ի վերա Կոստանդնուպօլսոյ յուղարկեցաւ։

Մատենադարան, ձեռ. 4501, թ. 418—419բ:

19

Հ. ՈՍԿԵՐՉՅԱՆԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1797 թ.

Ա

Յաղագս աւերածութեան աշխարհին Տփխեաց ի յաղա-Մամատ ներքինի շահէն Պարսից

Զկնի պակասելոյ յաշխարհէ Նատիր շահին Պարսից՝ նախարարք նորին սուր ի գործ արկեալ կրճատէին զիրեարս. ապա գտեալ իւրաքանչիւր ոք ի նոցանէ զմասն բաժնի յաշխարհացն Պարսից ի մարտից պարապէին. իսկ որ բարերարույն էր նոցա Քէրիմ խան Շիրազու[63] խաղաղութիւն արարեալ առ ամենեսեան, նստի ի Շիրազ վարել անուամբ, այսինքն՝ տեղապահ շահի, և վարէ զիշխանութիւն մինչև ի յերկրորդ ամն Ղուկասու կաթուղիկոսի Հայոց և ի պակասիլն նորա յաշխարհէ՝ զօրանայ ի Թէհրան Աղա-Մամատ խան ներքինացուցեալն ի Նատիր շահէ, և զըրռամբ ածեալ զկողմունս Պարսից խորհի գալ և յԱտրպատական յաշխարհ, և նուաճեալ զԹաւրիզ, զԽոյ, և զՆախիջևան, առաքէ զեղբայր իւր զԱլի-Ղուլի-խան սարդար ի վերայ Երևանու ի 1245 (1796) թուին Հայոց՝ յամսեանն յուլիսի, և նորի եկեալ մերձ յամրոցին յԵրևանու ի Զարբախն բանակ հարեալ նստի այդ։ Յորում յետ երից աւուրց գնայ Ղուկաս կաթուղիկոս բաղում ընծայիւք ի տեսութիւն նմա, և մեծարի ի նմանէ առ երեսս ըստ խորամանկութեան Պարսից, բայց և ինքն Աղա-Մամատ շահ անցեալ ընդ Երասխ ի Խուտափրին՝ դիմէ ի յԱրցախ, և պաշարեալ զանառիկ ամրոցն Շուշւոյ, հարկանէր զնա ռմբագործեօք, և սփռեալ զզօրս իւր աւերէր զբարեկլի աշխարհն Արցախու, իսկ իբրև ետես թէ ոչինչ յառաջանայ անդ գործ իւր՝ և ոչ եղբօրն որ յԵրևան՝ խորհեցաւ թողուլ զայնս և դիմել ի վերայ Հերակլեայ ի Թիֆլիզ. զմտախոհ լեալ իմանայր զոչ հնազանդելն Արցախու և Երևանու պատճառ զՀերակլ, վասն որոյ առաքեալ յետս կոչեաց զԱլի-Ղուլի զեղբայրն իւր յԵրևանու և նորա առեալ զպատանդս խանէն Երևանու, զկինն և զորդին առաքէ ի Թէհրան, և ինքն փութացեալ գնայ առ ներքինի շահ եղբայրն իւր յԱրցախ, յորում անդէն ի մի խըմբեալ. և զզօրս Ատրպատականի հանդերձ զօրապետօք նոցա որք էին Ջահվաղուլի խան Խոյու, Քեալ-Բալի խան Նախիջևանու, Ջավադ խան Գեանջայու, ընդ սմին և Մելիք Մեջլում հայ՝ որ փախուցեալ իշխողէն՝ Շուշւոյ յարեցեալ էր առ սա. զսոսա յառաջապահս կարգեալ ամենայն զօրացն թողու զամրոցն Շուշւոյ և դիմէ ի վերայ քաղաքին Տփխեաց։ Լուեալ Հերակլեայ զհամբաւ դիմելոյն Աղա-Մամատ շահին ի վերայ իւր, փութայ ժողովել զզօրս, և չև էր հասեալ օգնականացն առ նա՝ գայ զօրն Պարսից ի Գանձակ, անճարացեալ Հերակլ

առնու ընդ իւր զզօրս ի մերձակայիցն և զսակաւ ինչ ի Բաշաչուխէ. իբրև հնգետասան հազար արանց և գնայ ընդ առաջ Պարսից զօրուն մինչև ի Շամշադին և ի մնալն անդ ի քանիս յաւուրս՝ կինն իւր գիգիֆալ[64] խնդրէ ի նմանէ զի հրաման տացէ ինքեան չուել ի Տփխիսոյ դէպ ի խորին Վիրս, և ի տալն նորա հրաման, լքանին զօրքն, որք ընդ ինքեամբ, որք և մատուցեալ և նոքա խնդրեն՝ զի և ինքեանք զընտանիս իւրեանց տարեալ ամրացուսցեն և ապա դարձցին ի գործ պատերազմին, և իբրև այսպէս լինէր, գնայր որ գնայր և դառնալն յետս ոչ լինէր նաև պակասէր հաց զօրուն որ ընդ իւր, վասնորոյ և Հերակլ որքան մերձենայր առ ինքն զօրն Պարսից՝ ինքն յետս չոգելով հասանէր ի քաղաքն իւր Տփխիս, և զօրն Պարսից փութացեալ զկնի գայ մինչև ի Կումիս և Սողանլուղ։ Տեսեալ Հէրակլեայ, թե ոչ ուստեքէ հասին զօրք յօգնութիւն ինքեան վասն անմիաբանութեան որդւոցն և իշխանացն[65], և զօրն Բաշաչուխի, որ ընդ իւրն էին անկեալ ի վերայ քաղաքին կողոպտէին[66]. անճարացեալ ելանէ նոքօք ի պատերազմ ի Սողանլուղ, որ է մերձ քաղաքին և առաջին աւուրն փոքր ինչ յաղթութիւն դտեալ դառնայ ի քաղաքն. իսկ ի յերկրորդ աւուրն, որ էր սեպտեմբերի 14[67] և երկրորդ օր պահոց վերացման խաչին, դարձեալ ելանէ ի պատերազմն ընդդեմ զօրացն Պարսից, ի մօտակայ լեառն Կոճօռ և ի Կրծանիս, և զի եղանակն աշնան էր և մէգն պատեալ զօդն. և մինչդեռ ոչ կարէին նշմարել երկոքին կողմունքն զիրեարս՝ երկիւղիւ մարտնչէին, այլ իբրև ի բաց փարատեցաւ շամանդաղն և երևեցաւ սակաւութիւն զօրացն վրաց՝ զրոհեաց ամենայն զօրն պարսից մեծաւ աղաղակաւ ի վերայ, և իբրև փոթորիկ զսակաւ ինչ խուիւ պատուտեալ զզօրս վրաց անցեալ ի պատնիշաց թափեցին ի քաղաք անդր. Բայց և Մէճլում վերոյիշեալ մէլիքն Արցախու առեալ զգունդ մի ի զօրացն պարսից և ի յետուստ յարևմտեան կուսէ քաղաքին ի վերայ Սօլօլակ բլրոյն դիմէ ի վերայ քաղաքին, զոր տեսեալ Հերակլեայ դառնայ ի փախուստ թողլով զյղփացեալ վայելչութեամբ քաղաքն Տփխիս բազմամարդ քրիստոնէիւք աւար արեան ծարաւի զօրացն պարսից, որք և մտեալ իբրև զգայլ ի հօտս դառանց ոչ յագենային արեամբ փողոտելով զանմեղս քրիստոնէից, և զի աղէտալի է ժամս, և ոչ զօրեն միտք իմ բանիւ պատկերացուցանել զանհնարին ցասումն, զոր էած տէր ի վերայ հօտին իւրոյ փոքու, զի մինչդեռ հնչէին զանգակք յեկեղեցեաց քրիստոնէից՝ և ձայն պաղատանաց ուխտին քրիստոսեան որպէս ծուխ ծառանայր յերկինս տարածեցաւ ծուխն Բաբելոնեան հնոցին ի վերայ սգալի քաղաքին, վասնորոյ լռեցին ձայնք զանգակաց, և բարձրացաւ բողոք աղաղակին։ Համբացան փառաբանիչք աստուածատանց՝ և ճիչն գուժեաց մարց և մանկանց, անմռունչ աղօթկրութիւնք սրտի և մտաց խամրացան և անմեղ ստնդեայք օրօրոցաց զնոյն կականեցան։

Ոհ, Տէր՝ բաւ արարեր զհօթանասուն ամ գերութիւնն Իսրայէլի ի Բաբէլոն, ներողութեամբ ծածկելով զամենայն մեղս նոցա. ահա քո ամենատեսաչաց առաջի է ամք 1172 տառապանաց մերոց, որ ուտէ սուրն իսմայէլեան զանմեղս հօտիդ ամբիծ արեամբդ գնեցելոց։ Ուրեմն դարձ Տէր և մինչև ե՞րբ մխիթարեաց ի ծառայս քո։ Արդ՝ այսպէս և բիւրապատիկ քան զսոյն լուացին զքաղաքն ծաղէ ի ծագ ապաժուժ արեամբ քրիստոնէից. և զկնի ութ աւուր սպառիլ մարդկութեան հուր մատուցեալ քաղաքին և կիզեալ աղարտեցին զվայելչութիւն սրբոց եկեղեցեաց և ամարասուն ապարանից նորա. և որպէս զխանձող փայտի, որ զեռ ծուխն ելանիցէ, թողեալ զնա գնացին ի բաց։ Բայց զգերութիւնն անհամար ազգի կանանց և զքօղաւոր հարսնութեան, և գեղազարդ կուսից իբրև զհօտս անասնոց տրոհեալ ի միմեանց զդուստր ի մօրէ և զորդի ի հօրէ՝ վարէին մերկ և բոկ արիւնահոս արտասուօք զմիջահասս և զդեղազուրկս վաճառէին պարսից և հայոց՝ և օսմանցւոց ի մերձակայ քաղաքաց. իսկ զվայելչագեղսն տանէին ի Պարսկաստան և անդր քան զխորին Խորասան։ Այլ զթիւ կոտորածին և գերութեանն նա միայն գիտէ՝ որ զշունչ և զոգիս էր պարգևեալ նոցա։ Իսկ զկնի 25 աւուր աւերութեան քաղաքին դառնա Հերակլ անդրէն ի քաղաքն Տփխիս, գան ի վերայ և սինքլոր փախստեայք և սուգ առեալ ի վերայ սևազգեաց քաղաքին՝ լային աղիողորմ աղէտիւ զանտանելի պատուհասն՝ զոր ած Տէր ի վերայ նոցա։ Իսկ ինքն Հերակլ՝ կեցեալ այլ ևս երկու ամ յետ գերութեան քաղաքին մեռանի հեծութեամբ՝ թագաւորեալ ամս (45)։

«Կռունկ հայոց աշխարհին» 1862, թիվ Դ, էջ 283—286։

Բ

Առումն անառիկ ամրոցին Արցախու ի ներքինի Աղա-Մամատ շահէն Պարսից

Կատարեալն չարահնարութեամբ ներքինի Աղա-Մամատ շահն Պարսից, իբրև եռես, թէ ի գլուխ ել խորհուրդն, զոր խորեցաւ վասն Տփխեաց քաղաքի, և ամենայն յոյս իշխողացն Արցախու և Երևանու հատաւ, դարձաւ ի Թիֆլիզու ի Գանձակ, և անտի դիմեաց ի վերայ անառիկ ամրոցին Շուշւոյ, առաքեաց և զեղբայրն իւր զԱլիղուլի սարդարն ի վերայ Երևանու, որ եկեալ զրաամբ էած զիշխօղն նորին զՄամատ խան, և առաքեաց առ ներքինի շահ եղբայրն իւր ի Թէհրան և զի ինքն ներքինին ոչինչ կարաց սասանել ամրոցին Շուշւոյ, ոչ զօրութեամբ զօրաց և ոչ ուժգնութեամբ մեքենայից։ Զի դղեակն Արցախու արտաքոյ ունի զամրութիւն այսց պատերազմական սահմանաց. վասնորոյ խորհեցաւ զի սովու նեղացուցեալ զաշխարհն, առցէ զայն. և զի յառաջին մուտն նորա աշխարհն Արցախու յաւուրս հնձոց էր, և զօրն ապականեալ էր զցորեան ամին և իբրև աւերեաց Տփխիս և դարձաւ կրկին ի վերայ Արցախու, եղանակն աշնանային էր և աւուրքն սերմանելոյ. ոչ ոք կարաց ելանել յամրոցէն զի սերմանեսցէ զերկիր վասն առաջիկայ ամին մինչև էանց ժամանակն սերմանելոյ. ապա ել անտի ներքինին և չոգաւ ի Թէհրան։ Ապա ի 1244 (1795) թուին և ի մայիսի հրաման արար իշխողացն Խօյու՝ Երևանու և Նախիջևանու, զի դիմեսցեն զօրու ի վերայ Արցախու և աւերեսցեն զնա որքան և կարասցեն. որք և գնացեալ յաւուրս հնձոց արարին ըստ սրտի նորա և զբաղում գերիս և քրիստոնէից ածեալ վաճառեցին օսմանցւոց։ Յաղագս որոյ ծանրացաւ սովն ի վերայ աշխարհին Արցախու, մինչև մարդկութիւնն եղև իբրև զանասուն խոտաճարակ, որք և ի յեղանակի գարնան իբրև զնախիր ելեալ յանդս՝ ուտէին զխոտս զի մի մեռցին, և այն լինէր նոցա կերակուր մահու. վասն զի աղիք նոցա ապականիւր և ուռուցեալ սևանային և անկեալք յանկարծակի մեռանէին։ Եւ ի նահանգն Խնձորիս անկան ամենեքեանքն ախտ ինչ մահաբեր ցաւոյ, զի հիւանդն այնքան մաշիւր մինչև որ ոչ երևիլ միս և մորթ բնաւին, և բոլոր օդուածի ոսկերացն մի առ մի թուոյր ի զարհուրումն տեսողաց. և այսու ցաւօք ախտացեալքն զմիս անասնոց իբրև զգազան ուտէին անյագութեամբ և ապա մեռանէին։ Բայց իբրև կարի սաստկացաւ սովն և մահն՝ սկսաւ յաշխարհն փախչիլ համդէպ երեսաց իւրոց ի յԵրևան, ի Գանձակ, ի Նախիջևան, ի Խօյ, ի Վան, ի Պայազիտ և յայլ տեղիս։ Այլ զի հրաման ներքինւոյն ծանրացաւումն էր ի վերայ բնակչաց յաշխարհին Արցախու, վասնորոյ և զանթիւս ի նոցունց փախստէից գերեցան ի ճանապարհի և կոտորեցան սրով յանօրինաց, մինչև սովորեալք ոմանց անզգամաց անուամբ միայն հայոց ի տեղիս տեղիս ճանապարհի ծածկաբար գերէին և վաճառէին օսմանցւոց և այլոց անօրինաց. մինչև չմնալ բազմամարդ աշխարհին Արցախու երկրորդ մասն մարդկութեան։ Իսկ ի 1245 (1796) թուին, եհաս ինքն ներքինին անթիւ զօրօք ի սահմանս նոյնոյ յաշխարհէն զոր տեսեալ Իբրէհիմ խանին Շուշւոյ՝ թէ այլ ևս ոչ կարէ պատերազմաւ զդէմ ունիլ վասն սովու և աւերածութեան աշխարհին իւրոյ փախուցեալ ապաւինի Յօմէի խանն[68] լէզկեաց. վասնորոյ և ներքինին առանց արգելառթի գայ մտանէ յամրոցն Արցախու. և արկեալ զձեռն առ յոմանս իշխանս առնէր զնոսա դոյաթափս ընդ որս և զմէլիք Ջիմշիտ զորդին մէլիք Շահնազարի[69]։ Եւ լինելն անդ ի 25 աւուրս խորհէր դարձեալ դիմել ի վերայ քաղաքին Տփխեաց, և մինչ դեռ յածիւր չարահնարն ի խորշս դժոխոց սրտի իւրոյ՝ յարեան ի վերայ երեք սեննկապան ծառայք նորա, և չարամահ սատակեցին զնա յամրոցն Շուշւոյ, զոր տեսեալ զօրացն ցրուեցան յաշխարհէն, և այսպէս բարձեալ եղև աւերիչն եկեղեցւոց և թշնամին խաչին։ Բայց և յոյսն տարաշխարհիկ ցրեալ ազգիս Հայոց՝ զոր ի հեռուստ վայրաց իբրու դիտակամբ հայէին յայս աշխարհ յաղագս բազմախումբ քրիստոնէութեանն

և զինու զօրութեան նոցա[70]. այն ևս էանց իբրև երազ խոր գիշերոյ՝ կամ պղպջագ ինչ կաթուածոյ ըստ Շնորհալւոյն բանի։

«Կռունկ հայոց աշխարհին» 1862, թիվ Դ, էջ 287—288։

20

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

14 փետրվարի 1797 թ.

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Գալուստ վարդապետն ի պատասխանի թղթոյ նորա ի նոյեմբերի 15 գրելոյ...

...Բայց որ յառաջագոյն գրեցաք թէ մեր խանի նազիրն ի գնալն առ շահն զծանրագոյն պահանջմունս արար ի մենջ յընծայ շահին և մեք պատասխանի ետուք մեղէն գնալ առ շահն և այլն, ուստի և ի սաստիկ կասկածի էաք, թե ո՞ գիտէ ի դառնալն զինչ ցաւս է բերելոց մեզ. նա ի գնալն անդ երես չէր գտեալ և չկարացեալ ինչ ասել, վասնորոյ վրիպեալ ի յուսոյն՝ ունայն դարձաւ։ Սակայն յետ գալոյն նորա, հաճի Իբրահիմ խանն Շիրազու՝ որ է երկրորդն շահին, թուղթ մի էր գրեալ առ մեզ յուսադրութեամբ թէ շահն ի վերա Ձեր շատ խնամս ունի. և ես բարեկամ եմ Ձեզ և հոգացող բանից ձերոց՝ զոր ինչ խնդրիցեք, անտարակոյս լեր. և բարւոք լինի որ Ձեր մարդն գայ ի սպաս շահին, և այլն։ Զսոյնպիսի ինչ ևս Ջաֆար-ղուլի-խանն էր գրեալ՝ որ մեծաւ շքով առաքեցեալ գայ սարտար ի Թավրեզ։ Ապա Երևանու լիրքն ԳՃ թումանի չափ դրամ պահանջեցին յողորմելի գիւղացւոց մերոց՝ թող զմաղթայն[71], և թող զայլևայլ պահանջմունս, որոյ աղագաւ գնացաք յԵրևան, և ի խօսիլ ընդ խանին՝ նա բաշխեաց. իսկ նազիրն զԱՃ թումանն միայն եթող՝ և զայլն պահանջեաց. և որչափ ինչ զլխացաւութիւն կրեցաք, օգուտ չեղև։ Վասնորոյ հարկաւորեալ մեր զչափաւորը ընծայս պատրաստեցաք և ձեռամբ Դաւիթ և Յովհաննես վարդապետացն յղեցաք առ շահն և արզս գրեցաք կարևոր խնդրուածովք։ Ունիմք զյոյս մեծ ի բարի ակնարկութենէն Աստծոյ զի քաղցրացուցէ սիրտ բռնաւորին՝ որ զխնդիրսն մեր անտես չարարեալ սաստեսցէ երևանցւոց՝ ձեռն քարշել ի մենջ։

Եւ զհիւսիսայնոցն այսչափ որ ի Շամքորայ բանակատեղէն յարուցեալ՝ մեծ մասն էջ առ եզր կրկին հոսանացն. և փոքր մասն եկեալ ընդ բռամբ ածին զԳանձակ, և գունդ կարգեալ ի դղեակն, անցին ի Տփխիս, գոլով ընդ նոսա և անցին զինուորն Ճ (որոց բամբշին զվճարն ևս ի հարկէ լուեալ եք)։ Առ այն և շահն ի մեծի պատրաստութեան է, որ սակս և այժմ կրկին ԺԶ (16) թնդանօթս և Դ զօմբարայս և Ռ գնդակս է խնդրեալ տանիլ ի Դավրէժ, ուր և ինքն ի գարնանամտին իւրեանց գալոց է ճակատել ընդ յարուցելոցն։ Խնդրել է և խանն մեր Ռ հեծելովքն երկրիս։ Առ որս, եթէ յորպիսի տառապանս կան բնակիչք երկրիս, խոհեմութեամբ կարես իմանալ։ Նարդենիս սուրբ տունս և մեք կամք միայն խնամոցն Աստծոյ ապաստան։ Ի վերջոյ հարկադրեմք զմտերիմ սիրելիդ՝ մի իբրև զառաջինն, այլ որպես ի մոտ ժամանակս առնես, սոյնպես յամիսն միանգամ զորպէս ծանոյց թուղթդ համառօտ մի պակասեցուսցես ի մենջ. որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զքէն, որում տէր տացէ կարողութիւն և զօրութիւն և գործոյդ բարեյաջողութիւն։

Գրեցաւ ի ՌՄԽԶ 1797, թուոջս և փետրվարի ԺԴ ի սուրբ Աթոռ Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 406—407։

21

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՆԵՆՑԻ ՆԱՄԱԿԸ Հ. ԱՐՂՈՒԹՅԱՆԻՆ

25 փետրվարի 1797 թ.

Արժանապատիւ Հայր, ողորմած և բարերար Տէր իմ։

Ո՜հ ցաւոյս՝ ո՞ր լեզու կարէ ճառել զաղէտ ծառային քոյ, և կամ ո՞ր գրիչ կարէ զօրել նկարել ի քարտիզի զամենայն զցաւս հոգւոյս, ի յայտնութիւն բարերարիդ իմոյ, քանզի յաւելեալ ընդ չափ իմոց անօրէնութեանց աստուածասաստ բարկութիւնն տեղաց ի վերա երկրի այս մերում և մինչ առաջնորդեալ ումանց շնորհացն աստուծոյ ելին ի քաղաքէս և զերծան ի լերինս, մեզք իմ յոգնաթիւք փակեցին զաչս մտացս և յամառեալ մնացի աստ, սպասելով սայլիցն առ ի ապրանօք զերծանել աստի։

Մինչ կայի այսպէս վտարանդութեան լցան հէնք պարսկականք ի քաղաքն և փախուցեալ զարքայն մեր ծերացեալ ի պատճառս չունելոյն զզօրս յաւարի ետուն զամէնն, որ ի սմա, և զիս ընդ այլոց բազմաց մեծատանց և աղքատաց գերեցուցեալ ամենայն ընտանեօքս, ի յետին կէտ թշուառութեան հասուցին, զօրութիւն և կարողութիւն լումայի միոյ ոչ թողլով յիս, որ և մեծ տառապանօք չոգայ ընդ զօրացն ի Գանջայ, առ ի ազատել գոնէ միայն զքոյրս, զի մի և զքոյ սրտի գութն բարձից յինէն, և առաջնորդեալ տեառն աստուծոյ, ազատեցի զսա ի պարսից դնելով ի պահեստի առ հայս տեղւոյն և, վերադարձեալ անտի աստ ի քաղաքս, ընկալայ զշնորհ սորին բարձր սրբազնութեանն որ ի Մօզդոկու գրեալ էր առ եղբօր որդին իւր առ իշխան Սօլօմոնն, հասուցանել ինձ եօթանասուն և չորս բաջաղլի, որով և ազատեցի զքոյրս վերստին երթեալ ի Գանջայ և բերի աստ ի քաղաքս, տարի և կէս է մինչ աստ առ իս է։

Նստեալ երկուքս միայնակ զցայգ և զցերեկ ոչ դադարեցուցանեմք զաչս մեր ի յարտասուաց, իսկ զԱստուածատուրն ազատեալ էր համադանցի մահտեսի Յօհաննէսն, որ ի Թաւրէզ ընդ նմին և զամուսին իմ միով դստերովս, ի լսելն զանուն ձեր, թէ ձեր են այն գերիք, որոյ և գրեալ էր առ Տէր Շմաւոնէնց պարոն Ստեփանն յայտնել մեզ և ստուգեալ զայն տրեցաւ փոքր ինչ ուրախութիւն տառապակիր մերոյ սրտի։

Արդ աստուածազօր զօրացն ռուսաց անցեալ ընդ Դարբանդ և ընդ Շրուան սորին բարձր սրբազնութիւնն եկն ի քաղաքս յայցելութիւն տառապեալ ազգին հայոց, որ ի կողմունս, ի ձեռն աստուածազօր զօրացն և այժմ գրեալ առ վերոյ յիշեալ պարոն Յովհաննէսն, վասն Աստուածատուրին, թէ առաքեա զտղայդ զգին զորա զհինգ հարիւր ռիալն ես հատուցից՝ ում և գրեսցես։ Սպասեմք օրաւուր Աստուածատուրին գալստեանն, իսկ վասն Շուշանին ես նոյն պարոն Յովհաննէսն գրէ, թէ ի Քաշան է, վասն որոյ ես սրբազանն գրեաց առ նա, զի անտի առաքելով զմարդ ի Քաշան ազատեսցէ զնա և տացէ բերել առ ինքն, և ընկալեալ զնորա գինն ես առաքեսցէ աստ։

Եւ զիմոց գերեանց ոչինչ կարելով հոգալ, զի տացից անտի բերել հաշիմ և մաշիմ, քանզի կարելի գին ես ոչ խնդրեն, զերկուսն մինչ ցերկու հարիւր թուման գնահատեալ, վասնորոյ և միրաւոր սրտիւ, գլուխ ի կոր շրջիմ աստ, և զութամեայ ուստերէս զոչինչ գիտեմ, թե կամ ո՞ւր է և կամ ի ձեռս որոց։

Լսօղ Թշուառութեանս իմոյ այս կամ քարամբք պարտին զիս քարկոծել և կամ ողբալ միշտ զանձն իմ ընդ իս, զորդեկորոյս հայրս եռիտասարդ և զտարաբաղդ քեռէն քումմէ Մաթօյէն զի՞նչ ասացից, որոյ զայրն սպանեալ, ինքն է ի գերութեան ի Կարս ի ձեռս տաճկաց, որում և զոչինչ կարելով օգնելով, աղաղակ նորա ես մաշէ զոսկերս մեր։

Զկնի կործանման քաղաքիս և մերոյս Թշուառանալոյ, չորիցս ծանուցեալ եմ Թղթով Ձերդ արժանապատուութեան, զտարաբաղդ կացութիւն մեր և ոչ գիտեմ հասեալ է թէ ոչ։

Արդ՝ բարձրեալ ի մէնջ ամենայն մխիթարութեան և յուսոյ՝ քեզ միայնակն ունեմք ծագել զլոյս յաչս մեր և յուրախութիւն ի սիրտս մեր, քով գալստեամբ, որում տէր արժանի արասցէ առ ի փարատել ի մէնջ զսուգ և զտրտմութիւն։

Ողորմած և բարերար տէր իմ արժանապատուութեան քում, ամենախոնարհ ծառայ, Յարութիւն Ստեփանեան Նօնէնց։

1797 ի փետրվարի 25, ի յաւերակացեալս Թիֆլիզ։

Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 6, վավ. 107։

22

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՅՍՐ ՊԱՎԵԼ I-ին

20 հուլիսի 1797 թ.

Թուղթ առ Պաւլ Պետրովիչ կայսրն ռուսաց ի շնորհաւորութիւն կայսերութեան և ի խնդիր, զի որպէս Մայրն իւր Կատարինէ կայսերուհին հրովարտակ էր շնորհեալ Սիմէօն կաթուղիկոսին[72], նոյնպէս և ինքն շնորհեսցէ մեզ խաչապսակ այժմ։

Խաչապսակ Պաւել Պետրովիչ մեծի կայսեր Ռուսաց Թագազնեաց կայսերուհւոյն։

Ալեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին համայնից օրհնեալ ժառանգորդացն կայսերութեան։ Որոց լիցի խնդալ ի Քրիստոս։

Եւ ընդ մատուցման ողջունիս սրբոյ և օրհնութեանս ի խոնարհ դիմաց մերոց յայտարարութիւն լիցի առ սպասու բարձրագահ Աթոռոյ Ձերումդ գերամբարձ Տէրութեան։ Քանզի սրբազան առաքեալ Պօղոս, զոր այլոց բարեգործութեանց առաջին դասելով գրէ, աղաչեմ. նախքան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց և իշխանաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածապաշտութեամբ և սրբութեամբ զայս հոգեշունչ աւանդութիւն և մեք ընկալեալ ի հոգիս մեր՝ կարեւոր գիտեմք աղօթս առնել վասն տերաց։ Բայց քաղցրահայեաց ակն բարերարին ցասմամբ իմն հայեցեալ առ Հայաստանեայս վասն մեղաց մերոց մատնեաց զազգս մեր և զաշխարհ ի ձեռս Թշնամեաց մերոց անօրինեաց խստաց, յորոց խռովութիւնքն քան թէ խաղաղութիւն, և չարիք քան թէ բարիք յառաջանան միշտ։ Որով և կատարին առ մեզ ամենայն սպառնալիք մարգարէիցն, զոր խօսեցան յերեսաց Տեառն առ ազգին Իսրայելի։ Զի ահա զբազումս ի սուր մաշեն, և զայլս ի գերութիւն վարեն, և զմնացորդսն ի դառն ծառայութիւնս ունին կապեալք յաղքատութեան որպես յերկաթս։ Եւ զայս առնեն ընդ մեզ, նախ զի ոչ ճանաչեն ճշմարտութեամբ զԱստուած, և ոչ միածին որդի նորա զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և երկրորդ՝ զի խորամանկ անուամբն յատկացեալք, որպէս թուի՝ ժանտաժուտք են քան զհամօրէն ցեղս այլազգեաց. տիրօղք խարեբայք, իշխանք գողակիցք գողոց. և հարկահանք ճռաքաղարարք ըստ բանիցն Եսայեաց։ Որոց և ոչ գոյ փոփոխութիւն ի լաւ անդր, որպէս և չէ հնար եթովպացւոյն փոխել զմորթն և ընձուն զխայտուցն։ Եւ զի այսպէս իշխողք մեր ոչ են իբրև զտեարս, այլ Թշնամիք անձանց մերոց և ապստամբք յԱստուծոյ մերմէ. ուստի չէ արժան մեզ վասն սոցա աղօթել

որպէս և չէ պատեհ առ Թագաւորք բարեխօսութիւն յաղագս քրէական մեղուցելոց, այլ կայ սակս այսպիսեաց ասելն Դաւիթ, թէ ըստ գործոց անօրէնութեանց նոցա հատո նոցա։ Ապա այսր աղագաւ, յետ բարձման Թագաւորութեան յազգէս մերմէ՝ սահմանեցաւ յեկեղեցիս յաւուրն երիցս և չորիցս անգամ ժամերգութիւնս վասն Թագաւորաց քրիստոնէից և իշխանաց բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին աղաչել զՏէր, որ մինչև ցայսօր անխափան կատարի ըստ Առաքելական պատուիրանի։ Բայց առաւել ես պարտական գիտեմք զմեզ աղօթել վասն Ձերոյ Աստուածահաստատ Թագաւորութեան, որ մերձակայ գոլով ի սահմանս վշտակոծ աշխարհիս հայոց միշտ ողորմած և խնամածու է եղեալ ազգիս մերոյ։ Քանզի որք միանգամ դիմեալ են ի հայկազանցս առ ծայրածաւալ երկիրդ այդ ի հովանի բարեխնամ Թևոց ամենահզօրդ կայսերութեան, մանաւանդ յաւուրց անտի երանելի և յաւիտենական փառօք արժանաւոր Մեծէն Պետրոսի կայսեր մինչև ի ժամանակս գերերջանիկ և ամենահանդէս Մօրն ողորմութեան բարեյիշատակ մեծի կայսրուհւոյն Եկատերինեայ երկրորդի՝ գտեալ են զառատաձեղ շնորհս մարդասիրութեան, և զապահովութիւն կենաց իւրեանց։ Ի նոյն շնորհ խնամոց վստահացեալ նախնեաց Պատրիարգին մերոյ վստահացեալ նախնեաց պատրիարգին մերոյ Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին՝ գրեաց ի սպաս նորին բարձրագոյն կայսերութեան զթուղթ աղէրսանաց յամի Տեառն 1766. և նորին քաղցրագութ կայսերական մեծութիւն շնորհեաց նմա զնամակ ողորմութեան հրաշատեսիլ մեծ կնքովն. յորում և ամենաողորմածաբար պատուելի կոչէ զազգս հայոց։ Եւ այն հրովարտակ տեղի գտեալ ի վերայ մերոց կայ մնայ ի սուրբ Աթոռոջս արձան մշտնջենական յիշատակի բարերարութեան նախատրեալ Մօրն ողորմածագունեղի։ Ըստ որոյ անեղծական հրամանի և նոյն պատրիարգն մեր առաքեաց ի սրբոյ Աթոռոյս նախ զՄինաս արքեպիսկոպոսն ի յայցելութիւն ժողովրդեան մերոյ ընդ աստուածապահ տերութեամբ Ձերով եղելոց. և յետ այնորիկ զՅովսեփ արքեպիսկոպոսն առաքեաց, զոր և մեք ի յաջորդելն մեր զսուրբ Աթոռս՝ վերահաստատեցաք զնա ի յառաջնորդութիւն, որ տակաւին կալով ի յօրհնեալ երկրիդ ոչ միայն զառ ի մէնջ ինքեան հաւատացեալն հոգևոր տնտեսութիւն վարէ, այլ և ի բարձրահրաման կայսրութենէն հրամայելոց իրականութեանց ինչ ևս գայր ի կէտս։ Եւ ի միասին Առաջնորդն ընդ ժողովրդեանն վայելելով ի խնամս այդմիկ Տէրութեան գոհանան զԱստուծոյ, և հանապազ շնորհակալութեան բանս գրեն առ մեզ։ Ուստի և մեք օրհնաբան և գոհանակ լեալ՝ ըստ առաջադրութեան սրբոյն Պօղոսի առնիմք աղօթս և խնդրուածս վասն քաղցրագունի և հասարակաշահի այդր Տէրութեան, որոյ ի բարեկարգ կառաւարութենէ մերազնեայքդ խաղաղութեամբ վարեն զկեանս։ Այլ արդ զի երջանկափառ Մայրն զթաշատ Մեծ կայսերու-

հին փոխեցեալ ի գլխոց մերոց եթող զմեզ իբրև զորբս և զուրկս ի մայրենի խնամարկութենէն, եկն ի վերայ մեր սուգ Թաղծութեան, և տարակուսութիւն անհնարին պաշարեաց զմեզ։ Բայց որ մխիթարեն զսիրտս՝ մխիթարեաց զմեզ աւետաւոր համբաւով հարազատիդ նորին ժառանգի ամենավայելչաբար գահակալութեան, և ի սրբոյ հոգւոյն օծութենէ պատրաստութեան։ Որով փարատեալ մեր զսուգ և զտրտմութիւն, ի ձայն ցնծութեան փառաւորեցաք զանմահ Թագաւորն, որ ի գոլն բնութեանս վիճակեալ մահկանացութեան, յարուցանէ միշտ ժառանգս Աթոռոց, որ և իրով նախասահման տեսչութեամբն յառաջագոյն ընտրեալ և պատրաստեալ զընտրելագունեղ Տերդ կացոյց ի ժառանգութիւն զգերփառունակ կայսերական Մեծի Աթոռոյդ, ըստ Առաքելեան թէ՝ որք են յԱստուծոյ կարգեալ են։ Արդ՝ յիրաւի ըղձալի էր հոգւոյս այժմ ինձէն իսկ գալ յողջոյն լուսացնցող սուրբ դիմաց վեհանձնութեան Ձերոյ, և ի շնորհակալութիւն Աստուած արարեալդ կայսերութեան, սակայն տկարութիւն ծերութեանս և վտանգն անտերունչ թողելոյ տանս սրբոյ ի մէջ անօրինաց չարայուզից արգելս եղեն յօժարութեանս։ Ապա զայս թուղթն աղերսանաց մատուցաք ի սպաս հանդիսավեհութեան Ձերոյ բարձրագոյն Աթոռոյ, ձեռամբ յիշեցելոյ Յովսեփայ արքեպիսկոպոսին։ Որով խոնարհաբար շնորհաւորեմք զքրիստոսապսակեալ Թագաւորութիւնդ և զօգոստափառ կայսերութիւնդ։ Զոր Աստուածաշնորհ արասցէ յերկարաձգելով զանձին կեանս Ձեր յօգտակարութիւն աշխարհի և ի պարծանս հաւատացելոց. և զմեծազօր Տէրութիւն Ձեր ընդ ոլորտս տիեզերաց տարածեսցէ միշտ բարձր և յաղթօղ պահելով ի վերա ամենայն հակառակամարտից, և մանաւանդ թշնամեաց խաչին Քրիստոսի։

Եւ արդ զայսինչ հայցեմք ի գերամբարձ տէրութենէ Աստուածակացոյց խաչապսակ Պաւել Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց նախ՝ զի քաղցրագոյն խնամոցդ առատութիւն զոր աղբերաբար ծաւալեք ի վերա զազգի մերոյ ընդ հովանութեամբ գաւազանի Ձերոյ եղելոցն, զայդ անփոփոխ ունելով առաւել ևս աճեցուցանիցէք. և որպէս ամենաթագաւորն Աստուած զմիօրինակ խնամ ունի ի վերա ամենեցուն, ըստ բանի իմաստնոյն, նոյնպէս և Ձերդ Թագաւորութիւն որ պատկեր է նորա ի յերկրի համօրինակ ակնարկեսցէ ի հնազանդեալս Ձեր յառաջինսն և յետինսն։ Եւ երկրորդ՝ զի որպէս բարեյիշատակ երանելի կայսրուհին շնորհեալ է զնամակ ողորմութեան նախընթաց պատրիարգին սրբոյ Աթոռոյս՝ Տեառն Սիմէօնի, նմանապէս և Աստուածարարեալ օգոստափառ խաչապսակ Պաւել Պետրովիչի մեծի կայսեր Ռուսաց ամենաողորմածաբար պարգևեցէք մեզ զհրովարտակ Ձերովդ սուրբ և պատուական կնքով, զի որպէս յայլ տէրութիւնս եղելոց ազգին հայոց հոգևորական հոգաբարձութիւն ընդ մեզ է, նոյնպէս և յԱստուածապահ երկիրդ Ռուսաց գտանեցելոց

ամենայն մերազնէից ըստ հոգևորին կառավարութեան իշխանութիւն ընդ մեզ լիցի ըստ կանոնաց և աւանդութեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեաց խնամել։ Իբր զի որպէս այժմ սիրելի որդին մեր Յովսեփ Արքեպիսկոպոսն ի կողմանէ սրբոյ Աթոռոյս և մեր հովուէ զդոսա, նոյնպէս և յետոյ աստուստ ի մենջ և ի յաջորդացն մերոց կարգեսցի կամ առաքեսցի դոցա Առաջնորդ ի հոգևոր այցելութիւն։ Եւ այլ որոց կարգաւորաց յաղգէս մերմէ դէպ լիցի մտանել ի սահմանս օրհնեալ երկրիդ, մերովս վկայականաւ լիցի գալն։ Արդ կրկին աղաչեմք, մի անտես առնել զհայցուածս մեր, այլ տիրաբար գթաշարժութեամբ շնորհել զնամակդ ողորմութեան։ Կալ մնալ յԱստուածայնում սրբոյ գահիս մշտնջենաւոր յիշատակ ամենահռչակ սուրբ Անուան Ձերոյ ի պարծանս գլխոց մերոց։ Որով ես քան զևս պարտական դիցուք զմեզ՝ ըստ Առաքելեացն բանի առնել աղօթս, պաղատանս, գոհութիւնս վասն հասարակաշահ ամենատենչ կենաց, ամենատենչալի թագաւորեալ կայսերուհւոյ խաչապսակ Պաւել Պետրովիչի Մեծի կայսեր Ռուսաց և վասն զօրութեանց և յաղթութեանց ամենափառաւոր տէրութեանդ։ Նորագոյն աղետքն հասեալք Հայաստան աշխարհիս և որպիսութիւնքն սրբոյ գահիս և մերոյ վշտաւորութեան համարիմք թէ հիցեն անգիտելիք Ձերոյ երկնածիր իմաստութեան։ Այլ թէ լիցին ինչ հարցանելիք ի բարէգթութենէ Ձերմէ, սիրելի որդին մեր և հաւատարիմն տերութեան Ձերոյ Յովսեփ Արքեպիսկոպոսն գիտէ ճառել։ Ողջ լեր օծեալդ Տեառն՝ պարագայց ամօք ի բարձրութիւն սուրբ եկեղեցւոյ և ի բերկրութիւն ամենայն հաւատացելոց և ի մեր պարծանս մխիթարութեան, ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1797 և ի յուլիսի 20 ի սուրբ Աթոռս հայոց էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

(Ձեռագիր սրբազանին ի ստորև գրեալ է ինքնին զայսքան ինչ ձեռագրում աստանօր ի հաւատարմութիւն ճշմարտութեան ամենից վերագրեալ բանից թղթոյս. Քրիստոսի նուաստ ծառայ՝ և յաղագս մեծազօրի կայսերութեան Ձերոյ միշտ բարեխնդիր աղօթաւոր խոնարհ Ղուկաս կաթողիկոս ամենայն հայոց։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 408—409։

— 23

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

20 նոյեմբերի 1797 թ.

Թուղթ ի Պետրպօլք առ ազնիւ աղայ Յովհաննէսն Եղազարեան, վասն անցիցն կողմանցս և կրից մերոց, և վասն թուղթն գրելոյն մեր առ նոր

կայսրն ի շնորհաւորութիւն, և վասն Յովսեփ վարդապետին, որ գնար անդ ի դուռն ես ի յաղագս ի Դարբանդու նոր գնացեալ ժողովրդեանն յանձնարարութիւն, զի ընդ Յովսեփ վարդապետին հոգ տարեալ առաւել ես ի գութ շարժեսցեն առ նոսա զկայսրն և զգործակալսն։

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան, հանդերձ առատածաւալ շնորհօք միածնաէջ սրբոյ տեղւոյս և յամայն հրաշագործ սրբութեանցն, որք աստ ի վերա իսկապէս սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սուրբ Աթոռոյս Քրիստոսի զօրացեալ բարեծնունդ և բարեպաշտ՝ ճոխապատիւ և փառազարդ պայծառ պօլկովնիկ իշխան պարոն ազնիւ աղայ Յովաննեսիդ և օրհնեալ տան քում և ամենեցուն, որք քո են, ի տեր խնդալ։ Շնորհք։

Եւ ընդ աստուածային օրհնութեան սիրառաք նամակիս՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում, զի երկարագոյն ժամանակ եղև յորում կալոմ մնացաք սիրոյ թղթոյդ, որով ստանայք զմխիթարութիւն ինչ։ Մեզ ես չյաջողեցաւ գրել, որոյ պատճառն յայտնի իսկ է խռհականութեանդ, զի քանի անգամ եղեն յորմէ հետէ անօրէն և կատաղի բռնաւորին ներքինւոյ վնասագործութիւն ազդեաց ի կողմունքս։ Մինչդեռ ոչ էր եկեալ ի սպառնալեաց նորին և յապստամբութենէ թարմատար և անկատար իշխողին Մեք կրկերկրիս քանիցս վրդովեալ վնասեցաւ երկիրս ես պակասեցաւ։ Մեք կրկնապատիկ վնասակրութեամբ և վարանմամբ տաժանեցաք։ Եւ յորժամ եկն դառնաթոյն շնչովն յայսկոյս ի 1795 թւոյն մինչև ցայսօր տարւոյս յունիս ամսին գրեթէ շաբաթէ ի շաբաթ և յամսոյ ի յամիս չկարացաք երբեք թարց մեծամեծ վնասուց և հոգեմաշ կրից մնալ, թէ ի նորայնոց և թէ ի տորկահանգոյն երկրականացս։ Իսկ զյանդուգն աշխարհաւերութիւն նորա և զյափշտակութիւնսն, զգերավարութիւնսն և զսրածութիւնսն որպէս իցէ հնար մեզ ի սակաւատարած թղթի յայսմիկ պարագրել, այլ ի հարկէ փոքր ի շատէ լուեալ եք. և համառօտիւս զերկարագոյնն կարեք իմանալ Ձերով առատ խոհեմութեամբն։ Բայց ամենաողորմն աստուած, որ ոչ իսպառ անտես առնէ զարարածս իւր, ի վարանման ամենայն ումեք՝ և ես ի գութ շարժեալ առ մնացորդսն, յանակնկալ ժամու երարձ զչարն ի միջոյ, և մեք, յետ բազմաց վնասուց և վշտաց՝ զերծաք ի մահաշունչ բերանոյ վիշապին և ի ձեռանէ ժանտաժուտ և չքանալի եղբօր նորին, որ երիցս անգամ աստանօր գալն ես դառնացոյց զմեզ։ Տեր տացէ նմա հանիլ վճակի եղբօրն իւրոյ և պահպանեսցէ ողորմութեամբ իւրով զսուրբ Աթոռս՝ որպէս և պահեաց ի պարծանս օրհնեցելոյ ազգիդ մերոյ։ Այլ այդ զահս՝ որպէս և պահեաց ի պարծանս օրհնեցելոյ ազգիդ մերոյ։ Այլ այդ մինչ վարանեաք ի տագնապս տարակուսանաց յահէ չարութեանց բռնաւորին ի դեկտեմբերի վերջին աւուրսն, և յուսացաք յայդմ կողմանէ օգնութիւն ինչ ստանալոյ, լուաք զփոփոխումն ի կենաց աստի երջանկափառ ամենահանդէտ մեծ կայսերուհւոյն, և այն առաւել վշտացոյց զմեզ

քան զայլ ամենայն պատահմունս մեր։ Սակայն հետևաբար փութով էհաս և աւետաւոր համբաւն յաջորդելոյ զգահն կայսերական՝ աստուածաընտիր ամենօգոստոսափառ մեծի կայսերն Պաւել Պետրովիչի, որով մխիթարեցեալ և ուրախացեալ գոհացաք զաստուծոյ։ Ապա յետ այնորիկ կործանման բռնաւորին կողմանցս, մինչ սիրելին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն ի դառնալն ի Թիֆլիզու յայդկոյս՝ գրեալ էր մեզ, թէ դիմելոց է ի կայսերականդ դուռն և մեք պատկան գիտելով ահա գրեցաք զթուղթ շնորհաւորութեան և աղերսանաց առ նորին կայսերական գերամբարձ բարձրագահութիւն, և առ վէզիրն նորա քնեազ Ալեքսանդր Անդրեիչ Բեզպորոտկին[73] և յղեցաք ի ձեռս Յովսէփ գերզգօն արքեպիսկոպոսին բերել հասուցանել ի մայրաքաղաքդ, վասնորոյ գրեմք աղնւութեան քում՝ զի ի գալն նորա յայդր դարձեալ մեծաւ սիրով և յարգանօք ընկալցիս որպէս և յառաջին նուագն, և ի մատուցանելն զթուղթն մեր՝ զոր ինչ խօսելին իցէ, օժանդակելով նմա ի միասին խօսեսջիք, և զամենայն կրեալ ցաւսն մեր պատմեսջիք և խնդրեսջիք յողորմածութենէ նորին կայսերական մեծութեան՝ շնորհել մեզ զհրովարտակ ողորմութեան. որպէս և հոգելոյս երանելի մեծ կայսերուհին շնորհակալ է տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին[74]։ Նաև վասն ի Դարբանդու նոր եկեալ ժողովրդեանն մերոյ ես որչափ կար ձերէ՝ հոգ տարջիք և ջանասջիք զողորմութիւն գտանել, զի իմացաք որ Քրիստոսասպասեալ ինքնակալ մեծի կայսերն Պաւել Պետրովիչի յինքենէ իսկ քաղցրացեալ առ նոսա խոստացեալ է առաւելապէս բարերարել նոցա։ Վասնորոյ սրտագին եղեալ մեր հանապազ աղաչեմք զաստուած վասն կենաց և յաջողութեան նորին մեծի կայսերն Պաւել Պետրովիչի և երջանկափառ պսակակցի նորին թագուհեայ կայսերուհւոյն և կայսերազուն թագաժառանգ զաւակացն Ալեքսանդր Պաւլովիչի և Կոստանդին Պաւլովիչին և այլ ժառանգորդաց կայսրութեան, որոց տեր աստուած տացէ զերկարութիւն կենաց և զգերազանցութիւն փառաց, օրհնելով զտերութիւն իւրեանց և տարածանելով ընդ ծագս աշխարհի և միշտ բարձր և ահարկու պահելով ի վերա հակառակամարտից և մանաւանդ թշնամեաց խաչին Քրիստոսի և քաղցրագոյն խնամս նոցա աննուազ պահեսցէ ի վերա ազգի մերոյ և յատկապէս ի վերա աղնուագոյն սիրելւոյդ։

Արդ թեպետ և վաղագոյն երբեմն գրեալ էիր, թե պատճառաւ տկարութեան իւիք անձեռնահաս եմ ի թուղթ գրել առ որ աւելի իմնէ ստիպելս, սակայն այժմուս յետ հոգ տանելոյդ գրեցելոցս, եթե զպատասխանի թղթոյս ես գրեցես ծանուցանելով զբարեկեցիկ ողջութիւնէ քումէ և զյաջողութենէ բանիցս ի մխիթարութիւն բազմավարան սրտի մերոյ առաւել ես շնորհակալ լինելոց եմք զբարեպաշտ սիրելւյդ։ Զոր ամենազօր ձեռն Քրիստոսի զօրացուսցէ միշտ և ի խնամս իւր պահեսցէ հան-

դերձ ամենայն քոյայնովքդ, փրկելով ի փորձութեանց և ընաւից իրաց ձերոց զյաջողուածս բարիս տալով։

Զերկարագոյնսն պատմութեան անցից մերոց և ներկայապէս կացութեան սրբոյ աթոռոյս և կողմանցս թողումք ի սիրելւոյն մերմէ ի Յովսեփայ աստուածիմաստ արքեպիսկոպոսէն իմանալ։

Ողջ լեր ի տէր փառազուարճ կենաօք։

Ամէն։ Գրեցաւ յամի փրկչին 1797 և ի յուլիսի 20, ի սուրբ աթոռս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 409բ—410ա։

24

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԵՐԱԿԼ II-ին

30 հունիսի 1797 թ.

Թուղթ առ Հերակլ արքայն ի պատասխանի թղթոյն վասն բարձման աշխարհաւէր ներքինի աղա Մահմատ խանին։

Յորմէ սիրով և կարօտիւ սրտի և անձկութեամբ հոգւոյ ժամանեսցէ քրիստոսաձիր ողջոյն և օրհնութիւն բարձրապատիւ սիրելւոյդ մերոյ գերաղձալւոյ և սեպհական բարեկամի սրբոյ գահիս տէրութեան, աստուածասէր և բարեպաշտ, իմաստախոհ և քաջաբախդ մեծի արքայիդ Հերակլայ։ Որոյ պատուականութեան գիրն սիրոյ և ուրախակեցութեան ի ձեռն հաւատարիմ ծառայիցն ձեր Ութրութ բէկին և մէլիք Շաքարօյին էհաս առ մեզ։

Եւ նախ իմացեալ զհասարակաշահ առողջութիւն աստուածապահ անձինդ, ընթերցաք և զաւետալից բանսն, որ յաղագս բարձմանն ի միջոյ և ի կորուստն յաւիտենից կործանելոյ անօրէն և ժանտ աշխարհաւէր բռնաւորին ներքինւոյ։ Առ որ սքանչացեալ ի վերա հրաշալի խորհրդոցն աստուծոյ, ասեմք զհոգեբերգողին, թէ մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ոչ գոյ բաւ։ Քանզի արդարև որպէս բարեխրատ հայր զարթուցեալ ի վերա ստահակութեան որդւոյս՝ առեալ ի ձեռն զգժնիկ գաւազանն էհար նովաւ զանօրէնութիւնս մեր և տանջանօք զանիրաւութիւնս մեր, բայց զողորմութիւն իւր ոչ իսպառ արգելեալ ի մէնջ՝ խորտակեաց զգաւազանն փշրելի և որդւոցս խրատեցելոց պարգևեաց զլոյս կենաց և մխիթարութեան։ Ուստի և ճշգրտապէս կատարեալ ցուցաւ առ այժմ բանն այլոյ մարգարէի՝ քաղցր է տէր որոց սպասեն նմա յաւուր նեղութեան.

վասնզի մինչ հատաւ յոյս մեր յամենայն ուստէք և կասկածանօք վերջին վտանգից պատեալ պաշարեալ նմա միայն սպասեաք յաւուրս բազմապատիկ նեղութեանց, քաղցրացաւ բարեգութն առ վշտացեալքս, յեղակարծ երարձ զչարն չարեաւ և կորոյս զամենայն խորհուրդս նորա, զորս յղացեալն էր առ ամենայն ոք և ազատեաց զմեզ ի ժանեաց մահաբոյծ վիշապին և ի նորայնոց իժից և քարբից. այն՝ որ գիտէ յանակնկալն ժամու արուեստաւորել զփրկութիւն։ Ապաքէն գոհութիւն և օրհնութիւն ամենազօր բարձրեալ անուան նորա և բարեգթութեան սուրբ կամաց նորին, որ և ցայժմհետէ փրկեսցէ զամենայնսն հաւատացեալքս յայնպիսի դժնախորովայն գազանաց և ի Ներինն կարապետաց։

Եւ զի գրեալ էիր բարեկամական ցաւակցութեամբ զմխիթարութիւնս առ տաժանուտ կիրսն մեր շնորհակալ եմք զմեծութենէ Ձերմէ։ Յիրաւութիւն բազումս վշտացաք և զանչափ վնասս կրեցաք ի յերիս ամս, որք չէին տանելի մեզ, եթէ ոչ էր Քրիստոսի՝ տեառն մերոյ շնորհեալ մեզ զհամբերութիւն երկայնմտութեամբ տանիլ յաղագս պահպանութեան սրբոյ Տանս իւրոյ ի յաղարտմանէ։ Բայց վասն, որ քաղաքիդ պատահեցաւ Սրբոյ Աթոռոյս առ տարաբախտութեան մերոյ՝ հանդերձ աղէտիւք երկրիդ և գերութեամբն՝ գերազանց եղև քան զամենայն և անմոռանալի։ Եւ սակայն քրիստոսազօր արքայութեանդ կացցես ողջ և յաջողեալ առ ի բարիս. և բազմավրդով սասանութեանց երկրացս խաղաղութիւն պարգևեսցի յաստուծոյ և օրհնեալ ազգին մերոյ մնացորդացն անդորրութիւն լիցի. թէև ոչ ըստ առաջնոցն աւուրց, այլ ըստ ներկայիս և մեք սակաւուք կենցաղավարելով գոհասցուք զհանրախնամ տեսչութենէն աստուծոյ։ Գոյր ի թղթի մեծութեան Ձերոյ նշանակեալ և վասն սիրելւոյն մերոյ Յովսէփայ արքեպիսկոպոսին, թէ ի գալ կայսերական զօրացն ի քաղաքիդ, լինելով նորա ընդ նոսա մինչև ցայժմ սփոփիչ և յուսարաղիր է եղեալ կասկածակիր ժողովրդեանն և այժմ դարձ առնելով ի մեծահանդէս դուռն օգոստափառ կայսերութեանն, ունի զկարևոր օգտակարութիւնս յառաջացուցանել։ Վասնորոյ ասեմք, եթէ տէր լիցի նմա ուղեկից և յաջողեսցէ կարել զգիտեալսն ի կատարումն ածել։ Իսկ ի զրաւ բանիցս խնդրի ի մեծազօր մեծի արքայիդ Հերակլայ, զբնիկ բարեկամութիւնդ առ սուրբ Աթոռս և զքաղցրագոյն խնամսդ առ բարեխնդիր ձեր աղօթաւորս աննուազ առնել։ Եւ զայլ ամենայն որպէս մեր և անտերունչ երկրիս ի զրաբերացս քոյոց հաւատարմաց իմանալով՝ ողջ լէր պարագայց ամօք յերջանկափառ կեանս ի հրճուանս մեր և ի մխիթարութիւն, ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1797 և ի յունիսի 30. ի սուրբ աթոռս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 2922, թ. 33բ:

25

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՊԼԱՏՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հուլիս 1797 թ.

Թուղթ ի Մոսկով առ Պլատոն արքեպիսկոպոսն Ռուսաց[75], վասն սիրոյ, հանդերձ ազգարարութեաբ աղէտիցն մերոց, և յանձնարարութեամբ Յովսէփ արքեպիսկոպոսին։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթուղիկոս ամենայն Հայոց քրիստոսական և առաքելահաստատ եկեղեցւոյս Քրիստոսի և ծայրագոյն պատրիարգ լուսանկար աթոռոյս սրբոյ էջմիածնի։ Յորմէ միարար և սուրբ սիրով ամենասրբոյ հոգւոյն և եղբայրական կարօտիւ և բաղձանօք մատուսցի քրիստոսապարգևն սուրբ ողջոյն սիրեցեալ և գերագոյ եղբօրդ մերոյ և վաղնջական բարեկամիդ սրբոյ աթոռոյս Տեառնդ Պլատոնի սրբազան արքեպիսկոպոսի, և վայելչապատիւ վերատեսչի կայսերապերճ մեծի մայրաքաղաքիդ Մոսկովու և Կալուգու և սրբազնագունեղի Սինօդին օրհնեցելոյ ազգիդ Ռուսաց՝ արժանաժառանգ գահակալի, որում և գիտութիւն լիցի։

Քանզի միոյ և միայնոյ տիեզերական վարդապետին աշակերտեալքս անբռնադատ ենթարկեալք ընդ լծով նորին սիրոյ պատուիրանի, ըստ որում պարտական եմք զմիմեանս սիրելոյ ի լրումն ամենայն օրինացն պահպանութեան, վասնորոյ մտաւորական նկատմամբ որպէս սիրտ մեր տեսանեմք առկայացեալ զսէր ճշմարիտ առ ի սրբութիւն Ձեր, նոյնպէս և ի սիրտ ձեր տպացեալ իմանամք և այս երևելի նշանօք իսկ։ Վասնզի յաւուրս նախընթաց պատրիարգին մերոյ տեառն Սիմէօնի տեսանէաք զերթեկութիւն սիրայայտ թղթոցն Ձեր առ իրեարս։ Իմանայաք ևս ի թղթոց Յովսեփայ արքեպիսկոպոսին զատոյգ բարեկամութիւնդ առ սուրբ գահս Միածնաէջ և զառատութիւն սիրոյ և գթոյդ առ մերազնեայ ժողովուրդսն բնակեալս ի յաստուածապահ յերկրի յայդմիկ։ Ուստի՝ շնորհակալ եղեալ մեր զբարեհամբոյր եղբայրութենէ Ձերմէ, մեք ևս գրեցաք առ վսեմութիւն Ձեր զթուղթ սիրոյ և յարգանաց։ Եւ ցարդ ևս չէաք պակասելոց ի թղթագրութենէ, եթէ ոչ էին ընդդիմակայեալ մեզ աղէտք դառնագոյնք։ Քանզի արդարև ի քանիս ամս ժամանեցին մեզ և սրբոյ Տանս և ազգիս մերոյ հոգք և հեծութիւնք և վնասք բազմապատիկք, հանդերձ սրով և գերութեամբ՝ ի յարուցման անագորոյն բռնաւորի միոյ կատաղւոյ։ Եւ մինչ այնոքիւք ցաւօք հեծելով սպասէաք յայդրուստ մխիթարութեան, ընդհակառակն ընկալաք զգոյժ վճարման կենաց գերերջանիկ կայսերուհւոյն, որ գերազանցեալ զանցելովքն կրիւք՝ անբերելի թախծութեամբ ելից զսիրտ մեր։ Այլ գոհութիւն բարերարին աստուծոյ, զի հետևաբար փութանակի էհաս համբաւն աւետեաց գերարժանաբար յաջորդեցման ամեն-

օգոստափառ ինքնակալ մեծի կայսերն Պաւել Պետրովիչի, որով պատահեցաւ քուրձն տխրութեան ի մէնջ և զգեցաք զուրախութիւն։ Ուստի և առ կարևորն գոլոյ ահա գրեցաք զԹուղթ շնորհաւորութեան և աղերսանաց առ նորին կայսերական նորափայլ բարձրագահութիւնն։ Պատեհ վարկաք զայս սիրանիշ Թուղթ ևս առ պատուականագունեղ եղբայրդ մեր գրել ի յարծարծումն սիրոյ և ի յայտարարութիւն կրից մերոց։ Որով և խնդրեմք, զի զաստուածահաճոյ մարդասիրութիւնդ և զգութդ զոր ի բնուստ ունիս առ ազգ մեր ևս քան զևս աճեցուցես և զի սիրելի որդին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն դիմելոց էր ի դուռն կայսերական, ի հանդիպելն մեծարգութեան Ձերում, առաջնով խնամովդ ընկալցիս և զբարեբարելդ առ նա ըստ կարևորութեանց իւրոց մի խնայեսցես և զառ հոգեկից եղբայրս քո ունիցեալ զմաքուր սէրդ ևս անխզելի պահեսցես ի յարգումն պատուիրանի մարդասէր փրկչին մերոյ։ Որովք օգտեցեալ և մխիթարեցեալ մեր ի յազնուագութ եղբայրութենէդ՝ միշտ շնորհակալ լիցուք և գոհաբանք։ Որք և լրութեամբ միաբանութեան սրբոյ գահիս կամք աղօթաւորք առ աստուած վասն կենաց և փառաց ամենափառաւոր և մեծազօր ինքնակալ մեծի կայսերն Պաւել Պետրովիչի, զորոյ զերջանիկ և զհասարակօգուտ կեանս տէրն տէրանց յերկարաձգեսցէ ի հարստագոյն ամանակս օրհնելով և զօրացուցանելով միշտ հանդերձ պսակակցաւն իւրով Թագաղնեայ կայսրուհեաւն և կայսերազուն ծիրանածին որդւովքն իւրով Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին, և այլ համայն ժառանգորդօք կայսրութեանն։ Նաև եմք բարեխնդիր վասն ճշմարիտ բարեկամիդ ազգի մերոյ և աթոռոյս սրբոյ և իմոյ վշտալւոյս սիրառատ եղբորդ մշտացանկալւոյ։ Ողջ լէր ի Քրիստոս յոյսն ամենեցուն։

Գրեցաւ յամի տեառն 1797. և ի յուլիսի ի լուսանկար աթոռս սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

Մատենադարան, ձեռ. 2922, թ. 34:

26

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ

Հուլիս 1797 թ.

Թուղթ ի Պետրպօլք առ Մանուչարեանց ազնիւ պարոն Մարգարն։

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտասջիք իսկապես սիրելիք մեր, զի ի քանիս ամս գոլով մեր յանհնարին նեղութիւնս և ի բազմապատիկ վնասս ամենայն երկրաւս և ազգաւս մերով ի յարուցման մարդաղէմ գազանին ներքինւոյ, չկարացաք Թուղթ ինչ գրել առ սիրելութիւն Ձեր։ Դուք օրհնելեաքդ ևս, որք Աստծով յապահովութեան կայք իբրու ի մոռացման եդեալ զմեզ չգրեցիք զգիր ինչ առ ի սփոփանս Թախծեալ սրտի մերում։ Բայց մեք անմոռաց ունելով զհաւատարիմ որդիսդ սրբոյ գահիս՝ բազմիցս յիշատակեմք օրհնաբանութեամբ, որք և ի Տեառն Աստծոյ լիցիք յիշեալք և օրհնեալք հանդերձ ամենայն ձերայնովքն։

Իսկ ի դառնաղետ տագնապակրութիւնս մեր, մինչ յայդմ կողմանէ ակնունեաք ստանալ զմխիթարութիւն ինչ, հակառակ յուսոյ մերոյ զբօթ մահուան երջանկափառ մեծի կայսրուհւոյն լուեալ տրտմեցաք և ցաւեցաք հոգւով չափ։ Այլ հետևաբար լսելով և զգերաժանապես գահակալութիւն աստուածակառոյց ինքնակալ մեծի կայսեր Պաւել Պետրովիչի մխիթարեցաք և ուրախացեալ փառս ետուք։ Այնուհետև յառաւել ևս ամբարտաւանիլ և կատաղիլ աշխարհաւեր բռնաւորին առաւելու և մեր ցաւն և տարակուսութիւնն և գրեթէ ի վերջինն վարեցաք վարումն։ Բայց ողորմութիւն բարեբարին կանխաւ ժամանեալ ի վերա արարածոց իւրոց, չարամահ սատակեցաւ աշխարհաւեր անօրէնն և բարձաւ չարն ի միջոյ, յորոյ և չարաչար խորհրդոցն զերծան մնացորդքն ազգիս մերոյ, և մէք յետ անհուն վնասուց և վշտաց՝ պահեցեալ եղաք ի սուրբ Աթոռովս ի յետին վրտանգից։ Ապա սիրելին մեր Յովսեփ արքեպիսկոպոսն, որ եկեալ էր մինչև ցԹիֆլիզ, և դարձ առներ անտի յայդկոյս՝ գրեալ էր մեզ, որ դիմելոց է ի կայսերական դուռն։ Եւ մեք կարևոր գիտացեալ՝ ահա զշնորհաւորութեան և աղերսանաց Թուղթ գրեցաք առ նորին կայսերական մեծութիւն, և առաքեցաք ի ձեռն Յովսէփ արքեպիսկոպոսին՝ բերել ընդ ինքեան և մատուցանել ի սպաս կայսերական հանդիսավեհութեան։ Վայելուչ համարեցաք զայս սիրոյ և օրհնութեան Թուղթ ևս առ ազնիւ սիրելիդ մեր գրել ի յազդումն զկրից մերոց, և ի հարցումն ողջունի Ձերոյ, և ի ցարծարծումն սիրոյ, որով և խնդրեմք, զի սիրելին մեր Յովսեփ վսեմամիտ արքեպիսկոպոսն, որպէս յառաջին նուագսն ընկալեալ էիք, նոյնպէս և այժմոյս գալն մեծաւ սիրով և յարգանօք ընկալջիք, և զոր ինչ հոգալիս ունի յայդր, եթէ ի կողմանէ մեր և իւրն և եթէ ի կողմանէ օրհնեալ մերազնեաց՝ և թե մանաւանդ յաղագս ի Դարբանդու նոր եկեալ ժողովրդեանն, բարեպաշտաբար ձեռնտու և օգնական լիջիք, որչափ և կարողօթիւն Ձեր զօրէ, ոյր սակս ունիք ստանալ զմեծ վարձս յաստուծոյ և կացուցանելոց եք զմեզ շնորհակալս և օրհնութիւնս ձեզ։ Եւ սիրանիշ գրով Ձերով կամեսջիք ըստ օրինի ճշմարիտ բարեկամութեան ցաւակցել մեզ և մխիթարել ի վերայ բազմաժամանակեայ նեղութեանցն և վնասուցն մերոց։ Եւ զայլ երկարապէսն անցից մերոց և կողմանցս, և ներկայապէս կացութեան մերոյ ի Յովսեփ գերզգօն արքեպիսկոպոսէն կարէք իմանալ։ Ողջ լերուք ի Տէր։

Գրեցաւ յամի տեառն 1797 և ի յուլիս ամսոյ, ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 410ա—410բ:

27

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՏՓՂԻՍԻ ԲԵԴՂԵՀԵՄ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

18 օգոստոսի 1797 թ.

...Արդ՝ ըստ ասացելոյս այսմիկ՝ տէր Մխիթար ծերունի քահանայն որ ի բազում ամս աւագ իրիցութեամբ տեսուչ էր սրբոյ եկեղեցւոյդ, յետ վճարելոյ կենաց նորա սպանմամբ ի դիւագունդ զօրացն պարսից յարձակեցելոց ի վերա քաղաքիդ յաղագս ոչ յայտնելոյ նորա զթագուցեալ պահեստս սրբոյ եկեղեցւոյդ. (որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ և ընդ սուրբ քահանայսն դասեսցէ), յանցելումն ամի հարազատ որդին նորա տէր Ստեփաննոս խոհեմամիտ քահանայն ընտրեցեալ է ի հասարակութենէ ձերմէ կարգել ի տեղի հանգուցեալ հօրն աւագերէց ի սուրբ եկեղեցւոջդ ձերում:

Եւ չունելով ձեր յայնժամ զձեռնահասութիւն առ այսր՝ վասն վրդովմանց ժամանակին ի խռովութենէ պարսից, Դաւիթ վարդապետ առաջնորդն ձեր տուեալ էր նմա զթուղթ ի հաստատութիւն ընտրութեանն, յոգունց անձանց ևս կնքելով զնոյն:

Իսկ նարդենիս բազմակնիք մահսէրիւ հասարակութեանդ ձերոյ և միւս եկեղեցեաց աւագ քահանայիցն եկն ի սուրբ աթոռ և առ մեզ: Զոր և մեք ի հայրական սէր և ի խնամս վերընկալաք: Եւ զի միաբանութեամբ վկայեալ էիք արժանաւորութիւնն, վասնորոյ ըստ սրբազան առաքելոյն բանի, թէ որք բարւոք վերակացուք լինին երիցունք, կրկին պատւոյ արժանասցին, ահա զսիրելի և զհոգևոր որդին մեր և զհաւատարիմ զաւակն սրբոյ աթոռոյն զտէր Ստեփաննոս հանճարունակ քահանայն արժանի համարեալ կրկին պատուոյ այսու օրհնաձիր կոնդակաւս մերովս կարգեցաք աւագերեց ի սուրբ Բեթղեհեմ հրաշազարդ եկեղեցւոջդ ձերում, զորդին ընդ հօրն յաջորդեցուցանելով աւանդեալ զպատուերս կարևորս և օգտակարս, սիրով և օրհնութեամբ և խիլայիւ դարձուցաք առ սիրելի և հոգևոր որդիսդ մեր: Որպէս ամենայնիւ փութաջանութեամբ և քաջաջան արիութեամբ կառավարեսցէ զձեզ ըստ աստուածային պատուիրանացն և ընդ ուղիղ աւանդութեանց և սահմանադրութեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց:

Եւ բարւոք տնտեսութեամբ և վերակացութեամբ հոգասցէ զամենայն հոգս սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ յարամնալով և ի հարազատ որդիութիւնն և ի անձնադիր ծառայութեանն լուսատու ձերոյ սրբոյ աթոռոյս և հոգևոր հայրութեան մերոյ, և զձեզ ևս ի նոյնս յորդորելով, եւ դուք ուրեմն համայն որբանուէր քահանայքդ և քրիստոսասէր և օրհնեալ ժողովուրդք

պարտիք ամենայնիւ յօժարութեամբ և աննախանձաբար լսօղք և կատարօղ լինել ամենից անմեղսածին հրամանաց դորին և լինել դմա յամենայնի հնազանդք և պատուել զդա ըստ օրինի և ըստ իւրոյ արժանւոյն որպէս զհոգևոր վերակացու և կառավարիչ ձեզ և աւագ քահանայ:

Եւ կատարօղք հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յաստուծոյ և ի մէնջ և շնորհք սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի ընդ ձեզ լիցի միշտ, ամէն:

Գրեցաւ առ ի թուականիս մերում ՌՄԽԶ և յօգոստոսի ԺԸ. ի բարձրագահ աթոռս սուրբ էջմիածին:

Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 6, վավ. 131:

28

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՆՎԻՐԱԿ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

15 սեպտեմբերի 1797 թ.

Թուղթ առաջին առ Զմիւռնիայու նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն, ի պատասխան նախկին թղթոյ նորա անդուստ գրելոց վասն խաղաղանալոյ ժողովրդեանն ի յերկայն ժամանակեայ խռովութենէն իւրեանց և վասն ոմանց տակաւին դիմառութեան:

...Զանցիցն մերոց և երկրացս, որք յառաջն էին մինչև ցելն քո ի սրբոյ աթոռոյս, գոլով քո աստ, տեղեկացար: Յետ գնալոյն քոյ մինչ երեվանցիք անզգամաբար զաւելորդ և զծանր հարկս պահանջէին ի խղճալի գիւղականացն մերոց, և հիւսիսայինքն ևս զԳանձակ ածին ընդ ձեռամբ և գաղանն ևս դարձեալ ի Մաշաթու ի Թէհրան մռնչէր, յորում միջոցի և ի Հաճի Իբրահիմ խանէն թուղթ մի եկն առ մեզ յորդորութեամբ՝ եթէ առ շահն մարդ յուղարկես, յոյժ բարւոք լինի և այլն, վասնորոյ և մեք զչափաւոր ընծայս պատրաստեալ ձեռամբ Դաւիթ և Յովհաննէս վարդապետացն առաքեցաք, գրելով զոմանս ցաւս մեր և ֆերմանս խնդրելով: Եւ նա քաղցրութեամբ ընկալեալ էր և Սուլեյման սարտարին զօնաղ տուեալ և ըստ ամենայն խնդրոցն մերոց ֆերմանս գրեալ, և զվարդապետսն ևս բալափօշլիւք և շալօք խիլայեալ, որոց ի դառնալն դիւրութիւն ինչ եղև սրտի մերում: Բայց զի հիւսիսայինքն դարձ արարին, ի պատճառս վախճանի կայսերուհւոյն, և շահն և ևս խրոխտացեալ ել յայսկոյս, որ և զնախշուանու Քեալբալի խանի զաչսն բրեաց, և զմեր խանն ևս ստիպաւ խնդրեաց, որոյ ի ժամանելն առ նա յայսկոյս Ղազբինու կալեալ էր զաս

և կողոպտեալ և ծանրագոյն տուգանս արկեալ ի վերայ, որ զինչ և ունէր, թէ ստ և թէ յայլոր, յափշտակեցին։ Եւ դժնդակ եղբայրն իւր Ալիղուլի սարտարն յղեալ էր յԵրևան խան, որոյ ի գալն գնացաք ընդառաջ, որ ըստ պարսկական խորամանկութեան այլևս նախապէս պատիւ եցոյց՝ և ապա ծանրացոյց զընծայն մինչև ի կէս յառաջ առեցելոյն. ուստի և ի ԼԸ աւուրս մնացեալ յԵրևան, թէ որքան զլուխ ցաւեցուցաք և նեղեցաք, չեղև հնար վիջանելոյ նորա, վերջապէս մասն մի եառուք, և մնացելոյն սանստ տուեալ, դարձանք ի սուրբ աթոռս։

Յայնմ միջոցի շահն եկեալ էր մերձ յԱրդաւիլ, և լսելով զփախուստ Իբրահիմ խանին Շուշւոյ ի կողմն Կովկասու, ինքն՝ զծանրութիւն բանակին թողեալ անդ, ԺԲՌ զօրօք հապճեպով եկեալ մտեալ էր ի Շուշւոյ բերդն, ոմանք մելիքք և ժողովուրդքն ելանելով ընդառաջ, և մինչև չև էր թափեալ զգառնութիւն թունիցն, յետ քանեաց աւուրց սպասաւորք նորա խորհրդով Սատղ խանին սպանեալ էին զտապալիչն աշխարհի և բարձեալ զչարն ի միջոյ։ Եւ մինչև Գ աւուրք էին դառնալոյն մեր յԵրևանու, լուր սատակման նորա ժամանեաց աստ, որով և աճապարեաց սարտարն կորնչիլ յԵրևանու. այլ կնատ մեծամեծքն Երևանու մուծին զնա ի բերդն, և ի ցրուեալ զօրաց շահին ևս քանի հարիւր մարդիկ եկին յարեցան ի ժանտն, որովք ոգի առեալ և ևս սկսաւ զժանտութիւն ի գործ արկանել առ քաղաքացիսն և առ մեզ՝ պահանջմունս առնելով, մինչև երևանցիք վինուրեալ ընդդէմ դարձան, թէ ել գնա. և նա ընդ բերդապահացն ի միասին ելեալ կորեան, իբր թէ գնայր դժնդակն ի թագաւորել։

Եւ յելանել նոցա ի բերդէն՝ երևանցիք մտին ի բերդն։ Քանի աւուրց անցեալ ի վերայ Մակուայ սուլթանի որդի Հասան խանն, որ առ շահն կայր, և շահվերիլի էր կարգեցեալ երկրիս, եկն և խնդրեաց մտանել ի բերդն. սոքա չկամեցեալ՝ պատասխանի արարին և նա գնաց ի Նախչուան զօրս ժողովել և գալ, որոյ ի գնալն գրեցին սոքա ի Ղազախ առ վրացու որդի Ալեքսանդրն[76], թէ մեզ օգնութիւն առաքեա. և նա ինքնին եկն քանի հարիւր արամբք ի Ղրխպուլախ, բայց յառաջ քան զնա Հասան խանն եկն Նախչուանու զօրօք և յայրումցւոց ևս ոմանք միաբանեալ ընդ նմա յարեան ի վերա բերդին. մուղանցիք և այլք փախեան, և քաղաքացիք ելեալ ընդառաջ ընկալան. և ապա զվրացու տղայն ևս տրովք հաճեցուցին։ Եւ նա եկեալ ի սուրբ աթոռս յուխտ՝ Գ օր մնաց և դարձաւ։

Իբրև կալ էառ Հասան խանն յամօրեայ իշխանութիւն իւր, յետ ամենեցուն և մեք գնացաք ի տեսութիւն։

Իսկ ի կործանիլն շահին և Շուշի, Սատղ խանն կողոպտեալ զգոհարսն և զայլ մեծագին իրս նորա, հնարիւք իմն զՀատրբէճանու զօրսն առեալ ելանէ ի գղեկէն և գնայ. և մեծ բանակն, որ մերձ յԱրտաւիլ, լուեալ զգոյժ կորստեան շահին՝ շփոթին յոյժ և ի ցիր անկանին. այլ Սուլեյման

սարդարն և խօյու Ջաֆարղուլի խանն և այլք մեծամեծք մնացորդօքն դառնան ի Թէհրան և Ալի ղուլի սարտարն ևս գնայ։ Բայց միրզայ Մահմատ խանն Թէհրանու ոչ ընդունի զնոսա ի ներքս սպասելով Բաբախան սարտարի գալստեանն ի Շիրազու։ Յայսմ միջոցի և Սատըղ խանն գնացեալ տիրէ Ջանկիանու, և անցեալ պաշարէ զՂազըին։ Այլ Բաբախանն եկեալ մտանէ ի Թէհրան և կարգի շահ և տեսեալ զբարձրավզութիւն Ալիղուլի ժանտ նեղչին մերոյ՝ բրէ զաչս նորա և ելեալ ընդդէմ Սատըղ խանին իբր վանէ զնա և ըստ ոմանց ասութեան, իբր թէ յետոյ զգոհարսն սատակեալ շահին առնու և հաշտի և դառնայ ի Թէհրան։ Եւ զԵրևանու Մահմատ խանն և զխօյու Ջաֆար ղուլի խանն արձակեալ է ի գալ և Երևանու բերդին ևս զայլ ոմն յիւրոցն պահապան է յղեալ քանի հարիւր արամբք։ Եւ զի խանն երկիցս թուղթս էր գրեալ մեզ և այլոց վասն գալոյն իւրոյ և բաղումք գնացին ընդ առաջ. Հասան խանն ել ի բերդէն և գնաց ի Մակու։ Եւ յառաջիկայ աւուրքս նախ բերդապահն, և յետ այնորիկ խանն գալոց են։

Արդ, այսքան անցք յապրիլ ամսոյն մինչև ի սեպտեմբեր ամիսս, յորս հանդստեան կարօտ եմք։ Եւ ի գալստեան յիշեալ դժնկացն ևս թէ զի՞նչ ցաւս եմք կրելոց, չգիտեմք, միայն ողորմութեանն ստծոյ ապաստան կամք, զի նա հոգասցէ վասն սրբոյ աթոռոյս և ազգի մերոյ և մեր։ Այսպէս գիտցեալ քո, հարցանողաց ևս ծանուցես, զի այլոց ոչ երկարելով՝ ի քէն իմանալ ցուցաք։

Ողջ լեր ի տէր և զօրացեալ ի շնորհս նորին յարաժամ, ամէն։

Գրեցաւ ի ՌՄԽԶ թուոջս և ի սեպտեմբերի ԺԵ ի սուրբ աթոռս Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 459բ—460ա:

29

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԳԻՈՐԳԻ XII-ԻՆ:

27 ապրիլի 1798 թ.

Թուղթ առ նոր արքայն Վրաց Գէորգի, մխիթարութիւն վասն մահուան հօր իւրոյ Հերակլ արքային և շնորհաւորութիւն իւրոյ տիրապետութեանն, և բան առ այն, որ յաղագս հիւանդութեանց երկրին զսուրբ Գեղարդն խնդրեալ էր. այլ զսրբոյն Յակոբայ հայրապետի Աջն առաքեցաք ձեռամբ Ալէքսիանոս եպիսկոպոսին։

Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաձիր ողջունի և սիրոյ և մխիթարութեան, հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս նորին

ի վերա գերազանցագունի սիրելւոյդ իմոյ և հոգւոյս ցանկալւոյ տէրութեամբ Յիսուսի զօրացեալ և բարձրացեալ՝ մեծահռչակ և փառազարդ Գիօրկի նորապերճ արքայիդ օրհնեցելոյ ազգիդ վրաց երկրացդ և աստուածապահ տան Ձերում և նոյնապարգև զաւակացդ, հաւատարիմ խորհրդակցացդ և ազնուական իշխանացդ. քաջազէն զօրապետացդ և զօրաց և համայնից ընդ ձեռամբ Ձերով եղելոցն, ի տէր խնդալ։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի մեծութեան Ձերում, զի ի բազմաղէտ ժամանակիս՝ յորում տապախառն խորշակօք փորձութեանց տապեալ և տագնապեալ ծարաւիմք զովացուցիչ համբաւոյ, փոխանակ այնմ իբրու բաժակ դառնութեան մատուցաւ դժբախտիցս ի ժամ ծարաւոյ։ Քանզի էհաս յանցելումն յականջս մեր գոյժ մահուան գերաբաղձելի սիրելւոյն մերոյ խնամածութիւնն սրբոյ աթոռոյս ամենապատիւ ծերունազարդ հօր քոյ մեծի արքային Հերակլայ, որ անտանելի տրտմութիւն եղև սրտից մերոց և արար զմեզ ցաւալիս և սգաւորս։ Վասնզի թէպէտ ամենեցուն առ հասարակ է մահն, սակայն ըստ կարևորութեան անձինն և թախծութիւնն հետևի։ Եւ քանզի ամենեցուն բարերար և պատուականագոյն էր նա՝ պանծալի պարծանք քրիստոնեութեան ի կողմանցս, որոյ համեմատն ոչ գտանի յաշխարհի, վասնորոյ թէև զամենյան աւուրս կենաց մերոց սգայցեմք, ոչ համարիմք շատ։ Սակայն զի աստուծոյ երկնաւորին է գործ կեցուցանելն և հանգուցանելն, զի՞նչ ունիմք առնել, այլ թէ՝ փառս տալով նմա՝ ասեմք՝ եղիցին կամք տեառն օրհնեալ։ Որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալ մեծանուն բարեպաշտ արքային և դասեսցէ ընդ Դաւթի և ընդ այլ երջանիկ թագաւորացն։ Եւ զքեզ անդրանիկդ նորա հանդերձ եղբարբքդ և ամենայն քոյայնովքդ ողջ պահեսցէ և մխիթարեսցէ։ Փարատեսցէ զսուգ և զտրտմութիւնս Ձեր, և պարգևեսցէ զուրախութիւնս մեծագոյնս։ Իսկ որ մխիթարեն զսիրտս աստուած ընդ տրտմութիւնն և զխնդրութիւնն շնորհեաց մեզ աւետաւոր համբաւով արժանաւորն ժառանգութիւնդ յաջորդելոյ զտեղի հօրն քոյ երանելւոյ, վասնորոյ ուրախացեալ գոհացաք զաստուծոյ։ Բայց թէ ընդէ՞ր յամեցաւ մխիթարական և շնորհաւորական թուղթ մեր, քաջ գիտէ վսեմութիւն Ձեր և յառաջագոյն ի հանդիպելն աստ միրզայ Աբրահամին՝ ասացեալ եմք նմա, ազդ առնել յարգութեան Ձերում, որ յայնմ ժամանակի անկարելի էր մարդ յուղարկելն մեր ի սպաս Ձեր, որպէս և տեսանէք, թէ ահա երեք տարի է՝ որ զվարդապետ ոչ յղեցաք ի յօրհնեալ երկիրդ՝ յայցելութիւն ժողովրդին մերում։ Այժմ զայս միայն ասեմ, թէ ի յառաջընթաց ամսեանն, որ էր տարեգլուխն այլազգեաց ի գնալն մեր յԵրևան, դժնդակ և կատաղի դղեկապահն զինչ անցոյց ընդ գործակալն մեր Դաւիթ վարդապետն. բարբաջելով թէ՝ խաբէութեամբ վարիք առ պետն մեր և խորհուրդն Ձեր ընդ վրաց է, և այլն։ Արդ՝ եթէ

յայսքան զգուշանալս մեր՝ տակաւին այսչափ զօղանջեն, ապա եթէ անզգուշաբար համարձակ գրութիւնք և մարդկան երթևեկութիւնք լինիցէին ընդ մէջ մեր և Ձեր յայսպիսի վտանգաւոր ժամանակս, զի՞նչ չարիս անհնարինս ածէին ի վերայ մեր և սրբոյ տանս։ Այլ այժմ մինչ խանն մեր զերևելի մարդ յուղարկէր ի սպաս Ձեր, այնու և մեք վստահացեալ զայս թուղթ գրեցաք և ընդ հոգևոր որդւոյ մերում ժամօրհնօղ Ալէքսիանոս արքեպիսկոպոսին առաքեցաք, որով նախ մխիթարութիւն մատուցանեմք քեզ ի կողմանէ երանելի հօր քոյ հոգելոյս արքային և հետևաբար շնորհաւորիմք զնորապերճ գահաւորութիւն և տէրութիւն Ձեր։ Զոր Տէրն տիրաց աստուածն ամենայնի շնորհաւոր արասցէ տալով մեծութեան քում զկեանս երկարս և խաղաղականս և բարեձոխ երկրիդ զշինութիւն և զանզրդութիւն, և զսուր Ձեր զօրացուցանելով ի թիկունս թշնամեաց յաղթութիւն քրիստոնէից և ի պարծանս մեզ։ Իսկ զի յառաջագոյն զսուրբ Գեղարդն խնդրեցեր, և մեք ծանուցաք աստ ոչ լինելն, այժմ իբր ոչ հաւատալով բանին մերում, առ մեր խանն էիր գրեալ. գիտասցես, զի բանն մեր ճշմարիտ էր. եթէ աստ գտանիւր, մեք ոչ կարիմք զանց առնել զյարգութիւնդ և զմերայնովքդ։ Այլ ի նկատելն մեր՝ եթէ զկնի ներքինւոյն բարձման ևս կողմունքս հանգստութիւն ոչ ունին, և նշան հանդարտելոյ ոչ երևի, զայնպիսի բանի մի իրս առաքեցաք յարեմտակողմն առ մերայինսն ի պահեստ։ Նարդենիս որ գրեալ էիր, Յուսուփ բէկն ընդ խանի մարդոյն եկին աստ, և խօսեցաք, զի յիրաւի եթէ այժմոյս խնդրէաք ևս, երևելիքն մերազնէից ոչ դարձուցանէին թէ՝ դու վասն խռովութեան երկրիդ յուղարկեցիր աստ, այժմ զի՞նչ խաղաղութիւն երևի, որ զայսոսիկ խնդրես, յայնժամ լինիւր մեզ արհամարհանք մեծ։ Ապա խորհրդակցեցաք ընդ Յուսուփ բէկին, որ զսրբոյ Յակոբայ սքանչելափորձ հայրապետի Աջն յղեմք։ Այս սուրբ Յակոբ ազգակից և համապատիւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ պայծառանայր ի ժամանակին Կոստանդիանոսի և Տրդատայ թագաւորացն, և բազում սքանչելիք սորա պատմին ի գրեանս մեր, և բազում անգամ զայս սուրբ Աջն առաքեալ եմք յԵրևան և յայլ և այլ տեղիս՝ և աստուծով բժշկութիւն է եղեալ ցաւոց, որպէս երևանցիք և մէլիք Շաքարօն և ի տեղդ ևս բազումք գիտեն։ Վասնորոյ զայն սուրբ Աջն առաքեցաք այժմ ի ձեռն Ալէքսիանոս արքեպիսկոպոսին։ Զոր մինչ սիրով և յարգութեամբ և սերտ հաւատով ընկալջիք, յուսամ ի Քրիստոս փրկիչն մեր՝ միջնորդութեամբ նորին փարատել զհիւանդութիւնս և զցաւս երկրիդ։ Եւ խնդրեմ շուտով դարձայնել առ մեզ հանդերձ սիրանիշ գրովդ։ Եւ զայլ ամենայն որպիսութիւն մեր ի հաւատարմէդ մերմէ Ալէքսիանոս արքեպիսկոպոսէդ իմացեալ՝ ողջ լեր փառազուարճ կենօք ի հրճուանս մեր։

Գրեցաւ յամի Տեառն 1798 և յապրիլի 27 ի սուրբ աթոռս Էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 2922, թթ. 40ա—40բ։

30

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆՎԻՐԱԿ ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

14 մայիսի 1798 թ.

Թուղթ ի Հնդիկս առ նուիրակն մեր Յակոբ վարդապետն, յիշատակութիւն անցիցն երկրիս և կրիցն մերոց և համառօտ պատասխանատուութիւնք բանից թղթոց նորա ի Բասրայու և Բոմբայու գրեցելոց։

Յոյժ հայրական սիրով առատացունիւ և լիալիր օրհնութեամբ և խաղաղաւէտ ողջունիւն Քրիստոսեան և սրբոյ իջման տեղւոյս նորին մեծազօր և պահպանողական շնորհիւ, գիտասջիր սիրելի և հոգևոր որդիդ մեր՝ հարազատ և աշխատակիր զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յակոբոս աստուածիմաստ վարդապետ, քանզի յամի Տեառն 1796 և ի սեպտեմբերի 22 գրեալ մեր զպատասխանի երից թղթոցն քոց ի Բաղդադու գրեցելոց և հանդերձ խնդրեցելովքն քո կոնդակօք և այլ քանի օրհնութեան թղթովք առաքեալ ի Բաղդատ, յետ այնորիկ մինչ Ղուկաս աղայն Ալէքսանեան խնդիր էր գրեալ մեզ յաղագս զԱւետիս երիցուն արձակման, առ այն ես յամի Տեառն 1797 և յապրիլի 25 զհամառօտ թուղթ մի գրեցաք առ քեզ, նշանակելով և զորպիսութիւն ինչ. այսինքն զդարձն հիւսիսայնոց. զզօրանալ ներքինի բռնաւորին, և խնդրելն զխանն Երևանու և այլն։ Եւ զնոյն թղթոյ երկրորդ օրինակն և ի հետևեալ ամսեանն յունիսի 6 առաքեցաք, յաւելլով ի նմա կրկին յառաջ շարժիլն ներքինւոյն յայսկոյս, և զգժնդակ եղբօր նորին դարձեալ վերստին գալն յայս երկիր, և զմեր ի յԵրևան առ նա լինելն, և այլն։

Ի նոյն յաւելուած բանից, գրեցաք ևս զծ լիտր բիբար շուտով յուղարկել ի կարևոր պէտս ծախուց տանս։ Ապա յայնմհետէ ոչ ևս յաջողեցաւ մեզ գրել ինչ առ սիրելի որդիդ ի պատճառս հետզհետէ յաջորդելոց նեղութեանց և ցաւոց մինչև ցայժմ։ (Թէև ընկալաք զթուղթս քո զգրեցեալսն ի Բասրայու և ի Բոմբայու)։ Վասնզի ի յիշեալ ամսեանն մայիսի մինչ կայաք առ սարդարն յԵրևան ի պատճառս ընծային զոր մեք չափաւորապէս տալ կամէաք, և նա անդրագոյնս պահանջէր, մնացաք մինչև ի ԼԸ աւուրս. ապա զմասն մի ետուք և զայլն խոստացեալ յետ ժամանակի, դարձաք ի սուրբ աթոռս ի քանիսն յունիսի։

Յայնմ միջոցի Իբրահիմ խանն լսելով զգալոյ շահին, փախուցեալ

ի Շուշւոյ, և շահն լուեալ զայն՝ ընտիր հեծելովք հապճեպ հասեալ և մտեալ ի Շուշի, այլ չև ևս ժայթքեալ զթոյնս իւր ի բնակիչսն, սպանեալ էր ի ծառայից իւրոց, որոյ լուրն յետ քանի աւուրց դարձին մեր յԵրևանու ժամանեաց յերկիրս, և սարդարն, որ դողացուցանէր զամենեսին, յահ և յերկիւղ ըմբռնեցեալ, եմուտ ի բերդն և անդ ևս զանհամութիւս առնելով, արհամարհեալ յերկրականացս՝ ընդ բերդապահացն ի միասին ելեալ կորեան, և որ գնայր գտանել զթագաւորութիւն, զրկեցաւ յաշացն. զի նոր շահն Բաբախան ընդունեցեալ ի Թէհրանցւոց, բրեալ էր զաչս ազահ ամբարշտին։

Բայց յետ այսր ամի ևս ոչ եգիտ երկիրս զհանդարտութիւն, քանզի յելանելն աստի սարդարին, մինչ երկրացիք զրաւեալ զբերդն ակնունէին Մահմադ խանին, Հասան խանն՝ որդի Մակուայ սուլտանին՝ Նախչուանու զօրօք և տեղւոյս ապստամբելովքն զօրացեալ, տիրեաց Երևանու և ի բերդն իսկ մտեալ նստաւ, որ և ընդ մեզ իբր բարւոք վարիւր։ Այլ մինչ համբաւ հնչեաց արձակման Մահմադ խանին ի նոր շահէն և գալոյ առ այսր, Հասան խանն խոյս ետ ի Մակու։ Բայց և Մահմատ խանն արգելաւ ի Թավրիզ ի Ջաֆար ղուլի խանէն, և երկիրս անիշխան մնացեալ անկան զմիմեամբք. (Թէպէտ և ի շահէն ումն քանի հարիւրովք եկեալ եմուտ ի բերդն, պահապան)։

Ի նմին շփոթութեան և Թամիր գեղջ մուղանցիք համարձակութիւն առեալ՝ յինքեանս գրաւեցին զԳետառ կոչեցեալ անդաստանն՝ սուտ իմն ղապալայիւ, այլ սակս մինչ թղթովք շեխիսլամին և այլոց առաքեաց զՅակոբն և զՅովհաննէս վարդապետն ի յՕշական՝ խօսիլ ընդ նոսա։ Նենգաւորքն այնք ի ցերեկին պատուով խօսեցեալ և մեծարեալ զնոսա, բայց ի վաղուց զոխս ունենալով ընդ Յակոբ վարդապետին ի գիշերին գաղտագողի յարուցեալ ի վերայ կողոպտեալ էին և վիրաւորեալ զնա, որ և զկնի միջոցի իրիք վախճանեցաւ, որում տէր ողորմեսցի։

Ապա ի գալն Մահմադ խանին յԵրևան, և ի գնալն մեր ի տեսութիւն, վէճ եղեալ դատաստան խնդրեցաք, և յուրաստ լինելն նենգաւորացն ամսօրեայ ժամանակաւ հազիւ ստուգեցաք ի վերա բարբարոսացն և զկողոպուտն հանել ետուք. զարիւնն խանն վճարեաց խիլայիւք և միջնորդութեամբ, բայց զժառանգութիւն սրբոյ աթոռոյս հաստատուն հիւճէթիւ առ սուրբ աթոռս դարձուցաք։ Եւ այնպէս դարձաք ի սուրբ աթոռս ի դեկտեմբերի քանիսն։

Յայնմ միջոցի ևս զանազան հիւանդութիւնք ճարակեալ յերկիրս և ի սուրբ աթոռս, բազումք վախճանեցան, ընդ որս և քանի եպիսկոպոսունք. զորս յանուանէ յայլոց թղթոց ունիս իմանալ, զորոց զհոգիսն տէր լուսաւորեսցէ և զսիրելի որդիդ ողջ պահեսցէ։

Ի մերձաւորաց մերոց ևս ոմանք հասին ի դուռն մահու, այլ ողոր-

մութեամբ տեառն դարձան ի կեանս, և այլ անցք նեղութեանց և զբաղմունք շատք, զո՞ր մին կարելի է պարունակել ի թղթիս։

Արդ՝ յանցեալ տարւոյ յունիսէն ցայսն մայիս այսպէս ծանր հոգօք և տագնապօք անցուցեալ զկեանս, չեղաք երբէք ձեռնահաս ի գրել առ քեզ թուղթ ինչ, թէև անմոռաց ունիմք զորդիդ մեր սիրեցեալ։ Իսկ այժմ ի հոգնահոյլ խուժանաց զժամ գողացեալ փոյթ կալաք զայս թուղթ գրել և ծանուցանել զմէնջ, առ ի անտարակոյս լինել քեզ։

...Իսկ զներկայական որպիսութեանց և համբաւոց կողմանցս և երկրիս զայսքան ինչ իմա յայսմ ամի ծերունի արքայն վրաց Հերակլ վախճանեցաւ ի փետրվարին կամ փոքր մի յառաջ և յետոյ. ափսոս պակասելոյ այնպիսի հռչակաւոր արքայի, զորպիսի ոք հազիւ գտանէ տունն Վրաց, բայց կամք տեառն օրհնեալ է. որ և հանգուցէ զնա յարքայութեան երկնից։ Իսկ հանգուցեալն ի կենդանութեան իւրում կտակաւ աւանդեալ է իւրոցն և ամենայն իշխանաւորացն զԳեորգի աւագ որդին ճանաչել յաջորդ իւր և այժմ իսկ նա երևի յաջորդեալ, որում և յանցեալսն շնորհաւորհութեան թուղթ և ընծայ առաքեցէք։

Բայց ընդ մէջ մօրն, եղբարցն և իւրն դեռ կատարեալ միաբանութիւն չկայ. և բնակիչքն Թիֆլիզու յերկիւղէ ժանտախտին ցրուեալք կան ի գաւառսն, աստուած այցելութիւն արասցէ քաղաքին այնմիկ ի վերստին նորոգութիւն։

Եւ խօջայ Ջաֆար ղուլի խանն, որ սարդար էր կարգեցեալ ի Նոր շահէն, ի քանի ամիսս վտարանջեալ է ի նմանէ իբր միաբանութեամբ Որմւոյ խանին։ Բայց Երևանու խանն ջանայ հաւատարմութիւն ցուցանել առ շահն. որ և յորդորեալ զԳիօրկի արքայորդին՝ թուղթ գրեցուց նմա իբր հպատակութեան, և ի Ղազախու զօր ինչ բերեալ կամի զինել ընդդէմ Ջաֆար ղուլոյն։ Բայց մասն մի զօրաց սորա առ սահմանօք Նախչուանու պարտեցեալ ի նախչուանցւոց, որք են ի կողմն Ջաֆարայ, այնքան երկեաւ սա, մինչև ընդ բերդապահին խօսեցեալ եմուտ ի բերդն ամրանալ, այլ յետ աւուրց ձայն հնչեաց, թէ շահն գալոց է յայս կոյս, որով յուսաւորեալ ել ի բերդէն. և ոչ դադարելով զայլ ևս զօրէ խնդրէ ի Վրաց՝ իբր քաջութիւն ինչ առնել։ Եւ այսպէս ի ցնորական և աւերողական վարս են բնակիչք կողմանցս։ Աստուած հանդարտութիւն և խոհեմութիւն տացէ։ Իսկ սուրբ աթոռս յետ անհուն վնասուցն և ևս ողորմութեամբ աստուծոյ ի պայծառութեան կայ բարեկարգութեամբ միաբանից և ըստ ժամանակիս կենցաղավարիմք։ Յովհաննէս վարդապետն, զոր ընծայիւք յուղարկեցաք առ շահն, գնացեալ և դարձեալ է ի խօյ ֆէրմանօք՝ որ և թուղթ էր գրեալ մեզ ի խօյու. յոյս ի տէր, որ յառաջիկայ աւուրս եկեսցէ։

Ի զրաւ բանիցս պատուիրեմք դարձեալ սիրելի որդեկիդ, զի զթուղթդ չպակասեցուսցես յիւրաքանչիւր տեղւոջէ, թէև համառօտ իցէն. ծանուցանելով զողջունէ Ձերմէ և զբարեկենդանութենէ օրհնեալ ժողովրդոց մերոց։ Մանաւանդ փոյթ տարցես շուտով վճարել զգործդ և դարձ առնել խաղաղութեամբ. զոր աստուած յաջողեսցէ. որպէս զի մինչդեռ կենդանիս եմ միւս անգամ տեսից զհոգեծին որդեակդ իմ, և ապա որպէս կամիցի աստուած, օրհնեալ են կամք նորա։

Եւ դու ողջ լեր ի տէր և յանձնեցեալ ի պահպանութիւն ամենազօր աջոյ նորին, ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի մայիսի 14, ի սուրբ աթոռս էջմիածին։

Ողջոյն և օրհնութիւն տամք հոգևոր որդւոյն մերոյ և քոյ՝ Վրթանէս խոհեմամիտ վարդապետին և Յովհաննէս դպրին և այլոց, որք առ ձեզ իցեն, յանձն առնելով խնամոցն աստուծոյ։

Թուղթս երկու գրեցաւ. առաջինս այս ի վերա Վանայ յղեցաւ. և երկրորդն ի վերա Կոստանդնուպօլսոյ, հանդերձ Բասրայու թղթովքն շընորհակալութեանց։

Մատենադարան, ձեռ. 2922, թթ. 41ա—41բ, 43ա։

31

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Հունվար 1798 թ.

Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Տ. Ստեփանին

... Համառօտ լուր վասն որպիսութեան երկրի մերոյ զամենայն անցս գալստեանն Կոտածին ի յաշխարհն մեր ի 1796 և ի յունիսի 20 տպեալ առաքեցի ի կողմունդ. ևս զմեր գնալն ընդ զօրացն՝ վասն օգնութեան քրիստոնէից, մինչ ամենայն ինչ յաջողութեամբ յառաջ ընթանայր. ի նոյեմբերի 5. վախճանեցաւ մեծ մայրն մեր և գլուխ մահուն՝ ի Գանջա լուաք, և անդ ազատեալ զբազում գերիս և զդուստր Թաղոյին մերոյ, և զթագն Ղազար[77] կաթողիկոսի ընդ մասնաւոր զգեստուց սրբոյ Աթոռոյն. գնացի Թիֆլիս և տեսի զաւերութիւն նորա և լացի։ Գնացի և ի Սանահին և ի Հաղբատ և տեսեալ մորմոքեցայ, զրի զբազում գրեանս ի յառաջնաց այրն մեր և զայլ գրեանս ի գերութեանց թափեցի։

Նորապսակն մեծ հրամայեց զօրացն յետ դառնալ, զի չկամեցաւ պատերազմ ունել ընդ ումեք. մէք ընդ զօրացն դարձանք, և վիրքն մնացին ի յողորմելութեան։ Կոտածն պատրաստեցաւ վերստին գալ ի Շուշի իւրոց ծառայիցն խողխողեցաւ ի յունիսի 6, վիրքն և աշխարհ ամենայն թէպէտ

զերծան ի նմանէ, այլ մասնաւոր բռնաւորքն զօրացեալ յամենայն ուրեք ընեղութիւնս հասուցանեն, իսկ սրբոյ Աթոռոյն ևս առաւել։ Ազգն մեր, որք ի Ղարաբաղ ի Գանձայ էին, ի սովու և ի գերութեան վերջացան և տեղիք նոցա ամայի եղեն։ Մելիք Ջիմշիդն եկն ի Ռուսս, մելիք Աբովն[78] երեք հարիւր տամբ ի Շամքոր։ Արքայն ի մահիճս մահու, Ա թոռն նորա Դաւիթ աստ է եններալ. մեք ի տեսութիւն եկեալ թագաւորին ընկալաւ զմեզ ողորմութեամբ։ Մերքն ամենեքեան զքեզ ողջունեն և ես զօրհնութիւնն իմ առաքելով առ քեզ։

Մնամ վասն քո աղօթարար Յովսէփ արքեպիսկոպոս
1798 յունվարի ի Սանթբեդրպուղ

«Դիւան Հայոց պատմութեան» գիրք Թ, մ. I, Թիֆլիս, 1911, էջ 243։

32

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՏՓՂԻՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Ապրիլ 1798 թ.

Կոնդակ օրհնութեան և մխիթարութեան խրատու և յուսադրութեան ի վերա Թիֆլիզու և շրջագայից, յաղագս զանազան փորձութեանցն ի վերա նոցա հասելոց, որոց յետինն էր ժանտախտն, յորոց պատճառէ և ցրուեալ կային քաղաքացիքն ի լերինս և յայլ շէնս, ուստի՝ և Գիօրկի նոր իշխանաւորեալն երկրին՝ խնդրեալ էր զսուրբ Գեղարդն ի բժշկութիւն ախտիցն։ Եւ ոչ գտանիլն այնորիկ առ պատրաստ, սրբոյն Յակոբայ Հայրապետի Աջն առաքեցաւ ձեռամբ։

...Արդ ըստ ասացելոցս իմանալի են և մեծագոյն փորձութիւնքն և զարհուրելի տագնապքն որք ժամանեցին ի վերա խղճալի քաղաքիդ և տառապակիր ժողովրդոցդ այսինքն՝ նախապէս կողոպտումն և աւերութիւն և գերութիւն որք միանգամայն եղեն ի յարձակմանէ բազմաբիւր հենիցն պարսկականաց՝ ժանտից և խստաց. երկրորդապէս՝ կրկին ահաբեկութեամբ փախուստն և ցրումն ձեր ի յարուցմանէ լեռնական լափլիզողացն դժնէից և ամբարշտաց։ Եւ երրորդապէս յաճախիլն հիւանդութեանց և ցաւուց ի միջի ձերում, և տարակուսեցուցանելն զամենեսին։ Զայսպիսի զառնաղետ պատահարս սիրելի որդւոցդ լսելով իմ վշտակոծ հօրս ձերոյ՝ արդարև յաւելեալ զհոգիս ի վերա հոգոց՝ և զթաղծութիւնս ի վերա թաղծութեանց, ոչ այլովք ինչ յաշխարհին անցաւոր բանիւք ունիմք զձեզ յուսադրել, այլ միայն երկնային անանցանելի բարեացն յուսով՝ և առ այս զորբազան Առաքելոյն Պօղոսի զհոգեշունչ բանն առաջի առնիմ ձեզ թէ՝

օրհնեալ է Աստուած և հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մխիթարէ զմեզ յամենայն նեղութիւնս մեր, առ ի կարօղ լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ որք յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն որով մեք մխիթարիմք յԱստուծոյ։ Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպես և ի ձեռն Քրիստոսի առաւելեալ լիցի և մխիթարութիւն մեր։

Արդ՝ ոչ ունելով ժամ երկարելոյ զբանս, համառօտ զայս ասեմք թէ՝ լաւապես լուեալ և իմացեալ եք՝ որ յայս քանի տարիս որպէս կողոպտեցեալ և տառապեալ և վնասեցեալ եք դուք, նոյնպէս և մեք նեղեալ և վրշտացեալ և տագնապեալ եմք և վնասքն սրբոյ Աթոռոյս, որք եթէ այսր և թե յայդր ի քաղաքօջդ եղեն, համարիմք թէ ըստ մեզ առաւելալ են քան զձեր իւրաքանչիւրոցդ։ Ապաքէն որպէս մեք մխիթարիմք մխիթարութեամբն Քրիստոսի, նոյնպէս և դուք մխիթարեցեալ յուսաւորիջիք թէ ըստ չափու չարչարանաց և վնասուց ձերոց առաւելապէս վարձատրելոց եք ի Քրիստոսէ։ Բայց բանզի գանեցեալ և խրատեցեալ որդին եթէ ոչ լացցէ, յամառեալ կարծի սրտիւ. և ոչ շարժէ առ նա հայրն ի գութ և ի խնամս. և այժմ մեք յանցաւոր որդիքս հօրն երկնաւորի դանիմք և խրատիմք դեռ ևս. պատշաճի ուրեմն մեզ և ձեզ լալ դառնապէս, նախ զմեղս մեր՝ որով բարկացուցաք զԱստուած, և ապա զպատիժն մեղաց՝ զոր կրեցաք և կրեմք իւրաւապէս. և լալովն հանդերձ՝ ի պաղատանս մատչիլ առ ամենագութ և մարդասէր հայրն մեր երկնաւոր, և ասել փղձկեալ սրտիւ, մեղաք անօրինեցաք, և յիրաւի ածեր զայս ամենայնի ի վերա մեր արդարև ի բարկութենէ քումէ, և այնցս ի մենջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց։ Իսկ արդ մինչ Գերագոյ սիրելին մեր նորապերճ արքայապատիւ Գիօրկի՝ մեծազօր տիրօղն օրհնեցելոյ յերկիրդ վասն ժանտացաւոյն փարատման խնդրեալ էր զՔրիստոսամուխ սուրբ Գեղարդն, և մեք զայն առ պատրաստ չունելով փոխանակ այնորիկ ահա առաքեցաք ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ ժամօրհնօղ Աղէքսիանոս արքեպիսկոպոսին, զհրաշագործ Աջն սրբոյն Յակոբայ սքանչելագործ Հայրապետի Մծբնայ, որոյ երանելի վարուց և սքանչելեաց պատմութիւն յայտնի է ի պատմագրութեան սրբոյն Մովսիսի Խորենացւոյն և յԱյսմաւուրսն, և յաւետ ևս ի Ներբողինէ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, ուստի և հրգեցող շարականոց նորին վասն բարձման ժանտախտին զնա բարեխօս արկանէ առ Աստուած, ասելովն զարժանահաս մահտարաժամ բարձ ի մենջ բարեխօսութեամբ սրբոյն Յակոբայ։ Վասն որոյ գրեմ սիրելեացդ, զի ջերմեռանդ սիրով ընկալջիք զամենապատուական Աջդ նոյն աստուածամերձ երջանիկ Հայրապետին, որ զմեռեալս յարուցանէր և զկաղս գնացուցանէր և զայլ զօրութիւնս անվրէպ գործեր և աներկմիտ յուսով և սերտ հա-

ւատով բարեխօս կալջիք առ Հեշտալուրն Աստուած. և արտասուագոչ հառաչմամբ խնդրեսջիք ի նմանէ զայցելութիւն և զգթութիւնս մեղաց զըղջմամբ և սրտից մաքրութեամբ, ընդ որս և մեք լրութեամբ միաբանից հայցեմք ի տեառնէ առաջի սրբոյ իջման տեղւոյս նորին, առատաձեռնել ի ձեզ զշնորհս ողորմութեան իւրոյ։ Որ և քաղցրացի առ մեզ գթութեամբ իւրով, և որպէս տառապեցոյցն, նոյնպէս և սփոփեսցէ, և որքան վնասուց և կսկծանաց դիպեցայք, լցուսցէ ձեզ ընդ միոյ զկրկնապատիկ բարութիւնս և զուրախութիւնս, և մխիթարեսցէ զամենեսեանդ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Մանաւանդ խնկաւորեալ մաղթանօք սրբոյն Յակոբայ հոգիընկալ Հայրապետին բարձցէ ի ձենջ և յօրհնեալ երկրէդ զժանտամահն և զայլ ամենայն անընտել խօթութիւնս և առողջութիւն շնորհեսցէ ցաւահարելոց։ Եւ որք փոխեցեալ են յաստեացս հանգուսցէ յարքայութեան, և զմնացելոցն սուգս և զտրտմութիւնս փարատեսցէ։ Եւ արդ ի վերա այսմ ամենի պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց. գոհացողք լիջիք միշտ զԱստծոյ ամենակալէն ըստ որում խրատելով խրատէ և ոչ զամենեսին ի մահ մատնէ, զգաստացուցանէ այդպիսիօք փորձութեամբք և ոչ իսպառ բարկանայ։ Արկանէ իբրև զոսկի և զարծաթ ի բովս փորձութեան, և վերընդունի ի հաճոյս իւր. ըստ որում և ասէ ի ձեռն մարգարէին Զաքարիայ վասն ընտրելոց իւրոց և սիրելեաց թէ՝ անցուցից զնոսա ընդ հուր և ջեռուցից զնոսա որպէս ջեռնու արծաթ, և փորձեցից զնոսա որպէս փորձի ոսկի. նա կարդասցէ զանուն իմ, և ես լուայց նմա և ասացից՝ ժողովուրդ իմ է սա. և նա ասասցէ՝ Տէր Աստուած իմ ես դու։ Ո՛րեմն գոհաբանութեամբ փառաւորելով զնա համարսջիք զամենայն վիշտս և զվնասդ ձեր խրատ խաղաղութեան ձեզ առ ի նմանէ, և զերկիւղն նորին սրբութեամբ ունելով ի սիրտս ձեր հանապազ ունիջիք զփոյթ ամենայն գործոց բարութեան. և բուռն հարջիք զխաղաղութեան և զսիրոյ առ միմեանս՝ և առ Աստուած հանդերձ ջերմեռանդութեամբ աղօթից և խնդրուածոց առ ի հաշտեցուցանել զերեսս նորա։ Եւ զկսկիծ վնասուցն ձեր կրելոց և զտխրութիւն իբր ի մոռացման դնելով՝ ասասջիք ըստ երանելւոյն Յոբայ Տէր ետ և Տէր էառ, եղիցի անուն Տեառն օրհնեալ։ Որպէսզի և ի ձեզ արասցէ զնոյն ողորմութիւնսն զորս արար նմա, օրհնելով զվերջինսն ձեր քան զառաջինսն նման նմին։ Եւ զսիրելի որդիդ մեր զԱլեքսիանոս հեզաբարոյ արհեպիսկոպոսդ ըստ արժանոյն մեծաւ սիրով և յարգանօք ընկալջիք, լսելով և առնելով զհոգեօգուտ խրատս զորա։ Եւ կամեսջիք շուտով դարձուցանել առ սուրբ Աթոռս հանդերձ հրաշալի սուրբ Աջիւն։ Որք և եղեջիք յանձնեցեալք ի խնամս տեառն աստծոյ, և պահպանութեամբ հզօր Աջոյ, նորին, լիջիք ազատեալք յամենայն վտանգից. և շնորհք սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի ընդ ամենեսեանդ լիցի յարաժամ, ամէն։

Գրեցաւ ի ՌՄԽԷ թուոջս մերում և յապրիլի ի յերկնահանգետ աթոռս սուրբ էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 415—416:

33

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Մ. ԽԱՉԻԿՅԱՆԻՆ

13 հունիսի 1798 թ.

Թուղթ ի Հնդիկս ի Կալկաթա առ աղայ Մովսէսն Խաչիկեան յիշումն յառաջագոյն գրեալ թղթոցն մերոց. և մխիթարութիւն վասն մահուան առն հօրաքեռ իւրոյ՝ Յոհանջան աղային Յակոբեան Դէրաքեանց, որ ի Սուրաթ բնակեալ կայր, և օրհնութիւն վասն կորզելոյն իւրեանց զոմանս գերեալ մանկունս ի Տփխիսայ ի ձեռաց արաբացւոց, որք ի Բուշեռու տարեալ էին անդ ի վաճառել։

Յորմէ քրիստոսաձիր ողջունիւ և ճշմարիտ սիրով և հոգևոր օրհնութեամբ Միածնաէջ սրբոյ տեղւոյս մեծազօր շնորհիւ ծանուցումն լիցի գերազնիւ սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ աթոռոյս, ազնուութեամբ զօրացեալ քաջազնեայ՝ բարեպաշտ և շքեղապանծ աղայ Մովսէսիդ Խաչիկեան։ Քանզի վաղագոյն գրեալ ունեմք զթուղթս առ սիրելութիւն քո յամի տեառն 1793, ի դեկտեմբերի 12 և ի 1794 յապրիլի 12, յետ այնոցիկ ևս յամի 1795 և ի մարտի 5, դարձեալ և ի նոյն թուոյ յունիսի վերջն ձեռամբ նուիրակ Յակոբ եպիսկոպոսին, որոց թղթոց եթէ վերջինն ընդ նուիրակին գոլով թերևս տակաւին հասեալ չլինիցի, սակայն վերոյիշեալ երեք թուղթն վաղ ուրեմն հասեալ լինին։ Այլ միոյն ևս զփոխադարձն ոչ ընկալաք դեռևս ի յազնուութենէ Ձերմէ։ Չգիտեմք զի՞նչ պատճառք արգելուն զթղթագրութիւն Ձեր առ մեզ։ Իսկ յետ առաքելոյն մերոյ զնուիրակն յայդկոյս. ներքինի բռնաւորն, որ ի նոյն տարւոջն շարժեալ էր յայս կողմն և զեղբայրն իւր յուղարկեալ ի վերայ Երևանու, եթէ զիա՞րդ խստութեամբ յարեան ի վերայ երկրացս, և զորպիսի աղէտալի անցս անցուցին ընդ բազում գաւառս՝ զաւերութիւն, զսրածութիւն և զգերութիւն, և զկողոպտումն ընչից, յորոց և որքան վնասք հանդիպեցան սրբոյ աթոռոյս և ո՞րչափ նեղութիւնք ժամանեցին մեզ, ոչ է աստանօր երկարելի, զի և թուղթս չէ բաւական տանիլ զպատմութիւն եղելեացն, այլ փոքր ի շատէ յայլոց իմացեալ էք և ի նուիրակէն ևս իմանալոց էք։ Միայն զայս ասեմք, թէ յատկապէս խնամարկութիւն բարերարին աստուծոյ յայնքեանց ալէկոծութեանց անդրդուելի պահեաց զսուրբ աթոռս և զմիաբանութիւնս, որոյ աղագաւ փառք և գոհութիւն ամենառատ բարերարութեան

նորին։ Բայց յայսմ մի թուղթ ընկալեալ մեր ի նուիրակ վարդապետէն ի Բումբայու, յորում թախծութեամբ մեծաւ գրեալ էր զփոխումն ի կենցաղոյս իսկապէս սիրելւոյն մերոյ և բազմարդիւն երախտաւորին սրբոյ Աթոռոյս պատուելի առն հօրաքեռ Ձերոյ՝ աստուածասէր և բարեպաշտ աղայ Յօհանջանին, անկաք ի սուգ և ի տրտմութիւն մեծ, և ողբացաք զարժանին ողբ. ստացեալ զնոր վիշտ սրտի ի վերայ այլ ամենայն ցաւոց մերոց։

...Դարձեալ զայս զուարճալի ճամբաւ ես էր գրեալ մեզ նուիրակ վարդապետն, թէ ի Տփխիսու գերելոցն զՃանի մանկունս առեալ արարացիք ի Բուշեռու բերեալ են յայդր ծառագին վաճառեալ, իսկ Դուք ողորմեալք վասն սիրոյ Քրիստոսի սուրբ ճաւատոցս գերծուցեալ էք զնոսա յանօրինացն և յաստուածախնամ տան Ձերում պահպանես։ Զոր գիտեցեալ ոչ սակաւ մխիթարեցաք և շնորհակալ եղաք զբարեպաշտութենէ Ձերմէ լիագոյն օրհնութեամբ, Քրիստոս փրկիչն մեր օրհնեսցէ ձՁեզ և զօրացուսցէ յամենայն չարեաց փրկեսցէ և ի խնամս իւր ունիցի, յաջողելով զամենայն բանս և զգործս Ձեր ի բարին և ի շահեկանն։

Իսկ արդ՝ սիրելիդ իմ, ահա լսէք և իմանայք, թէ քան զառաջինն այժմ զեռապատիկ նեղութիւնս և զհոգս ունիմք ի մէջ օձից և կարճաց զոլով, և կարօտ եմք մխիթարութեան հաւատարիմ բարեկամաց և սիրելեաց։ Տեսանէք եւ թէ հոգելոյս նախնիքն Ձեր, որք մխիթարէին զմեզ, փոխեցան յայստեացս, և Դուք էք բարի ժառանգք նոցա, վասնորոյ, պարտիք հարկ դիտել ի վերա Ձեր, զի փոխանակ նոցա դուք զմեզ մխիթարեցէք և սրտագիւր առնիցէք։ Ապա ընդէ՞ր է, զի թղթոցն մերոց զպատասխանիս ևս յամեցուցանէք, թողլով զմեզ ի տարակուսանս։

Արդ՝ պատուիրեմք և խնդրեմք, զանցառու չլինիլ զսուրբ զաՀիւս և զհոգեոր հայրութեամբ մերով, այլ ըստ օրինակի բարեպաշտից հարցն Ձերոց հարազատաբար ի միտս Ձեր ունիլ զսուրբ աթոռս և զմեզ, և սիրանիշ թղթովք վշտակցիլ մեզ և գիւրութիւն առնել և ի բարեջանութեանց ոչ պակասիլ։

Որ և լիցիս ողջ ի տէր և զօրացեալ շնորհօք նորին։

Գրեցաւ յամի տեառն 1798 և յունիսի 13, ի սուրբ զահս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 2922, թթ. 44ա—44բ։

34

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՈՆԴԱԿԸ ԳԻՈՐԳԻ XII-ին

Նոյեմբեր 1798 թ.

Թուղթ առ Գիօրկի արքայն վրաց ընդ սուրբ գեղարդեանն, ի պատասխանի երկուց թղթոց նորա, զորս ընդ Միրզայ Աբրահամին, և ընդ այլոց գրելով՝ յոյժ ստիպմամբ և թախանձանօք խնդրեալ էր զսուրբ Գեղարդն, ի փարատումն ժանտախտին ի յերկրէն։ Յորմէ սիրով մեծաւ և օրհնութեամբ բազմաւ ժամանեսցէ ողջոյն Քրիստոսաձիր, բարձրապատիւ և մեծարազձիկ սիրելւոյդ մերում, և ստուգապէս բարեկամիդ սրբոյ զահիս մերոյ, աստուածասէր և նովիմբ զօրացեալ բարեպաշտօն և շքեղափառ օրհնեցելոյ ազգիդ վրաց և ամենեցուն որք քո են, և ընդ ձեռամբ քով մեծաց և փոքունց ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութիւնս աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի յարգութեան Ձերում։ Զի երկու թուղթք Ձեր ձեռամբ հաւատարիմ ծառային Ձերոյ և հոգեոր որդւոյն մերոյ միրզայ Աբրահամին հասին առ մեզ, որովք իմացեալ նախ զողջունէ պատուական անձիդ ուրախ եղաք և փառս մատուցաք յԱստուծոյ։ Եւ ապա ծանեաք զխնդիրդ, որ յաղագս սրբոյ Գեղարդեանն յուղարկելոց, ոյր սակս և սիրելին մեր պատուամեծար Գօգիաբեկն ևս յԵրևանու գրեալ էր։ Արդարև ցաւեցաք յոյժ վասն երկարելոյ ժանտախտն յօրհնեցելումդ երկրի և հաճեցաք կատարումն տալ բարի խնդրոյն Ձերում։ Բայց զի յաղագս յառաջագոյն ոչ յուղարկելոյն սրտնեղեալ և գրեալ էիր զկծական բանս ինչ իբր թէ անցաւակից իցեմք վշտաց Ձերոց, գիտասջիր առ այն, զի որպէս և յայնժամ յապրիլի ամսեանն գրեցաք. վասն վրդովմանցն երկրկիս յառաջնամէ զսուրբ Գեղարդն և զոմանս յայնպիսի իրս յղեալ էաք յայլ երկիր առ մերայնիսն ի պահեստ, վասնորոյ առ ձեռն պատրաստ չունելով զայն փոխանակ նորա զսուրբ Յակոբայ Աջն առաքեցաք յայդր, որ այն ևս հռչակաւոր հրաշալի է։ Իսկ յետոյ ի յերկրիս մերում և ի մերձակայ գիւղս մեր իսկ երևեցաւ ժանտախտն, որ զքանի աւուրս զրեթէ վերջացոյց։ Եւ թէ պետ այլովք սրբութեամբք և մասամբք թափօր առնել տուաք, սակայն ի մայիսէ մինչև ցյունիսի մեջն յարաժամ թախանձելով զմեզ անհանգիստ արարին. և ակն եդին առհասարակ տարագիր լինել։ Նմին իրի ճարահատ եղեալ մեր, բերել տուաք զսուրբ Գեղարդն ի պահեստի տեղւոջէն, և թափօր առնել ետուք, և ժողովուրդն բազմահառաչ արտասուօք ուխտ արարեալ, ողորմութեամբն Աստծոյ և շնորհիւ սուրբ Գեղարդեանն փարատեցաւ ժանտամահն։ Այլ զօրհնեցելոյ երկրէդ երբեմն լսէաք յոմանց թէ ցաւն նուազեալ է և, ակնունեաք վերջանալոյն. իսկ այժմ որ կրկին ծանուցեալ էիք զսաստկութենէ զարձեալ տրտմեցաք և տարակուսեցաք. և ահա ըստ բարի խնդրոյն Ձերում առաքեցաք զՔրիստոսամուխ սուրբ Գեղարդն ձեռամբ սիրելի և որդւոյն մերոյ Յովհաննէս հանճարունակ եպիսկոպոսին, ընդ որում և զայս թուղթըն օրհնաձիր գրեալ առ բարեպաշտութիւն Ձեր՝ խնդրեմք, զի ջերմեռանդ սիրով և աներկմիտ յուսով ընկալեալ զհրաշագործ սուրբ Զէնդ աստուա-

ծեան, հաւատով հայցեսջիք ի Քրիստոսէ զողորմութիւն և զայցելութիւն, և մեք ևս միաբանութեամբ պաղատիմք առ Տէր, շնորհիւ սրբոյ Գեղարդեանն բառնալ զժանտախտն և զայլ ամենայն վտանգաւոր փորձութիւնս ի Ձէնջ և յերկրիդ, և պարգևել Ձեզ զապահովութիւն զբարեզուարճութիւն յամի, որ Ձերօք և մեզ լիցի ուրախութիւն։ Դարձեալ և խնդրեմք. զի ընդ սքանչելի սրբութեանդ՝ և զբերօղն դորա զյիշեալ Յովհաննէս շնորհապարտ եպիսկոպոսն, ի սեր և խնամս Ձեր ունիջիք. և ի շրջագայիլն ի տեղիս տեղիս, հրամայեսցես բազմութեան զինուորաց կարգել ընդ նոսա վասն զգուշանալոյ ի ճանապարհական պատահմանց, զի մի գուցէ թըշնամեաց հանդիպել մշտնջենաւոր աղետ լիցի սրտից մերոց։ Այլ զգուշութեամբ պահպանելով, յետ կատարման ուխտի և երկրպագութեան Ձերոյ, այլևս հաւատարիմ մարդովք և զինուորօք դարձուսցես առ սուրբ Աթոռս, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զմեծութենէ Ձերմէ. և զայլ ամենայն որպիսութիւնս մեր ի յերկուղացդ իմանալով, ողջ լեր ի տեր պարագայից ամօք ի հրճուանս մեր, ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1798 և ի նոյեմբերի ի սուրբ աթոռս էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 429—430:

35

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ

Նոյեմբեր 1798 թ.

Թուղթ ի Մադրաս առ Շահամիր աղայն ի պատասխանի թղթոյն նորա յամի տեառն 1791, յապրիլի 15 գրելոյ։

Ծանուցեալ էիր և զկողմանցդ մերազնեաց կացութիւնն, և զվաճառաց շահեկանութեան նուազիլն և այլն, ընդ որ ևս ոչ սակաւ տրտմեցաք։ Տես այդու ապա զՅունաստանի և զՊարսկաստանի և զայսր կողմանց բարեպատռութիւնս, մինչ խառնակութիւն և յարուցմունքն և այլք չարիք ոչ պակասին։ Բայց զինչ է պիտոյ, եթէ՝ ոչ դարձեալ գոհութիւն և փառք բարեխնամ մատակարարին հանրից՝ Աստծոյ և հայցուածք ստեպ առ նա, զի նա ինքն ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, շնորհելով զխաղաղութիւն և զառատութիւն բարեաց՝ ամենեցուն, մանաւանդ բազմավշտակիր ազգի մերոյ։ Եւ դարձեալ գոհութիւն բարերարութեան նորա, որոյ շնորհիւն յայսպիսում ժամանակի կերպիւք մի կենցաղավարելով ի մէջ օձից և կարճաց՝ զսուրբ Աթոռս Մայրս Հայաստանեաց ի ծառայութեան և ի բարեկարգութեան պա-

հեմք ի պարծանս օրհնեցելոցդ։ Իսկ զոր ի վերոյ խոստացաք՝ զնոր եղելութեանց նշանակել, ահա այս է՝ զի Ներքինի աղայ Մահմատխանն՝ զորմէ յառաջ գրեալ եմք՝ թէ եկն ի Թարուէզ և դարձաւ և այլն։

Նա գնացեալ ի վերա Շիրազու, էառ զայն և յիշխօղն վանեաց անտի և զբերդն աւերեալ հարթեաց և զբազումս ի բնակչացն վարեաց ի կողմն Աստարապատու և ինքն դարձ արարեալ ի Թէհրան և անդ զետեղեալ շահ անուամբ տիրելով ամենայն կողմանցն, ի յիւրայնոց զոմն Սուլեյման խան սարդար կարգեալ յղեաց ի Թավրէզ, հրամանատար կողմանցս իշխողացն, որոյ ի գալն անդ բազումք յիշխողացն, գնացին առ նա ընծայիւք և ոմանք ևս զընծայս յղեցին. այլ Արցախու բանաւորին զընծայ յղելն և չյղելն ոչ ստուգեցաք։ Եւ արքայն վրաց ևս մարդ և թուղթ յղեաց, բայց ոչ զընծայս, և համբաւեցաւ ևս, թէ ընդ Արցախու իշխողին միաբանին առ ի ընդդիմանալ շահ անուանելոյն և սարդարին և այլն։ Այլ այնմ լուաք, թե սարդարն այն ի Թարվիզու չուեալ է առ շահն՝ իբր այսու պատճառաւ, թե շահի եղբայրն ի կողմն Գիլանու ապստամբեալ է, կամին յառնել ի վերայ նորա, առ ի հնազանդեցուցանել։ Կատարած իրացն, թե զիարդ լինիցի, ասածոյ է գիտելի՝ Զայսքան ինչ իմացեալքս այժմ։ Ողջ լեր Տերամբ, մնալով անպակաս ի սերդ և ի բարեկամութիւնդ։

Գրեցաւ յամի փրկչին կենարարին 1793, նոյեմբերի ելն, ի լուսակառոյց աթոռս սուրբ էջմիածին...։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 404—404 բ.

36

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

1798 թ.

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Իսրայէլ կաթողիկոս ամենայն Աղուանից և հաջորդ սրբոյն Եղիշէի առաքելոյն և փոխանորդ սրբոյն Գրիգորիսի թոռանն մեծի լուսաւորչին ամենայն Հայոց մեծաց և Աղուանից...

Յորմէ ժամանեալ հասցէ թուղթ սիրոյ ողջունի օրհնութեան և նամակ պահպանութեան շնորհքն առաքելական և աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն իջեալ հանիցէ և սփռեալ ծաւալեսցի... ի վերա աստուածայխնամ և տիրայպահ օրհնեալ վիճակացդ սրբոյ աթոռոյս, այսինքն Աղուանից, Ալանաց, Ճառու և Տաղստանու, աստուածայխնամ և շքեղայշէն քաղաքացդ, զասապայիցդ

և համայն գիւղորէիցդ ...և ի միջի դոցին կառուցել սրբոց եկեղեցեաց և եկեղեցական դէտ կարգեցեալ հոգևոր առաջնորդաց. մեղսայքաւիչ և սրբայգործ քահանայից, հաւատարիմ երիցփոխաց և հարազատ գանձապետաց, բարէպաշտօն իշխանաց և առատայձեռն հողագործաց, քրտնաջան արուեստաւորաց, ալիք ծերոց և դեռայբողպոջ մանկանց, և առ հասարակ ժողովրդականացդ խնբից. արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հանապազ խնդալ ի տէր Յիսուս առ յոյսն բնաւից յարազուարճ բերկրութեամբ, ամէն։

Եւ ընդ շնորհազեղոյն և զօրհնառաք նամակաւս յայտարարութիւն լիցի քրիստոսայդաւան և լուսաւորչածին ազգացդ հայոց... քանզի անցաւոր յունայն թափուռ և սուտ կենցաղոյս յերբէք ոչ գոյ հաստատութիւն ըստ իմաստոյն, թէ զոր ինչ իցէ ներքոյ արեգական ըստ ամենայնի է յունայնութիւն, վասն զի անբարեբեր ժամանակիս տեսանի չիք ինչ երբէք խաղաղութիւն ամենայն տրտում և ամենայն գլուխ ի ցաւս տեսանի. ես առաւել ի տունն Ալանաց և սուրբ վասն Ստէփանոսի նախայվկային։ Ահավասիկ յայդ իսկ է աստուածայսիրութեան ձերում զանտանելի զքակտումն և զաւարառութիւնս, որս գործեալ եղև ի ձեռն աղայ Մեհմաթ չէզօր գազանին, զի զամենայն աղէտի իրացն ականատես եղեալ մեր, քանզի աղիք տեսողաց յոյժ գալարի այնպիսի չքնաղ սուրբ վանքն որպէս այրի մնացեալ կայ նարդենիս։

Եւ մեր տեսեալ յաչօրդ նորին հանդերձ բազմաւ միայբանեօք լալումն և սրբոյ տանն քակտումն, վասն որոյ շնորհեալք զայս շրջաբերական նամակս ի ձեռս նոյն սրբոյ վանից հարազատ միաբան զՂուկաս հանճարաշատ վարդապետին, գալ և շրջիլ ի մէջ աստուածայսիրութեան ձերում. առ ի կթել ի ձէնջ զինտատիալ զողորմութիւնն։

Արդ դուցէ թէ դուք զայրեցեալ սրտիւ տրտնջեալ տրտմէք ասելով մենք ևս թալանեալ աւերեցաք, այսպէս մնացեալ եմ երկու սրի բերանումն. սակայն ես յաստուծոյ սրոյն առաւել երկնչիմ, քան թէ ձերոյ սրոյն. որք իգուր տրտնջէք և ոչ գիտէք զինչ խօսիք, քան զի մարմինք մեր յամենում աւուր զհաց, զկերակուր և զըմպելի խնդրին ի մէնջ, զի առանց սոցա ոչ կարեմք կեալ և ապրիլ։ Այսպէս և հոգիք մեր յամենում աւուր աղօթս և զողորմութիւնս խնդրեն ի մէնջ, զի առանց սոցա որպէս թէ հոգիք մեր մեղօք մեռանին և ոչ կարեն ապրիլ, ըստ իմաստնոյն Սողոմոնի, որ ասէ՝ ողորմութեամբ և հաւատով սրբին ամենայն մեղք։ Երկրորդ, ողորմութիւնն զհուր հնոցին շիջուցանէ ըստ Եզեկիելի. երրորդ, ողորմութիւնն զաստուած պարտական առնէ ըստ այնմ ողորմի աղքատին փոխ տայ աստուծոյ, ողորմութիւնն անգողանալի լինի չարին. ըստ այնմ գանձէցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց մերձենայ և ոչ գողք գողանայն։

Ապայ ուրէմն ողորմութիւնն բարձրագլուխ զանազան գովի ի մէջ ամենայն առաքինութեանց, և ձեր աստուածայսիրացդ յորդորեմ զսոյն ողորմութեանն պարապիլ և ծնանիլ զաւակ յիշատակի ողորմութեան ի սուրբ վանսն Ստէփանոսի նայխայվկային Քրիստոսի, ըստ այնմ երանի իցէ առն այնորիկ, որ ունիցի զաւակ ի Սիօն։

Զձերին աստուածայսիրութեանն յայտէ սրբոյ վանից պայծառութիւնն և ոչ միայբանաց բազմութիւն և կարգաւորութիւնն, վասն որոյ պարտէք յամենայն յանձնէ ձերմէ շնորհել արդունաւոր ողորմութիւն ի ձեռն Ղուկաս ծայրագոյն վարդապետին, բերեալ շինիցեն զքակտեալ տեղիք սրբոյ տանն և զամենայն պակասութիւնն հեգալով, և որքան սաղմոսերգութիւն պաշտօն պատարագ մատչի, ձեզ և ձեր ննջեցելոցն մասն և բաժին լիցի.

Գրեցաւ օրհնութեան և շրջաբեական կոնդակս ի ՌՄԽԸ (1798) թուին, առ դռան սրբոյ աթոռոյս Գրիգորիսի։

Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 8, վավ. 85:

37

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻՆ

1798 թ.

Կոնդակ ի վերայ երկրին Ռուսաց ծանուցումն զվնասուց սրբոյ աթոռոյս զնեղութեանցն ի գալն յայսկոյս ներքինի բռնաւորին և եղբօր նորին յԵրևան և խնդիր օգնութիւն առնել սրբոյ աթոռոյս ի լցումն բազմազան պակասութեանց նորին. յանձնելով զտուրսն՝ նորոգ Նուիրակին։

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ հոգեպարար շնօրհօք Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս և համայն աստուածակիր սրբութեանցն և հրաշագործ մասանցն սրբոց՝ որք աստ ի վերայ սիրելի և հոգևոր որդւոց մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ դահիս և տէրունի ժողովրդոցս սորին՝ հայկասէր և լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք ի տիրախնամ երկիրդ Ռուսաց՝ ի ներքոյ խնամոց աստուածակացոյց ինքնակալ մեկի կայսէրն Պաւլ Պետրովիչի և ամենափառազարդ կայսերհւոյն իւրոյ և ծիրանածին թագաժառանգ որդւոցն Քրիստոսիւ զօրացելոց՝ Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին և համայն կայսերազնացն։ Ի կայսեբանիստ մայրաքաղաքդ ի Պետրոպօլք և ի Մոսկով և ի բարեճոխ քաղաքսդ՝ ի Հաշտարխան, ի Նոր Նախիջևան, ի Ղզլար, ի Մօզտօք և Եագորցկի, ի Սառաֆան, ի Բօրազան, ի յԵղսէ, ի յԱնդրեա, ի Քօստակ,

ի Ջերքեզ, ի յԱրաղա, ի Կեամուկու, ի Կատերինեսլաւ և ի յԵնկիղալա, և ի նորաշէն քաղաքդ Գրիգորուպօլ և ի բոլոր երկիրդ Ղրիմու և յայլ ամենայն հեռաւոր և ի մերձաւոր տեղիս լայնատարած երկրիդ կայսերականի՝ ի գաւառս, ի գիւղաքաղաքս և ի գիւղորայս՝ ուր և գտանիք յօրհնեցելոց ազգէս Հայոց։

Նախ՝ վայելչապատիւ առաջնորդ Յովսէփ աստուածիմաստ արքեպիսկոպոսիդ և ապա ճշմարտուսոյց վարդապետաց, սրբապաշտօն քահանայից, բարեպաշտ և ճոխապատիւ իշխանաց և մեծատանց, իրաւատէր դատաւորաց, հաւատարիմ գործակալաց և զանձապետաց, հանճարամիտ վաճառականաց, վայելչագործ արուեստաւորաց, արդարավաստակ հողագործաց, երկիւղաղարդ տանտիկնաց և այլ համայն ժողովրդականացդ դասուց առհասարակ մեծաց և փոքունց, արանց և կանանց ի տեր խնդալ։

Եւ ընդամենառատ օրհնութիւնս աստուածային գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց ի տէր և հոգևոր զաւակացդ մօրս հաւատոյ սրբոյ էջմիածնի, զի իմաստնացեալն յաստուծոյ Սողոմոնն ասէ, թէ իմաստնոյ աչք ի գլխոյ իւրում, որ կարէ և այսպես իմացեալ լինիլ, թէ նկատումն տեսութեան և զգուշութիւն իմաստնոյն վասն գլխոյ իւրոյ։ Քանզի՝ որովհետև սկիզբն և պատճառ կենդանութեան և կառավարիչ այլ ամենայն անդամոց՝ գլուխն է (առանց որոյ ոչ է հնար ապրիլ կենդանւոյն) վասնորոյ հարկաւորի մարդս նախապեսաբար գլխոյն պահպանութեան ջանս դնել և զնորին առողջութիւն կամիլ և ապա այլոց անդամոցն։

Արդ սիրելի և հոգևոր որդիք մեր՝ խորհրդական գլուխ է օրհնեցելոյ ազգիս Հայոց սուրբ աթոռս էջմիածին և մայր հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեաց՝ որք ամենեքեան առ ի սմանէ ունին զհոգևորական սնունդ և զլրութիւն կարգաց և շնորհաց և կատարելագործութեան։ Եւ թէ ամենայն կենդանիք ըստ բուսոյ բարուց բնութեան ջանան պահպանել զգլուխս իւրեանց, ուրումն և լուսածնունդ զաւակքդ սորին և անդամք հոգևորք այսմ խորհրդական գլխոյ ըստ իմաստնոյն բանի պարտեք իմաստնաբար զաչս ձեր ունիլ առ սոյն գլուխ ձեր, վասն պահպանելոյ և օգնելոյ ըստ մարմնաւորին, որպես և որչափ կարիցեք։ Իսկ պահպանելն և օգնելն՝ մանաւանդ ի ժամանակի նեղութեանց և փորձութեանց և պակասութեանց հարկաւորի։

Եւ արդ՝ զինչ թշուառալից և բազմավտանգ և դառն ժամանակ մեզ, քան զայս, յորում բարդեցան և դիզեցան ի վերայ երկրացս պատահարք չարադոյնք և աղէտք անհնարինք. և զեղան ի վերայ սրբոյ տանս մեր բազմակոհակ ալիք փորձութեանց և վնասք չափազանցք և նեղութիւնք անտանելիք, զորս մի ըստ միոջէ գրելն գիտեմք զի երկարի յոյժ,

վասնորոյ թողեալ զանդէպ երկարութիւն, ի կարճոյ գրեսցուք։ Քանզի ի թուոջ փրկչին 1794, յորում ներքինի բռնաւորն, զոմն յազգայնոց իւրոց ոստիկան էր յղեալ ի Թաւրէզ հնազանդեցուցանել զիշխօղսն կողմանցս և տիրօղն երկրիս ոչ կամէր հնազանդիլ, ի շարժիլ նորայ յայսկոյս՝ թէ զորքան տագնապս կրեցաք, և իշխօղն տեղւոյս, որ ամրացուցանէր զբերդն, թէ զինչ պահանջմունս արար ի մէնջ և էառ, մնասցէ այն, զի մրրիկն էանց յայնմ ամի և դադարեցաք։ Այլ ի 1795 թուին ներքինի բռնաւորն ինքնին յարեաւ ի վերայ կողմանցս և զեղբայրն իւր զմնդակ ըստ ինքեան՝ յղեաց ի վերայ Երևանու. և իշխօղն տեղւոյս յայնմ տարւոջ ևս էառ ի մէնջ ըստ նախընթաց ամի աւելորդ առեցելոյն և ի բնակչաց երկրիս զմասն մի ժողովեաց ի բերդն և ամրացաւ և զայլսն ամենայն վարեաց ի կալուածս օսմանցւոց և այլ կողմն. և մեզ ևս հարկեաց գնալ ի սրբոյ աթոռոյս, ուր և կամիցիմք. զոր և բազումք իսկ ասացին և գրեցին, և մեք գիտեաք, թէ գնալն մեր յայլուրեք ապահովութիւն լինիւր մեզ, և յորժամ յիշեալ զմնդակ եղբայրն ներքինւոյն եկեալ զօրօք բանակեցան յանդիման բերդին, գնացաք առ նոսա, խորհելով թէ զորչափ ինչ նեղութիւնս և վիշտս կրիցեմք անձամբք և որքան ինչ ծախք լինիցի, ձեռօք տայցեմք, միայն թէ՝ շինութիւն սրբոյ գահիս անաղարտելի մնասցէ։ Եւ նոքա իբր պատուով ընկալան զմեզ և քաղցրութիւն ցուցին։ Բայց յագահութենէ բռնադատեցեալք՝ ընդ չափաւոր ընծայսն մեր ոչ հաճելով զբազմապատիկս պահանջեցին զդրամս և զայլ իրս։ Եւ որքան ընդդիմացեալ աշխատեցաք և տարաժամեցաք յաւուրս բազումս, չեղև հնար չափաւորաւն անցուցանելոյ, ապա որչափ ինչ առ մեզ գտանեցաւ, զպակասն ևս յայլոց փոխ առեալ ետուք՝ թէ այնու զերծանիցիմք յորոգայթէ որսողացն։ Բայց յետ վճարելոյ մեր զայն, սկսան վասն ներքինի բռնաւորին զընծայս խնդրել այնքան ծանր, մինչ զի եթէ զհանդերձս մեր ևս վաճառէաք ոչ լինիւր վճարել։ Այլ ի քանիս աւուրս նոքա պահանջելով և մեք յանձն չառնելով, մինչև զայրանալ նոցա և տանջանս սպառնալ ումանց ի վարդապետաց մերոց, ապա և ընծայապես տրոցն զորքան ևս ուտելիս և ըմպելիս և զայլ բազմազան պիտոյս տանէին ի սրբոյ աթոռոյս՝ թէև մերովս գիտութեամբ։ Կացեալ մեր ի զազիր և ի գարշահոտ բանակի հաշտութիւն անկաւ ի մէջ զօրապետին և Երևանու խանին. և զօրապետն զմեզ իբր խիլայիւք շահեալ արձակեաց առ սուրբ աթոռս, և ինքն առեալ զպատանդս ի խանէն չու արար առ եղբայրն իւր ներքինի բռնաւորն։ Զկնի ոչ բազում աւուրց, յորս կայք ի հոգս վճարելոյ պարտուցն մերոյ, ի վերայ այնմ տարակուսանաց լուաք զդառնաղետ բօթս՝ յետ ուղևորելոյն նորա՝ վերոյիշեալ ժանտ եղբայրն ներքինւոյն կրկին եկն յԵրևան, արկանել զբերդն ընդ ձեռամբ իւրեանց և պահակս կարգեալ, և այլ ումն խան ևս

ընդ նմա ի ներքինւոյն վասն մեր զխիլայս երբեր, որոց աղագաւ մինչ վերստին գնացաք յԵրևան՝ զգինս խիլայիցն քսանապատիկ տուեալ խիլայաբերին և գազանամիտ եղբօր ներքինւոյն, հազիւ թափեցաք զօձիք մեր յանկուշտ ագահութենէ նոցին: Իսկ յետ այսոցիկ ես մինչ ներքինին զուղտս էր խնդրեալ ի Երևանու, զքառասունն ես ի մէնջ պահանջեալ ունէաք, տարան, և զպակասելոցն ևս զգինսն երկպատիկ առին:

Այսչափ նեղութիւնք և վնասք եղեն մեզ ի 1795 թուէն մինչև ի 1796 թուոյ սկիզբն: Յայնժամ ես, թէ որքան նեղեցաք և վշտացաք և յակամայ կամս զընծայս առաքեցաք առ մահաթոյն վիշապն ներքինի. յաղագս զերծ առնելոյ և զսուրբ գահս ի մեծավնաս զրպարտութեանց, թողումք զայնոսիկ:

Իսկ 1797 թուին մինչ ներքինի բռնաւորն կրկին շարժեցաւ յայս կողմն և զոմանս իշխօղս երկրաց և զտեղւոյս խանն իսկ կողոպտեաց, և զյիշեալ ժանտ եղբայրն իւր յղեաց յԵրևան, անօրէնն այն դարձեալ վերստին զնոյնպիսի ծանր պահանջմունս արար ի մէնջ, որպէս յառաջին յերկուս նուագսն արարեալ էր, և զաւուրս քառասուն դեգերեալ մեր յԵրևան քաղաքի, որչափ և վաստակեցաք թեթևացուցանել զծանրութիւն պահանջմանցն, ոչ եղև հնար, վասնորոյ զմեծ մասն տուաք, և վասն մնացելոյն անճարացեալ մուրհակ մատուցաք: Այլ ոչ ևս յամեցեալ դատաստանացն աստծոյ՝ յաւուրսն յայնոսիկ ներքինի բռնաւորն ի յԱրցախու դղեկին խողողեցաւ և ամբարշտագոյն եղբայրն ևս աստ նկուն եղեալ անարգանօք դարձաւ յետս, և մինչ փութայրն թագաւորութեան հասանիլ, յերկուց աչացն զրկեցաւ: Եւ արդ թէպէտ զկնի այնչափ վնասուց և տառապակրութեան ապրեցեք ի ժանեաց դաժանագոյն գազանացն, որոյ աղագաւ գոհութիւն և փառք բարերար փրկչին մերում՝ որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նոցա՝ այլ ոչ խսպառ վերջացեալ անագորոյն ցեղին, այլ ևս եղբօր որդին նորա բռնակալեաց և տակաւին զնոյնակերպ վնասս կրեմք, որպէս յայսմ ամի ի փետրրվարին. հարկեցեալ յիշխօղէն տեղւոյս՝ զոչ սակաւ տուրս ընծայից առաքեցաք:

Եւ ի յունիսին ևս նախ զօրապետն իւր և զկնի ինքն ևս եկեալ մինչև զևոյ, թէպէտ և ինքն փութով դարձաւ յետս վասն ապստամբութեան եղբօրն, սակայն ժանտ զօրապետն ի բազում աւուրս մնացեալ անդ զպահանջումն արար ի մէնջ, զոր մանաւանդ ի բռնադատութենէ երկնականացս՝ առաքեցաք, և մինչ էհաս առ նա ընծայն մեր, դարձաւ և նա ոչինչ օգուտ արարեալ կողմանցս, բաց ի վնասուց: Եւ այսպէս իւրաքանչիւր բռնաւորք անիրաւեալք և զանզգամաբար պահանջելն և յափշտակելն միայն գիտեն, այլ զխնամելն ամենևին ոչ: Ուստի՝ յայս չորս տարիս զրէթէ գոյաթափ արարին զսուրբ տունս և մաշեցին զկեանս մեր անմիջոց պահանջմամբ և վշտացմամբ:

Եւ թեպէտ գոհունակ եմք զտեառնէ աստծոյ, որ ի լինիլ այնքան վրդովմանց և աւերութեանց՝ ամենազօր ողորմութեամբ նորին սուրբ աթոռս մնաց ի շինութեան և ի պայծառութեան իւրում անդրդուելի ի հենից բարբարոսաց՝ հանդերձ մերձակայ վանօրէիւքն ի մխիթարութիւն օրհնեալ ազգիս մերոյ, բայց զի ի վերայ այսքան վնասուց ելքն առաւելեալ է սրբոյ տանս և մուտքն նուազեալ, և բազում իրաց պակասութիւնք նեղեն զմեզ, տարակուսեալ վարանիմք ի դժվարութիւնս կառավարութեան գերահռչակ սրբոյ գահիս. և յայլ ուստեքէ օգնութիւն ինչ ոչ ունելով նախ յաստուած ապաւինիմք, և ապա ի բարեպաշտութենէ ձերմէ օգնիլ յուսամք: Վասնորոյ այժմ ի յուղարկելս մեր ի յօրհնեալ երկիրդ և առ ձեզ նուիրակ զհոգևոր որդիդ մեր զտէր աստուածիմաստ վարդապետդ և զարհիեպիսկոպոսդ, գրեցաք ընդ դմա զայս կոնդակ որոշակի ծանուցանելով աստուածասէր ժողովրդոցդ մերոց զդառնաղէտ դիպուածսն կողմանցս, և զանհուն վնասսն սրբոյ աթոռոյս և զտաջանելի կիրսն մեր:

Բայց զի՞րդ կարելի էր զամենայն մի ըստ միոջէ պարունակեալ ի թղթի աստ և զի՞նչ վայելուչ իցէր զբովանդակ արարս խուժականացն անաստուածից համարձակ արձանացուցանել աստանօր: Այլ զոմանս երևելի անցսն գրեցաք, որոց և փոքր ի շատէ սիրելիդ մեր և առաջնորդ Յովսեփ արքեպիսկոպոսդ մերձ գոլով յայսկոյս յայնմ միջոցի գիտակ է, իսկ առաւելապէս հաւատարիմ նուիրակդ մեր ի սկզբանէ եղելութեանցն մինչև ցայժմ ականատես և ականջալուր գոլով, զամենայն ստուգութեամբ կարէ պատմել ձեզ բերան առ բերան. որով և քաջայայտ լինի ձեզ՝ որ թէ ի դրամաց, թէ յեկեղեցական սպասուց, թէ ի բազմութենէ գրաստուց և թէ յայլ զանազան պիտոյից պակասեալ կամք. և յագահամիտ բռնաւորաց դեռևս նեղիմք:

Եւ թող զմիաբանիցն կենցաղավարութիւն, երթևեկացն բազմութիւնք ես անպակաս: Ուրեմն ի լսելն և յիմանալն սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց զայսոսիկ աղետս մեր և զպակասութիւնս հարազատ որդիաբար ի գութ շարժեալ ցաւակից լիջիք սրբոյ աթոռոյս մօրս ձերոյ լուսատուի և հոգևոր հայրութեանս մերոյ, և յօժար սրտիւ իւրաքանչիւր ըստ կարողութեան իւրում օգնել կամելով ի նեղութեանս մերում յատկապէս իբրև իմաստախ զլիաձեռն տուրս մատուցջիք վասն սրբոյ աթոռոյս ի լցումն բազմակերպ պակասութեանց սորին, որով կարիցեմք և ևս կառավարել զսա իւրավայելուչ պայծառութեամբն ի պարծանս ձեր և ի փառս աստծոյ: Եւ զօր հատուկ օգնութեան անուամբ առատաձեռնել կամիցիք, շուտով յանձնեսջիք սիրելի որդւոյդ մերոյ ծայրագոյն նուիրակիդ ձերոյ գերզգօն վարդապետիդ և արհիեպիսկոպոսիդ՝ հասուցանել ի սուրբ գահս և առ մեզ. որով և երևեսջիք իմաստունք ըստ բազմա-

պատկապես հատուցէ ձեզ՝ օրհնեսցէ զգործս ձեռաց իւրաքանչիւրացդ՝ զասս և զտուրս ձեր և զարուէստս. զայգիս և զանդաստանս և զանդեայս ձեր, և զարդիւնս դոցին առատուցուցանելով լի արասցէ զամենայն պէտս ձեր։ Եւ որպէս դուք յայսմ և խնամս իւր պահեսցէ միշտ։ Եւ որքան սաղմոսերգութիւնք, աղօթք, պաշտամունք և սուրբ պատարագք և շնորհաբաշխութիւնք կատարին յաստուածաբնակ սուրբ տաճարիս, յայնցանէ մասն և բաժին առատ եղիցի ձեզ կենդանեացդ և համօրէն ննջեցելոց ձերոց, ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1796, և ի լուսանկար աթոռս ամենայն հայոց ի սուրբ էջմիածին։

Մատենադարան, ձեռ. 4501, թթ. 473բ—475·

38

Մ. ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Հ. ԱՐՂՈՒԹՅԱՆԻՆ

17 փետրվարի 1799 թ.

Աստուածարեալ բարձր սրբազան հօր, ամէնողորմ տեառն և բարեբարի

Մաքուր և պատուական գարշապարացն՝ ջերմեռանդական համբոյր։

Յառաջ քան զայս ես յայտնեալ եմ Ձերոյ սրբազնութեանն, որ վասն հարկաւորութեան իմիք դէպ եղև ինձ գնալ ի Ղզլար, զորմէ մեծաւ թախանձանօք՝ զխնդիրս արկեալ առ սորին բարձր արժանապատուութիւնն, ընկալեայ զկարճօրեայ բաշբօրթս, գնալ և փութով վերադառնալ։

Որ և գնացեալ, թէպէտ ջանայի փութացուցանել զվերադարձն իմ, սակայն ի պատճառս սաստիկ ցրտութեան (որ գրեթէ և ոչ իսկ վայրաբբնակ անասնացն էր կար շրջել ի յայնմ միջոցի). մնացի անդ՝ իբրու կալանաւորեալ։

Այժմ գոհութիւն տեառն, որոյ շնորհիւն՝ կրկին դարձ արարեալ անտի, արժանացայ կրկին տեսութեան՝ սորին բարձր արժանապատուութեանն՝ խնամածու հօրն իմոյ, որոյ ընդ հովանեաւ կամ ի հայրական խնամս, և եմ իսկ շնորհակալ մեծապէս։

Թէպէտ՝ ողորմութեամբն աստուծոյ, ոչ միմիայն ինձ, այլև ամենայնից ընդ ծառայութեամբ Ձերոյ բարձր սրբազնութեանն եղելոցս, չերևին բնաւ ինչ տառապական կացութիւնք, բայց տարակաց լինելն մեր այսքան միջոց ի ցանկալի սպասու Ձերմէ ոչ սակաւ պատճառէ ի մեզ դառնութիւն և տրտմութիւն սրտի. այլ յայնմօրէ ունիմք համարեալ մեզ օրն իբրու ամ մի, և տարին՝ որպէս զդար։ Վասնորոյ՝ և աղաղակեմք միշտ առ ամենաբարձրեալն աստուած, փութացուցանել զերջանիկ գալուստ Ձերոյ սրբազնութեանն ի ցնծութիւն ազգիդ, ի հաստատութիւն տանս և ի մխիթարութիւն մեզ՝ մշտապատրաստ ծառայից Ձերոց։

Բնակիչք քաղաքին մերոյ ի տարագրութեանց անտի վերադարձեալք, տեսանին այժմ ժողովեալք ի սեպհական բնակութիւնս իւրեանց, բայց ոչ սակաւ կասկածին ի խորամանկ պարսկին, այլ՝ զյոյսս իւրեանց առ նորին ինքնակալ կայսերութեանն արկեալ սպասեն փրկութիւնն իւրեանց։

Մնամ Ձերոյ բարձր սրբազնութեանն ամենախոնարհ ջերմեռանդ պաշտոնեայ՝ տէր Մելքեսեդ Տեր-Առաքելեան։

1799 փետրվարի 17, ի յԱժդրխան

Մատենադարան կաթողիկ. դիվան, թղթ. 9. վավ. 15:

39

ԱՍԼԱՆՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ

Հունվար 1801 թ.

Աստրախանայ հայոց հոգևոր կանցիստորին
պիթլիզեցի հայ Բարսեղ դի Ասլանովէ
խոնարհաբար խնդիր

Թարեղէս քանի տարի յառաջ անվանեալս եկեալ եմ աստ Հաշտարխան, վասն աշխատանաց և ունենում իմ անդ բազմամեայ օրինաւոր կին, սակայն վասն իմ ծովացեալ մեղացն անօրէն չար Աղայ Մահմատ խանի աւերութեանն Թիֆլիզու և գերիվարելն քրիստոնէյից, զկինն իմ ընդ նոսա գերի են տանում որպէս բազում ջանիւք և յետևողութեամբ շոջակայ լինելով զկնի յերկրէ յերկիր ոչ եմք կարողանում ազատիլ, իսկ և կատարելապես տեղեկանում ենք, որ Թէյրան զոչեցեալ քաղաքի մեծ դատաւորի մոտ է և դարձուցել է կնոջս ի յօրէնս Մահմետի մանւանդ առել է իւրն կին. ուստի ոչ եղև հնար առ ի ազատումն ի ձեռացն անօրինի. որպէս բարեագիրն ունիմ, որ իմ հարազատ եղբայր Ղազարն է յղել տեղւոյս բնակիչ պարոն Գաբրիէլ Ճաքարօյեանի ձեռամբ։ Այժմ ես աստ է։ Կան այլ ես բազում վկայք իսկապէս տեղեակ են լիշեալ կնոջս տաճկանալն։ Վասն որոյ հարկաւորեցայ ամենաղորմած հայոց հոգևոր կանցիստորէտ խոնարհաբար խնդրեմ և սոյն խընդիրս իմ հանդերձ բարեագրովս մատուցանեմ ընկալնուլ և գրել ի ժուռնալ, որով վեց տարի է կնոջն գերեւարութիւնն առաւել ես տաճկանալն առ այտմ գուշել յիշեալ ստորագրեալ վկայքս ի յատեան

ըստ օրինի հարցումն առնել և ապայ շնորհել ինձ հրաման ամուսնանալոյ։ Որ և սպասեմ ամենազօրմած կոնցիստօրէտ արդարապէս վճիռ և հրամանի։

Թւին 1801 յունվարի... ումն.

Ես էրզրումցի տիրացու Մկրտիչս յիշիյալ Բարսեղին կնոչն ուրանալոյն գիտակ եմ։

Ես մարաղեցի Ավաքի որդի Սարգիսըս Բարսեղի կինն թուրքանալն գիտակ եմ։

Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 11, վավ. 11։

40

ՔԻՉԻԿ-ՕՂԼԱՆԻ ՏԱՂԸ ՏՓՂԻՍԻ ԱՎԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԲՌՆԿՎԱԾ ՄԱՀՏԱՐԱԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Անթվակիր

Ի վերայ մահ ցաւոյ, որ ի Տփխիս
Տեսէք, ի՞նչ բարկութիւն է Աստուածանից կամով քաղաքիս
Ուղիղ սրտով խնդրեցէք կու փրկէ ղամով քաղաքիս,
Ջանազան հպարտութիւնն յայտնի է բանով քաղաքիս։
Մեղքն վարձքին յաղթել է մէ զօրեղ ջանով քաղաքիս,
Չորս կողմն թափօր տալով՝ բօմակ է ղամով քաղաքիս։
Կենդանիք, դուք դարձ եկէք, յանկարծակի մահն իմացէք,
Զարմացք է քաղ՚քի բանն, սարսափելի ցաւն իմացէք,
Պատիժ է մեր մեղացն, էս նախսանդի շահն իմացէք,
Անկոտրում պաս ուտողներ, Աստուածամէն մահն իմացէք,
Պետկական եկեղեցիքն կողպած է ժամով քաղաքիս։
Նշանով քաղ՚քի մէջն էս ի՞նչ թաւուր բան է գալիս,
Կրակն երկնքեմէն ոնց մէ ինսան բ՚համ է գալի,
Մարդոյ սէրն հատել է, մեր միջումն ման է գալի,
Բարեխօս Աստուածածնի ջուխտ աչքեմէն նամ է գալի,
Մասունքներն համբուրեցէք ռանգ ռանգ ղամով քաղաքիս։
Միաբան սանաֆքեարով գառն ու ոչխար մատաղ արէք,
Բերում են սուրբ Գեղարդը, գլուխներդ սադաղ արէք,
Կու փրկէ օրհնած ջուրն, մասունքներն թաթախ արէք,
Փէյանդաղ խալիչէքն Հինդու եկած մօտա արէք,
Հէնց մնում է օրինակը դրուստ է միզան քաղաքիս։
Արդարներ, դուք մօտ եկէք, Աստուածեմէն սէր ուզեցէք,
Փառք տուէք, աղօթք արէք, քաղ՚քի համար խէյր ուզեցէք,
Մեռնողներուն հիսաբ չ՚կայ, կենդաններուն տէր ուզեցէք,
Քուր ու աղբեր հաւատացէք, հալալ սրտով մէր ուզեցէք,
Ո՞ւր է էն զովք ու սաֆէն, էլ չ՚կայ ղամով քաղաքիս։
Թելէթու Շահնաբաթն մօտ գնացէք, օրա արէք,
Վաթաններիցն աւարայ՝ փօթոլներին օրա արէք,
Մեզ համար լաւ խրատէ, վատ բաներն թովբա արէք,
Սիրեցէք աստուծոյ ճամբէն, մէկս մէկանց մատայ արէք,
Ջան ասացէք, ջան լսեցէք, մէկ մէկու կամով քաղաքիս։
Նաչարա ղարիբ տեղն դարդիս համար հաղ եմ ասում,
Չեմ գիտում՝ ո՞վ է մեռել, ո՞վ կենդանի՝ սաղ եմ ասում,
Սոլորած քաղ՚քի բանն սրտիս մէջն դաղ եմ ասում,
Կարօտ եմ ճամբորդեմէն ոնց մէ խաբար սաղ եմ ասում,
Քիչիկ Օղլանը աղատես քեաշքի էս գամով քաղաքիս։

Քիչիկ-Օղլան

«Քնար հայկական», 1868 թ., Ս. Պետերբուրգ, էջ 564—565։

41

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՆԳԱՆԱԿԱԳԻՐ

2 ապրիլի 1805 թ.

Առ սրբոյ աթոռոյ էջմիածնի ուղղափառ պաշտօնեայ և սրբակրօն վարդապետս և քահանայս, և առ բարեպաշտ և ողորմած իշխանս և առհասարակ արս և կանայս, որք եք յազգէ հայոց, ուր և բնակիք։

Յայտնելով ծանուցանեմք ձերում պատուականութեան վասն այս գրոյս ունօղ խղճալի նորընծայ Յովհաննէս քահանայիս, որ է ինքն ի բնէ Գանջայու, որոյ առ ինչ պատճառի եկեալ ի գաւառն Թիֆլիզու ի գիւղն, որ կոչի Շուլաւէր, յորում բնակեալ սորայ ընդ նախնական դրացեաց իւրոց, բայց ի յահէ ներքենի Աղայ Մահմադ խանին պարսից (որ եկն և էառ զքաղաքն Թիֆլիզ) յորմէ ցիր և ցան եղեալ զանոթս սրբոյ եկեղեցւոյ և զամենայն ինչս տանց իւրեանց, անկեալ ի ձեռս արեանարբու պարսից, որոց վասն յօրէ յայնմանէ եկեալ ի գիւղաքաղաքն Սղնաղ և բնակի աստ հանդերձ ընտանեօք իւրովք։ Ուստի ոչ ունելով սորայ զհարկաւոր պէտս մարմնոյ առեալ յոմանց զքանի թուման պարտս, որով կենցաղավարեալ ինքն և ընտանիքն իւր սակաւ ինչ ժամանակ, բայց ոչ կարաց վճարել զպարտս, այլ առաւելեալ պարտքն ի վերայ պարտուց և ոչ կարաց հատուցանել։

Ապա անտի եկեալ առ մեզ և խնդրեաց ի մէնջ զգիր վկայականի և մեք ի ներքոյ ստորագրողքս ի գութ արկեալ գրեցաք և տուաք սորայ

զայս վկայական գիրս (իբր մատամբ ցուցանել) որոյ ի գալն ի միջի ձերում (ունելով սուրբ մասն սրբոյն Գէորգայ հանդերձ պահարանաւ առաջի սրբազան առաջնորդին մերոյ և այլոց բազմաց յայտնեալ) գթութեամբ ողորմել ձեր զորայ ի փառս կամաւոր աղքատացելոյն Քրիստոսի որդատրօք և ողորմութեամբք ձերովք ազատեսցէ զձեզ յամենայն փորձութեանց։

Գրեցաւ ի գիւղաքաղաքն Սղնաղ ի Թուոջ փրկչին ի 1805 և հայոց ՌՄԾԴ (1254) և յապրիլի 2 (Բ)։

Մատենադարան, ձեռ. 8216, թթ. 120ա—120բ։

42

Ս. ՄԱՄԱՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

3 սեպտեմբերի 1805 թ.

Սրբոյ և մեծի աթոռոյն էջմիածնի հարազատ և ընիկ միաբան և քաղաքացս Թիֆլիզու և Ելիսավէտապօլու հայոցն ծայրագոյն առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոս

Քաղցրաբարոյ և ողորմած տէր մեր

Խնդիր Թիֆլիզեցի Սօլօմօնի

Յառաջ քան զայս ի գալն պարսից իշխողին Աղա Մամատ խան կոչեցեալ պղծոյն, որ աւերեաց զքաղաքս մեր և գերեաց ի սմանէ զբազումս, ընդ որս և ես՝ Մամաջանի որդի Սօղոմոնս, գերեցայ բոլոր տամբ և ընտանեօք իմովք, և տարեալ ի քաղաքն Երևան անդ վաճառեցին զիս իմով որդւով և կողակցիւս. զոր և գնեաց զմեզ բարեպաշտ և աստուածասէր ոմն աստապատցի Գալուստի որդի պարոն Ստեփանն. այսինքն զիս և զկին և զորդին իմ և պահեաց զմեզ ի տան իւրում աւելի քան զվեց ամիս, ամենայնիւ ապահովութեամբ և, վերջապէս, զքիրայն ճանապարհի և զբոլոր խարջն մեր հոգացեալ, յղեաց ի տեղիս մեր։

Ապա զկնի մեր ի քաղաքն Երևան եղեալ իշխանաց վկայութեամբն՝ բազմակնիք ստորագրութեամբ թուղթ էր գրեալ աստ, որով թղթովն զմեզ սրբոյ Աթոռոյն էջմիածնի ճորտ ետ։

Եւ յայնմ հետէ մինչև ցայժմ՝ ինքնայօժար կամօք և հաւանութեամբ վերոյ յիշեալ պարոն Ստեփաննին, մեք ճորտ եմք եղեալ սրբոյ աթոռոյն, և ըստ մերոց կարեաց մտերմաբար ծառայեմք հոգևոր վերակացուաց նորին։

Այժմ՝ Մէլիքի որդի Յօսեփն, որ էաք յառաջ ճորտ նորին, եկեալ զմեզ աշխատ առնէ բանիւք բազմօք, թէ իմ ճորտ էք, ապա երկուց տերանց ծառայելն գոլով անհնար, եթէ դուք ևս ոչ հոգասջիք վասն մեր, ի հարկէ պարտիմք թողուլ զմերայինսն բոլոր և գնալ յօտար յերկիր։

Եւ թէ ոչ կարիցէք դուք մեզ ազատել, պարտիք դուք թողուլ զմեզ. և այնու հետև զմեզ ազատող պարոն Ստեփաննն հոգասցէ վասն մեր. որ ահա աստ ի քաղաքոջս է և նա։

Ուրեմն խնդրեմք հոգալ վասն մեր ի փառս աստուծոյ։ Եւ լեր ողջ ի պարծանս յետին և խոնարհ ծառայ Սօղոմոնիս Մամաջանեանին։

Մամաջանեան Սողոմոն տայ ձեռացագիրս պարոն Ստեփաննի ազատեաց զիս ի գերութենէ և ետ ճորտ սուրբ էջմիածնայ.

1805 և ի սեպտեմբեր 8, ի քաղաքս Թիֆլիզ

Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 16, վավ. 80։

43

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ Ն. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

3 օգոստոսի 1810 թ.

Ողորմութեամբն ամենազօրին աստուծոյ՝ ընտրանօք սրբազնագումար հոգևորական ժողովոյն Արարատեան աթոռոյն, խնդրանօք ազգին Հայոց և բարեհաճութեամբ ամէնողորմ կայսերն մեծի հաստատեալ կաթուղիկոսութեանն Ամենայն Հայոց Եփրեմ[79] ծայրագոյն պատրիարգ գերագահ սրբոյ աթոռոյն էջմիածնի, շնորհեմք զայս գիր օրհնութեան և ազատութեան սիրելի և հոգածին որդւոյդ մերում Ներսէս Աղաջանեանիդ. զի յառաջքն զայս ի յաւերմանն քաղաքիս Թիֆլիզու հանդուցեալ հայրն քոյ Աղաջան հանդերձ քև և մարբքով վարեցեալ էր ի գերութիւն ի ձեռս պարսից և մեր յայնմ միջոցի գոլով ի սուրբ աթոռոջն տեսեալ զձեզ ի գերութեան ցաւեցաք յոյժ։ Որ և ի յաստուածապարգև անձնական գոյից մերոց տուեալ զգինս փրկանաց ձերոց. ազատեցաք զձեզ ի գերութենէ պարսից որպէս զի լինիջիք մեզ հոգեծին զաւակք և յիշատակք բարի. զորս տէր օրհնեսցէ և զօրացուսցէ ի հոգևորականն մխիթարութիւն մեզ, բայց որովհետև մեք մի միայն ի փառս աստուծոյ արարաք զայս գործ. վասնորոյ այսու հաստատուն գրով ազատ կացուցանեմ զքեզ համայն յետագայ սերնդօք քով որ ի կողմանէ ճորտութեան, ոչ ներկայ եղեալ աթոռայինք կամ յետագա մեր նստող կաթուղիկոսք ունիցին ընդ քեզ և ընդ սերունդս քոյ ձեռնամխութիւն և ոչ թէ ի յօտարաց ոք, այլ դու համայն յետագայիւք անձնիշխան գոլով ինքնայօժար կամօք, ո՞ւմ և կամիցիք ծառայեսցես և եթէ ի կողմանէ ազատութեան մերոյ վիճօղ

ոք լիցի ընդ քեզ ի համայն դատաստանատունս անընդունակ լիցի այնպիսիս է բան։

Գրեցաւ ի 1810 ամի յոգոստոս 3-ին ի Թիֆլիզ ի վանս սուրբ Աստուածածնի, որ և առ ի հաստատութիւն բանիս՝ զկնիք մեր դրոշմեցաք մերով սեփհական ստորագրութեամբ։

Եփրեմ պատրիարգ ամենայն Հայոց և կաւալէր։

Մատենադարան, ձեռ. 8216, թթ. 129բ—130ա:

44

Հ. Արարատյանը Տփղիսի ավերման մասին

1813 թ.

Վաղարշապատեցի Հարություն Արարատյանի կյանքը
(հատվածաբար)

...Բայց Ղարադաղցիք այդպիսով ավելի խոհեմ էին վարվել և առավել լավ տեղ էին ընտրել իրանց ազատության համար, որովհետև մենք երկու օր ճանապարհ էինք գնում Փամբակաձորի հովտի վերայով և այդ երկու օրն ամեն քայլափոխում ականատես էինք լինում ցավալի և նախատանաց արժանի արարմունքների։

Ղարաբաղի, Երևանի, Նախիջևանի և ուրիշ նահանգների ժողովուրդը՝ հայ և մահմեդական, երբ իմանում են, թե շահը—իրանց թագավորը՝ զորաժողով եղած՝ գալիս է Երևանի վերայ, կամենում են ազատվել այն ավերածքներից ու կոտորածներից, որ զորքն անցկենալիս միշտ սպասելի էր, ուստի նրանք իրանց բոլոր գույքերն ու անասուններն առած՝ անցնում են Վրաստանի սահմանը։

Նրանք յույս են ունենում, թէ Վրաստանումը հանգստութիւն կը վայելեն և շահն էլ չի վստահանալ Վրաց թագաւորի վերայ գնալ։ Նրանք այս բանում սխալուեցին։

Հենց որ խեղճերը գաղթեցին Վրաստանի կողմը, իսկույն զգացին հացի պակասություն, որ երբեք չէին նախատեսել (էջ 185):

...—Դու տեսնում ես, շարունակեց նորգեցին, որ քաղաքն ամուր է, իսկ միջի բնակիչները բոլորեքեան հերոսներ են, բացի դրանից Վրաց արքայորդիքն իւրաքանչիւրն իր սեպհական երկրամասից կուղարկեն 10.000 կան զինուոր. Երևանի խանը յույսը դրած սրանց վերայ, արդէն դիմադրում է շահին, այլ ես կասկած չկա, որ մենք ջարդ ու փշուր կանենք պարսից ամբողջ բանակն, և կը տիրենք նրանց ունեցած չունեցածին։ Այն ժամանակը քաղաքումն ամեն ինչ էժան կը լինի և լավ կը

լինի։ Ես շատ անգամ եմ պատերազմումն եղել և գատում եմ փորձով, իսկ դու դեռ ջահել ես և ոչինչ չես հասկանում (էջ 194):

...Երբ լուր եկաւ թէ շահը դուրս է եկել Շուշու նահանգից և արդեն մտել է Գանձակ ու ճանապարհին իրան բոլոր հակառակորդներին նուաճում է և կրակի ու սրի է մատնում, իմ տէրս շտապեց բարև մնայ ասել իւր ընտանիքին և 1794 թուի օգոստոսի վերջերին ինձ հետ միասին ճանապարհ ընկաւ երեկոյին շատ ուշ, որ մաքս չը վճարի, ինչպես Թիֆլիզ մտնելու ժամանակն արեց (էջ 194):

Լիլոյից մինչև Սղնախ երեք օր մենք ճանապարհ էինք գնում և ոչ մի մարդաբնակութիւն չը տեսանք։ Մենք անցել էինք Մարտղոփ գիւղի միջից, որ նոյնպէս ամայի էր։ Ժողովուրդն աւազակների ձեռքից լեռներն էին փախել (էջ 195):

...Սղնախի վերայ այդ ժամանակ լիազոր պետ էր Հերակլի աւագ որդին և գահաժառանգը։

Հերակլը տեսնելով, որ Մահմատ-խանի մոտենալով վտանգը մեծանում է, քանի քանի անգամ դիմում է ոչ թե հրամայելով, այլ խնդրանօք՝ իւր ժառանգին, նոյնպէս և միւս որդւոցը, որ շտապեն, մի քանի հազար զորք օգնութիւն ուղարկեն իրեն։

Սղնախի արքայորդին շատ անգամ էր ժողովել իւր հօր խնդրած զորքն և քաղաքից ճանապարհ դրել դեպի Թիֆլիզ, բայց նորա հպատակներն այնքան կամակոր էին, որ կողմնակի ճանապարհներով վերադառնում էին իրանց տները, ըստ որում նրանք այնքան իրանց հայրենիքի պաշտպանության համար չէին հոգում, որքան մտածում էին, որ ժամանակին արտերից իրանց հացերը ժողովեն, գինի շինեն և իրանց ընտանիքի ապրուստի հոգսը քաշեն։

Այսպիսի անհնազանդութիւն էլ ցոյց տվին նրանք իմ Սղնախ եղած ժամանակ՝ երբ արդեն շահը բոլորովին մօտեցել էր Թիֆլիզին (էջ 196—197):

...Մենք գիշերեցինք Մարտղոփ գիւղումը, որի բնակիչներն, ինչպես վերն ասացի, թողել փախել էին։

Միւս օրը հասանք Լիլօ գիւղը, բայց այստեղ ես շունչ կենդանի չը գտանք՝ բացի մեռած մարմիններից, ըստ որում պարսիկներն այստեղ էլ էին հասել։

Որքան յառաջանում էինք դեպի Թիֆլիզ, այնքան ավելի սպանվածներ էինք տեսնում։

Լիլօյումը նոյնպէս գիշերը մնացինք և երրորդ օրն երեկոյեան դէմ մտանք Հավլաբար արուարձանը, որը պարսիկները կրակ էին տուել։

Դիտաւորութիւններս այն էր, որ Կուր գետի վրայով անց կենանք ուղակի Թիֆլիզ, բայց պարսիկները վերադառնալիս՝ կամուրջը նոյնպես

կրակ էին տուել, որպէս զի եւսի կողմից իրանց անհանգիստ չանեն (էջ 209)։

...Բոլոր երեկոն և գիշերը մենք հազիւ ապաստան էինք որոնում և մեր գլուխը փրկելու հոգսումն էինք, էլ ե՞րբ ժամանակ ունէինք հրդեհի վերայ ուշք դարձնելու. ուստի լոյսը բացվեց, մենք նոր տեսանք, որ ողջ Թիֆլիզը ծխի մէջ խեղդուած էր և ամեն կողմից մուխ էր բարձրանում։

Երբ տեսանք, որ տեղ չկար Կուրն անցնելու, քաղզի բերմամբ սկսեցինք Թիֆլիզի ուղիղ դէմ ու դէմ ընկած Կուկիա գիւղովը վեր բարձրանալ դէպի Արակ գետի կողմը և հասանք Հաւճալայ գիւղը (էջ 209—210)։

...Մցխեթի տներն էլ բոլորը կրակ էին տուած, ամէն տեղ գիւղացւոց դիակներ էին ընկած, իսկ վարդապետները փախել էին։ Վանքի դռանը մեզ պատահեցին երեք հոգի, որոնք փախած տեղից յետ էին եկել կերակուր գտնելու։

Ամենայն տեղ տակն ու վերայ արինք և բացի մի ուժից ընկած ծեր խողից՝ ոչինչ չը գտանք։

Ոչ մէկիս մոտ մորթելու մի ինչ և իցէ գործիք չկար։ Վերջապէս մենք ձեռք բերինք մի կոտրուած մանգաղ, ոմանք էլ սուր քարեր վերցրին, սակայն հնգեքեանքս էլ այնպես ուժից ընկած էինք, որ մեծ դժվարութիւնով կարողացանք պառաւ կենդանուն սպանել։

Ցախը հարկավոր էր գետի ափիցը բերել. բայց ով կը համարձակուէր ոտքն յառաջ դնել, կարող էին այնտեղ ավազակներ պատահել և մեզ սպանել, ուստի որոշեցինք չոր փէյինը վառել և վրէն մեր խորովածն անել։

Մեր խորովածը հազիվ կարմրեց, հում էր, աղ էլ չէր արած, բայց քաղցած փորն ե՞րբ է նայում, ինչպես եղավ՝ կերակրուեցինք։

Այդ ցորեկն և առաջիկա գիշերն անց կացրինք Կաթուղիկոսի կիսաշէն տան մէջ։

Կաթուղիկոսական տեղապահն և վանքականները փախչելիս՝ վանքի գանձը թաղցնում են պատի մեջ եղած պահարանումը, որի դռնակը շինված է եղել ամենաբարձր տեղումն և շարւում է եղել նոյն մի քարերով ինչ որ ամբողջ պատն էր։

Բայց վանականները, շտապելուց թե միամտաբար՝ գանձը պահել են և սանդուխքը տեղը թողել։ Պարսիկները հասկացել են բանի էութիւնն և բոլորը յափշտակել (էջ 211—212)։

...Միւս օրը մենք որոշեցինք գնալ Թիֆլիզ՝ Գարթիսկարի միջով, որ աշխարհի խաղաղ ժամանակն էլ երկիւղալի է. ավազակներն այնտեղից միշտ անպակաս են։

Ճանապարհը, Մցխեթից մինչև Թիֆլիզ, գնում է Կուր գետի քարքարոտ և սարահարթ ափերով և նեղ շաւիղներով, այնպես որ երկու մարդ միասին հազիւ կարող են ման գալ։

Ճանապարհին ես մտքումս դրի ընկերներիցս յետ մնալ, որ գուցէ աւազակներն ինձ հանդիպեն և տանին։ Ի հարկ է, նրանք իրանց օգտի համար՝ ինձ քաղցած չէին թողնիլ, կարող էին վերջը մի որևէ հայի ծախել ինձ (էջ 213)։

...Համարեա թե դիակների միջով ճանապարհ կտրելով՝ Թիֆլիզ մտա Տափի-թաղի դռնովը. ոհ, սարսափս կրկնապատկուեց՝ երբ տեսա, որ թշնամու սուրը միջերից երկու կես էր արել մինչև անգամ կանանց ու երեխաներին, թող թէ այր մարդկանցը, որոնցից մի աշտարակի մեջ մոտավորապես հազարը թափված էր։

Իմ Թիֆլիս մտած ժամանակս՝ շահ վերադարձին դեռ Գանձակ չէր մտել, երեք օրուայ ճանապարհ Թիֆլիզից հեռու էր։

Ամբողջ քաղաքը թափառեցի, հասայ մինչև Գանձակի դուռը՝[80] ոչ մի կենդանի մարդ չը տեսայ։ Մի քանի ծերունիք միայն ծեծուած, ջարդուած, թափառում էին այս ու այն տեղ։ Թշնամին բռնել էր այդ ծերերին և ստիպել, որ ցույց տան իրենց թաքցրած գանձերի տեղերը, վերջը խեղճերի վերայ զանազան բարբարոսութիւններ կատարելով՝ թոյլ էր տուել։

Բոլոր քաղաքը, համարեա, հրդեհի էր մատնուած և դեռ ծխում էր՝ եղանակի տաքութիւնը մի կողմից, նեխած դիակների գարշահոտութիւնը միւս կողմից՝ օդը միանգամայն ապականիչ և վարակիչ էին դարձրել։

Այս սարսափելի տեսարանը ծնկներս ծալեց. մնացի մոլորուած, կանգնած, ոչ ույժ ունեի և ոչ քաջասրտութիւն, որ քաղաքիցը դուրս գամ, Գանձակի դուռն անցնիմ, ընկնիմ Սեյդաբադի ճանապարհն և հասնիմ Կրծանիս՝ ուր յույս ունեի, որ պտուղներ կգտնեմ և պատերազմի տեղը կարող եմ տեսնել։

Ճարս կտրած՝ քաղաքից դուրս գնացի եկած ճանապարհովս, ուր գոնէ խոտ գտնւում էր ուտելու։ Դեռ նոր էի, սակայն, ոտքս Թիֆլիզից դուրս դրել, որ կրկին ստիպուեցի ուժահատութիւնից կանգ առնել և օրվա մնացած մասն ու առաջիկայ գիշերը բաց երկնքի տակ անց կացնել։

Հետևյալ առավոտը՝ Մցխէթա վերադառնալու ժամանակս ես կերակրուեցի խոտով և պտուղներով. էլ չէի հարցնում, ձեռքս ընկածը բերանս էի տանում. այդպիսով՝ ամբողջ օրը հազիվ տեղ հասայ (էջ 213—214)։

...Այստեղ մենք եկւորներից իմացանք, որ շահը գնում է դէպի Պարսկաստան և արդեն Գանձակից դուրս է գնացել։

Այս համբաւը տարածուելուն պէս՝ Դուշեթի և Անանուրի այն կողմն անտառներում թաք կացած Թիֆլիզի և ուրիշ տեղերի բնակիչները հաւաքուեցին գիւղերը։

Այդ ժամանակն ես այնպիսի ցաւալի տեսարանների ներկա եղայ, որ իմ սեփական թշվառութիւնս մոռացայ։

Ծեր ու երիտասարդ, տղա և աղջիկ, ամեն մի դասակարգից, մեծ բազմութեամբ հաւաքուել էին Անանուր և օր ու գիշեր անց էին կացնում բաց երկնքի տակ։ Ոչ հագուստ ունեին նրանք և ոչ ապրուստ, շարունակ ողբում էին թէ իրանց և թէ մերձաւորների և ազգ ու ընտանու ճակատագիրը։ Հայրը որդուն էր կորցրել, որդին չգիտեր, թէ հօրն ի՞նչ է պատահել, մայրերն աղջիկներից էին զրկուել, աղջիկներն իրանց մայրերից, այրը կնոջն էր որոնում, կինն իւր մարդին։ Այսպես, ամեն կողմից նրանց վայնասունն օդը թնդացնում էր (էջ 216—217):

Ես լսել էի, որ Հերակլ թագաւորն Անանուրումն է և ուզում էի անպատճառ տեսնել։

Այս նպատակով մի առաւօտ գնացի այնտեղ գտնուած վրացոց մի աւերակ վանքի մօտ ման գալու։ Ինչպէս ես կարծում էի, այդ տեղ միայն կարելի էր թագաւորին հանդիպել։

Վանքը շատ մեծ չէր և համարեա բոլորովին աւերուած էր։ Վանքի մօտ մի կիսաւեր կամարակապ խուց կար։ Հանկարծ տեսայ, որ մի մարդ երեսը պատի կողմն արած՝ նստած էր։ Նա վրէն ծածկած ուներ մի ոչխարենի մուշտակ։

Նրա մօտ մի ուրիշ ծերունի էր կանգնած։

Ես մօտ գնացի ծերունուն և հարցրի. ո՞վ է այս անկիւնումը նստողը։

Ծերը խոր յոգւոց քաշեց և սկսեց հայերեն երկար ու ձիգ բացատրութիւններ տալ. և ահա ի՞նչ։—«Այս մարդը, որին դու այժմ տեսնում ես, մի ժամանակ մեծ փառքի մէջ էր։ Սկսած Թահմազ-ղուլի խանի[31] օրից՝ բոլոր Ասիայումը սրա անունը յարգ ու պատկառանք էր ներշնչում։ Սա իւր ազգի ամենալավ կառավարիչն էր։ Հօր պէս հոգում էր իւր ազգի բարօրութեան համար և 40 բոլորակ տարի կարողացաւ իւր թագավորութիւնը ողջ ու անվնաս պահպանել։ Աւաղ ծերութիւնն ընկճեց սրա զօրութիւնն և ամեն բանին վերջ դրեց։

Մտածելով՝ որ իւր մահից յետոյ իւր գերդաստանի մէջ կարող են երկպառակութիւններ և ընտանեկան պատերազմներ բորբոքուիլ, սա մտքումը դրեց իւր ժողովրդին մի վերջին բարիք ես անել. Նրանց լաւ կառավարելու համար՝ իւր թագավորութիւնը բաժին բաժին արեց։ Բայց չարաբաստիկ Հերակլ թագաւորն իւր յոյսերի մեջ սխալուեց։

Թահմազ-ղուլի խանի օրով՝ Հերակլը Պարսկաստանի ամբողջ գինուորականութեան հրամանատարն էր. այսօր նույն Թահմազ-Ղուլի խաների երբեմնեան ներքինին եկաւ յաղթութիւն կատարելու սրա ուժահատ ծերութեան վերայ։

Սրա հարազատ որդիքը հրաժարուեցին իրանց հօրն օգնելուց և հայրենիքն ազատելուց. նրանք շատուոր էին։ Նրանցից ամէն մէկը կարծում էր, թէ իւր աշխատութիւնն իւր համար չը պէտք է լինի, այլ ուրիշների համար։

Սա ստիպուած էր դիմել Իմերեթի թագաւորի օգնութեանը, և եթէ դու այն ժամանակը Թիֆլիզումն էիր, ապա տեսած կը լինիս, անշուշտ, Իմերեթի զօրքի խայտառակ դրութիւնը։

Հերակլը մի բուռը մարդով պատերազմում էր հարիւր հազարի դէմ և սա զրկուեց իւր գահից նրա համար միայն, որ իւր որդիքն անխղճաբար բարձի թողի արին իրանց հօրն և զոհ տուին։ Հօրը զոհ տուին՝ այն էլ ո՞ւմ, մի ներքինու, մի մարդի, որ երբեմն ստրկօրէին խոնարհում էր սրա առաջին։

Աւարեց սրա բազմամեայ փառքը, մայրաքաղաքը փլատակների փոխուեց և ժողովրդի բարօրութիւնը կորստի մատնուեց։

Այժմ դու այս պատի տակ տեսնում ես Վրաստանի մեծափառ արքային՝ մարդկանց երեսից թագկացած, անօգնական և մի հասարակ ոչխարենու մէջ։

Իւր պալատականներն, իւր մերձաւորները, իւր բուն հպատակները, որոնց սա սնուցում, լիութեան մեջ լղփացնում և զրկումը փայփայում էր, բոլորեքեան սրան բարձի թողի արին. մնաց միայն հայերի միջից ամենաստորին հայը։

Ես ծառայում էի սրա խոհարարի մօտ և կերակրում սրա սեղանի փշրանքից։ Ես միայն չը մոռացայ, որ այն փշրանքը նոյնպէս թագաւորինն էր, ես միայն չը ձգեցի այս անբաղդ թագաւորին. ես եմ սրան խնամում... (էջ 217—219):

...Զարմանալին այս էր, որ տան տիրոջս մօտ գտայ իմ պարտապան վաճառականին, որն ինձ փող էր պարտ։

Վաճառականը հետս երկար բացատրութիւնների կարիք չտեսաւ, նա իւր նախկին ունեցած իրավունքովը նույն օրն իսկ ինձ նստացրեց իւր ատամները թափուած գրաստի վերայ և ուղարկեց Թիֆլիզ, որպէսզի գտնեմ այնտեղ իւր տունը, նայիմ նկուղը, ուր որ կինն իւր գույքը պահել է, այնտեղից գնամ Կրծանիս իւր այգին, ուր ինքը շահի ասպատակութիւնից մի քանի օր յառաջ՝ գինի է շինել և ժամանակ չի գտել տուն բերելու՝ թողել է այնտեղ, ես այժմ այն գինին տուն բերեմ և այլն։

Այս անգամն ես Անանուրում ութ օր մնացի։

Անանուրից մինչև Թիֆլիզ մի օրվան ճանապարհ է, իսկ ես երեք օրումն եկայ, ըստ որում խեղճ ձին ոտքը հազիւ էր փոխում։

Եկայ Թիֆլիզ և վաճառականի տունն աւերակ ու նկուղը փորփրուած գտայ։ Նրանց պահած գոյքի փոխարէն՝ երկու սպանուած մարդ էին ընկած։ Միաժամանակ այգումն էլ ոչինչ չը կար. գինին հօ ավելի շուտ կարող էին գտնել ու տանել։

Ողջ Թիֆլիզն այրուել աւերակ էր դարձել, այդ պատճառաւ վաճառականի տան տեղը կարողացայ գտնել միայն նշաններից։ Տան մօտ մի եկեղեցի կար, որ ես լավ ճանաչում էի. այդ եղաւ իմ նշանը։

Բուն Թիֆլիզի մեջ և թէ դուրսը՝ մեռելների հոտն այնքան սաստիկ էր, որ միանգամայն վարակիչ էր։

Կրծանխումն ես հանդիպեցի վրաց հպատակ ղազախ-բորչալուեցիների (իմ մոր ծննդավայրն է) իրանց ընտանիքով. նրանք վերադառնում էին իրանց նախկին տեղերը։

Թուրքերից մէկը պնդեց, որ վաճառականի ձին իրանն է և չորս ամիս առաջ գողացուած է. իրանց մարդկանցից մի քանիսը նրա խոսքերը հաստատում էին։

Նրանք ուզեցին ինձ կապել և հետները տանել, որ իրանց երկրումը պատժեն ինչպէս գողի։ Ինչ դժուարութիւնով եմ կարողացել հաւատացնել՝ թէ ես անմեղ եմ, և թէ ով է ինձ քաղաք ուղարկել և ընչի համար։

Ես ազատուեցի ղազախեցիների ձեռքից, բայց աւելի ուրախ եղայ, երբ ազատուեցի այն անպետք ձիուցը, որի համար իզուր տեղն այնքան անգթաբար ծեծ կերայ։

Այդ տեղից գնացի այգիները՝ քաղցս յագեցնելու համար պտուղ ժողովելու։ Անանուրից գալիս՝ հետս ոչինչ պաշար չէի վերցրել, ճանապարհին միայն խոտ էի ուտում. արդեն քաղցածութիւնը սովորութիւն էր դարձել, երեք օրն այնքան զգալի չէր իմ համար։

Գանձակի դռների մօտ՝ Թուրքի-մէյդանին[82] կպած՝ եկեղեցուց ոչ հեռու՝ ես գտայ անվնաս մնացած տուն, որ ոչ այրուած էր ոչ աւերուած։ Կամեցայ այդ տանը մնալ մինչեւ միւս օրը, բայց հենց ներս մտայ թէ ոչ, տեսայ մի մարդ, որ մերկ, երեսի վերայ ընկած էր գետնին և հազիւ էր շունչ քաշում։ Մօտ եմ գնում՝ գտնում եմ, որ սա նա է, որին ես առաջարկում էի օր յառաջ ինձ հետ Թիֆլիզից հեռանալ։

Նա վիրաւորուած էր և մեծ դժուարութեամբ կարողացաւ յայտնել, որ երեք օր էր՝ բերանը նշխար չէր մտել, քաղցած էր։

Ես նրան պտուղներ տվի և խորհուրդ տեսայ, որ ինչպէս և իցէ, իրան ձգի այգիները, բայց այս խելօքը պատասխանեց, թէ աւազակներից վախում է. կարծես, բան մնացել էր իւր վերայ, որ խլէին, կամ թէ ներկայ դրութիւնից աւելի վատթար դրութեան մէջ պէտք է ընկնէր։

Ես նրան նկատեցի, որ իւր երկիւղն այնքան անտեղի և ցնորական էր որքան և այն յոյսը, որ ունէր, երբ կարծում էր՝ թէ շահը պետք է յաղթուէր և չէր ուզում հաւատալ ակներև հանգամանքներին։

Նա մասամբ պատմեց ինձ, թէ ինչ անգթութիւններ ու բարբարոսութիւններ են գործել պարսիկները Թիֆլիզում. բռնում են եղել երեխաների ոտքից և միանգամից սրով միջից կիսում, որ փորձեն իրանց թրերի սրութիւնը։

Այն մարդը պատմեց, որ այսքան թշուառութիւնների պատճառը Հերակլի կինն է[83] եղել։ Երբ թագավորն իւր քաջ զօրքի հետ Կրծանխումը պատերազմելիս է եղել, քաղաքի բնակիչներն ուզեցել են քաղաքն ամրացնել և պաշտպանուելու համար ամենատեսակ միջոցներ ձեռք առնել։ Բայց երբ տեսնում են, որ թագուհին թողեց քաղաքն ու փախաւ սարերը, այն ժամանակն իրանք էլ սրտաբեկւում են, յուսահատւում են, պաշտպանուիլ մտքներիցը հանում են և բոլորեքեան համարեա փախչում են։

Ես թողի այս վիրաւորուած մարդին և հեռացայ, կամեցայ բոլորովին ապահով լինելու համար՝ գտնել մի այնպիսի տուն, որտեղ գողեր լինէին բնակուած՝ այսինքն այնպիսի գողեր, որոնք գիշերները դատարկ տներն ընկած՝ իրեղէններ են պտտում։

Այս բաներն անողները տեղացի աղքատներն էին, սրանց յայտնի էին հարուստների տները, սրանք իրանց արհեստովը հարստացան, իսկ հարուստներն աղքատացան։

Եկեղեցուն կից ես մի ուրիշ անվնաս տուն ես գտայ, տունը պատկանում էր մեծահռչակ Սարգիս աղային, որ իր տան հետ՝ եկեղեցին էլ ինքն էր շինել։

Բակումը պատահեցի մի պառաւ կնոջ, որ զրկուել էր իւր ընտանիքից և ծառայում էր տան մեջ ապրողներին, որոնք հենց իմ որոնած մարդիկն էին։

Անբաղդն անբաղդին կը կարեկցի. այդպէս էլ բարի պառաւն արեց. նա ինձ իւր հովանաւորութեան ներքոյ առաւ։ Շարունակ չորս օր ես այս տանն անվտանգ ապրեցի և երկիւղի տեղիք չունէի, գլխաւորապէս նորա համար, որ իմ պաշտպաններս գողերն ու աւազակներն էին, որոնք միևնոյն արհեստովն էին պարապում՝ ընչով որ ես։

Ես ման էի գալիս փողոցներն ու քանդած և փորփրուած տները, թափուած գրեանք էի որոնում և բերում պառաւին պահ տալիս։ Իսկ սնունդ ճարելու համար՝ գնում էի Վերայի ջրաղացներն, ալիւրի զամբր (փոշի) էի հաւաքում, մտնում էի գոմերը, թափուած գարի էի ժողովում և բերում պառաւին։ Դրանցից նա իմ համար հաց է թխում։

Մտած ջրաղացներից մէկի մէջ դիպուածով ես մի ուրիշ ծանոթի հանդիպեցի (էջ 217—223)։

«Վաղարշապատցի Յարութիւն Արարատեանի կեանքը», թարգ. ռուսերենից Պ. Պ., Թիֆլիս, 1892:

45

ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՑԱԽ ԿԱՏԱՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Գալուստ Աղայ Մահմատ խանին ի Ղարաբաղ[83]

Յետ մահուան Նադիր շահի ի մեծի վրդովման կայր աշխարհն Պարսից. այր զարամբ լեալ ունիլ կամէին զայն իշխանութիւն նոյնպէս և հարկատու խանք շրջակայ սահմանաց պարսից և վրաց նշկահեն զնոյն պետութիւն և եղեն ինքնագլուխք, իսկ զկնի մահուան Ջանդ Քարիմ խանին Աղայ Մուհամմատ խանն, որդի Ղաջար Մհամմատ Հասան խանին ի պատանդ լեալ ի Շիրազ գաւառի ի փախուստ դառնայ անտի և յինքն գրաւեալ զիշխանութիւն ի վերայ աշխարացն պարսից, ի 1176 ամի մտանէ յերկիրն Ատրպատական ընդ ձեռամբ իւրով նուաճէ ի հարաւային կողմն Երասխ գետոյն, և անցեալ ի հիւսիսակողմունս նոյն գետոյն թէպէտ տիրելոյ զերկիրն Թալիշու և Երևանայ յարուցանէ զպատերազմս բազմապիսիս, բայց նուաճեալ զայնս չկարէ դեպ զառաջինն առաքելով վասն Իբրահիմ խանին զպարգևս հրաւիրէ զնա ի հպատակութիւն ինքեան և ցուցանէ նմա զսէր, սակայն ի նմին ամի զկնի վերադառնալոյ յԱտրպատականայ թագաւորէ ի միջի նոցա ըստ դիպուածոյ իմիք խռովութիւն և թշնամութիւն։

Ի վերջոյ Աղայ Մահմատ խանն դառնայ ի Շիրազ և ըստ յաջողելոյ բաղտին դադարեցուցանէ զաղմուկ և զռովութիւն այնր աշխարհի ապա ի 1207 ամի (1793 թ.) դիմե ի Շիրազայ մեծաւ բազմութեամբ և մտանէ յԱտրպատական առ ի տիրելն աշխարհին Վրաց, Արցախու, Թալիշու և Երևանու և զըմբոստացեալ ինքնագլուխ խանս ածել ի հնազանդութիւն տէրութեան Պարսից։

*Առեալ զայս լուր խանին Իբրահիմայ հրեշտակ առաքե ի Վիրս, յԵրևան և ի Թալիշ դաշինս հաստատէ և զուխտ կապէ ընդ նոսայ, որպեսզի միով հոգով զորացեալք ընդ դեմ շահին Մահմատայ խափանեսցի զմուտ նորա յայս աշխարհ և չմտանել ընդ լծով հարկի նորա և ապա Իբրահիմ զընակիչս Ղարաբաղայ զոմանս առաքէ ի Վիրս, զոմանս ի Շրուան, զայլս լնու ի խորաձոր և յամուր տեղիս աշխարհին Արցախու և զկեսն ընդ հարուստ պաշարաց առեալ տանի ի երկիրն մնայ անդ, ապա խորհի ընդ երկուց մելիքաց ընդ Արովայ և ընդ Ջումշուտայ, կարգադրէ զզօրս և**...

Մինչ այս մինչ այն Աղա Մահմատ շահ մերձենայ ի բերդն Շուշի և հարկանէ զբանակ իւր հանդեպ նորին, բանայ զսոսկալի պատերազմ, բայց վտանգեալ չարաչար դառնայ ընդ կրունգն և յետ երեսուն և երից աւուրց առաքէ զգիր յորդորանաց առ խանն Իբրահիմ օրինակ զայս.

*«Ի բախմանէ երկնից տեղան թափին քարինք ամբոխոյ, դու խոլացեալ կալնուս ամրոց քեզ ի միջի ապակոյն»։ Իբրահիմ առեալ զայս գիր ընթեռնու և ի միւս երեսս այնր թղթոյ գրէ. «թէ պաշտպան իմէ այնք որ իցէ յայտնին ի բախմանէ քարանց պահէ զապակին»։ Մահմատ շահ ընկալեալ զայս անակնկալ պատասխանի զայրանայ և կատաղի և հրամայէ շանթառատ թնդանօթօք զբաղաքս առնել աւերակ, թէպէտ բազմիցս ջանաց*** *...շահն և զուչինչ ի զօրաց իւրոց կորուսանէ զբազումս նամանաւանդ մերձենան աւուրք ձմրան և պարագայք գործոյն խոստանան նմա զբազում վնասս, ուստի ապաշաւեալ ես այժմ խորհի դառնալ ի Պարս և սպասեալ դիպող ժամանակի, բայց վասն ապագայ շահաւէտ տնօրէնութեան առ այս վախճան կոչէ առ ինքն զխանն Գանձագայ Ջաւաթ և զմելիք Մեջլումն այր բազմահանճար և խորհի զնոքօք առ ի գտանանիլ զելս իրացն ըստ իւրումն հաճոյից։*

Գալուստ Աղայ-Մահմատ շահի ի Վիրս

Աղայ-Մահմատ շահ առեալ զփորձ վնասուն կամի դառնալ ի Պարսըս, բայց մելիք Մեջլում ունելով զատելի նախանձ ընդ արքայն Հերակլեայ, ի բազմաց հետէ երբ նա ունիլ կամէր զնա և տալ ի ձեռս խանին Իբրահամայ ուստի խորհի ընդ շահին և ասէ մեծի արքայից դառնալ ձեռնունայն աշխարհն Պարսից ունի հարուցանել զմրրկեալ խռովութիւնս և չէ մարթ ի սակաւ միջոցի խաղաղել զնոսին, վասն որոյ ինձ հաճոյ թուի իմով օժանդակութեամբ դիմել արքայից ի քաղաքն Տփխիս և զարքայն Հերակլ և զաշխարհս նորին ածել ի հնազանդութիւն այնուհետև աջողին և ելք առման քաղաքին Շուշոյ և գուցէ ինքն Իբրահիմ գայցէ ի հնազանդութիւն, զի ասէ Իբրահիմ և Հերակլ դաշնադիր են միմեանց, զի պարտելն միոյն նկուն լինի և միւսին։

Հաւանեալ ընդ այսմ Աղայ Մահմատ շահայ խաղայ գնայ մեծաւ բազմութեամբ յաշխարհն Վրաց։

Իմացեալ զայս խորհուրդ իսկոյն ի ծածուկ ազդէ արքայն Հերակ-

* *Երկու բառ անընթեռնելի է։*

** *Բաց է թողնված տեքստում։*

լայ, թէ չէ զօրքն պարսից ջանաց աւերել զբերդն Շուշի, բայց պարտեալ ի քաջաց Արցախու յետս ընկրկեցաւ։ Այժմ մեծաւ զայրացմամբ դիմեալ գայ առ ձեր տերութիւն ուստի որքան հնար է փութացեք կանխաւ ի պաշտպանել զձեր։ Հերակլ առեալ զայս լուր, արագէ ի ժողովել զզօրս և յօգայ ամրացուցանել զբերդորայս, ուստի գրէ զհրաման իշխանաց եղելոց ընդ իւրով տեսչութեամբ և ստիպէ զնոսա կարի շտապաւ առաքել զզօրս. իսկ նոցա զանց արարեալ զնորաւ պարապին ի զբոսանս նամանաւանդ ազգականք իւր շարժեալ ի կրից ընդդէմ արքային Հերակլայ ջանային քակել ի նմանէ զմիաբանեալ իշխանութիւնս որպէս և արարին, իսկ արքայն Հերակլ յետ ընկալնելոյ զչորս հազար զօրս, ի խանէն Սուլեյմանայ տեառն Բօրչալու նահանգի գնայ ի Ղազախ ի գիւղն Ինջայ և այդ հարեալ զբանակ սպասէ օգնական զօրաց։ Երբ լսէ, թէ Աղայ-Մուհամմատ շահ մուտ գործեաց ի նահանգն Գանձակայ ինքն տեսել զպակասութիւնս զօրաց իւրոց անճարացեալ դառնայ ի Տփխիս, ամրացեալ զայն կարելին արագութեամբ և ինքն ելեալ ի մերձ ի Կրծանիս և անդ սպասէ գալստեան շահին։

Շահն հասանէ ի գիւղն Սողանլուղ. կացեալ անդանօր ի նմին գիշերի ընդ առաւօտն արձակի մեծաւ սրտմտութեամբ ի վերայ Տփխիսայ։

Հերակլ առեալ զհանդերձանս պատերազմին և շանթառատ թնդանօթս ելանէ ընդ առաջ և ի նմին տեղւոջ պատահի պատերազմ յերկուց կողմանց անհնարին քաջութեամբ բախեն զմիմեանս և յերկուց կողմանց անկանեն վիրաւորք բազումք, Հերակլ ցուցանէ ի նմին պատերազմի զմեծամեծ քաջութիւնս և ունէր ի մօտոյ խորտակել զանհամար բազմութիւնս Աղա-Մահմատայ, եթե ոչ աստուած լինէր ձեռնտու շահին Մահմատայ որպէս հինքն ասէ անպիտան և անմիտ ազգաւ*... զնոսա, վասն զի ի նմին սաստկացեալ պատերազմի ամպ ինչ լօրթագոյն ի պարսից կողմանէ ծածկէ զխորաձորս մերձակայ լերանց և արգելու զտեսութիւնս աչաց զօրաց արքային վրաց, ուստի ակամայ կամօք տեղի տայ սպային պարսից ելանել ի վերկոյս ի գլուխ լերանն Խարփուխ կոչեցելոյ. յայնժամ արքայն Հերակլ վտանգեալ յերից կողմանց վերադարձեալ մեծ դժուարութեամբ մտանէ ի քաղաքն և անդ թեպետ կարէր քաջութեամբ զդեմ ունել կատաղի զօրացն պարսից ապաստան ունելով ինքեան զամրութիւնս անառիկ բերդին, բայց տեր էր մատնեալ զքաղաքն ի ձեռս այլազգեաց որպէս երբեմն զԵրուսաղեմ Նաբուգոդոնոսորայ, Անտիոքիսի և Տիտոսի ուստի ոչ կարաց մնալ ի նմին քաղաքի այլ արագէ ի փախուստ ի կողմն Կախեթու։

* Մի բառ անընթեռնելի է։

Մելիք Մէջլումն յերկուս առաջս բաժանէ զգունդն պարսից զմինն ինքն առեալ ի Սոլոլակի դիմէ և զմիւսն տայ ի ձեռն զօրապետին Մահմատայ և հրամայէ նմա արձակել քաջութեամբ ի վերայ բերդին յարևելից կողմանէ, ուր են բաղանիք, առ ի շփոթել զզօրս արքային Հերակլայ ի վերջոյ ի վերուստ անտի մելիք Մեջլումն զօրէն հեղեղաց ջուրց պատառէ զթանձրութիւնս պարսպին և ողողէ ի բերան սրոյ զողորմելի քրիստոնեայս, բաղտն, որ զմարդն ի յօտս հանէ և զմեծամեծս խոստանայ ոչ կացեալ յիւրումն խոստման ի սակաւ միջոցի ի խոր սուզանէ, որպէս այժմ արար Հերակլայ քաջին, նա որ զբազում նահանգս ած ի հնազանդութիւն և խանս ոչ սակաւ կացոյց հարկատու այժմ ոչ կարաց գոնէ տալ զխռախոյս իւրոց զօրաց զդիմի հարկանել անօրէն պարսից, այլ փախչի ի Կախեթ և ապաւինի յանմատչելի լերինս մեծին Կովկասու, որ միանգամայն պաշտպան էր ազգին վրաց ի դարուց հնուց, ապա այնուհետև բեկանին ամենայն զօրութիւնք մնացեալ զօրաց, թուլանան բազուկք հայոց և վրաց անդէն եղելոց ի խորշս տանց ապաւինին ամեհիկ օսաց, խեսուրաց և փշաւաց. զթիկունս առ թիկունս դարձուցանին և զերես ի փախուստ։

Ուստի ամենայն բազմութիւնք անօրէն պարսից մտին ի քաղաքն Տփխիս արիւնս ծարաւիկ անդէն քրիստոնէից մասին ոչ որպէս յաղթող առ յաղթեցեալն, ոչ որպէս թագաւոր առ հպատակս, ոչ որպէս տիրող առ տիրեալս, այլ զօրէն պատառող գազանց սրեալ զժանիս կնճիռ ի ճակատն և սուր ի ձեռին սրախողխող կոտորումն ծերոց և տղայոց, կորզէին զդիեցիկ մանկունս և ձեռաց ծնողաց առաջի աչաց նոցայ զոմանս զէնուին և զոման(ս) զքարի հարկանէին, զկաթն մարց խառնեալ ընդ արեան մանկանց զերկիր թանային և ոմանց մանկանց զերեզման զարգանդ մօր առնէին, աղաղակ նոցա առ աստուած բարձրանայր, աստուած խնոյր զականջս իւր առաջի նոցա, ինքն գուցէ այսպէս կամեցաւ ի շուկայից հեղեղք արեան ընթանային, արտասուք գերեալ զերկիր ոռոգանէր, բայց ոչ ոք էր որ օգնէր նոցա։ Արաբացի գայլք մտեալք ի յօտս գառանս անօգնական քրիստոնէից պատառէին որքան և կամէին, լերինք Թելեթու չունէին զտեղի բաւականութեան գերեաց գումարելոց աստանօր։ Թող լուիցէ հինն Երեմիայ վասն Իսրայէլի, թող նոր յօրինեսցէ թատեր արտասուաց սուրբն Գրիգոր Մեծն ի Պարթևս, թող սուգ զգեսցին սուրբ կոյսն Նունեայ առաքելուհին Վրաց աշխարհի, զի բազում երկամբ ծնեալ զորդիսն ի սուրբ աւազանէն, այսօր ի ձեռս տաճկաց տանջին չարաչար մատնեալք ի գանս, ի բանտս և ի խայտառականս և պարանոց ձեռին զօգնութիւն խնդրեն, բայց ոչ գտանեն։ Որպէս և այս օրինօք հրձիգ առնեն զամենայն քաղաքն և լցեալ աւարաւ և գերութեամբ դառնան ի Ղարաբաղ, թող անմեղ արիւն արանց և կա-

նանց, ծերոց և տղայոց, թող արտօսր յորդաբուխ աղեկիզեալ ծնողաց, թող կական և հառաչանք եղբարց երիտասարդաց բողոքեսցին առ աստուած ի վրեժխնդրութիւն մելիք Մեջլումայ, որ ի նախանձ դրդեալ ընդ արքայն Հերակլեայ, զգերիս հայոց ի Պարսկաստան խաղացոյց։

Այժմ կարճեալ զայս աղետալի պատմութիւնս, թողցուք զամենայն ի կամս հասուչին, որ կառավարէ զամենայն ըստ իւրեանց հաճոյից ի վերջոյ շահն Մահմատ յետ վերադարձի պատուէ զմելիք Մեջլումն սեղանակից առնելով ինքեան և շնորհէ նմա զայս երիս արտօնութիւն. առաջինն՝ խնդիր նորա անդարձ եղիցի առ շահն պարսից. արքունի գանձատուն անարգել լիցի որքան կամեսցի բառնալ զգանձ և մի որոշեսցի նմա ժամանակ առ ինքն յամենայն կետի բացարձակ մուտ և ել առնել իբրև կամեսցի և յետ այնորիկ զնա յանձն արարեալ խանին Ջաւադայ, ինքն անցեալ անդ յաշխարհ Պարսից առ ի խաղաղել վրդովեալ խռովութիւնս, որ ի Ղանդահար և ի Կերաթ։

Յաղագս գալստեան Ջուբովայ յաշխարհն Աղուանից

Յետ սոսկալի աւերմանց քաղաքն Տփխիս, արքայն Հերակլ դառնայ ի Դուշեթ և ժողովէ առ ինքն զխորհրդականս և զազգականս իւր և ասէ. ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ և մերձ իմ ըմպել զբաժակ մահուան և ծանր է ինձ նստել յանկիւնս իշխանութեան Աղայ-Մահմատ խանի և լինել իբրև պատանդ հնազանդեալ հրամանաց նորա, բայց ըստ բերմանց ժամանակին զմինն ազգականաց իմոց առաքել պարտ եմ անհրաժեշտ առ շահն Աղայ Մահմատ։

Մինչ այս մինչ այն Աղա-Մահմատ շահն դառնայ ի Պարսս և արքայն վրաց փութացեալ ծանուցանել զաղետալի անցս կայսերուհւոյն Ռուսաց և խնդրէ ի նմանէ զկարեկցութիւն։ Ամենաողորմած թագուհին հրամայէ զեներալ Ջուբովայ և Ջուբով մեծաւ բազմութեամբ ելանէ ի Ղզլար և դիմէ ի Դարբանդ և Շեխալի խան որդի Ֆաթալի խանին ընդդիմացեալ յարդարէ զպատերազմ, բայց հալածեալ ի զօրաց ռուսաց զօրէն շամանդաղի հալածելոյ ի ճառագայթից արեգական տկարանայ։ Բնակիչք Դարբանդայ նեղարկեալ քաղաքն տան Ջուբովայ ընդ նմին և զխանն Շեխալի։ Ջուբով բարեկարգէ զկառավարութիւն այնր քաղաքի և ինքն անցեալ զօրօք բազմօք ի Ղուբայ գրաւէ և զնա և բարեկարգէ։ Յաւուր միում ի ձիարշաւ խաղս ի լայնարձակ կրկեսի խանն Շեխալի չերմացուցեալ զիւր նժոյգ երիվար յանկարծ մտրակեալ զնա ի փախուստ դառնայ աշխարհն Պարսից։ Իսկ Ջուբով գայ ի Բաքու ունի և նա առանց պատերազմի և եղեալ անդ զպահակ զօրս դիմէ ի Շամախի։ Խանն Մատաւայ իմացեալ առաքէ զառաջնորդն հայոց զՅօհան վարդապետն միջնորդ հաշտութեան առ Ջուբովն բարեխօս ունելով զբարձր սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեան զգերեալն ընդ մեծին Ջուբովայ հրամանաւ թագուհւոյն։ Ջուբով խոնարհի ի հաշտութիւն, բայց խնդրէ զյուսալի պատանդ խանն Մադաւեայ տհաճեալ ընդ այս փախչի ի Ղարաբաղ, իսկ եղբայր նորա տայ զորդին իւր ի պատանդ և ինքն գրաւեալ զպատիւ խանութեան նստի ի Շրուան ...Ջուբով յետ տիրելոյ այսոցիկ նահանգաց առ ի ձմերել անվտանգ անցանի ի դաշտն Մուղանայ, ուր չլինի ձուն սաստիկ և ցուրտ. Մուստաֆայ դիմէ առ խանն Իբրահիմ և խնդրէ զօգնութիւն, Իբրահիմ որ ինքն սարսէր ի զօրաց Ռուսաց և կամէր մտանել ընդ լծով իշխանութեան նոցա, զիարդ կամէր օգնել զօրօք խանին Շրուանայ, կամ խորհել ընդ նմա խորհուրդ տգեղ։

Ջուբով ի ծագել գարնան դիմէ ճեմելով ի Գանձակ քաղաք և ընկալեալ մեծաւ յարգանօք ի Ջաւադայ։ Ջաւադ պատրաստի զիւր պալատ վասն Ջուբովայ և ինքն գնացեալ այլ տուն դադարի անձնաընծայ ցուցանելով զիւր մտերմութիւն մեծին Ջուբովայ և արքեպիսկոպոսին Արղութեանց ընծայէ նա և զմասն կենաց փայտի վանացն Հաղբատայ. նոյն բարձր արհոյն զոր յաւերմանէ քաղաքին Տփխիսու գնեալ էր ինքն։

Իբրահիմ տեսանէ թէ հայք միասիրտ և միահոգի հայեցան ի նա ըստ վաղեմի բաղձանաց և նմայ, և անհնար է նմա մնալ առանձին վասնորոյ առաքէ զորդին իւր զԱբդիւլֆաթ խանն առ մեծն Ջուբով և խնդրէ ընդունել զիւր մտերիմ հպատակութիւն այնր տէրութեան ընդ նմին զաղերսագիր։ Ջուբով յետ բարեկարգելոյ զնոսին և ընդունելոյ զբոլոր Աղուանս ընդ իւրով տեսչութեան և յետ կամելոյ յառաջ ածել զայլ նպատակս իւր, որ ընդդէմ տէրութեան Պարսից ընդ նախասահմանելոյ վերին տեսչութեան Եկատերինէ թագուհին զրաւի ի կենաց, և Ջուբով վերակոչի դարձեալ ի Ռուսաստան։

Դարձ Ջուբովայ ի Ռուսաստան

Ջուբով յետ ընկալնելոյ զհրաման վերադառնայ մեծաւ տրտմութեամբ ի Ռուսաստան, այնուհետև ողորմելի հայք անկեալ ի վարանս սպասեալք մնային վերին այցելութեան և ձեռս ի ծնօտի եդեալ արտասուաց զէտս իջուցանէին. յետոյ յուսադրեալք ի Ջուբովայ յանձնին զանձինս իւրեանց ի խնամս բարձրելոյն և մնան ի նմին խոստման. ակնդէտ զօրս խոստանայր նոցա զօրապետն Ջ[ուբով]։

Սակայն դարբանդեցի և ղուբեցի հայք, որք ի ժամանակս Աւագ իւզբաշոյ գաղթեալք յԱրցախայ մնային անդանօր ձանձրացեալք ի հալածանաց պարսից և զվերջին հետևանս զօրս ունէին կրել ի զօրաց պարսից առաջի աչաց բերելով բարւոք դադարելուն զաղթել ի տեղւոջէն և գնալ ի Ռուսաստան զհետ Ջուբովայ, բայց քաղցր է հայրն և քաղցր են հայրենիք և բաժանումն ի հայրենեաց ի հարկէ դժնդակ. սակայն ազատու-

թին հաւատոյ և ստուածպաշտութեան առաւել քաղցր, որոյ վասն պատրաստեցան ի չուել զհետ Զուրավայ։ Թողին այնուհետև զնորատունկ այգիս զծաղկեալ բուրաստանս և դաշտս ամենայն լիալիր վաստակօք, ինքեանք նմանեցան որդւոցն Յակոբայ և զառաջնորդս իւրեանց Մարգարէ Մովսէս. ապա այնուհետև խոպանանայր դաշտն, հոգւոց հանէր որթն, մացառապատ լինէր երկիրն և ի սուգ համակէր աշխարհն գլխովին։

Ի վերջոյ Զուրավ առեալ տանի զերդս հաղարս և բնակեցուցանէ ի Ղզլար գաւառի, իսկ ինքն անցեալ գնայ ի Ռուսաստան։ Յետ վերադարձի Զուրավայ խանն Մուստաֆայ դառնայ ի Շրուան. եղբայր իւր հալածէ և զՅոհան վարդապետն որպէս խանկարիչ այնր միջնորդութեան չարաչար տանջէ և բրածեծ առնէ և առեալ ի նմանէ զտոյժս շնորհէ զկեանս և յինքն գրաւեալ դարձեալ զխանութիւն այնր աշխարհի, բարեկարգէ զտուն և զհայսն միշտ պահէ ի խաղաղութեան։

Պաշարումն քաղաքին Գանձակայ և մահ Մելիք-Մեջլումայ

Տփխիս յետ սոսկալի կործանման իւրոյ շինել սկսանի հետզհետէ ի ձեռն մնացելոց հայոց և վրաց անձնապուրծ եղելոց անմատչելի վայրս մեծին Կովկասու։ Հերակլ արքայն իմացեալ՝ թէ պատճառ այսր անողորմ հարուածոյ եղև մելիք Մեջլումն ի խանն Ջաւադայ վասնորոյ կամեցաւ հիմն ի վեր տապալել զԳանձակ քաղաքն, զխանն Ջաւադ և զմելիք Մեջլումն կալեալ սպանանել, ուստի բազմութեամբ զօրաց գնայ ի Գանձակ քաղաքն և զխանն Իբրահիմ կոչ ի թիկունս, առաջինն, պահանջէ ի խանէն Ջաւադայ տալ ի ձեռս իւր կենդանւոյն զմելիք Մեջլումն և, երկրորդ, զամենայն դերիս, գերեալս ի Տփխիսայ հետ էդարձ առնիլ։

Ջաւադ վեհանձն քան զՀերակլ, զպատգամաւորս նորա ձեռնունայն դարձուցանէ և ասէ. չէ օրէն առն ազնուականի զապաւինեալն իւր տալ ի ձեռս իւրոյ թշնամոյ որպէս զուղ արարիր և եղեր պատճառ կործանման Տփխիս քաղաքի։ Հերակլ յետ ոչ ընկալնելոյ խնդրելին հարդարէ զպատերազմ։ Ջաւադ մեծաւ պատրաստութեամբ մտանէ զբերդն և զշրջակայ բնակիչս ժողովէ անդանօր, Հերակլ բազմիցս բանայ զպատերազմ, հարկանէ և հարկանի և շահի զօշինչ, ապա պաշարեալ զբերդն զամիս չորս ի նեղ արկանէ զբնակիչս նորին և զշրջակայ վայրս աւերէ, քանդէ և հրձիգ արկանէ։

Ի սմին պատերազմի գործէ զմեծամեծ քաջութիւնս Արղման իւզբաշին և ի պողոտայս յայգեաց լնու դիակօք թշնամեաց և իւրով անպարտելի քաջութեամբ միշտ յետս վարէ զգունդս զօրաց արքային Հերակլայ և չթողու ցնոսայ մերձենալ ի բերդն և զօրաց, ապա համարձակեալ Հերակլեանց յարձակին ի բերդն և ի նեղ արկանեն զբուրգն

արեմտեան, յայնժամ աճապարէ մելիք Մեջլումն առ ի անտի հալածել զգունդ թշնամեաց, բայց ի նմին... վիրաւորի և նա չարաչար թէպէտ գործէ զնախչիրս բազումս և ազատէ զբուրգն ի ձեռաց թշնամեաց, բայց այսու ամենայնիւ արիւնաքամ իջեալ ի վիրացն թալկացեալ անկանի։ Ջաւադ ի ձեռն հմուտ բժշկաց որոնէ գտանել զհնարս ողջութեան յիշեալ Մէջլումայ. բայց շահի և զօշինչ։ Մէլիք Մէջլում ամփոփի յահեակ խորան եկեղեցւոյ Գանձակայ (Քլիսքեանդ անուանելոյ)։ Ջաւադ զրկեալ յերկուց համարյա թե անհաղթելի բազկաց անկանի ի վարանս և զգենու զսուգ ի վերջոյ անճարացեալ հաշտի ընդ արքայն Հերակլեայ վերադարձուցանելով առ նա զգերիսն Տփխիսայ գերեալսն ի Գանձակ, կատարելով և զայլ կարելի հրամանս նորին։ Հերակլ ոչ այնքան վասն յաղթութեան, որքան խնդացեալ ի մահն Մէջլումայ վերադառնա ուրախութեամբ ի Տփխիս։

Դարձ Աղայ-Մահմադ շահի ի Ղարաբաղ և մահ նորին

Մահմադ շահ յետ առնելոյ զՀերաթ՝ զապստամբեալն ի Պարսից, ընկալնու զգիր Ջաւադ խանին Գանձակայ, յորմէ ծանօթանայ զանցից եղելոց այնր աշխարհի, զգալստենէ Զուրավայ, զհնազանդութենէ խանից, զդարձմանէ նորին Զուրավայ դարձեալ ի Ռուսաստան, զմիաբանութենէ արքային Հերակլայ և խանին Իբրահիմայ, զպաշարմանէ քաղաքին Գանձակայ և զկրեալ վնասուց, նաև զզգալի մահուան սիրելոյ իւրոյ մէլիք Մէջլումայ, ուստի անհնարին խոցի ի սիրտ և հոգի, մանաւանդ վասն մելիք Մէջլումայ, ապա առ ի խնդրել զվրէժ վասն այնոցիկ անցից սրով և գերութեամբ անհամար զօրօք դիմէ յԱղուանս և սարսափ մի ծածանէ ի վերայ խանից և բնակչաց և գործէ զանհնարին աւերմունս և քակտումս և այսպիսօք մերձենայ ի Ղարաբաղ։

Իբրահիմ խան տեսեալ, թե անհնարին է զդէմ ունել այնպիսի յանդուգն յարձակման շահին, նամանաւանդ չունի զպատրաստական զօրս ընդ որում ի սաստականալ չքաւորող սովուն, բնակիչք ամենայն ցիր ու ցան եղեալ ժողովին զօրական աւրուստ, վասն որոյ եկեալ ի գիշերի ախին հանդերձ փախչի ի Կաւկաս, առ անէր իւր՝ առ խանն Օմար և զբերդն թողու ի դադարկ։

Մահմատ շահ եկեալ հասանի ի կիրճն Ասկարանայ և անդ հարեալ զբանակ դադարի։ Մելիք Ջումշուտ, որ նախքան զգալն շահին փախչէր ի Վիրս, կողոպտեալ ի տեղական Պարսից, դառնայ ի ճանապարհէն և գայ առ շահն և խոնարհեալ ի ծունկ երկրպագանէ նմա։ Շահն քաղցրութեամբ հարցանէ նմա, թէ ու՞ր էիր, զի՞ համեցար։

Ասէ Ջումշուտ՝ տէր իմ, արքայ, պարսիկք կողոպտեցին զկայս իմ, գլուխ իմ շաղախեալ կայր, վասնորոյ յամեցայ ուրեմն, ներեա։ Եւ ա-

պա որպէս նախընթաց առեալ ածէ զշահն ի քաղաքն Շուշի, յետ որոյ բարկացեալ շահին ի վերայ տաճկաց կողոպտողաց զտունս մէլիք Ջումշուդա տա զգունդ մի զօրաց ի ձեռս մէլիքին և հրամայէ գնացեալ աւար հարկանիցէ զնոսին և զյապշտակեալ կայս իւր ի նոցունց յինքն դարձուցանէ, և զպարսիկս ամենայն գերի արարեալ հասուցէ ի Շուշի։ Ի վերջոյ ի տեսանելն երկրորդ անգամ նորա զմելիք Ջումշուտն. Տէր իմ արքայ, զոր ինչ և հրամայես պատրաստ եմ ի կատարել։ Եւ ապա պահանջէ ի նմանէ զհարիւր հազար մանեթ, հուսկ յետոյ ի մտեալ յետ կողոպտելոյ զբոլոր քաղաքն զհիմն ի վեր առնել բոլոր շինուածոց և զամենայն բնակիչս նորին վարել ի Պարսկաստան։

Բայց աստուած, որ ունի զամենայն ի ձեռին իւրում, որպէս կամի որչափ կամի և յորժամ կամի այնպէս առնէ, վասն որոյ լցուց զչափ կենաց արիւնահեղ շահին և խորհրդոց նորին զսիրտս իւր արար գերեզման, և ի նմին հեղձոյց զծնունդ չար, վասն որոյ ետ նմա բարբառել և խոռխատալ, թէ ի գլխոց արանց ունիմ կառուցանել ի վաղուեան զբուրգ ...վասն որոյ ի նմին գիշերի զդաշոյն ի սիրտ Աղա-Մահմադի խորագոյն խոցէ։

Շահն ստոնու յանկողնոյ և ասէ. զի՞նչ առնէս, զի՞ աւերեցեր զաշխարհն Պարսից, նա ոչ անսացեալ կրկնէ և երիցկնէ և հատեալ զգլուխն յայտնէ թշնամեաց նորին, և ի վաղիւն ձայն մահուան նորա տարածեալ ի Շուշի քաղաք, այնուհետև և այլ չարամբ ելեալ ի փախուստ դառնայ, և խանն Իբրահիմ լուեալ զմահ շահին Մահմադայ դառնայ ի Ղարաբաղ։

Մատենադարան, մանրաժապավեն և № 369։

46

ԱԴԻ ԳՅՈԶԱԼ ԲԵԿԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ*

Որպիսութիւնք Իբրահիմ խանին

Յետ մահուան Փանահ խանայ հարազատ որդի նորա Իբրահիմ խալիլ խանն ի 1173— (1757) ամի յինքն գրաւեալ զիշխանութեան ի վերայ Ղարաբաղու, ոչ հնազանդէր այլևս թագաւորացն պարսից և օսմանեանց և այլոց ինքնագլուխ իշխանաց։ Եւ երկրացն Ղարաբաղու, Շաքւոյ, Շիրուանու, Գանձակայ, Դաւրիժայ, Նախիջևանայ, Արտավիլայ, Խոյայ, Մարաղու և Իրանայ մինչ ի Ղափլանքիւ, որ է սահման Արաղայ և Ատրպատականի հրամանատու եղև, յորոց ի վերայ կարգել զոք

* Սույն աշխատությունը ադրբեջանական աղբյուր է, որի հայերեն թարգմանությունը պահպանվում է Մատենադարանում։ Նկատի ունենալով աղբյուրի արժեքավորությունը քննարկվող հարցի վերաբերյալ, նրանից համապատասխան հատված զետեղել ենք ժողովածուի մեջ (Ռ. Տ.)։

իշխան կամ կառավար հրամանօք և կամօք սորա լինէր։ Եւ ընդ կառավարչին Ավար գաւառակի երկրին Տաղստանայ Ումայ խանին, որդւոյ Նուսխալ խանին, բարեկամացեալ էառ զքոյր նորա զԲիքայ աղայն ինքեան ի կնութիւն, ի ժամանակի հարկաւորութեան ի ձեռն զօրաց Տաղիստանայ յաղթօղ լինէր շրջակայ թշնամեաց իւրոց, որպէս և քաջասիրտ զօրօքն Տաղիստանայ առեալ զերկիրն Ղարատաղայ, և զԹիւրղաշտ քաղաքի նորին կործանել վեր ի վայրարագ, նշանք որոյ այժմ ևս երևին, ուր և կան ամբողջութեամբ աշտարակք և պարիսպք, ուստի և բնակիչք նորին ի փախուստ անկեալ ցրուեցան յայլևայլ տեղիս։ Զկառավարն Քիւրտաշտայ զՄուստաֆայ խանն ձերբակալ արարեալ վարեաց ի գերութիւն, և զկնի ձերբակալ առնելոյ զՄուստաֆայ խանն զոմանս ի խանացն Ղարատաղայ, Շահսէվանայ և այլոց ցեղից հպատակ ինքեան արար, զորոց և զկալուածս ի միասին ընդ գիւղօրէից երբեմն երբեմն բաշխէր զօրապետաց և ծառայից իւրոց ի պարգև, զի յարգենաց, այնոցիկ շահեսցեն։ Եւ թէպէտ Իբրահիմ խանն զանուն թագաւորութեան ոչ ունէր, բայց խանք և սերունդք խանաց սահմանակից տեղեացն այնոցիկ կային ի պատանդի առ նման։ Զկնի մահուան Զեանդ Քերիմ-խանին Աղայ Մհամմատ խանն որդի Ղաճար Մհամմատ Հասան խանին, որ կայր ի պատանդի ի Շիրազ, ի փախուստ դարձաւ, և յինքն գրաւելով զիշխանութիւն ի վերայ երկրացն պարսից և Արաղայ, զքաղաքն Թէհրան աթոռանիստ արարեալ, ի 1176 ամի և փրկչական 1760 ամի եմուտ յերկիրն Ատրպատականի, ընդ ձեռամբ իւրով նուաճելով զերկիրսն եղեալս ի հարաւային կողմանս Երասխ գետոյն, և անցեալ ի հիւսիսայ կողմանս Երասխ գետոյն, թէպէտ վասն տիրելոյ երկրացն Թալիշու և Երևանայ յարուցեալ էր զպատերազմս բազմապիսիս, բայց նուաճել զայնս չէր յաջողեալ նմա։ Եւ թէպէտ զառաջինն առաքելով վասն Իբրահիմ խանին զպարգևս հրաւիրեալ էր զնա ի հպատակութիւն ինքեան, և ի միջի նոցա գտանիւր բարեկամութիւն լեզուի միայն ի վերին երեսս, բայց ի նմին ամի զկնի յետս դառնալոյ Աղայ Մհամմատ խանին յերկրէն Ատրպատականայ և թագաւորելոյն, ի միջի նորա և Իբրահիմ խանին ըստ դիպուածոյ իմիք ի վեր երևեցաւ խռովութիւն ինչ և թշնամութիւն։ Աղայ Մհամմատ շահն դարձաւ դէպ ի սահմանս Շիրազայ և Պարսից, վասն ի բաց բառնալոյ զաղմուկ խռովութեան, ի վեր երևելոյ անդ անօրձիտ ըստ կամաց իւրոց խաղաղացուցանել զաղմուկսն զայնոսիկ, ի 1207 ամի փրկչական 1791 ամի վասն նուաճելոյ զնահանգսն Վրաստանու, Երևանայ, Թալիշու և Ղարաբաղու բազում զօրօք և ժողովուրք եկն յերկիրն Ատրպատականայ, և զեղբայրն իւր զԱլի ղուլի խանն, որ էր գլխաւորն և առաջին կառավարչաց իւրոց, ի միասին ընդ այլ խանաց մեծաւ բազմութեամբ զօրաց ա-

առաքեաց ի վերա Երեւանայ։ Ինքն ընդ բազմութեան զօրաց գումարելոյ յԱրաղայ, ի Պարսից, ի Խորասանայ և յԱտրպատականայ եկն և միով մղոնաւ հեռի Շուշի բերդաքաղաքէ եհար զբանակն իւր բազմամարդ։ Իշխանն վրաց Հերակլէ, խան կառավարն Թալիշու* Մուստաֆայ խանն ընդ երդմամբ միաբանեցան ընդ Իբրահիմ խանին և դաշնագիր եղեն, զի մի ցուցցեն ի կողմանէ իւրեանց զհպատակութիւն աղայ Մհամմատ շահին և մի կալցեն զճանապարհն ծառայելոյ նմա։ Եւ որչափ ինչ մարթ լիցի օգնական և թիկնապահ միմեանց լեալ մի թողցեն զիրեարս անհոգութեամբ։ Եւ զոմանս ի ժողովրդականացն Ղարաբաղու առաքեաց ի կողմն Վրաստանու, զոմանս առ Մուստաֆայ խանն Շիրուանու, որ ի կողմանէ Իբրահիմ խանի կարգեալն էր անդանօր ի թիւս բարեկամաց նորա համարիւր, իսկ ի մնացելոց ոմանք ընդ գիւղականաց, որք կային ընդ իշխանութեամբ յիշատակեալ խանին, ի լերինս բնակեցան, ոմանք ևս ի ներքս ի քաղաքին, իւրաքանչիւր յիւրում տեղւոջ մնային անշարժ։ Եւ ժողովեալ զբազում հետևակս, զհեծեալս հանդերձ մեծաւ պատրաստութեամբ յարուցին զպատերազմ։ Աղայ Մհամմատ շահն պաշարեալ զբերդն, մնաց անդանօր յընթացս երեսուն և երից աւուրց, և առաքեաց զպատգամաւորս և զթուղթս բարեկամական և զբազում միջնորդս, զի կարասցէ ինքեան հնազանդեցուցանել զԻբրահիմ խանն հանդերձ բնակչօք Ղարաբաղու։ Բայց չկարացեալ հասանել ի նպատակ իւր՝ զայսքան ոտանաւոր ասացեալն ի Սէյիդ Մհամատէ Իւրֆիէ առաքեաց նմին.

«Տեղան քեզ քարինք յերկնից բարանաց,
այլ դու յիմարեալ կաս ընդդիմակաց,
յայդ ի յապակի ի նիւթ դիւրաբեկ,
պահել զամրութիւն խափուստ պարսպայ»։
Զի Շիշայ (Շուշի) ի լեզու թուրքաց է ապակին։

Յորժամ այս թուղթ նորա եհաս առ Իբրահիմ խանն՝ առաջինն յաւագորեարս նորա այր հանճարեղ և զգօնամիտ մօլլայ Փանահ անուն ի նմին իսկ յայնմ ժամու ի միւս երեսն թղթոյ նորա գրեալ զայս բան ոտանաւոր յետս առաքեաց նմա ի պատասխանի։

«Զի թէ նա է՝ պահապան իմ, զոր ես գիտեմ
զշիշն ի ծոց՝ քարանց պահէ, որպէս գիտեմ

Իբրև այս պատասխանի նորա առ Աղայ Մհամմատ շահն եհաս ի սաստիկ բարկութենէն գոգցես կորուսեալ զուղ իւր ի գլխոյն հրամայեաց վաղվաղակի արձակել ի բերդն զահեղ ռումբս թնդանօթաց և

* Հավանաբար պիտի լինի Շիրվանի, քանի որ այդ պարզ երևում է հետագա շարադրանքից։

զկնի շարունակելոյ զայսպիսի զիւր մարտ՝ ետես, զի Իբրահիմ խանն, որպէս աներկիւղ ոք ոչ երկնչի յայնպիսի սաստից նորա, եւ զօրք իւր զօրացն Ղարապաղու ընդդիմակաց լինել ոչ կարեն, ասէ՝ գուցէ և յետոյ զօրք Ղարապաղու յաղթող ինքեան գտցեն, ուստի խորհուրդք ի մէջ առին աւագանիք տէրութեան նորա, թէ պարտ է ի կիսոյ վնասուն յետս դառնալ (գիանլըղ եարըընան), եթէ ոչ ի խորութիւն արիւնարբու ծովուս և ի յերկիւղալից տեղիսս կորուսցուք զբազմութիւն անփորձ զօրաց մերոց և ոչ ոք ի մէնջ կեցցէ, որ դառնալ կարիցէ ի հայրենիս իւր յԻրան սմին իրի անյապաղ դարձան յետս։ Ի սմին միջոցի և մելիքն Ջրաբերդու մելք Մեջլումն, որ առ պակասութեան խելացն յետս կալով յԻբրահիմ խանէն՝ յարեցաւ ընդ Ջաւատ խանն Գանձակայ, այսպէս խորհուրդ ետ, թէ ըստ որում յաղթութիւն այսր առապար երկրի ոչ անկաւ ի ձեռս ձեր, և դուք առ այն ոչ ձեռնհաս գտայք, ուստի ի պաշարումն Տփխիսայ փութալ և առնուլ զայն, զի եթէ անհաս ի նպատակ դարձջիք այսրէն, յայնժամ ժողովուրդք Իրանայ ժողով ապստամբութեան ստասցին։ Աղայ Մհամմատ շահն զբանս զայս կարի պատշաճ վարկուցեալ դարձաւ դէպ ի Վրաստան, իբրազեկ զայսմանէ լեալ Իբրահիմ խանն ի ձեռն թեթևադնաց հրեշտակաց և միջնորդաց ոմանց յայտնեաց վալիին Վրաստանու, թէ Աղայ Մհամմատ շահն չկարացեալ ձեռնահաս գտանել յառումն Շուշի քաղաքիս և ի նուաճումն սորին, այժմ մեծաքանակ պատրաստութեամբ դառնայ դէպ ի ձեզ, վասն առնելոյ զքաղաքդ Տփխիս, ուստի զոր ինչ հնարս մարթիք հնարել առ յետս դարձութիւն և յարգելումն հասանելոյ նորա ի նպատակ, մի թողուք զայն։ Ի հասանիլ այսր համբաւոյ ի լուր վալիին յայտնեալ զայնմանէ վալիին Բաշաչղայ Սիւլէյման (իմա՝ Սոլոմոն) խանին, որ էր թոռն իւր, և այլոց ազգականաց իւրոց, յորոց ի վերա բաժանեալ էր նա զՎրաստանն, զօգնութիւնս ի նոցանէ խնդրեաց առ ի զդէմ ունելոյ Աղայ Մհամմատ շահին։ Բայց քանզի վալին էր այր հինաւուրց, որոյ էին ամք ի վեր քան եօթանասուն, տակաւին անհամբեր և անհանգիստ, և թէպէտ ոչ կամեր ի կողմանէ իւրմէ, զի և յաւուրս ղառամութեան իւրոյ անհոգութիւն վասն արգելման թշնամեաց երևեսցի, և զօրք ստարազգեաց մտցին ի սահմանս Վրաստանու, բայց ոչ ոք յազգականաց նորա, ի մասին հակառակութեան իւիք եղելոյ ի միջի նոցա, եցոյց զօգնութիւն նմին, և ոչ գնաց առ նա, բաց ի վալիէն Բաշաչղայ՝ ի Սիւլէյման խանայ, որ զզօրս հազար զօրականս առաքեալ էր։ Վալին թէպէտ գրեաց զսաստիկ հրաման և կարգեաց զհաստատ գործավարս, բայց նոքա պղերգք պարապեալ ի զուարճութեան կենաց և համակեալ ի փափկութեան (քէյֆ) ոչ ետուն զզօրս։ Վալին յանճարութեան՝ ընդ յիշեալ զօրս հազար զօրաց ժողովեալ և զոմանս ի հպա-

տակեաց ինքեան ի ծառայից ի գործավարաց և ի ժողովրդեանն զաղախ-Թուրքաց զհեծելազօրս, ել անյապաղ ընդ առաջ նորա, առ տալոյ զարգելման մտից Աղայ Մհամմատ շահին ի սահմանս Վրաստանու։ Եկեալ հասեալ ի գաւառակն Ղազախայ մերձ Ինճայ գետոյն, եհար զբանակ իւր, ուրանօր և թէպէտ սպասէր օգնութեան ինչ ի նոցանէ ինքեան, բայց ոչ ետես։ Յորժամ Աղայ Մհամմատ շահն մուտ գործեաց յաշխարհն Գանձակայ՝ վալին յԻնճայ գետոյն յետս դարձաւ առ անճարութեան ...Աղայ Մհամմատ շահն ես անթիւ բազմութեամբ եկեալ ի տեղին ի Սօղանլղ, եհար զբանակն, և զգիշերն անդանօր կացեալ ընդ առաւօտն յարձակեցաւ ի վերայ Տփխիսայ։ Բայց վալիին ես ընդ այնմ ժողովոյ առեալ զծանրութիւն մարտին, զթնդանօթս և զայլ հանդերձանս պատերազմին եհաս ի ջուրն Ցրունաս, ուրանօր այժմ մաքսատուն կայ և անուանի։ Եւ անդէն յարդարեցաւ պատերազմ զերկուց կողմանց։ Ոմանք ի զօրականացն քաջասրտաց և ի զօրապետացն Հերակլէ խանին ընդդիմացեալ զօրացն պարսից զժամս բազումս ոչ յառաջադէմ ի պատերազմ լինել։ Եւ ըստ դիպուածոյ ընդ առաւօտն ամպ արջնաթոյր պատեալ էր զխօրոք և զձորօք լերանց, ամին իրի զօրք պարսից յանճարութենէ ի գագաթն կոյս բարձու լերին չոգան։ Իբրև յետս խաղացին ամպք թանձրամածք և երկիրն լուսաւորեցաւ, հայեցեալ զօրացն վրաց՝ տեսին զզօրս պարսից անցեալ ընդ քաղաքն և պատեալ շուրջանակի զտամբք իւրեանց։ Վալին իբրև ետես զայս այսպէս, ժամ պարապոյ գտեալ եմուտ ի պալատն, ուստի և առեալ զձիաւոր մի և զ[տ]ի ջորեպան ի փախուստ փութացեալ էանց ընդ կամուրջն Հալուայ-բարայ, գնաց դէպ ի լերինսն Կրեկլըխանայ։ Զօրք պարսից մտեալ ի քաղաքն՝ ի Տփխիս զոմանս ի բնակչացն ճարակ սրոյ ետուն, զոմանս ի գերութիւն վարեցին, և զայլս բազումս կապեալ ի կապանս ի ձեռն զօրաց իւրեանց դիւաբարոյից տանջէին։ Զամենայն ինչս քաղաքին՝ յետ այնորիկ զբարձրագագաթ պալատն զայն՝ ընդ այլ բազում բարձրաբերձ աշտարակաց կործանեալ, զձայն դարձի հնչեցին։ Եւ յետս դարձեալ ձմերեցին ի Մուղան, վալին ժողովեալ զմնացեալ ազգականս և զթոռունս իւր ի միասին ընդ թաւատաց ի Դուշիթ գաւառակին այսպէս խորհուրդ արար, թէ աուրք կենաց իմոց ի վախճան հասեալ են և բաժակ կենդանութեան իմոց լցեալ՝ մերձ է ի հեղուլ, յետ այսր ոչ վայել է ինձ նստել յանկիւնս իշխանութեան Աղայ Մհամմատ շահին, իբրև պատանդ հնազանդ լեալ նմա, ձայնի հրամանաց նորա լսել։ Ուստի առ յարմարելոյ բերմանց ժամանակին արժան է զմին յազգականաց իմոց ընդ ձեզ առաքել առ ոտս Աղայ Մհամմատ շահին ի պատանդ։ Ի սմին միջոցի համբաւ դարձի Աղայ Մհամմատ շահին եհաս առ վալին։ Որ փութացեալ զամենայն անցս և զորպիսութիւնս գրութեամբ

յայտնեաց Ռուսաց մեծի կայսրուհւոյն Եկատերինեայ։ Կայսրուհին առ կարեկցութեան և օգնութեան հրամայեաց զգերատիճան գեներալ օտ ինֆանդերիի գրաֆ Զուբովին, զի զօրօք բազմօք և կարի պատրաստութեամբ հասցէ յօգնութիւն վալիին ընդդէմ Աղայ Մհամմատ շահն։ Եւ նորին գերատիճանութիւնն ընդ զօրաց իւրոց, հասեալ յանապատն Դարբանդու՝ եհար անդանօր զբանակն իւր, զերկիրսն յայսկոյս Կովկասու եղեալց մինչ ի սահմանս Ղարապաղու նուաճեաց ընդ իշխանութեամբ իւրով, յաղթեալ ամենայն ընդդիմակակից քաջամարտ զօրօքն իւրովք, ձմերեցաւ ի Սալեան։ Ի հասանելն այսր համբաւոյ յականջս Իբրահիմ խանին զորդին իւր զԱբուլ Ֆաթհ խանն ի միասին ընդ զանազան ընծայից առաքեաց առ գերատիճան գրաֆ Զուբովն և յայտնելով ես ի կողմանէ իւրմէ օգստափառ Տէրութեան ռուսաց զներքին մտերիմ ծառայութիւն իւր և հպատակութիւն, գրեաց յանուն կայսրուհւոյն Եկատերինեայ զխնդիրս։ Եւ զօրապետն գերատիճան ընկալեալ զԱբուլ Ֆաթհ խանն մեծաւ յարգանօք և ի կարի պատուով, հարկաւորեալ մեծարանաց արժանացոյց զնա և զխնդիր հօր Իբրահիմ խանին առաքեաց ընդ ճանապարհն Դարբանդու և Ղզլարու առ նորին մեծութիւնն կայսրուհւոյն Եկատերինեայ։ Որ նոյնպէս ի յարգանս ընկալեալ զխնդիր նորա ի ձեռն միոյ ի կնեազայ առաքեաց վասն Իբրահիմ խանին զպարգևս և զբազում ընծայս, և նա մեծի ողորմութեան ի կողմանէ իւրմէ և կարի մարդասիրութեան արքայավայել ապաւինութեան ակնկալ արար։ Եւ զմի զաւազան զարդարեալ յակուտ պատուականս և ի մարգարիտս մեծագինս առաքեաց ախունդ Մօլլայ Փանահայ Վաղըֆ անուանելոյն։

Իբրև լուան զայս բան շրջակայ խանք և զհնազանդութիւն Իբրահիմ խանին Տէրութեան ռուսաց՝ գրեալ զթուղթ, ի յայտ ածին յիշատակեալ խանին, թէ՝ որովհետև մեք ընդ հնազանդութեամբ ձերով և ընդ ծառայութեամբ գտանիմք, ուստի ի հնազանդիլն ձեր Տէրութեան ռուսաց, մեք ես ոչ ի բաց լինել ունիմք ի դոյնօրինակ հնազանդութեան և երբեք մի ելցէ ի մէնջ ձայն ինչ ընդդիմութեան և հակառակութեան. և խորհուրդ ինչ ընդդէմ Տէրութեան ռուսաց ամենևիմբ ոչ տեղի ունի ի միտս մեր։ Իբրահիմ խանն զնամակսն այնց խանաց, այսինքն է՝ Միր Մուստաֆայ խանին Թալիշա և միւս Մուստաֆայ խանին Շիրվանու, Ջաւատ խանին Գանձակայ ես և կառավարացն Նախիջևանայ և Ղարադաղայ և զխնդիրս նոցա առաջի արար Զօրապետին։ Վալին Վրաստանու ես, թէև իբրև և զայլ խանս էր ի վաղուց տէր կարողութեան և հնազոյն իշխան քան զնոսա, բայց ըստ ամենայնի ի խորհուրդ ինչ զմեծամեծ

իրողութեանց և զփոքունց առանց համաձայնութեան և հաւանութեան Իբրահիմ խանին ոչ մտանէր. վասն զի կառավարն Ավարու* և այլ մեծամեծք Տաղիստանայ վասն արենակցութեան և բարեկամութեան հնազանդեալ էին յիշեալ Իբրահիմ խանին։ Եւ եթէ ընդ մէջ յիշատակեալ խանին և վալիին Վրաստանու թշնամութիւն ինչ և հակառակութիւն ի վեր երևեալ լինէր՝ յայնժամ ըստ հրամանի խանին Ումմայ խանն միասին ընդ այլ խանացն Տաղիստանու հանդերձ զօրօք իւրեանց բազմօք յարձակեալ ի վերա Վրաստանու զաւարի հարկանէին։ Որպէս ի 1193 ամի ի միջի վալինն և Իբրահիմ խանին խզեալ սիրոյ կապանայ երևեցաւ խռովութիւն ինչ։ Վասնորոյ յիշատակեալ հրամայեաց Ումմայ խանին, զի գնացեալ նորա ի Վրաստան որչափ ինչ մարթ իցէ, զերկիրն զայն զաւարի հարցէ և զբնակիչ ի գերութիւն վարեսցէ։ Ումմայ խանն պատրաստութեամբ մեծաւ և բազմաթիվ զօրօք փութանակի գնացեալ էառ զկումուշխանայ Ախտալայ ամրոցն, և զոմանս և բնակչաց այնր ի սուր սուսերի մաշեաց, զբազումս ի գերի վարեաց և ի շրջակայ սահմանաց աւարս բազումս արարեալ դարձան յերկիրն Ախլցխու առ Սուլէյման փաշայն, ուրանօր և ձմերեցաւ։ Այլ ի դառնալն չև հասեալ յԱխալցխեայ մուտ գործեաց յերկիրն Վրաստանու և զբերդն Դուխանայ, որ ընդ մէջ ճանապարհին և յանցս զօրաց ուրանօր կնեազ Աբաշիր հանդերձ բոլոր գերդաստանաւն իւրով և բնտանեաւք բնակեալ էր, և էր տեղի ինչ ընտիր ամրապինդ և անմատոյց պաշարեաց, և զկնի նուաճելոյ զայն ընդ իշխանութեամբ զոմանս ի բնակչաց այնր ճարակ սրոյ ետ, զոմանս պնդեաց ի կապանս գերութեան, և զմին ի դստերաց յիշեալ կնեազին ընդ այլ բազմապիսի ընծայից առաքեաց Իբրահիմ խանայ և զմին ի դստերաց նորա էառ Ումմայ խանն ինքեան կնութեան։

Իբրահիմ խանին այսպիսի պատուով և բարձրութեամբ հրամանատու էր խանացն Շաքւոյ, Շիրուանայ, Գանձակայ, Ղարատաղայ, Իրանայ, Խոյայ, Թավրիզու, Նախիջևանայ, Դարէժայ, Շահսէվանայ և խանն Շաղաղիու։ Իսկ վալին Տփխիսայ առ զգուշութեան զյօդ բարեկամութեան վերստին կապեաց ընդ խանին ակամայ կամօք և այսպէս կային նոքա ի հնազանդութիւն և ի հպատակ ծառայութիւն նորա։ Ըստ դիպուածոյ մահուան կայսերուհւոյն Ռուսաց, սահմանելոյ ի վերին դիպութեան, ստացաւ յիշեալ գերաստիճան զօրապետն զհրաման դարձի ի հայրենիս իւր։ Եւ սա ի կատարումն հրամանի առեալ զբազմաթիւ զօրս իւր վերադարձաւ։ Իբրահիմ խանն յետ լսելոյ զհամբաւս զայս, յայտնեաց վալիին Վրաստանու, թէ ես ի միասին ընդ յաղթող Ղարապաղու և Տաղիստանայ ելանեմ ահա ի կողմն Գանձակայ՝ դուք ես ընդ

* Պիտի կարդալ Ավարու

բազմաթիւ զօրաց ի Վրաստանայ փութացարուք ընդ կողմն ընդ այն յընկերել ինձ և ի միասին նուաճեսցուք զԳանձակ ընդ իշխանութեամբ մերով։ Տալով նոցա վասն խարդախութեան վարուց նոցա զարժանին զպատիժ, վասն զի երբեմն լեալ էր Ջաւատ խանն Գանձակայ պատճառ կործանման և աւերման Տփխիսայ և յուզող խռովութեանն ննջելոյ։ Վալին ժողովեալ զբազմաթիւ զօրս մեծաւ պատրաստութեամբ հանդերձ եկն և պաշարեալ զԳանձակ էառ ընդ իշխանութեամբ, մելիք Մէջլումն ի նմին պատերազմի սպանաւ։ Ջաւատ խանն հնազանդեալ հպատակեցաւ յանձն առնելով զանփոփոխ ծառայութիւն և զյօժարամիտ հպատակութիւն։ Վալին զկնի աւերմանցն Աղայ Մհամմատ շահին ոչ ես եմուտ ի Տփխիս, այլ բնակելով ի Կախեթ յետ երկուց ամաց վախճանեցաւ փոխարկեալ զաթոռ արքայութեան ի տապան գերեզմանի։ Զմեծ որդին իւր զԳէօրկէն խանն, որ էր ժառանգ վալիին էօծ յարքայ, այլ եղբարք նորա, որք են Իլիին խան, Փարնուազ խանն, Աղեքսանդր միրզայն, ոչ հաճոյ զտան ընդ այս հրաման, վասն զի սոքա ծնեալ էին ի միոյ կնոջէ, բայց Գիօրկեն խանն՝ յայլմէ կնոջէ։ Իւրաքանչիւր ոք՝ ի միոյ կողմանէ ապստամբեալ, սկիզբն արարին պատերազմաց ընդդէմ յիշեալ վալիին, յորոց Իսկենդար (Աղեքսանդր) միրզայն՝ տիրապետեալ Ղազախ, Բօշչալու* և Շամշատին գաւառակաց ոչ հնազանդէր Գիօրկին խանին։ Եւ Գիօրկին խանն, որ էր նոր վալին, առ անճարութեան արձակեալ յարանց իւրոց և զռոճիկս բազումս, եբեր ինքեան օգնական զզօրս ի Տաղիստանայ և օգնութեամբ նոցա, որպէս և ժողովրդեանն Կախիթու և ոմանց ի վրաց անտի, եկեալ էանց ընդ գլլաղն Քեասաման և եմուտ ի սահմանս Ղազախու։ Աղէքսանդր միրզայն տեսեալ զտկարութիւն իւր յանճարութեան ի փախուստ անկեալ՝ եկն յերկիրն Ղարապաղու։ Վալին ի բնակչաց Ղազախայ և Բօշչալուք զքանի մի խռովայոյզ արս և չարաբարոյս պատժեալ, ետ ապա հրաման զօրացն իւրոց զերկիրն Ղարսայ յաւար հարկանել զգաւառական այնր երկրի որչափ ինչ մարթ լիցի կոխան առնել հեծելազօրաց, ուստի քաջամարտ զօրքն ըստ հրամանի վալիին աւերեալ եկին առ վալին, և վալին անդրէն յետս դարձեալ եմուտ ի Տփխիս։ Որովհետև Աղէքսանդր միրզայն փախեան ի Ղարապաղ, միւս արքայազունք վրաց ևս զպահպանութեան անձանց իւրեանց եթ հօգային։

«Որպիսութիւն խանացն Գանձակայ», Մատենադարան ձեռ. 4463, pp. 15—17, 22—26։

* Պիտի լինի Բորչալու։

Յաղագս կրկնակի գալստեան Աղայ Մհամմատ շահին ի վերայ Ղարաբաղայ եւ գնալոյ Իբրահիմ խանին ի Բալաքեան

Իբրև լուաւ Աղայ Մհամմատ շահն զդարձ զօրապետին ռուսաց և զօրաց նոցա, կրկնակի խորհեցաւ առնուլ զՂարապաղ, վասնորոյ ի ժամանակի գարնան անհամար զօրք գոգցես ի համար աստեղաց երկնից և կաթեաց անձրևաց, ի կողմն Ատրպատականին յուղի անկաւ, և զի յընթացս երից ամաց դիպեալ էր կարի յոյժ պակասութիւն բերմանց երկրի ի Ղարապաղ, ուստի ի հասանելն զօրաց պարսից ընդ Աղայ Մհամմատ շահին յեզր Երասխ գետոյն՝ Իբրահիմ խանն, որ գիտեր անհնար զոլ այնուհետև բնակելոյ ի բերդն Շուշի և ընդդիմանալոյ այնպիսի զօրաւոր թշնամւոյն, առեալ զբոլոր գերդաստան իւր ընդ այլ ամենայն ազգականաց իւրոց եղբարց և ընդ ոմանց ի մտերիմ բեկաց գերդաստանօք իւրեանց հանդերձ չոգան ի Ջարու Թալայ։ Եւ Նասիր խանն՝ փեսայն նորա, Շահսևան Աթայ-խանն և Սիւլէյման խանն շաքուեցի, որք նոյնպէս փեսայ նորա էին, ընդ այլ հռչակաւոր և ծանօթագոյն բեկաց Ղարապաղու, ճանապարհորդակից եղեն յիշեալ խանին։ Աղայ Մհամմատ շահն յեզր գետոյն Երասխայ լուեալ զայս դիպուած ի թիկունս նոցա առաքեաց զզօրս, զի թէ հնար լիցի կալցին զնա բոլոր գերդաստանօք և հպատակօք նմին հանդերձ։ Որոց հասեալ ի մերձակայ կամրջի Թարթար գետոյն յարդարեցին յերկուց կողմանց զգոռ պատերազմ և յայնժամ պարսիկք, բաց ի կրեալ վնասուց, ոչինչ ոչ տարան ընդ ինքեանս։ Իբրահիմ խանն ընդ այլ հպատակաց և ընդ ընկերաց, անցեալ ընդ գետն Կուր առանց իրիք վնասու, եմուտ ի Ջարու Թալայ և ի Բալաքեան։ Այլ զճանապարհացն ոմանք ի լեզկաց ըստ հրամանի Աղայ Մհամմատ շահին ելեալ ընդ առաջ Իբրահիմ խանին ջան եդին ունել զնա և ածել առ Մհամմատ շահն։ Մերձ էր ի պատահիլ պատերազմի, բայց կինն Իբրահիմ խանին Բիքայ աղայն, որ էր քոյր իշխանին Ավարու Ումմայ խանին, քարոզիւք և խրատուք արգելոյր զնոսա, մինչ ցայն, երբ Մհամմատ Թաֆի բէկն Ղարապաղու զհամբաւ սպանման Աղայ Մհամմատ շահինն հասոյց յիշեալ գերաստիճան խանին ի Բալաքեան հանդերձ գլխովն շահին։ Աղայ Մհամմատ շահն, մտեալ ի Շուշի քաղաք, տարածեաց զնեղութեան զձեռն իւր ի չարչարել զբնակիչսն և որպէս զքարբ խածանէր զմեղաւորս և զանմեղս, և զբազումս ի մեծամեծաց, ի ծանօթից, ի բէկաց և յաղալարաց կալեալ եդ ի բանտի, ամբարձ զձեռն իւր չարչարանց և նեղութեան և յիւրաքանչիւր ի կողմն երկրիս։ Եւ յետ ընթացից միոյ շաբաթու ի միում գիշերի յառուցել բարկութեամբ վասն սակաւ իմն սխալանաց, ի վերա Սաֆար Ալ բէկին և Աբաս բէկին, որք առ նմա էին ի թիւս արանց հաւատարմաց և խորհրդակից իսկ նորա, ասէ ցնոսա՝ ի վաղիւ ընդ առաւօտն ի

ծագել արեգական զլոյս իւր յերկիր զգլուխս ձեր անջատեցից ի մարմնոյ ձերմէ, և ի գլխոց բնակչաց երկրիս Ղարապաղու արարեալ գրուրգ ինչ բարձրաբերձ ի գագաթ այն դնել ունիմ զգլուխս ձեր և վարդագոյն արեամբ ձերով զդաշտն Ղարապաղ (սեաւ այգի) արարեց վարդարան իմն։ Եւ վասն զի նոքա գիտէին ստուգիւ, զի բանս Աղայ Մհամմատ շահին չէր ինչ փոփոխութիւն և ջերմագին բանք միջնորդաց և բարեխօսաց ոչ ունեցին այնուհետև զներգործութիւն ինչ, ի ցրտասառոյց երկաթ սրտի նորա, ուստի յանճարութեան խորհուրդ ի մէջ առին, զի ի նմին գիշերի զգործ սպանման նորա ի գլուխ տարցին և ի ժամուն, որ մերձ էր յառաւօտն, յորում ժամու և Աղայ Մհամմատ շահս խորդայր ի խորին քուն, մուտ յառանձնոցն նորա գործեալ և ի սուր երկսայրի զմարմին նորա ծակոտեալ խոցոտեցին, և արարին զայն որպէսս զրահն Դաւթի (Նկարեն), զգլուխ նորա ի մարմնոյ ի բաց բարձին, և առեալ զբազպանն (բազբանտ), զթագն և զմարգարտեայ հմայեակն (հմայիլ), զինքեանս առ Սատղ խանն Շաղաղի հասուցին, և զդիպուածս ի յայտ ածին։ Սատղ խանն բանից ասուածոյ ոչ հաւատայր, վասն զի ի կողմանէ շահին զմիամտեալ հանապազ երկնչէր ի նմանէ, և զբանս ասուածոյ, նենգութիւն շահին համարեալ կարծէր լինել։ Ի վերջոյ կարի ծանր ծանր երդմամբ հաւատացուցին զՍատղ խանն բանից իւրեանց, բայց կարի ահիւ և դողութեամբ և յերկիւղ մեծագին, ի պալատ որդւոյ Իբրահիմ խանին Մհամմատ Հիւսէին աղայի, յորում բնակէր Աղայ Մհամմատ շահն, մուտ գործեցին, յորոց Սաֆար Ալի բէկն զառաջինն եմուտ յառանձնոցն և կալեալ ի միոյ կողմանէ մահճի, ընդ որում կայր մարմին շահին, ի վեր բարձրացոյց զայն, և կրկնակի զսուրն երկսայրն մխեաց ի սիրտ նորա։ Սատղ բէկին հայեցեալ ընդ այս դիպուած ուշաթափ լինէր և զնոյն զայն զբազպանն, զթագն և զհմայեակն առեալ դարձաւ ի տեղի իւր, և զզօրսն շաղաղու ժողովեալ ի շուելն ի բերդէն, թէ շահն առաքէ զիս զկնի Իբրահիմ խանին, և ի սպանողացն շահին զԱբբաս բէկն տարաւ ընդ ինքեան, իսկ Սաֆարալի բէկն մնաց ի բերդի անդ։ Զկնի ելից Սատղ խանին ի բերդէն յընթացս երկուց ժամուց համբաւ սպանման շահին հռչակք հարաւ։ Խանք պարսից ի լսելն զդիպուածն զայս յերկիւղէ այսր չփոթեալ իւրաքանչիւր ոք ի նոցանէ ընդ ընկերաց իւրեանց և ծառայից առանձին առանձին դասուք ի փախուստ փութացան։

Բնակիչքն քաղաքին մեծաւ փութաջանութեամբ և սաստիկ յարձակման մտեալ ի պալատ շահին յափշտակեցին զզինչս զօրացն պարսից ի ձեռս բնակչաց անկելոցն, և ի յաւարելն զամենայն զզարդս թագաւորութեան զսկիս, զարծաթս և զմարգարիտս պատուականս, եղբօր որդին Իբրահիմ խանին Մհամմատ բէկն մտեալ ի պալատն մնացեալ

զանձուց անդրէն տիրեաց, զանօթս, զզարդս զամենայն ընդ ոսկւոյ, արծաթոյ և այլ մեծագին մարգարտաց առեալ ընդ իշխանութեամբ հրամայեաց տանել զայնս ի տուն իւր, և նուաճեալ զիշխանութիւն թագաւորութեան տիրապետեաց գոյից տէրութեան առաքել զգլուխն Աղայ Մհամմատ շահին ի ձեռն Մհամմատ Թաֆի բէկին ի Բալաքեան առ Իբրահիմ խանն։

Իբրահիմ խանն, յորժամ միամտեցաւ ի յաղմկէ շփոթութեանց Աղայ Մհամմատ շահին՝ զգլուխն ուրախութեամբ և զուարճութեամբ առաքեաց վալիին Վրաստանու։ Յետ քանի մի աւուրց զհարազատ որդին իւր զժառանգ իշխանութեան զՄեհտի-ղուլի աղայն առաքեաց ի Ղարապաղ առ ի տալ զանդորրութիւն սրտից բնակչաց քաղաքին և զհանգիստ։ Եւ զկնի նորա զՄհամմատ Հասան աղայն, որ էր աւագ որդի իւր յուղարկեաց ի կողմն Ղարապաղու։ Տէր Մօլլայ Փանահ որ Վաղֆ (գիտնական) անուանիւր, և էր հայրենեօքն ի Ղազախու գաւառէն, գրեաց առ մօլլայ վալի Վտատին առ սիրոյ և բարեկամութեան եղելոյ ի միջի նոցա, զայս զուարճախօս չափաբանութիւն։ Եւ Իբրահիմ խանն, զկնի անցանելոյ սակաւ ժամանակի, եկն ի Ղարապաղ և բառ աւագնոյն նիստ առ յաթոռ իշխանութեան իւրոյ։ Զթիւ սպանման Աղայ Մհամմատ շահին ոմանք ասեն զոլ ի 1212, իսկ այլք ի 1211 ամի, բայց ճշմարիտ երևի վերջինն։

Մատենադարան, ձեռ. 4463 թթ. 26—28։

47

Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1795, յետ այսօրինակ միապետելոյ սորա զհամօրէն Պարսկաստանեայս խաղայ գնայ ի վերայ աշխարհին Վրաց. զքաղաքն Տփղիս և զշրջակայ գաւառս նորա ի սուր, ի հուր և ի գերութիւն մատնեալ եղծանէ։ Անյիշելի վայրենաբարոյութեամբ աղարտէ զկարգ սրբազան պարկեշտութեան և ապականագործ ղազրութեամբ կանգնէ զբագին աղտեղի յիշատակի իւրում յոգիս մնացորդաց աշխարհին. և դառնայ աւարաւ և գերութեամբ բազմաւ յաշխարհ իւր ի Պարսս։ Բազումք ի գերեաց սատի ներքինացեալ կանանոցի Պարսից, եղեն արք անուանիք, յորոց Մանուչար խան Էնակոլոփեանց, Խոսրով խան Տէր Սամուէլեան Ղայթմազեանց, Միրզա Գորգին և այլք եղեն արք երևելիք յոյժ ի դրան պարսից մինչև ցայսօր ժամանակի։

Ի գալ ժամանել ամին երկրորդի, խաղաց այս ժանտախտ մարդկային կենաց յաշխարհն Խորասանայ ի վերին երեսս կեղծաւորելով զուխտ իւր առ նշխարս Հէյդարայ, որ ի Մաշադ. և զսաստ ապստամբիցն թաթարաց. այլ ներքին խորհուրդք նորա էին, հաստատեալ զիշ-

խանութիւն իւր ի վերայ երկրին և կեղեքել զմնացորդս անբաւութեան զանձուց Նադրայ ի սերնդոց անտի նորա։ Սովին զօշաքաղութեան խորհրդով. այնինչ հասանէ ի սահման աշխարհին Խորասանայ, կուրահեալն Շահռուհ ընդ յառաջ ելանէ նմա, և առեալ՝ ածէ զնա մեծահանդէս շքով ի շիրիմ Իմամին այնորիկ։ Ուր յետ կատարելոյ զուխտն ամբարշտաց, սկսանի ներքինին խղճմտանօք պահանջել ի Շահռուհայ զականս պատուականս և գոհարս մեծագինս, զոր համբաւ հռչակէր նշմարել ի գաղտնի, թէ և արքայն զաշխատու զանխուլ պահէր և յորդւոց։ Ի զուր աշխատ լինէր թագաւորն ապերջանիկ չարաչար երդմամբ ուրանալ զայնպիսեացն ժառանգութիւն. զի հարուածք անհնարինք, խոշտանգումն և տանջանք ազգի ազգիք, հետ զհետէ յերևան ածին զծածկեալսն ի մեծագին և ի պատուական գոհարացն, որոց ի խնդիր էր ներքինիս անագորոյն։ Յաւել ի վերջոյ նա և դնել ի գլուխ նորա օղամանեակ բոլորշի և հեղուլ ընդ այն կապար ջեռուցեալ. որով ի վերջին կէտ կենացն եղեալ ապաստան, յայտնեաց և մատնեաց ի ձեռս նորա և զյակինթն պատուական, որ երբեմն պայծառափայլ արփիանայր ի ճակատ թագին Ովրանգզէբայ[84]. և ապա դուլ գտեալ խոշտանգանացն իւրոց. հրամայեցաւ իւրովք հանդերձ գնալ բնակիլ ի Մազանդարան։ Բայց ի պատճառս այսքան չարաչար հարուածոց և խոշտանգանաց մեռաւ Շահռուհ զճանապարհայն, և զիջոյց զառկայծեալ ճրագ Ավշարեան իշխանութեան՝ ի տանէն Նադրայ, ի հասակի վաթսուն և չորս ամաց։

Հանդերձէր ելանել և ի վերայ Բուխարայ, յորժամ գուժկան եհաս նմա, թէ ահա Ռուսք արշաւեցին ի սահման տէրութեան Պարսից. Վաղվաղակի յետս ընդ կրունկն աճապարեալ ամենայն զօրօք խաղայ ի վերայ Ատրպատական աշխարհի. Ուստի թէպէտև մեկնեալ էին զօրք Ռուսաց ի պատճառս մահու կայսերուհւոյն Կատարինեայ, սակայն տակաւին յառաջ մղելով սորա՝ հասանէ մինչև ի Շուշի, ի քաղաքաբերդ քաղաք յԱրցախ աշխարհի. և անդ սպանանի սրով ի խորանի իւրում, ի ձեռն երկուց ի ստորին ծառայից իւրոց. զորոց հատեալ էր ինքնին զվճիռ մահու։

Սա ի հասակի տղայութեան կալեալ ներքինացաւ հրամանաւ Ադիլ շահի և հասեալ յարբունս հասակի իւրոյ կարգեցաւ մարդպետական իշխան կանանոցին Շահաստանի։ Այնքան վտիտ և նիհար էր հասակաւ, մինչ ի հեռուստ երևիլ իբրև մանուկ հնգետասանամեայ. իսկ դէմք նորա անմօրուք և կնճռեալ, ոչ յայլ ինչ, քան ի պառաւ բազմամեան ձևացուցանէին զնա աչաց հայեցկաց։ Որքան դժնեայ և անտանելի էին դէմք արտաքին կերպարանացն, այնքան և դժնդակք էին ներքինք խորհրդոց նորա, պատրաստք ի գիտս հնարից, աշխոյժք ի ճա-

բակ չարեաց և իմաստունք յաւէր՝ յաւար և յորոգայթ։ Իրան պողովատի էր նորա գոգչիր, որ ուսաւ տանիլ այնքան դժուարընտրել աշխատանաց, մեկնեալ յամենայն հեշտութեանց և ի փափկութեանց կենաց։ Որսոց և պատերազմի զհետ զակատեալ գոլով, կեայր գրեա թէ զմեծ մասն ժամանակին ի վերայ ձիոյ։ Ուր ինչ հասանէր, անխտիր ուտէր. ոչ ընտրելով իւր զփափուկս ի կերակրոց։ Յաւուր միում զկնի սաստիկ արշաւելոյ ի խնդիր որսոց պատահի խմբի ուրուք հասարակ զօրականաց, որք նստեալ ուտէին զմածուն և հաց։ Իջեալ իսկոյն յերիվարէն հաղորդեցաւ սեղանոյ նոցա, զինուորական իմն ախորժանօք։ Զնոյն արար ասեն և խորհրդական նորա, զալարածոյս թղթոց ի գոտի իւրում, որպէս թէ օրինակին հետևելով արքայի, ընդ որ խոժոռեալ արգել ասելով. «Կեր դու զլեղին և զքաղցրաւենիս, որչափ և կամիս. այլ մի տար ինձ տեսանել զհեշտասէր ոք գրագիր, իբրև զքեզ. ձեռն մխել ի կերակուր իմոց արի զօրականացս»։ Ջանադիր եղև գտանել զիշխանութիւն, և մշտնջենաւորեաց զայն ի ժառանգս իւր, թէպէտև միշտ անիրաւ միջոցօք։

Պատմութիւն Պարսից յօրագրէ Մեսրովպայ Դ. Թաղիադեանց
հատոր Ա, Կալկաթա, 1848 թ.,
էջ 213—218։

48
ՎԱՐԴԱՆ ՕԶՆԵՑԻՆ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յաղագս մտանելոյ ի Հայաստան ներքինի Մահամմադ խանի աւերութեան և գերութեան Թիֆլիս քաղաքի

Ներքինի աղայ Մհամմադ խան, որ էր ազգեաւ ղաջար, յերկրէն Քուշանաց՝ որդի Մահմետ Հասան խանի[1], զօրացաւ յոյժ ի վերայ պարսից, յաղթահարեալ նուաճեաց ընդ լծով իւրով զամենայն գաւառակալս Պարսկաստանի, տիրեաց Թէհրանայ և Իսպահանու, փախոյց զքուրդ բռնակալն Ատրպատականի, որ նստէր ի Դաւրէժ, հալածեաց ի գաւառն Արցախայ և ինքն անցեալ ութսուն հազար զօրօք՝ նստաւ ի քաղաքս պարսկահայոց Խոյ և Սալմաստ, անդէն ի հնազանդութիւն կոչեաց առ ինքն զիշխեցողս Հայաստանի զՔեալբալայի խանն Նախիջևանայ, և զՀուսէին Ալի խանն Երևանայ, նոյնպէս կոչեաց զԻբրահիմ խանն Ղարաբաղու. բայց նա դաշնակից եղեալ ընդ Հերակլ արքային վրաց և ընդ Մուստաֆայ խանին Թալիշայ ոչ գնաց, իսկ տիրող խանքն Նախիջևանայ և Երևանայ աճապարեալ ի սասանեցուցիչ ահարկութեանց նորա

[1] Այս Մահմետ Հասան խան քաջութեամբ տիրապետէր Մազանդարանայ, զորմէ յիշատակէ Չամչեան ի պատմութեան հայոց հատոր Գ, երես 858 և 859։

ժողովեցին զարմտիս երկրին յամուր տեղիս և ինքեանք ամրացան ընդ բնակչաց աշխարհին յամրոցս իւրեանց, բայց ոչ յետ բազում աւուրց երկուցեալ ի նմանէ առաքէ խանն Երևանայ զեղբայր իւր առ Մհամմադ շահ բազում ընծայիւք և գրով հպատակութեան, որ և պատիւ առացեալ ի նմանէ, դառնայ ի քաղաքն Երևան։ Սոյնպէս արար և Քեալբալայի խանն Նախիջևանայ։

Մինչ կամէր Մհամմադ շահ զօրօք դիմել դէպի Ղարաբաղ ի վերայ Իբրահիմ խանին, լուր ապստամբութեան Շիրազայ և Արազայ յետս կասեցոյց զնա ի Ղարաբաղայ. այլ ոստիկան կացուցեալ ի Դաւրէժ և ի վերայ Հայաստանի զՍուլէյման խան, ինքն դարձաւ ի Թէհրան ի 179[illegible] ամի։ Ըստ գրելոյ Ղուկաս կաթողիկոսի ի թվին Հայոց ՌՄԽ ժամադիր եղեալ գալ ի գարնան ի վերայ Իբրահիմ խանին և Հերակլ արքային վրաց, բայց ոչ էհաս խոստմանն իւրոյ. զի զօրացեալ էր ապստամբութիւնն ի Պարսկաստան։

Իբրև լուաւ Հերակլ արքայ վրաց, թէ դարձաւ յետս շահն և Հուսէին Ալի խան Երևանայ ընդ Քեալբալայի խանին Նախիջևանայ ընկեցին յինքեանց զլուծ հնազանդութեան իւրեանց և հպատակեցան ոստիկանին Դաւրիժու, բարկացաւ յոյժ, և ստիպեաց զնոսա դառնալ առ ինքն ի հպատակութիւն, որպէս էին յառաջագոյն, բայց նոքա փոխանակ նմայ հպատակիլ վտարանջեցին և յոստիկանէն Դաւրիժու, ազատ լեալ յերկուստեքէ. վասն այնորիկ ըստ ակնարկելոյ Հերակլայ Իբրահիմ խան Արցախայ առեալ ընդ իւր օգնական զանեար իւր զՕմար խան Տաղստանու, չուեաց քսան և երեք հազար զօրօք ի վերա Քեալբալայի խանին Նախիջևանայ. սաստատակ ասփռեալ զզօրս իւր և Օմար խանի զեկքն աւար առին զինչս զատացուածս բնակչաց երկրին, և Քեալբալայի խանն ամրացեալ ի բերդն Նախիջևանայ խնդրեաց զօգնութիւն իւր սահմանակից իշխողաց, իսկոյն հասին օգնութիւն իշխողքն Երևանայ և Խոյու փութացեալ ի թիկանց սրոյ ճարակ ետուն զբազումս ի զեկաց նոցանէ և զայլս փախստական արարեալ թափեցին զաւարն ի նոցանէ, դարձան ի տեղիս իւրեանց, իսկ փախստական զօրքն Օմար խանի հասեալ ի Շուշի քաղաք բաժանէ զնոսա Իբրահիմ խան ի վերայ գիւղօրէից իւրոց հայոց վասն ձմերելոյ անդ յԱրցախ գաւառի։

Ի սմին ժամանակի խանն Ղարատաղու, որ ի բազում ամաց հետէ հարկատու էր Իբրահիմ խանին Արցախայ՝ ապստամբեալ ի նմանէ, եմուտ ընդ լծով ոստիկանին Դաւրիժու, սոյնպէս և Հուսէին Ալիխան Երևանայ բոլորովին արհամարհեալ զարքայն վրաց կամեցաւ կալ մնալ իշխանութեամբ ոստիկանին Դաւրիժու, բայց ոչ հաւատաց նմայ ոստիկանն և ոչ ընկալաւ զնա վասն դժրելոյ ուխտին առաջնոյ, զոր եղեալ էր ընդ Աղայ Մհամմադ շահին, վասն այնորիկ ի 1792 յաջորդ

ամին, ի միոյ կողմանէ արքային վրաց և ի միւս կողմանէ ոստիկանն Դաւրիժու, ի նեղ արկեալ զխանն Երեւանայ երկուքն ևս պահանջէին զհպատակութիւն և զհարկս անցեալ ամին, առ այն անճարացեալ Հուսէին Ալի խանին Երեւանայ միջնորդ առ արքային վրաց արկանէ զկաթողիկոսն տէր Ղուկաս, որոյ միջնորդական գրութեամբ և ընծայիւք հաշտեցուցանէ զսիրտ նորա, հատուցանելով զհարկն և տալով զպատանդս և հեծելազօրս, ոչ միայն արքային, այլ և ոստիկանին Դաւրիժու։ Էառ ի կաթողիկոսէն խանն Երեւանայ իբրև տուգանք զվեց հարիւր թուման պարսից, զի ասէր թէ՝ ձեռով յորդմամբ ետ ինձ զայս նեղութիւն արքային վրաց։

Իսկ զօրքն Օմար խանի Կովկասային լեկքն, որք ձմերեալ էին ի հայոց գիւղօրայս Արցախայ, զորմէ ի վերն յիշեցաք, մերձ ի գարնան քանի հարիւրս ի նոցանէ աւարի առին զստացուածս երից գիւղից հայոց և գերեալ զբնակիչս նոցա փութացան անցուցանել զայնոսիկ ընդ Կուր գետ, բայց լուր գերութեան հասեալ Իբրահիմ խանին առաքեաց զհետ նոցա զզօրս ի սուր անցուցանելով զնոսա թափեցին ի նոցանէ զաւարն և զգերին, և զերծեալքն ի սրոյ նոցա լեկքն միաւորեցան խումբ մի անցին ընդ Ուտի գաւառ ի դաշտն Գագայ. անդէն քերելով և գերելով անցեալ ընդ մէջ Ջորոփորոյ, հարին ի գիշերի զգիւղն Օձուն, ծնընդեան և սննդեան տեղին իմոյ. գերեցին անդէն զվաթսուն անձինս զայր և զկին մեծ և փոքր, և առեալ զգերեալսն անցուցին ընդ հովիտս Լոռու, ի Ջաւախէթ[1] և յամուրս Տայոց[86], անդ վաճառեալ զնոսա սարակինոսաց իւրեանց, դարձան ի Տաղստան։

Ի սոյն 1792 ամի ներքինին Մհամմադ շահ պարսից սաստիկ մարտ եղեալ պատերազմէր ընդ Լութվալի խանին Շիրազայ բազում վիշտս և վնասս հասուցանէր նմայ։

Յաւուրս այսոսիկ շփոթեալ խռովեցան հայազգի բնակիչք Կոստանդնուպօլսոյ և Հնդկաստանու յաղագս յեկեղեցի մուծանելոյ զնոր տօնացոյցն յօրինեալ ի Սիմէօն կաթողիկոսէ, զի Ղուկաս կաթողիկոս ստիպէր ի բաց դնել զհինն և վարել նորովն, իսկ որովհետև Զաքարիայ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ չէր հաճեալ ընտրութիւն Ղուկաս կաթողիկոսի, որպէս յիշեցաք ի 104 համարն, վասն այն հակառակ կացեալ չնկալաւ յեկեղեցի զնոր տօնացոյցն համաձայնութեամբ քանի մի հոգևորականաց և աշխարհականաց, նոյնպէս արհամարհեցին զայն և Հնդկաստանի հայք, ամենեքեան գրելով պատասխանի կաթողիկոսին զանազան պատճառանօք զհինն գովէին և զնորն պարսաւէին, ընդ որ ոչ սակաւ վշտացաւ Ղուկաս կաթողիկոս, ապա ի ձեռն նուիրակաց էջ-

1 Ջաւախէթ ի հնումն այժմ անուն տան Ախալքալաքի։

միածնի հաճեալ զկամս նոցա համոզեաց, որք յետ սակաւուց յամենայն ուրեք մուծին յեկեղեցի, և սկսան վարիլ նովաւ ի պաշտամունս եկեղեցական։

Ի սոյն 1792 ամի Դաւիթ եպիսկոպոս առաջնորդ Հաղբատայ վանից թողեալ զվանս վասն ստէպ ասպատակութեանց կովկասային լեկաց, նստէր ի քաղաքն Տփխիս, որ կալեալ ունէր զթէմս Հաղբատայ վանից զբոլոր Կախէթ և Քարթլ, զՍօմխէթ, զՂազախ և զՇամշադին և զմասն ինչ ի Տփխիս քաղաքի, զնա կոչէ յէջմիածին կաթողիկոսն Ղուկաս, որպէս թէ ի հաշտութիւն, բայց նա ոչ հնազանդի գնալ առ նա, ոյր աղագաւ գրէ կաթողիկոսն առ Հերակլ արքային վրաց առաքել զնա թագաւորական իշխանութեամբ։ Բայց Դաւիթ եպիսկոպոս միջնորդութեամբ իշխանաց հաճեալ զկամս արքային, պատասխանի արար բանից և պահանջմանց կաթողիկոսին առանց երթալոյ յէջմիածին։

Բայց Ղուկաս կաթողիկոս, որ անխոնջ աշխատողն էր վասն հաստատութեան և պայծառութեան էջմիածնի զբաղեալ էր ի սոյն 1793 ամի շինութեամբ սենեկաց և այլոց էջմիածնի, շինեաց վասն միաբանաց զքսան և ութ միաշար սենեակս. նորոգեաց զչըրմուղն և քանքանի, զվարժատուն, զվեհարանն, զերկու ընդարձակ սեղանատունս ամառան և ձմեռան և ի վերայ նոցա ընդարձակ ամբարանոց ցորենոյ, գարւոյ և այլ արմտեղինաց, և ծախս բոլոր շինուածոց ստանայր ի Յօհանջան աղայէ Գիրաքեանց Սուրաթ քաղաքի Հնդկաստանու, ընդ որում խօսի կոնդակաւ զորպիսութենէ շինուածոց և ստանայ ի նմանէ վասն էջմիածնի զմի ջահ արծաթեայ և զայլ պատուական անօթս և զգեստս։

Ի Ռուսաստան ևս սոյն ամի պատուեցաւ Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեանց ի կայսրուհւոյն մեծագոյն պարգևօք, խաչիւ, մանթէիւ (կոնքեռ) և դրամովք, սահմանեաց վասն նորա ամ ըստ ամէ ռոճիկ յարքունի գանձարանէ երկու հազար մանէթ, և ի միում նուագի, որպէս ինքն գրէ առ կաթողիկոսն Ղուկաս, ընծայի նմայ զմի հազար մանէթ։ Ոչ զանց առնեմ յիշել զայրն պատուական, վաստակաւոր մշակն էջմիածնի զԵփրեմ արքեպիսկոպոսն[1] Երեւանցի նուիրակ Հնդկաստանու, որ յ 2 դեկտեմբեր 1794 ամի եմուտ յէջմիածին. ածեալ ընդ իւր ի Հնդկաստանու գանձս բազում. ընտիր անօթս ոսկւոյ և արծաթոյ, մեծագին զգեստս, պատուական ակունս, և այլ զարդս եկեղեցական և գեղեցկանկարն երկու ապակեայ տէրունական պատկերս[2]։

Եւ ի 1795 ամի վախճանեցաւ Յովհաննէս կաթողիկոս Աղթամարայ և յետ թաղման նորա ժողովեցան իշխանք և եկեղեցականք Թէմի

1 Սա ապա եղև կաթողիկոս յէջմիածին ի 1810 ամի տեառն։

2 Մին ի պատկերացս էառ ընդ իւր արքայորդին պարսից Աբասղի միրզէ, յորժամ եմուտ յեկեղեցին էջմիածնի և միւսն տակաւին կայ յեկեղեցւոջ էջմիածնի։

նորա առ Հախիջան աղայ Շամիրամակերտցի ի քաղաքն Վան, վասն ընտրութեան նոր կաթողիկոսի, ուր ընտրեն զՄիքայէլ վարդապետ վանահայր Լմայ անապատի. բայց որովհետև ի նախնաւանդ սովորութենէ կաթողիկոսունք Աղթամարայ և Գանձասարայ ոչ առանց հրամանի էջմիածնի կաթողիկոսին օծանէին, թէպէտ ի թէմական ժողովրդոց իւրեանց ընտրէին, վասն այնորիկ գրով խնդրէ Հախիջան աղայ ի Ղուկաս կաթողիկոսէն կացուցանել ի տեղի վախճանելոյն զՄիքայէլ վարդապետ ընտրեալն, և Ղուկաս կաթողիկոսէն կացուցանել ի տեղի վախճանելոյն զՄիքայէլ վարդապետ ընտրեալն, և Ղուկաս կաթողիկոս ըստ կամաց նոցա հրաման տա օծանել զյիշեալ Միքայէլ վարդապետ և կաթողիկոս Աղթամարոյ։

Յաւուրս այսոսիկ յետ երկար պատերազմելոյ Մհամմադ շահի ընդ Շիրազու, առնու զՔիրման քաղաք նորա, աւերէ զնա հրով, և զամենայն բնակիչս նորա ի սուր մաշէ, զԼութվալի խանն Շիրազայ ձերբակալ արարեալ հանէ զերկու աչս նորա, պատուհասեալ կուրացուցանէ զնա, և ամենայն գերդաստանեօք ածէ զնա կապանօք ի Թէհրան, նուաճեալ սպառեաց իսպառ զթագաւորազինս Շիրազայ, որք էին ի թոռանց Նատր շահի, և սկսաւ հարստութիւն ազգին Ղաջարաց ի Պարսկաստան, ի սոյն ներքինի Աղայ Մհամմադ խանէն։

Սա մաքրեալ զՊարսկաստան ամենայն հակառակաց իւրոց, դիմեաց զօրաւ ծանու ի Հայաստան Դաւրէժ, կարգէ անդ զեղբայր իւր Ալի Ղուլի խան կուսակալ ի վերայ հայոց և ուղևորէ զնա ի վերայ Երևանայ երկոտասան հազար զօրօք առ ի հնազանդեցուցանել զիշխեցողս այնր կողմանց. որք նախապէս հպատակեալ էին ինքեան և ապա ապստամբեալ, մտեալ էին ընդ լծով Հերակլ արքային վրաց։ Եւ ինքն անցանէ յԱրդաւիլ և ի Սիւնիք և յԱրցախ գաւառ։

Զայս սոսկալի լուր գալստեան Ալի Ղուլի խանին հասեալ յէջմիածին, հոգ կալաւ Ղուկաս կաթողիկոս անկորուստ պահպանութեան անօթոց և զարդուց Աթոռոյն, զի մի անկցի աւար ի ձեռս պարսից, վասնորոյ բաժանեաց զայն մասն երկու զմինն առաքեաց ի Թիֆլիզ քաղաք. և զմիւսն ի Կարս յանձնելով ի պահպանութեան առաջնորդաց և իշխանաց տեղւոյն, մինչև անցցէ հրոսակ թշնամոյն, այնպէս խորհելով, թէ եթէ ալիք դառնութեան շահին ի վերայ Կարուց գայցէ, և Թիֆլիզ եղեալն մնասցէ, և եթէ ի վերայ Տփխիսայ զնասցէ զեղեալն ի Կարս ոչ կորնչի, այսու մտօք կամէր երանելին գոնէ զկէս մասն զարդուց և սպասուց պատուականաց մեծի Աթոռոյն պահպանել, բայց ի զուր ջանացաւ, ի Տփխիս եղեալսն պարսկակուր եղեն և ի Կարս մնացեալսն ակունք ծանրագին և մարգարիտսն և այլ ընտիր զզգեստս գաղեցին իշխանք և առաջնորդք տեղւոյն և հասարակքն հազիւ հասին յէջմիածին։

Իսկ Մհամմադ շահ ուղղակի հասեալ ի Ղարաբաղ զբերդաքաղաքն Շուշի պաշարեաց, ուր ժողովեալ ամրացեալ էին Իբրահիմ խան Արցախայ և ամենայն բնակիչք Սիւնեաց և Արցախայ, ոչ բաւականացեալ բերդն տեղի բազմութեանն երկոտասան հազար տուն հայք Արցախայ և Սիւնեաց ամրացան ի ձորն, որ ի ներքոյ է Շուշի բերդին, պաշարումն բերդին երկարեցաւ զաւուրս երեսուն և երեք, յորս միշտ ի հնազանդութիւն կոչէր զԻբրահիմ խան և զամենայն բնակիչսն, երբեմն մեծամեծ պարգևս խոստանայր, երբեմն մահ սպառնայր ամենեցուն և երբեմն սաստկացուցանէր զպատերազմն յերկիւղ ամրականացն, ապա խաբէութեամբ կոչէ առ ինքն հաշտութեան աղագաւ զգլխաւորս հայոց, որք ամրացեալ էին ի ձորն, որ ի ներքոյ բերդին, երթան առ նա յիսուն երկու անձինք, զորս կալեալ կապանօք դնէ ի բանտի և առաքէ ի մէջ ամրացելոյ երկոտասան հազար տանց զսակաւ զօրս սուտ հաշտութեամբ, որպէս թէ ժողովեսցեն պաշար վասն զօրաց, այսպէս մի զկնի միոյ բազմանալով զօրքն պարսից տիրեցին նոցա, և վարեցին զնոսա զամենեսեան ի Պարսկաստան, որք թէպէտ վերստին դարձան ի տեղիս իւրեանց, բայց ոչ ամենեքեան և անթուելի էր վնաս նոցա։ Պատմեաց մեզ ոմն արցախեցի ծերունի ականատես, թէ ի պաշարել բերդին յամրացելոց անտի հայոց ի բերդն վաթսուն արք կորովիք, հետևակք և սուսերամերկք բազում վնաս և տառապանս հասուցանէին արքունի զօրաց պարսից հարկանելով յափշտակէին զպաշար և զկարասիս զօրաց նոցա, որոց յոյժ վշտացեալ Մհամմադ շահ, հրամայէ ամենայն զօրաց իւրոց, որք էին իբրև ութսուն հազար, ամենայն արթնութեամբ ի դարան մտանել և ածել ընդ բռամբ զվաթսունս։ Ապա հազիւ թէ կարացին այնպէս զերեսունս ի նոցանէ սպանանել և երեսունքն փախեալ ամրացան ի բերդն։

Յայնմ ժամանակի Սարգիս կաթողիկոսն Հասանջալալեանց և մէլիք Մէջլումն, որք ընդ իշխանութեամբ Ջաւադ խանին Գանձակայ նստէին ի Գանձակ քաղաք, մինն վշտացեալ յԻսրայէլ կաթուղիկոսէ, և միւսն ի նախարարաց վրաց արքայի, յորդորեն զՋաւադ խան ելանել ընծայիւք իբրև հպատակք առաջի շահին ի Շուշի, թերևս փոխանակ թշնամութեան նախարարաց վրաց և Իսրայէլ կաթուղիկոսի առնուլ կարասցեն զվրէժ իւրեանց, որպէս և արարին իսկ, ուրախութեամբ ընկալաւ զնոսա Մհամմադ շահն. ճանաչելով զնոսա նենգժոտեալ հին գործիք չարութեան կամաց սրտի իւրոյ, որովք հասանելոց էր իւր բաղձանաց։

Սոքա՝ Ջաւադ խան, մէլիք Մէջլում և Սարգիս կաթողիկոս, որք ունէին յամրոցին Շուշւոյ զազգականս և զբարեկամս արտաքուստ ձայնելով համոզէին զնոսա գալ ի հնազանդութիւն շահին, բայց ի զուր,

զի ապաստանեալ էին նոքա յամրոցի Շուշուայ։ Ապա Աղայ Մհամմադ շահ տեսեալ, թէ երկարի պաշարումն բերդին, և Իբրահիմ խան ոչ լինի անձնատուր, եթող զպաշարումն բերդին ընդ առաջնորդութեամբ մէլիք Մէջլումի չուեալ բազմութեամբ զօրօք ի Գանձակ քաղաք, ունելով ընդ ինքեան կապեալ զյիսուն երկու հայազգի ականաւոր անձինս, զորս յառաջագոյն խաբէութեամբ ածեալ էր առ ինքն անդէն, ի Գանձակայ կոչէ զՀերակլ արքայ վրաց ի հնազանդութիւն։ Արժան համարիմ յիշել զասացեալ ոտանաւոր բանս ի Սէյիդ Մհամմադ Իւրֆայէ, զոր գրեալ առաքեաց Մհամմադ շահ առ Իբրահիմ խան ի պաշարման ժամանակին Շուշուայ,

Տեղան քեզ քարինք յերկնից Բաբանաց,
Այլ դու յիմարեալ կաս ընդդիմակաց,
Յայգ ի յԱպակի ի նիւթ դիւրաբեկ,
Պահել զամրութիւն փախուստ պարսպաց։

Ի պատասխանի սորա ի միւս երես թղթոյն գրեաց յաւագանեաց ոմն բանահանճար մօլլայ Փանահ անուն և դարձոյց այսպես.

Զի թէ նա է պահապան իմ, զոր ես գիտեմ,
Զշիշն ի ծոց քարանց պահէ որպէս գիտեմ։

Ի չուել Աղայ Մհամմադ շահի դէպ ի Գանձակ աճապարեալ Իբրահիմ խան ծանուցանէ դաշնակցին իւրոյ Հերակլ արքայի զգնալն ի վերա նորա զօրաց պարսից, ի հասանել այսր լրոյ, գրեաց Հերակլ առ թոռունս իւր, որք տիրէին աշխարհաց նորա, յորոց մինն էր տիրողն Իմէրէթի Սօլօման բէգ[1], որ առեալ ընդ իւր զչորս հազար զօրս ի Բաշաչխաց եկն ի Տփխիս օգնութիւն Հերակլեայ, ժողովեաց ի Կախէթու և Քարթլայ զվեց հազար վրացի զօրս, ի թուրքաց Ղազախու, երկու հազար հեծեալս ընդամէնն երկոտասան հազար հետևակք և հեծելազօրք, իսկ միւս ազգականք նորա, յորոց վերա բաժանեալ էր զերկիր իւր, ոչ թողեն զհանգստութիւն մարմնոց իւրեանց և ոչ հասան օգնութիւն Հերակլայ։

Արդ, մինչդեռ ներքինի շահն պարսից պաշարեալ էր զբերդաքաղաքն Շուշի, եղբայր նորա Ալիղուլի խան, որ կարգեալ էր կուսակալ կողմանց Հայաստանի, երկոտասան հազար զօրօք եկեալ նստաւ ի դաշտն Արարատայ մերձ ի սուրբ էջմիածին. կոչէ ի հնազանդութիւն շահին զմանկահասակ Մահմադ խանն Երևանայ, քանզի վախճանեալ էր Հուսէին Ալի խան՝ հայր նորա. սա ըստ խորհրդակցութեան նախա-

[1] Այս Սօլօման բէգ ինձ թուի, թէ իցէ վերջին թագաւորն Իմէրէթի որ նստէր ի Քութայիս քաղաք։

րարաց իւրոց և օրինականաց ոչ կամեցաւ անձնատուր լինիլ շահին պարսից. ապաստանելով յարքայն վրաց, կամեցաւ մարտիւ ընդդիմանալ Ալիղուլի խանին, վասն այնորիկ ամենայն պատրաստութեամբ ամրացաւ ի բերդն Երևանայ պատրաստեալ ի պատերազմ։ Իսկ Ղուկաս կաթողիկոս խորհեցաւ հնարս գտանել վասն ազատութեան էջմիածնի. ելեալ մեծամեծ ընծաւք գնաց ընդ առաջ նորա. և մտեալ ի բանակ զօրաց նորա պատուեցաւ ի մեծամեծաց նոցա և հրամանաւ Ալիղուլի խանի տուաւ նմայ և սպասաւորաց նորա առանձին տաղաւարս և յետ երից աւուրց կոչեցաւ առաջի նորա ինքն Ղուկաս կաթողիկոս հանդերձ ընծայիւք իւրովք, որ յանդիման եղև խանին կաթողիկոսական շքով և ընկալեալ ի նմանէ ամենայն յարգութեամբ կաթողիկոսն Ղուկաս եցոյց նմայ զհպատակութիւն իւր և յանձն արար նմայ պահպանել զվանս էջմիածնի. ասէ որպէս նախնի թագաւորք Իրանայ միշտ խնամօք պահպանեալ են զօջաղն էջմիածնի, նոյնպէս յանձն առնեմ ձեզ պահպանել զնա յամենայն վնասուց, առ այն շնորհուկս լեալ Ալիղուլի խան հրաւիրեաց նստիլ կաթողիկոսին և ըստ արժանեացն պատուեաց զնա։ Յայնժամ հրամայեաց Ալիղուլի խան պահպանս կացուցանել ի վերա էջմիածնի և զդահճապետ իւր (նասախչին) հանդերձ զօրականօք, պատուիրեալ զի մի ոք ի զօրաց իւրոց ձեռնամուխ լիցի յինչս էջմիածնի։ Այսօրինակ պատուեալ զխնդիր կաթողիկոսի արձակեաց զնա ի տաղաւար իւր։

Ապա զկնի նորա առաքէ զՋաֆարղուլի խան պահանջէ ի կաթողիկոսէն զընծայս մեծամեծս վասն իւր և վասն արքայի. ընդ ամէնն տասն հազար թուման պարսից[1], ընդ այս տրտմեալ և լքեալ կաթողիկոսն ավարանէր ի միտս իւր, թէ ո՞րպիսի հնարս կարասցէ հնարել վասն ազատութեան Աթոռոյն էջմիածնի և իւր իսկ անձին. խորհեցաւ միջնորդութեամբ նախարարաց Ալիղուլի խանի թեթևացուցանել զծանր պահանջ նորա. դեգերելով ի դրունս նոցա զաւուրս բազում աղաչանօք և խոստմամբ, որք յետ բազում անգամ միջնորդութեան առին ի կաթողիկոսէն վասն Ալիղուլի խան սարդարին մի հազար երկու հարիւր թուման, վասն արքային մի հազար թուման, վասն Ջաֆար ղուլի խանին երկու հարիւր հիսուն թուման, վասն սեննեկապետի սարդարին յիսուն և հինգ թուման, վասն հանդերձապետին երեսուն և հինգ թուման, վասն գանձակեցի Եաղուպ բէկին, որ հաշտարար եկեալ էր ընդ մէջ խանին Երևանայ և սարդարի, տասներկու թուման, վասն եղբօր վախճանեալ Հուսէին խանի Երևանայ, որ ի սակս խռովութեան ընդ եղբօր որդւոյ իւրոյ կայր առ սարդարն տասն թուման, վասն բարեկամաց և ծառա-

[1] Պարսից մէկ թումանն է երեք արծաթ մանէթ։

յից Ջաֆար ղուլի խանին երեսուն թուման. վասն ծառայից սարդարի հարիւր յիսուն թուման. վասն դահճապետին, որ պահապանն էր էջմիածնի, քսան թուման, և վասն անյայտ արանց բէգզադէից, զոր աւրին բազում ինչ ոչ կարացի որոշել. բայց ըստ հաշուելոյ Ղուկաս կաթողիկոսի, որ գրէ զայսոսիկ ընդամէնն համդերձ ընծայիւք, եղև չորս հազարթուման, զոր անդ ի բանակն առին ի կաթողիկոսէն, բաց յայնմանէ բերէին յէջմիածնայ վանից կերակուր զօրաց, ալիւր, ձէթ, իւղ, պանիր, ոչխար, կով, եզն և զայլ բազում ինչ, թէպէտ առին այնքան գումար ի կաթողիկոսէն, սակայն ոչ բնաւ թոյլ ետուն զօրաց իւրեանց ձեռն վնասուց հասուցանել Աթոռոյն և գիւղի բնակչացն էջմիածնի, որք ի շրջակայից նորա ժողովեալ հայք ամրանային անդ ի Վաղարշապատ, վասն այնորիկ ուրախութեամբ գոհանայր զաստուծոյ կաթողիկոսն Ղուկաս, որ ազատեաց ի մօտալուտ չարեացն յայնմանէ զաթոռն և զժողովուրդս հայոց, ապա մի ըստ միոջէ պատմաբանօրէն գրեալ կաթողիկոսն զայսոսիկ ամենայն ծանուցանէ Զաքարիայ պատրիարգին հայոց ի Կոստանդնուպօլիս հասարակութեան, պատուիրեալ նմայ զի հրատարակեսցէ զայնոսիկ ի լսելիս հասարակութեան, բայց ոչ հաւանեալ պատրիարգին զհրատարակելն, գրէ կաթողիկոսին, թէ չէ բարի զիարդ հրատարակել, մի գուցէ առէ լուիցէ տուգանողն ձեր, վերստին յարձակի ի վերա ձեր և լինի յետինն չար քան յառաջինն, որում հաւանի կաթողիկոսն և դադարի յայնմանէ, և ինքն կաթողիկոսն յետ մնալոյ ի բանակին զօրաց զաւուրս երեսուն եօթն, հրամանաւ Ալիղուլի խանին դառնայ ուրախութեամբ և պատուով յէջմիածին։

Իսկ Ալիղուլի խան սարդար յետ բազում անգամ յորդորելոյ զխանն Երևանայ գալ ի հնազանդութիւն շահին, և ընդդիմանալոյ նոցա զայրացեալ յոյժ պատերազմեցաւ ընդ բերդականացն Երևանայ զաւուրս ինչ, և անդէն սփռեալ զզօրս իւր յԱյրարատ գաւառ ասպատակեաց զամենայն երկիրն Գառնոյ առ Հրազդան գետով քանդեալ աւերեաց զշինուածս տանց և հուր արկեալ այրեաց զամենայն արմտիս երկրի նոցա, զոր յայնժամ հնձեալ դիզեալ էին. և սոյն աւուրս հասանէր առ Ալիղուլի խան բարեկամն Մահմադ խանի Երևանայ Ծաղուպ բէկ գանձակեցի, որ միջնորդ եղեալ հաշտութեան ընդ մէջ խանին Երևանայ և սարդարին, ի հնազանդութիւն շահին ածէր զխանն Երևանայ, և առեալ ի նմանէ զետկար հպատակութեան արքային առ Ալիղուլի խան սարդարն մատուցանէր, իսկ Ալիղուլի խան առեալ պատանդ զկին Մահմադ խանին Երևանայ ընդ նորածին որդւովն չուեալ զօրօք իւրովք գնաց ի Գանձակ ի 28 օգոստոսի 1795 ամի. ուր նստեալ ներքինի շահն պատրաստէր զզօրս ի պատերազմ ընդդէմ Հերակլ արքային վրաց. անդ միաւորէ զզօրս իւր ընդ զօրաց շահին, յանձնէ նմայ և զպատանդ կինն

Մահմադի խանի Երևանայ։ Բայց անփորձ արքայն վրաց ոչ ինչ գրելով զբազմութիւն զօրաց պարսից, չարար պատասխանի շահին և ոչ զդեսպանս նորա արձակեաց յետս, այլ յաւելեալ զօրս ևս երեք հազար, միաւորեալ հնգետասան հազար զօրօք եւ ընդ առաջ շահին պատրաստեալ ի պատերազմ և եկեալ բանակեցաւ ի դաշտին Գագայ ի վերա Ինջայի գետոյ[1], միանգամայն հրաման տուեալ գերդաստանաց պալատի իւրոյ և ամենայն բնակչաց Տփխիս քաղաքի, զի որ ոք և կամիցի ելեալ ի Տփխիսայ գնասցէ յամուր տեղիս Վրաստանու։ Ելեալ յայնժամ Դարիայ թագուհին վրաց ի Տփխիսայ ամենայն գերդաստանօք իւրովք ամրացաւ ի լեառն Թիալէթ, գնացին ընդ նմայ սակաւք ոմանք ի քաղաքացեաց անտի։

Իսկ ներքինին Մհամմադ շահ ելեալ ի Գանձակայ հարիւր քսան հազարաւ, ունելով առաջնորդ զմէլիք հայ Մէջլումն և Ջաւադ խանն Գանձակայ, ուղղեաց զարշաւանս իւր դէպ ի Տփխիս քաղաք։ Բայց բնակիչք Տփխիս քաղաքի ոչ ինչ համարելով զարհաւիր և զերկիւղ արքային պարսից, ծաղր առնելով զնա, յարմարեալ ի վերա նորա զերգս կատականաց ասէին. Մահմադ խանն գալիսայ. ներքինի է լալիսայ։ Այսպէս քամահելով զնա, մոռացեալ էին զահ և զերկիւղ աստուծոյ, վասնզի եկեալ հասեալ էր ի վերա նոցա օր բարկութեան աստուծոյ, բայց նոքա ննջեալ ի քունս մեղաց իւրեանց ոչ զգաստացեալ ապաշաւէին, փոխանակ հսկման և աղօթից ի գինարբուս վաճառաց և ի թատերս խաղուց վաղէին, մինչև եհաս ի վերա զկատարած նոցա ողբալի օրինակաւ որպէս լուիցես։

Քանզի արքայն Հերակլ, որ ժողովեալ էր զհնգետասան հազար վրացի, հայ և տաճիկ զօրս, բանակ եդեալ նստէր ի վերայ Ինջայ գետոյ, չունէր վասն նոցա բաւական պատրաստութիւն պաշարաց, վասն այն հրաման ետ հայոց և տաճկաց ևս և ոմանց վրացւոց երթալ ժողովել յամուր տեղիս զկինս և զգերդաստանս իւրեանց, պահելով առ ինքն միայն զվեց հազար զօրս ի վրացւոց։ Բազում հայք ի Տաւուշայ (Շէմշէդին) և ի Ղազախայ ամենայն գերդաստանօք անցեալ ընդ Կուր գետ ամրացան ի Վրաստան, յորոց բազումք ոչ ևս դարձան անտի մինչև ցայսօր, որոց զորդիս և զթոռունս իշխանք և ազնուականք վրաց արարին իւրեանց իբրև արծաթագին ծառայ (ճորտ), որք մինչև ցայսօր կան մնան ի նոյն անկայ կապանս տռանց։ Եւ իբրև այսպէս դատարկացաւ ի բնակչաց երկիրն Գագայ, Կողբափորոյ, Ծոբոփորոյ և Սօմխէթի, զօրք արքային վրաց, որք էին և վերա Ինջայ գետոյ. տագնապեցան ի պա-

[1] Այս գետակն Ինջայ երեք ժամաւ հեռի է Կոտրած կամրջէն, որ ելանէ ի Կողբոփորոյ։

կասութենէ կերակրոյ և մանաւանդ թէ զարհուրեալ երեսն յահէ բազմամբոխ զօրաց Աղայ Մահմադ շահի, որք եկեալ հասեալ էին ի Շամքօռ ի սահմանս Ուտի գաւառի, վասն այսորիկ թողեալ զկամուրջն Կոտրած, փութացեալ մտին ի քաղաքն Տփխիս, ամրափակեցին զկիրճս քաղաքին վառեալ ամենեքեան ի ռազմ։

Իսկ ներքինին շահ հասանէր ընդ կրունկն նոցա իբրև ամպ վարեալ ի հողմոյ և գայր ուռուցեալ բարձրացեալ իբրև զծով. կուտակեալ գոռայր, մռնչայր հարկանելով զալիս ընդ ալիս. հասանէր աշխարհախումբ զօրօք ի գիւղն Սօղանլուխ[1], անդ բանակ եդեալ նստէր և կոչեալ քաջալերէ զզօրս իւր արիութեամբ պատերազմիլ, եթէ յաղթեմք ասէ, զոր ինչ ոք գերի արասցէ, ինքեան լիցի. և եթէ յաղթիմք, քաջութեամբ մեռանիմք, թողեալ զանուն անմահական յաշխարհի, ապա կոչեալ զհայազգի մելիք Մէջլում պատուիրէ ի գլուխ տանիլ զյաղթութիւն պատերազմին, որպէս խոստացեալն էր։

Յայնժամ ելանէ ընդդէմ նորա Հերակլ արքայ վեց հազարաւ, կացուցեալ յաջ թեւին զքաջ սպարապետն Օրբէլեանց զԹամազ էշիկաղաբաշին, ի ձախմէ զԹնդանօթապետ զօրաց զԴաւիթ թոռն իւր՝ որդի Գէորգայ որդւոյ իւրոյ անդրանկանն և ինքն Հերակլ ունէր զմիջին կողմն թիկնապահօք։ Յայնժամ յարդարեցաւ սաստիկ և ահռելի պատերազմ յերկուց կողմանց ժամս բազում, գոչումն ահեղ ձայնից նոցա զականջս խլացուցանէր, շողշողումն սուսերաց և գեղարդից, զտեսողս պակուցանէր, ծուխս թնդանօթից և հրացանից ստուէր արկեալ զերկիր մթացուցանէր, և եղանակ աւուրն թանձրացեալ մառախլապատ ոչ ինչ երևեցուցանէր ի վերայ երկրի, անդ բազումք շահատակեալ յերկուց կողմանց թաւալգլոր յերկիր անկանէին. այսպէս սակաւ զօրօք սաստիկ հարուածս հասուցանէր Հերակլ այնքան բազմութեան զօրաց պարսից և ի ծերութեան հասակի անձամբ զմարտն վճարէր և տեսեալ զտկարութիւն զօրաց իւրոց տարակուսեալ ընդ կրունկն յետս փախչիլ հնարէր, զի ի պահու առաւօտու մինչև մերձ երեկոյ անդադար զմիմեանս հարկանէին, զի ծերութիւն նորա ոչ ներէր նմայ այնքան։

Եւ մերձ յերեկոյեան ժամուն յանկարծ քանդեալ ի բաց մղեաց հողմն զմառախուղն մթապատ և երևեցաւ զտկար զօրութիւն վրաց, յայնժամ իսկոյն ելեալ ի գլուխ լերին Կոճօռայ[2] հայազգին մելիք Մէջլում տեսանէ զքաղաքն անզօր և բնակիչքն շփոթեալ և տագնապեալ զմիմեամբ անկանէին և զօրք վրաց յոյժ սակաւաթիւ, որ իսկոյն փութացեալ ծանուցանէ արքային պարսից և զօրաց նորա, որք քաջալե-

[1] Այս գիւղ եզր Կուր գետոյ հեռի է ի Տփխիս քաղաքէն իբրև ժամս երկու։

[2] Այս լեառն գտանի է իբրև պարիսպ շրջապատեալ զՏփխիս քաղաքաւ յարեւմտեան ի հարաւ կուսէ։

րեալ զմիմեանս շրջապատեն լերամբ Կոճօռայ ձախ թեւն զօրաց պարսից անկեալ ի վերայ աջ կողման վրաց, ուր էր հրամանատար սպարապետն Օրբէլեանց, պատառեալ զնոսա ընդ մէջ ի փախուստ դարձուցանեն, զոր տեսեալ Հերակլ արքայ աճապարեաց զանձն ապրեցուցանել, դարձուցեալ զերեսս ի փախուստ, որոց զհետ մտեալ պարսիկք մինչև ի դուռն քաղաքին գնացին ի Սէյդաբաթ[87], բայց փակեալ տեսին զայն, դարձեալ անդէրն զառ ի վեր վազելով ի կողմն Սօլօլակի[88] իբրև զկարկուտ թափեցան ի քաղաքն ընդ դուռն Տափի թաղի, որ բաց թողեալ էր վասն անդէն ելանելոյ և փախչելոյ քաղաքացւոց։ Իսկ Հերակլ արքայն վրաց փախուցեալ սակաւ արամբք էանց կամուրջն ի Հալուաբար և անդէն անցեալ փութանակի ի գիւղն Դուշէթ, խնդիրս ուղղեալ կայսրուհւոյն ռուսաց հասանիլ յօգնութիւն Վրաստանի։ Բայց արշաւանք զօրաց պարսից մտեալ ի քաղաքն շփոթեցին զբնակիչս նորա, սակայն արփին լուսավառ տեղի ետ տիրելոյ մթան գիշերոյ և արշաւանք զօրաց պարսից յերկիւղէ թշնամեաց ոչ վստահացան ժուժել հանգչիլ անդ զգիշերն ի քաղաքն Տփխիս, այլ փութացեալ դարձան ի բանակ իւրեանց ի Սօղանլուխ։

Եւ ի ծագել առաւօտուն, որ էր տասներեք սեպտեմբեր ամսոյ 1795 ամի, զրոհ տուեալ ամենայն զօրօք Աղայ Մահմադ ներքինի շահն եմուտ ի քաղաքն և հրամայեաց ի սուր սուսերի մաշել զբնակիչս նորա, ապրեցուցանելով զմանկահասակս և զերիտասարդս արանց և կանանց։ Յայնմ վայրի տեսանէր աղէտս և մորմոքս ողբալիս ի քաղաքի անդ, քանզի զծերս և զտղայս առ հասարակ սրոյ ճարակ տուեալ, զքաղաքն արեամբ նոցա ողողեցին, զյղի ծանրաբեռնեալ կանայս սրով ճեղքեալ զմանկունս ընդ մարցն սպանանէին, զփափկասուն տիկնայս վրաց և հայոց և զնազաքայլ օրիորդս նոցա կորզեալ ի նոցանէ արհինակաթ արտասուօք ի գերութիւն վարէին և զազնուական իշխանս վրաց և հայոց առաջի իսկ կանանց և զաւակաց նոցա թաւալգլոր յերկիր կործանէին, և զամենայն հարստութիւնս նոցա յափշտակեալ առ շահն դիզէին, կողոպտեցին և զամենայն զարդս և զանօթս եկեղեցեաց, ոսկեղէն և արծաթեղէն, անդ էր տեսանել լալումն և ողբումն բազմաց, անդ անդադար գոչումն, կանչումն և հառաչումն ամենեցուն։

Քանզի մահապարտն ամենայն մելիք Մէջլում, ի վրէժ մախանաց իւրոց զազնուականս և զիշխանս վրաց կալեալ հանէ ի պողոտայս քաղաքին, սուր եդեալ ի վերայ յօշատէ զնոսա անաստուածօրէն. հաւաքէ զամենայն զիակունս նոցա ի մէջ դիզակոյտ փայտից, զոր վասն նոցա յատուկ պատրաստեալ էր, հուր արկեալ այրէ զմարմինս նոցա ի դիւրութիւն սրտի իւրոյ։ Բաց յայնմանէ ազգք պարսից, որք ի բնուստ ցանկան պարարել զանձինս արեամբ քրիստոնէից, զօրք նոցա անդէն

ուր և հասանէին դիաթաւալ յերկիր կործանէին զարս և զկանայս, զաշխարհականս և զեկեղեցականս, և զմանկահասակս և զերիտասարդս, կանանց, և՛ զուստերս, և՛ զդստերս նոցա, գերեալ գումարեալ խումբ խումբ տանէին առաջի շահին՝ ցուցանել նմա, անդ սաստիկ տագնապ տարակուսանաց անկանէր ի վերա նոցա ողբ, աղաղակ և լաց անտանելի լսելի լինէր առ հասարակ յամենեցունց, զարտասուս նոցա խառնեալ ընդ արեան սպանելոց իբրև զուխս վաղէր ի Կուր գետ և ներկէր զջուր նորա արեամբ, անկաւ ի ձեռս նոցա և գերեցաւ առաջնորդն Հայոց Տփխիսայ, որ էր ըստ մասին էջմիածնի Մարտիրոս վարդապետն միով սպասաւորաւ։

Իսկ ի բնակչաց քաղաքին այնմիկ ոմանք զգաստացեալք ի գիշերին յորում արշաւանք պարսից մտին և ելին յահէ թշնամեաց ելեալ փախեան ուղիղ ճանապարհաւ դէպ ի ներքին Վրաստան և ոմանք թագեան յայգեստանս և ի խոխոմս լերանց և ձորոց, ընդ նոսա փախեալ թագեաւ յայգեստանս Կրծանիսայ[1] Պետրոս վարդապետն միաբան Հաղբատայ վանից, որ էր հայրենեօք ի Կայծենւոյ[2] և կայր յայնժամ ի Տփխիս ընդ այլ միաբանաց նոյն վանից, որ և զայսոսիկ ականատես գոլով մեզ պատմաբանեաց ի փախստէից անտի քաղաքացեաց, որք չէին հեռացեալ ի քաղաքէն աւելի քան երեք ժամու ճանապարհ, զօրք պարսից, որք ի պահու առաւօտուն մտին ի քաղաքն, նշմարեալ զփախուստեայս ի ճանապարհի, հասին զկնի նոցա զոմանս սպանեն և զոմանս գերի վարեցին առեալ զկապուտ կողոպուտ նոցա, ապա սփռեցան ի շրջակայ այգեստանս քաղաքին և արարին նոյնպէս, կալան անդ յայգեստանս Կրծանիսայ զնոյն Պետրոս վարդապետն խառնեալ ընդ գերեաց հանին ի գլուխ լերին Սոլոլակի. ի գերելոց անտի աղջիկ մի տասն ամաց զառ ի վեր լերին տանիլն թալկացեալ անկանի ի գետին և անօրէն գերիչքն բարձեալ զնա ի շալակ վարդապետի հանեն այնպէս ի գլուխ լերին, այս վարդապետ անցուցեալ զաւուրս իւր ամս ութսուն աւելի, հանգեաւ և ի վանս Հաղբատայ ի 1846 ամի։

Իսկ Աղայ Մհամմադ խան առեալ գերեաց զսուրբ Նշանն Հաղբատայ վանից և զկալուածագիրս նորա, զորս պահէին անդ ի Տփխիս սուրբ Գէորգ յառաջնորդարանի եկեղեցին բերդի, ընդ նմին անկաւ գերի և զաջ Յովհաննու Օձնեցւոյ սուրբ հայրապետին մերոյ, զոր պահէին ի տան Լօռու Մէլիքեանց, տարան զպատուական Անօթս էջմիածնի՝ զարդս ոսկոյ և արծաթոյ, և ականց պատուականաց զարդարեալ մա-

[1] Այս Կրծանիս ի հնումն էր գիւղ արուարձան Տփխիս քաղաքի, սեպհական կալուած վրաց արքայի տան։

[2] Այս Կայծոնի այժմ ասեն Շնող, ուր գերեզմանն է Շինու Սարկաւագի, չորս ժամու հեռի ի Հաղբատայ վանից։

տանս սրբոց մնալու[1] յօրինուածով, զորս Ղուկաս կաթողիկոս յառաջագոյն առաքեալ էր անդ ի պահպանութիւն յահէ պարսից, զորմէ յիշեցաք ի 138 համարն։ Զայս ամենայն կապուտ կողոպուտ ի մէջ երից աւուրց հաւաքեալ ել արտաքս ի քաղաքէն, Աղայ Մհամմադ խան հրամայեաց այրել զքաղաքն։ Իբրև հարիւր ամեայ աւերակ դարձոյց զքաղաքն, այրեաց զամենայն շքեղ շինուածս տանց, ապարանից, իշխանաց և կրպակաց, ի փոշի փոխարկեալ զամենայն, և ինքն առեալ զաւարն և զգերին ամենայն զօրօք դարձաւ ի Մուղանչոլ։ Անդ դադարեցաւ ձմերել։ Իսկ Իբրահիմ խան Արցախայ, երբ լուաւ զաւերումն Տփխիսայ, ինքն ամենայն դերդաստանօք էանց ի Տաղստան առ աներ իւր Օմարխան Աւարիոյ, թողեալ զՇուշի ի բեկման երկիւղի։ Տեսեալ զայսպիսի յաղթութիւն Աղայ Մհամմադ խանի ընծայաբերք լինէին առ նա սարակինացիք ի Կարնոյ և ի Տայոց։ Ապա զգերիս և զաւարս Տփխիսայ բաժանեալ իւրաքանչիւրոց որպէս խոստացեալն էր, տարան յԵրևան, ի Կարին, ի Տայս և ի Պարսկաստան[2], ուր և պատահեր վաճառէին զնոսա համարձակ, յորոց ութսուն անձինք անցանելն յէջմիածնաւ գնեցին զնոսա Ղուկաս կաթուղիկոս և միաբանք էջմիածնի, ազատեալ արձակեցին ի տեղիս իւրեանց, բերին զերեվարքն յԵրևան քաղաք զառաջնորդն Տփխիս քաղաքի զՄարտիրոս վարդապետն, անդ ոմն ծանօթ տաճիկ Հաճի Ջաֆար անուն՝ ճանաչեալ զնա ազատէ ի ձեռաց գերչաց ուղևորէ յէջմիածին, որ հասեալ ի վանս սրբոյն Հռիփսիմէի սաստիկ իշուածովք իսկոյն մեռանի անդ, ոչ ժամանեալ էջմիածին։

Արդ ըստ հաւաստի ականատես պատմաբանից եղև թիւ կոտորածի բնակչաց Տփխիս քաղաքի ի հայոց և ի վրաց ութ հազար անձանց, և գերելոցն տասն և վեց հազար, հաւաստին սորա հաշուեալ ի տիպ արձանագրոյ Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեանց ի տպարանին Նոր Նախիջևանայ Ռուսիոյ ի 1797 ամի, զոր ոչ կարացաք ի ձեռս բերել։

Իսկ շահն պարսից, որ նստէր ի Մուղանչոլ կոչեալ առ ինքն զՄահմատ խան Երևանայ կարգեալ ի տեղի նոր բերդապահս չորս հարիւր զօրականօք զԹաւաքեալի խանն. առնու Մահմադ խան ի Ղուկաս կաթուղիկոսէն զընծայս վասն շահին զերկու հարիւր թուման և զեօթն

[1] Ի Մենայից անտի տակաւին զտանին ի պալատս արքայազնէից պարսից որպէս իսկ աչօք տեսեալ էր ի Դաւրէժ պարոն Գալուստ Շէրմազանեան տփխիսեցի այրն ազգասէր ի 1828 ամի ի ձեռս խանանց շահզադէից յօրինեալ ի վերա Նէրկիլայից, որոյ ի հարցանելն ուստի է այս, պատասխանէին, թէ ի յաւարէ Տփխիս քաղաքի։

2 Ի գերեալ հայոց Տփխիսայ ի Պարսկաստան զոմանս ի նոցանէ ներքինացուցեալ վասն կանանոցին պարսից, յետոյ եղեն անուանիք ի դուռն նոցա գործակալութեամբ, որք էին Մանուչար խան Էնակոլոփեանց, Խոսրով խան տէր Սամուէլեան Ղայիթմազեանց, միրզա Գորգի և այլք։

ջորիս, որ եւ յօժարութեամբ իւրով և ինքն պատրաստեալ գնծայս ելեալ գնաց ի կոչ շահին ի Մուղան, մատոյց շահին գնծայս իւր և կաթուղիկոսի որոշեալ անուամբ և ընկալեալ ի նմանէ զպատանդ կին և զորդի իւր և զիշխանութիւն երկրին Արարատայ դարձաւ յԵրևան խոստացեալ տալ շահին զուղտս հարիւր, զորս ի վճարելն էառ զտասն և չորս հատն ի կաթուղիկոսէն։ Բայց ներքինի շահն փոխարեն ընծայից, զոր ստացեալ էր ի կաթուղիկոսէն, առաքէ վասն կաթուղիկոսի շնորհակալութեան հրովարտակաւ զպարգևս դիպակաց, զոր վատ սովորութեան պարսից խալաթ կոչի, սակայն պարգևատարն նախ էառ ի կաթուղիկոսէն հարիւր թուման պարսից, ապա յանձնեաց նմա զպարգև թագաւորին։

Ի վախճան 1795 ամի Սարգիս կաթուղիկոս Հասան Ջալալեանց կայր տակաւին ի Գանձակ առ Ջաւադ խանն, ուր տեղեկացաւ և տեսաւ իսկ աչօք ի տան Ջաւադ խանի զաւարեալս ի Տփխիսայ զուրբ նշանն Հաղբատայ, զԱջ սրբոյն Յովհաննու Օձնեցւոյ և ի զարդուց էջմիածնի, զնշանաւոր թագն, շուրջառն և վակասն Ղազար կաթուղիկոսի, յորոց վերայ գրեալն ցուցանէր զայսմանէ յատնեալ գրով Ղուկաս կաթուղիկոսին կամէր նովաւ ի քաղցրութիւն ածել զնա ի վերա ինքեան, առ պատասխանիս նորա գրէ Ղուկաս ի թվին հայոց ՌՄԽԴ դեկտեմ. ԺԵ յետ յանդիմանելոյ զնա վասն գողութեամբ ընկալնելոյ զօծումն կաթուղիկոսութեան, ապա ասէ, այնպիսի նորաձև իմն բան արարեր, որ չմնաց մեզ տեղի ընդ քեզ խօսելոյ, յաւելու ապա ասէ՝ ըստ գրութեանդ ի Թիֆլիզոյ աւարի գնացեալ թագն Ղազար կաթուղիկոսի, շուրջառն և վակասն, որ Ջաւադ խանի մօտն է սալամաթ, եթէ հնար է գնեցէք, կամ ընծայէ խանն աթոռոյս, որպէս և վասն այսր գրեցի մէլիք Մէջլումին։ Բայց որպէս և իցէր պլիշեալ զգեստն էառ էջմիածին ի թանգարանն իւր գնով կամ ընծայմամբ, զոր ոչ գիտեմ, միայն այժմ գրեալ տեսանիմք ի մատեանս զգեստուց ցուցակի սրբոյ էջմիածնի։

Վասն գնալոյ Աղայ Մհամմադ խանի ի Պարսկաստան և դառնալոյ ի Շուշի ի սպանման նորա անդ

Ի բանակիլ Մհամմադ շահին ի Մուղան, տարածեաց զձեռն իւր ի վերա Շամախու և Նուխուայ՝ որ ասի Շաքի Շիրուան, հնազանդեցուցանել զնոսա, բայց նոքա վաղ մտեալ էին յամրոցս իւրեանց ամենայն պատրաստութեամբ, պաշարեցին զնոսա զաւուրս բազում զօրքն պարսից, բայց առաւել վնասեցան ի նոցանէ, քան թէ վնասեցին։ Ապա սփռեալ ի գիւղօրայս նոցա այրեցին զամենայն շինուածս՝ զամբարանոցս դարմանոյ անասնոց և զայլս, դարձան վշտացեալ ի Մուղանչօլ, տեսեալ շահին զանյաջող դիպուած զօրաց իւրոց զայրացեալ՝ կատա-

ղութեամբ հրաման ետ կապեալ ձեռօք և ոտիւք պրկել ի գետնի զվեց հարիւր ցաւագար և ծերացեալ զերիս, զոր ընդ ինքեան ածեալ էր ի Տփխիս քաղաքէ, տա զնոսա անդ սմբակակոխ առնել ձիոց և ջորոց մինչև ոգեսպառ կատարեցան ի Քրիստոս։

Ոչ շատացեալ այնու գազանն արեան արբու, հրամայէ շինել կրադանդ զուղղագիծ որմն միակողմանի և ի նմայ ծակս յիսուն երկու հանդոյն մարոց ձիաստանի այնքան նեղագոյն, յորում հազիւ մտցէ միայն գլուխ մի մարդոյ և անցուցեալ ի նմայ զգլուխս յիսուն երկու հայ իշխանաց, զոր խաբէութեամբ կալեալ կապեալ էր, զորմէ պատմեցաք ի 139 համարն, ի պարանոց նոցա կապեալ եռապատկեալ ճոպան, հանգուցիւք ամրացուցեալ ընդ յագիս ամեհի ջորոց. տա հարկանել զջորիս մինչև հատեալ զգլուխս նոցա՝ կատարեցան ի Քրիստոս։ Յայսմիկ ժամանակի եհաս առ շահն լուր ապստամբութեան բնակչաց Շիրազայ, որ եղեալ ի մարտ ամսոյ 1796 ամի ամենայն զօրօք փութացաւ ի Թէհրան զառաջն առնուլ ապստամբացն։ Ի մեկնիլ նորա անդէն, Իբրահիմ խանն Արցախայ, որ դաշնակից էր Հերակլ արքային վրաց և էր յայնժամ ի Տաղստան, վարձեալ անդէն երկոտասան հազար Կովկասային զօրս ղեկաց միաւորեաց ընդ ութ հազար զօրաց դաշնակցին իւրոյ Հերակլեայ չուեցին ի վերայ Ջաւադ խանին Գանձակայ ի 1796 ամի քսան հազարաւ, վասն հատուցանելոյ նմայ զվրէժ աւերման Տփխիս քաղաքի, երեք ամիս պայման եդեալ կովկասային զօրաց և վարձ իւրաքանչիւր անձին էր եօթն կամ տասն հատ դադաք կտաւեայ և մէկ լիտր դմակ ոչխարի։ Իսկ Ջաւադ խան պատրաստեցաւ պատերազմաւ դիմաւորեալ նոցա և հալածել յիւրմէ սահմանաց, բայց ոչ կարացեալ ամրացաւ ի բերդն, պաշարեաց Հերակլ զբերդն և սաստիկ ռմբակոծէր զնոսա հուր տեղալով ի բերդն, և բերդականքն ոչ պակաս պատասխանէին նոցա, որոց հրամանատար էր հայազգի մէլիք Մէջլում, որ ի վերա միոյ բրգաց բերդին վէրս ընկալեալ ի զօրաց Հերակլեայ մեռանի, տարեալ ընդ իւր զաւաղելին մշտնջենաւոր պշարագործութիւն իւր, որ եղև պատճառ աւերման Տփխիս քաղաքի և հեղման այնքան անպարտ արեան և գերութեան քրիստոնէից։ Եւ յետ յիսնօրեայ պաշարման բերդին նուաճեալ ըստ ամենայնի զՋաւադ խան ի հաշտութիւն խօսեցաւ, պարտաւորեցաւ տալ զվարձս վարձեալ զօրականաց ղեկաց Կովկասու, և զքանի հատ գերիս տփխիսեցի, զոր ունէին ի Գանձակ Ջաւադ խանն և մէլիք Մէջլումն և այլք, ապա զմեծ մասն բնակչաց երկրին Գանձակայ վարեաց ի Վրաստան և դարձան ի տեղիս իւրեանց՝ Հերակլ ի Թէլաւ ի Իբրահիմ խան՝ ի Շուշի։ Որովհետև աւերակ էր դարձեալ Տփխիս, ոչ մնացեալ տուն նորատելոյ արքային Հերակլեայ և ոչ գանձ արքունի, որով շինեսցէ զապարանս, վասն այն պատրաստեաց ի փոքրիկ քաղաքն Թէլաւ վասն իւր

զքանի անշուք սենեակս, զոր մեք տեսաք միայն կանգուն զորմունս նորա, և անդ բնակեցաւ ցվախճան կենաց իւրոց, ոչ ևս մտեալ ի Տփխիս քաղաք ի կսկիծ սրտի իւրոյ։ Լուր պաշարման Գանձակայ էհաս Թէհրան շահին պարսից, որ իսկոյն հրաման հանէ խանից Երևանայ և Նախիջևանայ փութալ հասանիլ յօգնութիւն պաշարելոցն Գանձակայ, և նոքա անագան ուրեմն զօրաժողով երթան ի դաշտն Մուշկեամբար մերձ ի Ղարատաղ, լսեն զդարձ պաշարողաց և ինքեանք դառնան ի տեղիս իւրեանց։ Առ այն սրտմտեալ Մհամմադ շահ՝ կոչէ առ ինքն զՔեալբալայի խանն Նախիջևանայ պատուհասել կուրացուցանէ զերկու աչս նորա և զրկեալ յիշխանութենէն արկանէ ի բանդ, որ զկնի սակաւուց փախչի յԵրևան՝ կալով անդ երկար ժամանակ ընդ խնամարկութեամբ Մահմադ խանին Երևանայ։

Եւ ի սոյն 1796 ամի սկիզբն եղև սաստիկ սովոյ աշխարհին Աղուանից, Արցախայ, Սիւնեաց և Գանձակայ, քանզի ասպատակ զօրաց Մհամմադ շահի այրեալ էին զարմտիս երկրին և զնորաբոյս արտորայս կերակուր արարեալ երիվարաց իւրեանց, և զայլս սմբակակոխ սպառեալ։ Այնքան սաստկացաւ սովն ի յիջեալ տեղիս մինչև պակասեալ սուրբ անասնոց ուտէին զանսուրբ կենդանիս, և բազումք վաճառէին ի պէտս հացի զզաւակունս իւրեանց, այլք կթուցեալք և նուաղեալք ի սովոյ քայլափոխել ոչ կարէին, այլ անկեալ ի ճանապարհի զոգիս փչէին, և շատք ի հեռաւորս գաղթէին, վասն այնորիկ ցիրուցան եղեն ամենայն բնակիչք աշխարհին այնմիկ, բազումք ի հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմխէթ, յԵրևան, ի Կարս, և յաշխարհն սարմատացւոյ, ի Մօզդօք և ի Ղզլար։ Գաղթեալքն ի Վրաստան և ի Սոմխէթ, անգէտ ծիսից և օրինաց վրաց եղեալ են մինչև ցայսօր սեպհական ստրուկք (ճորտք) իշխանաց այնր երկրի, որք թաւադ[1] յորջորջէին, ի նոցանէ վաճառին, հանգոյն զերեաց, ոչ ի վերա օտար տէրութեան հպատակաց, այլ որք ազնուական են և հպատակ տէրութեան իւրեանց։ Ի գաղթելոց անտի տեսաք մեք զոմանս, որք պատմեցին մեզ զսաստկութենէ սովոյն, որք վաճառեալ էին ի ծնողաց իւրեանց ի Վրաստան վասն հացի, զի մէկ անձն արու պատանեակ վաճառեալ էր երեսուն հօխայ կորեկի, զոր յաւուրս մեր գնողն վաճառեաց այլում երեք հարիւր մանէթ արծաթի։ Են ի նոցանէ, որք տան զգինս իւրեանց տեառն և ազատեն զանձինս, և են որք բողոքեն ի դատարանս տէրութեան վասն անպարտ պարտաւորութեան իւրեանց, և բազում ծախիւք իբրև օրինօք ազատին ի ձեռաց տեարց իւրեանց, և են բազումք ի նոցանէ, որք այժմ տակաւին ծառայեն նոցա որդւոց յորդիս։

[1] Ի վրաց լեզու թաւադ բառն նշանակէ գլխաւոր կամ իշխանապետ։

Ի սմին ժամանակի հազիւ թէ հասին զօրք ռուսաց յօգնութիւն արքային վրաց, զոր խնդրեալ էր Հերակլ ի յաւերման Տփխիսայ, քանզի ըստ հրամանի կայսրուհւոյն ընդ հրամանատարութեան զէնէրալ օտ ինֆանդերի գրաֆ Վալերիանէ Զուբօվոյ վաթսուն հազար զօրք ռուսաց անցին ընդ ծովն Կասպից յԱղուանստան տիրեցին ծովեզերեայ քաղաքացն Դարբանդայ, Բաքուայ և հասեալ ի Շամախի քաղաք, ձմերեցին ի Սալեան և ի Գանձակ. ընդ նոսա էր հայոց առաջնորդ Ռուսաստանու Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեանց, որ անդէն մեկնեալ ի նոցանէ երթայ ի տեսութիւն հայրենի քաղաքին Տփխիսայ, և անցանել նորա ընդ Գանձակաւ առեալ զլուր սրբոյ նշանին Հաղբատայ և աջոյն սուրբ հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցւոյ, թէ պահեալ կան առ Ջաւադ խանն, խնդրէ ի նմանէ զայնոսիկ գնով գնել, բայց Ջաւադ խան իբրև ընծայ նուիրէ, զոր առեալ մտանէ ի Տփխիս քաղաք, ի 10-ն ապրիլի 1797 ամի, զոր նոր ի նորոյ դարձեալ էին փախուցեալ բնակիչքն և սկսեալ զշինութիւն քաղաքին, ուր մնալով զաւուրս տասն և հինգ հաւաքեաց զամենայն անցս դիպուածոց գերութեան և աւերման նորա ի պարսից, զոր հաւաստի յօրինեալ պատմութիւն, ի տիպ արձանացոյց յիւրում տպարանի ի Նոր Նախիջևան, զոր մեք ոչ մարթացաք ի ձեռս բերել։ Եւ ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն յետ մնալոյ անդ հնգետասան աւուրց երթայ ի վանս Սանահնայ ի 25-ն ապրիլի, կարգէ անդ առաջնորդ զԱռաքել վարդապետն Մուրադեանց, որ մաքրեաց զեկեղեցին վանից Սանահնայ ի բազմամեայ կուտեալ աղբից անասնոց, զի տեղին աղօթաւորաց եղեալ էր գոմ ոչխարաց անբանից։ Այս Առաքէլ վարդապետ եկաց եպիսկոպոս նոյն վանից ցմահ իւր, զոր մեք տեսաք ի ծերութեան նորա ի մեր հասակի մատաղութեան։

Իսկ գրաֆ Զուբովն՝ յաղթեալ նուաճեալ զամենայն տիրողս Աղուանից, հնազանդեցոյց զխանսն Բաքուայ, Լանքարանայ, Շամախու, Նուխուայ, Գանձակայ և Ղարաբաղու և ինքն նստէր բանակաւ ի Սալիան դաշտի, ընծայաբերք լինէին նմա տիրողքն երկրին այնմիկ, ընդ որս և Իբրահիմ խան առաքելով առ նա ընծայիւք զորդի իւր Ջաբրուլ Ֆաթիհ խան հանդերձ թղթով հաւատարիմ ծառայութեան կայսրուհւոյն ռուսաց, և ստացաւ պարգևս և մարդասէր ողորմութիւնս ի կայսրուհւոյն. առաքեաց կայսրուհին պարգև վասն գիտնական Ախունդ մօլլայ Փանահին Շուշուայ գաւազան մի ականակուռ զարդարեալ։

Յետ այսորիկ հրամանատարն ռուսաց գրաֆ Զուբով, զոր Ղըլայաղ կոչէին[1] (ոսկեոտն) հրաման ընկալեալ ի կառավարութենէ Պետերբուրգայ

[1] Այս զօրապետի մէկ ոտն ի ձնկանէ տարեալ էր ռումբն թնդանօթի և ի տեղի նորա ի նշան քաջութեան կցեալ էր ոսկէ ոտն նորա. վասն այս կոչէին զնա այնպէս։

դառնալ ամենայն զօրօք ի Պետերբուրգ ի պատճառս մահուան կայսրուհւոյն ռուսաց Եկատերինէի Երկրորդի, որ չուեալ մտանէ ի Պետերբուրգ թագաւորեալ տեսանէ զորդի կայսրուհւոյն զՊօղոս Պետրոսեան (Պաւել Պետրովիչ), որ գահակալեաց ի հինգ օրն ապրիլի 1797 ամի, ըստ գրելոյ տեառն Պլատօն արքեպիսկոպոսի ռուսաց ուսուցչի քրիստոնեական աստուածաբանութեան Պաւել Պետրովիչի, որ յօրինեալ է գիրք մի աստուածաբանութեան քրիստոնեական անուանելով ի 1765 ամի, որոյ ընթերցողք առաւել, քան զԱրիստոտելին զովանեան իմաստալի աստուածբանական և բնական գիտութեան յաղբերէ նորա, որով ուսուցանէր և կրթէր յաստուածապաշտութեան կրօնս զժառանգն արքայութեան ռուսաց զՊաւել Պետրովիչ, զայն գիրք թարգմանեաց ի հայ բարբառ թագաւորական թարգմանն ռուսաց հայազգի Ստեփաննոս Ասլանեան ի մայրաքաղաքն Պետրբուրգ 1778 ամի։

Իսկ ներքինի Մհամմադ շահն պարսից՝ նուաճեալ զամենայն ապստամբս կողմանցն Խորասանայ, լսէ զմուտ զորաց ռուսաց ի Շամախի քաղաք, աճապարեալ հասանի զօրօք բազմօք ի բերդաքաղաքն Շուշի ի գարնան ժամանակի 1797 ամի և մինչև էր եզր Երասխ գետոյ առեալ Իբրահիմ խան Շուշուայ զամենայն գերդաստանս իւր զոմանս յազգականաց իւրոց, փախեաւ ի Ճարու Բէլաքան. ճանապարհորդակիցք նորա էին փեսայք նորա, Նասիր խանն, Շահսէվան Աթայ խանն և Սուլէյման խանն Շաքուայ, թէպէտ շահն զկնի նոցա առաքեաց զօրս ըմբռնել զնոսա, սակայն ոչ ինչ կարացին առնել, և Իբրահիմ խան անցեալ ընդ Կուր գետ մտաւ ի Ճարու Բէլաքեան, ուր ի ճանապարհին հրապուրեալ լէկզիք ի շահէն, կամեցան կալնուլ զնա ածել առ շահն։ Բայց կին նորա, որ էր Նուխայ խանի դուստր Աւարիայ գաւառի, Բիքայ աղէն, յահէ ազգականաց նորա չեղեն ձեռնամուխ, եւ ի մտանելն շահին ի Շուշի, տարածեաց զձեռս իւր ի նեղեալ և ի չարչարել զպատուաւորս Ղարաբաղու և թափել զթոյնս իւր ի վերա ամենեցուն։ Զոմանս ի մեծամեծաց կալեալ կապեաց ի բանտի և յետ միոյ շաբաթի մտանելոյ նորա ի Շուշի, ցասուցեալ վասն իրիք յանցանաց ի վերա երկուց սենեկապետաց իւրոց. Սաֆար ալի և Ապպաս բէկաց, ասէ, յանդիման նոցա, թէ ի վաղին անջատեցից զգլուխս ձեր ի մարմնոց ձերոց, և ընդ այլոց գլխոց շինեցից բուրգ բարձրաբերձ, և զդաշտն Ղարաբաղու վարդագոյն ձեր արեամբ արարից վարդարան իմն։ Գիտէին նոքա զանփոփոխ և բարբարոս բնաւորութիւն նորա, զի զոր ինչ ասէր չունէր դառնալ ի բանից իւրոց, ուստի պաշարեալ յանճարութեան խորհեցան երկու սենեկապետքն ի նմին գիշերի բառնալ զնա ի կենաց և ազատել զանձինս ի մահուանէ, և ի հաւախօսին մինչ խորդայր ի քուն մահահրաւէր շահն ներքինի, մտեալ յառանձնոց նորա ի միասին յիշեալ սենեկա-

պետքն հարին ի սիրտ նորա զսուսերս իւրեանց անդէն դիաթաւալ սպանին և հատին զգլուխ նորա, և իսկոյն ի ծածուկ յայտնեցին ղազախեցի Սադխ բէկին և առեալ զնա մտին ի սենեակ շահին, զի ոչ հաւատայր բանից նոցա, Սադխ ետես մարմին նորա թաթաւեալ արեամբ, ապա ոչ յայտնի առեալ Սադխ բէկ զզօրս իւր ղազախեցի տաճիկս չուէց դէպ ի Գանձակ, ասելով թէ իբր շահն առաքէ զկնի Իբրահիմ խանին և ապա յետ երկուց ժամուց ելանելոյ նորա հռչակեցաւ ի Շուշի համբաւ սպանման շահին։ Ի փախուստ դարձան զօրք պարսից յիւրաքանչիւր տեղիս, բնակիչք քաղաքին հետամուտ եղեալ զկնի նոցա յափշտակեցին զկահուկարասիս նոցա և զհամբարանոցս և Մհամմադ բէկ եղբօր որդի Իբրահիմ խանի տիրապետեաց գանձուց և ընչից արքայի իբրև տէր երկրին այնմիկ, և զգլուխ շահին առաքեաց ընդ ձեռն ուրումն Թաֆի բէկի ի Բէլաքեան առ Իբրահիմ խանն և զայն առաքեաց Իբրահիմ խան առ Հերակլ արքայ. ապա յետ քանի աւուրց ինքն ամենայն գերդաստանեօք դարձաւ ի Շուշի իշխելով երկրին որպէս երեկն և եռանդն։

Իսկ Ալի Մարդան խան սպարապետ զօրուն պարսից փութացեալ ի Թէհրան, զի կալցէ զթագաւորութիւն պարսից, բայց ի դերև ելին ջանք նորա, զի նախ քան զնա կալաւ ժառանգութիւն աթոռոյն եղբայր Մհամմադ շահի կամ եղբօր որդի նորա Բաբախան կամ Ֆաթալի շահ ի 1797 ամի։

Յետ այնորիկ անկաւ ժանտախտ ի Տփխիս քաղաք, ի Վրաստան և ի Սոմխէթ ի 1798 ամի, որ զմնացորդս ի սրոյ և ի գերութենէ Մհամմադ շահի ճառաքաղէր, յորում ժամանակի արքայն վրաց Հերակլ Երկրորդ լցեալ զաւուրս կայր ի մահիճ հիւանդութեան ի քաղաքն Թէլաւ։

Վարդան Օձնեցի, «Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի, մեծի և փոքու», Մատենադարան, ձեռ. 4331, pp. 130—164:

49

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Աղա Մահամմէդ շահը Շուշում (պատմական անցք)
1797

Պարսից շահը խորոտ Աղա-Մուհամմէդ ներքինին, վառած էր բարկութիւնով և վրէժխնդրութիւնով Ղարաբաղի Իբրահիմ խանի և բոլոր նրա երկրի դեմ։ Բոլոր Արևելքում իր կատաղի անգթութեամբ յայտնի այդ շահի կրած վերջին անյաջողութիւնները զայրացրել էին նրան։ Պարս-

կական անհամար զորքը յայտնեց Արաքսի ափին։ Ղարաբաղը հեծում էր թշւառութեան ներքոյ...։ Երեքամեայ երաշտութիւնը և աւերիչ պատերազմները սփռել էին այդ աշխարհում սով և աղքատութիւն, աշխարհում, որ յառաջ յայտնի էր իր բարգաւաճութեամբ։

Բազմաթիւ պատերազմիկ քրդական վաչկատուն ցեղեր գաղթել էին հարևան նահանգները, օտարութեան մէջ սնունդ որոնելով, իսկ մնայուն բնակիչները, հայերը և թուրքերը, նւաղած, յուսաբեկ եղած, մի կերպով ապրում էին իրանց նախկին բարեկեցութեան փշրանքներով։

Իբրահիմ խանը անելանելի վիճակի մէջ գտնւելով և չկամենալով իր երկիրը ենթարկել նոր անխուսափելի թշւառութեանց անօգուտ պատերազմ անելով, հեռացաւ իր ընտանիքով և կուսակից բեգերի հետ Դաղստան։ Մի և նոյն ժամանակ Աղա Մուհամմէդ շահը անարգել մըտնում է Ղարաբաղի մայրաքաղաքը, Շուշին, որի անառիկ պարիսպների տակ, մի տարի առաջ, խորտակւել, փշրւել էին իր բոլոր ապարդիւն ջանքերը։

Երկու հազար քաջարի ձիաւորներ, աներկիւղ զորապետների հրամանատարութեամբ, հետապնդւեցան փախչող խանի ետևից։ Նրանք հասան նրան այն րոպէին, երբ նա անցնում էր Թէրթէր գետից և այդտեղ հալածեալների և հալածողների մէջ մի յամառ կռիւ սկսւեց։

Այս յուսահատ պատերազմի մէջ, որ ղարաբաղցիները մղում էին մի հոգի տասի դէմ կռւելով, նրանք մի հզօր դաշնակից գտան, որ շատ անգամ անցած արիւնահեղ ճակատամարտերի մէջ յաջողութեամբ փորձել էին։ Այդ դաշնակիցն էր երկիւղը, որ ազդում և փռում էր ղարաբաղցիների պատերազմական աղաղակը։ Պարսիկները այդ աղաղակը լսելով, յետս ընկրկեցան և իրենց փրկութիւնը փախուստի մէջ գտան։ Իբրահիմ խանը ազատւած էր...։

Բայց յագուրդ չստացած կատաղութիւնը կրկնակի ուժով եռաց շահի կրծքի մէջ։ Նրա բարկութիւնը իբրև զայրագին որոտալից ամպ տարածւեց սարսափահար Ղարաբաղի վրա, իսկ նրա հարւածները հասնում էին այդ աշխարհի մինչև ամենաանառիկ և առանձնակեաց տեղերը։ Պարսկական հրոսակները իբրև գազաններ մռնչում և վազվըզում էին ամեն տեղ։ Ուժով խլում էին թշւառ բնակիչների ձեռքից անասունը և հացը և ամենանորանոր մահով պատժում էին ընդդիմացողները կամ իրանց գոյքը թագցնողները։

Ամայացան ճանապարհները և գիւղերը։ Երկրագործի գութանը այլ ևս չէր կպչում հողին։ Որսորդի բազէն այլևս չէր սաւառնում ամպերի տակ։ Ժողովրդի գործունեայ կեանքը կանգ էր առել։ Այլևս լսելի չէին ուրախ երգերի հնչիւնները, դադարեցին քրիստոնէական եկեղեցիների զանգակների ղօղանջիւնները և հաւատացեալները թաքուն կեր-

պով ժողովւում էին լուռ աղօթք անելու։ Միայն մուէզզինի զիլ ձայնը, միակերպ և տխուր արձագանքով, անդրադարձւում էր սարերի և հովիտների վրայ։

Կարծես թե պատերազմի դաշտի վրայ ընկած և մոռացւած մարտիկը ստացած վէրքերից փչում էր իր վերջին շունչը։ Նրա չորեքկողմը խնդալից կայտռում են գիշատիչ գազանները, թռչում են լեշակեր թռչունները. բայց դեռ ոչ ոք չի համարձակում պատառոտել անպաշտպան ընկածին, վախենալով նրա վերջին հառաչանքից, վերջին ջանքից, որ յոյսը և աղօթքը ներշնչում են նրա մէջ...։

Միայն Շուշում եռ էր գալիս արիւնահեղ գործունէութիւն։ Վերևում մինչև ամպերը բարձրանում են Շուշու անառիկ բերդի պարիսպները։ Կախ ընկած ժայռի գագաթից հեռու դէպի հարաւ տարածւում է նայւածքը, թաւախիտ անտառների, կանաչազարդ սարերի, արևակէզ հովիտների վրայով, մինչև Արաքսի արծաթի պէս պսպղուն թելը և Ղարաբաղի մռայլ շղթաները։ Դէպի հիւսիս փայլում են ձիւնապատ ահագին սարերը, որոշելով օրհնեալ Վրաստանի սահմանները։

Այնտեղ, Շուշու բարձրութեան վրայ, յայտնի չեն ոչ ամառւայ տօթի և ոչ ձմեռւա ցրտի ծայրահեղութիւնները։ Միայն պարզ գարուն և մշուշապատ աշուն թագաւորում են այդ անառիկ օթևանում, որտեղ միայն մարդիկ կարող էին հարթել ճանապարհ, որպէսզի իրանց հետ փոխադրեն երկնակամարի տակ իրանց հոգսերը, կրքերը, երկիւղը և սնափառութիւնը։

Կախ ընկած ժայռի հարաւ-արևելեան կողմում կանգնած է Մահմէդ Հասան աղայի, Իբրահիմ խանի աւագ որդու քառանկիւն ձևով շինւած պալատը։ Այստեղ իջևանեց Աղա Մուհամմէդ շահը։

Լայն դռները առաջնորդում են դէպի ներքին բակը։ Ճակատի շինութեան երկարութեամբ ընկած է մի ծածկւած գալէրիայ (սրահ) որ պաշտպանում է արեգակի ճառագայթներից բնակարանները, որոնց շարժական, բազմանկար և գոյնզգոյն ապակիներից շինած լուսամուտների միջից մի քանի ժամանակ առաջ կարելի էր տեսնել Ղարաբաղի տիրապետողին, որ իր օրերը անցնում էր այնտեղ անգործութեան մէջ, փափուկ գորգերի վրայ, հայրական կեանքի ծոցում...։

Այդ բոլոր հանդիսաւոր, տեսանելի բնակարանները շահը թողել էր իր պալատականներին։ Իսկ ինքն անարժան աչքերից իր անձը թաքցրել էր պալատի հարաւ-արևելեան մասում մի փոքր սենեակի մէջ։ Այդ սենեակում, միայն արտաքին պատուհանի միջով, միայն ցերեկւայ լոյսը այլ և գուցէ երկնքի տակ սաւառնող արծւի նայվածքը—հասնում էին բռնակալի անձեռնմխելի անձին։

Շահի առանձնակեաց բնակարանը, որ մի նեղ նրբանցքով բա-

ժանում էր մի ուրիշ փոքր սենեակից, որտեղ կենում էին նրա սիրեկան սպասաւորները, Աբբաս բէկը և Սաֆար Ալին։

Պալատի առաջ խմբուած էին մարդիկ։ Ընդարձակ հրապարակի վրայ իջեանել էր շահի սեպհական գվարդեան։

Այդ զօրականների թուխ երեսները, նրանց սրածայր սև մորթէ փափախները, երփներանգ չուխաները ծալուող թեքերով, սրածայր և երկար, դեղին կաշուից կարած կօշիկները և, վերջապես, նրանց զինավառութիւնը, այն է ծուռ դամասկեան թուրը, լայն խէնջարը և նիզակածայր հրացանները, այդ բոլորը տալիս էր նրանց վայրենի և առնական կերպարանք։ Նրանց կենդանագրական խմբերի մէջ երբեմն-երբեմն սլանում էին ձիաւորներ—առոյգ քուրդը ձեռքին բռնած երկար եղեգնեայ տէգ, փոքրիկ արաբական նժոյգի վրա նստած. թուրքմէնը—կրակոտ սև աչքերով բարձրահասակ երիվարի վրա. Իրանի բնակիչը մշտախոնջ, անտարբեր դէմքով. դրանք բոլորն շահի սուրհանդակներն էին, որ չափչփում էին երկիրը կամ նրա հրամանները տանելով կամ նրան բերելով զօրքի գլխաւորների զեկուցումները։ Պալատի առաջ մտազբաղ կանգնած էին ուրիշ ձիաւորներ, ոմանք ձիու վրա նստած, ոմանք մատակների սանձը բռնած, որոնք գլուխները բարձրացնելով, կրակոտ աչքերով, ուռած քթածակերով, կրճտում էին ատամները կամ ետևի ոտքերի վրայ կանգնելով ծառանում էին, կարծես հպարտանալով իրանց ազնիւ ծագումով և թամբի ու ծածկոցի ճոխ զարդերով։

Հրամանատար խաները ծանր կերպարանքով, բազմաթիւ սպասաւորներով ման էին գալիս ամբոխի մէջ։ Պալատի դարպասի առաջ նրանցից մի քանիսը իջնում էին ձիուց և հանդարտ քայլելով մտնում ներսի բակը, որտեղ գերեզմանական լռութիւն էր տիրում։ Մի քանիսը արդեն բակի ներսում փռել էին գորգեր և նստած, լռելեայն ծխում էին ղէյլանը, կամ կանգնած, կիսաձայն խօսակցում էին։ Բոլորեքեան լարուած ուշադրութեամբ սպասում էին բռնակալի կոչին, և երբ նրանցից մինը կանչւում էր և յետոյ կարճ բացակայութիւնից հետո վերադառնում, ոչ ոք չէր յանդգնում դիմել նրան և որևէ հարցմունքով։ Լուռ, նա դուրս էր գալիս բակից և միայն նախանձի կամ հետաքրքրութեան բազմանշանակ նայւածքը հեռացողի ետևից աշխատում լուծել նոր գաղտնիքը։

Ծառաները բակի մէջ յետ և առաջ էին գնում։ Ոմանք արծաթէ անօթնէրով, ուրիշները ղէյլաններով, մի քանիսը բազէները ձեռքների վրայ։ Բայց ընդհանրապէս բոլոր այդ շարժողութիւնը կատարվում էր մի տեսակ հանդիսաւոր հանդարտութեամբ, կարծես թէ սպասում էին որևիցէ մի վտանգ կամ մի առանձին կարևոր դէպք։ Լռիկ մնջիկ գործունէութիւնը հետևանք էր, ըստ երևոյթին, այն ընդհանուր ցանկութեան,

որով ամեն մարդ աշխատում էր բռնակալի ամեն մի ցանկութիւնը, ամենափոքր պէտքը կատարելու։

Մռայլ և անհիւրասէր էր շահի սենեակը։ Այստեղ չըկար քմահաճոյ կահ կարասիք, այլ լոկ անպաճոյճ մերկ պատեր էին կանգնած։ Միայն յատակի վրայ փռած էր մի թանկագին գորգ, բռնակալի ոտքերը սալահատակի կոշտ հպումից պաշտպանելու համար և պատին կպցրած էր շահի այդ ժամանակ հռչակաւոր ռազմական մահճակալը, որ նա գործ էր ածում և իբրև անկողին և իբրև գահ։ Խիտ մարգարտահիւս և թանկագին քարերով ընդելուզւած կերպասը ծածկում էր այդ մահճակալը մինչև յատակը, իսկ բազմագին վերմակի մէջտեղը ծիրանագոյն թաւշեայ մի կտոր էր բաց թողած, որ ցոյց էր տալիս շահի նստելու տեղը։

Այստեղ սովորաբար նստում էր շահը ծալապատիկ, լայն պատմուճանի մէջ փաթաթված և վրան կարմրագոյն թանկագին շալ ծածկած։ Սև բուխարէ մորթուց կարած բարձր և սրածայր գլխարկը ծածկում էր նրա թրաշած գլուխը, նրա դեղնած անմօրուք և կնճռապատ դէմքին մեռելային գոյն տալով, իբրև նշանակ այն հակաբնական գեղաթիւրութեան, որին ենթարկվելով մանկութեան ժամանակ, չինել էր նրան առնական հասակում սաստիկ մարդատեաց։ Մարմնապէս հաշմանդամ եղած—շահը դարձաւ բարոյական հրէշ...

Աղա Մուհամմէդի հաշմանդամութեան պատճառ լինող Նադիր շահի երկրաւոր աճիւնը նա ամփոփել էր դէպի դահլիճ տանող նրբանցքի սալահատակի տակ—որպէս զի ամեն օր միջոց ունենայ կոխ տալ ատելի ոսկորքը. նա փափաքում էր նոյնպէս, եթէ կարողանար, ամփոփել մի գերեզմանի մէջ բոլոր մարդկային սեռը, որպէս զի կարողանայ արհամարանքով ոտնակոխ անել ամբողջ մարդկութիւնը...։

Ատելութիւն և արիւնարբու վայրոյթը վառվում էին նրա խոր ընկած աչքերի մէջ, որոնք ներքին յուզման ժամանակ լցվում էին արիւնով։ Այդ աչքերի սուր նայւածքը թափանցում էր մարդկանց հոգու մէջ, իսկ նրա բարակ և սեղմած շրթունքների արհամարական, կծկւած ժպիտը արտահայտում էր խորին ատելութիւն, որով նա կշռում էր իր խօսակցի իւրաքանչիւր միտքը, որ նրա երեսի վրայ կարդում էր։

Կէս նստած, կէս թիկն տւած հանգստանում էր նա իր ռազմական մահճակալի վրայ։ Յենվելով թաւշեայ բարձին, մատերով մի առ մի ձգում էր անգին խոշոր մարգարիտներից շարած համրիչը և նրա բերանը միևնոյն ժամանակ թելադրում էր մի հրաման միրզային, որն առաջին չոքած գրում էր երկար թերթերի վրայ իր հրամանատարի խօսքերը։

Հլու գրչի տակից դուրս չէին գալիս առաքինի և բարեպաշտ մտքեր, չէին շարադրվում ժողովրդի հանդարտութեան և բարեկեցութեան համար մտածմունքներ ...Ոչ, այլ վճիռներ էին շարաշար մահւան պատիժների ենթարկելու սրան նրան, նոր ծանր հարկեր դնելու բնակիչների վզին։ Երբէք գթութեան և մարդասիրութեան խօսքեր դուրս չէին գալիս բռնապետի ներքինու դառնացած հոգուց, որ վաղուց սովորել էր միայն ատելութիւն և պատիժ արտահայտելու...։

Շուշու դրաման ութերորդ օրը մտնում էր երեկոյին։ Արեգակի վերջին ճառագայթների հետ մուսուլմանը ողջունում է երկու աներևոյթ ներկայ հրեշտակներին, որոնք թռչում գալիս են նրա մօտ երեկոյեան աղօթքի ժամանակ։

Այդ երեկոյ, Ղարաբաղում հազարաւոր յուսահատութեան մատնուած սրտերից բխում էր ջերմեռանդ աղօթք փրկութեան համար և բազմաթիւ մայրեր դառն արտասուք թափելով ստեղծողին էին յանձնարարում իրանց զաւակներին, որոնք դատապարտված էին սովամահ լինելու։

Եւ բռնակալն նոյնպէս խոնարհեց նրա առաջ, որին նա չէր կարող չճանաչել իշխանների իշխան։ Իր սենեակի պատուհանի տակ, ուղղելով երեսը դէպի այն կողմը, որտեղից ծագել է Ղուրանի լոյսը և որտեղ հանգչում են մարգարէի ոսկորքը, շահը ծնկաչոք կատարում էր մահմէդական օրէնքով սահմանուած աղօթքը, այսինքն կատարում էր երեկոյեան նամազը։

Սենեակի անկիւնների վրայ տարածւում էր խաւարը. միայն բաց լուսամուտից աղօթողի վրայ թափւում էին վերջալոյսի կարմրագոյն շառաւիղները։ Բայց մայր մտնող արեգակի հանդիսաւոր երևոյթները անմատչելի էին շահի յուզուած հոգուն, որ մշտնջենաւորապէս փակված էր իսկական փառաբանութեան և ճշմարիտ զգացումների համար, որոնք կարող էին գէթ մի վայրկեան աշխարհային կրքերից բարձր պահել։ Աղօթողի սրտի մէջ աշխարհային սին մտածմունքները խառնւում էին աստուծոյ մասին մտքերի հետ. նրա խռոված նայւածքը թափառում էր ամեն կողմ և այն ժամանակ շահը, ձեռքը դպցնելով գլխին, կարծես ուզում էր այդ շարժումով իր ուշադրութիւնը կենտրոնացնել ընդհատված աղօթքի վրայ։

Շահը դեռ այդ ներքին յուզման ազդեցութեան տակ էր գտնւում, երբ յանկարծ նրա սենեկի շեմքի վրայ երևաց Շակկավի-Սատիղ խանի, շահի բոլոր հեծելազնդի գլխաւորի բարձրահասակ և վայելուչ կերպարանքը։

Խանը ձեռքերը կրծքի վրա ծալած, խոնարհ կերպով երկրպագեց և կանգնեց շեմի առաջ խորին լռութեան մէջ։

Կատաղի վագրի նայւածքով դիտեց շահը ներս մտնող խանին և շտապով ձեռքը պարզեց դէպի ատրճանակը։

— «Ինչպէս համարձակեցիր, աննշան ստրուկ, անկոչ իմ առաջ երևալ»,— հարցրեց շահը վայրկենական լռութիւնից յետոյ։ Խանը մինչև գետին խոնարհեց.

— «Քո անարժան ստրուկը կատարում է իր հրամանատարի կամքը, որ աւանդեց իրան Սաֆար Ալու բերանով,— պատասխանեց խանը դողդոջուն ձայնով։

Շահը կանչեց Սաֆար Ալուն։

Շահի սենեակը մտաւ մի երիտասարդ, որ մինչև այդ դռան ետևում կանգնած էր։ Պատանու վայելուչ, ճկուն հասակը, լի առնացի քաջութեամբ, նրա աղնիւ երեսի նուրբ և թարմ գծագրութիւնը և սև աչքերի վառ հուրը — վկայում էին, որ նա դեռ նոր է մտնում հասունութեան հասակը։ Սաֆար Ալու համարձակ գլուխ տալը ցոյց էր տալիս, որ նա իր հրամանատարի վարմունքի եղանակի հետ սովոր սիրական է։ Սպասաւորն անվրդով տարաւ շահի կատաղի նայւածքը և աներկիւղ լսեց նրա յանդիմանական հարցմունքը։

— «Ե՞րբ ես քեզ հրամայեցի կանչել Սատիղ խանին...

— «Կես ժամ առաջ»,— համարձակ պատասխանեց ծառան։

— «Սուտ ես խօսում, շուն»,— գոռաց շահը, ուղղելով ատրճանակի բերանը Սաֆար Ալու կրծքին, բայց իսկոյն ետ թեքվելով դէպի գետինը...

Ամբաստանեալը դէմքի վրա և ոչ մի մկանունքը շարժեց, որովհետև շահի չորեքկողմում մահւան միտքը ամենի համար սովորական և հասարակ էր դարձել։ Սակայն Սաֆար Ալին խոնարհ գլուխ տուաւ և խոնարհ պատասխանեց.

— «Անպէտք որդն չի համարձակի սուտ խօսել երկնային թագաւորի և նրա երկրային արեգակի առաջ։ Կարելի է չար չէյթանը խաբեց ականջս և ես չհասկացայ իմ իշխանի հրամանը...

Շահի ստրուկի կեանքը քո ձեռքումդ է»։

— «Երբ քո ականջները չեն կարողանում լաւ լսել նրանք ինձ պէտք չեն... գնա թող կտրեն ականջներդ...»։

Արտասանելով այդ դատավճիռը շահը ձեռքի շարժումով նշան տուաւ ներկայ եղողներին և նրանք հեռացան։

Դողդոջուն Սատիղ խանը[89] աւելի ազատ շունչ քաշեց, երբ դուրս եկաւ շահի պալատի դռնից։

Սաֆար Ալու[90] մասին արտասանած դատավճիռը կատարեցին...։

Գիշերը եկաւ։ Նրա կարապետները, խորհրդաւոր մթութիւնը և գաղտնի շշնջիւնը, հետզհետէ տարածում էին խոր ձորերի և սարոտ

հովիտների մէջ։ Դուրս եկաւ լուսինը. ամեն տեղ խաղաղութիւն թագաւորեց, բայց խորին գերեզմանային լռութիւն տիրել էր շահի պալատի առաջ և միայն երբեմն-երբեմն ընդհատւում էր գիշերապահի աղաղակով կամ հեռւում ընթացող ձիու սմբակի ձայնով։ Շահի պալատի առաջ կենդանի, շարժուն զօրագնդերի փոխարեն այստեղ և այնտեղ տեսնւում էին պահապանների անշարժ ստւերները։ Ձի նստած կամ գրանիտի բեկորների վրա կանգնած, նրանք երևում էին իբրև ֆանտաստիկական պատկերներ մի և նոյն քարից տաշած։

Պալատի ճակատի մասի պատուհաններում դեռ երևում էր լոյս, բայց ներքնակողմում եղած շարժումը անկարելի էր նկատել գունաւոր ապակիների ետևից։ Ամբողջ պալատի կոյտը նկարւում էր մութ երկնակամարի վրայ, որպէս մի խորհրդաւոր, անլուծելի զօրութեան անմատչելի բնակարան... Ուշ մնացած ճանապարհորդը, անցնելով այդ ժամանակ ժայռի ստորոտի մթին նեղ ճանապարհով, տեսնում էր վերևում իր գլխի վրայ շատերի սև կոյտը, որից արտափայլում էր մի բարակ ճրագ, որ կամ փլփլում էր կամ տարուբերվում էր, կամ թուլանում էր, իբրև փարոսի լոյսը, որ մօտալուտ վտանգն է գուշակում, այդ շահի սենեկի ճրագի աղօտ լոյսն էր։

Յառելով աչքերը լամպայի դողդոջուն բոցի վրայ, շահը պառկած մահճակալի վրայ, իսկ նրա միտքը սաւառնում էր փառասիրութեան և ամբարտաւանութեան սահմաններում. նա մտածում էր իր միահեծան իշխանութիւնը աւելի զօրացնելու և հաստատելու մասին։

Յանկարծ նրա դէմքը մթագնեց, կռթնեց արմկի վրայ և սկսեց ականջ դնել։ Նրան թւում էր, իբր լսում է մրմնջիւն և ծածուկ հեծկլտանք։

Յուզւած ձայնով նա կանչեց իր նիւքէրներին։ Նրանք ներս մտան· Սաֆար Ալին գունատ էր իբրև ոգի. գլուխը կապւած էր արիւնաթաթախ շորերով։ Աբաս բէկը մտաւ աչքերը գետին ձգած։

— Դու համարձակւում ես լացել իբրև կին,— ասաց շահը Սաֆար Ալուն,— երբ դու պէտք է ուրախանաս այն մեծ շնորհի համար, որ քեզ պարգևեց կեանքդ... իսկ դու, Աբբաս համարձակւում ես բարձր ձայնով խօսել իմ ննջարանի մօտ և խափանել իմ քունը... Դուք երկուսդ էլ աւելորդ բեռն էք դարձել երկրիս երեսին և արեգակի ծագելուն հետ կընկնեն ձեր գլուխները։

Կան դեռ ես ձեզ նման մի քանի անպիտաններ։ Էգուց առաւօտեան սարսափելի դատաստան կսարքեմ բոլորի վրայ և ձեր գանգերից կը կառուցեմ մի մինարէթ, որ աւելի բարձր կլինի, քան Շամխորի մինարէթը... Լսեցիք, գնացեք այժմ...

Աղա Մուհամմէդ խանի դատավճիռները ներողութեան ոչ մի յոյս

չէին թողնում։ Նրա խօսքերը անդառնալի էին, իբրև դահճի կատարող կացնի հարւածները։

Կես գիշերային լուսնեակի աղօտ լոյսը հազիւ ծագում էր Շուշու վրայ, որ այդ ժամին նման էր մռայլ գերեզմանատան։ Կարծես նմանութիւնը կատարեալ անելու համար, դեղին կաւից շինած հիւղերի ալեծուփ դագաղանման տանիքների մեջ այստեղ և այնտեղ աչքի էին ընկնում սպիտակ խրճիթները, իբրև գերեզմանի վրայ կանգնած արձաններ։ Կարծես ամեն բան քնած էր...

— Քնած է և բռնակալը... բայց արթուն էր ճակատագիրը և մարգարէի հրեշտակը, չորրորդ երկնքում բանալով մահկանացուների ցուցակը, համարում էր բազկերակի զարկերը, որ կենդանիների թւից ջնջէ մի երկրային արարած, որին մարդիկ կոչում էին Աղա Մուհամմէդ... Չէին քնած և ճակատագրային նախասահմանութեան երկրային գործակատարները։ Իրանց նեղ օթեանում արթուն էին շահի նիւքէրները։ Սաֆար Ալին պառկած էր բոցավառ բուխարու առաջ։ Նա այնպէս անշարժ և գունատ էր, որ կարծես կրակի լոյսը մահւան վրայ արձակում էր կեանքի շառագոյն ճառագայթները։ Չարչարւողի գլխին ծալապատիկ նստած էր Աբբաս բէկը։ Երկուսն էլ լուռ էին։

Վերջապես Աբբաս բեկն ընդհատեց լռութիւնը։

Թեքւելով ընկերի դէմքի վրայ, նա հանդարտ արտասանեց.

— Հասաւ մեր վերջին գիշերը։ Էգուց մենք կը դադարենք ապրելու, Սաֆար Ալի։

Վերջինս խուլ կերպով հառաչեց։

— Եւ մեր գլուխները կը ծառայեն իբրև զարդ մինարէթի, որ ամբողջապէս բաղկացած կլինի հազարաւոր մարդկային գանգերից...։ Սաֆար Ալին վիրաւոր գազանի նման խուլ կերպով մռնչեց և դառն արտասունքը հոսում էր նրա աչքերից։

— Լռիր դու, անբախտ, մրմնջեց Աբբաս Ալին, մոռանում ես որ բռնակալը սուր լսելիք ունի և եթէ նա լսեց, մեր գլուխներն անմիջապէս կընկնեն յառաջ, քան թէ կարողանայինք մտածել փրկութեան մասին։

— Բայց մի՞թէ կա փրկութեան մի որևէ հնար մեզ համար,-հազիվ լսելի ձայնով արտասանեց Սաֆար Ալին,—գիտես որ նա անողոք է։ Ալլահ, Ալլահ, ի սէր քո մարգարէին, մեզ օգնիր։

Մի րոպէ տիրեց խորին լռութիւն... վերջապես Աբբաս բեկն գլուխը բարձրացնելով շշնջեց,— կայ փրկութեան մի հնար, եթէ կամենաս և համաձայնւես, մենք ոչ միայն կը փրկենք մեզ, այլև հազարաւոր խեղճ դատապարտեալներին։ Եւ աւելի խոր թեքւելով ընկերի վրայ, նա նրա արիւնաթաթախ ականջում փսփսաց մի երկու խօսք, որից ինքն ևս երկիւղից սկսեց մատաղ ծառի նման դողալ։ Սաֆար Ալին բոլորո-

վին գունատ վեր թռաւ տեղից և զարհուրած, սարսափած ականջ էր դնում... Նա կարծես վախում էր, ահա վարագոյրն կը բարձրանայ և անողորմ դահիճը ներս կը մտնի... Բայց ամեն տեղ տիրում էր խորին լռութիւն, համատարած խաւար։

Սաֆար Ալին նստեց տեղը և երկիւղից աչքերը փակեց։ Անցան մի քանի րոպէներ, սարսափելի, անվերջանալի մաշող րոպէներ։ Երկուսն էլ ընկղմւել էին խոր մտածմունքների մէջ և կարծես մոռացել էին ամեն բան ...Այդ միջոցին հեռւում առաջին անգամ հաւը խօսեց։ Աբբաս բեկը վեր թռաւ, մօտեցաւ Սաֆար Ալուն և մրմնջեց. «Եթէ այլ ևս յապաղենք, թշւառական, մի երկու ժամից յետոյ մեր գլուխները ընկած կլինին...»։ Այս խօսքերից ցնցւելով վեր կացաւ Սաֆար Ալին կապեց խէնջարը, որ կողքին դրած էր և առանց մի խօսք արտասանելու նշան արաւ Աբբաս բեկին։ Երկուսն էլ դուրս եկան կանգնեցին շահի սենեակը իրանցից բաժանող նրբանցքում։ Թանձր գորգերը անլսելի էին անում նրանց ոտնաձայնը։ Գերեզմանային լռութեան մէջ լսւում էր միայն նրանց սրտերի ուժգին բաբախումը։ Դողդոջուն քայլերով նրանք մօտեցան ննջարանի դռանը, որ ծածկւած էր թանձր, մետաքսէ վարագոյրով, այդտեղ կանգ առին սարսափահար։ Նրանց թւաց, որ շահի ձայնն է գալիս։ Երկուսն էլ շարժում արին փախչելու, բայց կարծես մի բան կտրել էր նրանց ոտները գետնից։ Մի քանի րոպէ ևս տեւեց, րոպէներ, որի ժամանակ հոգեկան յուզմունքը հասել էր իր վերջին ծայրին... վերջապէս Աբբաս բէկն սիրտ առնելով բարձրացաւ վարագոյրի մի անկիւնը և սկսեց դիտել սենեակը։

Մահճակալի վրայ քնած էր բռնակալը, թանկագին վերմակը գլխին քաշած, նրա գլխի և ոտքի տակ դրած կային երկու ոսկէ ճրագակալներ, որոնց միջի ճարպէ ճրագները արձակում էին աղօտ լոյս, այնպէս որ սենեակը ընկղմած էր կիսամթութեան մէջ։ Խռոված և յուզւած էր շահի քունը։ Նրա կողքին դրած էր ատրճանակը և թանկագին քարերով ընդելուզւած հռչակաւոր սուրը։

Աբբաս բեկը ներս մտաւ, իր առաջից հրելով Սաֆար Ալուն, վերջինս մեռելային գոյն էր ստացել, մի շշնջուկ, մի սխալ քայլ և ամեն ինչ կորած էր. այլ ևս միջոց չըկար յետս ընկրկելու.

— Քաջալերութիւն, եթէ ոչ վայ մեզ,— շշնջաց Աբբաս բեկը, մօտեցաւ Սաֆար Ալին, ոտքը դիպաւ շամադանին. այն րոպէին երբ այդ թեթև շշուկից շահը բանում էր աչքերը, նա իր սուր խէնջարը մինչև երախակալը ցցեց բռնակալի սրտի մէջ։ Շահը արտասանեց միայն հետևեալ խօսքերը. «Թշւառական, դու սպանեցիր Իրանը»։

Թարգմ. Համբ. Առաքելեան։

«Տարազ», 1890 թ., 10, էջ 137—142։

50

ՀԱԿՈԲ ՋԱՔԱՐՅԱՆԸ (ՇՈՒՇԵՑԻՆ) ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատերազմ շահին ընդ խանին Ղարաբաղու

Եւ յորժամ յօրինեցաւ բերդաքաղաքն Շուշի եւ խանն շինել ևս զերկուս փոքրիկ ամրոցս, որ է Ղալէս. վեց ժամաւ հեռի ի քաղաքէն դէպի յարևելեան կողմն, ուր վերոյ յիշեալ երկու կետքն՝ ընդ այլ ևս երկուց կետոց և բազում գետանման աղբերց միաւորեալ, ի մի գետ ընթացեալ անցանէ ընդ հովիտս երկուց մեծամեծ լերանցն Ասկարանու, ի վերայ որոց շինեցան ամրոցքն. մեկն յայս կոյս գետոյն և միւսն յայնկոյս դէմ հանդիման միմեանց։ Ընդ մէջ երկուց ամրոցացն անցանէ եզերաւ գետոյն ճանապարհն Պարսից և Թիֆլիզու։ Այսպես ամենայն կողմամբք պնտէր զնորաշէն քաղաքն։ Յորժամ դադարեցաւ խանն յամենայն շինութենէ՝ սկսաւ համբարել բազում ցորեան ի կերակուր յամրոցս և ի քաղաքն։ Ոչ ոք իմանայր ի գաւառականաց զխորհուրդս նորա, բաց միայն ի պատուաւոր բէկացն, որք գործակից և խորհրդակից էին խանին։ Սկսաւ զօր ժողովել և գունդ կազմել և առաքել յամրոցս, բաշխելով առատապէս նոցա զոր ինչ պիտոյ լինէր, որում սուսէր և որ(ու)մ հրացանս և երկաայրի սուրս՝ խոստանալով մեծամէծ պարգևս յետ կատարելոյն կամաց իւրոց։ Եւ զամենեսեան զինուորեալ բազմամեայ պատրաստեալ պարգևօք, վճարեաց զկեանս իւր անկատար թողեալ զկամս իւր։ Բայց ի տեղօջ հօրն նստուցին զորդին վերոյիշե(ա)լ բեկքն՝ զԻբրահիմ խանն գաւառապետ Ղարաբաղու։

Այրս այս յոյժ քաջասիրտ էր և աներկիւղ։ Յետ քանի աւուրց հրովարտակ թագաւորին հասաւ նմա, զի փութով ժողովեսցէ զհարկս ի ժողովրդենէ և առաքեսցէ շահին, զի յոյժ պիտոյ է։ Եւ նա գրեաց առ շահն և ասէ. չունիմ ընկալեալ պատուէր հօրէս ումէք տալ հարկս ոչ թագաւորութեանդ և ոչ ումեք։ Եւ ստացեալ զթուղթս Իբրահիմ խանին շահն պարսից զայրացաւ յոյժ ի սրտի իւրում. բայց առժամայն վնաս ոչ ինչ կարաց հասուցանել նմա՝ յերկիւղէն լռեաց առժամանակ մի, զի մի երկուստեք լինիցին հակառակորդ թշնամիքն՝ մինչև արքունի զօրքն դարձուցին ի պատերազմէն Խորասանու։ Յետ խաղացուցանելոյ զքաղաքն Հերաթայ, քանի մի գունդ ցարքունի զօրացն դարձան ի թագաւորանիստ քաղաքն Թէհրան զօրապետօքն իւրեանց։ Եւ նոյն ժամայն ետ զնա ի ձեռս Հասան Ղուլի հազարապետին՝ և առաքեաց զնոսա ի Թավրէժ առ որդին իւր Սուլէյման շահզատան, զի նա ի գաւառացն Թաւրէ-

ժու ժողովեցէ ես քանի մի գունտս հեծեալ զօրաց՝ և առեալ երթիցէ ի Ղարապաղ առ ի զսպէլ զապստամբութիւն Իբրահիմ խանին և զօրացն նորա, և եթէ հնար իցէ ըմբռնեսցեն զնա կենդանի և տարցեն առ շահն։ Յորժամ զօրն հասան ի Թաւրէժ՝ Սուլէյման շահզատան գրեաց թուղթս յորդորական և խրատական այսպէս՝ սիրեցեալ եղբայր իմ Իբրահիմ խան ի հօրէ իմմէ ընտրեալ պետ և գլուխ գաւառիդ Ղարապաղու. գիտեմ, զի այդ յանցանք ոչ է քո արարեալ, այլ ապստամբ բեկաց է Ղարապաղու, որք չարութեամբ ետուն քեզ ընդդէմ կալ թագաւորութեանս պարսից, զի ելցէ գաւառդ ի ձեռանէ քումմէ, և դու մատնեցիս ի մահ։ Որո՞վ բանականութեամբ գործեցէր զայդ, դու խան մի գոլով զիա՞րդ ընդ դէմ կաս թագաւորի միոյ։ Զգիտե՞ս զի, եթէ բարկանայ շահս մեր, առանց բանի պատերազմի անհամար բազմութիւն զօրաց թափեսցէ ի վերայ գաւառիդ և կոխան ոտից տացէ առնել զդա։ Այլ անսա բանիցս և էջ ի մեծամիտ հպարտութենէդ և փութա եկ առ իս, և ես եղեց հաշտեցուցիչ ընդ մէջ քո և հօրն իմոյ։

Պատասխանի թղթոյն Սուլեյման շահզատային գրէ Իբրահիմ խանն. Աղուէսութեամբ զկանայս քո պատրեա՛. միթէ կարող ինչ իցես պատրողական բանիւդ խաբել զիս, որպէս հօրեղբօրն իմոյ, այդպիսին տարեալ, ետուր բբել զերկուս աչս նորա և հրամայեցիր տանել արգելանոցն Արտաւէլու, որոյ վրէժն ի քէն կամ հօրէդ քումէ ըստ կարի իմում առից որքան կենդանի եմ։ Թող թափեսցէ զզօրս իւր և տացէ կոխան առնել ոտից զերկիրս։ Յառաջագոյն թուեալ եմ, զոր ինչ պիտոյ է վասն շինութեանս, զորս կամիմ ձեռս արկանել, որ կարող իցէ քակել զսա՝ թող յառաջ մատիցէ։ Նայեցեալ Սուլեյման շահզատային, թէ ոչ ինչ օգտեցաւ յորդորական բանից իւրոց, այլ առաւել զգաստացոցն* զնա նովաւ։ Եւ առաւել շուրջանակի ամրացուցանէր թաքստեա զօրօք, զգոյշ լերուք քաջալերեցարուք ասէ՝ մեծամեծ պարգևս ընդունիցիք յինէն. յաղթեսցուք և յարկս մի տացուք շահին պարսից. զօրքն և բնակիչք գաւառին առհասարակ կամակիցք եղեն Իբրահիմ խանին՝ վասն վշտալի չարակիր ծառայութեան, զոր կրէին հանապազ, կամ զծառայել և կամ կեանս վճարել։

Ըստ հրամանի շահին Սուլեյման շահզադան սկսաւ ժողովել յԱտրպատական աշխարհէն հեծելազօրս և հետևակս բազումս, զի առեալ ընդ արքունին եկեսցէ ի վերայ գաւառին Ղարաբաղու, ժամանակ էր հնձոյ։ Իբրև լուան գաւառականքն, թողեալ զմնացեալ հնձելիսն և զխրձունս կուտակեալ յագարակի՝ և զվաստակս ի կալօրայս շեղջեալ թողին և առեալ զաղխս և զարջառս իւրեանց փախեան կէսքն ի Ջրաբերդն խաչենու, կէսքն յամրոցսն Ասկարանու և մնացեալքն, որք չունէին զարջառս ի քաղաքն փախեան։ Իսկ որոց բնակութիւնս հեռի էր յամրոցացս թաքեան ի լերինս և յանտառս։

Իսկ քաջ անուանեալքն գեղջին Շուշոյ, որ ես մինչև ցայսօր կանայք ես և մանկտիք զինուորեալ շրջին, և ի գիշերն, յորժամ ի քուն մտանեն, ոչ արձակեն զզէնս յինքեանց։ Սոքա չերկեան փախչելը, ի ներքս քաղաքին, արք և կանայք նոցա առհասարակ, այլ գնացին առ Իբրահիմ խանն՝ և ասեն. մի երկնչիր՝ մեք միայն պահպանեսցուք բերդաքաղաքս, միայն թէ տուր մեզ որքան կարևոր լիցի վառօտս։ Խանն յոյժ ուրախացաւ և ետ նոցա զոր ինչ պիտոյ էր հանձն և նոքա առեալ գնացին ի տուրս արտաքոյ քաղաքին ի կողմն հարաւային՝ գտին ի ստոր լեռնապատ պարսպին՝ բարձր ի խարխափէ լերին յիսնաչափ գանկնաւ ի ներքս ի լեռան քարայր մի յոյժ մեծ և առասանեա սանդուխտով ի վեր ելին և զամենայն աղխս իւրեանց առասանաւ ի վեր քարշեցին, մտին ներքս քարայրոյն և ինքեանք նախ սկսան ճանապարհ բանալ իւրեանց իջանելոյ ի քարայրէն, և այսպէս ճանապարհ շինեալ ընդ ճակատ լերինն, զի հազիւ մարդ մի կարասցէ կամ իջանել ի ստոր կամ ի վեր ելանել, այնպէս ամրացուցեն զտեղին, որ միով արամբ ընդդիմանային հարիւրաւորաց և այն ոչ զինու, այլ քարամբք։ Իբրահիմ խանին տեսեալ զամրութիւն տեղւոյն շուշեցոց, ետ տանել զգանձս իւր ես և զարծաթեղէն և զոսկեղէն անօթսն ի քարայրին։ Գուցէ, թէ քաղաքն եթէ առնուցուն, ինչք իւր մի հափշտակեսցի, մինչև վախճան պատերազմին։

Առեալ զբազում գունտս զօրաց Սուլեյման շահզատային՝ և անցոյց ընդ գետն Երասխ՝ որ է սահման ի մէջ Ղարաբաղու և Ատրպատական գաւառացն և եմուտ ի գաւառն Ղարաբաղու, եկեալ մօտ ի գեօղն Շուշոյ՝ յանդիման մասի քաղաքի։ Բայց ոչ այնքան մօտ ի քաղաքին, այլ միով թնդանօթաձիգ նպատակաւ հեռի։ Եւ առաքեաց շահզատան զմի ի ծառայից իւրոց առ Իբրահիմ խանն և ասէ. տուր պատասխանի՝ անձնատուր լինիս, եթէ քաղաքատուր։ Իսկ Իբրահիմ խանն պատասխանեաց՝ ոչ հնազանդիմ ասացելոյդ, այլ գնա ասա դու ցՍուլէյմանն, թող բռնութեամբ փորձեսցէ զկամս իմ, չերկնչիմ ի բազմութենէ կանանցդ քոց։ Բարկացեալ Սուլեյման շահզատան և զօրքն ամենայն ըստ պատասխանի խանին, զի կանայս կոչեաց զնոսայս։ Սկսան ի գիշերոյ յայնմանէ մինչ երեք օր արձակել ռումբս ի վեր քաղաքին. ի ձայնից մեծամէծ թնդանօթացն հովիտք աղաղակէին, և կանայք յղիք սրտաթափ լեալ զերեխայս կորուսանէին յորովայնի, գնդակ թնդանօթաց, որք նման հնացեալ լուսնոյ՝ կամարացեալք ցոլանային յօդս ճախրակելով թօթափէին ի վերա քաղաքին. բայց թուլացեալք ի զօրութենէ

* Այդպես է բնագրում։

Հեռի լինելոյն վասն նպատակին։ Վասն այն ոչ առնէին ներգործութիւն քակտման պարսպաց, այլ ընդ հարեալ պարսպացն անկանէին յերկիր։ Այսպէս երեք աւուր անդադար թնդանօթաձիգ եղեն՝ բայց քաղաքն վնաս և ոչինչ եղև, միայն երիտասարդի միոյ, յորժամ մայրն լուանայր զգլուխ սիրելի որդւոյն իւրոյ՝ գունդ մի յարձակեալ ումբոց անտի՝ հանկարծ էանց ընդ պատուհան տանն և ցրուեաց զգակաթ որդւոյն և բազուկք մօրն խորտակեաց. երկոքին անկեալ ի վեր լուացիկ կոնքին դիաթաւալ և մեռան։

Իսկ Սուլեյման շահզատան տեսեալ, թէ ոչ ինչ վնասի քաղաքն այնքան թնդանօթաձգութենէն, գաղտ հրամայեաց բանականացն ի գիշերին ժողովել զվրանս իւրեանց և ղանիւս օծանել իւղով՝ զի մի ճռնչեսցեն, և ի բաղում տեղիս բազմաբոց կրակս վառել և թողուլ այնպէս վառեալ։ Կատարեցին որպէս հրամայեաց՝ փութով ի գիշերին ելեալ ամենայն բանակն անյայտ ի բնակչաց տեղոյն տեղափոխեալ եկին ի ձորն Տովթալապ կոչեցեալ լերինն՝ որ մօտ էր քաղաքին, հրացանի նպատակաւ. գլուխ լերինն յանդիման էր ըստ մեծի մասին քաղաքի. բայց քաղաքն բարձր էր քան զլեառն՝ ունելով յանդիման նորա զպալատն Իբրահիմ խանին։ Եւ զօրքն պարսից եկեալ թաքեան ի մեծ ձորն և լեառն մեծ յանդիման գոլով քաղաքին ծածկեաց յերեսաց քաղաքին զանթիւ բազմութիւնս զօրացն պարսից ի մէծամէծ քարանձաւս իւր թաքուցանելով զնոսա։

Քաղաքն ամենայն ոչ իմացաւ, զոր ինչ եղև ի գիշերին, զի խաբեցան ի կրակացն, որք ի բազմութենէ փայտիցն զգիշերն ամենայն ի վեր ցոլացուցանէին զբոց իւրեանց։ Զբոցն տեսանելով և զօրս համարէին անդ լինել։ Իսկ ընդ առաւօտ նայեցեալ տեսին, թէ զիարդ դաշտն այն, որ սպիտակեալ էր ի բազմութենէ վրանացն՝ այսօր ծխալից կայ և մրրիկք սեամբ ի վեր ելանեն։ Ազդ արարին Իբրահիմ խանին, և նա փութով առեալ զհեռացոյցն դիտէր՝ և ետես ոչ զոք այլ դաշտն ունայն և ի բազում տեղիս կրակք թուլացեալք ծխանէին։ Յոյժ ուրախացաւ և ամենայն քաղաքն ընդ նմա, և առաքեցին փութով լրտեսել զկնի նոցա։ Լրտեսքն թողեալ զմօտակայ հովիտսն, գնացին մինչև ցգետն Երասխ և ոչ ոք տեսին։ Դարձան ի քաղաքն, ասեն ցխանն՝ անցեալ են Երասխ գետն, զի մինչև անդ լրտեսեցաք գտինք և ոչ զոք զօրականացն պարսից։ Բայց խան ասաց ոչ բացից զդրունս քաղաքիս մինչև չիմացայց զստոյգն։

Իսկ ժողովուրդն եկեալ յառս խանին և ասեն՝ ահա քան աւուրք են, զի բռնամարտիմք և քաղաքիս յահէ թշնամեաց՝ գիտեմք զի թշնամիքն փախեան՝ արդ բաց մեզ զդուրս քաղաքիս՝ զի երթիցուք ի մօտակայ հովիտս և յեզր գետոյն՝ ժողովել խոտանս կամ այլ դարմանս յո-

ղալ վասն անասնոց մերոց, որք սովամահ սատակին։ Եւ խանն ակամայ հաւանեցաւ և ետ բանալ զդրունս. խուժանն ի դուրս վազեցան, որպէս անդեալք ծարաւիք, և սփռեցան ի հովիտս ամենայն որ հոգայր դարմանս անասնոյ իւրում և որոց հատեալ էր ալիւրս, տարան յաղօրիս աղալ զցորեան։ Այսպէս աներկիւղ լեալ, բազմութիւն ելանէր քաղաքէ յետ զհետէ։ Եւ զօրքն պարսից, նման կատաղի գազանաց արիւնարբուաց, սրընթաց արձակեցան ի վերայ նոցա երկսայրի սրով և խողողեցին զբազումս ի նոցանէ ի մեծ ձորն Ղայպալու կոչելոյ։ Ի սպանելոցն բազումք հայ էին, որոց գլուխս հատեալ տանէին շահզատային յընծայ։

Իսկ որք փրձեալ ազատեցան յանօրինաց անտի՝ յետս փախեան, զի ի ներքս ի քաղաքն մտանիցեն՝ տարաբաղդք գտան ողորմելիքն՝ վասն զի փութով ազդ եղև Իբրահիմ խանին և ետ փակել զդուռն քաղաքին։ Իսկ յետս փախուցեալք ընթանային և աղաղակելով մեծաձայն ողորմեցէք մեզ՝ ի ներքս առէք, ի ներքուստ ոչ լուան աղաղակի նոցա, այլ ասէր Իբրահիմ խանն. արժանի են դոքա կորնչելոյ։ Ո՞չ ասացի, թէ սպասեսցուք մինչև հաւատարիմ լուրս արասցուք։ Իսկ դոքա հաւանեցուցին զիս ակամայ։ Բայց նոքա եկեալ գտին փակեալ զդուռն, և այնուհետև եկ տես կոծս և զողբս ներքոյ և արտաքոյ, հայրք զորդիս ողբան և որդիք ի վերայ հարց, ու դստերք ի վերայ մարց, և բարեկամք ի վերայ բարեկամաց։ Իսկ փախուցեալքն աղաղակէին, որպէս և կամիք ողորմեցարուք։

Եւ իբրև տեսին թէ ոչ լուան աղաղակի իւրեանց՝ փախեան անտի դէպ ի ձորն Երկաթալի անուանեալ, և անտի ելին ի բլուր մի մեծ, ընդ գլխով որոյ պարիսպն ամրոցին ձգեր։ Եւ բարեկամք կամ ազգականք նոցա՝ կախեցին խարաղանս ի վերուստ ի պարսպէն անտի՝ և քարշէին մի մի զնոսա ի վեր։ Իսկ գնտակք հրացանաց զկնի նոցա կարկտանըման ի զօրացն պարսից հասանէին և բազումք ի նոցանէ վիրաւորեալ կենդանոյն ի վեր ժամանեցան։ Իսկ մնացեալքն գնտակահար լեալ թոթափեցան ի խարազանաց առ ոտամբ պարիսպին զկնի միմեանց, իբրև թէ ծառոց զպտուղս հոսելով։ Յիշել արժան է վասն երկու քաջ արանցն՝ որք յաղօրիս երթային։ Իբրև տեսին սոքա, թէ զօրքն պարսից արձակեալ ընթանան ի վերոյ, խոյս ետուն անտի խոտորեալ ի ճանապարհէն մտին յանտառն և ընդ հովանեաւ ծառոց թաքեան յերեսաց նոցա, ունելով ընդ ինքեանս հրացանս։

Եւ քանի մի ժամ հանգեան անդ մինչև թշնամիքն հրաժարեցին։ Եւ անտի ելեալ ընթանային դէպ ի վերին դուռն քաղաքին։ Եւ յորժամ հեռացան փոքր մի յանտառէն, ահա պատահեցան նոցա ընտանի թշնամիք ի թուրքաց գաւառին՝ մօլլա մի և երեք զինուորեալք զկնի նորա հե-

ծելօք. և մօլլան հրամայեաց երից զինուորացն՝ սատակեցէք զկեաւուրարդ, զթշնամիս օրինաց մերոց։ Եւ մօլլան ունէր զտեգն ի ձեռն իւրում։ Եւ իբրև լուան երկու հայքն, թէ սպանելոց են զինքեանս մինն ի նոցանէ առեալ զհրացանն պարպեաց տատարկեաց ի սիրտ չար մօլլային և ընկէց յերիվանրէն,. և մնացեալ երից զինուորաց թողել ի ծխի վառօդին էառ զընկերն և փախեաւ ի վեր ի լեառն։ Եւ զկնի նոցա գնդակք թօթափէին՝ ի շուրջանակի սփռեալ զօրաց պարսից, և յորժամ ընթանային երկոքին ընկերքն՝ զառ ի վեր լերին՝ մինն ի նոցանէ յանկարծ ի վեր ցայթեաց և ըմբռնեալ յոստոյ ծառոյն կախեցաւ և ասէր ցնկերն՝ փախիր եղբայր՝ փախիր գուցէ դու ապրեցուցես զանձն քո. իսկ միւս ընկերն դարձաւ և ասէ զի՞ է, զի կամիս ես միայն ապրեցայց և դու ո՞չ ապրեցուցես զքեզ։ Եւ նա ասէ՝ ես ահա վճարեցից զկեանս իմ, քանզի կոճ ոտիցն խորտակեցաւ յրոմբոյ։ Միւս ընկերն իբրև ետես, թէ ոչ կարէ ընթանալ, նա դարձաւ, զի առցէ զնա զթիկամբ։ Իսկ միւս ընկերն իբրև ետես, թէ ոչ կարէր ընթանալ նա դարձաւ յետս, զի առցէ զթիկամբ զընկերն։ Իսկ վիրաւորեալն կոչէր մեծաձայն ի վերայ նորա, զի՞ դառնաս խելագարեալ՝ փախիր ես ահա անկանելոց եմ ի ձեռս անօրինացն, զի մի և դու ընդ իսկ կորիցես և նա ակամա թողեալ զընկերն վիրաւորեալ, փախեաւ զառ ի վեր լերինն՝ մեկուսացեալ ի նմանէ քայլիւ իբրև քառասունիւ՝ էլ ի վերայ բարձր քարի միոյ՝ ու անտի յետես նայէր ի վերայ ընկերին, թէ զինչ լինիցի ընդ նմա։ Եւ ահա յիսնաչափ գայլք հասին ի վերայ միոյ զառիս երկսայրի սուսերօք զմիմեանս ոչ տային թոյլ հատանել զգլուխ հայազգոյն՝ ամեն ոք ինքն միայնակ կամեր հատանել և տանել յընծայ շահզատային։ Տեսեալ ընկերին զթշուառութիւն նորա՝ դառնապէս լալով ի վեր ընթանայր՝ մինչև եհաս ի վերին դուռն քաղաքին և անդի քարշեալ եղև պարանաւ ի վեր ի ներքս քաղաքին։ Բազմութիւն կանանց կուտեցան ի վերայ առն, ոմն զորդոյ իւրոյ հարցանէր, ոմն՝ զառնէ իւրմէ, միւսն՝ զհօրէ կամ զեղբրէ, հարցանէին, պատասխանեաց այրն՝ սրախողող եղեն ամենեքեան ի մեծ ձորն։ Եւ ո՞վ կարէ պատմել զողբս զվայս նոցայ։ Ի վերայ եհաս անդ վազելով օրիորդ միամեայ հարսնացեալ և ասէ ով եբեր զգոյժդ, հարցուցից նմանէ զփեսային իմմէ։ Ասէ ցնա այրն՝ ո՞վ է քո այրն կամ յորպիսի հասակի էր նա։ Ասէ ցնա հարսն՝ երկայնահասակ էր այրն իմ և երեսնամյա գեղեցկատեսիլ և կարմրագոյն կորովի երիտասարդի մի հաստաբազուկ անուն նորա Յոհաննես։ Աստուածոյ մխիթարիս՝ ասէ, կին դու այժմ գլուխ նորա հասուցին շահզատային։ Եւ իբրև լուաւ օրիորդն զմահ առն իւրոյ՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր և աւանդեաց զհոգին։

Եւ իբրև երեան ելին զօրքն պարսից՝ և այնչափ վնասս գործեցին

քաղաքին այնմիկ՝ ապա առաքեաց պատգամաւորս յամրոցս Ասկերանու՝ առ Հասան բէկն, որ էր վերակացու ամրոցացն, և ասէ. հասիր զի ահա գլորիմ, և առցեն պարսիկք զքաղաքս մեր՝ և զիս ընդ քեզ չարաչար սատակեսցեն։ Եւ Հասան բեկն ստուգեաց ի պատգամաւորաց անտէ՝ զբուն բանակէ զօրացն թշնամեաց, որ են ի ստորոտ երկուց լերանցն Տովթալապու և Ղայպալուայ ի մէծ վերոյ յիշեալ ձորն Տովթալապու։ Անդ հանդէպ գիշերայն և անդ ուտեն զհացս իւրեանց, իսկ մօսէրվէզքն, այն է սոլտաթք, որ է զօրքն պարսից, սփռեալ զքաղաքաւ մօտակայ գիւղորայս հրոյ ճարակ եղուն՝ և բազմաց ելելոց ի քաղաքէն (որպէս ի վերոյ ասացաք) սրախողող արարին և այժմ, զորս գտանեն, անխնա նման արենարբուաց, հեղուն զարիւնս։ Ասէ ցպատգամաւորս բէկն Սուլեյման՝ երթաք ասացէք ցտերն իմ Իբրահիմ, զի՞ է, զի այդպէս փութով երկչոտ գտար՝ մի թէ երկու ամրոցքս, որ լի են քաջօք պատրաստ հեղուլ զարիւնս իւրեանց վասն քո՝ ոչ համարիս զսոսա թիկնապահս։ Եւ ի նմին ժամու առաքեաց այլ մի քաջասիրտ լրտեսել զզօրս պարսից՝ գնացեալ այրն ի զգեստս աղքատի առ խորտկապէտն շահզատային և կերակուրս խնդրէր ի նմանէ ողորմելի դէմս ցուցանելով նմա, ասէ ցնա խորտկապէտն՝ ուստի ես դու, ասէ ցնա. ի գաւառէ աստի չեմ, այլ պանդուխտ, յերկրէն Արդաւէլու. եկի աստ հնձել վարձու և եղև յորժամ խռովութիւնս անկաւ ընդ մէջ պարսից և գաւառիս դէպ եղև ինձ դառնալ յերկիրս. բայց յետ քանի մի աւուրց, իբրև սաստկացաւ խռովութիւն արք տեղոյս այսորիկ մերկացուցին զիս յնչից, որպէս տեսանես։ Եւ այսպէս պատրողական բանիւ ծերունին, որ է լրտեսն խաբեաց զնոսա, թէ համշերակ եմ ձեր՝ մինչև ի մէջ գիշերին մնաց ի մէջ զօրացն պարսից և լրտեսեաց զամենեսին։ Եւ ի հաւու խօսին ելեալ անտի համագնացիւք և զաղտ մեկնեցաւ ի նոցանէ և եկեալ ի ստորոտ բլրի միոյ և հեծեալ յերիվարն, որ ունէր թագուցեալ անդ հանդերձ ծառայիւն. և ապա եկեալ առ Հասան բէկն պատմեաց, թէ զօրքն պարսից ամենեքեան ի գիշերին անզգոյշ ի ստորոտով Դովթալապու հանկչին և ամենայն որպիսութիւնս նոցա պատմեաց։ Եւ Հասան բէկն դարձոյց զպատգամաւորս առ Իբրահիմ խանն և ասէ ցնոսա՝ գնացէք ասացէք, զի ի վաղուեան գիշերին երրորդ ժամուն զգոյշ լինիցի՝ զի յորժամ ի կատար Դաշլու լերին հուր բորբոքեալ տեսանիցէք, է նշան, թէ ես երկու հազար արամբք ելի յամրոցէ աստի։ Եւ դուք ազդ արասջիք գիւղականացն շուշեցւոց՝ զինուորեալ իջցեն ի քարայրէ անտի իւրեանց անմռունչ մեղմագնացիւք յառաջ եկեսցին դէպ ի յարևելեան կողմն լերիս Դովթալապու։ Մեք աստի և նոքա անտի միմիանց նշանս ցուցանելով դիմեսցուք յանկարծ երկուստեք ի վերայ թշնամեացն, և նոքա դանդաղեալ ի քնոյ շփոթին և մեք կոտորեսցուք և խողխողեսցուք,

որպէս և նոքա արարին ընդ մեզ, թաքչելով յանկարծակի եկեալ կոտորեցին զժողովուրդն։ Եւ պատգամաւորք՝ դարձեալ ի քաղաքն, պատմեցին խանին, և խանն ուրախացաւ ոչ սակաւ։ Եւ ի յերկրորդում գիշերի ի նշանակեալ ժամուն տեսին ամենայն քաղաք, զի ի գլուխ Դաշլու լերին լոյս հրոյ բորբոքեր, այնու գիտացին, թէ եկեալ է ի բերդէ իւրմէ Հասան բէկն։ Ի նմին ժամու առաքեցին լուրս առ շուշեցիսն, և նոքա իջեալ ի քարայրէ անտի իւրեանց զինուորեալ գնացին, որպէս հրամայեցաւ նոցա ի կողմ յարեւմտեան Դովթալապու։ Եւ Հասան բէկն ընթացեալ զօրօքն իւրով մինչև ի ստորոտ Ղայպաշու լերինն և անտի արձակեաց փամփուշտ մի՝ որով ազդ եղև շուշեցւոց, թէ եկել հասեալ են անդ և անտի զառ ի վեր ընթանան, և սոքա աստի ընթացան մինչև ժամանեցին ի գլուխ երկուց լերանցն, նոքա անտի և սոքա աստի անվեհեր արձակեցան զառի վայր երկուստէք ի վերայ զօրացն պարսից։ Իսկ պարսիկքն բնաւ չիմացան, զոր եղևն, քանզի կերեալ զկասկարայս ի մսոյ պարարտ եզանցն և որթուցն և արբեալ ի զովացուցիչ ջրոյ անտի ծանրացեալ էին աչք նոցա և մտեալ ի խորին քունս անզգուշութեամբ, մինչև Հասան բէկն զօրօքն իւրով դիմեց ի վերայ նոցա և չարաչար սատակեցին զբազումս ի նոցանէ։ Եւ նոքա ընդոստուցեալ ի քնոյ, աճապարեալ այսր և անդր ի խաւար գիշերի, ոմն զկնի հրացանի, ոմն զկնի սուսեր մինչև եկեալ զօրքն Հասան բէկին և քաջքն շուշեցիք խառնեցան ընդ զօրս նոցա, շփոթեցին զնոսա և փութալով ելին և փախան, այնքան բազմամբոխ էին զօրքն պարսից, զի սոքա երեք հազարք մտին ի մէջ նոցա և զբազումս կոտորեցին և ելեալ խոյս ետուն ի նոցանէ, իսկ նոքա խելագարեալ առին զսուսէրս և կոտորէին զմիմեանս ի մթին գիշերի, թշնամի կարծելով զիրեարս։ Եւ այսպէս հարկանէին զմիմեանս մինչև ի ծագել լուսոյ առաւօտուն և տեսին զմիմեանս, զի չիք թշնամի ի մէջ, այլ զիրեարս հարկանէին, դադարեցան զիրեարս վիրաւորելոյ։ Իսկ Հասան բէկն և շուշեցին, իբրև խոյս ետուն ի նոցանէ, ընթացան ամենայն զօրօքն և գնացին ի տեղիս իւրեանց։ Սուլէյման շահզատան, իբրև ետես, թէ պարտեցաւ ի խաբէութենէ թշնամեաց և ի զօրացն իւրոց անկան չորք հազար այրք, յոյժ զարհուրեցաւ։ Եւ խորհէր ի մտի առնուլ զմնացեալ զօրս և փախչիլ՝ ասելով այսպէս. սոքա սնոտի խաբէութեամբ ի միում գիշերի կոտորեցին այսքան ի զօրաց աստի իմոց, ապա եթէ ելցեն պատերազմել ճակատ ընդ ճակատ ամենեսին կկլանեցեն զիս զօրօքս. այսպէս խորհէր փախչիլ ի գաւառէ անտի։ Կոչեաց շահզատան զՀասան Ղուլի հազարապետն, որ եկեալ էր նա ի Թէհրանայ, և ասէ ցնա՝ զինչ արասցուք, երկնչիմ մի գուցէ ամենայն զօրութեամբ դիմեսցեն առ հասարակ ի վերայ մեր և սրոյ ճարակ տայցեն զմեզ։ Վասն զի սոքա ամենեքեան քրիստոնեայք,

թուրք, այր և կին մեծ և փոքր միաբանեալ են յապստամբել ընդդէմ թագաւորին մերոյ. և մեք ըստ չափու զօրաց սոցա չունիմք աստ զօրս, արդ աստ ինձ և փութով ի գիշերիս գաղտ փախիցուք զօրօքս աստի ի Դաւրէժ և ազդ արասցուք շահին՝ թող ինքն հոգասցէ, որպէս և կամիցէ հնազանդեցուցանել զապստամբեալ գաւառս։ Պատասխանեաց նմա հազարապէտն՝ իմաստունդ Սուլէյման ես զայդ երեկն խորհեցայ, բայց երկեայ յայտնել մեծութեանդ զխորհուրդս նուաստիս։ Եւ եղև երեկոյ հրամայեաց զօրացն ժողովել ընչից և մէջ գիշերին յարուցեալ ամենայն զօրօքն ընդ ստորոտով լերանց և բլրոց փախան և յետ երկուց աւուրց անցին ընդ գետն Երասխ և մտին ի գաւառն Ատրպատականի։ Եւ քաղաքն ոչ իմացաւ։ Եւ յորժամ Հասան բէկն լուաւ, առեալ յինդ հարիւր հեծեալս զօրաց պնտեցաւ զկնի նոցա։ Բայց ոչ ինչ վնասս կարաց հասուցանի՝ զի անցեալ էին ընդ գետն. և անդր դարձ արարեալ զօրօքն, եկն ի քաղաքն և ետես դեռ ևս դրունք քաղաքին փակեալ, ետ բանալ և մտեալ ի ներքս և լուրս ուրախութեան ետ ամենեցուն, և Իբրահիմ խանն համբուրեաց զճակատ Սուլէյման բէկին* և ասէ՝ զկէս գաւառիս քեզ լիցի, երթ և ուրախ լեր։

Եւ իբրև լուաւ շահն բարկացաւ յոյժ ի վերայ որդւոյ իւրոյ Սուլէյման շահզատային. և գրեաց առ նա այսպէս՝ դու կամելովդ զքեզ ապրեցուցանել՝ զհրամանս հօրս քոյ ի ներքոյ ոտից առիր. և զթիկունս դարձուցեալ առանց իրիք պատերազմի անամօթաբար ելեալ՝ այդքան բազմութիւն զօրացդ ընդ քեզ ունելով, փախեար յերեսաց նոցա՝ որ այդպիսի յոյս ոչ երբէք ունէի զքէն։ Եւ այսօր՝ համարձակիս գրել ինձ յորդորաբար ելանել ընդդէմ միոյ խանի, թագաւոր գոլովս. միթէ դու ոչ ամաչիցես յայնժամ՝ յորժամ լուիցես զարհամարան ի դրացեաց մերոց։ Դու զիս յորդորես, իսկ ես հրամայեմ քեզ պատրաստել ի պատերազմ և երթալ կրկին անգամ ի վերայ քաղաքին կամ մեռանիլ անտ և կամ նուաճել և յետ նուաճելոյն հրկիզել զամենայն քաղաքն և սրախողխող առնել զամենայն շունչ կենդանի, որ ի նմայն է։ Յայնժամ գիտասցես, եթէ կատարեցեր ըստ կամաց իմոց և թէ հարազատ իմ ես և յետ մահուանս ժառանկորդ գահիս իմոյ։ Յերկրորդում տարւոջ խորհեցաւ Սուլէյման շահզատան յառնել ի վերայ Ղարաբաղու կրկին անգամ ըստ հրամանի շահին, զոր գրեալ էր առ նա, թէ մի երկնչիր դու. ըստ թուոյ հերացդ տայ քեզ զօրս՝ երթալ հնազանդեցուցես զապստամբեալսն. իսկ եթէ ոչ կարասցես նուաճել ապատակեսցես իսպառ զամենայն գաւառն։ Եւ նա պատրաստեցաւ և սպասէր զօրացն Թէհրանու։ Եւ

* Բնագրում գրված է Սուլեյման բեկ. Թվում է սխալը կատարել է ինքը՝ հեղինակը՝ Շուշեցին։ Պետք է լինի Հասան։

առեալ զանթիւ բազմութիւն զօրացն ի ժամանակի հնձոցն դիմեաց ի վերայ Ղարաբաղու։ Անցեալ ընդ գետն Երասխ հրամայեաց Սուլէյման զօրացն՝ սկսեալ յԵրասխ գետոյ մինչև ցքաղաքն ընդ անցս ճանապարհին, զոր ինչ գտանիցեն բաց շորից տարերաց. խանգարեսցեն, հրոյ և սրոյ ճարակ տայցեն։ Զսպիտակցեալ արտորայս հրկիզեցին, նմանապէս զգիւղորայս, զայգիս արմատաքի հատոյօք հատանէին և զամենայն ծառս պտղաբերս, նոյն օրինակ զմարգիկ և զանասուն սրախողխող արարին, զինչս նոցա յափշտակեցին մինչև եկեալ հասին ի Վարանդու փոքր գաւառ կոչեցեալն, որ է մասն Ղարաբաղու։ Իսկ Իբրահիմ խանն և այլ ամենայն ընդ իւր միաբանեալ բեկքն ևս և ամենայն գաւառն առ հասարակ պատրաստեցան ընդդէմ նոցա։ Եւ յամենայն կողմանց գաւառին քաջքն ժողովեալ ի բերդսն ակն ունէին գալստեան նոցա։

Եւ Սուլէյման շահզատան զօրօքն իւրովք՝ սկսեալ յԵրասխ գետոյ զառաջիկայս ապատակելով կամ անապատս դարձուցանելով եկեալ եհաս մինչև ի գիւղն Շուշի՝ հարին զվրանս բանակին անդ ի գեօղն։ Եւ բաժանեաց զամենայն զօրս իւր ի չորս մասունս. մասն մի ետ ի ձեռս Յուսէփն Ղուլի հազարապետին և առաքեաց զնոսա ի յարևմտեան կոյս քաղաքին ի Ջարալի գիւղն։ Երկրորդ մասն ետ այլում զօրապետի և առաքեաց յարաւային կողմն ի գիւղն Քարատակ. երրորդ մասն ի ձեռս Թահմազ Ղուլի հազարապետին և հրամայեաց գնալ ի ձորն Ճեղքեալ կոչեցեալ լերինն յանդիման քարայրին շուշեցոց. բայց պարսից անյայտ էր անդ լինելն նոցա։ Եւ առեալ զզօրս իւր Թահմազ Ղուլին եկն և մօտացեալ ի Ճեղքեալ լեռան՝ որ ոչ է ճեղքեալ՝ այլ երկու լերինք բարձունք յոյժ և մօտ են միմեանց արտաքնօք այնպէս, զի տեսանողն կարծէ, թէ է լեառն մի և անջատեալ ընդ մէջ, որպէս սրով։ Եւ կարծէ ոք թէ հնար ինչ իցէ կամուրջս շինել ի վերայ գլխոց նոցա։ Բայց յանչափ խորութենէ ձորոյն, որ ընդ մէջ նոցա ևս և գնաց գետոյ, որ ընդ ձորն, անհնարին երևեցուցանեն զգործն։ Եւ սա այս Թահմազ Ղուլիս մտօք ընդոստնլով ընդ այն կարծէր հնարիւք ևս անցանել զօրօքն իւրովք և մտանել ի քաղաքն։ Քանզի մինն ի լերանցն էր աստուածաշէն պարիսպն քաղաքին։ Եւ յունայն կարծեաց, անտի հպարտացեալ ասէ՝ վարչաւ երիւարաց լնում զձորդ և պաշարեմ զքաղաքդ։ Զայս բան լուեալ շուշեցւոց մախային ի սիրտս իւրեանց և սպասէին, թէ որպէս սրոյ ճարակ տայցեն զնոսա։ Իսկ Սուլէյման շահզատան ժամանակս նշանակեալ ընդ զօրապետն՝ թէ յորում աւուր ունին յանկարծ պաշարել զքաղաքն. յետ առաքելոյ զնոսա ի տեղիս իւրեանց՝ ինքն մնաց ի բուն բանակի անդ և սպասէր լրանալոյ ժամանակին։

Եւ յետ երկուց աւուրց գիշերայն ամենայն զօրքն պարսից յամենայն կողմանց եկեալ պաշարեցին զքաղաքն։ Եւ ի ծագել առաւօտուն ազդ եղև քաղաքին, թէ պաշարեցի(ն) պարսիկք զքաղաքն իւրեանց։ Ամենեքեան առհասարակ մերժեալ զերկիւղն ի բաց՝ սրտմտութեամբ և ամենայն զօրութեամբ վառեցան որպէս հրով։ Արք՝ թողեալ զկանայս և զտունս իւրեանց, հանդերձ հրացանիւք և սուսերօք ընթանային դէպ ի յարևելեան կողմն քաղաքին, ուր մարդաշէն և տկար պարիսպն էր։ Իսկ կանայք չհանդուրժեալ թողին սանդերս և զմանկտիս ի տունս՝ արշաւանօք ընթացան ի գլուխ Աստուածաշէն լեռնապատ պարիսպին. և փրծուցանէին ի լեռնէ անտի զքարինս մեծամեծս և գլէին ի վերայ զօրաց նոցա, այնպէս զի ի գլելն միոյ քարի զքսան կամ զերեսունս ի պարսից միանգամ անշնացուցանէր։ Փոքր համարելով զայս վնաս նոցա՝ քաջուհիքն խորհէին, զի այլով իւիք հնարով մեծամեծ հարուածս տայցեն ի վերայ նոցա։ Եւ ի մօտ տեղի ինչ կայր գերանս կուտակեալս՝ արձակեալ ի վերայ և առիծաբար ի վեր քան զտկար կանացի զօրութիւնս իւրեանց՝ մղելով դարձուցանէին զծանր և զերկար հեծանսն և հոլովէին զառ ի վար լերինն։ Եւ զքառասունս կամ զյիսունս միանգամ չարաչախջախ խորտակէին այնպէս, զի յետ միոյ ժամու ի բազմաթիւ զօրաց անտի սակաւք կարացին փախչիլ ի դաշտն, ուր ամենայն զօրքն էին, անդ և Սուլէյման շահզատան իւրեանց։ Եւ իբրև յերից կողմանց չկարացին վնաս ինչ հասուցանել քաղաքին՝ այլ հաղթեալք ի քաջուհեաց և զբազումս ի զօրակցաց իւրեաց կորուսեալ անդ եղեն պարտեալք և փախեան անդէն. ամենեքեան ընթանան ի մի ժողով ի գլուխ լերինն Դովթալապու առ զօրագլուխն իւրեանց Սուլէյման շահզատան։ Ուր գումարեցան նոքա, էր յանդիման յնգետասան աշտարակաց պարսպի քաղաքին և մօտի նպատակ թնդանօթաց։ Իբրև ետես Իբրահիմ խանն, թէ ժողովին ի մի գումար՝ հրաման ետ այն օր յառաւօտէ մինչև ի կէս աւուր, զի մի ամենևին յաշտարակաց և կամ պարսպաց անտի արձակեսցեն ոչ թնդանօթս և ոչ հրացանս՝ այլ համբերեսցեն մինչև ամենայն բազմութիւն զօրացն պարսից՝ ի մի վայր գումարեսցին։ Եւ ի վեց ժամու աւուրն, իբրև գումարեցաւ ամենայն զօրքն ի գլուխն Դովթալապու՝ արձակեցան ամենայն պարսպաց թնդանօթս երեսուն հետզհետէ անդադար ժամի, այնպէս ցրուեցան անհամար բազմութիւն ընդ հովիտս և ընդ փապարս լերանց, մինչ ոչ գտանիլ երկու զինուորակիցք ի միասին։ Յորժամ լուաւ Հասան Ղուլի բէկն՝ զօրապետն ամրոցացն Ասկերանու, թէ զօրքն պարսից պարտեցան, առեալ զամենայն զզօրս իւր, պնտեցաւ զկնի նոցա և կոտորելով հասոյց մինչև յԵրասխ գետն. բայց ոչ հասաւ Սուլէյմանին, զի սատակեցէ զնա. վասն զի, իբրև տեսեալ էր նմա, թէ ցրուեցան և փախեան զօրքն իւր՝

ինքն յառաջագոյն, քան զնոսա կամեցեալ ապրեցուցանել զանձն՝ առեալ քսան հեծեալս ի զօրապետաց կամ հազարապետաց իւրոց փախեաւ ի գաւառէ անտի սև երես ի Դավրէժ. և զօրքն նմանապէս զրկեալ ի հովուաց՝ խաշանց՝ գաղանաբէկ եղեն ի զօրացն Իբրահիմ խանին և Հասան բէկի յայնչափ զօրաց անտի հազիւ թէ երկերիւր այր թաքչելով ազատեցան ի ձեռաց նոցա. և յետ երից աւուրց անցեալ ընդ Երասխն գոյժս տարան զօրագլխոյն իւրեանց՝ թէ մեք միայն կարացաք ապրիլ յերեսաց նոցա։

Եւ իբրև լուաւ շահն պարսից, թէ կորեան այնչափ բազմութիւն զօրացն իւրոց՝ դառնացաւ յոյժ և խռովեցաւ հոգին նորա ի նմա։ Բայց նայեցեալ ի փոքրկութիւն գաւառին անհնարին սրտմտութեամբ կատաղէր և ասէ՝ առաջի շահնազրաց, որ է նախարարաց իւրոց՝ կենդանի է անձն իմ, ես ինքնին երթայց և մի մնասցէ ի գաւառին շունչ կենդանի և կամ ծառ պտղաբեր։ Եւ ժողովեալ կողմանց տէրութեանն իւրոյ անթիւ զօրս ի ժամ հնձոցն ես և ամենայն արաղատանցիք ընդ նմա գային խայտառակիլ։ Եւ խրոխտալով եկեալ եհաս մինչ ի Դավրէժ և ի նմին աւուր հրաման ետ շահն ածել առ ինքն զհազարապետսն՝ որք ընդ որդւոյ իւրոյ թողեալ զզօրսն իւրեանց փախուցեալ էին. յորժամ զառաջեան ածին զնոսա, հրաման ետ ամենեցունց զաչսն բրել և զմատունսն ոտիցն հատանել և տանել ի հանգուցարանակ քաղաքն Արդաւէլ։ Եւ ապա առեալ զզօրս իւր անտի խաղաց ի վերա Ղարապաղու՝ եկեալ բանակեցաւ մերձ ի բերդիցն Ասկերանու և քանի մի օր մարտ եդեալ ընդ նոսա, իբրև ոչ կարացին յաղթել՝ խոտորեալ ի ճանապարհէն շահն զօրօքն եկն և բանակեցոյց զզօրս ամենայն ի գլուխ գեղջին Շուշոյ՝ հարկանելով զմեծամէծ վրանս։ Եւ ապա առաքեալ պատգամաւորս առ Իբրահիմ խանն և ասէ այսպէս՝ գնացէք ասացէք ցխանն, թէ ես ոչ մարտեաց ընդ քաղաքիդ, այլ աստ եղից զգահ իմ և զօրօք պաշարեցից զքաղաքդ մինչև ի սովու զմիմեանս կերիջիք և յայնժամ ինքնակամ կամօք աղաչեսջիք անձնատուր լինել ինձ. քանզի գիտէր, թէ ոչ գոյ ի քաղաքին և ոչ յարտաքս կերակուր. վասն զի երեք ամք եղև, զի ի ժամ հնձոց դիմէին ի վերայ գաւառին և ոչ տային թոյլ ժողովել զվաստակս իւրեանց։ Եւ ժողովուրդ քաղաքին գանգատէր զԻբրահիմ խանէ և ասեն՝ թոյլ տուր մտցեն ի քաղաքս և իւրեանց լիցի. և մեք՝ ժամանակ հնձոց է, ելցուք և հոգասցուք մեզ կերակուրս, որքան կարող իցեմք, զի լաւ է անկանիլ ի ձեռս թշնամեաց, քան թէ սովամահ սատակիլ. գուցէ ողորմեսցեն և թոյլ տացեն մեզ հոգալ զապրուստ։ Բայց նորա ոչ էին լուեալ զերդմանէ շահին, թէ ոչ ապրեցուցից զմի ոք ի նոցանէ։ Եւ Իբրահիմ խանն յորժամ ետես, թէ խոտորեալ է սիրտ ժողովրդեանն, հարկ եղև նմա փախչիլ։ Ի միում գիշերի եբաց զդուռն քա-

ղաքին և փախեաւ անտի յիսուն ընտանեօքն և Դճ (400) բեկօքն իւրովք ի լեառն Կիւրոսի և անդ մնաց։ Իբրև լուաւ Աղա Մամատ շահն, թէ փախեաւ ապստամբեալ խանն Իբրահիմ ի քաղաքէ Շուշոյ, ել և եկն տիրեաց նմա առանց բանի պատերազմի և ետ ածել զառաջեաւ զամենայն իշխանսն հայոց՝ և չարչարել զնոսա բազմատեսակ տանջանօք, զի ասասցեն զորքանութենէ լնչից իւրեանց։ Զոմանս գլխիվար կախէին, ոմանց ի պարանոց արկանէին հրացեալ կասկարայս և հրացեալ շամփրօք խարէին զմարմինս նոցա։ Եւ ոմանց՝ կարմրացեալ սկահակս անցուցանէին ի վերա սկաւառակի գլխոյն՝ ևս և այլով բազմատեսակ կոշկոճանօք վշտացուցանէին զամենայն բնակիչս քաղաքին. զնոյն չարչարանս ետուն կանանց ևս. ասելով՝ գիտեմք զի ունիք պահուստս ծրարեալս անօթս արծաթեղէնս, ոսկեղէնս և կամ զայլ ծանրագին ազանելիս բերիջիք շահին։ Եւ իբրև այսպէս յինգ օր տանջանօք անխնայ պարզեաց զամենայն քաղաքն յնչից՝ մինչև զեկեղեցիս ևս. վասն զի կանայք անճարացեալք, թէ զինչ տացեն այլ ինչ ոչ մնաց՝ զի տացեն ի զերծուցանել զարս իւրեանց ի վշտացն՝ մտանէին յեկեղեցիս և փրթուցանէին զարծաթս յաւետարանաց տարեալ մատուցանէին շանց, զի ազատեսցեն զնոսա։

Յայսպիսի դառն տանջանս տեսեալ զժողովուրդսն մինն ի ծառայից շահին (ըստ ոմանց սեննեկապետն) մորմոքէր ի սիրտ և չհանդուրժեալ ասէ՝ ցշահն դարձիր և դադարեա յանգթութենէդ, մերկացուցեր զանմեղ ժողովուրդսդ յնչից՝ միթէ ի մորթոց իւրեանց հանել կամիս զդոսա։ Ասէ ցնա շահն՝ մոլեգնեալ ցասմամբ ոչ այդպէս, այլ որովհետև կարի գթասիրտ եղեր վասն քրիստոնէիցդ՝ ես ի վաղիւն զկասկաս գլխոց անմեղ ասացեալ իքէն ժողովրդեանդ՝ քոյին գլխովդ հայրեալ պսակեցից. և թէ իւ իմացիս՝ ահա տամ քեզ զառհաւատչեացն։ Իսկոյն յոտն եկաց շահն և հանեալ զսուսերսն եհատ զերկուս ականջս ծառային՝ ձեռամբ իւրով և ետ ցանել զաղ վերայ՝ զի առաւել մորմոքեսցի և այսպէս եթող զնա ի կսկծի ցաւումն։ Եւ ծառայն գնաց եմուտ ի սենեակ իւր դառնացեալ սրտիւ, զի մտաւ ածէր, թէ զինչ արարից ի վաղիւն, այլ ոչ ես լցեմ տացէ սպանանել զիս անօրէնս այս ընդ այդչափ ժողովուրդսդ, գիտեմ ասէ ինքն յինքեան՝ զինչ արարից. եկ բարձ զչարդ ի կենաց ի միջոց՝ և փրկեսցի ժողովուրդն ի ձեռաց դորա՝ թէ և հարկ լիցի զկեանս քո դնել ի վերայ, բայց քաջալերաց, զի գտցես զատուծոյ զողորմութիւնս։ Եւ յորժամ գիշեր եղև, այսպէս քաջալերեալով զինքն՝ և ի մէջ գիշերին՝ մունճ և յուշիկ գաղտ գնացիւք եմուտ ի սենեակ շահին, ուր ննջեալ էր նա՝ ունելով ի ներքոյ բարձին փոքրիկ երկսայրի սուսերն. առեալ զայն մխեաց խստիւ և ուժգին ի սիրտ շահին՝ և շահն ընդոստուցեալ դառնագին ի քնոյ տաց քեզ ասէ այս ինչ

մեծութիւն կամ այն ինչ, մի սպանաներ զիս։ Իսկ ծառայն ասէ՝ անիրաւ արեանարբու՝ դու ունէիր հեղուլ զարիւն զայնչափ ժողովրդեանն ընդ որս և զիմն՝ ասելով եհան զսուրն և մխեաց չարչար ես կրկին՝ երրորդ՝ և չորրորդ անգամ մինչև փչեաց զդառնացեալ հոգին ի մահճի անդ. և ընկողմնեցոյց զդի նորա ծածկելով օթոցաւն, եւ ի սենեկէն, առանց ուրուք իմանալոյ, և փախեաւ գաղտ անտի յարշալուսի առաւօտուն և եկն յեկեղեցին Հայոց՝ ուր ժողովեալ սգային և լային առաջի Տեառն վերայ մեղաց իւրեանց, ասելով ըստ երից մանկանց արդարութեամբ և յիրաւի ածէր զայս ամենայն ի վերայ մեր՝ վասն մեղաց մերոց մատնելով զմեզ ի ձեռս թագաւորի անօրէնի և չարի։ Այլ մի մատներ զմեզ իսպառ վասն անուան Քրիստոսի և մի ի բացեա առներ զողորմութիւնքո ի մէնջ, վասն որդւոյդ միածնի և ամենայն ընտրելոց դասուց։ Եւ ասէ ցժողովուրդն, զի լայք դառնապէս աստուածն ձեր ողորմեցաւ ձեզ ձեռամբ իմով եւ սատակել զթագաւորն չար՝ արդ մի յեղգայք առաքել արագընթաց պատգամաւորս առ Իբրահիմ խանն՝ զի եկեալ հալածեսցէ զզօրս նորա և տիրեսցէ քաղաքիս։ Բայց նոքա ոչ հաւատացին՝ համարէին թէ փորձիչ է՝ եկեալ ի շահէն ի գողանալոյ զսիրտս իւրեանց։ Եւ ծառայն երդուեցաւ ի դենն իւրեանց և ի հաւատս նոցա և ցուցեալ նոցա զականջսն իւր, պատմելով զանցս իրին։ Եւ նոցա ընտրեալ զերկուս հեծեալս առաքեցին առ Իբրահիմ խանն, զի փութանակի զօրօքն ընթասցէ ի քաղաքն։ Եւ իբրև առաւօտ եղև, զօրապետքն և ամենայն մեծամեծքն զօրօքն հանդերձ ի պատրաստի ունէին սրեալ զզայրացեալ սիրտ իւրեանց և զսուսերս՝ սպասէին, թէ իբր արթնուցու շահն ի քնոյ՝ զի խողխողեսցին սրով զամենայն բնակիչս քաղաքին ըստ հրամանի նորին և զտունսն նոցայ յափշտակեսցեն. է անց երրորդ ժամն, ոչ ոք էր, որ իշխէր մտանել ի սենեակ նորա ի զարթուցանել զնա. զի մտեալ էր նա ի յափտենական խորին քունն մահուն՝ որ ոչ գիտէին. նոքա։ Եւ ի վեց ժամուս առաքեցին զմի ի սիրելի ծառայից նորա ի սենեակ շահին՝ լռելայն իմանալ՝ ի քուն իցէ արդեօք թէ յարթուն, ուր ծառայն մտեալ. ետես, զի հեղեղ արեան ներկեալ էր զտունն. և շահն կայր դեռևս ի քուն։ Համբերել ծառային ի բաց մերժեաց զերկիւղն և բարձրաձայն կոչելով տէր իմ, շահ իմ և ի մօտ եկեալ ի բաց ձգեաց զօթոցն ի նմանէ և եգիտ զնա անշնչացեալ։ Իսկոյն ընդոստացեալ արտաքս մեծաւ աղաղակաւ ասէ պարսկական լեզուաւ. «Շահ մօրտաս, էյ բրատարան» որ թարգմանի. «Թագաւորն մեռեալ է, ով եղբայրք»։ Եւ ով կարէ պատմել, թէ որպէս ի միում ժամու այնչափ անթիւ զօրք նորա որպէս փախեաւ, թողեալ զզէնս զամենայն պատերազմական գործիս ես և զդի շահին իւրեանց։ Որովհետև նեղ էր դուռն քաղաքին և անհնար էր ի միում ժամու ելանել այնչափ զօրաց և բազումք ի նոցանէ՝ լուեալ, թէ Իբրահիմ

խանն գայ զօրօքն՝ արտաքս ընկեցին զինքեանս ի պարսպէն և այնպէս փախեան ամենքեան յերկիրն իւրեանց։ Եկն Իբրահիմ խանն և տիրեաց քաղաքին ես ի բազում ընչից զօրացն պարսից մէծամէծ թնդանօթաց, հրացանից, զինուց, ոսկոյ և արծաթոյ, և եղև յոյժ հարստացեալ այնուհետև։ Եւ զդի շահին ետ ի ձեռս հայոց, որ և նոցա կապեալ զպարանօց նորա տռամբ քաշէին ընդ փողոցս քաղաքին և ընդ աղբիւնս մինչև ցրուեցան ամենայն անդամքն նորա, և ապա ընկեցին ի ձոր մի և այսպէս եղև կերակուր գազանաց և թռչնոց։ Եւ այնուհետև նստաւ յաթոռ նորին զմի որդոց նորա, որ խնդիր արար առ Իբրահիմ խանն, թէ ոչ առաքեսցես ասէ առ իս կապեալ ոտիւք և ձեռօք զթշնամին իմ՝ որ սպան զհայրն իմ, կրկին անգամ խռովութիւն լինի ընդ մէջ պարսից և գաւառիդ։ Եւ Իբրահիմ խանն ասէ լաւ է, առն միոյ մեռանել, քան կըրկին պատերազմ յարուցանել, որ լինի պատճառ հեղման արեան բազմաց. կապեաց զայրն և ետ տանել որդւոյ շահին նորոյ շահի։ Եւ իբրև տարան ի Թէհրան ի նմին աւուր հրաման արար շահն ամենայն ազգատարան ի Թէհրան ի նմին աւուր հրաման արար շահն ամենայն ազգականացն իւրոց առնուլ մի մի սուր դաշնակ և գալ ի դուռն թագաւորին՝ ուր կապեալ կայր շահասպանն ի ծառոյ։ Նախ շահն և ապա մայրն նորա և ամենայն բազմութիւն, որք էին քան զգազանս բազում՝ արձակեցան ի վերայ և կտրատեցին զնա ի բազմաթիւ մասունս և յետոյ այրեցին հրով և զփոշին ետուն հողմոց։ Այնուհետև դադարեցաւ խռովութիւն ընդ մէջ պարսից և ղարապաղցւոց մինչև ի պատերազմն ռուսաց ընդ պարսս։

Եւ յորժամ նուաճեցին ռուսք ընդ ձեռամբ զամենայն Վրաստան և տիրեցին մայրաքաղաքն նոցա Տփխիսայ արարին զայն փոխարքայանիստ ռուսաց և յետ քանի մի տարւոյ, իբրև տեսին առաջնորդն Ղարաբաղու յազգէն Ջալալեանց ըստ ոմանց կաթողիկոսն Գանձասարու՝ ես և բազումք հայազգի յիշխանացն տեղւոյն՝ թէ ռուսք այլ ես ոչ կամին ընդդարձակել զսահմանս իւրեանց՝ զի գուցէ և յայնժամ գաւառն իւրեանց ես անկանիցի ընդ իշխանութեամբն նոցա՝ և ազատեալ լինէին ի ձեռաց պարսից. միաբանեալ գրեցին թուղթս ողորմանաց առ փոխարքայն ռուսաց, որ ի Տփխիս՝ այսպէս՝ մեք յուսացեալքս զաստուած՝ ակն ունէաք, թէ երբ ձեռամբ թագաւորութեանդ ռուսաց ծառայիցդ Քրիստոսի ազատեսցէ նոյն ինքն Քրիստոս փրկիչն մեր ի ձեռաց անօրէն պարսից՝ զմեզ զհաւատացեալքս յինքն՝ և զկրոնակիցս ձեր։ Որք եմք ընդ ձեզ մի հօտ միոյ նոյնոյ հօտապետին։ Ապա ուրեմն նախանձ նորա շարժեսցի յօրհնեալ սիրտս քրիստոսազօր թագաւորութեանդ՝ տեսանելով զանպատմելի զվիշտս և նեղութիւնս մեր, որ ի պարսից աստի, փութասցի ազատել զմեզ ի ձեռաց սոցա և տիրել մեզ և երկիրս մերում բարելի. և պատրաստ եմք ամենայն յօժարութեամբ մարտակից

լինել ձեզ և մինչև ուր հաճեսջիք ամենայն տէրութեամբ նուաճել ընդ ձեռամբ ձերով և տիրեսջիք բազում քաղաքաց մասին Հայաստանու օրհնեալ երկիրն։

Ի միջոցս բազում անցք անցեալ էին ի գաւառիս, բայց ի մոռացօնէ* առ մեզ. և զոր ինչ պատմեցաք և ունեմք պատմել զգաւառէս ի լսելոց անտի ի հաւուց կամ ի հարց մերոց՝ զորս ի յիշողութեանս իմում մնացեալն էր ի բազմաց սակաւագոյնս գրեցի՝ խնդրեմ ներել՝ վասն զի քանի մի անուանք ի պատմութեանս փոխարկեալ են ի յատկութենէ իւրեանց. ի յիշողութեամբ լինելոյ զգործս և զանցս որ ընդ նոսա՝ օտար անուամբ, յորջորջեցի զնոսա։ Բայց եւ բազում անցից անցանելոց՝ քանի մի ամաց ռուսք երեսս ընդդէմ պարսից դարձուցին և կամեցան մարտ դնել ընդ նոսա։ Նախ անձնատուր եղեն նոցա գանձակեցիք և ապա առաքեցին ռուսք դեսպանս առ Իբրահիմ խանն Ղարապաղու՝ տուր սեւն զպատասխանին՝ անձնատուր լեալ տա՞ս ի ձեռս մեր զգաւառդ եթէ ոչ՝ պատրաստ լեր մարտիցուք ընդ միմեանս՝ կամ յաղթեսցուք և կամ յաղթեալ յետս դարձուք։ Եւ խանն ժողովեալ զամենայն զբէկս և զծերունիս ի թուրքաց գաւառին եհարց խորհուրդ ի նոցանէ, որպէս կարծէք աՀա թշնամին մեր և օրինացն մերոց կայ ի դուրս է. կոչէ զմեզ ի պատերազմ, եթէ կարող իցեմք մի՛ տացուք թոյլ դերկիր ի ձեռանէ մերմէ, այլ մինչև ցմահ ընդդիմասցուք դոցա։ Վասն զի, եթէ սոքա տիրեսցեն երկիրդ մերում, զմեզ կամ սպանիցեն և կամ տարագիր արասցեն։ Իսկ մեք չունելով հաշտութիւն գոնէ ընդ պարսս, որ լինէր տեղի ապաստանի, կործանիցեմք ի միջի սոցա, որ ի միջի պարսից և ռուսաց։ Պատասխանի ետուն քանի մի ի բէկացն չար հպարտից, որք ոչ էին փորձեալ կամ լուեալ զքաջութիւնէ ռուսացն, ասին խան թագաւոր ես մեր այսուհետև յաւիտեան կաց, մեք հաղթեսցուք և խորտակեսցուք զզօրս և զօրութիւնս գաւուրիցն. մինթէ նոքա զօրաւորք իցեն, քան զպարսիկս, որք անթիւ զօրօք ոչ յիշես քանիցս անգամ նկուն եղեալ ի մէնջ փախեան և բազումք ի նոցանէ սրախողխող եղեալ՝ ոչ ժամանեցան յերկիրն իւրեանց, թող դոքա եղիցին, քան զնոսա։ Դարձաւ ումն ի ժողովելոցն, որոյ անուն էր Մամատ Սան աղան և արհամարհելով զբէկսն զայնոսիկ ասէ ցխան անսա բանից ծառայիս քո և մի ելանել ընդդէմ ռուսաց՝ ասեմ տեառն իմում. կենդանի է աստուած, թէ ոչ թողցեն զքեզ կենդանի։ Դոքա ոչ յիշեն՝ թէ և բազում անգամ լուեալ են՝ թէ որպէս զամենայն Վրաստան առին ի միջոց փոքր ժամանակի և զթագաւորս նոցա բազմահալած արարին։ Կամ սարսափելին ես վասն

* Բնագրում «մոռացօնէ» է։

որոյ քաջ գիտես որպէս արարին ընդ Նափոլիոն և ընդ զօրս նորա, յորոց զամենայն Եւրոպա դողային։ Արդ անսա ծառային քո և մի տար դեսպանիդ խիստ պատասխանի՝ այլ ծառայ քո, զոր ինչ ասասցէ քեզ զբարին՝ եթէ կամիս, զի բարի լինիցի քեզ՝ զայն տացես նմա զպատասխանին։

Ասէ Մամատ Սան աղայն ցխան՝ այսպէս ասասցես ցդեսպանդ՝ ոչ ապաքէն և ես իշխան կամ գաւառապէտ եմ տեղոյս՝ այնքան արիւն հեղի և ետու հեղուլ պարսից, ընդ որս մինչև ցայս օր հարուածս դնեմք և առնումք ի նոցանէ, և որպէս գառն ի գայլոց՝ նմանապէս և ես զքաղաքս պահպանեցի՝ և որոյ յիմն շինութեան սորա ես ինքնի ետու արկանել. և ամենայն զօրութեամբ ջանացի և ջանամ ի բարեկարգութեան պահել։ Եւ այսօր, եթէ իմով կամաւ հանձնիցեմ թագաւորութեանդ ռուսաց, մինթէ անմասն առնիցէք զիս ի գաւառէս իմմէ կամ ընկենուցուք զիս ի մասնաւոր իշխանութենէ ինչ, ո՞չ ապաքէն ընդդէմ լինիցի կարծեմ օրինաց քրիստոնէութեանդ ձերում և խղճի մտաց ամենայն լսողաց։ Բայց այժմ այսպիսի ասելովս ոչ եթէ կամիմ ընդդիմանալ թագաւորութեան ձերում ի չտալ՝ որ այդ անհնար է ինձ՝ այլ թողում զձեզ խղճի մտօք դատել և առնել։ Ի վերայ բանիցս Մամադ Սան աղային յոյժ հաւանեցաւ և այսպէս ասաց դեսպանին ռուսաց։ Ելեալ դեսպանին եբեր պատասխանին ի Թիփլիզ շփեխտուր* ասացեալ սպարապետին կովկասեան զօրու ռուսաց. և նա գրեաց զբանս Իբրահիմ խանի առ Եկատարինէ թագուհին իւրեանց և թագուհիս այս, որ նստեալ էր յաթոռ ամուսնոյն իւրոյ Պօղոսի[91] յետ մեռանելոյն նորա. զի սպառումն էր չափահաս և արժանժառանգ արու անձանց թագաւորազանց տանն ռուսաց։ Գրեաց առ շփեխտուր սպարապետն այսպէս՝ թողցես զդա յիշխանութեան իւրում, բայց պահպանութիւն բերդաքաղաքին ի ձեռս զօրաց մերոց լինելոց է։ Յայսմ միջոցի մեռաւ պատահմամբ ինչ շփեխտուր սպարապետն, և նստաւ ի տեղի նորա Ցիցիանով[92] անուամբ ռուս ոմն, զսա պարսիկք ոսկէոտն անուանեն (զորմէ ասեն թէ յոյժ քաջ էր լեալ ի պատերազմի և գնդակահար լեալ ի կոճ ոտինն է նմին ժամու տուեալ իցէ ի վեր կոճիցն խարել և փութով դադարեցաւ արիւն և անցոյց ի տեղի պակասութեան ոտին՝ յոսկէ ոտն). սա ծանոյց զկամքս թագուհոյն Իբրահիմ խանին եկեսցես ի Թիփլիզ և դաշն կարգեսցուք ընդ քեզ։ Ելեալ Իբրահիմ խան, առեալ ընդ իւր զբազումս ի բէկաց իւրոց ես և ընծայս բազումս ոսկիս, արծաթս և ականս պատուականս, զերիվարս սրընթացս կամ նաղաքայլս և զայլս բազումս։ Եկն ի Տփխիս դաշն եդին ընդ միմեանս այսպէս, զի Իբրահիմ խանն տիրեսցէ ամենայն գաւառին, բայց ամ յամէ այսչափ

* Պետք է հասկանալ ինսպեկտոր։

ինչ հարկս տացէ ռուսաց, և պահպանութիւն բերդաքաղաքին Շուշոյ ի ձեռս զօրացն ռուսաց՝ և զօրքն մի ինչ ունեցին դատելոյ և կամ հարկս պահանջելոյ ի ժողովրդենէն և մի յարեսցեն ի դատաստան խանին, այլ ի ներքս ի քաղաքն տեղի տացէ նոցա խանն, և նստեցին անդ և եթէ բուռն ինչ իցէ ուստեք խանին և կամ ընդիմանայցէ ոք նմա, նուաճեսցեն ընդ ձեռամբ նորա. և կերակուր նոցայ ի գաւառէ անտի ժողովեսցեն։ Եւ յետ քանի մի աւուրց գնաց Ստեփանակև անուամբ հազարապետն ռուսաց՝ հրամանաւ ոսկէտոին՝ բազում զօրօք եմուտ ի քաղաքն և հրամանաւ խանին ետ դադարկել քանի մի տուն ի թաղն հայոց և եթող անդ հարիւրապետ ումն յոյժ քաջ երեք հարիւր զօրօք հանդերձ, և ինքն դարձաւ գնացեալ զօրօքն ի կողմանս Երասխ գետոյ։

Մատենադարան, ձեռ. 2734, թթ. 2բ—17:

51

ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մելիք Մեջլում, Գանջու բարբառով

(Պատմած ծեր մարթից, որ սեա էլ լսել ա մելիք Մեժլիմի իսկ իրեան նեօքարիցը)։

«...Աղա Մեամմեադ շահը, որ 1795 թուին կեալիս ա Ղարաբաղու վրեայ, Ջավադ խանը մելիք Մժլիմին վէր ա առնում ու քնիմ Ղարաբաղը տեսութիւն ընիլի շահին։ Կոուսմը, որ Իբրահիմ խանի ղօշունիցը իրենք հեարիւր մարթ են փռնուած ըլիմ, շահը հըրաման ա անում, որ նրեանց ձեռն ու ոտը կապեն մի կալ տեղ վէր ածեն ու ծիով կոխ տան։ Շահը էն ժամանակը ասում ա մելիք Մժլիմին, թա որը նրեա մարթն ա, ասի, որ ազատի, չիւնքի համարեայ շատը հայ են ըլիմ, պայց Մելիքն ասում ա. «Շահը սաղ ըլի, թա որ տրեանք իմ մարթը ըլին, շահի դեմ գիւլլեայ չին անիլ»։ Իրեք հարիւր մարդը ըսհէնց մի սհաթումը փչացնում։ Շահը որ էրգեար կռև տալիս եար կարում չի Ղարաբաղու ղալէն առնիլ, սեպտեմբերին կեալիս ա Գեանջու վրեննովը անց կենում քնիմ Թիֆլիզու վերայ, հետն էլ վէր առնում մելիք Մժլիմին։ Շահը որ պետք ա եկէլ էր քնեացել Թիֆլիզու վրայ, Ջավադ խանը Ղարաբաղիցը շուտով առաջօրէն մարթ ա ըղարկում Գեանջեայ, որ ռհեաթը լոխ ղալէն հվաքվեն, որ պեան ա շահը, թա որ մտքում էլ ա ունենայ քաղաքին յանկարծ վրեայ տալու, կարայ ոչ։ Մելիք Մեժլիմը շահին ասում ա. «Շահ, Թիֆլիզի առնիլը իմ վզիս»։ Հերակլ թագաւորը, որ ըմեանում ա Մեամմեադ շահի կեալը, իրեան ղօշունը առաջ ա ըղար-

կում՝ քաղաքիցն տիս, որ կռև տան, չթողան թշնամին առաջ կեալի. պայց հեփ որ կարում չեն դէմ կենալ, ետու ետ առնելով կեալիս են կաղնում Կրծանիսի ըռաչին ու կռև տալիս։ Էս ժամանակին մելիք Մեժլումը իրան փյեադայ ղօշունը առնում ա քնիմ ու Սոլոլակի սարովը քաղաքի հարաւին կողմիցը վէր կեալիս քաղաքի մեջը։ Հերակլայ խանն որ կաղնած ա ըլիմ մէյդանումը, հեփ որ տեսնում ա, որ թշնամին քաղաքը թափվեց, ուզում ա կարմնջովը անց կենալ ու Հալվաբարի ղոլովը փաղչել, պայց որ տեսնում ա թուրքէրի հաւաքված կարմընջի կշտին, վախիցը կաղնում ա, չըլի թա նրեանք չարութիւն անեն. Թուրքերը, որ էս տեսնում են, ասում են. «Հրամայիր, եկ, անց կաց, մէր խանն ես, ոչով համարձակվիլ չի քեզ չարութիւն անիլ»։ Թաքաւորիցը ետը իրեան ղօշունը էլ կոտրվում ա ու ետ փաղչում։ Ըռաջիցն էլ շահի ղօշունն ա թափվում քաղաքը։ Իրեք օր թշնամին թլանում ա, քանդում ա, էրում ա քաղաքը ու ետոյ եսիրը վէր առնում տիս քնիմ։ Փեցխուորի բաղի ըռաջը շահը հըրամայում ա, որ ինչ ակնեղէն ու մարգարտեղէն են վէր առել, վէր ածել խլչունց վրեայ, որ վէր են ածում, շահը ասում ա. «Հայ խան, քու բաժինդ վէր կալ ինչքան կուզես։ Շահը ողջ ըլի, ասում ա մելիք Միջլումը, ես իմ փայը շահին եմ ընծայում»։ Շահը տեսնում ա, որ մելիքը կամենում չի փայ վէր ընիլի, ինքը իրեք կիծքը վէր ա առնում, ածում եափնջի վրեայ ու հրամայում մլիքին, որ վէր առնի։ Ետով սկսում ա ասել. «Հայ խան, թա որ սատուած ջանիս չի կեալ, ես եկող տարի կհեամ ու քեզ պետք ա խան կարքեմ։ Խուդաիփերինիցն էլ սկսած մինչև կոտրած կարմունջն քէզ պէտք ա տամ, որ որթւոց որթի տիրես»։ Շահը ընաղ մելիք Մժլումիցը փոկվում ա դպի Ըրևան ու ընդով քնիմ Թէհրան, ղօշումին էլ չիւնքի որ ըստղից ընդղից հաւաքած ըլիմ, հրաման ա անում, որ ով ինչ տեղով ուզի քնեա իրեան տունը։ Գեանջովը անց կէնող ղօշունիցը, հայերը ինչքան որ կարում էն, եսիր են թափում (ազատում) փողով թէ հայ ա ըլիմ, թէ վրացի, շատը հենց իրեանց հուքու համար են առնում, ազատում առանց իրեանց տուած փողն ստանալու։ Նմանապէս առնում են Ղարաբաղ, Ըրևան, Էջմիածին, Նախչուան։ Մենակ Եփրեմ կաթողիկոսը, որ էն ժամանակը եպիսկոպոս ա ըլիմ, հինգ հարիւր թմեանի եսիր ու ազատում, հեփ որ էլ աւել փող չի ունենում իրեան ըղգեստը գրաւ ա անիմ ու նրեա փողովն էլ ազատում։

Թիֆլիզուց որ կեալիս են իրեանց մնացած եսիրը ազատելի, Ջավադ խանը մինչև 20 մանէթ չի առնում՝ ամէն մի եսիրի համար, թողում չի անում, որ տանեն։

Մելիք Մեժլումը սրեանից ետով փսպարում է Հերակլայ խանի վրեա էսպէս. «ծիտը որ ղիրղի (ястреб) *ծեռիցը փախած մտնում ա*

մի թուփի տակ, ազատվում ա. ես էլ թշնամի ձեռիցը փախած եկի քու քեօլգի (հովանավորութեան) տակը, որ ազատվիմ, պայց տու մի թուփ էլ ա չտեսոար ինձ ազատելի համար, անումա էն ա, որ թագաւոր ես. ըն էլ քրիստոնեայ, հեալամ ուզում էլ իր, որ 500 ոսկի հետի իմ ձէռներս ու ոտներս կապած անպատուութիւնեով ըղարկես Իբրահիմ խանին, որ նա էլ հազար մի խայտառակ տանջանքնէրով ինձ սպանել էր. հմիկ տեսար ինչ ստացար ընձեանից քու արարմունքի փոխարենը»:

Հերակլեայ խանը սրեայ մուրը հնիլի համար 1796 թուին վեր ա առնում լեազգին ու Ղարաբաղու Իբրահիմ խանին, կեալիս Գեանջու վրեայ: Ջավադ խանը, որ էս ըմեանում ա, ժողովրթին հւաքում ա ու ղալի մեչը մտնում: Մեծ պասիցը մինչև վրթիւէրը ժողովուրթը ղալի միջին մնում են: Ղալաբեաթլղ ժամանակը Արզման ըզբաշին իւրան դեաստէն վէր առած քնիմ ա, ու բազմանելեարիցը 17 (նորչինի թաղիցը) եմիշ (մրգեղեն) հւաքում, պիրում ղալէն, էնպէս էլ խոտ ուլախների համար: Մի անքամ Արզմանը իր եմիշ հւաքած, ղալէն կեալիս ժամանակը Ջաւադ խանն ու մելիք Մեժլումը տեսնում են, որ մի դեաստեայ գիւրջի (վրացի) մտկացել են ղլին: Արզումանին ասում են, որ առաչ քնեայ նրեանց ցրև տայ, եռով մտնի ղալէն. ամայ Արզմանը ասում ա. «Մելիք, շատ եմ բզեարած, թա որ քնեացի, էլ սաղ ետ չիմ կեալ ու որ օր որ ես ըսպանվեցի, էտու էլ տիւ պետք ա սպանվիս». պայց Մելիքը ասում ա, չէ պետք ա քնեայ ցրև տայ: Արզումանը քնիմ ա ու ցրև ա տալիս, փախցնում, պայց ետ տռնեալիս մի չոլախ գիւրջի, որ ղլի պատի տակին կեազլու կցած ա ըլիմ, թվեանգը կրեակ ա տալիս, վէր քցիմ: Հենց էն քշերն էլ ղլի հարաւային բուրջը տեօնմիշ ա ըլեմ: Մելիք Միժլումը, որ էս ըմեանում ա, էն սհաթին վազ ա տալիս քնիւ քնած տեղը իմաց անում Ջաւադ խանին, դեօնմիշ ըլիլի սեարեարը էն ա ըլիմ, որ ժողովուրդը էնքան վախտ փակուած ղլի մէջին, սով ա ընկնիմ մչէրնիքը, մինչև անքամ որ ծյի միս են ուտում: Մելիք Մեժլումի ռհեաթը որ կեալիս են, ասում. «Աղայ, սոված կոտորվում ենք, մի ճար տես մեզ: «Հաշան տղէք, ասում ա Մելիքը, տեառ հեալեամ կատուի կլեօխը մի ոսկաւ չեք առնել, որ ըտհենց եք ասում. «էն պատճառի են մեծ բեագերը կամենում ղալեն տալ թշնամին, որ իւրանքն էլ, ժողովուրթն էլ տիւս կեան ղիցը ու ազատվին. Հնենց տեառն (դառն) օրիցը: Մելիք Մեժլումը իւրեան դեաստէն վէր ա առնում, վազում, քնիմ բիւրջի տակի ղալանի առաջը կտրում, ինչտեղից տիւրըն ա ըլիմ պեացած ղպի տիւսը, որ բուրջիցը տիւրը չպեանեան թշնամին մեչ ղոլ ընելի: Բուրջիցը որ Մըլիքին շատ գիւլլայ են անում, նեա մի տղի ըրեսին փռնում ա ու վազում ընկնիմ ղլանի մէջը: Խանն էլ մելիք Սրքսին հրամայում ա, որ քնեայ, ոնց որ ըլի բուրջը առնի:

Սեա էլ իւրեան դեաստէն վէր առնում, մի մեծ էլ ղռվղի թայ ըրսներին փռում ու բուրջի դեմը կռև տալիս: Մելիք Մեժլումը ղալանն ա պահում, որ դիւռը չպեանեան, եառով էն տիւռն ա ղավթում ու ճրաք տանիլ տալիս, որ լիւս ըլի: Բուրջիցը ճն՛չիլով մելիք Մեժլիմին ճրաքի լուսի տակին, թֆեանգը վրեայ են անում, վեր քցիմ նրեան: Վէր քցիլեաս ծէն են տալիս բուրջիցը. «Վրազին սպանեցինք, վրազին սպանեցինք»: Պայց Մելիք Սրքիսը չալիշ ա կեալիս բուրջը առնում ու միջի մարդկանցը, որին սպանում, որին փռնում, որն էլ բուրջիցը վէր ա ընկնիմ ու փախչում: Ջավադ խանը իսկոյն մելիք Մեժլիմի մէյիդը վէր ա առնիլ տալիս ու ծածուկ պահիլ տալիս, ժողովուրթին էլ յայտնում, թե մելիքը եարալիւ ա, ու խանը նրեան ուղնիլ ա տալիս իւրեան տունը: Էնպէս մէ շեափեաթ կեազած պահումա ու օրը մի խոնչայ ըղարկում իփր Մելիքի համար, որ ժողովուրթը ոչինչ չեաք չտանի: Մելիքի էրկու հաւատարիմ նեօքեարը, որ իրես կաղնում են, ուզում տանալի իւրեանց աղին, խանը ծածուկ պատուիրում ա, որ նրեանց հետ որ տանեն մլիքի մեյդին կուշտը, ընդեղ հէնց նրեանց կլեօխներն էլ կտրեն որ տիւս չկենան, սեաս քցեն ռհեաթի մեջը:

Ջավադ խանը տեսնում ա, որ մելիք Մեժլիմիցը ետը էլ հնար չկայ դեմ կենալու թշնամին բարշութիւն ա քցիմ էն պայմանով, որ Հերակլյայ խանին Թիֆլիզու եսիրը ետ տայ ըռանց փողի, Իբրահիմ խանին Ջէյվու կետիցը (գետ) տենը տայ, լեազգին էլ երեք հարիւր թմեան: Փողը կտրիլ ա տալիս ղրղշիւնից (արճիճից) վրէնովը ըրծաթի լաւաշ պատած. տալից եան էլ թաքուն հրամայում ա ժողովրթին, որ լեզգունց հետ առուտուր չանեն:

Միւս անգամ 1797 թուին, որ Աղայ Մեամմադ շահը կեալիս ա Ղարաբաղու վրեայ, Ջաւադ խանին ուզում ա շահը, Ջավադ խանին տեսնալըբաս ասում ա «շան որդի, դու ո՞նց ես ջուռեաթ ըրել Սարու Մուստաֆայ փաշի[93] շինած ղալէն տալ Ռուսին: Ի՞նչ ես ըրել իմ հայ խանին (Մելիք Մժլումի համար ա խոսքը), քեօփակ, քեօփակ, շատ լեաւ, թէ, որ Աստուած հոգիս չի առնել քու կելօխն էլ Սադղ խանի կլխի հետ մնեարի վերայ պետք է անիլ տամ», և հրամայում ա, որ փոընած պահեն: Ջավադ խանը տէսնում ա, որ ազատվէլի ճար չկայ, չիւնքի շահի խասիաթն ըմեանում ա, կանուխ մարթ ա ըղարկում Գեանջեայ մելիք Մժլիմի կնգայ կուշտը, որ սեա քնեա շահիցը իւրեան հմար նեռամը խնդրի: Մելիք Մեժլիմի կնիկը, որ հետը վէր առած իւրեան Հեաթամ աղայ որթին, որ տեառ հրլէամ ըրախայ ա ըլիում քնիմ ա շահի կուշտը: Շահը նրեան տեսնեալը բեաս ասում ա. «Համեցիր իմ քիր, համեցիր. ի՞նչպէս ես, ոնց է, ո՞ւր ա իմ հայ խանը: Աստուած թա որ ինձ գեանք տայ. քու էդ որթիդ խան պտիմ անիլ ու իւրեան հօրը

խռստացած երկրները իրեան տալ»։ Մելիք Մժլումի կնիկը առաչ իրեան ախպոր համար, Մելիք Բպովի համար ա խնդրում, որին շահը նմանապէս փանիլ տուած ա ըլում էն պատճառի, որ նեա Իբրահիմ խանի ղոլիցը կռև տուած ա ըլիմ շահի դեմը ու շատ էլ մարթ կոտրած։ Էնքան էլ ուզում ա, որ Ջաւադ խանի հետի խնթրի, հենց էն քշերը շահին իրեան երկու ծառէն սպանում են, ու ըսհէնցով ազատվում ա Ջավադ խանը։ Սպնիլի պատճառը ըլիմ ա էն, որ շահը մի պեանի հետի կզնվում ա նեօքարների վրեայ, ասում. «շան որթիք, ծէր կլխներն էլ Սաղըդ խանի ու Ջավադ խանի կլխների հետ միասին մնեարի վրայ պետք ա անիլ տամ»։ Նքրնիքը ըմնեալով շահի խսեաթը, որ ինչ ասի, պետքա անի խորհուրթ են անում իիւր հետ, որ իրանք առաչ սպաննեն նրեան, որ պրծնեն։ Քշերը տեղամը քնած վախտը բինարու չաղին բիրդան սէրան են կոխում։ Շահը հէնց մէնակ էս ա կարում ասիլ. «Շան որթիք, Իրանը (Պարսկաստանը) խարաբ ըլեաւ, Իրանը խարաբ ըլեաւ»։

Ջավադ խանը եառվ սկսում ա աւելի պահիլ մելիք Մժլումի կնգեանը։ Հեաթամ աղէն էլ որ մծեանում ա նեռա հետի էլ կնիկ ա ուզում Թիֆլիզեցի զեառեաք Եասիյլի աղջիկը, որ փսակվիլիցը եառը կանչվում ա Թամար խանում։

Աղայ Մեամմեադ խանի կեալի պատճառը էն ա ըլիմ, որ մինչև էն ժամանակը Վրաստանը ըլիմ ա Փարսկաստանի իշխանութեան ու հովանաւորութեան տակը, որ շահին շահութեան թուրը կապելիս են ըլիմ Վրաստանի թագաւորը ու լեազգի խանը, պայց որ Հերակլէն թողում ա Փարսկաստանի իշխանութիւնը ու Ռուսինը ընթունում, Աղա Մեհմեադ խանը կեալիս ա սրեա աջուղը հնելի։ Միւս անքամի կեալի պատճառն էլ էն ա ըլիմ, որ էս ղոլի երկրները— Ղարաբաղը, Գեանջէն և այլն և այլն խաները տուած են ըլիմ Զուբովին ու Ռուսի իշխանութիւնը ընդունած, նեա ուզում ա, որ էլ ետ առնի իրեան իշխանութեան տակը։

Մելիք Մժլումի էրկու տղեն, ինչպէս ասում են եառվ Հերակլայ խանը տեղիլ ու սպանիլ ա տալիս։ Նմանապէս և Հեաթեամ ըղին, չինքի սեա Թիֆլիս քնեալիս կեալիս ա ըլիմ։

«Մեղու Հայաստանի», Տփխիս, 1863, № 14, էջ 143, № 16, էջ 160—161։

52

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԵԴ ԽԱՆԻ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մահմատ շահը Թիֆլիսը աւերելուց հետո գալիս է Գանձակ, որտեղից մեծամեծ ասպատակութիւններ է սփռում Արցախ, Գուգարաց և Աղվանից երկրները։ Բայց երբ Նուխում և Շամախում ապստամբածները ընդդիմադրում են սրա զօրքերին և մինչև անգամ վնասներ հասցրնում, Մահմադ շահը կատաղած հրամայում է ձիերի և ջորիների ոտերի տակ ձգել և սպանել 600 գերիները, որոնց Թիֆլիսից բերած գերիների միջից զատել էր իբրև ծերեր և ցաւագարներ, և բացի սրանից, շինել է տալիս մի կրաշանդ ուղղագիծ պատ, որի մէջ թողնում է 52 ծակ այնքան նեղ, որ մի մարդու գլուխ հազիւ կարող էր անցնել, և ապա Արցախի զանազան գաւառներից բռնած 52 հայ մելիքներին, որոնց մեղադրում էր, թե ձեռնտու են եղել Իբրահիմ խանին փախչելու, բերում է այս պատի մօտ, գլուխները անցկացնում ծակերի մէջ, և եռապատիկ թոկերը ձգելով վզերից, կապում է ամէհի ջորիներին և այնքան ծեծել է տալիս ջորիներին՝ որ նրանք քաշքշելով պոկում են մելիքների գլուխները։ Այս միջոցին, լսում է, որ Շիրազի բնակիչները և նրանց խանը ապստամբել են, իսկույն գնում է դէպի Թէհրան, որպէսզի նրանց առաջն առնէ։

Սրա հեռանալուց յետոյ Արցախի Իբրահիմ խանը, որ Դաղստան էր փախել, վրաց Հերակլի հետ դաշն կապելով վարձում է կովկասյան 12.000 զօրք և միանալով վրաց զօրքերի հետ 1796 թուին գալիս է Գանձակի Ջաւատ խանի վրայ։ Սա չկարողանալով նրանց դիմադրել, մելիք Մէջլումի հետ ամրանում է բերդում, սակայն դաշնակիցները պաշարում են բերդը և բուրգերից մինի վրայ սպանում մելիք Մէջլումին, որ հրամանատար էր. յիսուն օրից յետոյ, Ջավատ խանը յաղթուելով հաշտութիւն է խնդրում և ստիպւում է վարձուած լեկզիներին վճարել խոստացուած վարձը և վերադարձնել իր և մելիք Մէջլումի ունեցած մի քանի հարիւր թիֆլիսեցի գերիները։ Բացի սրանից Հերակլը գերի է տանում Վրաստան Գանձակի բնակիչների մեծ մասը։

1796 թւի դեկտեմբերին ռուսները Զուբովի առաջնորդութեամբ, որի հետ էր և հայոց Յովսեփ արքեպիսկոպոսը, առնում են Գանձակը, սակայն Կատարինէ կայսրուհին վախճանւում է, և Աղեքսանդր Ա[94] յետ է կանչում իր հաղթական զօրքը։

Ն. Լալայան, Գանձակի գավառ, հ. Ա., Թիֆլիս, 1901, էջ 8—9։

53

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐԸ 1791—1798 ԹԹ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌՄԽ — 1791 թ.

Աղա Մահմատ խան ներքինի յետ տարածելոյն զանուն և զհամբաւ իւր յամենայն կողմանս Պարսկաստանի բռնութեամբ և աւերութեամբ հանդերձ յառաջադէմ լինի քան զամենայն իշխողսն նոցին Պարսից. և որ քան զօր զօրացեալ՝ տիրէ բոլոր Արաղստանու և իբր ութսուն հազար զօրօք գայ ի վերայ Դաւրիժոյ և զքուրդ բռնակալն տեղւոյն Սադեղխան անուն փախուցանէ ի Շուշի. և տիրեալ այնմ մեծանուն քաղաքի՝ բանակի ի Միւշկեամբար կոչեցեալն վայրի. և անտի զարս հանդերձ հրովարտակաւ առաքէ առ իւրաքանչիւր իշխողսն այնոցիկ կողմանց գնալ ամենայն միամտութեամբ ի հնազանդութիւն. այլ որ մերձակայքն էին, փութացան անձամբ առ նա յայն վայր, և հեռաւորքն ընծայիւք և հնազանդութեան բանիւք հաճեցուցին զնա նորա խոստանալով նմին զհպատակ ծառայութիւնս իւրեանց բաց յԻբրահիմ խանէն Արցախայ՝ որ թէպէտ յառաջագոյն թշնամութեամբ գնայր ընդ արքային վրաց, այլ ի սոյն յայս միջոց յառաւել երկիւղէ նորին ներքինւոյ Մահմատ խանի, յղէ յիւրոցն զայր ոմն զրով առ նա՝ դնել դաշն միաբանութեան ընդ միմեանս, և ունէր յիւր կողմն իսկ և զՈւման խան լէզկեաց։

Այլ ներքինւոյն զհարդ և էր նուաճեալ զմեծ մասնն այսոցիկ կողմանց՝ դարձ առնէ անդրէն ի Դեհրան ի սկզբան աշնանն առեալ ընդ իւր և զպատանդս յիշխողաց անտի հնազանդելոցն ինքեան. միանգամայն և եղեալ ժամանակ՝ դառնալ վերստին ի գարնանն։

Եւ յետ այսորիկ ապա Իբրահիմ խան Արցախայ առեալ ինքնեան ի թիկունս օգնականութեան ի Կովկասականաց անտի զՈւման խան զհամախոհն իւր երկոտասան հազար զօրօք՝ հապճեպ տուեալ հասանէ ի վերայ Նախիջեւան քաղաքի քսան հազարաւ. և աւերեալ զքաղաքն՝ պաշարէ և զբերդ նորին՝ յորում ամրացեալ էր խան, աւելի քան զհնգետասան աւուրս. այլ իշխողն Նախիջևանայ թէպէտ և անկանէր ի նեղ յոյժ, բայց ընդդիմացեալ քաջութեամբ՝ մարտ դնէր ընդ նոսա. և խնդրէր ինքեան ի թիկունս հասանել Մահմատ խանին Երևանայ՝ որում փեսայացեալն էր. ապա և նա զօրօք Երևանայ փութացեալ նախ ի Խոյ և զիշխողն նորին հանդերձ զօրօքն առեալ ընդ իւր՝ թերևս յերկիւղէ ներքինւոյն, հասանեն անդր ի Նախիջևան և յարձակին ի վերայ պաշարողացն բերդին, և քաջապէս յաղթեալ արտասահման առնեն մինչև յԱրցախ և ի Շուշի, զոչ սակաւս ի նոցին զօրաց կոտորելով ի սայր սուսերի

իւրեանց. և այնպէս յաղթանակաւ դառնան ի տեղիս իւրեանց։

Իսկ ներքինւոյն գնացեալ՝ կրկին տիրէ Շիրազու և աւերէ զբերդ նորին, և զբնակիչսն հանէ անտի ի կողմն Աստարապատու, և ինքն դիմէ ի Դեհրան շահ անուամբ. և ապա անտի զՍիւլէյման խան ոմն յիւրոցն զօրօք հանդերձ առաքէ ի Դաւրէժ սարտար և հրամանատար այնոցիկ կողմանց, զի թէ ոք յիշխողացն անհնազանդ գտցի, յարիցէ ի վերայ և վրէժխնդիր լիցի ամենայն զօրութեամբ քաջութեան։

ՌՄԽԴ — 1795 թ.

Ի սոյն յայսմ ամի այն ինչ գարունն քաղցրաշունչ զձմերայնոյն զսառնամանեացն խստութիւն ի բաց դնէր և զեղանակ զուարթարար նորոգիչ կենաց մարդկան ընդ երեսս երկրի համատարած ծաւալէր սփռէր, ներհակ նմին ի ներողութենէ վերին այցելութեանն թելադրութիւն չարին զգժնեայն դառնութիւն խստութեան առաւել քան զձմերայնոյն խանգարիչ աշխարհի զբռնաւորն չար զներքինին չարագոյն յելիցն արևու առեալ ածէր անդրէն յայսոսիկ կողմանս Հայաստանեայց՝ որոյ եկեալ հասեալ ի սահմանս Արցախայ բազմութեամբ զօրաց՝ բանակ հարկանէր մերձ ի դղեակն Շուշի, և անտի զոմն յիւրոցն սարտար առաքէ յերկիրս Երևանայ և Մահմատ խան զայն լուեալ՝ ամրացուցանէ զբերդն և զմասն բնակչացն երկրին առնու ի ներքս անդր և զայլսն ամենայն այսր անդր ցրուեալ յապահով տեղիս՝ ամայացուցանէ զերկիրն բովանդակ և սարդարին այնմ եկեալ պաշարէ զբերդն Երևան յամսաչափ ժամանակս, և նուաճեալ առնու զպատանդս և դառնայ անդրէն առ բռնաւորն ներքինի։

Այլ բռնաւորիս երկունք չարութեան ի սրտի ոչ էր այնքան նուաճումն ոմանց իշխողաց այսոցիկ կողմանց ընդ իւրով իշխանութեամբ, որչափ հանդիսանալն իւր յաղթանակաւ ի վերայ մեծանուն քաղաքին՝ ուր նստէր Հերակլ արքայ վրաց, բայց ըստ որում բազմիցս զփորձ քաջութեան նոցա փորձեալ էին նոքին, իսկ Հերակլ արքայ ոչինչ գրեալ զայն ահեղ պատրաստութիւն բազմութեան զօրացն պարսից՝ ի զօրացն իւրոց զերիս հազարս և եթ պահնակս պահեալ ի քաղաքի անդ, զայլսն ամենայն հանեալ էր ի հեռաւոր վայրս՝ յոյս ի մտի եղեալ, զի թէ ի նեղ ինչ անկցի քաղաքս, փութով բերից զնոսա ի թիկունս օգնականութեան. այլ վրիպեցաւ ի յուսոյ անտի, քանզի թշնամիքն զգաստք՝ գտեալ լքեալ սրտից իւրեանց նեցուկ հաստատուն և չարութեան իւրեանց քաջահմուտ առաջնորդ, զՄէլիք Մէջլումն հայազգի իշխան՝ յորմէ քաջապէս հասու լեալ և հանգամանաց քաղաքին և անհոգութեան նոցին իսպառ, առաջապահութեամբ, իսկ նորուն յարձակին իբրև հարիւր հազար հեծելազօր բազմութեամբ ի վերայ քաղաքին Տփխիսոյ յերրորդ աւուր վերաց-

ման սուրբ խաչի յետ կէս աւուրն յեղակարծ միջոցի, ուր յառաջին նուագի անդ յարձակման պարսից մեծ լինէր հանդէսն քաջապինդ յաղթութեան նոցին երից հազարացն քաղաքին մինչև ընդ կրունկն դարձուցանել զբազմութիւն զինուորութեանցն պարսից, այլ քանզի հմտութիւն Մէլիք Մէջլումի հայազն իշխանի ամենայն որպիսութեանց և քաջայարմար դրութեանց մտից և ելից քաղաքին անդրէն ի ճակատ զզօրսն մատուցանէր, և յանխնայ ի սուր դառնութեան զբիւրաւորսն մատնէր. և զՀերակլ արքայ ի Թէլաւն կոյս մազապուրծ փախուցանէր և զամրոցն անուանի քաղաքուն հանդերձ և աւանօք ընդ կատաղի դառնութեամբ պարսից նուաճէր. (թէև զկնի սակաւ միջոցի այսորիկ նոյն առաջնորդն աւերանաց բնտանի թշնամին Մէլիքն Մէջլումն զբաժակ զարժանահատ մահուն չարաչար ի տեառնէ ըմպէր)։

Եւ ապա յայնժամ զի՞նչ, ո՞վ դառնավիշտ պատմութեանս, ո՞վ անհանդուրժելի աղէտիս մեծի, զազանք կատաղիք արեան ծարաւիք զինուորք պարսկային և զայլք քաղցեալք ծնունդք չարութեան յարձակեցան ի վերայ աղմկեալ և շփոթեալ բազմամբոխ քաղաքի, յարձակեցան և հարին ի սուր զորս և գտինն. զքահանայս պաշտօնեայս եկեղեցւոյ սրբոյ, զժողովրդականս՝ զծերս և չզափահաս անձինս, զարս, որք միանգամ ընդ դժնեայ հայցեղութեամբ նոցին անկան. փայլումն պատենամերկ սուսերաց նոցին հարկանողացն և հոսումն արեան անկելոց թաւալգլոր խաղացողացն, ահարեկ զմնացեալսն առնէին զկանայս, զմանկունս և զմանկուհիս նորահասս, անդ էր տեսանել ճիչ, կական, վայ և աւաղ, պատառումն զօձեաց, բաղխումն կրծոց, խղումն հերաց և խուսափումն անթաղչելի ամենեին և փախուստ անճողոպրելի կանանց գեղեցկագունից, և քօղազարդ հարսանց, փափկասուն մանկանց գեղաղէշից, և պայծառատիպ գեղաճեմ մանկուհեաց. առան գերեցան, որոշեցան ի միմեանց մարք ի դստերաց, հարք յորդւոց, և քօղաշուք հարսունք ի փեսայից, ոմանք ի սուր անողորմ և ոմանք ի գերութիւն անդարձ. մինչև կնքել ոմանց ստուգութեանն հասու եղելոց եթէ՝ թիւ անկելոցն և գերելոցն անց քան զյիսուն հազար յերկուց ազգաց և եթ ի հայոց ասեմ և ի վրաց. իսկ զհիմնայատակ աւերութենէ քաղաքին, զսրբոց զմբէթազարդ տաճարաց և զարքունի պալատաց, և զայլոց շքեղ շինուածոց ո իցէ բաւական ի պատմել՝ զորս ծախեաց հուրբ՝ խոնարհեցուցին յերկիր, և զորս ի նոսա յոլովութիւնս ընչից և ստացուածոց, հարստութեանց և ճոխութեանց առեալ յաւարի և կողոպուտ յամենայն վայելչութեանց ելին և դարձան անդրէն ընդ որ եկինն. մինչև ի դէպ գայ ասել ըստ ուրումն պատմագրի թէ՝ առաջ նոցա դրախտ փափկութեան և վերջ նոցա դաշտ ապականութեան։

ՌՄԽԵ — 1796 թ.

Ի սոյն յայսմիկ ժամանակի՝ յորում ողորմելի բնակիչք այսոցիկ կողմանցս տառապեալ հեծէին ընդ ծանր լծով բռնութեան այլազգի ինքնագլուխ իշխանաւորաց՝ հիւսիսային հզօր զօրութիւն երևէր մերձ ընդ մերձ. և այն ինչ ունէր դեղ և դարման միատարր խաղաղութեան ընձեռել առհասարակ, թաքուն խորհուրդ այցելութեան վերին նախախնամութեանն նմին ոչ ոժանդակեալ՝ մնայր անկատար. քանզի խորհուրդ հասարակախնամ կայսերուհի թագուհւոյն ռուսաց հասեալ՝ առաքէ զգունդս զօրաց զօրավարութեամբ Զուպով ձայնեալ զօրագլխի ի կողմանս Գանձակայ՝ որոց յառաջացեալ և անցեալ ընդ Դուռն Երկաթի յաղթանակաւ՝ բանակ հարկանէին ի դարան դաշտի և գունդ զօրաց ի բանակէն ելեալ ի վերայ Գանձակայ՝ տիրէ այնմ յամի 1796, յամսեանն դեկտեմբերի. ընդ որս էր և Յովսէփ արքեպիսկոպոս հայոց ռուսաստանեայց. և ի համբաւոյ աստի սարսեալ բռնաւոր այլազգի իշխողաց՝ մինչև նորին իսկ շահ անուանեալ ներքինւոյն, և ներհակ այնց խնդամտեալ ի սիրտ տառապեալ վշտահար և զանալից մնացորդաց ժողովրդոց ազգի հայոց, կանխեալ օրհասին մահու մեծի թագուհւոյն յաստեացս և յաջորդեալ յաթոռ արքայութեան նորին կայսերական մեծութեան Աղէքսանդրի առաջնոյ՝ յետս տայ կոչել զայս զինուորութիւն[95], ի քաջայարմար յաջող մարտադրութեանցս. թողլով անդրէ զայնոսիկ ի տեղիսն ի ձեռս նոյն առաջին աւերչացն։

Ուստի և Ղուկաս կաթուղիկոս Մայր Աթոռոյ էջմիածնի ուրախացեալ ընդ հնչել համբաւոյ գալստեան նոցին միանգամայն և տրտմեալ ընդ լուր վերադարձի այնօրինակ, գրէ ցաւալից սրտի ի հնդիկս առ Շամիր խան հայազն իշխան. «Ուստի և յոյս եղև մեզ՝ թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ, սակայն առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհւոյն, խափանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի, ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ զամենայն ընդ ձեռամբ արկեալսն եւ թողլով հնոց տիրողացն աւերչաց»։

Ապաքէն յայսմանէ աստի յաջողեալ բախտի ներքինի Մահմուտ խան շահ անուանելոյն նուաճէ այնուհետև ընդ ձեռամբ զամենայն զայսոսիկ կողմանս՝ և զայնոսիկ իշխողսն՝ որք թիկունս տային արքային վրաց և անպարտելի զինուորութեանցն ռուսաց և ոչ գային ի հնազանդութիւն նմին, և ապա ձեռն էարկ մի մի արմատախիլ առնել զնոսին, զեղբայրն իւր Ալիղուլի խան առաքէ յԵրևան իշխող և ընդհանուր սպարապետ և հրամանատար այսոցիկ՝ կանխաւ տարեալ առ ինքն զՄահմատ խանն Երևանայ՝ կողոպտէ ընչիցն և գրեալ յարքունիս զամենայն ստացուածսն՝ և իբր յաքսոր զնա միայն տարագրէ ի Դեհրան,

տայ բռնել զերկոցունց աչսն Քեալպալի խանին Նախիջևանայ և Մահմատ Հասան խանին Նուխւոյ*։

ՌՄԽԶ — 1797 թ.

Եւ ինքն ներքինին վերստին խռովտացեալ ելանէ դէմ եղեալ յայսոսիկ կողմանս և եկեալ բազմութեամբ զօրաց բանակի մերձ յԱրտաւիլ. և անդ լուեալ եթէ Իբրահիմ խան Շուշւոյ՝ որ ոչ երբէք եմուտ ընդ իւրով ձեռամբ, թողեալ զամրոցն փախուստ ետ առ Կովկասեանսն ի Բէլաքեան, փոյթ ընդ փոյթ առեալ զերկոտասան հազար քաջընտիր հեծեալս գայ մտանէ յամրոցն Շուշի՝ որոյ նախ քան զմտանելն անդր առաջաւորեն հայազգի երևելի իշխանք, յորում երևելի էր Մէլիք Ջումշուտն՝ որոյ ի տան իսկ անօրէնն իջևանեցաւ անձնական իւր ծառայիւք։

Եւ այն ինչ ձեռնարկեալ էր ի կեղեքել և ի կողոպտել զզօրմելիսն յընչից. և նոյն ինքն իսկ վանատուրն արբանեկին չարեաց Մէլիք Ջումշուտն նեղեալ և ճնշեալ յանիրաւ բռնութենէ նորին և ի մի վայր հաւաքեալ զամենայն հարստութիւնս և զճոխութիւնս հայրենի գոյից դրամոց և սպասուց պատրաստեալ էր յառաւօտուն ջամբել անհագ և քաղց նորուն ագահութեան, ի նոյն գիշերի մտերիմ հարազատ անձնապահն թելադրութեամբ և խրատուք երևելի առն այլազգւոյ Սատխ խանի սրախողխող արարեալ ի մահճի զմարդախողխող բռնաւորն ներքինի զայրն անօրէնութեան յետ իբրև ութից աւուրց մտանելոյ անդր յամրոցն Շուշի։ Եւ թողեալ իսկ ի նոյն մահճի անգէտ յումեքէ, լռելեայն երթայ ազդէ նորուն Սատխ խանին, և նա իբրև հրաւիրեալ անտի գնայ և ստուգի, տեսեալ զսատակումն կողոպտէ զամենայն զհարուստ ճոխութիւնսն զգանձսն և զերևելի արքայական մեծագին գոհարսն, և պատուիրէ նմին անձ-

* Յայնքան հանդիսագրութիւն հիւսիսականաց և ի յուսագրութիւնս ճառատաբան անձանց ոչինչ հայեցեալ Ղուկաս կաթողիկոսի, և ի գոլ նոցին ռուսաց տակաւին ի Գանձակ, յորդորմամբ գրութեան հաջի Իբրահիմ խանին առաքէ զԴաւիթ և զՅովհաննէս վարդապետսն ընծայիւք հանդերձ առ բռնաւորն քաջաբախտ ծանուցանելով և մասնաւոր իւրոց, ի շնորհումն հրովարտակի. և նա հաճութեամբ ընկալեալ՝ խելայիւք և հրովարտակաւ միամտութեան դարձուցանէ անդրէն։ Քանզի Ղուկաս կաթողիկոս այր խորախորհուրդ և զգոյշ՝ թէպէտ յառաջին նուագսն խորհէր զսոյն առնել ի դիւրութիւն չարախոհ սրտից բռնաւորին, բայց էր որ ժամանակն անպատեհ երևացուցանէր. և էր որ խանն Երևանու արգելոյր պատճառագիւք (իւիք). այլ յայս նուագ ի գոլ զօրացն ռուսաց մերձ յայսոսիկ կողմանս ըստ որում քրիստոնեայք կասկած վտանգից երկէր ազգին հայոց, մանաւանդ զի ընդ զօրացն էր Յովսէփ եպիսկոպոս Ռուսաստանու, վասն որոյ նախահոգակ եղեալ՝ միամտեցաւ ի յուզմանց խորհրդոցն իւրոց փոքու իմն դիւրութեամբ, թէև ոչ ըստ հարկին, այլ գէթ ըստ ոչ պարտաւոր երևելոյն (սևագիր)։

նապահ հարազատին չհանել ի լոյս մինչև ինքն պատրաստեցի հարկաւորօքն։

Ապա գնացեալ ի վրան իւր և տեսեալ զամենայն՝ պատրաստէ կազմէ զգունդ հեծեալ զօրաց իւրոց և ապա զեղելութեան համբաւ ի լոյս հանեալ ցիր և ցան և հալածական լինին զօրքն զիրեարս կողոպտելով՝ որով իբրև յերկաթի կապանաց զերծեալ ողորմելի բնակչացն գոհանան զարդար ակնարկութենէ վերին այցելութեան*։

Սոյն համբաւ հռչակեալ և ի մեծ բանակն՝ որ յԱրտաւիլ, շփոթին և ի միմեանց որոշեալ գնան ի տեղիս իւրեանց իւրաքանչիւր նոքա, այլ Սիւլէյման սարտար և Ջաֆարղուլի խան Խօյու և այլք մեծամեծք մնացորդօքն հանդերձ դառնան ի Դեհրան։

* Ղուկաս կաթողիկոսը գրում է Շամիր աղային Հնդկաստան. «...Այլ յետ ներքինւոյ կործանմանն մէլիք Ջումշուտն կասկածեալ յԻբրահիմ խանէն՝ որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփխիս և ընդ Յովսէփ արքեպիսկոպոսին գնացին ի դուռն նորոյ կայսեր, և մէլիք Աբովն ևս քանի հարիւր տուն ժողովրդովք իւրովք չու արար ի տունն վրաց, և կայ այժմ ի Պօլնիսու ձոր կոչեցեալ գաւառին, և Դարբանդու հայքն ևս տունք հինգ հարիւր ի դարձի զօրացն կամաւ իւրեանց չուեցին ընդ նոսա յերկիրն ռուսաց, որոց զօրպետութիւն ի Յովսէփ արքեպիսկոպոսէն ունին իմանալ...»։

«Այլ զկնի անցիցն յիշեցելոց, Երևանու նախկին իշխողն, որ կալանաւորեցեալ կայր ի ներքինւոյն, ի յաջորդ շահէն արձակեցեալ ֆէրմանօք եկն նստեալ յԵրևան արտաքոյ բերդին, յառաջ քան զսա ևս պահակք եկեալ մտին ի բերդն զգժնդակագոյնք, քան զառաջինսն... բայց ի վերայ ամենայնի, տխրութիւն մեծ է մեզ տանն վրաց տակաւին չգտանելն զանդորրութիւն, զի Հերակլէս քաջընտիր՝ արքայն վրաց թէպէտ ետես զկորուստ թշնամեաց իւրոց... սակայն ի Թէլաւ բնիկ տեղին իւր հիւանդացեալ և անդէն կայ առեալ վասն զառամութեանն, ի սմին տարւոյ փետրվարին առ Տէր փոխեցաւ... այլ ի կենդանութեանն կտակաւ աւանդեալ էր իւրոցն և ամենայն իշխանացն զաւագ որդին իւր զԳէօրկին խանն իմանալ իւրեանց արքայ ...և խանն Երևանու մտեալ ի մէջ, զթուղթ հպատակութեան գրեցոյց նմա (այսինքն սոյն Գէօրկի արքայիս) առ նոր շահն այլ քաղաքացիքն յանցեալ տարւոյ նոյեմբերին թէ յերկիւղէ յարուցման լեզկեաց և թէ մանաւանդ ի ժանտախտէն կան ի լեռնակողմն տեղիս, և դեռ չկարեն դառնալ ի քաղաքն, և նորոգ արքայն ի Կախէթ կայ. Աստուած այց արասցէ խղճալի քաղաքին նորոգութեան...»։

«Արդ՝ խոհական սիրելիդ մեր, ահա անցք կողմանցս և երկրիս այսպէս. և կացութիւն մերայնոցն ևս յայսցան վշտաւոր և լի ամենայն արհաւրօք. իսկ եղանակքն զգուշութեան և խոհեմաբար վարեցմանց՝ զորս գրեալ էիր, յայնժամ յաջողէն ի կիր առնուլ, յորժամ վերոյիշեալ դուռն այցելութեան ի բաց մնայցէր, այլ եթէ փութանակի դարձեալ փակեցաւ, անօգնականքս ի՞ւ զօրասցիմ առնել զիմն։ Ապաքէն վերստին մնամք ողորմութեանն Աստուծոյ, որ զիարդ և կամիցի, այնպէս տնօրինեսցէ վասն ազգին մերոյ»։

...«Եւ մինչ երեք աւուրք էին դառնալոյն մեր յԵրևանայ, լուր սատակման նորա ժամանեաց յԵրևան աստ, որով և աճապարեաց սարդարն կորնչել յԵրևանու, այլ կնատ մե-

Ի սոյն միջոց և Ալիղուլի խան սարդարն լուեալ զգոյժ եղբօր իւրոյ Ներքինւոյն հալածեալ ի բնակչացն Երեւանայ ելեալ դիմէ և ինքն ի Դեհրանայ, ոչ առնու գնոսա ի ներքս՝ սպասելով գալստեան Բաբախան սարդարին ի Շիրազոյ։

Յորում միջոցի Սատխ խան դաւադիրն Ներքինւոյն գնացեալ տիրէ Ջանկիանու և անցեալ պաշարէ զՂազբին, այլ Բաբախան սարտար փութացեալ մտանէ ի Դեհրան և կարգի շահ. և տեսեալ զբարձրավզութիւն Ալիղուլի խան սարդարին Երեւանայ եղբօր Ներքինւոյն, բրէ զաչս նորա. և ելեալ ի վերայ Սատխ խանին նուաճէ զնա և առնու զգոհարսն արքայական ի ձեռաց նոցին և հաշտի։

Բաբախան շահ նորոգ բազմեալն յաթոռ թագաւորութեան առաքէ անտի զկալանաւորեալն ի Ներքինւոյն զՄահմատ խանն Երեւանայ. և զՋաֆարղուլի խանն Խոյու հրովարտակաւն արքունի յիւրաքանչիւր իշխանութիւնս։

Ի սոյն թիւ ՌՄԽԶ ի 29 հոկտեմբերի ի գիշերի յեօթներորդ ժամուն մուղանցի այլազգիք ոմանք բնակիչք Ղզլթամիր գեղջ հնարիւք

ծամեծքն Երեւանու մուծին զնա ի բերդն. ի ցրուեալ զօրաց շահին ես քանի հարիւր մարդիկ եկին յարեցան ի սոյն ժանտ, որով ոգի առեալ և ես սկսաւ զժանտութիւնն ի գործ արկանել առ քաղաքացիսն և առ մեզ, մինչև երեանցիք զինուորեալ ընդդէմ դարձան. թէ ել և զնա. և նա ընդ բերդապահացն ի միասին ելեալ կռուեան. իւր թէ զմնդակն գնայր ի թագաւորել յելանել նոցա ի բերդէն՝ երեանցիք մտին ի բերդն։ Քանի աւուրց անցեալ ի վերայ Մակուայ սուլթանի որդի Հասան խանն որ առ շահն կայր, և շահվէքիլի էր կարգեցեալ երկրիս, եկն և խնդրեաց մտանել ի բերդն, սոքա չկամեցեալ պատասխանի արարին. և նա գնաց ի Նախչուան զօրս ժողովել և գալ, որոյ ի գնալն գրեցին սոքա ի Ղազախ առ վրացու որդի Ալէքսանդր՝ թէ մեզ օգնութիւն առաքեա և նա ինքն եկն քանի հարիւր արամբք ի Դրխուլաղ. բայց յառաջ քան զնա Հասան խանն եկն Նախչուանու զօրօք յայրումցւոց ես ոմանց միաբանեալ ընդ նա յարեան ի վերայ բերդին. մուղանցիք և այլք փախեան և քաղաքացիք ելեալ ընդ առաջ ընկալան. և ապա զվրացու որդին ես արովք հանեցուցին. և նա եկեալ ի սուրբ Աթոռս յուխտ Գ. օր մնաց և դարձաւ։ Իբրև զկայ էառ Հասան խանն յամսօրեայ իշխանութիւնն իւր, յետ ամենեցուն և մեք գնացաք ի տեսութիւնս։

«Երեւանու խանն Մահմատ և զԽոյու խանն Ջաֆարղուլի առաքէ շահն յիւրաքանչիւր տեղիս, և զայլ ոմն ես յիւրոցն յուղարկէ քանի հարիւր արամբք պահապանս բերդին Երեւանու, և զի ի Մահմատ խանէն երկիցս թուղթք հասին մեզ վասն գալոյն իւրոյ և բազումք գնացին ընդ առաջ, Հասան խան ել ի բերդէն և գնաց դէպ ի Խոյ։ Զկնի աւուրց բերդապահն եկեալ եմուտ ի բերդն, այլ խանն մեր արգելաւ ի Ջաֆարղուլի խանէն, որ սարդար է կարգեցեալ, որ և սաստատ ես ԵԾ զօրս էր խնդրեալ, և գնացին. և յայլոց գաւառաց ես ժողովեալ՝ յարձակեցան ի վերայ Սատխ խանի էլլիկացն և յաւարի առին զանդեայս և զոչխարս նոցա, և ահա խանն կրկին հրամանագրով շահին գայ ստուգիւ առ ի զհարկն ժողովել և յուղարկել։ Յայսքանի ամիսս վասն անտիրութեան երկրիս՝ գրեթէ հզօրքն ուտէին զանզօրսն, աւազակութեամբ, յափշտակութեամբ և երբեմն սպանմամբ ես։ ՌՄԽԶ նոյեմ[բեր]»։

իմն բացեալ զդուռն ամրոցին Օշական գեղջ՝ մտանեն ի ներքս և յարձակին ի տուն անդր, ուր ննջէր Յակոբ եպիսկոպոս Խամսեցի յաջորդականութենէն շամախեցի Յակոբ կաթուղիկոսի, անկեալ ի վերայ միաբանն զնա երկաթի վաղակաւ ի տեղիս տեղիս չարաչար, և ինքեանք փախչին աներևոյթ. զոր իմացեալ միաբանից աթոռոյն ընդ առաւօտն պատկարակ տարեալ՝ բերեն յԱթոռ այսր և յետ աւուրց ինչ արիւնաքամ եղեալ՝ վախճանի ի 3 նոյեմբ.։ Քանզի սոյն այլազգեաց գիւղ մերձ գոլով ի կալուածս Աթոռոյն ի Գետառն կոչեցեալ անդաստան, սերմանէին անդր և տիրէին իբրև ինքեանց սեպհական, այլ ընդդիմացեալ աթոռայնոցն անիրաւ նոցին բռնութեանց, և բազմիցս յետս նահանջեալ գնոսա անտի հաստատուն վկայագրութեամբ ի ձեռս սոյն անպարտ վախճանելոյս՝ որ վարէր զգործ աթոռակալութեան, և գնացեալ իսկ էր անդր վերստին վասն նոյն վիճոյ՝ առ որ հասուցին զայս չարիս անօրէնքն այնոքիկ, և մնացին իսկ անպատիժ յիշխօղացն, բստ որում և ժամանակաւորքն էին իսկ անօրէնք և զմիմեամբք ելանէին ի կեղեքել, յաւարել, ի գերել և ի սպանանել տարապարտուց։

Արդ՝ եթէ Աթոռ էջմիածնի յայսպիսի վնասեալ՝ լռէր տակաւին և չկարէր ճիկ հանել, յո՞րպիսիս ոչ տառապէին, և զի՞նչ ոչ կրէին արդեօք ողորմելի սակաւ մնացուած ժողովուրդք ազգիս ի ձեռաց անօրէն խըռտասրտաց իշխանաւորաց սեեմ և խառնիճաղանչից անտի այլազգեացն՝ զորոց վշտաց սուղ ինչ յիշատակէ Ղուկաս կաթուղիկոս ի թուղթըս իւր յասելն.— «Իսկ կացութիւն երկրիս յանցեալն և նորդենիս ի զանազան հարկապահանջութեանց և ի պէսպէս ծանր գործառնութեանց և ի սաստիկ սղութենէ հացին և ամենայն պիտոյից ի յետին դառնութիւն չքաւորութեան ժամանեալ՝ յոգիս են ապաստան և կասկածանօք ապառնի վտանգից թախծիմք առհասարակ և այլն»*.

ՌՄԽէ — 1798 թ.

Հասեալ սոցա (Մահմատ և Ջաֆարղուլի խանից) ի Դաւրէժ արգելեալ լինի անդ Մահմատ խան ի Սիւլէյման իշխողէն Դաւրիժոյ, իսկ

---

* Ղուկաս կաթուղիկոսի այդ թղթում նաև հետևեալ հատուածը կայ, որ առաջ ենք բերում սեագրից «Այլ յերրորդ աւուր գնալոյ սոցա մինչդեռ երկիցս էաք տեսեալ զմիմեանս, եղբայրն շահին մեծ սպարապետն՝ որ և ի միասում ամին եկեալն էր, եկն եմուտ երկիրս մեր, որոյ ընդ առաջ ելեալ համայն մեծամեծք Երեւանու ազդ արարին մեզ ես գնալ ...սրտամաշ տարակուսանօք գնացաք յԵրեան. և մինչ սարդարն բերեալ իջուցաք յիւրում տեղւոջ, տեսաք զայլ ոմն ծառայ շահին եկեալ ֆէրմանաւ վասն ընչից խանին մերոյ՝ որ կալանաւորեցեալ է անդ, և կայքն յարքունիս գրեցեալ։ Այնր աղագաւ դարձաք ի սուրբ Աթոռս զի զատտանօր եղեալսն յանձնեցեմք։ Եւ ի վաղին դարձեալ գնալոց եմք յԵրեան առ սարդարն, որ և թէ ի՞նչ դիտմամբ իցէ առաքեցեալ չգիտեմք. թէպէտև ի Դաւրիժոյ թուղթ էր գրեալ մեզ անտարակոյս լինի. ՌՄԽԶ, մայիսի 5»։

Ջաֆարղուլւոյն անցեալ ի տեղի իւր՝ ապստամբի ի շահէն, և չկարացեալ զոչինչ վնաս գործել անդէն, երկիցս վրդովեցուցանէ զերկիր Երևանայ, ուստի ի նուաճել զնա Սիւլէյման իշխող Դաւրիժոյ առեալ ընդ իւր և զՀիւսէյին Ղուլի խան գնայ ի վերայ նորա ի Խոյ՝ որոց զկնի յարձակի և շահն ինքնին զօրօք, վասնորոյ զանգիտեալ Ջաֆարղուլւոյն ի սոցանց աստի, ամենայն աղխիւքն և քանի հազար տուն ժողովրդեամբք իւրով խոյս ետ անտի ի կողմանս Վանայ։ Եւ զկնի անցանելոյ աւուրս ինչ գուժկան հասանէ առ շահն՝ եթէ եղբայր քո ի Շիրազ և յԱսպահան յարոյց զապստամբութիւն և լինի զօրաժողով աւասիկ. ուստի շահին հապճէպ տուեալ փութայ անդր և յառնէ ի վերայ, այլ տկարացեալ յեղբօրէն և ի զօրացն պակասեալ՝ խնդրէ ստիպաւ ի թիկունս օգնականութեան զՍիուլէյման իշխողն Դաւրիժոյ՝ որ տակաւին ի կողմանս Խոյու դադարեալ կայր, որոյ ընկալեալ զայս հրաման զՄահմատ խան Երևանայ արձակէ յիւրմէ ի տեղն իւր յԵրևան և ինքն յուղի անկեալ դիմէ առ շահն։

Զկնի գնալոյ սորա ի վրէժխնդրութիւն ապստամբին ի կողմանս Շիրազայ և Ասպահանայ ոգի առեալ Ջաֆարղուլի խանին՝ ժողովէ զզօրս ի ժողովրդոց իւրոց և ի հպատակաց, և յաւելեալ ի նոսա և զհեծեալս ի Մարաց յարձակի ի վերայ Խոյու և պաշարէ զնա՝ յորում էր իշխանաւոր եղբայր նորին Հիւսէյին խան՝ որոյ ընդդիմացեալ յարձակման նորին մինչև ազդարարութեամբ փութայ անդր յօգնութիւն և Մահմատ խան Երևանայ զօրօք իւրովք, այլ ոչինչ կարացեալ առնել թշնամեացն կամ օգնել պաշարելոցն դառնայ յետս։

Մինչև հազիւ ուրեմն ի շահէն եկեալ ընդհանուր հրամանատար և իշխող ի Դաւրէժ, և ապա յարձակեալ զօրօք ի թիկունս ազատութեան պաշարելոցն ազատէ զնոսա. և Ջաֆարղուլի խանին հալածական եղեալ անտի յամսեանն դեկտեմբերի, գնայ անդրէն առ ժողովուրդ իւր՝ զօրս ժողովեալ անոռ և գայ յերկիր Երևանայ և իջևանէ ի վերայ շամբին Սևու ջրոյ՝ որ մերձ յԱթոռ էջմիածնի յարևմուտս նորա։

Եւ ապա ինքն Ջաֆարղուլի խան ընտանեօք հանդերձ և աւելի քան եօթն հարիւր հեծելովք զօրաց գայ մտանէ յամրոց էջմիածնի իբր ի պատճառս խորհրդակցութեան իւիք ընդ Մահմատ խան Երևանայ. որոյ վասն ազդ առնէ իսկ յԵրևան, այլ կասկածեալ յիրերաց ոչ եկին առ միմեանս, բայց Մահմատ խան զքոյր իւր և զերևելի մեծամեծս դրան իւրոյ առաքէ յԱթոռ այսր առ Ջաֆարղուլի խան, զի եթէ կարևոր խորհուրդ ինչ իցեն, տեսցեն և հաստատեսցեն, այլ այնոքիկ ոչինչ հաստատեալ ի միջի յետ մնալոյ Ջաֆարղուլւոյն յԱթոռ էջմիածնի հանդերձ բազում վնասուք իբրև զաւուրս չորեքտասան՝ ելանէ և գնայ անդրէն առ պատակ ժողովուրդս իւր ի շամբս Սևու ջրոյն։

Այլ ըստ որում տարագրեալ էր ի սահմանաց անտի Խոյու չվստահանայր անդրէն գնալ անդր. և զի իշխողս և պահապանս իսկ կարգեալ էին ի նմա, վասնորոյ տատանեալ տարուբերէր այսր անդր հանդերձ ժողովրդովք իւրով, մինչև ի վերջոյ գնայ դադարի ի լեառն Բարդող (Թաքալթու) և ամրացուցանէ զտուն իւր յանմատչելին վայր յԵրասխաձոր ի բերդն (ի ռամկաց կոչեցեալ Քեօրօղլուի), և յետ իբր յեօթն ամաց՝ թողեալ զայն տեղի անցանէ ժողովրդովք իւրովք ընդ Երասխ և եկեալ բնակի յամրոցն Թալնոյ և զժողովուրդ իւր սփռէ զստորոտովք Արագած լերին ի գիւղօրայս վայելուչ վայրացն, ուրանօր և յառնել ի վերայ՝ զօրացն Երևանայ զօրավարութեամբ կուրացելոյն Քեալպալի խանին՝ որ ընդ Մահմատ խանին նստէր յԵրևան, յարձակեալ ի վերայ ընդ կրունկն հալածական առնէ, և ապա ի նոյն ամի 1804 ի գալ մեծի կուսակալին Տփխիսոյ Պաւել Դիմիտրիչ Ցիցիանովի և վերայ Երևանայ» եկեալ առ նա հնազանդի ընդ պաշտպանութեամբ նորա յամսեանն յուլիսի։

«Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ա–Բ,
Թիֆլիս, 1893, էջ 26—42։

* Ղուկաս կաթողիկոսի յիշատակարանից.—«Երկիրս վրաց յետ առաջնոյ փորձութեանց, ի մահատարաժամէ ես յոյժ նեղեցաւ. (որպէս Գանձակ և Արցախ ևս կարի յոյժ). մինչև մեծ թախանձանօք քանիցս խնդրեաց նոր արքայն զաւրբ Գեղարդն. և մեք առաքեցաք ձեռամբ Յովհաննէս վարդապետին ի նոյեմբ. Դ, որոյ ի ժամանելն Աստուծոյ ողորմութեամբ փարատեալ է ախտն. և ցրուեալ քաղաքացիքն ժողովին. բայց թող զի ներքս իւրեանց տարաձայնութիւնն ի շահէն ևս կասկած գոյ, և սակայն ի հիւսիսոյ ևս խնամելոյ և օժանդակելոյ յոյս կայ։ Խոյու Հիւսէին խանն մեռաւ, և Ջաֆարղուլին տիրեաց երկրին. բայց ի շահէն ապստամբի. և զշահէն կրկին գալ ասեն. և երկիրն յաւէր դիմէ. իսկ մեր իշխողն ևս ապստամբութեան նշան երևեցուցանէ, և երկրիս բնակիչքն ի նեղութեանց բնաւ պակասութիւն չունին. և այլն։

1799 ապրիլ 19»։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Աղա Մահմատ խան—Աղա Մուհամմադ խան (1742—1797), 1791—1797 թթ. միաստորեն Իրանի տիրակալ, ղաջարական դինաստիայի հիմնադիր։ XVIII դ. 80-ական թվականներից գլխավորել է ղաջարների պայքարը Իրանի գահի համար, որը 1794 թ. ավարտվեց հաղթանակով։ Պարսկական գերիշխանությունը Անդրկովկասում վերահաստատելու միտումով 1795 թ. արշավեց Արցախ, Երևան և Շամախի։ Անհաջողություն կրելով Շուշի բերդի մոտ՝ արշավեց Վրաստան։ Կրծանիսի ճակատամարտում, 1795 թ. սեպտեմբերի 11-ին, ունենալով հսկայական թվական գերազանցություն, հաղթեց Հերակլ II-ի վրացական փոքրաթիվ բանակին, գրավեց Տփխիսը, կողոպտեց քաղաքն ու գերեվարեց հազարավոր բնակիչների, զավթիչներին զոհ գնացին հազարավոր խաղաղ բնակիչներ։ Վերադառնալով Վրաստանից՝ թագադրվեց շահ։ 1797 թ. երկրորդ անգամ արշավեց Անդրկովկաս, մտավ Սյունիք, գրավեց Շուշի բերդը։ Աղա Մուհամմադ խանի բռնություններն ու դաժանությունները նրա դեմ հանեցին նույնիսկ մոտիկ և հավատարիմ մարդկանց, որոնց ձեռքով էլ նա Շուշի բերդում սպանվեց։ Հիմքեր կան կարծելու, որ այդ դավադրությունը նրա դեմ կազմակերպել էր Հերակլ II։

2. Իբրահիմ խան—Իբրահիմ խալիլ խան (1757—1805 թթ.), XVIII դ. 40-ական թվականներին Արցախ ներթափանցած Ջիվանշիր ցեղի պետ Փանահի որդին, որը վերացրեց տեղի հայ պետականության բեկորները՝ խամսայի մելիքությունները։ Իբրահիմը չհպատակվեց Աղա Մուհամմադ խանին և Արցախում 1795 թ. գլխավորեց նրա դեմ տեղի ժողովրդի պայքարը, սակայն 1797 թ. լքեց Շուշի բերդը, այն թողնելով բախտի քմահաճույքին։

3. Շահամիր աղա—նկատի ունի Շահամիր Սուլթանում Շահամիրյանին (1723—1797 թթ.), որը XVIII դ. երկրորդ կեսի հայ առաջադիմական մտքի և հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչներից է։ Իր հասարակական-քաղաքական գործունեությամբ, դավանած գաղափարներով նա բացառիկ տեղ ունի հայ դեմոկրատական-լուսավորական մտքի պատմության մեջ։ Շ. Շահամիրյանը Մադրասում գործող հայրենասիրական-դեմոկրատական խմբի ղեկավարն էր։ Նրա գրչին է պատկանում «Տետրակ, որ կոչի Նշավակ» աշխատությունը, որը Մադրասի հայ համայնքի ինքնավարության կանոնադրությունն էր, կազմված բուրժուա-դեմոկրատական սկզբունքներով։ Շ. Շահամիրյանը Հայաստանն օտարակալության լծից ազատագրելու ջերմ ջատագովն էր և այդ նպատակին հասնելու միջոցը նա համարում էր հայ-վրացական զինակցությունը՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական նշանակալից աջակցությամբ հանդերձ։ Նա ապագա ազատագրված Հայաստանում բուրժուա-դեմոկրատական կարգերի կողմնակից էր, իր այդ հայացքները նա շարադրել է «Որոգայթ փառաց» հռչակավոր աշխատության մեջ։ Նա հեղինակն է նաև հայ-ռուսական դաշնագրի նախագծի, որը շարադրված է նրա լուսավորական-դեմոկրատական սկզբունքների համաձայն։ Շ. Շահամիրյանը սերտ

կապեր ուներ Հերակլ II-ի, Հ. Արղության, իսկ վերջինիս միջոցով նաև ռուսական արքունիքի հետ։

4. Հովսեփ արքեպիսկոպոս—նկատի ունի Հովսեփ Արղությանին (1743—1801 թթ.) հայ եկեղեցական և քաղաքական գործիչ։ 1780 թ. մասնակցել է Գ. Ա. Պոտյոմկինի հրավիրած խորհրդակցությանը, որտեղ քննարկվել է նաև Հայաստանը թուրք-պարսկական տիրակալությունից ազատագրելու հարցը։ 1783 թ. նա մշակել է հայ-ռուսական դաշնագրի նախագիծը, որի համաձայն Ռուսաստանը պիտի վերականգներ հայ անկախ թագավորությունը, որը անցնելու էր Ռուսաստանի հովանավորության ներքո։ 1796 թ. ռուսական բանակի Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ կոչ է արել հայ ժողովրդին օգնել ռուսական բանակին։ Հ. Արղությանը գործուն մասնակցություն է ունեցել 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրի կնքմանը։

5. Կայսր Հովսեփ—նկատի ունի Ավստրիայի միապետ, «Սրբազան հռոմեական կայսրության» կայսր Յոզեֆ II-ին (13/3—1741—20/2—1790 թթ.), որը գահակալել է 1765—1790 թթ.։

6. Աղա Հովհաննես—նշանավոր Լազարյան տոհմի ներկայացուցիչ (1735—1801 թթ.), ականավոր գործիչ, նշանակալից դեր է կատարել հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

7. Լեոպոլ—նկատի ունի Ավստրիայի միապետ, «Սրբազան հռոմեական կայսրության» կայսր Լեոպոլդ II-ին (5/5—1747—1/3—1792 թթ.), որը կայսր էր (1790—1792 թթ.)։ Կնքելով Սիստովի հաշտության սեպարատ պայմանագիրը Թուրքիայի հետ, որի դեմ Ավստրիան պատերազմում էր Ռուսաստանի հետ դաշնակցած, նա հնարավորություն ստացավ միջամուխ լինելու հեղափոխական Ֆրանսիայի գործերին։

8. Ումմա խան—XVIII դ. վերջին քառորդին Ավարիայի խան Ումմա կամ Օմար, որը Թուրքիայի սադրանքով ավերիչ ասպատակություններ էր կատարում Արևելյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի վրա, հատկապես կործանարար էր 1785 թ. արշավանքը։

4

9. Արցախու բռնավորին—տե՛ս ծանոթագրություն № 2։

10. Արքան վրաց—իմա՝ Հերակլ II, 1744—1762 թթ. Կախեթի, իսկ 1762 թ. Քարթլ—Կախեթի միացյալ թագավորության արքա մինչև 1798 թ.։ 1783 թ. հուլիսի 24-ին Հերակլ II կնքեց Գեորգիևսկի դաշնագիրը, որով Քարթլ-Կախեթի թագավորությունը անցավ Ռուսաստանի հովանավորության ներքո։

5

11. Հովհաննես աղա—տե՛ս ծանոթագրություն № 6։

12. «...յորմէ հանեալ զթագն, զաթոռն և զայլս, որք յինքնակալ թագուհւոյն յղեալ պարգևս...»,—նկատի ունի այն իրողությունը, որ 1783 թ. Գեորգիևսկի դաշնագիրը վավերացնելու առթիվ 1784 թ. հունվարին Եկատերինա II ուղել էր հղել Հերակլ II-ին՝ վերջինիս թագավորական իշխանությունը հավաստող պարգևներ։

13. Դեգոփալե—վրացերեն «թագուհի» բառն է, խոսքը վերաբերում է Հերակլ II-ի կնոջը՝ թագուհի Դարեջան Դադիանիին։

14. «...իշխանաց իշխանի քաղաքի մելիքի խոջայ Բեհբուդեան...»—մելիքության պաշտոնը Տփղիսում գոյություն է ունեցել մոնղոլական տիրապետության ժամանակներից և գոյատևել է մինչև XIX դարի առաջին քառորդը։ Մելիքները գլխավորում էին քաղաքի տնտեսական և վարչական կառավարչությունը, լինելով հայ առևտրա-արհեստ

տավորական դասի պարագլուխը, նրանք հաճախ համատեղում էին նաև քաղաքի մամասախլիսի (տանուտերի) պաշտոնը։ Սկսած 1621 թ. մինչև XIX դ. առաջին քառորդը Տփղիսի մելիքներն էին հայազգի խոջա Բեհբուդյանների իշխանական տան ներկայացուցիչները, որոնք նշանակալից դեր են ունեցել Քարթլ-Կախեթի թագավորության տնտեսական և քաղաքական կյանքում։

15. Մինիշկար—մինիշբարբաշի, արքունի պաշտոն Քարթլ-Կախեթի թագավորությունում, բառացի նշանակում է բազեպան, բազեպանների պետ։ Այս պաշտոնը ժառանգաբար ստանձնում էին խոջա Բեհբուդյան իշխանական տան ներկայացուցիչները։

16. Աշխարհբեգ և Աղա—խոջա Բեհբուդյան տոհմի ներկայացուցիչներ, հայր և որդի, որոնք հաջորդաբար եղել են Տփղիսի մելիքները XVIII դ. առաջին կեսին (տե՛ս *Robert H. Hewsen*, The Princes Bebut'ašvili, Meliks of Tiflis, Revue des Etudes Armeniens, t. XI, Paris, 1975—1976, p. 292—293)։

6

17. «Կայսրուհին ահա բազում զորութեան կառկառեաց առ թագաւորն վրաց և հրամայեաց արձակել առ նոսա զզօրս»—նկատի ունի ռուսական զորքերի 1796 թ. արշավանքը Վ. Զուբովի գլխավորությամբ։ Սակայն Եկատերինա II-ի մահանալուց հետո, նորընծա կայսր Պավելը ետ կանչեց ռուսական զորքերը Անդրկովկասից. հայ և վրաց ազատագրական գործիչների հույսերը այս անգամ էլ չարդարացան։

9

18. Մէլիք Մէժլում—նկատի ունի Արցախի (Ջրաբերդ գավառի) մելիք Մեջլումին, որը, պայքարելով իր հայրենի տիրույթը Իբրահիմ խանից ազատելու համար, հարեց Աղա Մուհամմադ խանին։ Մելիք Մեջլումի այս վարքագիծը դավաճանություն էր ոչ միայն վրաց, այլև բուն հայ ժողովրդի հանդեպ։

19. Տափիթաղ—հին Տփղիսի թաղամասերից, քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, որը ստացել էր հայացի այդ անվանումը շնորհիվ այն իրողության, որ Տփղիսի այն ժամանակվա բնակչության մեծ մասը հայերից էր բաղկացած։ Վրացերեն այն կոչվում էր Կալաս ուբանի (Կալի թաղ)։ (Տե՛ս, მამისა ბერძნიშვილი, თბილისის გარეგანი სახე XVIII საუკუნეში, თბილისი, 1965, էջ 53)։

10

20. Կուտովիչ—Իվան Վասիլևիչ Գուդովիչ (1741—1820 թթ.) գեներալ-ֆելդմարշալ, XVIII դարի 90-ական թվականներին Կովկասյան գծի ռուսական զորքերի հրամանատար, 1806 թ. Անդրկովկասում գտնվող ռուսական զորքերի հրամանատար։ 1809—1812 թթ. Մոսկվայի կայազորի հրամանատար, պետական խորհրդի անդամ, սենատոր։ 1812 թ. պաշտոնաթող։

21 «...գրելոց եմ գրաֆին...»—հավանաբար նկատի ունի կոմս Պլատոն Ալեքսանդրովիչ Զուբովին (1767—1822 թթ.), որը XVIII դ. 90-ական թվականներին մեծ հեղինակություն ուներ ռուսական արքունիքում։

22. Սուվորով—Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորով (24/11—1729—1815, 1800 թթ.) ականավոր ռուս զորավար. սույն բնագրում ակնարկվում է այն իրողությունը, որ XVIII դ. 80-ական թվականներին նախապատրաստվում էր արշավանք դեպի Անդրկովկաս և Պարսկաստան, այդ արշավանքը սկզբնապես պիտի գլխավորեր Ա. Վ. Սուվորովը, որը սերտ կապեր է հաստատում Հ. Արղությանի, Լազարյանների հետ, քանի որ արշավանքի նպատակներից մեկը հայկական պետականության վերականգնումն էր լինելու։

23. Մուրթազղուլի խան—նկատի ունի Աղա Մուհամմադ խանի եղբորը՝ Մուրթազա Ղուլի խանին, որը նրա քաղաքական հակառակորդն էր և արդեն 1785 թ. ցանկություն էր հայտնել Ռուսաստանի հովանավորության ներքո անցնել։ Պարտություն կրելով Աղա Մուհամմադ խանից, նա 1792 թ. քաղաքական ապաստարան գտավ Ռուսաստանում, 1796 թ. Մուրթազա-Ղուլի խանը ռուսական զորքերի հետ Անդրկովկաս եկավ, որին պիտի շահ հռչակեին՝ Աղա Մուհամմադ խանին տապալելուց հետո, սակայն Եկատերինա II-ի մահվանից հետո Պավել I դադարեցրեց արշավանքը և ետ կանչեց ռուսական զորքերը, որոնց հետ Աստրախան վերադարձավ նաև Մուրթազա Ղուլի խանը։ (Տե՛ս ზ. შარაშანიძე, ირანი XVIII საუკუნის მეორე ნახევარში, თბილისი, 1970)։

24. Կատածի եղբայրն—նկատի ունի Աղա Մուհամմադ խանի եղբորը՝ Ալի Ղուլի խանին, որը XVIII դարի 80-ական թվականների վերջին և 90-ականի սկզբներին պայքարում էր Աղա Մուհամմադ խանի դեմ, սակայն 1794 թ. հոկտեմբերի 23-ին Քիրմանի մոտ պարտություն կրեց և վերացավ քաղաքական ասպարեզից։

12

25. Լեթֆալի խան—Լութֆ Ալի խան, Զանդ տոհմի վերջին ներկայացուցիչ, Շիրազի իշխող, Իրանի գահի հավակնորդ, Աղա Մուհամմադ խանի հակառակորդ։

26. «Յայնժամ արձակէ Հերակլ արքայն վրաց Բագրատունւոյ զինեալ և զթոռն իւր ընդ վեց հազար զօրօք»։ Այս հաղորդումը չի համապատասխանում պատմական ճշմարտությանը։ Այդ ժամանակ Քարթլ-Կախեթի թագավորությունը ի վիճակի չէր զորական օգնություն ցույց տալու Երևանի խանությանը (տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, 1958, էջ 140—142)։

27. «...ի վերայ Սղնաղ քաղաքի...»—անշուշտ նկատի ունի Արցախի Շուշի քաղաքը, որը XVIII դ. հաճախ Սղնաղ էր անվանվում, այնտեղ նույն դարի 20—30-ական թվականներին գոյություն ունեցած ռազմաքաղաքական դիմադրական ամրությունների (սղնաղների) պատճառով։

28. Լաք—խոշորացված հաշվի միավոր ռուպիներով, որ կիրառվում է Հարավ-արևելյան Ասիայի մի շարք երկրներում։ 100 հազ. ռուպին հավասար է 1 լաքի։

29. «...զի երկրորդ Շահբազի պատահեցաք վտանգաւ...»—նկատի ունի պարսից շահ Աբբաս մեծ հորջորջյալին, որը 1603—1605 թթ. Արևելյան Հայաստանից մոտ 300 հազ. հայեր բռնի գաղթեցրեց Պարսկաստան։

13

30. Նիթալի խան—նկատի ունի Լութֆ Ալի խանին։

31. Ղուկաս կաթողիկոս—Ղուկաս Կարնեցի, որը եղել է ամենայն հայոց կաթողիկոս 1779—1799 թթ., այնպես որ Ոսկերչյանը սխալվում է, երբ նշում է, թե Քերիմ խանը իշխել է մինչև Ղուկասի կաթողիկոսության երկրորդ տարին՝ 1780 թ.։ Ղուկաս կաթողիկոսը սերտ կապեր ուներ վրաց արքունիքի, Հ. Արղությանի, Շ. Շահամիրյանի և Լազարյանների հետ, իսկ վերջիններիս միջոցով նաև ռուսական արքունիքի հետ։

15

32. Նադր—նկատի ունի Թահմասպ Ղուլի (Նադիր շահին—1688—1747 թթ.) Աֆշար ցեղից, որը Իրանի շահն էր 1736—1747 թթ.։

33. Գերմանացոց կայսրն—նկատի ունի Լեոպոլդ II-ին։ Տե՛ս ծանոթագրություն № 7։

34. Բիւզանդիոն—խմա՝ Կոստանդնուպոլիս։

35. «...հնարս խորհեցաւ ըստ աղուեսաբարոյութեան իւրում...»-նկատի ունի այն հանգամանքը, որ Աղա Մուհամմադ խանը 1795 թ. հունիսին «դեսպաններ» հղեց Ռուսաստան՝ դիվանագիտական ուղով պարզելու համար, թե ինչ վերաբերմունք ունեն ռուսական կառավարությունը՝ զորական օգնության մասին Հերակլ II-ի բազում խնդրանքների նկատմամբ։ Երբ «դեսպանները» հայտնվեցին Կովկասյան գիծ՝ գեներալ Ի. Գուդովիչի մոտ, ապա պարզվեց, որ նրանք պատշաճ լիազորագրեր չունեն։ Ի. Գուդովիչը ետ ուղարկեց «դեսպաններին», որոնց իրական նպատակը ռազմական հետախուզությունն ու իրենց ստահող հավաստիացումներով Ի. Գուդովիչին մոլորության մեջ գցելն էր, որը նշված անձանց ետ ճանապարհելիս նրանց բանավոր զգուշացրեց, թե Վրաստանը գտնվում է Ռուսաստանի հովանավորության ներքո և Աղա Մուհամմադ խանը չպիտի համարձակվի հարձակվել նրա վրա։

36. Վալին Վրաստանեայց—խմա՝ Հերակլ II արքան։

37. «...մնամ կրկնական հրամանին Թագուհւոյն մեր...»—ակնարկում է, որ Ի. Գուդովիչը սպասում էր ռուսական կառավարության կոնկրետ հրամանին՝ Վրաստանին զորական օգնություն ցույց տալու համար։ Այդ որոշումը, որ կայացել էր 1795 թ. սեպտեմբերի 4-ին, Ի. Գուդովիչը ստացավ նույն թվականի հոկտեմբերի 1-ին, երբ արդեն Տփխիսը Աղա Մուհամմադ խանի հրոսակները հրո ճարակ էին դարձրել, իսկ բնակչությանը մասամբ կոտորել, մասամբ էլ գերի տարել։

38. «Արքայն բացագլխից...»— նկատի ունի Իմերեթի (Արևմտյան Վրաստան) թագավոր Սոլոմոն II-ին (1790—1805 թթ.), որը 1790 թ. ճանաչել էր իր պապի՝ Հերակլ II-ի քաղաքական առաջնությունը և միացել 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրին։ «Բացագլխից» բառը թարգմանություն է թուրքերենից, որոնք Իմերեթը անվանում էին Բաշի-աչուղ, իսկ բնակիչներին բաշխաչուղցիներ (բացագլուխներ)։

Այստեղ Սոլոմոն II-ի օգնական զորքի թիվը խիստ ուռճացված է, իրականում նա մոտ 2000 զինվոր էր բերել իր հետ։

39. «Որ ըստ օրէ փաղչելով՝ հազիւ ուրեմն մնացին 1000-քն...»—տե՛ս ծանոթագրություն № 38։

40. «Գարրիէլ մայիօր փրիմէր. վրացի սէքօնդ մայիօրն Գիօրգի»—Հերակլ II-ի հրետանու հայազգի սպա, որը հերոսի մահով ընկավ Կրծանիսի ճակատամարտում։ Նկատի ունի Հերակլ II-ի հրետանու պետ Գիորգի Գուրամիշվիլուն, որը նույնպես զոհվեց Տփղիսը պաշտպանելիս։

41. «...զոր տեսեալ ուրումն ամրոցապահի յատուկ հաւատարիմ արքային...»—հավանաբար խոսքը Հերակլ II-ի բերդապահ Տփղիսի մոքալաք հայազգի Աղալոյին է վերաբերում։

42. «...զի զաւաճանեալ էր զնորուն փառահեղ ինքնակալութեանն զկոզմնակալն, որ ի Մօզզօք»...—նկատի ունի Կովկասի ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Ի. Գուդովիչի անվճռական վարքագիծը, որը Հերակլ II-ի բազում դիմումներին անհարկի հանգստացուցիչ խոսքերով էր պատասխանում, թե շահը չի համարձակվի հարձակվել Վրաստանի վրա։

43. Դուռն Ալանաց—խմա՝ Կովկասյան լեռնաշղթայի Դարիալի լեռնանցքը, որով Ռուսաստանը կապվում էր Վրաստանի հետ։ Ալանաց է անվանում հեղինակը, քանի որ այդտեղ բնակվում են օսեր՝ ալանների հետնորդները։ «Դուռն Ալանաց»—նույնիմաստ պարսկերեն «Դար-ի Ալան» բառակապակցության հայերեն թարգմանությունն է։

44. Աշոտ Թագաւոր—նկատի ունի Աշոտ III Ողորմածին (ծն. թ. անհայտ—977), հայոց թագավոր 953-ից։ Սրա օրոք Հայաստանն ապրում էր տնտեսական և մշակութային վերելք։ Նա Անին դարձրեց Հայաստանի մայրաքաղաք։ Հաջողությամբ ետ է մղել օտարերկրյա նվաճողների հարձակումները։

45. Անոյշ Թագուհի—նկատի ունի Աշոտ III Ողորմածի տիկնոջը՝ հայոց թագուհի Խոսրովանույշին, որը 966 թ. հիմնել է Սանահնի, իսկ 976 թ. Հաղպատի վանքերը, որոնք շուտով դարձան գիտակրթական կենտրոններ։

46. Յօհան Օձնեցի—VII դարի վերջի և VIII դ. սկզբի հայ եկեղեցական գործիչ և փիլիսոփա. 717—729 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս, հանդես է եկել Բյուզանդիայի համաձուլարար քաղաքականության դեմ։ Դաժան պայքար է մղել պավլիկյանների դեմ։ Հ. Օձնեցու երկերից նշանակալից է «Կանոնգիրքը»։

47. «...Կարգեա զորդիդ ճակատելոյ զԳէորգն—խմա՝ արքայազն Գիորգին, Քարթլ-Կախեթի հետագայի թագավոր Գիորգի XII։

48. «Ջթոռն Դաւիթ»...—խոսքը Դավիթ Բագրատունի, Գիորգի XII-ի ավագ որդու մասին է, որը Կրծանիսի ճակատամարտում վրացական զորքի աջ թևի հրամանատարն էր։

49. «...ՋԴաւիթ փեսայէն քո ոգեմ...»—խոսքը Դավիթ Օրբելիանի իշխանի մասին է, որը Հերակլ II-ի դստեր ամուսինն էր։

17

50. «Ռուսաց Ներսաոինեայ կայսրուհւոյն...»—խմա՝ Եկատերինա II։

51. «...ի չորրորդ ամի ազգովին ապստամբութեան գաղղիացւոց...»—այսինքն՝ ֆրանսիական բուրժուա-դեմոկրատական 1789 թ. հեղափոխության չորրորդ տարում, այն է՝ 1792 թ.։

52. «...առ կայսն գերմանացւոց...»—տե՛ս ծանոթագրություն № 7։

53. «...կոչեաց յօգնութիւն զփոքր վրաց իշխան Զաչխապաշու զՍաղոմոն...»—նկատի ունի Իմերեթի թագավոր Սոլոմոն II-ին։ Տե՛ս ծանոթագրություն № 38։

54. «Ահա մետասան հազարքն զօրաց Սաղոմոնի ի փախուստ ցրուեցան...»—տե՛ս ծանոթագրություն № 38։

55. «Կացեալ անդ քաղաքաւեր բնաւորին իւրև ամիսներիս...»—այս վկայությունը չի համապատասխանում իրականության. Աղա Մուհամմադ խանը Տփղիսը ավերելուց հետո, կարճ ժամանակում ետ է վերադառնում Պարսկաստան, որտեղ նրա դեմ ապստամբություն էր ծագել։

18

56. «...զԴուռն Երկաթի...»—նկատի ունի Դերբենդ քաղաքը, որի մոտով անցնող ճանապարհով Ռուսաստանը կապվում էր Անդրկովկասի հետ։

57. «...հարաղատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն...»—նկատի ունի Պավել I (1796—1801 թթ.) կայսրին, որը դադարեցրեց Վ. Զուբովի հրամանատարությամբ ռուսական զորքերի արշավանքը և նրանց Անդրկովկասից ետ կանչեց։

58. «Նախչուանու իշխօղն...»— խմա՝ Քյալբալի խանը, որը XVIII դ. վերջին քառորդում Նախիջևանի խանն էր։

59. «...խողխողեցեալ էր ի սպասաւորաց իւրոց...»—նկատի ունի Աղա Մուհամմադ խանի սպանությունը իր սպասավորների ձեռքով, դավադրությունը գլխավորում էր Սադղ խանը։

60. Բաբախան—նկատի ունի Բաբա-խանին (1766—1834 թթ.), Աղա Մուհամմադ խանի եղբոր որդին, որը հաջորդեց նրան և Ֆաթհ Ալի շահ անվամբ (1797—1834 թթ.) գահակալեց Իրանում։

61. «...յորժամ վերոյիշեալ դուռն այցելութեան ի բաց մնացէր...»—այսինքն՝ եթե ռուսական զորքերի արշավանքը դեպի Անդրկովկաս շարունակվեր և հաջողությամբ պսակվեր։

62. «...պարոն Մանուչար Գուրջաարը»—հավանաբար խոսքը վերաբերում է հայազգի իշխան Մանուչար Գորջաայի Թումանյանին, որը մդիվանբեգի (արքունի ատենադպրի) պաշտոն ուներ Հերակլ II-ի արքունիքում։

19

63. «...նոցա Քէրիմ խան Շիրազու...»—նկատի ունի Քերիմ խանին, որը երկարատև գահակալական կռիվներից հետո, գրեթե ողջ Իրանը ենթարկեց իրեն և իշխեց վեքիլ (խնամակալ) հորջորջմամբ 1763—1779 թթ. ընթացքում։

64. «...կինն իւր Դիդիֆալ...»—նկատի ունի Դարեջան թագուհուն։ Դիդիֆալ վրացերեն դեդոփալի (թագուհի) բառի աղավաղված ձևն է։

65. «...վասն. անմիաբանութեան որդւոցն և իշխանացն...»—հեղինակը նկատի ունի այն պարագան, որ գահը ժառանգելու շուրջ լուրջ տարաձայնություններ կային վրաց արքունիքում։ Այս իրողությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ թշնամուն դիմագրավելու գործը կազմակերպելու վրա։ «Վրաց թավադ-ազնվականությունը,—գրում է պատմաբան Ի. Ցինցաձեն,—ներքին հակասություններով նպաստեց հայրենիքի անկախությունը կորցնելու գործին և երկրի «ողբերգության» մեջ թավադների (իշխանների) մի մասը իր «վաստակն» է ներդրել. այդ ակներև է և ապացուցելու հարկն այժմ ամենևին չկա» (Տե՛ս, ი. ცინცაძე, აღა-მაჰმად-ხანის თავდასხმა საქართველოზე, თბილისი, 1969, էջ 25)։

Եթե իրավացի է պրոֆ. Ի. Ցինցաձեն վրաց կենտրոնախույս ուժերի դերի գնահատման խնդրում, ապա չի կարելի համաձայնել նրա հետ Հ. Արարատյանի վրա բարդած մեղադրանքի հարցում։ «Հ. Արարատյանի անվան շուրջ ստեղծված զրույցի շարամիտ հերյուրանք լինելն ապացուցող կռվաններից մեկն էլ նրա անսահման հայրենասիրության փաստն է, ամուր համոզմունք դարձած ռուսական կողմնորոշումը։ Նա իր հայրենիքում անձամբ ճաշակել էր պարսից բռնակալների հարստահարման ու ճնշումների ողջ դառնությունը, հենց այդ բռնակալության ճիրաններից Ռուսաստան փախչելու ճանապարհին է, որ ստիպված էր մի քանի ամիս մնալ Վրաստանում։ Անկարելի է պատկերացնել, թե նա կարող էր որևէ աջակցություն ցույց տալ պարսից զորքերին։ Անցյալ դարի 40-ական թթ. որոշակի միտումներով հորինված և նրան վերագրված հերյուրանքները պետք է մերժել վճռականորեն» (Գ. Ա. Ջորանյան, Նոր նյութեր Հարություն Արարատյանի կյանքի ու գործունեության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 93, ավելի հանգամանորեն տե՛ս նույն հոդվածը)։

66. «...զօրն Բաշաշուխի, որ ընդ իւր և էին անկեալ ի վերայ քաղաքին կողոպտէին...»—հեղինակը նկատի ունի Սոլոմոն II-ի զորքի այն դասալիքներին, որոնք Տփղիսից փախած բնակիչների նկատմամբ անվայել այդ արարքն էին կատարել։

67. «...ի յերկրորդ աւուրն, որ էր սեպտեմբերի 14...»— հեղինակը շփոթում է. Կրծանիսի ճակատամարտը ոչ թե սեպտեմբերի 14-ին, այլ նույն ամսվա 11-ին է տեղի ունեցել։

68. «...ապաւինի Յօմէի խանն Լէզկեաց...»—իմա՝ Ումմա (Օմար) խանն Ավարիայի։

69. «...զմէլիք Ջիմշիտ զորդին մէլիք Շահնազարի...»—Արցախի Վարանդա գավառի մելիք Շահնազարի որդին է, որի հայրը եղբայրասպանությամբ դարձել էր հիշյալ գավառի մելիքը, սրա աջակցությամբ XVIII դ. 40-ական թվականների վերջին Արցախ մուտք գործեց Ջիվանշիր վաչկատուն ցեղը Փանահի գլխավորությամբ։ Այդ ժամանակվանից սկիզբ առավ Արևելյան Հայաստանի Արցախ աշխարհում հիշյալ Փանահի հիմնադրած խանությունը, որը, ի վերջո, դարձավ Արցախում հայ պետականության բեկորների՝ մելիքությունների վերացնողը։ Աղա Մուհամմադ խանի դեմ Իբրահիմ խանի հետ միասին կռվում էր նաև մելիք Ջումշուդը, որը և Իբրահիմի փախուստից հետո միանում է ռուսներին։ Ուրեմն մելիք Ջումշուդի սպանվելու փաստը ճիշտ չէ։

70. Հեղինակն ակնարկում է այն պարագան, որ XVIII դ. հայ ազատագրական շարժման գործիչները Հայաստանն օտարակալության լծից ազատագրելու խնդրում որոշակի ակնկալություններ ունեին նաև Վրաստանից։

20

71. Մաղթա—հարկ, որ գանձում էին գյուղացիներից XVIII դ. բնամթերքով (հացահատիկ) և դրամով։

22

72. Սիմէօն կաթողիկոս—Սիմեոն Երևանցի կաթողիկոս (1763—1779 թթ.) որը 1766 թ. դիմելով Եկատերինա II-ին ռուսահայ թեմը դարձրեց էջմիածնահպատակ։ Նրա օրոք էջմիածնում հիմնարկվեցին տպարան և թղթի գործարան։ Ս. Երևանցին սերտ կապերի մեջ էր Հերակլ II-ի հետ։

23

73. «... առ վէզիրն նորա քնեազ Ալեքսանդր Անդրեիչ Բեզպօրօտկին...»—նկատի ունի կանցլեր իշխան Ա. Ա. Բեզբորոդկոյին (1747—1799 թթ.)։

74. Տե՛ս ծանոթագրություն № 72։

25

75. Պլատոն արքեպիսկոպոս Ռուսաց—նկատի ունի Մոսկվայի միտրոպոլիտ Պլատոնին (Լեվշին) (1737—1812 թթ.), որն Եկատերինա II-ի մոտ անձանցից էր։

28

76. «...առ վրացու որդի Ալէքսանդրն...»—նկատի ունի Հերակլ II-ի որդի՝ արքայազն Ալեքսանդրին։

31

77. «...զթագն Ղազար կաթողիկոսի...»—նկատի ունի կաթողիկոս Ղազար Ջահկեցուն (1738—1751 թթ.)։

78. Մելիք Ապով—Արցախի Խաչեն գավառի մելիք XVIII դ. վերջին քառորդում, որը հալածված լինելով Իբրահիմ խանից, ի վերջո հաստատվեց Վրաստանում։

43

79. Եփրեմ պատրիարգ—նկատի ունի Եփրեմ Ա Ձորագեղցուն (Տեր-Հովհաննիսյան—1748—1835 թթ.) կաթողիկոս ամենայն հայոց (1809—1830 թթ.)։ Նախքան կաթողիկոս ընտրվելը եղել է Հնդկահայ թեմի նվիրակ, ապա և ռուսահայ թեմի (1801—1809 թթ.) առաջնորդ։

44

80. Գանձակի դուռը—հին Տփղիսի չորրորդ կամ արևելյան դարպասը, որտեղից ծայր առնող ճանապարհով այն կապվում էր Գանձակի և Արևելքի այլ քաղաքների հետ։ Գտնվում էր ներկայիս Բուսաբանական այգու մուտքի մոտ բաղանիքների թաղամասի կողմից։ (Տե՛ս, მ. ბერძნიშვილი, նշվ. աշխ., էջ 37).

81. Թահմազ Ղուլի խան—տե՛ս ծանոթագրություն № 32։

82. Թուրքի մեյդան—հին Տփղիսի ներքին թաղամասի կենտրոնական հրապարակը այդ անվանումն էր ստացել, որովհետև շրջակայքում մասամբ մահմեդականներ էին բնակվում և մոտակայքում էլ նրանց մզկիթն էր։ Այն կոչվել է նաև «ներքև» կամ «բերդի հրապարակ»։ (Տե՛ս მ. ბერძნიშვილი, նշվ. աշխ., էջ 9, 15, 26)։

83. Այստեղ Հ. Արարատյանը ակնարկում է այն, որ Դարեջան թագուհին իր մերձավորներով թողնում է Տփղիսը և գնում Կախեթ՝ Կրծանիսի ճակատամարտից առաջ։ Անշուշտ սա բացասաբար կարող էր անդրադառնալ բնակիչների վրա։

47

84. «...ի ճակատ թագին Ովրանգզէբայ...»—նկատի ունի Հնդկաստանի Մոգոլական դինաստիայի Աուրենգզեբի արքային (1652—1707 թթ.)։

85. Ադլ շահ—նկատի ունի Ադիլ շահին, Ալի Ղուլի խանին, Նադիր շահի եղբոր որդուն, որը Նադիր շահի դեմ նյութած դավադրության մասնակիցներից մեկն էր։ Այդ դավադրության շնորհիվ սպանվեց (1747 թ.) բռնակալ Նադիր շահը, և շահ հռչակվեց Ալի Ղուլի խանը Ադել («Արդարամիտ») հորջորջմամբ, սակայն 1748 թ. գահընկեց արվեց և կուրացվեց։

48

86. «...յամուրս Տայոց...»—այսինքն Ախալցիխե քաղաքը, որտեղ ստրկավաճառության շուկա կար։

87. Սեիդաբաթ—միջնադարյան Տփղիսի հիմնական թաղամասը, որը XIII դարից սկսած մարդաթափ էր եղել և արդեն XVII դ. համարվում էր Տփղիսի դրսի թաղ։ Այս տարօրինակ անվանումն էր կրում, որովհետև XVII դ. առաջին կեսին այստեղ շահ Սեֆին (1629—1642 թթ.) սեիդ ցեղն է բնակեցնում, որի հետևանքով էլ այդ թաղամասը ստանում է «Սեիդաբադ» անվանումը։ Կուր գետին զուգահեռ Բերդի կամ Թուրքի հրապարակից ցած սկսվում էր այդ թաղամասը, ուր գտնվում էին հիմնականում Տփղիսի մոքալաքներին պատկանող մրգատու այգիները։ Այգիներից զատ, այստեղ կային բաղանիքներ, ջրաղացներ։ (Տե՛ս, მ. ბერძნიშვილი. նշվ. աշխ., էջ 4, 37—39, 42)։

88. Սոլոլակ—հին Տփղիսի արևմտյան մասը, որտեղ թագավորող գերդաստանին, իշխաններին պատկանող այգիներ կային։

49

89. Սատիղ խան—Աղա Մուհամմադ խանի դեմ նյութած դավադրության ղեկավար։

90. Սաֆար Ալի խան—Աղա Մուհամմադ խանի սպանողներից մեկը, որը Աբբաս բեկի հետ կատարեց այդ սպանությունը։

50

91. «...որ նստեալ էր յաթոռ ամուսնոյն իւրոյ Պօղոսի յետ մեռանելոյն նորա...»—նկատի ունի 1762 թ. պետական հեղաշրջումը, որի շնորհիվ Պյոտր III գահընկեց արվեց, և գահ բարձրացավ նրա կինը՝ Եկատերինա II (1762—1796 թթ.)։

92. ...Նստաւ ի տեղի նորա Ցիցանով անուամբ ռուս ոմն...»—նկատի ունի Պավել Դմիտրևիչ Ցիցիանովին (1754—1806 թթ.), որը ռուս չէր, այլ վրացի, սերում էր Ցիցիշվիլի իշխանական տնից։ Նա իր գործունեությամբ նպաստել է ռուսական տիրապետության հաստատմանը Անդրկովկասում։

51

93. Սարու Մուստաֆա փաշա—1724—1735 թթ. թուրքական օկուպացիոն զորքերի գլխավոր հրամանատար Անդրկովկասում։ Իրականում նա չի կառուցել Գանձակի բերդը, այն կար թուրքական զորքերի 1724 թ. Անդրկովկաս ներխուժելուց առաջ էլ։

52

94. «Աղեքսանդր Ա յետ է կանչում իւր հաղթական զօրքը»—հեղինակը սխալվում է. իրականում Եկատերինա II-ին հաջորդեց Պավել I, որն էլ ետ կանչեց ռուսական զորքերը Անդրկովկասից։

53

95. Տե՛ս ծանոթագրություն № 94։

ՑԱՆԿԵՐ

ԱՆՈՒՆՆԵՐ

Աբաշիր իշխան 170
Աբբաս (Ապպաս, Աբաս) բեկ 172, 173, 194, 198, 202, 204
Աբդուլ Ցաթիհ (Աբդյուլ Ցաֆաթ, Աբուլ Ցաթիհ) խան 161, 169, 193
Աբով (Ապով, Ըպով) մելիք 97, 157, 233, 226
Աբովյան Խաչատուր 33, 58
Աբրահամ Աստապատցի վարդապետ 66, 69
Աբրահամ միրզա 133
Աբրահամյան Ա. Գ. 60
Ադի Գյոզալ բեկ (միրզա) 15, 164
Ադլ (Ադիլ) շահ տե՛ս Նադիր շահ
Ալեքսանդր, վրացու որդի, միրզա, (արքայազն) 120, 171, 234
Ալեքսանդր (Աղեքսանդր) Ա 227, 231
Աղեքսանդր (Մակեդոնացի) 84
Ալեքսանդր Պավլովիչ արքայազն 107, 112, 116, 137
Ալեքսիանոս (Աղեքսիանոս) արքեպիսկոպոս 121, 129, 130
Ալի Ղուլի խան (սարդար) 6, 15, 27, 28, 36, 37, 67, 100, 102, 120, 121, 165, 180, 182—184, 231, 234
Ալի Մարդան 195
Ալմաս 84
Ախտա խան տե՛ս Աղա Մուհամմադ խան
Աղա մելիք, մինիշկյար 47, 49
Աղա մելիք (իշխան խոջա Բեհբուդյան) 9
Աղա Մուհամմադ խան (Աղա Մահմուտ, Մեհեմմետ, Ներքինի Մահմատ, Միրզա Մահմատ Վրկանացի, Մեմաթ չեզոք, Մահմետ շահ են) 5—33, 35—40, 42, 43, 49, 60, 62—73, 88, 91, 100, 102, 113, 121, 135, 136, 143, 145, 146, 149, 156, 157—160, 163—169, 171—174, 176—178, 180—182, 185—190, 192, 195—197, 199, 202, 203, 205, 217, 222, 225—228, 231
Աղայան Գ. 86
Աղաջան 147
Աղաջանյան Ներսես 147
Անանուն հեղինակ 53, 195
Անանուն պատմիչ 11—14, 23, 91
Անանուն ժամանակագիր 228
Անտիոքոս 158
Անուշ թագուհի (Բագրատունի) 83
Աշխարհաբեգ մելիք 47
Աշոտ Թագավոր (Բագրատունի) 83
Ապագի միրզե (շահզադե Աբբաս) 179
Առաքել քահանա 72
Առաքելյան Համբարձում 204
Ասլանյան Ստեփանոս 194
Ասլանով Բարսեղ 143, 144
Աստվածատուր 106
Ավագ յուզբաշի 161
Ավան յուզբաշի (ուզբաշի) 30
Ավետիք մելիք 56
Ավշարյան իշխանություն 175
Արարատյան Առաքել 26, 27
Արարատյան Հարություն 32, 33, 148, 156
Արզման յուզբաշի (ըզբաշի) 162, 224
Արիստոտել 194
Արղության Հովսեփ արքեպիսկոպոս (Հովսեփ վարդապետ, Հովսեփ արքեպիսկոպոս) 35—37, 41, 42, 49, 51—53, 59, 72, 83, 85, 90, 96, 907, 104, 108—117, 138, 141, 142, 161, 179, 189, 193, 227, 231—233
Արղությանց Սոլոմոն Երկայնաբազուկ 83

Բարախան 37, 97, 121, 195, 234
Բագրատունիք (վրաց Բագրատունիք) 51, 62, 83
Բասենցյան Հարություն 22
Բեղեղեհեմյան Հովհաննես 40
Բեզբորոդկո (Բեզպորոդկին) Ալեքսանդր Անդրեևիչ 112
Բելիար 77, 98
Բիրա աղա 165, 172, 194

Գաբրիել (հրետանապետ) 13, 14, 25, 75, 92
Գալուստ վարդապետ (արքեպիսկոպոս) 33, 104
Գեորգի XII (Գեորգի միրզա, խան) 35, 54, 84, 98, 121, 122, 171, 186, 233
Գեորգ, սուրբ 59, 83, 146
Գիորգի (հրետանապետ) 13, 14, 25, 75, 92
Գիրաքյանց Հոհանջան աղա 179
Գոգիա բեկ 133
Գողիազ 84
Գորգի միրզա 174, 189
Գրիգոր Լուսավորիչ 49, 50, 84, 135, 137, 159
Գրիգոր Նարեկացի 129
Գուդովիչ Իվան (գեներալ ֆելդմարշալ) 5, 12, 59
Գուրջասար Մանուչար (Թումանյան, իշխան) 99

Դանիելյան Կ. (Կառլեն) 32
Դարեջան (Դարիա) թագուհի 17, 33, 34, 185
Դարչի Բեհբուդ (խոջա Բեհբուդյան) 91
Դավիթ վարդապետ (արքեպիսկոպոս) 56, 72, 104, 118, 119, 179, 232
Դավիթ, (Դավութ, սարդար) Հերակլ II-ի թոռը 34, 54, 55, 64, 84, 186
Դավիթ մարգարե 108, 122

Եզեկիել 136
Եկատերինե II (Կատարինե, Կատերինա, Նեքտարինե, Կատարինա) 7, 9, 24, 44, 31, 35, 50, 73, 74, 82, 91, 107, 108, 161, 169, 175, 194, 221, 227
Եղիազարյան (Եղազարյան) Հովհաննես տե՛ս Լազարյան Հովհաննես
Եղիշե առաքյալ 135
Եսայի մարգարե 49, 69, 107
Եսայի, Թիֆլիզեցի զառաք—226
Երեմիա մարգարե 47, 51, 86, 89, 159
Երկայնաբազուկ Բարսեղ (իշխան Բարսեղ) 52, 53, 85
Եփրեմ կաթողիկոս (պատրիարք, արքեպիսկոպոս) 147, 148, 179, 229,

Զաքարիա մարգարե 130
Զաքարիա պատրիարք 15, 178, 184
Զաքարիա Հակոբ Շուշեցի 19—21, 205
Զենդ 134
Զեքի խան 62
Զուբով Պլատոն Ալեքսանդրովիչ 52
Զուբով (Զուպով) Վալերիան (Վելարիոն) 6, 18, 31, 36, 90, 160—163, 169, 193, 226, 227, 231

Էնակոլոփյանց Մանուչար խան 174, 189

Թահմազ Ղուլի (Թահմազղուլի) խան 152, 214
Թաղիադյան Մեսրոպ 174, 176
Թաղյանց Հարություն աղա 99
Թաղոյան Եսայի (որ)դի Մկրտում 91
Թամար (Թամարա) խաթուն (խանում) 95, 98, 226
Թավաբյալի խան 189
Թաֆի բեկ 195
Թովմա Դաստակերտցի վարդապետ 69
Թումանյանց Հարություն 70
Թուրքինով 59

Իբրահիմ խան (Հաճի Իբրահիմ խան) 5, 18, 21, 29, 36, 39, 40, 42, 63, 67, 74, 92, 97, 103, 119, 120, 124, 156, 157, 161—167, 169, 170, 172—174, 176—178, 181, 182, 189, 190, 193, 197, 205—209, 211, 214—223, 225—228, 232, 233
Իբրահիմ խան, Շիրազ 104
Իլյուն խան 171
Իսահակ վարդապետ 39
Իսրայել կաթողիկոս 135, 181

Լաղարյան Հովհաննես աղա 9, 11, 35, 37, 42, 43, 99, 110, 111
Լալայան Ե. (Երվանդ) 227
Լութֆ Ալի խան (Լեֆթալի խան) 62, 64, 67, 178, 180
Լևիթան 77
Լեոպոլդ (Լեոպոլդ II) 42

Խաչիկյան Մովսես աղա 37, 131
Խոջա Բեհբուդյան 47
Խոջա Բեհբուդյան Գայանե 9, 10, 43, 49
Խուցյան Խ. 9

Կարապետ վարդապետ 52
Կյուրոս 88
Կոստանդին Պավլովիչ 107, 112, 137
Կուտովիչ տե՛ս Գուդովիչ Իվան

Հաթամ (Հյաթամ) աղա (մելիք Մեջլումի որդին) 225, 226
Հախիջան աղա Շամիրամակերացի 180
Հակոբ աղա 99
Հակոբ քահանա 33, 54, 72
Հակոբ, սուրբ հայրապետ 121, 133, 129
Հակոբ 162
Հակոբ եպիսկոպոս 98, 130, 131
Հակոբ Խամսեցի եպիսկոպոս 235
Հակոբ Շամախեցի կաթողիկոս 235
Հակոբյան Հոհանջան աղա Գերաքյանց 131, 132
Հակոբյան Պիոն 33, 35, 53, 58
Հայդար (Հայտար) խան 52
Հասան խան (Նախիջևանի) 66, 120, 121
Հասան խան (Մակվի խանի որդին) 120, 234
Հասան Ղուլի բեկ (Ասկերանի) 211—213, 215, 216
Հասան Ղուլի (Սուլեյման շահզադեի հազարապետ) 205, 212
Հասան Ջալալյանց Սարգիս, կաթողիկոս 30—32, 156, 181, 190, 219
Հարություն, քանդակագործ 27
Հեյդար (փեյղամբար) 174
Հերակլ II (Հերակլես արքա, վալի խան) 5, 11—13, 15, 16, 18, 22, 24, 28, 30, 31, 33—36, 44, 49—51, 62, 63, 66, 68, 73—76, 85, 88, 91—94, 98, 100—102, 113, 114, 121, 122, 149, 152, 153, 155, 157—160, 162, 163, 166, 168, 176, 177, 179, 182, 184—187, 191, 193, 222—227, 229, 230, 233
Հոր 130
Հոմեի խան տե՛ս Ումմա խան
Հովհան (Հոհան) Օձնեցի 83, 188, 190, 193
Հովհան (Հոհան) վարդապետ 160, 162
Հովհաննես աղա տե՛ս Լաղարյան
Հովհաննես Համադանցի 106
Հովհաննես կաթողիկոս (Աղթամարի) 179
Հովսեփ (Միրիմանյան) 9, 48
Հոսեփ (Ավստրիայի կայսր) 41
Հոսեփ (Խոջա Բեհբուդյան) 146
Հովնաթան (Նկարիչ) 27
Հաուբել 48
Հուդա 50
Հուսեյն (Հուսին) խան (Խոյի) 39, 236, 237
Հուսեյն Ալի խան (Երևանի) 176—178, 182, 183
Հուսեյն Ղուլի խան 236
Հուսեյն Ղուլի, հազարապետ 214

Ղազար քահանա 72
Ղազար (Ջահկեցի) կաթողիկոս 190
Ղալմուխով 59
Ղաջար 5, 19, 30, 88, 176, 180
Ղուկաս Կարնեցի կաթողիկոս (տեր Ղուկաս, Ղուկաս կաթողիկոս) 8, 15, 27, 35, 36, 37, 39—41, 43, 67, 95, 100, 104, 107, 110, 113, 115, 116, 118, 119, 121, 131, 132, 134, 136, 137, 177—180, 183, 184, 189, 190, 231—233, 235, 237

Մադաթով Հովհաննես 20
Մաթո 106
Մամաջանյան Սողոմոն 146, 147
Մանուչարյան Մարգար 116
Մարտիրոս վարդապետ 56, 57, 119, 188, 189
Մարք 236
Մելիքսեթ-Բեկ Լեոն 11
Մելիքյանց Լոռի 188
Մեհտի Ղուլի աղա 174
Մեջլում (Մելջում, Մեժլում, Մելժում, Մեճնուն) մելիք 55, 61, 76, 93, 100, 157, 159, 160, 162, 163, 167, 171, 181, 182, 185—187, 190, 191, 222—227, 229, 230
Մինաս արքեպիսկոպոս 108
Միրիմանյան Թագուհի 9, 10, 43, 48
Միքայել վարդապետ 180
Մխիթար քահանա 118
Մկրտիչ ախրացու, էրզրումցի 144
Մնացականյան մելիք (խոջա Բեհբուդյան) 56
Մովսես Խորենացի 129
Մովսես մարգարե 162
Մուհամմադ (Մհամմադ) բեկ 173, 195
Մուհամմադ (Մահմատ, Մհամմատ, Մամատ) խան (Երևանի) 68, 102, 121, 182, 184, 185, 189, 192, 228, 231, 234—237
Մուհամմադ (Մհամմատ) Թաֆի բեկ 172, 174
Մուհամմադ (Մհամմատ, Մահմետ) Հասան խան, Ղաջար 19, 62, 156, 165, 176
Մուհամմադ (Մահմեդ, Մահմադ, Մհամմատ) Հասան խան (աղա), (Իբրահիմ խանի որդին) 66, 174, 197, 232
Մուհամմադ (Մհամմատ) Հուսեին աղա 173
Մուհամմադ (Մամատ) Սան աղա 220, 221
Մուստաֆա (Մուստափա) խան (Քյուրդաշտի) 67, 161, 162, 165, 169, 176
Մուստաֆա խան (Թալիշի) 166
Մուրադյան Առաքել վարդապետ 83, 193
Մուրթազա (Մուրտուզ, Մուրթազ) Ղուլի խան 59

Յաղուբ խան (Յաղուպ բեկ) 8, 183

Նաբուգոդոնոսոր 158
Նադիր (Նատիր, Նատր) շահ 27, 73, 100, 156, 175, 180, 199
Նազար աղա 99
Նասիր խան 172, 194
Նափոլեոն (Նապոլեոն) 221
Նեռ 114
Նեկտարինե տե՛ս Եկատերինե II
Նյութալի խան տե՛ս Լութֆ Ալի խան
Նունե, սուրբ կույս 159
Նուսխալ խան 165, 194

Շահամիրյան Շահամիր 35, 36, 41, 43, 95, 134, 231, 233
Շահբազ (Շահ Աբբաս) 65
Շահնազար մելիք 29, 103
Շահռուհ 175
Շահսևան Աթա խան 172, 194
Շահսևան 165, 170
Շամիր աղա, խան տե՛ս Շահամիրյան, Շահամիր
Շամլի Մելքո 60, 61
Շաքարո մելիք 113
Շաքրոյան Գաբրիել 143
Շերմազանյան Գալուստ 8, 189
Շին(ա) սարկավագ 183
Շիռալի խան 160
Շուշան 106

Ոսկերչյան Հովհան 26—29, 100
Ովրանգզեբա 175
Չամչյան Միքայել 176

Պավել I տե՛ս Պավել Պետրովիչ
Պավել Պետրովիչ 7, 31, 35, 107, 109, 110, 112, 116, 117, 137, 194
Պատկանյան Գաբրիել 87
Պատկանյան Պետրոս քահանա 87
Պատկանյան Սերովբե (Սերովբե դպիր) 11, 13, 22—26, 72, 87, 89
Պետրոս Առաջին (Մեծ) 6, 7, 107
Պետրոս վարդապետ 188
Պլատոն արքեպիսկոպոս 37, 115, 194
Պողոս առաքյալ 107, 108
Պողոս տե՛ս Պավել Պետրովիչ
Պոպով 59

Ջալալյանց տե՛ս Հասան Ջալալյան Սարգիս
Ջահվա Ղուլի խան 100
Ջավադ (Ջավաթ) խան 24, 26, 55, 60, 61, 76, 88, 100, 157, 160—163, 167,

169, 171, 181, 185, 190, 191, 222—227
Ջաֆար Ղուլի խան (բեկ) 39, 58, 62, 104, 121, 183, 184, 189, 233—237
Ջիմշիտ (Ջումշուտ) խան 29, 97, 103, 157, 163, 164, 232, 233

Սադեղ (Սադղ, Սադխ, Սատեղ, Սատխ, Սատղ) խան 39, 120, 121, 173, 195, 200, 201, 225, 226, 228, 232, 234
Սահակյան Հ. Ս. 61
Սարգիս Մարաղեցի 144
Սարգիս աղա 155
Սարգիս մելիք 224, 225
Սաֆար Ալի բեկ (Սաֆարալիբեկ) 21, 172, 173, 194, 198, 200—204
Սեդեկիոս 56
Սելիմ խոնթքյար տե՛ս Սուլթան Սելիմ
Սեյիդ Մուհամմատ Յուրֆա (Յուրֆի) 166, 182
Սիմեոն (Երևանցի) կաթողիկոս 107—109, 112, 115, 178
Սլեյմանյան Մուհամմադ (Մահմադ խան) 62
Սոլոմոն II (Սոլոման, Սաղոմոն, Սողոմոն) 12, 92—94, 105, 182
Սողոմոն Իմաստուն 136, 138
Ստեփան Աստապատցի 146, 147
Ստեփանակե (ռուսաց հազարապետ) 222
Ստեփանյան Նունենց Հարություն 105, 106
Ստեփանոս Նախավկա 44, 136, 137
Ստեփանոս քահանա 118
Սուլեյման խան, սարդար, շահզադե 19—21, 30, 43, 66, 119, 120, 135, 205—207, 212—215, 229, 233, 235, 236
Սուլեյման խան (Շաքիի) 172, 177, 194
Սուլեմյան բեկ (Իբրահիմ խանի) 211
Սուլեյման խան (Բորչալուի) 158, 167
Սուլեյման փաշա (Ախալցխայի) 170
Սուլթան Սելիմ 73, 91
Սուվորով Ա. Վ. 59, 60

Վախթանգ (Բագրատունի արքայորդի) 17
Վանական վարդապետ 56
Վասակ 55
Վասիլ Բեժանիչ (Երկայնաբազուկ Արղության) 90
Վարդան Օձնեցի 14—18, 176, 195
Վոստ մոլլա վալի 174

Տեր-Առաքելյան Մելքսեդ 142, 143
Տեր-Ճմավոնյան տեր Գրիգոր 71, 83
Տեր-Ճմավոնյան պարոն (տեր) Ստեփան 72, 91, 106
Տեր-Սահակյան Ստեփան 59
Տեր-Սամուելյան խոսրով խան Ղայթմազյանց 174, 189
Տեելու 62
Տիտոս 158
Տուտենց Հարություն Ագուլեցի 66, 69
Տուտենց Հարությունյան Մարտիրոս Ագուլեցի 66, 69, 70

Ցիցիանով Պավել Դիմիտրիչ 26, 221, 237

Ութրութ բեկ 113
Ումմա (Ումման, Օմար) խան 18, 31, 40, 42, 103, 163, 165, 170, 172, 177, 178, 189, 228

Փանահ խան 164
Փանահ Վաղըֆ մոլլա, ախունդ 166, 169, 174, 182, 193
Փարնվազ խան 171

Քարիմ (Քերիմ) խան Զանդ 5, 19, 27, 62, 100, 156, 165
Քիշիկ Օղլան 144, 145
Քյալբալի (Քյալպալի) խան 40, 66—69, 100, 119, 176, 177, 192, 232, 237
Քոչոր 61
Քրիստոս Հիսուս 50 և այլուր

Օրբելյանց Թամազ 186, 187

Ֆաթհ Ալի խան 19, 160, 195
Ֆիթոյան (Փիթոյան) Եսայի 71

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբանդա գավառ 67
Ագուլիս 70
Ադրբեջան (Հատրբեջան, Հատրպեճան են) 64—66, 120
Աժդրխան տե՛ս Աստրախան
Ալամանք տե՛ս Գերմանիա
Ալանք 135, 136
Ալանաց դուռ 82, 94
Ախալցխա (Ախլցխա) 17, 170
Ախալքալաք 178
Ախթալա (Ախտալա) 170
Ահար 67
Աղթամար 179, 180
Աղվանք 30, 96, 135, 160, 161, 163, 192, 193, 227
Այսրկովկաս 18
Անանուր 152—154
Անգլիա 5
Անդրեա 137
Անդրկովկաս 5—7, 9, 11, 12, 14—16, 18, 19, 21—24, 26, 27, 29—32, 35—38, 62, 228
Առաջավոր արևելք 5
Ասիա 73, 75, 152
Ասկարան (Ասկերան) 163, 205, 211, 215, 216
Աստապատ 27, 43, 60, 135, 229
Աստրախան 9, 22, 137, 143
Ավարի դաշտ 165, 170, 172, 189, 194
Ատրպատական 19, 30, 36, 66, 67, 100, 156, 164—166, 172, 175, 176, 206, 207, 213
Արաբստան 61
Արագած 237
Արագա 138
Արակ գետ տե՛ս Արագվի
Արաղստան (Արաղ) 39, 42, 164—166, 177, 228
Արարատյան աթոռ՝ տե՛ս Էջմիածին
Արարատյան աշխարհ, երկիր, նահանգ, գավառ 15, 16, 27, 30, 35—37, 49, 62, 92, 184, 190
Արարատյան դաշտ 15, 110, 116, 182
Արաքս 6, 27, 196, 197
Արագվի գետ 17, 150
Արդաբիլ (Արտավիլ, Արդավիլ, Արդավել են) 36, 42, 66, 96, 120, 164, 180, 206, 211, 216, 232, 233
Արևելից կողմն 53
Արևելյան Հայաստան 7, 19, 20
Արևելյան Վրաստան 7
Արևմտյան Վրաստան 12
Արևելք 195
Արցախ 5, 6, 11, 12, 16, 18—21, 23, 27, 28, 30—32, 36, 37, 41—43, 67, 68, 96, 100—103, 135, 140, 156—158, 161, 175—178, 180, 181, 189, 191, 192, 227—229, 237

Բաբիլոն (Բաբելոն) 62, 65, 73, 91, 101, 102
Բաղդադ (Պաղտատ, Բաղդատ են) 61, 63, 65
Բայազետ 39
Բաշալուխ (Բաշալուղ) 167, 182
Բասրա (Պասրա) 40, 61, 62, 64, 65
Բարդող լեռ (Թաքալթու) 237
Բաքու 59, 60, 160, 193
Բելաքան (Բալաքյան, Ճարու Բելաքան) 40, 135, 172, 174, 194, 232
Բյուզանդիա 73
Բորադան 137
Բորչալու (Բոշչալու) 158, 171
Բուխարա 175
Բունրա (Բումրա) 65, 98
Բուշեր (Բուշեռ) 64, 131, 132

Գագ դաշտ 128, 185
Գաղղիա տե՛ս Ֆրանսիա
Գանձակ (Գյանջա, Կենճե, Գանճա են) 15, 19, 23, 28, 36, 39, 40, 44, 46, 55, 56, 59, 68, 76, 93, 96, 97, 100, 102—105, 119, 145, 149, 151, 154, 157, 158, 161—164, 167—171, 181, 184, 185, 190—193, 195, 222, 224—227, 231, 237
Գանձասար 180, 219
Գառնի 184
Գարթիսկար 150
Գետառ 235

Գերմանիա 41, 73, 91
Գիլան 43, 135
Գյումբեյուզլ 67
Գողթան գավառ 67, 69
Գրիգորիոպոլ(իս) 49, 52, 53, 59, 60, 138
Գուգարք 227

Դաղստան (Տաղստան, Տաղիստան) 18, 21, 29, 36, 61, 64, 135, 165, 170, 171, 177, 178, 189, 196, 227
Դաշլու լեռ 211, 212
Դարբանդ (Դերբենդ) 59, 68, 95, 97, 106, 111, 112, 117, 160, 169, 193, 230, 233
Դովթալար (Տովթալալ ձոր) 208, 211, 212, 215
Դուխան 170
Դուշեթ (Դուշիթ) 25, 82, 152, 160, 168, 187

Եղիզավետպոլ 146, տե՛ս նաև Գանձակ
Ենկիդալա 138
Եզսե 137
Երասխ 67, 100, 156, 165, 172, 194, 207, 208, 214, 215, 222, 237, տե՛ս նաև Արաքս
Երասխաձոր 237
Երևան (Ըրևան) 6, 11, 15, 17, 27, 28, 32, 37, 39, 40, 42, 53, 58, 61—68, 96—98, 100, 102—104 , 120, 121, 131, 133, 137, 139, 140, 146, 148, 156, 165, 166, 176—178, 180, 182—185, 189, 190, 192, 223, 228, 229, 231—237
Երևանի խանություն 27, 28, 36, 37

Երկաթալի ձոր 209
Երկաթի դուռն—տե՛ս Դարբանդ
Երուսաղեմ 19, 56, 89, 158
Եվրոպա 221

Զանկիան 121
Զարալի գյուղ 214
Զեյվա գետ 225
Զմյուռնիա 39, 119

Էջմիածին (Միածնաէջ) 15, 27, 37, 40—43, 49—51, 67, 68, 72, 89, 98, 105, 110, 113—117, 119, 121, 131, 132, 134, 135, 138, 142, 145—147, 178—180, 182—184, 188—190, 223, 231, 235, 236

Թադաս (Թարաս) 64
Թալիշ 156, 165, 166, 169, 170, 176
Թավրիզ (Թավրեզ, Դավրեժ, Թարվեժ են) 27, 39, 40, 42, 43, 64, 66, 100, 104, 106, 135, 139, 164, 170, 176—178, 180, 189, 205, 206, 213, 216, 228, 229, 235, 236
Թարթար (Թերթեր) գետ 172, 196
Թելավ 98, 191, 195, 233
Թելեթ լեռ 159
Թելեթու Շահնաբաթ 145
Թեհրան (Թեյրան, Դեհրան) 27, 37, 40, 43, 61—63, 66, 96, 97, 100, 102, 103, 119, 121, 135, 143, 165, 176, 177, 180, 191, 192, 195, 205, 212, 213, 219, 223, 227—229, 231, 233, 234
Թիալեթ (Թրիալեթի, Թռեղք) 82, 185
Թիֆլիս տես Տփղիս
Թյուրինգեն 30
Թուրքիա 5, 6, 11, 14, 15, 18, 23

Իմերեթ 12, 24, 32, 153, 182
Ինջա (Ինճա) գետ 16, 168, 185
Ինջա գյուղ 158
Իսրայել 48, 102, 107, 159
Իսպահան (Սպահան) 61, 62, 65, 176, 236
Իրան 5, 17, 164, 167, 170, 183, 198, 204, 226

Լանքյարան 193
Լեհաստան 18
Լիլո 149
Լիմ 180
Լոռի 178

Խաչեն 207
Խարփուղ լեռ 158
Խարք կղզի 64

Խնձորիս նահանգ 103
Խոյ 27, 39—42, 64, 67, 100, 103, 121, 140, 164, 170, 176, 177, 228, 234, 236, 237
Խորանաշատ 56
Խորասան 61, 102, 166, 174, 175, 194, 205
Խուդափերին կամուրջ 27, 100, 223

Ծորոփոր 185

Կալկաթա 37, 131, 176
Կալուգա 115
Կախեթ (Կախիթ) 5, 6, 9, 10, 12, 54—58, 82, 98, 158, 159, 171, 179, 182
Կայծենի (Կայծոնի) 188
Կասպից ծով 192
Կարին 17, 189
Կարս (Ղարս) 106, 171, 180, 192
Կատերինեսլավ 138
Կերաթ 160
Կյամուկու 138
Կյուրոսի լեռ 217
Կողբափոր 185
Կոճոռ լեռ 101, 186, 187
Կոստանդնուպոլիս (Պոլիս, Կ. Պոլիս) 8, 11, 13, 15, 22, 33, 35, 37, 41, 73, 87, 91, 95, 99, 178, 184
Կրեկլըխան լեռ 168
Կրծանիս 6, 13, 17, 33, 101, 151, 153—155, 158, 188, 233
Կուկիա գյուղ 150
Կումիս 28, 101
Կուր գետ 68, 89, 149—151, 172, 178, 185, 186, 188, 194

Հագպատ (Հախպատ, Հաղբատ) 56, 72, 161, 179, 188, 190, 193
Հայաստան (Հայաստան աշխարհ, Հայաստանյաց, Հայոց) 14, 43, 50—52, 54, 64, 65, 107, 110, 118, 135, 138, 176, 177, 180, 182, 229
Հաշտարխան տե՛ս Աստրախան
Հավլաբար (Հալվաբար) 55, 89, 149, 168, 187, 223
Հավճալա (Ավճալա) 150
Հերաթ 163, 205

Հյուսիսային Կովկաս 12, 24
Հոռոմ 47
Հռիփսիմե վանք 58
Հնդկաստան (Հնդիկս, Հինդու) 6, 8, 37, 95, 131, 144, 178, 179, 231, 233
Հրազդան գետ 184
Հունաստան 134

Ձորութաղ 172
Ձորուփոր 178

Ղազախ 120, 158, 168, 171, 174, 179, 182, 185, 234
Ղազրին (Ղազվին) 119, 121, 234
Ղալե 205
Ղայպալու ձոր 209, 211
Ղանդահար 160
Ղայպաշ լեռ 212
Ղարաբաղ (Ղարապաղ) 5, 15, 19, 20, 28, 39, 67, 148, 156, 159, 161, 163—167, 169—174, 176, 177, 181, 193—197, 200, 205—207, 213, 214, 216, 219, 220, 222, 224—226, տե՛ս նաև Արցախ
Ղարադաղ (Ղարատաղ) 67, 148, 165, 169, 170, 177, 192
Ղափլանքյուշ (Ղափլանքյուճ) 164
Ղզլար 9, 137, 142, 160, 169, 192
Ղըխրուլախ (Ղըխրուլաղ) 120, 234
Ղզլթամիր գյուղ 234
Ղընըղ գետ 40
Ղրիմ 138
Ղուբա 160

Ճառ տե՛ս Բելաքան
Ճեղըյալ ձոր 214

Մագավ (Մատավ) 160, 161
Մադրաս (Մատրաս) 41, 43, 95, 134
Մազանդարան 175, 176
Մախաթ սար 89
Մակու 120, 121, 234
Մաշհադ (Մաշատ, Մաշաթ) 119, 174
Մարաղա 39, 164
Մարանդ 66
Մարտղոփ 149
Մերձավոր արևելք 5

Մերձկասպյան շրջան 6
Մթածմինդա 89
Մծբին 129
Մոզդոկ (Մոզդոք, Մոզդոգ) 9, 24, 25, 48, 74, 75, 82, 92, 105, 137, 192
Մոսկով 65, 89, 115, 137
Մցխեթ 150, 151
Մուխրան 87
Մուղանի դաշտ (Մուղան, Մուղանչոլ) 17, 21, 31, 68, 69, 161, 168, 189, 190
Մուշկյամբար (Մյուշկյամբար) 39, 192, 228

Յագորցկի 53, 137

Նախիջևան (Նախչվան, Նախչավան, Նախջվան են) 27, 39—42, 52, 66—69, 96, 100, 103, 119, 120, 148, 164, 169, 170, 176, 177, 192, 223, 228, 232, 234
Ներքին Վրաստան 188
Նոր Նախիջևան 22, 41, 137, 189, 193
Նուխի 39, 68, 190, 193, 227, 232

Շաղաղիա (Շղաղի) 170, 173
Շամախի (Շամախ) 68, 69, 160, 190, 193, 194, 202, 227
Շամշադին (Շամշատին, Շեմշեդին) 28, 101, 171, 179, 185,
Շամքոր (Շամքոռ) 104, 185
Շարուր 40
Շաքի 59, 61, 164, 170, 194
Շիրակ 31, 42, 43, 64, 100, 104, 121, 135, 156, 165, 177, 178, 180, 191, 227, 229, 234, 236
Շիրվան (Շրվան) 59, 61, 106, 156, 161, 162, 164, 166, 169, 170, 190
Շխամիան 60
Շնող 188
Շուլավեր 145
Շուշի (Շիշու, Շոշ) 6, 7, 11, 12, 14—16, 18—21, 23, 27—29, 31, 32, 36, 39, 42, 61, 63—69, 74, 92, 97, 100, 102, 103, 120, 149, 157, 158, 164, 166, 167, 172, 175, 177, 181, 182, 189, 190, 191, 193, 195—197, 200, 205, 207, 214, 216, 217, 222, 228, 229, 232

Որմ տե՛ս Ուրմիա

Չախխպաշի 92
Չավանդուր 67
Չարրախ 27, 100
Չերքեզ 138
Պարթև 159
Պարիս (Փարիզ) 70
Պարսկաստան (Փարսկաստան, Պարսից, Պարսից աշխարհ, Պարսից տերություն, խորին Պարսս) 13, 14, 21, 27, 30—32, 34, 55, 64—66, 68, 91, 92, 94, 100, 102, 134, 151, 152, 156, 157, 160, 161, 163—166, 174—177, 180, 181, 189, 190, 205, 226, 228
Պետերբուրգ (Պետրոպոլք, Պետրբուղ, Պետրբուրգ) 41, 110, 116, 137, 145, 193, 194
Պոլնիսու (Բոլնիսի) ձոր 97, 233

Ջավախեթ 178
Ջրաբերդ 167, 206
Ջուղա 64, 97

Ռուսաստան (Ռուսիա, Ռուստաց, Ռուսաց, Ռուսղաց) 5—8, 18, 23, 26, 37, 38, 41, 65, 72, 85, 91, 92, 94, 97, 107, 109, 110, 115, 137, 160—163, 169, 170, 179, 189, 193, 232

Սալիան (Սալյան) 169, 193
Սալմաստ 176
Սանահին 83, 193
Սառաֆան 137
Սեյդաբադ (Սեյդաբաթ) 151, 187
Սիոն 50, 69, 137
Սիչով 41
Սղնաղ (Սղնախ) 63, 145, 146, 149
Սյավ ջուր 236
Սյունիք 180, 181, 192
Սոլոլակ լեռ 89, 101, 159, 187, 188, 223
Սողանլուղ (Սողանլըղ, Սողանլուխ) 28, 76, 93, 101, 158, 168, 185, 187
Սոմխեթ 179, 185, 192, 195,

Սուրաթ 131, 179

Վաղարշապատ 184
Վան 180, 236
Վարանդ 214
Վերա դաշտ 79, 155
Վեննա (Վիեննա) 73
Վրաստան (Վրաց, Վրաց երկիր, տուն, աշխարհ, Վիրք, Գուրջստան) 5—7, 11—16, 18, 19, 23—25, 28—31, 50, 52—54, 57, 59, 60, 62—65, 67, 68, 72—75, 77, 82, 88, 91—93, 97, 98, 101, 148, 153, 156, 157, 159, 163, 165—171, 174, 177, 179, 180, 182, 184, 185, 187, 191, 192, 195, 197, 219, 220, 226, 227

Տայք 178, 189
Տավուշ 185
Տափի թաղ 55, 151, 187
Տրիեստ 22
Տփղիս (Տփխիս, Թիֆլիս են) 6, 7, 9—14, 16—18, 21—23, 25—29, 31—35, 37, 43—46, 48, 49, 52—54, 58—65, 68—70, 72, 74, 83, 86—92, 95, 97, 99—103, 106, 112, 117—118, 131, 132, 143—163, 167, 168, 170, 171, 174, 176, 179, 180, 182, 185—193, 195, 205, 219, 221—223, 225—227, 229, 233, 237

Ուտի (Ուտիք) 178, 185
Ուրմիա 19, 39, 66։

Փամբակաձոր 148
Փայտակարան 72, 86, 95
Փեցխավուրի այգի 223

Քաշան 61, 62, 106
Քարթլ 5, 6, 9, 10, 12, 179, 182
Քարատակ գյուղ 214
Քիրման (Քրման) 62, 63, 67, 180
Քյասաման 171
Քյորօղլու բերդ 237
Քյուրդաշտ 165
Քոստակ 137
Քութայիսի 182
Քուշանաց երկիր 176

Օղեսա 59
Օձուն 235
Օշական 235

Ֆրանսիա 5, 91
Ֆրունսա ջուր 168

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Աղբյուրներ* 39
Ղուկաս Կարնեցու գրությունը Զմյուռնիայի նվիրակ Իսահակ վարդապետին . 39
Ղուկաս Կարնեցու նամակը Հ. Բեղդեհեմյանին 40
Ղուկաս Կարնեցու նամակը Շ. Շահամիրյանին 41
Ղուկաս Կարնեցու նամակը Շ. Շահամիրյանին 41
Թագուհի Միրիմանյանի և Գայանե Բեհրուզյանի վկայությունը 1795 թ. Տփղիսի ավերման մասին 43
Հովսեփ Արղությանի դիմումը Գրիգորիոպոլսի հայ հասարակությանը . . . 49
Հովսեփ Արղությանի նամակը Հերակլ II-ին 51
Հովսեփ Արղությանի նամակը Կարապետ վարդապետին 52
Անանուն հեղինակի նամակը 1795 թ. Տփղիսի ավերման մասին . . . 53
Հովսեփ Արղությանի նամակը Ստեփանոս Տեր-Սահակյանին 59
Շամչի Մելքոյի ողբը Տփղիսի ավերման մասին 60
Անդրկովկասի XVIII դարի 90-ական թվականների քաղաքական անցքերի արտացոլումը «Ազդարարի» էջերում 62
Աբրահամ Աստապատցու վկայությունը Աղա Մուհամմադ խանի մասին . . 66
Տփղիսի Մողնու եկեղեցու հայ համայնքի որոշումը 70
Սերովբե Պատկանյանի 1795 թ. Տփղիսի ավերման նկարագրությունը . . 72
Տփղիսի բնակիչների դիմումը Հ. Արղությանին 90
Անանուն պատմիչը Տփղիսի 1795 թ. ավերման մասին 91
Ղուկաս Կարնեցու նամակը Շ. Շահամիրյանին 95
Հ. Ոսկերչյանը Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին . . . 100
Ղուկաս Կարնեցու նամակը Գալուստ վարդապետին 104
Հարություն Նոննեցի նամակը Հ. Արղությանին 105
Ղուկաս Կարնեցու դիմումը կայսր Պավել I-ին 107
Ղուկաս Կարնեցու նամակը Հովհաննես Եղիազարյանին 110
Ղուկաս Կարնեցու ուղերձը Հերակլ II-ին 113
Ղուկաս Կարնեցու ուղերձը Պլատոն արքեպիսկոպոսին 115
Ղուկաս Կարնեցու նամակը Մ. Մանուչարյանին 116
Ղուկաս Կարնեցու կոնդակը՝ ուղղված Տփղիսի Բեղդեհեմ եկեղեցու հայ համայնքին 118
Ղուկաս Կարնեցու նամակը Զմյուռնիայի նվիրակ Մարտիրոս վարդապետին . . 119
Ղուկաս Կարնեցու նամակը Գեորգի XII-ին 121
Ղուկաս Կարնեցու նամակը Հնդկաստանի նվիրակ Հակոբ վարդապետին . . 124
Հովսեփ Արղությանի նամակը Ստեփանոս Դավթյանին 127
Ղուկաս Կարնեցու կոնդակը՝ ուղղված Տփղիսի բնակչությանը . . . 128
Ղուկաս Կարնեցու նամակը Մ. Խաչիկյանին 131
Ղուկաս Կարնեցու կոնդակը Գեորգի XII-ին 132
Ղուկաս Կարնեցու նամակը Շ. Շահամիրյանին 134
Աղվանից կաթողիկոս Իսրայելի կոնդակը՝ ուղղված Կովկասի հայ հասարակությանը 135
Ղուկաս Կարնեցու կոնդակը՝ ուղղված Ռուսաստանի հայերին 137
Մ. Տեր-Առաքելյանի նամակը Հ. Արղությանին 142
Ալլահովի դիմումը Աստրախանի հոգևոր կոնսիստորիային 143
Քիշիկ-Օղլանի տաղը Տփղիսի ավերումից հետո բռնկված մահտարաժամի մասին 144
Հովհաննես քահանային տրված հանգանակիր 145
Ս. Մամաջանյանի դիմումը Հովհաննես արքեպիսկոպոսին 146
Եփրեմ կաթողիկոսի արտոնագիրը Ն. Աղաջանյանին 147
Հ. Արարատյանը Տփղիսի ավերման մասին 148
Սարգիս Հասան-Ջալալյանը Աղա Մուհամմադ խանի՝ Արցախ կատարած արշավանքի մասին 156
Աղի Գյոզալ բեկը Աղա Մուհամմադ խանի արշավանքի մասին . . . 164
Մ. Թաղիադյանը Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին . . . 174
Վարդան Օձնեցին Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին . . . 176
Անանուն հեղինակը Աղա Մուհամմադ խանի սպանության մասին . . . 195
Հակոբ Զաքարյանը (Շուշեցին) Աղա Մուհամմադ խանի արշավանքի մասին . 205
Ավանդապատում՝ Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին . . . 222
Վկայություններ՝ Աղա Մուհամմադ խանի վայրագությունների մասին . . 227
Անանուն ժամանակագիրը 1791—1798 թթ. Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների մասին 228
Մատենագրություններ 238

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԱՂԱ
ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(1795—1797 թթ.)

Աշխատասիրությամբ Ռուզաննա Տիգրանի
Տիտանյանի

Հրատ. խմբագիր Ա. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Կազմը Ֆ. Գ. ԱՖՐԻԿՅԱՆԻ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈԽԻԿՅԱՆ

ИБ № 280

Հանձնված է շարվածքի 6.01.1981 թ.։ Ստորագրված է տպագրության 11.08.1981 թ.։ ՎՖ 10318

Չափը 60×90 1/16, թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Տպագր. 16,25 մամուլ։ Հրատ.—հաշվարկ 15,3 մամուլ։ Տպաքանակ 1000։ Պատվեր № 7։ Հրատ. № 5488։ Գինը 2 ռ. 65 կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։

Издательство АН Арм. ССР, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.